



Տ Ա Ր Ե Վ Ա Ն Ջ Ե Վ Ո Ւ Յ Ց

2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ
ԵՐԿՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2015



Որպես նախարան

2015 թվականի մարտի վերջին օրը մենք, ըստ օրենքի, ավարտել և հանրությանն ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների վիճակի մասին մեր տարեկան Զեկույցը: Ուսումնասիրելով պետական 25 մարմնի գործունեությունը, ամփոփելով առանձին իրավունքների պաշտպանության վերաբերյալ մեր բոլոր տեղեկությունները, հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի խմբերին՝ մենք վեր ենք հանել համակարգային 167 խնդիր, որի պատճառով խախտվել են հազարավոր մարդկանց իրավունքներ: Արձանագրել ենք նաև մի շարք դրական զարգացումներ: Այդ ամենը ներկայացված է 2014 թվականի վերաբերյալ մեր սույն զեկույցում:

Բայց կա մի գերխնդիր, մի կոպտագույն իրավախախտում, որը ոտնահարում է ՀՀ բոլոր քաղաքացիների արժանապատվության և սեփականության իրավունքը: Այդ գերխնդիրը Թուրքիայի կողմից Հայոց Ցեղասպանության իրավական ու բարոյական ճանաչման մերժումն է: Ներկայում մարդու իրավունքների ամենակոպիտ խախտումը համաշխարհային և տարածաշրջանային առումով միլիոնավոր մարդկանց սպանության և ունեզրկման համար թուրքական իշխանությունների՝ արդեն 100 տարի տևող ուրացումն ու պատասխանատվությունից խուսափումն է:

Թուրքիայի կողմից սպանվել է մոտ 2,5 միլիոն հայ, որից գրեթե 1,5 միլիոնը՝ 1915 թվականին: Հայ բնակչությունը ֆիզիկական ու հոգեկան տանջանքների է ենթարկվել: Միլիոնավոր հայեր, հարկադրաբար տեղահանվել են և զրկվել նվազագույն կենսապայմաններից՝ տանջամահ լինելով անապատային պայմաններում: Մանկաձնությունը խոչընդոտվել է հայ կանանց ու նրանց պտղի սպանությամբ: Մեծ Եղեռնի հետևանքով միլիոնավոր հայեր զրկվել են ամեն տեսակ սեփականությունից՝ բնակություն հաստատելով ամբողջ աշխարհում: Մշակութային բազմաթիվ արժեքներ ոչնչացվել են. հուշարձանները քանդվել են, եկեղեցիներն ու վանքերն ավերվել են կամ վերածվել մզկիթների, ձեռագրերն ու գրականության նմուշները ոչնչացվել են: Փարիզի խաղաղության կոնֆերանսում հաստատվել է, որ միայն 1914-1918 թվականներին հայերին պատճառվել է ընդհանուր առմամբ մոտ 20 միլիարդ ֆրանկի վնաս:

Թուրքիայի այս ոճրագործության հետևանքները ներկայում ևս տարածվում են Հայաստանում ապրող մարդկանց վրա. մասնավորապես, նրանցից շատերն ապրում են ոչ իրենց նախնիների ծննդավայրում, զրկված են իրենց հասանելիք գույքային և մշակութային ժառանգությունից: Թուրքիան պետք է հնարավոր ամեն կերպ պատասխանատվություն կրի Հայոց Ցեղասպանությամբ պատճառած անվերականգնելի մարդկային, գույքային ու բարոյական վնասների, հայերի կյանքի, սեփականության, պատվի ու արժանապատվության իրավունքների ոտնահարման համար: Որպեսզի Թուրքիան կատարի Ցեղասպանության մասին կոնվենցիայի վավերացմամբ իր իսկ

միլիոնավոր հայերի ոտնահարված իրավունքները:

Այսպիսով, Թուրքիան հայերի նկատմամբ իրականացրել է «Ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի 1948թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված բոլոր արարքները: Կարևոր է նշել, որ չնայած Ցեղասպանության մասին կոնվենցիան ընդունվել է 1948 թվականին՝ այն տարածվում է նաև Հայոց Ցեղասպանության վրա, քանի որ դրանով զուտ ամրագրվել է ցեղասպանության իրավաբանական սահմանումը, և փաստաթղթում ուղղակիորեն ընդգծված է, որ միջազգային այս ծանրագույն հանցագործությունը պատմության բոլոր ժամանակաշրջաններում մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը:

Թեև հայության, քաղաքակիրթ պետությունների, դրանց իշխանությունների և միջազգային ու տեղական տարբեր կառույցների կողմից ջանքեր են գործադրվում Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, ինչպես նաև Թուրքիային պատասխանատվության կանչելու ուղղությամբ, սակայն Թուրքիան ոչ միայն հերքում է Հայոց Ցեղասպանությունը, այլև բացահայտորեն պետական մակարդակով հակահայ քարոզչություն է իրականացնում և ատելության սերմանում հայերի նկատմամբ: Թուրքիայի այսպիսի քաղաքականությունը ոտնահարում է Հայոց Ցեղասպանությունից տուժած մարդկանց հեղինակությունն ու հիշատակը, վիրավորում ինչպես զոհերի, այնպես էլ այդ արհավիրքից փրկվածների ու նրանց ժառանգների պատիվն ու արժանապատվությունը: Մինչդեռ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության հանցագործության հրապարակային հերքումները կամ արդարացման փորձերը պետք է օրենքով պատժելի լինեն (Report of the Committee on the Elimination of Racial Discrimination, UN Doc. A/48/18 (15.09.1993), §4, 14):

Մեր երկրում մարդու իրավունքներին վերաբերող չափազանց կարևոր մյուս խնդիրները, դրանց իրավական հիմնավորումներն ու մանրամասները ներկայացված են հաջորդող շուրջ հինգ հարյուր էջում:

Կարեն Անդրեասյան
ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ԲԱԺԻՆ . Իրավապահ և անվտանգության համակարգ

1.1 Դատախազություն	6
1.2 Արդարադատության նախարարություն	18
1.3 Հատուկ քննչական ծառայություն	42
1.4 Պաշտպանության նախարարություն	49
1.6 Ոստիկանություն	63
1.6 Քննչական կոմիտե	89
1.7 Ազգային անվտանգության ծառայություն.....	94

II ԲԱԺԻՆ. Սոցիալական և քաղաքական համակարգ

2.1 Առողջապահության նախարարություն	93
2.2 Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	114
2.3 Կրթության և գիտության նախարարություն	140
2.4 Տրանսպորտի և կապի նախարարություն	153
2.5 Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով	161
2.6 Բնապահպանության նախարարություն	168
2.7 Մշակույթի նախարարություն	180
2.8 Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	190

III ԲԱԺԻՆ. Տնտեսական համակարգ

3.1 Էկոնոմիկայի նախարարություն	195
3.2 Ֆինանսների նախարարություն	202
3.3 ՀՀ տնտեսական մրցակցության պետական պաշտպանության հանձնաժողով	222
3.4 Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	230
3.5 Գյուղատնտեսության նախարարություն	234
3.6 Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	247

IV ԲԱԺԻՆ. Տարածքային և տեղական ինքնակառավարման համակարգ

4.1 Քաղաքաշինության նախարարություն	251
4.2 Երևանի քաղաքապետարան	258
4.3. Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն	276
4.4 Կադաստրի պետական կոմիտե	288

V ԲԱԺԻՆ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 290 |

VI ԲԱԺԻՆ. Տարեկան զեկույցն ըստ իրավունքների և խոցելի խմբերի	
6.1 Քաղաքական իրավունքներ	304
6.2 Սոցիալ-տնտեսական իրավունքներ	331
6.3 Զինձառայողների իրավունքներ	348
6.4 Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ	357
6.5 Երեխաների իրավունքներ	367
6.6 Կանանց իրավունքներ	383
6.7 Շրջակա միջավայրի պաշտպանություն	395
6.8 Խտրականության դրսևորումներ	402
6.9 Փախստականների իրավունքներ	409
VII ԲԱԺԻՆ. Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմ (ԲԿԱՄ)	
տարեկան զեկույց	419

1.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) իրավասության ոլորտում հայտնաբերված խնդիրները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ: Դատախազության գործունեության ոլորտում դրական զարգացումներն արձանագրված չեն, քանի որ 2014 թվականի զեկույցի համար Դատախազության կողմից չի տրամադրվել համապատասխան պատշաճ տեղեկատվություն:

Առկա թերություններն ու խնդիրները

1.1.1 Դատախազությունը չի ձեռնարկել բավարար միջոցներ՝ ազատագրկման վայրերում խոշտանգման դեպքերը վեր հանելու և կանխելու ուղղությամբ:

Ստացվել են բողոքներ, որ 2014 թվականի ընթացքում ձերբակալված և կալանավորված անձանց պահման մի շարք վայրեր, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներ (ՔԿՀ) ընդունված անձանց մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ, սակայն այդ վնասվածքների առկայության փաստով բազմաթիվ դեպքերում կայացվել են քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական հետապնդում դադարեցնելու մասին որոշումներ: Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանհտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպվում է ՀՀ առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան¹: Խնդրի վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից հայտնել են, որ 2014 թվականի ընթացքում ՁՊՎ-ներ ընդունված 186 անձանց մոտ հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ, իսկ ՀՀ արդարադատության նախարարության տվյալներով՝ նույն ժամանակահատվածում ՔԿՀ-ներ մարմնական վնասվածքներով ընդունվել է 321 անձ, և դեպքերի վերաբերյալ իրագեկումներ են ներկայացվել վարույթն իրականացնող մարմիններին՝ համապատասխան ընթացքը որոշելու համար²: Միաժամանակ, որոշ արձանագրված դեպքերով չեն իրականացվել անհրաժեշտ դատավարական և քննչական գործողություններ (օրինակ՝ զննություն, փորձաքննություն), և/կամ այդ դեպքերը բավարար խորությամբ և արագությամբ չեն ուսումնասիրվել: Բացի դրանից՝ օբյեկտիվ և

¹ ՀՀ կառավարության 05.06.2008թ. որոշմամբ հաստատված ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգի համաձայն՝ ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածք կամ ակնհայտ հիվանդության նշաններ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատ լինելու դեպքում՝ Ոստիկանության մարմնի հերթապահը հրավիրում է բուժաշխատողի:

² Վերոնշյալ դեպքերում ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության՝ 26.05.2008 թվականի թիվ 17/4-253 և Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի՝ 04.06.2008 թվականի թիվ 40/8-1768 հանձնարարականների համաձայն՝ մարմնական վնասվածքներով ՔԿՀ ընդունված բոլոր անձանց դեպքերով գրություններ են ուղարկվում, և տեղեկացվում են վարույթն իրականացնող մարմինները և Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչությունը:

բազմակողմանի քննություն իրականացնելու վերաբերյալ կասկածներ է հարուցում նաև այն հանգամանքը, որ քրեական գործ հարուցելու մերժումների հիմնական հիմնավորում են եղել հենց ձերբակալված և կալանավորված անձանց պնդումները, որ իրենք ստացել են վնասվածքները մինչև արգելանքի վերցվելը կամ արգելանքի վերցվելու ժամանակ սայթաքելու կամ ընկնելու հետևանքով: Նման դեպքերում իրավասու մարմինները չպետք է բավարարվեն արգելանքի վերցված անձանց տեղեկություններով, այլ պետք է գիտակցեն, որ դեպքի հանգամանքների բացահայտման պարտավորությունը կրում են իրենք: Նշվածի համատեքստում հատկանշական է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենսդրությամբ նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, նաև պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները³: Այսպիսով, ազատագրված անձանց մոտ մարմնական վնասվածքների հայտնաբերման դեպքերի առթիվ պատշաճ քննություն չիրականացնելը հանգեցրել է մարդու խոշտանգումներից, դաժան, անմարդկային, ինչպես նաև պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի ոտնահարմանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) իր մի շարք որոշումներով ամրագրել է, որ իշխանություններն ունեն կալանքի տակ գտնվող անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը պաշտպանելու պարտականություն: Եթե անձը հսկողության ներքո հայտնվելիս եղել է առողջական լավ վիճակում, սակայն ազատ արձակվելիս նրա մոտ հայտնաբերվել է վնասվածք, ապա պետությունը պարտավոր է տրամադրել համոզիչ բացատրություն՝ այդ վնասվածքների առաջացման պատճառների վերաբերյալ, այլապես խոշտանգման, վատ վերաբերմունքի ենթադրությունը կարող է գործել հոգուս տուժողի՝ հանգեցնելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (ՄԻԵԿ) 3-րդ հոդվածի խախտման⁴: Մեկ այլ գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ կալանքի ընթացքում կամ ոստիկանության հսկողության ներքո գտնվելու մյուս ժամանակահատվածներում անձին պատճառված վնասը ծանրակշիռ հիմք է տալիս ենթադրելու, որ այդ անձը ենթարկվել է վատ վերաբերմունքի⁵: Այսպիսով, Դատախազությունը պարտավոր է ձեռնարկել օրենսդրությամբ նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Ավելին, Դատախազությունը, լինելով պատիժների և հարկադրանքի այլ միջոցների նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին և ունենալով համապատասխան լիազորություններ, պատշաճ կերպով չի ապահովել ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում բռնությունների և խոշտանգումների հնարավոր դեպքերի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով քննությունը:

Առաջարկ. **խոշտանգման դեպքերը վեր հանելու և կանխելու համար, ՔԿՀ-ներում և ՁՊՎ-ներում գտնվող ազատագրվածների մոտ արձանագրված մարմնական վնասվածքների ստացման դեպքերը բացահայտելու նպատակով՝ ապահովել գործի**

³ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 17, մաս 3

⁴ Tomasi v. France (1992), Aksoy v. Turkey (1996), Selmouni v. France (1998), Corsacov v. Moldova (2006)

⁵ Bursuc v. Romania (2004)

հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման իրականացումը:

1.1.2 Գրանցվել են մի շարք դեպքեր, երբ անձը որպես վկա հայտնած տեղեկությունների հիման վրա կարճ ժամանակ անց նույն գործով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ, ինչի պատճառով խախտվել են վերջինիս լռելու իրավունքը, ինչպես նաև անմեղության կանխավարկածը:

Ընթացիկ տարում Պաշտպանը ստացել է մի շարք ահազանգեր քաղաքացիներից, իրավապաշտպաններից, փաստաբաններից առ այն, որ դեռևս չի վերացել անձին որպես վկա հարցաքննելու, իսկ հետո վերջինիս հայտնած տեղեկությունների հիման վրա նրան նույն կամ մեկ այլ գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավելու պրակտիկան: Դեռևս 2013 թվականի զեկույցում Պաշտպանը անդրադարձել էր այս հարցին՝ պարզաբանելով, որ նման պրակտիկան խախտում է անձի լռելու իրավունքը, ինչպես նաև անմեղության կանխավարկածը, այնուամենայնիվ, 2014 թվականի ընթացքում խնդիրը լուծում չի ստացել: Այսպես, վկայի կարգավիճակում անձը պարտավոր է տալ ճշմարտացի ցուցմունքներ՝ հայտնել գործով իրեն ողջ հայտնի դարձածը և պատասխանել առաջադրված հարցերին⁶: Այնինչ, մեղադրյալի համար օրենսդրությամբ նախատեսված են քրեադատավարական այլ երաշխիքներ, օրինակ՝ հրաժարվել ցուցմունքներ տալուց⁷: Սակայն եթե անձը՝ որպես վկա, այդ թվում հարկադրման կամ այլ մեթոդների կիրառման արդյունքում, տալիս է ցուցմունք և այդ ցուցմունքները օգտագործվում են իրեն որպես մեղադրյալ ներգրավելու նպատակով, ապա դա համարվում է լռելու և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի⁸, ինչպես նաև անմեղության կանխավարկածի⁹ խախտում, որովհետև անձը, փաստացի չօգտվելով մեղադրյալի համար սահմանված օրենսդրական երաշխիքներից, ցուցմունքը տվել է վկայի կարգավիճակում, սակայն այդ ցուցմունքները հետագայում օգտագործվել են մեղադրանքը հիմնավորելու համար: Չնայած այն հանգամանքին, որ կասկածյալի և մեղադրյալի լռելու և ինքն իր դեմ վկայություն չտալու իրավունքը բառացի ամրագրված չէ ՄԻԵԿ-ում՝ այն ճանաչվել է ՄԻԵԴ-ի կողմից կայացված մի շարք վճիռներում և ընկած է արդարացի դատավարության հասկացության հիմքում: Այսպես, մի շարք դեպքերում ՄԻԵԴ-ը կասկածյալի և մեղադրյալի լռելու իրավունքը տարածել է նաև վկաների վրա: Մասնավորապես, իր որոշումներից մեկում ՄԻԵԴ-ը նշել է, որ բոլոր այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել անձի լռելու և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի խախտմամբ, չեն կարող դրվել մեղադրանքի հիմքում և օգտագործվել որպես ապացույց անձի մեղավորությունը հաստատելու համար: Ավելին, լռելու և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը պետք է ուղղված լինի նրան, որ «անձը չվերածվի իր իսկ դատապարտման զենքի»¹⁰: Փաստորեն, ՄԻԵԴ-ի գործերի վերլուծությունը ցույց է տալիս,

⁶ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 86

⁷ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդվածներ 63, 65

⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 86

⁹ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 18

¹⁰ *Saunders v. United Kingdom (1996), Brusco v. France (2010)*

որ նույնիսկ այն դեպքում, երբ անձը (օրինակ՝ վկան) կամովին է հայտնել իրեն հայտնի տեղեկությունները, այդ թվում՝ իր դեմ, դրանք ապացույց համարվել չեն կարող, եթե վկայում են այդ անձի հանցագործության կատարման մասին¹¹: Այսպիսով, վկային հարցաքննելու, իսկ հետո իր հայտնած տեղեկությունների հիման վրա կարճ ժամանակ անց նրան որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավելու պրակտիկան հակասում է ՄԻԵԴ վերոնշյալ վճիռներին և ներպետական օրենսդրությանը: Ուստի, Դատախազությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ քայլեր՝ նման պրակտիկան բացառելու ուղղությամբ:

Առաջարկ. բացառել որպես վկա՝ անձի հայտնած տեղեկությունների հիման վրա վերջինիս նույն կամ մեկ այլ գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավելու պրակտիկան:

1.1.3 Դատախազությունը մի շարք դեպքերում չի ապահովել հետաքննության և նախաքննության մարմինների, այդ թվում՝ Ոստիկանության, Քննչական կոմիտեի կողմից հաղորդումների քննարկման ժամկետի պահպանումը, դրանք քննարկելիս օրենքով սահմանված որոշումներից մեկի կայացումը, քրեական գործերով պատշաճ քննության իրականացումը:

Չնայած նրան, որ Դատախազությունն իրականացնում է հսկողություն հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ¹², 2014թ. ընթացքում ստացվել են ահազանգեր և դիմում-բողոքներ՝ քրեական վարույթ իրականացնող մարմինների, օրինակ՝ ՀՀ ոստիկանության¹³, ՀՀ քննչական կոմիտեի կողմից տարբեր դատավարական և քննչական գործողություններ խախտումներով իրականացվելու վերաբերյալ: Այսպես, օրինակ, Ոստիկանության ծառայողները հանցագործության մասին քաղաքացիների հաղորդումները քննարկելիս որոշ դեպքերում չեն պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգը¹⁴, որով հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առթիվ օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում: Այնինչ, քաղաքացիների դիմումների, Ոստիկանության ներկայացրած տվյալների վերլուծությունից պարզ է դարձել, որ նշված կարգը ոչ միշտ է պահպանվել Ոստիկանության ծառայողների կողմից: Այսպես, 2014թ. ՀՀ ոստիկանության կողմից գրանցվել է 18 դեպք, երբ ՀՀ Ոստիկանության ծառայողները խախտել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման 10-օրյա ժամկետը: ՀՀ ոստիկանությունից հայտնել են, որ այդ 18 դեպքերից 7-ը տեղի է ունեցել ոչ օբյեկտիվ պատճառների արդյունքում, իսկ մնացածը՝ օբյեկտիվ. օրինակ՝ ուշանում են կատարված հարցումների կամ նշանակված փորձաքննությունների պատասխանները: Ոստիկանության նշած պատճառները, ըստ գործող քրեական դատավարության օրենսգրքի, որևէ կերպ չեն կարող հիմնավորել 10-

¹¹ *Aleksandr Zaichenko v. Russia (2010)*

¹² ՀՀ Սահմանադրություն, հոդված 103

¹³ Մանրամասն տես «ՀՀ կատավարությանն առնչվող ոստիկանության» գլխում

¹⁴ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հոդված 180

օրյա ժամկետի չպահպանումը: Բացի դրանից՝ բողոքներ են ստացվել, որ Ոստիկանության ծառայողների կողմից հանցագործության մասին հաղորդումները քննարկվելիս ոչ բոլոր դեպքերում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումներից որևէ մեկը¹⁵: Այսպիսով, վարույթն իրականացնող մարմինները չեն կայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված 3 որոշումներից որևէ մեկը: Նշվածի արդյունքում անձինք զրկվել են ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185 հոդվածով նախատեսված բողոքարկման իրավունքից, քանի որ նշված հոդվածը նախատեսում է «որոշման» բողոքարկման հիմքերն ու կարգը, այլ ոչ թե «եզրակացության», որը կազմվում է՝ ղեկավարվելով ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/354 հրամանով, այնինչ պետք է կիրառվեր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածը: Պաշտպանի աշխատակազմի կողմից արձանագրվել են նաև խախտումներ. ազատությունը սահմանափակված անձանց չեն պարզաբանվել իրենց իրավունքները, վերջիններս չեն ապահովվել փաստաբանով, գրանցվել է ապօրինի ձերբակալման և/կամ կալանավորման 1 դեպք: Միաժամանակ, ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների կողմից 2014թ. նոյեմբերի 18-ից դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում գրանցվել է դատավարական և քննչական գործողությունները խախտումներով կատարելու 31 դեպք: Այսպիսով, Պաշտպանին ուղղված բազմաթիվ դիմում-բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ բազմաթիվ դեպքերում Դատախազը չի իրականացրել գործի քննության նկատմամբ պատշաճ հսկողություն, որի արդյունքում ակնհայտ քրեական հատկանիշներ պարունակող նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, և մի շարք դեպքերում քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումները վերացվել են ոչ թե Դատախազության կողմից, այլ դրանք դատարան բողոքարկելու արդյունքում: Օրինակ, դիմում-բողոքներից մեկով պարզվել է, որ քաղաքացին հանցագործության վերաբերյալ հաղորդում է ներկայացրել առ այն, որ ամուսինը կոտրել է իրենց բնակարանի դռան կողպեքը, տան իրերը հավաքել հյուրասենյակում ու այրել: Սակայն թե հետաքննության մարմինը, թե Դատախազությունը հանցագործության մասին կնոջ հաղորդման հիման վրա մերժել են հարուցել քրեական գործ՝ պատճառաբանելով, որ վնասված ու ոչնչացված գույքը համատեղ սեփականության իրավունքով պատկանել է միայն ամուսիններին: Մինչդեռ, քրեական օրենսգրքը պատասխանատվություն է նախատեսում ինքնիրավչության¹⁶ համար: Նշվածը հաշվի առնելով՝ տվյալ գործով քննիչը պետք է քննարկեր տղամարդու արարքում ինքնիրավչության հանցակազմի առկայության հարցը, ինչը չի արվել, և նշվածի արդյունքում քաղաքացին զրկվել է իրավական արդյունավետ պաշտպանության հնարավորությունից¹⁷: Մեկ այլ դիմում-բողոքով քաղաքացին բարձրացրել է Դատախազությանը ներկայացված հանցագործության մասին իր հաղորդման կապակցությամբ իրականացվող գործողությունների օրինականության խնդիրը: Գործի հանգամանքների ուսումնասիրությունից պարզվել է, որ քննիչը չի ձեռնարկել հնարավոր բոլոր

¹⁵ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 181

¹⁶ ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 322

¹⁷ http://pashtpan.am/library/view_news/article/1213

միջոցառումները՝ գործի հանգամանքների հետազոտման բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու համար, իսկ դատախազի կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվել տվյալ գործի հետաքննության օրինականության նկատմամբ: Միաժամանակ տվյալ գործի հանգամանքների հետազոտման բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունը չապահովելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Պաշտպանի գրության կապակցությամբ որևէ միջոց չի ձեռնարկվել¹⁸: Այսինքն, Դատախազությունը մի շարք դեպքերում հետևողականություն չի դրսևորել քննչական անհրաժեշտ գործողություններ իրականացնելու և գործի քննության լրիվությունը, օբյեկտիվությունը և բազմակողմանիությունն ապահովելու ուղղությամբ: Նշյալ խնդիրները հանգեցրել են քաղաքացիների իրավունքների և շահերի, մասնավորապես՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինների առջև արդյունավետ իրավական պաշտպանություն ստանալու իրավունքի խախտումների:

Առաջարկ. իրականացնել պատշաճ հսկողություն՝ բացառելու հաղորդումների քննարկման ժամկետի, դրանք քննարկելիս օրենքով սահմանված որոշումներից մեկը չկայացնելու, քրեական գործերով պատշաճ քննություն չիրականացնելու խախտումները:

1.1.4 2014 թվականի ընթացքում նույնպես պատշաճ չի ապահովվել քրեական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների հետևանքով առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների մնացած անչափահասների և անաշխատունակների՝ պետության միջոցների հաշվին խնամքի իրավունքը:

Պաշտպանի կողմից 2014 թվականին ստացված ահազանգերի և դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ քրեական վարույթ իրականացնող պաշտոնատար անձինք գործնականում չեն ապահովել ազատությունը սահմանափակված անձանց հսկողության տակ գտնվողների խնամքի իրավունքը: Ավելին, այն սակավաթիվ դեպքերում, երբ նշված օրենսդրական պահանջը կատարվել է, քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից տրամադրված գումարը և այլ միջոցները չեն բավարարել նույնիսկ նվազագույն խնամքի և գոյատևման միջոցների ապահովման համար: Ըստ օրենքի՝ անչափահասները, անաշխատունակ անձինք, որոնք ծնողին կամ կերակրողին արգելանքի վերցնելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի այլ գործողությունների հետևանքով մնացել են առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների, ունեն խնամքի իրավունք, որը նշված մարմինը պարտավոր է նրանց ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին: Ավելին, քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի նաև անչափահաս և անաշխատունակ անձանց հանձնել նրանց ազգականների խնամակալությանը՝ վերջիններիս համաձայնությամբ¹⁹: Հատկանշական է, որ համանման կարգավորում առկա է նաև այլ պետությունների

¹⁸ http://pashtpan.am/library/view_news/article/1193

¹⁹ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 140, մաս 1

համապատասխան քրեադատավարական օրենսդրություններում²⁰: Նշյալ կարգավորումը սահմանելիս ՀՀ օրենսդիրը հաշվի է առել ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Տվյալ դեպքում Օրենսգրքով նախատեսվել է կոնկրետ «այլ դեպք», որի պարագայում պետությունը կրում է պարտավորություն՝ ապահովելու որոշակի խմբի (օրինակ՝ կալանավորված անձի խնամքի տակ գտնվող անչափահասների) սոցիալական ապահովության իրավունքը: ՀՀ Սահմանադրության մեկնաբանության համաձայն՝ պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականությունը ենթադրում է սոցիալական ապահովման արդյունավետ համակարգի կազմակերպում, որն առաջին հերթին կներառի պետության կողմից իրականացվող համալիր միջոցառումներ՝ ուղղված քաղաքացիների սոցիալական ապահովմանը և սպասարկմանը *կյանքի տարբեր իրավիճակներում*, երբ քաղաքացիներն անկարող են իրենց աշխատանքով ստանալ եկամուտ կամ վարձատրվել՝ ապահովելով իրենց կենսամակարդակը: Դատախազության տրամադրած տվյալներով՝ 2013-2014թթ. ընթացքում գրանցվել են վերոնշյալ նորմի կիրառման 1 դեպք Սյունիքի մարզում (նշված դեպքով արված միջնորդությունը մերժվել է), 1 դեպք Երևան քաղաքում (անչափահասը հանձնվել է ազգականի խնամակալությանը), 1 դեպք Շիրակի մարզում (միջնորդությունը բավարարվել է մասամբ, մասնավորապես՝ խնամքի և գոյատևման միջոցներով ապահովելու մասով, իսկ ընտանիքի անչափահաս անդամներին դրամական բավարարում հատկացնելու մասով մերժվել): Չնայած Դատախազությունն ընդունել է, որ կա օրենսդրական խնդիր, այն է՝ համարժեք իրավական կառուցակարգի բացակայություն, այնուհանդերձ, առ այսօր էական քայլեր չեն ձեռնարկվել խնդրի կարգավորման ուղղությամբ: Ուստի, Դատախազությունը չի ձեռնարկել բավարար քայլեր՝ օրենքի վերոնշյալ դրույթի ապահովման ուղղությամբ:

Առաջարկ. ապահովել անձանց խնամքի և գոյատևման միջոցների ապահովման իրավունքի իրացումը, ինչպես նաև, իրավասու այլ մարմինների հետ համագործակցելով, օրենսդրորեն սահմանել հստակ մեխանիզմներ, որոնց առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը կարող է արդյունավետ ապահովել անձի խնամքը և գոյատևման միջոցների տրամադրումը²¹:

1.1.5 Արդեն մի քանի տարի Պաշտպանը բարձրաձայնում է ոչ հակառակորդի գնդակից մահացած զինծառայողների քրեական գործերը բացահայտելու ուղղությամբ Դատախազության կողմից բավարար միջոցներ չձեռնարկելու, մահացածների հարազատների մատնանշած հանգամանքները մանրակրկիտ չուսումնասիրելու, ինչպես նաև քննությունը անհիմն ձգձգելու խնդիրները:

²⁰ Տես՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածը, Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 378-րդ հոդվածը և Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածը:

²¹ Տես «ՀՀ արդարադատության նախարարություն» գլխում

Ընթացիկ տարում կրկին ստացվել են դիմում-բողոքներ բանակում ոչ հակառակորդի գնդակից մահացած զինծառայողների ծնողներից և բարեկամներից առ այն, որ Դատախազության կողմից չի ապահովվել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում, չեն պահպանվել գործերի քննության ողջամիտ ժամկետները, չեն իրականացվել անհրաժեշտ քննչական գործողություններ, ինչի արդյունքում այդ դեպքերը տարիներ շարունակ մնացել են չբացահայտված: Օրինակ՝ թերի դատավարական և քննչական գործողությունների իրականացման հետևանքով գործերից մեկի քննությունը ձգձգվել է շուրջ 8 տարի՝ արդյունքում հանգեցնելով գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման²²: Նման դեպքերում Դատախազությունը իրականացնում է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն²³, լիազորված է հետաքննության մարմին և քննիչին հանձնարարել կատարելու անհետաձգելի քննչական գործողություններ: Մինչդեռ, ՄԻԵԴ-ի մի շարք վճիռներով հստակ սահմանվել է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինները պարտավոր են հնարավորինս սեղմ, ողջամիտ ժամկետներում իրականացնել արդյունավետ նախաքննություն և կայացնել որոշում²⁴: Սակայն զինծառայողների մահվան մի շարք գործերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ նախաքննություն իրականացնող մարմինների կողմից չեն պահպանվել գործերի քննության ողջամիտ ժամկետները, ինչի արդյունքում չի վերականգվել արդարությունը՝ խախտելով ՄԻԵԿ-ով ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև ներպետական օրենսդրության պահանջները: Այսպիսով, եթե իրականացվեր պատշաճ հսկողություն՝ զինված ուժերում մահվան դեպքերը բացահայտելու, մեղավորներին պատասխանատվության ենթարկելու, հանցագործությունների կատարմանը նպաստող գործոնները վեր հանելու և վերացնելու ուղղությամբ, ապա հետագայում հնարավոր կլիներ նվազեցնել նման դեպքերը: Այնուհանդերձ, նշված գործողությունները պատշաճ կերպով չեն կատարվել, իսկ 2014 թվականի ընթացքում բանակում կրկին արձանագրվել են ոչ հակառակորդի գնդակից զինծառայողների մահվան դեպքեր: Այսպիսով, Դատախազությունը՝ որպես հետաքննության և նախաքննության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին, չի ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ՝ ապահովելու մահացած զինծառայողների գործերի ամբողջական և օբյեկտիվ քննությունը: Հատկանշական է, որ դեռևս 2013 թվականի հուլիսին ՀՀ զինվորական դատախազության նախաձեռնությամբ ստեղծվեց աշխատանքային խումբ՝ ուսումնասիրելու 2011 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածում բանակում մահվան դեպքերով հարուցված քրեական գործերով իրականացված քննության արդյունավետությունը: Այսինքն՝ աշխատանքային խմբի ուսումնասիրության առարկա չեն եղել այն քրեական գործերը, որոնցով ամփոփիչ որոշումները կայացվել են մինչև 2011 թվականի հունվարի 1-ը, սակայն պարզ չէ, թե ժամանակային նման սահմանափակում նախատեսելիս ինչ հանգամանքներ են հաշվի առնվել Դատախազության կողմից: Նման տարբերակված մոտեցումը դժգոհություններ է

²² ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 197

²³ ՀՀ Սահմանադրություն, հոդված 103

²⁴ *Eckle v. Germany* (1982); *Deweert v. Belgium* (1980); *Wemhoff v. Germany* (1968)

առաջացրել: Դեռ ավելին, նույնիսկ 2011 թվականից ի վեր գրանցված մի շարք դեպքերում էլ դժգոհություններ են եղել քրեական գործերի քննության ընթացքից: Հետևաբար, նշված աշխատանքային խմբի գործունեությունը ևս չի լուծել զինծառայողների մահվան դեպքերով նրանց հարազատների կողմից քննության ընթացքի կապակցությամբ արտահայտված դժգոհությունների խնդիրը: Հարկ է նշել, որ դեռևս մի քանի տարի առաջ Պաշտպանի կողմից առաջարկ է ներկայացվել՝ ՀՀ Ազգային ժողովի հատուկ հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ, որում կներգրավվեն բոլոր խորհրդարանական խմբակցությունների, քաղաքացիական հասարակության, անհրաժեշտության դեպքում՝ նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները. սակայն այդ գաղափարը չի իրագործվել: Մինչդեռ հանձնաժողովի ստեղծման դեպքում, պահպանելով քրեական հետապնդման մարմինների ինքնուրույնության սկզբունքը և չմիջամտելով վերջիններիս լիազորությունների իրականացմանը, այն կարող է ուսումնասիրել մահացած զինծառայողների գործերը և խորհրդատվական բնույթի, ուղղորդող առաջարկներ ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմիններին: Արդյունքում, նշված հանձնաժողովի աշխատանքը կնպաստի մահացածների հարազատների՝ քրեական գործերի քննության կապակցությամբ առկա կասկածների և դժգոհությունների փարատմանը, ինչպես նաև իրավասու գերատեսչությունների նկատմամբ վստահության ամրապնդմանը:

Առաջարկ. մահացած զինծառայողների քրեական գործերի քննության արդյունավետությունն ու թափանցիկությունն ապահովելու, դրանք բացահայտելու, այդ թվում՝ մահացածների հարազատների մատնանշած հանգամանքները մանրակրկիտ ուսումնասիրելու, քննության ողջամիտ ժամկետները պահպանելու նպատակով՝ աջակցել հատուկ հանձնաժողովի ձևավորմանը:

1.1.6 Դատախազության ոչ պատշաճ հսկողության արդյունքում քննիչների կողմից քաղաքացիներին չի տրամադրվել բնակարանի խուզարկության մասին դատարանի որոշումը, ինչը հանգեցրել է անձանց՝ դատարանի որոշումների բողոքարկման իրավունքի ոտնահարմանը:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ բազմաթիվ դեպքերում քննիչները քաղաքացիներին չեն տրամադրել բնակարանի խուզարկության թույլատվության մասին դատարանի որոշումները: Ըստ դիմումատուների՝ քննիչները համապատասխան որոշումը անձանց չտրամադրելը հիմնավորել են նրանով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նման դատավարական կարգ սահմանված չէ: Օրենսգիրքը նախատեսում է միայն, որ խուզարկություն կամ առգրավում կատարելուց առաջ քննիչը պարտավոր է անձին, որի մոտ կատարվում է խուզարկություն կամ առգրավում, ծանոթացնել որոշմանը, որի մասին նրանից վերցվում է ստորագրություն, մինչդեռ ոչինչ չի նշվում դատարանի համապատասխան որոշման տրամադրման վերաբերյալ²⁵: Արդյունքում, քրեական վարույթի այն մասնակիցը, ում նկատմամբ բնակարանի խուզարկություն թույլատրելու մասին միջնորդությունը բավարարվել է, և քննիչն ընդամենը ծանոթացնում է այդ

²⁵ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 228, մաս 2

որոշմանը, և նրան չի հանձնվում դրա պատճենը, չի կարող օրենքով սահմանված կարգով բողոքարկել դատարանի որոշումը: Մինչդեռ, Սահմանադրությամբ ամրագրվում է յուրաքանչյուր անձի՝ իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը²⁶: Ավելին, «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»²⁷: Միաժամանակ, բնակարանի խուզարկությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով իրականացվում է միայն դատարանի որոշմամբ, իսկ քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու, այս դեպքում՝ բնակարանի խուզարկություն կատարելու, միջնորդությունների վերաբերյալ ընդունվող որոշումները կարող են վերանայվել վերադաս դատարանի կողմից՝ դատախազի, միջնորդություն հարուցած մարմնի, այն անձանց կամ նրանց ներկայացուցիչների բողոքի հիման վրա, որոնց շահերը շոշափվում են²⁸: Ընդ որում, քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է դատավարությանը մասնակցող յուրաքանչյուր անձի պարզաբանել նրա իրավունքները և պարտականությունները, ապահովել սույն օրենսգրքով սահմանված կարգով դրանց իրականացման հնարավորությունը²⁹: Այսպիսով, ՀՀ Սահմանադրության և համապատասխան օրենքների կարգավորումներից բխում է, որ պետությունն ունի պոզիտիվ պարտականություն՝ ապահովելու անձանց բողոքարկման իրավունքը, դատարանների մատչելիությունը, ինչպես նաև արդյունավետ պաշտպանության իրավունքի իրացման համար անհրաժեշտ միջոցները: Այսինքն, բնակարանի խուզարկություն թույլատրելու մասին դատարանի որոշումը ուղղակիորեն վերաբերում է վարույթի համապատասխան մասնակցի շահերին, հետևաբար, քննիչը պարտավոր է տրամադրել բնակարանի խուզարկություն թույլատրելու մասին դատարանի որոշումը և պարզաբանել, որ նշված որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով: Սակայն, Դատախազության կողմից պատշաճ հսկողություն չիրականացվելու հետևանքով, գործնականում բազմաթիվ դեպքերում անձինք զրկվել են դատարանի կայացրած որոշումների դատական կարգով բողոքարկման հնարավորությունից:

Առաջարկ. նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ, որոնցով կսահմանվի կարգ՝ խուզարկության դեպքում անձին դատարանի համապատասխան որոշման պատճենը հանձնելու համար:

²⁶ ՀՀ Սահմանադրություն, հոդված 18

²⁷ ՀՀ Սահմանադրություն, հոդված 19

²⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 12, մաս 2 և հոդված 278, մաս 3

²⁹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 101, մաս 2

1.1.7 Դատախազությունը չի ապահովել իր գործունեության թափանցիկությունը, այդ թվում՝ բազմաթիվ դեպքերում խախտել է քաղաքացիների տեղեկատվության ազատության իրավունքը՝ չպատասխանելով ներկայացված հաղորդումներին, դիմումներին, չտրամադրելով օրենքով սահմանված այլ տեղեկություններ:

2014 թվականի ընթացքում եղել են մի շարք դեպքեր, երբ Դատախազությունը օրենքով սահմանված կարգով չի պատասխանել քաղաքացիների կողմից ներկայացված հաղորդումներին և դիմումներին: Այսպես, օրինակ, բողոքներից մեկով պարզվել է, որ քաղաքացին հաղորդում է ներկայացրել Դատախազություն, սակայն որևէ միջոց չի ձեռնարկվել հանցագործության մասին հաղորդումը օրենքով սահմանված կարգով քննարկելու և համապատասխան որոշում կայացնելու ուղղությամբ³⁰: Նշվածի կապակցությամբ պարզաբանումներ ստանալու նպատակով՝ Պաշտպանի կողմից գրություն է ներկայացվել Դատախազություն, սակայն բարձրացված հարցի վերաբերյալ որևէ տեղեկություն չի տրամադրվել, ավելին՝ Դատախազությունը տեղեկությունները Պաշտպանին տրամադրելու համար պահանջել է ներկայացնել քաղաքացու դիմում-բողոքը քննարկման ընդունելու մասին Պաշտպանի որոշման պատճենը: Նշենք, որ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի մեկնաբանությունից բխում է, որ մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանություն իրականացնող «պետական այլ մարմիններ» ցանկում առանձնահատուկ տեղ է գրավում նաև ՀՀ դատախազությունը, որը ՀՀ գլխավոր դատախազի կողմից ղեկավարվող միասնական համակարգ է և գործում է Սահմանադրությամբ իրեն տրված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: Միաժամանակ, ՄԻԵԿ-ը սահմանել է, որ յուրաքանչյուր ոք պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ունի, նույնիսկ եթե նրա իրավունքները խախտվել են ի պաշտոնե գործող անձանց կողմից³¹: Խնդրի կապակցությամբ ՄԻԵԴ-ն այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ իրավական պաշտպանության միջոցները պետք է հավասարապես արդյունավետ լինեն և գործնականում, և օրենքի տեսանկյունից, մասնավորապես, այն իմաստով, որ պետական մարմիններն իրենց գործողություններով չպետք է անարդարացիորեն խոչընդոտեն իրավական պաշտպանության ապահովմանը³²: Մինչդեռ, քաղաքացիների դիմումների կապակցությամբ Դատախազությունը նման գործելաճով խախտել է քաղաքացիների՝ ինչպես ՄԻԵԿ-ով, այնպես էլ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը: Մեկ այլ դիմումով քաղաքացին հայտնել է Պաշտպանին, որ ծեծի է ենթարկվել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի

³⁰ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 181

³¹ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, հոդված 13

³² Husayn (Abu Zabaydah) v. Poland (2014)

այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանման աշխատակիցների կողմից հենց տվյալ ստորաբաժանման շենքում³³: Տվյալ դեպքով Պաշտպանի դիմումի հիման վրա հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով քրեական գործ, որը հետագայում կարճվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից: Հետագայում Պաշտպանի հանձնարարականի հիման վրա իրականացվել է նշված կարճված քրեական գործի ուսումնասիրություն: Արդյունքում, պարզվել է, որ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննություն իրականացնելու տեսանկյունից բավականին խնդրահարույց էին ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում հարուցված քրեական գործի շրջանակներում իրականացված մի շարք գործողություններ: Նշված խնդիրների կապակցությամբ Պաշտպանը գրություն է ուղարկել Դատախազություն, քանի որ Հատուկ քննչական ծառայության կողմից իրականացվող նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնում են ՀՀ գլխավոր դատախազը և նրա լիազորած դատախազները³⁴: Սակայն տվյալ գրությունը Դատախազության կողմից վերահասցեագրվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Այսինքն, Դատախազությունը բավարար քայլեր չի ձեռնարկել քաղաքացիներին համապատասխան տեղեկատվություն տրամադրելու համար, ինչով էլ չի ապահովել քաղաքացիների տեղեկատվության ազատության և իրավական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը: Նմանատիպ այլ գործերով Դատախազությունն իր լիազորությունների շրջանակներում կրկին չի ձեռնարկել անհրաժեշտ քայլեր, դեռ ավելին՝ տվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթների վերաբերյալ չհիմնավորված մեկնաբանություններ: Մինչդեռ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են իրենց իրավասությանը վերաբերող պահանջվող նյութեր և փաստաթղթեր, ինչպես նաև բողոքը քննարկելու համար անհրաժեշտ ցանկացած տեղեկություն ներկայացնել Պաշտպանին անվճար և անարգել: Այդուհանդերձ, Դատախազության կողմից Պաշտպանին չեն տրամադրվել գրություններով բարձրացված մի շարք հարցերի վերաբերյալ պարզաբանումներ և պահանջված նյութեր:

Առաջարկ. ապահովել կառույցի գործունեության թափանցիկությունը, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով պատշաճ պատասխանել քաղաքացիներին, ինչպես նաև տրամադրել քաղաքացիների բողոքների առնչությամբ անհրաժեշտ տեղեկատվությունը:

³³ http://pashtpan.am/library/view_news/article/1161

³⁴ «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 2, մաս 4

1.2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- ՀՀ ԱՆ «Արմավիր» նոր քրեակատարողական հիմնարկում շահագործման են հանձնվել 400 դատապարտյալների համար նախատեսված մասնաշենքերը, ինչպես նաև կահավորվել են հիմնարկի մի շարք մասնաշենքեր:
- Նախարարության կողմից մշակվել են «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Դատախազության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնց նպատակն է սահմանել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր:
- Նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության և «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի միջև 2015 թվականի հունվարին կնքվել է համագործակցության հուշագիր, որով նախատեսվել է այլ միջոցառումների հետ մեկտեղ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամում հիմնել բանտային (պենիտենցիար) բժշկության գծով դասընթաց և մշակել այդ գծով համապատասխան կրթական ծրագիր, ապահովել բանտային (պենիտենցիար) բժշկության, ինչպես նաև հարակից մասնագիտությունների գծով կադրերի պատրաստումը, ինչպես նաև Նախարարության ՔԿՀ-ների բուժական անձնակազմի վերապատրաստման ծրագրերի և դասընթացների իրականացումը:
- Քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրներին արդյունավետ արձագանքելու, ինչպես նաև իրավաբանական օգնություն ցուցաբերելու նպատակով Նախարարության ՔԿ վարչությունում ներդրվել են «Թեժ Գիծ» և «Զայնային Պորտալ» ծառայությունները, ինչպես նաև գործարկվել է Նախարարության ՔԿ www.ced.am պաշտոնական կայքէջը:
- Նախարարության «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկվել են պատժի կրումից ազատված անչափահաս դատապարտյալների սոցիալական վերաինտեգրման ծրագրեր: Մասնավորապես, պատիժը կրած անչափահաս դատապարտյալներին տրամադրվել են անհատական հոգեբանական, սոցիալական և իրավական

խորհրդատվություններ, անհրաժեշտության դեպքում նրանք ուղղորդվել են համապատասխան կառույցներ, աջակցություն ստացել փաստաթղթերի ձեռքբերման, կրթության կազմակերպման և իրենց կենսագործունեությանն անհրաժեշտ այլ հարցերում:

- «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքում 2014 թվականի հունիսի 21-ին կատարվել են փոփոխություններ, որոնց համաձայն՝ Նախարարությունում գործում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային կառավարման համակարգ, որը հասանելի է ՔԿԱԳ մարմիններին համացանցի միջոցով:
- Նախարարի հրամանով 2014թ. ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից ներկայացվել են ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ, որոնցով կարգավորվելու են մինչդրդեգրման և հետորդեգրման վերահսկողության գործընթացները՝ սահմանելով իրավասու մարմինների իրավունքները և պարտականությունները, այդ թվում օտարերկրյա պետության իրավասու մարմինների հետ համագործակցության շրջանակներում:

Առկա թերություններն ու խնդիրները

- 1.2.1 Պետական ռեգիստրի գործակալությունը մի շարք դեպքերում անհիմն մերժել է քաղաքացիներին տրամադրել կամ ընդունել օրենքով սահմանված փաստաթղթերը, ներկայացրել ձևական պահանջներ, չի ապահովել քաղաքացիների պատշաճ սպասարկումը, աշխատանքային ժամերին գործակալության աշխատակիցները բացակայել են աշխատավայրից:

2014 թվականին գրանցվել են մի շարք ահազանգեր, որ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը (Գործակալություն) աշխատանքային ժամերին քաղաքացիներին պատշաճ չի սպասարկել և մի շարք դեպքերում ներկայացրել է ձևական պահանջներ: Դեպքերից մեկով քաղաքացիները դեկտեմբերի 30-ին հնարավորություն չեն ունեցել կատարել որևէ գործողություն, քանի որ ժամը 14:00-ից Գործակալության աշխատակիցները բացակայել են աշխատավայրից: Այլ օրերի որոշ դեպքերում, ժամը 18:00-ն չլրացած, քաղաքացիների դիմումները չեն ընդունվել աշխատակիցների կողմից: Նշենք, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և դրանց ենթակա կազմակերպություններում աշխատաժամանակի սկիզբը և ավարտը սահմանում է ՀՀ կառավարությունը³⁵: Մասնավորապես, համապատասխան որոշմամբ վերջիններիս համար աշխատաժամանակի սկիզբ և ավարտ է սահմանվել համապատասխանաբար 9:00-ն ու 18:00-ն, աշխատողների

³⁵ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 142

հանգստանալու և սնվելու համար ընդմիջման ժամ՝ 13:00-14:00-ն³⁶: Այսինքն, մի շարք դեպքերում Գործակալության աշխատակիցները չեն պահպանել վերոնշյալ որոշմամբ սահմանված աշխատանքային ռեժիմը, ինչի արդյունքում քաղաքացիները հնարավորություն չեն ունեցել կատարելու համապատասխան գործողություններ: Միաժամանակ, փաստաբանների և քաղաքացիների հայտնած տեղեկություններով՝ բազմաթիվ դեպքերում դիմումների ընդունումը մերժվել է Գործակալության աշխատակիցների կողմից ձևական պատճառների առաջադրմամբ: Օրինակ՝ քաղաքացու կողմից ներկայացվել է լիարժեք բովանդակությամբ տեղեկանք՝ նախապատվության իրավունքների վերաբերյալ, սակայն տրվել է մերժում, քանի որ թղթի վրա բացակայել է «Տեղեկանք» վերնագիրը: Այնինչ, օրենսդրության համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են³⁷: Միաժամանակ, եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա վարչական մարմինը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին, ինչպես նաև դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չլինելու դեպքում՝ վարչական մարմինը դիմողին առաջարկում է սահմանված ժամկետում համալրել այդ ցանկը³⁸: Մինչդեռ, գործնականում բազմաթիվ են դեպքերը, երբ Գործակալության աշխատակիցների կողմից քաղաքացիներին ներկայացվել են ձևական պահանջներ՝ այդպիսով խախտելով օրենսդրությամբ սահմանված դրույթները:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու Գործակալության աշխատակիցների բնականոն աշխատանքային ռեժիմը, կարգապահական պատասխանատվության ենթարկել կարգը խախտած աշխատակիցներին, օրենքով սահմանված գործառույթներն իրականացնելիս զերծ մնալ քաղաքացիներին ձևական պահանջներ ներկայացնելուց:

1.2.2 ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների կողմից իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում խախտվել են ԴԱՀԿ կայացրած որոշման վերաբերյալ քաղաքացուն պատշաճ ծանուցելու ժամկետները:

Ստացվել են բազմաթիվ դիմումներ ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների կողմից անգործության և/կամ իրենց պարտականությունները մի շարք խախտումներով կատարելու արդյունքում օրենքով սահմանված ծանուցման ժամկետների չպահպանման

³⁶ ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 24-ի N 2138-Ն որոշում՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում և դրանց ենթակա կազմակերպություններում աշխատաժամանակի սկիզբը և ավարտը սահմանելու մասին»

³⁷ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 5

³⁸ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 32

վերաբերյալ³⁹: Այսպես, դեպքերից մեկով պարզվել է, որ ԴԱՀԿ ծառայությունն, առանց քաղաքացուն ծանուցելու, 25.000 ՀՀ դրամ գումարի չափով արգելանք է կիրառել վերջինիս դրամական միջոցների վրա: Նշենք, որ օրենքով հարկադիր կատարողի որոշման պատճենը ոչ ուշ, քան որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում պատշաճ կերպով ուղարկվում է պահանջատիրոջը և պարտապանին⁴⁰, ինչը, սակայն, ԴԱՀԿ ծառայության կողմից չի կատարվել: Որպես նշված խախտման հիմնավորում՝ Նախարարությունը հայտնել է, որ ծանրաբեռնված աշխատանքի պայմաններում հնարավոր են որոշակի թերացումներ՝ կապված անձին կատարողական վարույթի հարուցման մասին ծանուցելու 3-օրյա ժամկետի պահպանման հետ, և նման թերացումը պետք է գնահատվի գործի ելքի վրա ունեցած ազդեցության տեսանկյունից: Այնինչ, նշված պատճառաբանությունը չի կարող օրենքի պահանջի չկատարման հիմք լինել՝ հատկապես հաշվի առնելով այն, որ տվյալ դեպքերում ԴԱՀԿ ծառայության գործողություններն անմիջականորեն կապված են եղել անձի սեփականության իրավունքի սահմանափակման հետ:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ ԴԱՀԿ ծառայողների կողմից օրենսդրորեն սահմանված ծանուցման ժամկետները պատշաճ կերպով պահպանելու ուղղությամբ:

1.2.3 ԴԱՀԿ կողմից օրենքի սխալ կիրառման արդյունքում մի շարք դեպքերում անհնար է եղել արգելանք կիրառել պարտապանի գույքի վրա, ինչի հետևանքով խախտվել են պարտատիրոջ իրավունքները:

Պաշտպանը ստացել է մի շարք ահազանգեր և դիմում-բողոքներ, որ ԴԱՀԿ-ի կողմից որոշ դեպքերում չի պահպանվել հայցի ապահովման միջոցի փոփոխման դատական կարգը, ինչի արդյունքում հնարավոր չի եղել ապահովել դատարանին ուղղված, պարտատիրոջ հայցում առկա նյութական պահանջը: Այսպես, բողոքներից մեկի ուսումնասիրությունից պարզվել է, որ պարտատերը դիմել է դատարան և միջնորդել հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ: Հայցի ապահովման միջոցի միջնորդությունը բավարարվել է դատարանի կողմից, և կատարողական թերթը փոխանցվել է ԴԱՀԿ ծառայություն, ինչի հիման վրա էլ պարտապանի գույքի վրա արգելանք է տարածվել: Ըստ օրենքի՝ գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատարանը միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը⁴¹: Միաժամանակ, օրենսդրությամբ սահմանված է, որ գործին մասնակցող անձի միջնորդությամբ դատարանն իրավունք ունի հայցի ապահովման մեկ միջոցը փոխարինել մեկ այլ միջոցով կամ ձևափոխել⁴²: Բացի դրանից՝ հայցի ապահովումը նույնպես վերացնում է դատարանը⁴³: Միաժամանակ հայցը բավարարելու

³⁹ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, հոդված 28

⁴⁰ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, հոդված 28

⁴¹ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 97, մաս 1, պարբերություն 1

⁴² ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 100

⁴³ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 101

մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի կատարումը⁴⁴: Սակայն, երբ պարտապանի կողմից ԴԱՀԿ ծառայության հաշվին վճարվում է հայցադիմումում առկա պահանջի գումարը, ԴԱՀԿ ծառայությունը վերացնում է գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքը և ավարտում կատարողական վարույթը՝ առաջնորդվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով⁴⁵: Այնինչ, այս դեպքերում անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքի նորմերը, որոնցով մանրամասն կարգավորվում է հայցի ապահովման միջոցների փոփոխության կատարման կարգը: Արդյունքում, երբ որոշ ժամանակ անց պարտատերը պարտապանի գույքի և դրամական միջոցների նկատմամբ լրացուցիչ գումարի չափով արգելանք դնելու վերաբերյալ հայցի ապահովման միջնորդություն է ներկայացրել դատարան, պարզվել է, որ պարտապանն այլևս գույք չունի, քանի որ ԴԱՀԿ ծառայության կողմից գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքի հանվելուց հետո անձը վաճառել է գույքը: Այսպիսով, ԴԱՀԿ ծառայության կողմից օրենքի սխալ կիրառման արդյունքում, պարտատերը զրկվել է իր հայցապահանջի ապահովման հնարավորությունից:

Առաջարկ. Հայցի ապահովման միջոցի փոփոխման դատական կարգը պահպանելու նպատակով գործնականում ապահովել ԴԱՀԿ ծառայողների կողմից օրենքի ճիշտ կիրառումը:

1.2.4 2014 թվականին ամբողջությամբ լուծում չեն ստացել ՔԿՀ-ներում գերբնակեցման, պահման, սանիտարահիգիենիկ և կոմունալ-կենցաղային անբավարար պայմանների խնդիրները:

Պաշտպանի Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմը (ԲԿԱՄ) 2014 թվականի ընթացքում օրենքով իրեն վերապահված լիազորություններն իրականացնելիս կրկին արձանագրել է մի շարք խնդիրներ քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ): Այսպես, չնայած Նախարարության կողմից իրականացված վերանորոգման աշխատանքներին՝ ՔԿՀ-ներում շարունակել է չլուծված մնալ ոչ պատշաճ պահման պայմանների խնդիրը, այդ թվում՝ գերբնակեցումը, անբավարար սանիտարահիգիենիկ և կոմունալ-կենցաղային պայմանները⁴⁶: Ազատագրկվածներին պահելու վայրերի խիստ անբարենպաստ պայմանները հանգեցրել են ոչ միայն անձի արժանապատվության՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբավարար հիմքի ոտնահարման, այլև վերջինիս մոտ մի շարք հիվանդությունների առաջացմանը: Այսպես, ՔԿՀ-ներ կատարած այցերի ընթացքում ԲԿԱՄ փորձագետներն ակնատես են եղել որոշ խցերում աղտոտվածության, ծայրահեղ վատ սանիտարահիգիենիկ պայմանների, ինչպես նաև խցերում արձանագրվել են ազատագրկվածների ոչ հավասարաչափ բնակեցման դեպքեր: Օրինակ՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում մի շարք ազատագրկվածներ բողոքել են խցերում առկա միջատներից, որոնք լուրջ անհանգստություն են պատճառել կալանավորված անձանց՝ խայթելով իրենց ձեռքերը և ոտքերը: Ավելին,

⁴⁴ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 101

⁴⁵ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, հոդված 41

⁴⁶ Մանրամասն տես՝ ԲԿԱՄ 2014 թվականի զեկույցում

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (Կոմիտե) 2014 թվականին Հայաստան կատարած իր այցի արդյունքում արձանագրել է, որ Նուբարաշեն ՔԿՀ-ում ցմահ դատապարտյալների պահման պայմաններն անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող են⁴⁷: Միաժամանակ, ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում դեռևս չկան երկարատև տեսակցության սենյակներ: Ըստ Նախարարության՝ նշված խնդիրը չի ստանում իր լուծումը շենքային պայմանների պատճառով: Ավելին, ոչ բավարար շենքային պայմանների պատճառով դեռևս որոշ խցերում զուգարաններն առանձնացված չեն: Չնայած վերջին տարիներին ՔԿՀ-ներում գերբնակեցման խնդիրը լուծելու ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք էական քայլեր⁴⁸, այնուամենայնիվ, որոշ ՔԿՀ-ներում առկա են գերբնակեցման խնդիրներ: Օրինակ՝ «Վարդաշեն» ՔԿՀ-ում լրակազմը սահմանված է՝ 154, սակայն այցի պահին փաստացի գտնվել է 214 ազատազրկված, «Կոշ» ՔԿՀ-ում լրակազմը սահմանված է 640, սակայն այցի պահին փաստացի գտնվել է 739 ազատազրկված, «Սևան» ՔԿՀ-ում լրակազմը սահմանված է 548, մինչդեռ՝ այցի պահին այնտեղ փաստացի գտնվել է 593 ազատազրկված անձ, «Հրազդան» ՔԿՀ-ում լրակազմը սահմանված է 215, սակայն այցի պահին փաստացի գտնվել է 237 ազատազրկված⁴⁹: Բացի դրանից՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի խցերից մեկում այցի պահին պահվել է 18 ազատազրկված անձ, չնայած խցում տեղադրված է եղել ընդամենը 12 մահճակալ, իսկ խցի մակերեսը մոտ 40քմ էր, իսկ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ կատարած այցի ընթացքում խցերից մեկում, որի չափսերն էին 1.75մx3.80մ (ներառյալ զուգարանը), պահվել է թվով 2 ազատազրկված: Այնինչ, օրենսդրության համաձայն՝ ուղղիչ հիմնարկում մեկ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել 4քմ-ից⁵⁰:

Առաջարկ. լուծել ՔԿՀ-ներում գերբնակեցման խնդիրը՝ ինչպես նորերի կառուցման, այնպես էլ գործող ՔԿՀ-ներում դատապարտյալների համաչափ բնակեցման միջոցով, միաժամանակ, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ ԲԿԱՄ-ի կոցմից վեր հանված խնդիրների վերացման և ՔԿՀ-ներում սանիտարահիգիենիկ և կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ:

1.2.5 ՔԿՀ-ներում դեռևս առկա են խնդիրներ՝ պատշաճ բժշկական օգնության տրամադրման, ինչպես նաև տրվող սննդի որակի առումով:

ԲԿԱՄ փորձագետները մի շարք դեպքերում արձանագրել են, որ դատապարտյալներին տրամադրվող բուժսպասարկման որակը եղել է ոչ բավարար⁵¹: «Նուբարաշեն» ՔԿՀ-ում առանձին ազատազրկվածներ ԲԿԱՄ փորձագետներին հայտնել են, որ բժշկի կարիք

⁴⁷ <http://www.humanrightseurope.org/2015/01/new-anti-torture-experts-report-on-armenia/>

⁴⁸ Նոր ՔԿՀ-ների կառուցում, համաներում հայտարարելու մասին որոշման ընդունում, որի կիրառման արդյունքում 2013թ. ազատ է արձակվել մոտ 170 կալանավորված անձ և մոտ 710 դատապարտյալ, ներքին կազմակերպական միջոցառումների իրականացում և այլն:

⁴⁹ Մանրամասն տես՝ ԲԿԱՄ 2014 թվականի զեկույցում

⁵⁰ Քրեակատարողական օրենսգիրք, հոդված 73

⁵¹ Մանրամասն տես՝ ԲԿԱՄ 2014 թվականի զեկույցում

ունենալու դեպքում վերջինս ժամանում է նման խնդրանք ներկայացնելուց մինչև երեք ժամ ուշացումով: Վարչակազմի հետ ունեցած առանձնագրույցի ընթացքում պարզվել է, որ ՔԿՀ-ն ունի բժշկական անձնակազմի համալրման կարիք, ինչն էլ հաճախ նման ուշացումների պատճառ է դառնում: Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ ՔԿՀ-ները բարձր որակավորում ունեցող բժշկական անձնակազմով ապահովելու հարցն ընդգրկվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության մեջ⁵²: Բուժանձնակազմի աշխատանքի ծանրաբեռնվածության և հաստիքների ոչ ամբողջական համալրվածության պատճառով երբեմն ոչ պատշաճ են լրացվել հիվանդ ազատագրկվածների պատմագրերը, ինչի հետևանքով լիարժեք չեն երևացել բուժումն իրականացնելու հիմքը և տրամադրվող բուժօգնության տեսակը: Ըստ ԲԿԱՄ դիտարկման՝ ՔԿՀ-ներում արտաքին գնությունը որոշ դեպքերում պատշաճ կերպով չի իրականացվել⁵³: Արտաքին գնության մասին արձանագրությունների ուսումնասիրություններից և հարցումներից պարզ է դարձել, որ ՔԿՀ-ի բուժաշխատողի կողմից արտաքին գնությունը հաճախ կազմակերպվել է ազատագրկվածին ուղեկցող ջոկատի ուստիկանի և ՔԿՀ-ի հերթապահի, ինչպես նաև վարչակազմի այլ ներկայացուցիչների ներկայությամբ: Արտաքին գնությունը, հակառակ օրենսդրական պահանջին, հիմնականում համատեղվել է անձնական խուզարկության հետ: Ավելին, երբեմն մի քանի ազատագրկվածների արտաքին գնությունն իրականացվել է միաժամանակ և համատեղ, ինչը հաստատվել է նաև համապատասխան արձանագրությունների ուսումնասիրությունից: Խնդրահարույց է նաև ՔԿՀ-ներում հարազատների կողմից բերված դեղորայքի, բժշկական սպասարկման այլ պարագաների հաշվառման և վերահսկման մեխանիզմի բացակայությունը, ինչը խնդիրներ է առաջացնում նաև վարչակազմի համար⁵⁴: ԲԿԱՄ-ի փորձագետները հանդիպել են բազմաթիվ հիվանդ ազատագրկվածների, որոնք ունեցել են բուժսպասարկման և բուժօգնության տրամադրման տարբեր խնդիրներ: Այդ նույն խնդիրներն առկա են արդեն մի քանի տարի, իսկ 2014 թվականին դրանք նույնպես չեն լուծվել կամ ձգձգվել են մի շարք օրենսդրական թերի կարգավորումների պատճառով⁵⁵: Լիարժեք չեն եղել, իսկ որոշ դեպքերում՝ բացակայել են Բժշկական աշխատանքային հանձնաժողովի (այսուհետ՝ ԲՄՀ) աշխատանքների չափորոշիչները և ընթացակարգերը: Կարգավորված չէ նաև ԲՄՀ-ի կողմից ազատագրկված անձի մոտ Կառավարության որոշմամբ

⁵² ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշում Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին

⁵³ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=87539>, 1543-Ն Հրաման

⁵⁴ Արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ Նախարարության կողմից մշակվում է համապատասխան իրավական ակտի նախագիծ՝ հարազատների կողմից դեղորայք բերելու գործընթացը կանոնակարգելու և պատշաճ հսկողություն իրականացնելու համար:

⁵⁵ ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշմամբ հաստատված «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգ» և ՀՀ կառավարության 04.12.2003թ. թիվ 1636-Ն որոշմամբ սահմանված «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգ»

հաստատված Կարգով⁵⁶ նախատեսված հիվանդության ախտորոշման դեպքում Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին դիմելու ընթացակարգը, ժամանակահատվածը, նշված ընթացակարգերի թափանցիկության բարձրացման նպատակով բողոքարկման մեխանիզմը: Նշենք, որ 2010թ. Առողջապահության միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կողմից հաստատվել է հիվանդությունների դասակարգման նոր սանդղակ: Պարզվել է, որ Կարգի 2-րդ հավելվածում առկա հիվանդությունները չեն համապատասխանում ԱՄԿ կողմից հաստատված հիվանդությունների դասակարգման նոր սանդղակին⁵⁷: Խնդրահարույց է մնում, որ հիվանդ ազատագրվածներին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ կամ այլ քաղաքացիական բուժհաստատություն ուղարկելու կարգազրեքի համաձայնությունը ձգձգվում է մոտ 2 շաբաթ, ինչը հիվանդ ազատագրվածի առողջության պահպանման ուղղությամբ բժշկական սպասարկման արդյունավետությունը նվազեցնում է: Բացի դրանից՝ դեռևս սահմանված չեն պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների հստակ ցանկն ու դրանց կանխատեսելի և հստակ չափորոշիչները: 2014 թվականի ընթացքում գրանցվել են սննդամթերքի որակի, պահման պայմանների, տրամադրման կարգի, ինչպես նաև պատրաստվող ճաշերի բազմազանության պահանջի տարբեր խախտումներ⁵⁸: **Այսպես, համաձայն արձանագրված տվյալների՝ «Կոշ» ՔԿՀ-ում ճաշը նախապատրաստվել էր մոտ 470 անձի համար, սակայն համաձայն պահեստից սննդամթերքի դուրսգրման փաստաթղթերի՝ սննդամթերքը տրամադրվել էր 739 անձի հաշվարկով:** Բացի դրանից՝ պահպանված սննդի օրինակների վրա ժամկետ նշված չի եղել (նույն խնդիրն առկա է եղել նաև «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում): Ավելին, որոշ դեպքերում բացակայել են սննդի որակի հավաստագրերը, վերահսկողությունն իրականացվել է միայն ժամկետների ստուգմամբ և ընդունվել հաշիվ-ապրանքագրի հիման վրա: Սննդամթերքի պահման սառնարանային սենյակներում ոչ միշտ են պահպանվել սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պայմանները, ճաշացանկը հիմնականում միատեսակ է եղել: Մտահոգիչ է, որ մինչ այժմ գործում է սննդի համտեսման ձևական պրակտիկա: Օրինակ, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ կատարած այցի ժամանակ սննդի համտեսման և որակի վերահսկման մատյանում նախապես ստորագրված էր ճաշի և ընթրիքի համար, որոնք դեռ պատրաստված չէին: Սննդամթերքի պահպանման կամ պատրաստման նկատմամբ ոչ լիարժեք վերահսկողության արդյունքում, 2014 թվականի մայիսին «Աբովյան» ՔԿՀ-ում արձանագրվել է թունավորման դեպք, որի կապակցությամբ Նախարարության կողմից իրականացվել է ծառայողական քննություն: Արդյունքում, Նախարարությունը տեղեկացրել է Պաշտպանին, որ զանգվածային սննդային թունավորման պատճառը եղել է 09.05.2014 թվականին դատապարտյալներին և կալանավորված անձանց տրամադրված սննդի մեջ հայտնաբերված հարուցիչ մանրէների հանրագումարը, ինչի

⁵⁶ ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշմամբ հաստատված «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգ»

⁵⁷ Մանրամասն տես՝ ԲԿԱՄ 2014 թվականի զեկույցում

⁵⁸ Մանրամասն տես՝ ԲԿԱՄ 2014 թվականի զեկույցում

պատճառը սննդի պատրաստման տեխնոլոգիայի խախտման և հիգիենայի նորմերին չհամապատասխանող պայմաններն են եղել:

Առաջարկ. ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն և 04.12.2003թ. թիվ 1636-Ն որոշումներում կատարել համապատասխան փոփոխություններ՝ սահմանելու ԱՀԿ հիվանդությունների դասակարգման նոր սանդղակը, միաժամանակ հստակեցնել բժշկական աշխատանքային հանձնաժողովի աշխատանքային չափանիշները և ընթացակարգերը, միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին դիմելու ընթացակարգը, ժամանակահատվածը, բողոքարկման մեխանիզմը, ինչպես նաև ՔԿՀ-ներում համալրել բուժանձնակազմը, օրենքով սահմանված կարգով կազմակերպել արտաքին զննությունը, անհրաժեշտության դեպքում կազմակերպել կալանավորված անձի/դատապարտյալի տեղափոխումը «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ կամ այլ բուժհաստատություն, պատշաճ վերահսկել դատապարտյալների և կալանավորված անձանց տրվող սննդի որակի և դրա բազմազանության ապահովումը:

1.2.6 2014 թվականին ՔԿՀ-ներում պատշաճ չի ապահովվել դատապարտյալների զբոսանքի և տեսակցության իրավունքը, ինչպես նաև ձեռնարկված միջոցները վերջիններիս աշխատանքի և զբաղվածության ապահովման ուղղությամբ եղել են անբավարար:

Օրենսդրությամբ նախատեսվում է դատապարտյալի հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի, մարմնամարզության, 8-ժամյա գիշերային քնի իրավունքը⁵⁹, իսկ դատապարտյալի զբոսանքը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված բացօթյա տարածքում, և դրա տևողությունը չի կարող պակաս լինել օրական 1 ժամից⁶⁰: Բացի դրանից՝ պատիժը կատարող հիմնարկի պետը դատապարտյալի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կարող է կիրառել խրախուսման միջոցներ, այդ թվում նաև՝ զբոսանքի ժամանակի մեկ ժամով ավելացում՝ մինչև մեկ ամիս ժամկետով⁶¹: Ազատագրված անձանց հետ ունեցած առանձնագրույցների ընթացքում ԲԿԱՄ-ը պարզել է, որ եղել են զբոսանքի իրավունքի ոչ լիարժեք իրացման որոշ դեպքեր: Մասնավորապես, որոշ դեպքերում զբոսանքները կազմակերպվել են աշխատանքային օրերին, իսկ կիրակի օրերը ոչ բոլոր ՔԿՀ-ներում են դատապարտյալներին ապահովել զբոսանքի հնարավորություն⁶²: Զբոսանքի ոչ պատշաճ կազմակերպման պատճառ է եղել նաև ՔԿՀ-ների աշխատակիցների ոչ բավարար թիվը: Խնդրահարույց են նաև մատյաններում արձանագրված, մեծ թվով ազատագրված անձանց՝ զբոսանքից միաժամանակյա հրաժարման դեպքերը («Նուբարաշեն», «Արթիկ», «Վանաձոր» ՔԿՀ-ներ), որոնք, սակայն, հաստատված չեն ստորագրությամբ, կամ առկա է միայն խցակիցներից մեկի ստորագրությունը՝ բոլորինի

⁵⁹ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 12, մաս 1, կետ 10

⁶⁰ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 78

⁶¹ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 58

⁶² ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 56, մաս 4. «Դատապարտյալն օգտվում է առնվազն մեկ ժամ, իսկ անչափահաս դատապարտյալը՝ առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից»:

փոխարեն: Իսկ մի շարք դեպքերում չեն նշվել նաև զբոսանքից հրաժարված անձանց տվյալները: Զբոսանքից հրաժարման պատճառ կարող է լինել նաև խցերի գերբնակեցման արդյունքում ազատագրված անձանց՝ հերթափոխով քնելու հանգամանքը: Միաժամանակ, Կոմիտեն բարձրաձայնել է Հայաստանում ցմահ դատապարտյալներին խցից դուրս ձեռնաշղթաներով տեղաշարժի իրականացման վերաբերյալ, սակայն ձեռնաշղթաներ պետք է կիրառել միայն այն դեպքերում, երբ կատարվել է վտանգի գնահատում, և տվյալ անձի դեպքում առկա է նման վտանգի հավանականություն⁶³: Կոմիտեն իր զեկույցում խնդրահարույց է համարել այն, որ ցմահ դատապարտյալներին օրենքով սահմանված այցերի քանակն էապես տարբերվել է որոշակի ժամկետով դատապարտված անձանց համար նախատեսված այցերի քանակից: Այսպես, որոշակի ժամկետով դատապարտվածներն ունեն ամսական առնվազն մեկ կարճաժամկետ այցի և յուրաքանչյուր երկու ամիսը մեկ երկարաժամկետ այցի հնարավորություն, մինչդեռ ցմահ դատապարտյալներին տրամադրվում է ընդամենը երեք կարճաժամկետ և մեկ երկարաժամկետ այցի հնարավորություն յուրաքանչյուր տարի⁶⁴: Խնդրին է անդրադարձել նաև ՄԻԵԴ-ը⁶⁵, նշելով, որ այն իրավակարգավորումները, որոնք նախատեսում են ցմահ դատապարտյալների այցերի կրճատումներ, առանց հաշվի առնելու յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունը, հակասում են մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային: Միաժամանակ, ըստ Նախարարության հայտնած տվյալների՝ 2014 թվականի ընթացքում վարձատրվող և չվարձատրվող աշխատանքով ապահովված է եղել դատապարտյալների ընդամենը 22%-ը: Այսպես, դատապարտյալները հիմնականում ընդգրկված են եղել տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում, ինչպես նաև ներգրավվել են ՔԿՀ-ների ճաշարանների աշխատանքներում: Նախարարության «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2014 թվականի ընթացքում իրականացվող մշակութային և կրթական դասընթացներին մասնակցություն են ունեցել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող բոլոր անչափահաս դատապարտյալները և կին դատապարտյալների 30-40%-ը: Չնայած ներկայացված տվյալներին՝ պետք է ձեռնարկվեն նաև այլ միջոցառումներ՝ ՔԿՀ-ներում առկա աշխատանքի և զբաղվածության ապահովման ուղղությամբ, որի պատշաճ կազմակերպումը կարող է նաև հանգեցնել պահվող անձանց միջև, ինչպես նաև ՔԿՀ-ի վարչակազմի հետ հարաբերությունների բարելավմանը: Նշենք, որ դատապարտյալի աշխատանքի, կրթության, ինչպես նաև կազմակերպվող մշակութային, լուսավորչական, կրոնական և մարզական միջոցառումների ապահովման իրավունքը ամրագրված է օրենսդրությամբ⁶⁶: Մասնավորապես, ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, ինչպես նաև հետբուհական մասնագիտական կրթությունը կազմակերպելու համար, ինչպես նաև ՔԿՀ-ի վարչակազմը պետք է նաև արդյունավետ միջոցներ ձեռնարկի՝ խթանելու իր հսկողությամբ դատապարտյալների կողմից մշակութային, լուսավորչական և

⁶³ <http://www.humanrightseurope.org/2015/01/new-anti-torture-experts-report-on-armenia/>,

⁶⁴ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 92

⁶⁵ *Trosin v. Ukraine* (2012)

⁶⁶ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, գլուխ 16

մարզական ինքնագործ միավորումների ստեղծումը⁶⁷: Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով⁶⁸ ամրագրվել են ՔԿՀ-ներում գտնվող, ազատման ենթակա անձանց՝ աշխատաշուկային ինտեգրվելուն ուղղված միջոցառումները, մասնավորապես՝ Զբաղվածության պետական ծառայության գործակալության և այդ անձանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչների մուտքը քրեակատարողական հիմնարկներ թույլատրելը: Իր հերթին Կոմիտեն նշել է, որ ցմահ դատապարտյալները խցից դուրս չեն ունեցել գործունեություն ծավալելու հնարավորություն: Կոմիտեն նշել է նաև, որ դեռևս սահմանված չէ ցմահ դատապարտյալների աշխատանքի, կրթության, սպորտի կամ այլ զբաղվածության հնարավորությունը, իսկ համապատասխան իրավական ակտերով արգելվում է խցից դուրս ցմահ դատապարտյալների աշխատելը: Ուստի, անհրաժեշտ է ապահովել ցմահ դատապարտյալների՝ խցից դուրս աշխատելու, կրթվելու, սպորտով և այլ գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը⁶⁹:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու ՔԿՀ-ի վարչակազմի կողմից զբոսանքի պատշաճ կազմակերպումը, ցմահ դատապարտյալներից բխող վտանգի գնահատումը, որի հիման վրա միայն կորոշվի վերջիններիս տեղաշարժի իրականացումը ձեռնաշղթաներով, օրենսդրական փոփոխության միջոցով յուրաքանչյուր ցմահ ազատազրկվածների տեսակցության իրավունքը սահմանափակել յուրաքանչյուրի համար՝ ելնելով կոնկրետ դեպքի առանձնահատկություններից, տարբեր ծրագրերի, միջոցառումների իրականացման միջոցով լուծել դատապարտյալների աշխատանքի և զբաղվածության հարցը:

1.2.7 Օրենսդրական թերի կարգավորումների արդյունքում նոտարները կարող են յուրաքանչյուր դեպքում գանձել քաղաքացիներից գործարքի գնի առավելագույն չափը:

Պաշտպանի կողմից բազմիցս բարձրաձայնվել է ՀՀ կառավարության որոշմամբ⁷⁰ սահմանված, նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագների նվազագույն և առավելագույն սահմանների միջև առկա լայն միջակայքի խնդիրը: Այսպես, նոտարի կողմից կատարվող յուրաքանչյուր նոտարական գործողության համար վճարը ներառում է տվյալ նոտարական գործողության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի ուսումնասիրումը, պարզաբանումը, այդ թվում՝ օրինակելի ձևերով փաստաթղթերի պատրաստումը և տրամադրումը: Իսկ Կառավարության որոշումը հստակ չի նախատեսում չափանիշներ, որոնցով պետք է առաջնորդվեն նոտարները վճարի այս կամ այն չափը պահանջելիս: Արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ յուրաքանչյուր գործողության դեպքում նոտարն, առանց հիմնավորման,

⁶⁷ ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 89 և 91

⁶⁸ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշում Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին

⁶⁹ <http://www.humanrightseurope.org/2015/01/new-anti-torture-experts-report-on-armenia/>

⁷⁰ ՀՀ կառավարության 26.05.2011թ. թիվ 733-Ն որոշում

կարող է պահանջել սահմանված վճարի առավելագույն չափը: Օրինակ՝ նշված որոշման Հավելվածի 21-րդ մասի համաձայն՝ ժառանգական գույքի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման համար նոտարը գանձում է նվազագույն աշխատավարձի 10-30-ապատիկի չափով վճար: Նշվածը հնարավորություն է ընձեռում նոտարին յուրաքանչյուր դեպքում իր ծառայության դիմաց գանձել առավելագույն վճարը, այսինքն՝ 30.000 ՀՀ դրամ՝ հաշվի չառնելով կոնկրետ գործարքի բնույթը և փաստացի կատարվող աշխատանքի ծավալը, քանի որ վերոնշյալ որոշմամբ սահմանված չեն չափանիշներ, որոնք կհստակեցնեն կոնկրետ գործի դեպքում գործարքի համար գանձվող վճարի սահմանաչափը: Հատկանշական է, որ Նախարարությունը հարցի կապակցությամբ հայտնել է, որ նոտարի կողմից մատուցվող ծառայության վճարի չափը հնարավոր չէ հստակ սահմանել, ինչը պայմանավորված է յուրաքանչյուր դեպքի խիստ անհատական լինելու և կատարվող աշխատանքի ծավալի նախնական որոշման անհնարինությամբ:

Առաջարկ. ՀՀ կառավարության 26.05.2011թ. թիվ 733-Ն որոշման մեջ սահմանել հստակ չափորոշիչներ, որոնք կսահմանափակեն նոտարների հայեցողությունը գործարքի սակագնի չափի որոշման հարցում:

1.2.8 Գրանցվել են ՔԿԱԳ գործակալության կողմից համապատասխան փաստաթղթերն արխիվում չպահպանելու, քաղաքացիներից անօրինական գումար պահանջելու, օրենքով սահմանված փաստաթղթերը տրամադրելն անհիմն մերժելու և անհարկի ձգձգելու, քաղաքացիներին ձևական պահանջներ առաջադրելու դեպքեր:

2014 թվականին ստացվել են դիմում-բողոքներ ու ահազանգեր փաստաբաններից և քաղաքացիներից՝ կապված Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) գործակալության գործունեության հետ: Դժգոհությունները հիմնականում վերաբերել են ՔԿԱԳ գործակալության կողմից անձանց վերաբերող համապատասխան փաստաթղթերն արխիվում չպահպանելուն, անօրինական կարգով գումար պահանջելուն, օրենքով չսահմանված լրացուցիչ փաստաթղթեր պահանջելուն, անձանց դիմումները չընդունելուն և այլն: Այսպես, օրինակ՝ քաղաքացին ահազանգել է Պաշտպանի թեժ գիծ և հայտնել, որ «N» քաղաքացիական ակտերի կացության գրանցման բաժնում հրաժարվում են իր նորածին երեխային ծննդյան վկայական տրամադրել: Պաշտպանի ներկայացուցիչները պարզել են, որ վկայականը երեխային չի տրամադրվել վերջինիս հոր նկատմամբ հայտարարված հետախուզման պատճառով: Այնինչ, գործող օրենսդրությամբ անձի հետախուզման մեջ գտնվելը չի կարող նրա երեխային ծննդյան վկայականի տրամադրման մերժման հիմք լինել: Պաշտպանի ներկայացուցչի միջամտությամբ նորածին երեխային տրամադրվել է ծննդյան վկայական: Ստացվել են նաև ահազանգեր և դիմում-բողոքներ առ այն, որ ՔԿԱԳ աշխատակիցներն, առանց համապատասխան հիմքերի, մերժել են օրենքով սահմանված կարգով տրամադրել փաստաթղթեր, ձևական պահանջներ առաջադրել քաղաքացուն՝ պահանջելով լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնել: Գրանցվել են նաև դեպքեր, երբ ուղղում անելու պատրվակով, առանց անձի համաձայնության ու իմացության, փոխվել է

փաստաթղթի մեջ նրա անուն-ազգանունը՝ հետագայում պատճառաբանելով, որ իրենք անձի անվան մեջ ուղղագրական սխալ են ուղղել, իսկ մի շարք դեպքերում որոշ փաստաթղթեր տրամադրելը մերժվել է բանավոր կարգով: Գործնականում գրանցվել են նաև օրենսդրությամբ որոշ փաստաթղթեր տրամադրելու համար հստակ ժամկետներ սահմանված չլինելու պատճառով անհարկի ձգձգումների, չարաշահումների դեպքեր, ինչն էլ իր հերթին կարող է կոռուպցիոն ռիսկեր առաջացնել:

Առաջարկ. վերահսկել ՔԿԱԳ աշխատակիցների կողմից օրենքի պահանջների պահպանման ապահովումը, պատասխանատվության ենթարկել օրինախախտներին՝ բացառելու փաստաթղթերն արխիվում չպահպանելու, անօրինական գումարներ պահանջելու, օրենքով սահմանված փաստաթղթեր տրամադրելն անհիմն մերժելու և անհարկի ձգձգելու, քաղաքացիներին ձևական պահանջներ առաջադրելու և այլ դեպքերը:

1.2.9 Օրենսդրական թերի կարգավորման արդյունքում սահմանափակվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքները:

Օրենսդրական մի շարք խնդիրների հետևանքով սահմանափակվում է անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի⁷¹ լիարժեք իրացումը: Այսպես, Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է, որ անձի գործունակության հարցը քննելիս քաղաքացին *կարող է* կանչվել դատական նիստի, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը⁷²: Այսինքն, օրենքը անձի՝ դատաքննությանը մասնակցությունը թողնում է դատարանի հայեցողությանը: Միաժամանակ, Օրենսգրքով բացահայտված չէ «առողջական վիճակը թույլ է տալիս» դրույթի բովանդակությունը, որը տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տալիս և գործնականում կարող է կիրառվել այնպես, որ սահմանափակի դատարանի մատչելիությունն անձի համար: Արդյունքում՝ անհամաչափորեն սահմանափակվում են անձի արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև դատավարության կողմերի հավասարության և մրցակցային դատավարության հիմնարար սկզբունքները⁷³: Բացի դրանից՝ անձի գործունակության վերականգնման հարցով դատարան իրավունք ունեն դիմելու միայն անձի խնամակալը, ընտանիքի անդամը կամ հոգեբուժական հաստատության տնօրինությանը⁷⁴: Ստացվում է՝ դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձը չի կարող անձամբ կամ իր կողմից ընտրված ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացնել դատարան իր գործունակությունը վերականգնելու հարցով, ինչը կրկին խնդրահարույց է անձի՝ դատական պաշտպանության, արդար դատաքննության,

⁷¹ ՀՀ սահմանադրություն, հոդված 18

⁷² ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 171

⁷³ Տես նաև “Human Rights Watch”-ի 2015թ. զեկույցը, http://www.hrw.org/sites/default/files/wr2015_web.pdf, «Հելսինկյան Քաղաքացիական Սասմբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ի 2013թ. «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում» զեկույցը

⁷⁴ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 173

իրավաբանական օգնություն ստանալու իրավունքների իրացման, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների տեսանկյունից: Խնդրի առկայությունը հաստատվել է նաև Նախարարության կողմից, ինչպես նաև նախատեսվել է համապատասխան փոփոխությունները ներառել Քաղաքացիական դատավարության ՀՀ օրենսգրքի նախագծում: Ելնելով խնդիրների կարևորությունից⁷⁵ և հաշվի առնելով, որ նման կարգավորումները ոչ իրավաչափ են համարվել նաև Եվրոպական դատարանի⁷⁶, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի և ԵԽ Նախարարների կոմիտեի⁷⁷ կողմից՝ Պաշտպանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան:

Առաջարկ. կատարել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ անձի գործունակության սահմանափակման, դրա վերացման հարցի քննման ժամանակ դատարանում տվյալ անձի պարտադիր մասնակցությունն ամրագրելու, ինչպես նաև անգործունակ անձանց գործունակությունը վերականգնելու համար անձամբ և ուղղակի կամ իր կողմից ընտրված ներկայացուցչի միջոցով դատարան դիմելու իրավունքը սահմանելու ուղղությամբ:

1.2.10 Պետական տուրքի բարձր դրույքաչափի սահմանվելու, ինչպես նաև պետական տուրքի վճարման ոչ իրավաչափ պահանջ ներկայացվելու հետևանքով անձինք զրկվում են դատարանների մատչելիության իրավունքից:

Գործող օրենսդրությամբ սահմանվում է անհամաչափ բարձր պետական տուրքի չափ, ինչը խնդրահարույց է անձանց համար դատարանների մատչելիության իրավունքի տեսանկյունից: Այսպես, դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու զանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով (Օրենք)⁷⁸: Նշված Օրենքի համաձայն՝ դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը), գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն, տալու պետական տուրքը սահմանվում է՝ բազային տուրքի 50 տոկոսի, իսկ պատրաստված

⁷⁵ Բարձրաձայնված խնդիրներն արտացոլվել են նաև «Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց ազատության, արդար դատաքննության և անձնական կյանքի իրավունքները հայկական իրավունքում և պրակտիկայում» ՔՀԻ ՀԿ հետազոտությունում, 2014թ.

⁷⁶ *Nataliya Mikhaylenko v. Ukraine* (2013), *Stanev v. Bulgaria* (2012), *Shtukaturov v. Russia* (2008), *Winterwerp v. Netherlands* (1979)

⁷⁷ ԵԽԽՎ «Հոգեկան հիվանդների իրավիճակի մասին» Թիվ 818 (1977) հանձնարարական, ԵԽ Նախարարների կոմիտեի «Հարկադիր հոսպիտալացված հոգեկան խանգարմամբ տառապող անձանց իրավական պաշտպանության մասին» R (83) 2, «Անգործունակ մեծահասակների իրավական պաշտպանության սկզբունքների մասին» R (99) 4, «Հոգեկան խանգարմամբ անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» Rec (2004)10 հանձնարարականներ

⁷⁸ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 9

յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով⁷⁹: Արդյունքում ստացվում է, որ դատական ակտի պատճենահանված մեկ էջի համար անձը պետք է վճարի 150 դրամ պետական տուրք այն դեպքում, երբ մեկ էջի պատճենահանումը կամ տպումը մասնավոր կազմակերպությունում կազմում է միջինում ընդամենը 10-40 դրամ: Պարզ չէ պատճենահանման համար օրենքով նման բարձր արժեքի սահմանման նպատակը՝ հաշվի առնելով, որ նշվածը գործնականում խնդիրներ է առաջացնում հատկապես սոցիալապես անապահով անձանց համար դատարանների մատչելիության համատեքստում: Նշենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (ՄԻԵԴ) իր նախադեպային որոշումներում շեշտել է, որ **օրենսդրական** կարգավորումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը⁸⁰: Որոշելու համար, թե արդյոք պաշտպանվել է անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ ՄԻԵԴ-ն էական հանգամանքներ է համարել տուրքի չափը, տվյալ գործում այն վճարելու դիմումատուի փաստացի հնարավորությունը և դատավարության կոնկրետ փուլը⁸¹: Մինչդեռ, ներկա օրենսդրական կարգավորումների պատճառով անձինք պարտավորվում են վճարել անհամաչափ բարձր տուրք և մի շարք դեպքերում զրկվում են իրենց դատավարական իրավունքները պատշաճ իրացնելու հնարավորությունից: Բացի դրանից՝ արձանագրվել են նաև դատական գործերից փաստաթղթերի պատճենների (կրկնօրինակների) տրամադրման համար պետական տուրքի վճարման ոչ իրավաչափ պահանջի ներկայացման դեպքեր՝ գործում եղած բոլոր էջերի քանակի հաշվարկի հիման վրա, ընդ որում, որևէ տարբերակում չի դրվել, թե պահանջվող փաստաթղթերը վերաբերում են դատարանի վճռին, դատավճռին, դատարանի որոշմանը, հայցադիմումին կից փաստաթղթերի պատճեններին, թե քրեական գործի այլ նյութերին: Այնինչ, ՀՀ-ում պետական տուրքը գանձվում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար⁸²: Դատական գործում առկա այլ նյութերի պատճենների տրամադրման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում չսահմանված դրույքաչափերով պետական տուրքի գանձումը իրավաչափ չէ և ուղղակիորեն հակասում է օրենքի պահանջներին: Հետևաբար, պետական տուրքը կարող է գանձվել բացառապես դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենի, հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենների և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի տրամադրման համար⁸³: ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող տուրքերի տեսակները, չափը, վճարման կարգը, իսկ 42-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված

⁷⁹ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 9

⁸⁰ Պայքար և Հաղթանակ՝ ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի (2007)

⁸¹ Տես նույն տեղում

⁸² «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 7

⁸³ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 9

չեն օրենքով: Նշենք նաև, որ «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնարկի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական կամ տեղական տուրք կամ տեղական վճար՝ օրենքով սահմանված չափով և կարգով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այսպիսով, վերոգրյալ փաստաթղթերից բացի՝ դատական գործերում առկա որևէ այլ փաստաթղթերի պատճենների տրամադրման համար պետական տուրքի վճարման պահանջի ներկայացումը և չվճարման պատճառաբանությամբ՝ օրենքով չնախատեսված փաստաթղթերի պատճենների տրամադրման մերժումը ուղղակիորեն հակասում են «Պետական կառավարչական հիմնարկների մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքների դրույթներին: Պաշտպանի կողմից Նախարարությանն առաջարկվել է քննարկել դատական գործի բոլոր փաստաթղթերի տրամադրման համար անհրաժեշտ իրավակարգավորման նախատեսման հարցը:

Առաջարկ. անձանց համար դատարանի մատչելիությունը լիարժեք ապահովելու նպատակով՝ վերանայել պետական տուրքի դրույթաչափերը՝ սահմանելով դրանց ողջամիտ չափեր, ինչպես նաև քննարկել դատական գործի բոլոր փաստաթղթերի տրամադրման համար փաստացի կատարված ծախսերի գանձման կարգ:

1.2.11 Օրենսդրական թերի կարգավորման հետևանքով՝ ազատագրված անձանց խնամքի տակ գտնվող անչափահասները, ինչպես նաև անաշխատունակ անձինք հնարավորություն չեն ունեցել օգտվելու պետության կողմից խնամքի և գոյատևման միջոցների ապահովման երաշխիքից:

Անչափահասները, ինչպես նաև անաշխատունակ անձինք, որոնք ծնողին կամ կերակրողին արգելանքի վերցնելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի այլ գործողությունների հետևանքով մնացել են առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների, ունեն խնամքի իրավունք, որով նշված մարմինը պարտավոր է նրանց ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին: Այնուամենայնիվ, Պաշտպանը ստացել է դիմում-բողոքներ, որ քրեական վարույթ իրականացող պաշտոնատար անձինք օրենսդրական բացի հետևանքով գործնականում պատշաճ չեն ապահովել արգելանքի վերցված անձանց հսկողության տակ գտնվողների խնամքի իրավունքը: Ավելին, այն սակավաթիվ դեպքերում, երբ համապատասխան մարմինը անձանց խնամքի իրավունքը ապահովելու համար տրամադրել է որոշակի գումար և այլ միջոցներ, դրանք չեն բավարարել նույնիսկ նվազագույն խնամքի և գոյատևման միջոցների ապահովման համար⁸⁴: Նշենք, որ օրենսդրությամբ անչափահասներն, ինչպես նաև անաշխատունակ անձինք ունեն խնամքի իրավունք, որը քրեական վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին: Բացի դրանից՝ քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի նաև անչափահաս և անաշխատունակ անձանց հանձնել նրանց

⁸⁴ Մանրամասները՝ «ՀՀ Դատախազություն» գլխում

ազգականների խնամակալությանը՝ վերջիններիս համաձայնությամբ⁸⁵: Նշյալ կարգավորումը սահմանելիս օրենսդիրը հաշվի է առել ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջները, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք⁸⁶: Ելնելով սահմանադրական այս պահանջից՝ տվյալ դեպքում Օրենսգրքով նախատեսվել է կոնկրետ «այլ դեպք», որի պարագայում պետությունը պարտավոր է ապահովել որոշ խմբի (օրինակ՝ կալանավորված անձի խնամքի տակ գտնվող անչափահասների) սոցիալական ապահովության իրավունքը: Այնուամենայնիվ, վերոգրյալ պահանջը չի կիրառվել, ինչը քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից պատճառաբանվել է օրենսդրության մեջ նշված իրավունքի ապահովման հստակ մեխանիզմների և կարգավորումների բացակայությամբ: Թեև խնդրի առկայությունն ընդունվել է ինչպես ՀՀ գլխավոր դատախազության, այնպես էլ Նախարարության կողմից, և դրա կապակցությամբ Նախարարությունը հայտնել է, որ նորմի գործնական կիրառման արդյունավետության նպատակով համապատասխան փոփոխություններ են նախատեսվել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով, սակայն մինչ այդ փոփոխությունների ընդունումը դեռևս պատշաճ չեն կարող ապահովվել ազատազրկված անձանց խնամքի տակ գտնվող անչափահասների, ինչպես նաև անաշխատունակ անձանց խնամքը և գոյատևման միջոցների տրամադրումը:

Առաջարկ. գործող օրենսդրությամբ սահմանել հստակ մեխանիզմներ, որոնք վարույթն իրականացնող մարմնի կողմից ծնողին կամ կերակրողին արգելանքի վերցնելու, ինչպես նաև այլ գործողությունների հետևանքով առանց հսկողության մնացած անչափահասներին և անաշխատունակ անձանց արդյունավետ կերպով կապահովեն խնամքով և գոյատևման միջոցներով:

1.2.12 Գործող օրենսդրական կարգավորումները խոչընդոտում են փաստաբաններին, ոչ աշխատանքային օրերին առանց քանակի և տևողության սահմանափակման, տեսակցել կալանավորված անձանց և դատապարտյալներին:

Ինչպես գործող օրենսդրական կարգավորումներով, այնպես էլ Նախարարության կողմից մշակված կառավարության որոշման նախագծով սահմանափակվում է ոչ

⁸⁵ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 140: Համանման կարգավորում առկա է նաև այլ պետությունների օրենսդրություններում: Տես, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 160, Ուկրաինայի համապատասխան օրենսգիրք, հոդված 378 և Վրաստանի քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 178:

⁸⁶ ՀՀ Սահմանադրության մեկնաբանության համաձայն՝ պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականությունը ենթադրում է սոցիալական ապահովման արդյունավետ համակարգի կազմակերպում, որն առաջին հերթին կներառի պետության կողմից իրականացվող համալիր միջոցառումներ՝ ուղղված քաղաքացիների սոցիալական ապահովմանը և սպասարկմանը *կյանքի տարբեր իրավիճակներում*, երբ քաղաքացիներն անկարող են իրենց աշխատանքով ստանալ եկամուտ կամ վարձատրվել՝ ապահովելով իրենց կենսամակարդակը:

<http://concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>:

աշխատանքային օրերին փաստաբանների կողմից իրենց վստահորդներին տեսակցելու իրավունքը: Այսպես, ՀՀ կառավարության որոշումից բխում է, որ կալանավորված անձանց և դատապարտյալներին փաստաբանների հետ տեսակցությունը տրամադրվում է միայն աշխատանքային օրերին և ժամերին⁸⁷: Նշված սահմանափակումը վերացնելու նպատակով Նախարարությունը 2014 թվականին մշակել է տվյալ որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագիծ, որն ուղարկվել էր նաև Պաշտպանին կարծիքի: Նախագծով սահմանվում է փաստաբանի իրավունքը՝ տեսակցելու կալանավորված անձին կամ դատապարտյալին ոչ աշխատանքային օրերին և ժամերին: Այնուամենայնիվ, Պաշտպանը խնդրահարույց է համարել նախագծի տվյալ փոփոխությունը, քանի որ ոչ աշխատանքային օրերին և ժամերին կալանավորված անձին կամ դատապարտյալին փաստաբանի տեսակցելու իրավունքը նախատեսում է նաև լրացուցիչ պայման, այն է՝ միայն անհետաձգելի իրավաբանական օգնություն ցույց տալու անհրաժեշտության դեպքում: Այնինչ, նշված փոփոխությունն ուղղակի հակասության մեջ է մի շարք այլ օրենքների հետ: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հստակ նախատեսում է, որ *առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման*՝ ա) մեղադրյալն իրավունք ունի առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանի հետ⁸⁸, բ) պաշտպանն իրավունք ունի առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ⁸⁹, գ) կալանավորվածների պահելու վայրի վարչակազմը պարտավոր է պաշտպանին անարգել թույլատրել ներկայանալ կալանավորված անձին, ապահովել նրանց առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) տեսակցելու հնարավորությունը⁹⁰ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման: Միաժամանակ, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ փաստաբանն իրավունք ունի առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանյալի հետ՝ *առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման*, այդ թվում՝ տեսակցությանը հրավիրելու արտոնագրված թարգմանչի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով⁹¹: Ավելին, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը նույնպես սահմանում է, որ ձերբակալված և կալանավորված անձանց ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը հայտարարելու պահից նրանց տրամադրվում են առանձին, անարգել տեսակցություններ պաշտպանի հետ՝ *առանց քանակի և տևողության սահմանափակման*, իսկ օրինական ներկայացուցչի հետ՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ⁹² Այսպիսով, ստացվում է, որ ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ոչ մի շարք այլ իրավական ակտեր չեն նախատեսում

⁸⁷ ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշում

⁸⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 65, մաս 2, կետ 4

⁸⁹ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 73, մաս 1, կետ 2

⁹⁰ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 141

⁹¹ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 18

⁹² «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, հոդված 15

որևէ սահմանափակում կասկածյալի, մեղադրյալի և դատապարտյալի՝ իր պաշտպանի հետ անարգել տեսակցելու հարցում: Հաշվի առնելով, որ կառավարության որոշման և օրենքի միջև հակասությունների դեպքում գործում են ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը⁹³, անհրաժեշտ է օրենսդրությամբ ապահովել փաստաբանների՝ կալանավորվածների և դատապարտյալների հետ անարգել տեսակցությունները՝ առանց դրանց քանակի և տևողության սահմանափակման, այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերին:

Առաջարկ. ՀՀ կառավարության թիվ 1543-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ, որոնք կբացառեն փաստաբանների՝ կալանավորվածների և դատապարտյալների հետ տեսակցությունների քանակի ու տևողության սահմանափակումները:

1.2.13 Օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով որոշ դեպքերում սահմանափակվել է լրագրողի՝ իր տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իրավունքը:

2014 թվականի ընթացքում Պաշտպանը բարձրացրել է լրագրողական գործունեության անհրաժեշտ երաշխիքների օրենսդրական ամրագրման խնդիրը՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև ԵԽ Նախարարների կոմիտեի հանձնարարականի դրույթները⁹⁴: Այսպես, 2014 թվականի հունիսի 26-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ երկու լրատավամիջոցների՝ ilur.am, «Հրապարակ» օրաթերթ, պարտավորեցրին բացահայտել իրենց հրապարակումներից մեկի աղբյուրը: Այնինչ, ԵԱՀԿ-ի ՉԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչը նշել է, որ դատարանի այս որոշումն ունի սառեցնող ազդեցություն, և ընդգծել, որ ՉԼՄ ներկայացուցչի՝ տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը քննություն իրականացնող լրագրողության և խոսքի ազատության հիմքն է⁹⁵: Նշենք, որ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արգելվում են որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ, ինչպես նաև «լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը»⁹⁶: Միաժամանակ, լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը՝ բացառությամբ այն դեպքերին, երբ այդ պարտադրվում է դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ

⁹³ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 24

⁹⁴ R (2000) 7 հանձնարարականը սահմանում է, որ ԵԽ անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել օրենսդրական և գործնական միջոցներ՝ ուղղված ՉԼՄ-ների կողմից տեղեկատվության աղբյուրի չբացահայտման գործուն և հստակ պաշտպանությանը: Միաժամանակ, նշյալ փաստաթղթում արձանագրվում է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության իմաստով միայն բացառիկ դեպքերում են իշխանություններն իրավասու՝ բացահայտելու լրագրողի տեղեկատվության աղբյուրը:

⁹⁵ http://www.hrw.org/sites/default/files/wr2015_web.pdf

⁹⁶ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 3

առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները⁹⁷: Ավելին, տեղեկատվության աղբյուրների գաղտնիությունը պաշտպանելու լրագրողի իրավունքը **երաշխավորված է թե ՀՀ Սահմանադրության, թե Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված փաստաթղթերի և թե ՄԻԵԴ նախադեպային վճիռների համատեքստում**: Այսպես, ՄԻԵԴ-ն իր մի շարք վճիռներում **արձանագրել է, որ** մամուլն օժտված է տեղեկատվության տարածման ամենալայն ազատություններով, ներառյալ՝ լրագրողական աղբյուրի գաղտնիության իրավունքը: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված չեն լրագրողի կողմից տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իրավունքի էական նշանակություն ունեցող երաշխիքներ: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով⁹⁸ սպառիչ կերպով թվարկված են որպես վկա հարցաքննման ոչ ենթակա անձինք, որոնց ցանկում ներառված չեն լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները՝ իրենց գործունեության ընթացքում հայտնի դարձած տեղեկությունների աղբյուրի չբացահայտման երաշխիքի ապահովման նպատակով: Այնինչ, լրագրողական աղբյուրի պաշտպանությունը ՁԼՄ-ների ազատության հիմնական երաշխիքն է: Առանց այսպիսի երաշխիքի՝ աղբյուրները կաշկանդված կլինեն՝ դիմելու լրատվամիջոցներին, որոնցով տարածվում է հասարակությանը հետաքրքրող տեղեկատվությունը⁹⁹: Ուստի, անհրաժեշտ է ներդաշնակեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լրագրողների գործունեության առավել բարենպաստ պայմաններ սահմանող «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի հետ:

Առաջարկ. ՀՀ քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել դրույթով, որի համաձայն՝ տեղեկատվության աղբյուրը բացահայտելու նպատակով որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել լրատվական գործունեություն իրականացնողը և լրագրողը՝ բացառությամբ դատարանի որոշման:

1.2.14 Թերի օրենսդրական կարգավորումների արդյունքում նախնական քննության տվյալները բացահայտելու դեպքում անձինք, ներառյալ՝ լրագրողները, կարող են պատասխանատվության ենթարկվել նույնիսկ այն դեպքում, երբ գրավոր չեն նախագրուշացվել տվյալները չբացահայտելու մասին:

Պաշտպանը ստացել է մի շարք ահազանգեր, որ ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի համապատասխան կարգավորումները հնարավորություն են ստեղծում քրեական պատասխանատվության ենթարկել ցանկացած անձի, ով, առանց գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվության,

⁹⁷ ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 164

⁹⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 86, մաս 2

⁹⁹ *Goodwin v. the United Kingdom* (1996), *Nordisk Film & TV A/S v. Denmark* (2005), *Voskuil v. the Netherlands* (2008), *Sanoma Uitgevers B.V. v. the Netherlands* (2010)

հրապարակել է նախաքննության կամ հետաքննության տվյալ հանդիսացող տեղեկությունը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, իսկ անհրաժեշտ դեպքերում քննիչը, հետաքննության մարմինը վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախազգուշացնում են, որ վերջիններս իրավունք չունեն նախնական քննության տվյալներն առանց թույլտվության հրապարակել¹⁰⁰: Ուստի, կարևորվում է, որ քրեական վարույթի շրջանակներում նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին գրավոր նախազգուշացում չստանալու դեպքում՝ այդ տվյալները հրապարակած անձը չենթարկվի պատասխանատվության: Միաժամանակ, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գաղտնի համարվող տեղեկատվության տարածման համար լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվության ենթակա չէ, եթե այդ տեղեկատվությունը նա ձեռք չի բերել օրենքով արգելված եղանակով, կամ ակնհայտ չի եղել, որ դա օրենքով սահմանված կարգով գաղտնիք է համարվել¹⁰¹: Վերոնշյալ բոլոր իրավակարգավորումներից հետևում է, որ լրատվական գործունեություն իրականացնող անձը նույնպես կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել նախաքննության կամ հետաքննության տվյալներ հրապարակելու համար, քանի որ ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և ոչ ՀՀ քրեական օրենսգրքում նախնական քննության տվյալներ չհրապարակելու պարտականություն ունեցող սուբյեկտների ցանկը հստակեցված չէ: Մյուս կողմից, անհրաժեշտ է հստակեցնել «նախաքննության տվյալ» հասկացությունը, քանի որ այն տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս և կարող է ընդգրկել քրեական գործին առնչվող ցանկացած տեղեկատվություն՝ ընդհուպ մինչև մեղադրյալի անուն-ազգանունը: Նշվածի փոխարեն կարելի է կիրառել «նախաքննության գաղտնիք» եզրույթը՝ համապատասխան բովանդակային հստակեցմամբ: Նշված խնդրի առկայությունը հաստատվել է նաև Նախարարության կողմից:

Առաջարկ. ա) կատարել փոփոխություններ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածում՝ սահմանելով գործի վարույթն իրականացնող մարմնի կողմից գործին մասնակցող բոլոր անձանց՝ նախնական քննության տվյալներն, առանց թույլտվության, հրապարակելու արգելքի, ինչպես նաև հրապարակելու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին գրավոր նախազգուշացնելու պարտականությունը:

բ) ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածում սահմանել սանկցիա՝ հրապարակման արգելքի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով գրավոր նախազգուշացված անձի կողմից նախնական քննության տվյալները հրապարակելու համար:

գ) Օրենսդրությամբ հստակեցնել «նախաքննության տվյալ» հասկացությունը:

¹⁰⁰ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 201

¹⁰¹ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 3

1.2.15 Գործող օրենսդրությամբ սահմանված խոշտանգման հասկացությունը, ինչպես նաև խոշտանգում կիրառած պաշտոնյաների նկատմամբ համաներում/ներում կիրառելու պրակտիկան չի համապատասխանում միջազգային չափանիշներին:

Ներպետական օրենսդրությամբ ամրագրված խոշտանգման հասկացությունը իր բնույթով չի համապատասխանում միջազգային իրավունքում առկա խոշտանգման հասկացության բուն էությանը: Այսպես, ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է, որ խոշտանգումը ցանկացած այնպիսի գործողություն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե այդ գործողությունների հետևանքով անձի առողջությանը դիտավորությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս չի պատճառվել¹⁰²: Այնինչ, խոշտանգման բնորոշումն անհրաժեշտ է դիտարկել «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» Կոնվենցիայի (Կոնվենցիա) համատեքստում, որի համաձայն՝ ««խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապետ հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց»: Այսինքն, ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված նորմը էապես տարբերվում է Կոնվենցիայի սահմանումից և հաշվի չի առնում Կոնվենցիայով ամրագրված խոշտանգման կարևոր հատկանիշները (տառապանք, տեղեկություններ կամ խոստովանություն կորզել, վախեցնելու կամ հարկադրելու նպատակ, պաշտոնատար անձ): Խնդրահարույց է նաև ՀՀ քրեական օրենսգրքում խոշտանգման հանցակազմում առկա այն սահմանափակումը, որ արարքը կարող է որակվել որպես խոշտանգում միայն այն դեպքում, եթե այդ գործողությունների հետևանքով անձի առողջությանը դիտավորությամբ ծանր կամ միջին ծանրության վնաս չի պատճառվել: Այնինչ, գործնականում հնարավոր են դեպքեր, որ որպես խոշտանգման հետևանք՝ մարդու առողջությանը պատճառվի միջին ծանրության կամ ծանր վնաս: Միաժամանակ, խնդրահարույց է, որ Քրեական օրենսգրքում, որպես խոշտանգման հանցագործության սուբյեկտ, նախատեսված չէ պաշտոնատար անձը՝ հաշվի առնելով նրա կողմից նմանատիպ արարքի կատարման հանրային վտանգավորության աստիճանը: Ավելին, ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի դիրքորոշման համաձայն՝ խոշտանգման դեպքերում համաներում կիրառելն անհամատեղելի է Խոշտանգումների դեմ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների հետ, այդ թվում՝ տուժողի՝

¹⁰² ՀՀ քրեական օրենսգիրք, հոդվածներ 119, 112 և 113

վնասի հատուցման իրավունքի լիարժեք իրացման խախտման տեսակետից¹⁰³: Կոմիտեն նաև նշել է, որ «համաներումը կամ այլ արգելքները, որոնք վկայում են պետության կողմից արագ և արդար քննություն իրականացնելու և խոշտանգողներին պատժելու պատրաստակամության բացակայության մասին կամ խոչընդոտում են այդ գործընթացը, խախտում են խոշտանգումների բացարձակ արգելքի անքակտելիության սկզբունքը»¹⁰⁴: Անհրաժեշտ է նշել, որ ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն 2012 թվականին արդեն հայտնել է իր մտահոգությունը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի այլ հոդվածներով խոշտանգման դրսևորման համար դատապարտված որոշ անձանց նկատմամբ համաներում կիրառելու դեպքերի կապակցությամբ¹⁰⁵: Ընդ որում, իր վճիռներում ՄԻԵԴ-ը նույնպես ընդգծել է, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթարկելու մեջ մեղադրվող պաշտոնատար անձանց նկատմամբ համաներման կիրառումը անթույլատրելի է¹⁰⁶: Չնայած այն հանգամանքին, որ Նախարարությունը խնդրահարույց հոդվածի վերաբերյալ 2014 թվականին մշակել էր օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ այնուամենայնիվ, նախագծով չէին կարգավորվել վերոնշյալ խնդիրները:

Առաջարկ. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված խոշտանգման սահմանումը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, միաժամանակ նախատեսել խոշտանգում կիրառած պաշտոնյաների նկատմամբ համաներում/ներում կիրառելու արգելքի վերաբերյալ դրույթ:

1.2.16 Օրենսդրական հստակ չափանիշների բացակայության հետևանքով հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման դեպքում կարող է խախտվել անձանց սեփականության իրավունքը:

Առկա օրենսդրական կարգավորումները լիարժեքորեն չեն երաշխավորում սեփականատիրոջ իրավունքների և շահերի պաշտպանությունը հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման դեպքում: Այսպես, հիմք ընդունելով Մարդու իրավունքների ազգային ռազմավարությամբ ամրագրված համապատասխան միջոցառումներ անցկացնելու պարտավորությունը¹⁰⁷, Նախարարությունը 2014 թվականին իրականացրել է օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, որոնց արդյունքում սահմանվել է, որ եթե օտարվում է սեփականության մի մասը, ապա սեփականատերն իրավունք ունի պահանջել նաև սեփականության չօտարված մասի օտարում, եթե գույքի չօտարվող մասը օտարվող մասի

¹⁰³ ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն 3, պարբերություններ 38, 41

¹⁰⁴ Նույն տեղը, պարբերություն 5

¹⁰⁵ ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտե, Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի զեկույցի վերաբերյալ, 2012, պարբերություն 10 <http://bit.ly/1N3KP0l>

¹⁰⁶ *Türkmen v. Turkey* (2006), *Abdulsamet Yaman v. Turkey* (2004)

¹⁰⁷ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N303 -Ն որոշում, կետ 102, 103

համեմատությամբ *աննշան* Հ¹⁰⁸: Մինչդեռ, «աննշան» եզրույթը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից և կարող է հայեցողական մեկնաբանության տեղիք տալ: Հատկանշական է, որ իրավական որոշակիության սկզբունքին անդրադառնալիս ՄԻԵԴ-ը նշել է, որ օրենսդրական նորմը պետք է ձևակերպված լինի այնպիսի հստակությամբ, որը թույլտա շահագրգիռ անձին, անհրաժեշտության դեպքում, նաև խորհրդատվությունից օգտվելով, համապատասխանեցնելու իր վարքագիծը սահմանված կարգավորումներին և կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ համապատասխան գործողությունների հետևանքով¹⁰⁹: Միաժամանակ, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում ընդունված են կարգավորման ավելի հստակ մեխանիզմներ: Այսպես, օրինակ՝ Ֆրանսիայի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվում է հողամասի 25%-ի օտարման դեպքում սեփականատիրոջ կողմից չօտարված մասը օտարելու պահանջի իրավունք: *Առաջարկ. հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման դեպքում սեփականության չօտարվող մասի չափի որոշման նպատակով սահմանել հստակ չափանիշներ, օրինակ՝ տոկոսային չափաբաժնի նախատեսման միջոցով:*

¹⁰⁸ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, 21.06.2014, ՀՕ-105-Ն

¹⁰⁹ *Sunday Times v. UK*, (1979); *Marckx v. Belgium* (1979)

1.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) իրավասության ոլորտում հայտնաբերված խնդիրները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ: Ծառայության գործունեության ոլորտում դրական զարգացումներ արձանագրված չեն, քանի որ 2014 թվականի զեկույցի համար Ծառայության կողմից չի տրամադրվել համապատասխան պատշաճ տեղեկատվություն:

Առկա թերություններն ու խնդիրները

1.3.1 Ծառայության կողմից բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն չի կատարվել պաշտոնատար անձանց կողմից խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և այլ իրավախախտումների մի շարք դեպքերով:

Պաշտպանին հասցեագրված ահազանգերի և դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Ծառայության իրավասության ներքո գտնվող գործերը որոշ դեպքերում քննվել են թերի և ոչ օբյեկտիվ: Այսպես, մի շարք դեպքերում Պաշտպանի ներկայացուցիչները, ուսումնասիրելով անձանց դիմում-բողոքները, փոխանցել են դրանք Ծառայություն՝ վերջինիս կողմից օրենքով սահմանված կարգով քրեական գործ հարուցելու համար, սակայն բազմաթիվ անգամ Ծառայության կողմից որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու կամ գործը կարճելու մասին: Միաժամանակ, Պաշտպանի ներկայացուցիչները, ուսումնասիրելով ստացված հաղորդումների կապակցությամբ իրականացված քննությունների ընթացքը և քրեական գործի հարուցումը մերժելու/քրեական գործը կարճելու մասին որոշումները, պարզել են, որ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննություն իրականացնելու տեսանկյունից բավականին խնդրահարույց էին Ծառայությունում հարուցված քրեական գործերի շրջանակներում իրականացված մի շարք գործողություններ: Պարզվել է նաև, որ քրեական գործի հարուցումը մերժելու կամ գործը կարճելու մասին որոշումները հիմնականում պատճառաբանվել են հանցադեպի կամ հանցակազմի բացակայությամբ: Հարկավոր է հաշվի առնել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար:¹¹⁰ Այս իմաստով հատկանշական է լրագրող Մարինե Խաչատրյանի օրինական գործունեության խոչընդոտման դեպքը¹¹¹ 2014 թվականին, որի առթիվ Ծառայությունը մերժել էր քրեական գործի հարուցումը՝ հանցադեպի

¹¹⁰ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 17

¹¹¹ <http://www.a1plus.am/1352040.html>

բացակայության հիմքով, սակայն հետագայում նշված որոշումը վերացվել էր ՀՀ գլխավոր դատախազի կողմից: 2014 թվականի ընթացքում Ծառայության քննիչների վարույթում քննվել է 546 քրեական գործ, իսկ ավարտված քննությամբ 235 գործերից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել միայն 55-ը¹¹²: Պաշտպանի աշխատակազմի կողմից Ծառայության քննած գործերի ուսումնասիրությունը, ինչպես նաև մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի քիչ քանակը վկայում են Ծառայության իրավասությանը վերաբերող գործերի քննության ընթացքում մի շարք թերացումների մասին: Ծառայության կողմից քննության թերացումները վերաբերում են նաև պաշտոնատար անձանց կողմից մարդկանց նկատմամբ խոշտանգումների, բռնությունների դեպքերին: Նշենք, որ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը անդրադարձել է այն հարցին, որ առաջին Համընդհանուր պարբերական դիտարկման մեջ Հայաստանը նշել է, որ պատրաստ է «երաշխավորել խոշտանգումների, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների արագ քննության իրականացումը և իրականացնողներին արդարադատության առջև կանգնեցնել», սակայն դեռևս 2012 թվականին ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն ընդգծել է, որ Հայաստանը չի իրականացրել արագ, օբյեկտիվ և արդյունավետ հետաքննություններ ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացված խոշտանգումների բողոքների առնչությամբ¹¹³: Այսպես, 2014 թվականին անձանց խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև բռնության այլ դեպքերի առթիվ ՀՀ ոստիկանությունը 3 գործ է փոխանցել Ծառայություն, որոնցից միայն մեկով է քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան, դեպքերից մեկով քրեական գործը կարճվել է, իսկ մյուսով նախաքննությունը դեռ շարունակվում է: ՄԻԵԴ-ը, մեկնաբանելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 3-րդ հոդվածը, համաձայն որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, նշել է, որ անգամ ամենաբարդ հանգամանքներում, ինչպիսին ահաբեկչության կամ կազմակերպված հանցավորության դեմ պայքարն է, Կոնվենցիան կտրականապես արգելում է խոշտանգումները և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը: Այսինքն՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը բացառություններ սահմանող որևէ դրույթ չի պարունակում, և խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը ենթակա չէ որևէ սահմանափակման անգամ պետության գոյությանը սպառնացող հանրային վտանգի դեպքում¹¹⁴: ՄԻԵԴ-ը դիրքորոշում է հայտնել, որ ներպետական իրավասու մարմինները ոչ մի դեպքում չպետք է թույլ տան, որ

¹¹² <http://www.investigatory.am/am/News/item/1452/>

¹¹³ «Համընդհանուր պարբերական դիտարկում» աշխատանքնային խումբ, 19-30 հունվար, 2015

Համառոտ նկարագիրը պատրաստված է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Հանձնակատարի գրասենյակի կողմից՝ համաձայն Մարդու իրավունքների խորհրդի 5/1 բանաձևի լրացման 15 (C) պարբերության, և Խորհրդի 16/21 բանաձևի լրացման 5-րդ պարբերության/ պարագրաֆ

http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_arm_3_e.pdf

¹¹⁴ *Selmouni v. France* (1998), *Assenov and Others v. Bulgaria* (1998)

պատճառված ֆիզիկական կամ հոգեկան տառապանքը մնա անպատիժ: Նման դեպքերի քննությունը կարևոր է հասարակական վստահությանն արժանանալու, օրենքի կատարմանն աջակցելու և ապօրինի գործողությունների նկատմամբ իշխանությունների հանդուրժողականությունը և դրանցում իշխանությունների համագործակցությունը կանխելու համար¹¹⁵: Գործերի ոչ ամբողջական քննությունը և նման ցուցանիշները խնդրահարույց են այնքանով, որ դրանք չեն նպաստում իրավախախտ պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելուն և կարող են անպատժելիության մթնոլորտ ձևավորել իրավախախտների համար: Ուստի, Ծառայությունը, առաջին հերթին, պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները՝ կանխելու խոշտանգման, ինպես նաև անմարդկային վերաբերմունքի դրսևորման դեպքերը, իսկ երկրորդ հերթին՝ նման արարքների կատարման դեպքում ձեռնամուխ լինի դրանք բացահայտելուն և մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն:

Առաջարկ. պատշաճ իրականացնել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն՝ պաշտոնատար անձանց կողմից հակաիրավական արարքների, այդ թվում՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ դեպքերի կապակցությամբ:

1.3.2 Ծառայության կողմից չի ապահովվել հանրային հնչեղություն և կարևորություն ունեցող մարտի 1-ի 10 գոհերի մահվան վերաբերյալ գործերով հրապարակայնությունը, միաժամանակ կասկածահարույց է այդ գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանումը:

Մարտի 1-ի տասը գոհերի վերաբերյալ նախաքննությունն արդեն շարունակվում է շուրջ 7 տարի, սակայն Ծառայությունը 2014 թվականին ևս իր վարույթում գտնվող տվյալ գործերի վերաբերյալ չի ներկայացրել հանրությանը որևէ կարևոր տեղեկատվություն՝ չնայած նրան, որ հարցը մշտապես գտնվել է հասարակության ուշադրության կենտրոնում: Ի դեպ, նշված գործերով նախաքննությունը դեռևս ավարտված կամ կասեցված չէ: Նշենք, որ Պաշտպանի կողմից 2008թ. մարտի 1-ի տասը գոհերի մահվան փաստով կատարվող նախաքննության ոչ պատշաճ իրականացման խնդրին անդրադարձ է կատարվել դեռևս 2011, 2012 և 2013 թվականների տարեկան զեկույցներում: Խնդիրն այն է, որ մարտի 1-ի 10 գոհերի ընտանիքների անդամներն ու հարազատները բազմիցս իրենց մտահոգությունն են հայտնել, որ Ծառայությունն իր գործառույթները պատշաճ չի իրականացրել, ինչի արդյունքում գործերը չեն բացահայտվել: 2014 թվականի ընթացքում Պաշտպանը կրկին հանդիպում է ունեցել Մարտի 1-ի գոհերի հարազատների հետ, որի ընթացքում քննարկվել են վերջիններիս մտահոգությունները գործերով տարվող նախաքննության վերաբերյալ: Նրանք դժգոհություն են հայտնել, որ Մարտի 1-ի դեպքերի քննության գործում առաջընթաց չի արձանագրվել, որի հետևանքով կորցրել են իրենց վստահությունը իրավական գործընթացի նկատմամբ: Պաշտպանը խնդրի վերաբերյալ Մարտի 1-ի գոհերի

¹¹⁵ *Okkali v. Turkey* (2006)

ծնողներին մի քանի առաջարկ է ներկայացրել և պատրաստակամություն հայտնել իր լիազորությունների և օրենսդրության շրջանակներում աջակցել գործի քննության ընթացքին: Հատկանշական է, որ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի» 40-րդ հոդվածի կատարման վերաբերյալ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովն իր եզրափակիչ դիտարկումներում դեռևս 2012 թվականին, անդրադառնալով նշված խնդրին, կարևորել է ՀՀ իշխանությունների կողմից Մարտի 1-ի իրադարձությունների ժամանակ ուժի անհամաչափ կիրառման համար պատասխանատու իրավապահների և ղեկավարների հայտնաբերումը և նրանց պատասխանատվության ենթարկելու համար արդյունավետ միջոցառումների ձեռնարկումը:¹¹⁶ Նշված խնդրին 2014 թվականի ընթացքում անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիեկսը Հայաստան կատարած այցից հետո իր հրապարակած զեկույցում: Զեկույցում, մասնավորապես, նշվել է, որ 2008 թվականի Մարտի 1-ի տասը մահվան դեպքերի քննության արդյունքների բացակայությունն ամրապնդում է հասարակության որոշ շերտերի համոզմունքը Հայաստանում արդարադատությունն ընտրովի իրականացնելու վերաբերյալ և հանգեցնում դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության կորստին¹¹⁷: Բացի դրանից՝ պետք է հաշվի առնել, որ կասկածահարույց է այդ գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանումը, իսկ քննության երկարատև ընթացքը կարող է հանգեցնել մահացած անձանց իրավահաջորդների իրավունքների խախտմանը: Այսպես, ՄԻԵԴ-ը, իր նախադեպային որոշումներում անդրադառնալով գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանմանը, սահմանել է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինները մահվան ելքով գործերի դեպքում պարտավոր են հնարավորինս սեղմ, ողջամիտ ժամկետներում իրականացնել արդյունավետ նախաքննություն: Ինչպես նաև, քննության ողջամիտ ժամկետի պահպանմանը զուգահեռ յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնել կոնկրետ դեպքի առանձնահատուկ հանգամանքները, օբյեկտիվ պատճառները և այլն¹¹⁸: Միջազգային իրավապաշտպան կառույցների, ՄԻԵԴ-ի նախադեպերով սահմանված չափանիշների համաձայն՝ խնդրահարույց է այն, որ Մարտի 1-ի գոհերի գործերով ընթացող նախաքննության շուրջ 7 տարվա տևողությունը որևէ առանձնահատուկ հանգամանքով և օբյեկտիվ պատճառով չի հիմնավորվել, սակայն եթե նույնիսկ կան այդպիսիք, ապա դրանք չեն ներկայացվել մահացածների իրավահաջորդներին և/կամ հանրությանը: 2014 թվականին Ծառայությունը նույնիսկ չի ներկայացրել, թե ինչ նոր զարգացումներ կան տվյալ քրեական գործերով: Ավելին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների կենտրոնի կողմից ներկայացված եզրափակիչ դիտարկումների կատարման վերաբերյալ 2014 թվականի ստուգիչ (follow up) զեկույցում նշվել է, որ 2008 թվականի մարտի 1-ի դեպքերի քննության առնչությամբ Կառավարության կողմից իրականացվող քայլերում ոչ մի առաջընթաց չի արձանագրվել, և չնայած ՀԲԾ-ի կողմից 2011 թվականին զեկույց է ներկայացվել Մարտի 1-ի տասը սպանությունների դեպքերից երկուսի վերաբերյալ՝

¹¹⁶ <http://www.ccprcentre.org/doc/2012/07/G1245524.pdf>

¹¹⁷ <https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2701645&SecMode=1&DocId=2243332&Usage=2>

¹¹⁸ *Eckle v. Germany* (1982); *Deweere v. Belgium* (1980); *Wemhoff v. Germany* (1968)

այնուամենայնիվ, դրանից հետո որևէ այլ քայլ չի ձեռնարկվել խնդրի լուծման ուղղությամբ¹¹⁹: Այսպիսով, 2008 թվականի մարտի 1-ի տասը մահվան դեպքերի բացահայտումը կարող է իրականացվել պատասխանատու անձանց հայտնաբերելու և օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու միջոցով, մինչդեռ Ծառայության կողմից չեն իրականացվել բավարար քայլեր այդ ուղղությամբ:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ Մարտի 1-ի տասը գոհերի գործերով մեղավորներին բացահայտելու, այդ թվում՝ քրեական գործի քննության բացթողումները լրացնելու, անհրաժեշտ տեղեկություններ ձեռք բերելու և գոհերի հարազատների մատնանշած հանգամանքները մանրակրկիտ ուսումնասիրելու, ինչպես նաև Ծառայության կատարած գործողությունների վերաբերյալ հանրությանն իրազեկելու ուղղությամբ:

1.3.3 Պաշտպանի կողմից դեռևս 2013 թվականին բարձրաձայնվել և մինչ օրս չի լուծվել պաշտոնատար անձանց կողմից հանցանք կատարելու մասին մամուլի հրապարակումների հիման վրա անհրաժեշտ գործողություններ չկատարելու խնդիրը:

Գրանցվել են մի շարք դեպքեր, երբ Ծառայությունը չի ուսումնասիրել պաշտոնյաների կողմից տարբեր անձանց նկատմամբ կատարված հակաիրավական արարքների վերաբերյալ ՁԼՄ-ների հրապարակած դեպքերը, այդ թվում՝ բռնության ենթարկելու վերաբերյալ, մինչդեռ օրենքով պարտավոր է դրանք ուսումնասիրել և, անհրաժեշտության դեպքում, քրեական գործ հարուցել¹²⁰: Որպես օրինակ կարող ենք նշել խաղաղ հավաքների ժամանակ ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից ուժի կիրառման տեսարաններն արձանագրող, համացանցում տարածված մի շարք տեսանյութերը¹²¹: Այսպես, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ քրեական գործ հարուցելու առիթներից են նաև հանցագործության մասին լրատվության միջոցների հաղորդումները, իսկ դրանք կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումներն են մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չհրապարակված հաղորդակցությունները¹²²: Մինչդեռ Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների, ահազանգների, ինչպես նաև ՁԼՄ-ներով տարածված տեղեկությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ Ծառայությունը մի շարք դեպքերում որևէ միջոց չի ձեռնարկել անձանց նկատմամբ հակաիրավական արարքների, այդ թվում՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների այլ խախտումների վերաբերյալ մամուլում տեղ

¹¹⁹ http://www.ccprcentre.org/doc/2015/01/INT_CCPR_NGS_ARM_16205_E.pdf

¹²⁰ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հոդվածներ 175, 176

¹²¹ <http://www.azatutyun.am/content/article/25433784.html>

<http://www.azatutyun.am/media/video/26687110.html>

<https://www.youtube.com/watch?v=shcNc-5ZmPE>

<https://www.youtube.com/watch?v=2hwhpQRgwRE>

¹²² ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հոդված 176, 179

գտած հրապարակումների կապակցությամբ: Այսպես, ընթացիկ տարում ԶԼՄ-ներով եղել են բազմաթիվ հրապարակումներ լրագրողների, իրավապաշտպանների և ընդհանրապես քաղաքացիների նկատմամբ պաշտոնատար անձանց կողմից տարբեր տեսակի հակաիրավական արարքներ կատարելու կապակցությամբ, սակայն ոչ բոլոր դեպքերում են դրանք Ծառայության կողմից դիտարկվել որպես քրեական գործ հարուցելու առիթ, ինչի հետևանքով այդ դեպքերն ընդհանրապես չեն ուսումնասիրվել:

Առաջարկ. յուրաքանչյուր դեպքում օրենքով սահմանված կարգով քննության առնել և ստուգել մամուլում առկա տեղեկությունները պաշտոնատար անձանց կողմից առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող դեպքերի վերաբերյալ:

1.3.4 Մի շարք դեպքերում հանցագործությունների մասին հաղորդումները քննարկելիս Ծառայության քննիչները չեն կայացրել օրենքով սահմանված որոշումներից մեկը՝ խախտելով անձանց իրավական պաշտպանության իրավունքը:

Պաշտպանին հասցեագրված ահազանգերի և դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հանցագործությունների վերաբերյալ ստացված հաղորդումների քննարկման արդյունքում Ծառայությունը ոչ բոլոր դեպքերում է ընդունել օրենսդրությամբ սահմանված՝ (1) քրեական գործ հարուցելու մասին, 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին, 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին)¹²³ որոշումներից որևէ մեկը, ինչը հետագայում սահմանափակել է անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը¹²⁴: Այնինչ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածը նախատեսում է, որ հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ընդունվում է հնարավոր 3 որոշումներից որևէ մեկը: Այսպես, Պաշտպանին ներկայացված դիմումներից մեկի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ փաստաբանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել Ծառայություն՝ ներկայացնելով այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք առերևույթ համընկնում են քրեորեն պատժելի գործողությունների (անգործության) հատկանիշներին: Այդուհանդերձ, Ծառայությունում նշված հաղորդումը քննարկվել է «ՀՀ հատուկ քննչական ծառայությունում դիմումների, բողոքների առաջարկությունների քննարկման, անձանց ընդունելության և գործավարության կարգի» համաձայն, և հնարավոր 3 որոշումներից մեկն ընդունելու փոխարեն՝ դիմումում բարձրացված հարցերին տրվել են պատասխաններ գրության տեսքով՝ պատճառաբանելով, որ ներկայացված հաղորդումներում չեն եղել այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար են հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար: Հարկ է նշել, որ ներկայացված խնդրի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը քննել է Ծառայության անգործության դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը և արձանագրել, որ հանցագործության մասին

¹²³ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հոդված 181

¹²⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 18

հաղորդմանը գրությամբ պատասխանել իրավաչափ չէ: Մասնավորապես, թիվ ԵԿԴ/0118/11/13 գործով 2014 թվականի մայիսի 31-ի որոշմամբ Դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել, որ հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի իմաստով քրեական գործ հարուցելու առիթ է, հետևաբար այդպիսի հաղորդման առկայությունն ինքնին առաջ է բերում քրեադատավարական իրավահարաբերություններ՝ կապված գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության հետ: Դատարանը նշել է, որ հաղորդումը պետք է ներառի տվյալներ կոնկրետ հանցագործության մասին, որպեսզի հաղորդումը հիմք հանդիսանա ՀՀ նախատեսված 3 որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, սակայն դա չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար, քանի որ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու պարտականությունը քրեական գործի հարուցման փուլում կրում են հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը: Դատարանը եզրահանգել է, որ. «Վարույթն իրականացնող մարմինը հաղորդման նախնական ստուգման միջոցով հանցագործության հատկանիշներ մատնանշող բավարար փաստական տվյալներ ձեռք բերելու դեպքում, ինչպես նաև քրեական գործի վարույթը բացառող դատավարական արգելքների բացակայության պայմաններում պարտավոր է հարուցել քրեական գործ, հակառակ դեպքում՝ որոշում կայացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին»¹²⁵: Այսինքն՝ Ծառայությունը, ստանալով հաղորդում (անկախ դրա ձևից՝ գրություն, դիմում, նամակ և այլն), որը առերևույթ մատնանշում է հանցագործության հատկանիշներ պարունակող արարքի մասին, պարտավոր է օրենքով սահմանված կարգով ստուգել քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը՝ պահպանելով հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը՝ արդյունքում ընդունելով Օրենսգրքով սահմանված 3 որոշումներից որևէ մեկը, ինչը, սակայն, գործնականում ոչ միշտ է արվել:

Առաջարկ. հանցագործությունների մասին հաղորդումները քննարկելիս ապահովել օրենսդրությամբ սահմանված որոշումներից մեկի կայացումը՝ գործնականում ապահովելով ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների կիրառումը:

¹²⁵ <http://www.irtek.am/views/act.aspx?tid=77601&sc=p97>

1.4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Մի շարք միջոցառումներ են իրականացվել զինված ուժերում խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը, կանոնադրային հարաբերությունների խախտումները կանխելու, զինծառայողների իրավունքների իրազեկման ուղղությամբ, այդ թվում՝ բանակում արատավոր բարքերի դեմ պայքարի նպատակով ձևավորվել են զորամասեր այցելող աշխատանքային խմբեր, նորակոչիկների, Ռազմական ոստիկանության ծառայողների, զորամասերի հրամանատարների տեղակալների մասնակցությամբ իրականացվել են թրեյնինգներ, մշակվել են իրավունքների և պարտականությունների իրազեկման ձեռնարկներ:
- Բարելավվել են զինծառայողների բնակության և պահման պայմանները. կառուցման և վերակառուցման աշխատանքներ են կատարվել մի շարք զորանոցային մասնաշենքերում, կառուցվել և շահագործման է հանձնվել կարգապահական վաշտերի 4 մասնաշենք, բարելավվել են ազատությունից զրկված զինծառայողների բնակության պայմանները, կարգապահական գումարտակում դատապարտյալ զինծառայողները տեղափոխվել են նոր բարեկարգված կացարան:
- Կազմակերպվել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին զինված ուժերում մարդու իրավունքների խնդիրների քննարկման ու լուծման մեջ ներգրավելուն ուղղված միջոցառումներ՝ քննարկումներ, աշխատաժողովներ և այլն:
- Ձեռնարկվել են տարաբնույթ միջոցներ՝ զինծառայողների սոցիալական աջակցության ուղղությամբ. 38 զինծառայող ապահովվել է ծառայողական բնակարաններով, 1303 զինծառայողի տրվել է վարձակալված բնակարանների դիմաց դրամական փոխհատուցման թույլտվություն, 189 զոհված (մահացած), հաշմանդամ դարձած և պահեստագոր արձակված զինծառայողի և նրանց ընտանիքների տրամադրվել է 39.581.700 դրամի ֆինանսական օժանդակություն, այդ թվում՝ ուսման վարձի, առողջական խնդիրների լուծման, սոցիալական վիճակի բարելավման, բնակարանի ձեռքբերման և այլ նպատակներով:

- Մշակվել է «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» օրենքի նախագիծը (նախատեսվում է ընդունել 2015 թվականին), որով նախատեսվում են մի շարք առանցքային խնդիրների (այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում ընդգրկված) իրավակարգավորումներ:
- Միջոցներ են ձեռնարկվել միջազգային փորձին համապատասխան տեղեկատվության դասակարգման չափանիշները (պետական, ծառայողական, առևտրային, անձնական գաղտնիք) հստակեցնելու ուղղությամբ. մշակվել է տեղեկատվության դասակարգման չափանիշների վերաբերյալ հայեցակարգային փաստաթուղթ՝ իրավական ակտի նախագծի տեսքով:

Առկա թերություններն ու խնդիրները

1.4.1 Զեն ձեռնարկվել անհրաժեշտ և բավարար միջոցներ՝ զինված ուժերում մահվան, ինչպես նաև կանոնադրային հարաբերությունների խախտման մի շարք դեպքերը կանխելու ուղղությամբ:

Նախարարության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2014 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում գրանցվել է զինծառայողների մահվան 45 դեպք, որոնցից 26-ը՝ սահմանային միջադեպերի (հակառակորդ կողմի գործողություններ), 2-ը սպանության, 2-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման, 3-ը՝ ինքնասպանության (այդ թվում 2-ը՝ ինքնասպանության հասցնելու), 3-ը՝ հիվանդության, 3-ը՝ դժբախտ պատահարի, 3-ը՝ ավտովթարի, 2-ը՝ ականի պայթյունի հետևանքով¹²⁶: Նախորդ տարվա համեմատությամբ՝ 2014 թվականին զինված ուժերում զինծառայողների մահվան դեպքերի քանակը կրճատվել է (չհաշված հակառակորդի կողմից իրականացված գործողությունների հետևանքով մահվան դեպքերը)՝ 19 մահվան դեպք՝ նախորդ տարվա 24-ի փոխարեն: Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ մահվան մի շարք դեպքեր (դժբախտ պատահարներ, ավտովթարներ և այլն), ըստ Պաշտպանի տրամադրության տակ եղած տեղեկությունների, կապված չեն եղել զինվորական ծառայության հետ, այսինքն՝ դրանց պատճառներն առերևույթ կապված չեն Նախարարության պարտականությունների, գործողությունների (անգործության) հետ: Դրա մասին են վկայում նաև մահվան այդ դեպքերի նկարագրությունները, ըստ որոնց՝ զինծառայողները մահացել են ճանապարհատրանսպորտային պատահարի արդյունքում¹²⁷: Այնուամենայնիվ, գրանցված մահվան դեպքերի պատճառների (սպանություններ, ինքնասպանություններ, առողջական խնդիրներ, զենքի հետ վարվելու կանոնների խախտումներ և այլն) ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ դրանցից շատերը եղել են պատասխանատու սպաների թերացումների հետևանք, քանի

¹²⁶ Մահվան 1 դեպքով հանգամանքները դեռևս պարզվում են:

¹²⁷ <http://news.am/arm/news/197996.html>, <http://shamshyan.com/hy/article/12251/>

որ զինված ուժերի կանոնադրքերով և այլ իրավական ակտերով նախատեսված պարտականությունները պատշաճ կատարելու պարագայում հնարավոր կլինեն կանխել դրանք, օրինակ՝ ժամանակին հայտնաբերելով զինծառայողների միջև անբարյացակամ հարաբերությունների առկայության կամ զինծառայողի վատառողջ լինելու հանգամանքները և վերացնելով դրանք, հավաստիանալով զինծառայողի կողմից զենքի հետ վարվելու կանոններին պատշաճ տիրապետելու ունակության մեջ: Ավելին, զինված ուժերում մահացությունների պատճառների ուսումնասիրությունը վկայում է, որ շատ դեպքերում դրանց հիմքում ընկած են հենց կանոնադրային հարաբերությունների խախտումները: Նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2014 թվականին զինված ուժերում գրանցվել է զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնների խախտման 229 դեպք: Բոլոր դեպքերով կատարվել է քննություն, որի արդյունքներով 160 զինծառայող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, իսկ նախապատրաստված նյութերով հարուցված քրեական գործերով 205 զինծառայող՝ քրեական պատասխանատվության: Ներկայացված տվյալներից հետևում է, որ խախտումների ճնշող մեծամասնությունը կրել է քրեածին բնույթ: Ընդ որում, թեև նախորդ տարվա համեմատությամբ՝ 2014 թվականին կանոնադրային հարաբերությունների խախտման դեպքերի թիվը նվազել է 12-ով, սակայն ահնրաժեշտ է հաշվի առնել, որ այսպիսի խախտումները շատ դեպքերում կրում են լատենտային (թաքնված) բնույթ, այսինքն՝ չեն գրանցվում համապատասխան պաշտոնատար անձանց կողմից՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Առաջարկ. միջոցներ ձեռնարկել զորամասերի տարածքում տեսախցիկների տեղարդման ուղղությամբ, խստացնել հսկողությունը առողջական խնդիրներ ունեցող զինծառայողներին պատշաճ բժշկական օգնության տրամադրման, ինչպես նաև զորամասերում բարոյաև հոգեբանական մթնոլորտը բարելավելուն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացների նկատմամբ, բացառել հոգեբանական ծանր վիճակում գտնվող կամ զենքի հետ վարվելու կանոններին ոչ բավարար չափով տիրապետող զինծառայողների ներգրավումը մարտական հերթապահության մեջ, ակտիվացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումները զինծառայողների կողմից կանոնադրային հարաբերությունների խախտման բոլոր դրսևորումները բացահայտելու և դրանց համար պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ, այդ թվում՝ կանոնադրային հարաբերությունների խախտումները կանխելու պարտականությունները ոչ պատշաճ կատարած հրամանատարական կազմի ներկայացուցիչների նկատմամբ:

1.4.2 Զինծառայողների մահվան որոշ դեպքերի քննությունն իրականացվել է լրիվության, բազմակողմանիության և հրապարակայնության պահանջների խախտմամբ¹²⁸:

¹²⁸ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2014 թվականին ՀՀ քննչական կոմիտեի ձևավորմամբ Նախարարության քննչական ծառայության լիազորությունները փոխանցվել են ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչությանը՝ մահվան դեպքերի քննության բազմակողմանիությունը, լրիվություն

Մինչև ՀՀ քննչական կոմիտեի կազմավորումը և Նախարարության քննչական ծառայության լիազորությունների փոխանցումը Կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությանը, Նախարարության քննչական ծառայության կողմից անհրաժեշտ և բավարար միջոցներ չեն ձեռնարկվել հանրությանը հայտնի, ոչ հակառակորդի գնդակից զինծառայողների մահվան դեպքերով քննության լրիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու, այդ թվում՝ մահացածների հարազատների մատնանշած հանգամանքները մանրակրկիտ ուսումնասիրելու ուղղությամբ: Այսպես, 2014 թվականին ևս ստացվել են դիմում-բողոքներ բանակում ոչ հակառակորդի գնդակից մահացած զինծառայողների ծնողներից և հարազատներից առ այն, որ Քննչական ծառայության կողմից չի ապահովվել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը, չեն պահպանվել գործերի քննության ողջամիտ ժամկետները, չեն իրականացվել անհրաժեշտ քննչական գործողություններ, ինչի արդյունքում այդ դեպքերը տարիներ շարունակ մնացել են չբացահայտված: Օրինակ՝ թերի դատավարական և քննչական գործողությունների իրականացման հետևանքով գործերից մեկի քննությունը ձգձգվել է շուրջ 14, մեկ այլ դեպքում՝ 8 տարի՝ արդյունքում հանգեցնելով գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման: Մինչդեռ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներով հստակ սահմանվել է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինները պարտավոր են հնարավորինս սեղմ, ողջամիտ ժամկետներում իրականացնել արդյունավետ նախաքննություն և կայացնել որոշում¹²⁹: Սակայն զինծառայողների մահվան մի շարք գործերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ նախաքննություն իրականացնող մարմնի կողմից չեն պահպանվել գործերի քննության ողջամիտ ժամկետները, չի իրականացվել մանրակրկիտ քննություն, ինչի հետևանքով քննչական մարմինը դադարեցրել է գործերի քննությունը՝ հիմնվելով հապճեպ և ոչ հիմնավոր եզրահանգումների վրա¹³⁰: Պետք է արձանագրել, որ զինված ուժերում մահվան դեպքերի մանրակրկիտ քննությունն ու պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելը, այդ թվում՝ դեպքերի բոլոր հանգամանքները բացահայտելը, մեղավորներին պատասխանատվության ենթարկելը և հանցագործությունների կատարմանը նպաստող գործոնները վեր հանելն ու վերացնելը կնպաստեն մահվան դեպքերը նվազեցնելուն: Սակայն նշված գործողությունները պատշաճ կերպով չեն կատարվել, և 2014 թվականի ընթացքում բանակում կրկին արձանագրվել են ոչ հակառակորդի գնդակից զինծառայողների մահվան դեպքեր: Ինչ վերաբերում է քննության հրապարակայնության պակասին, ապա մահվան դեպքերով հարուցված քրեական գործերով հանրությունը պատշաճ չի իրազեկվել դեպքի և քննության մանրամասներին (այնքանով, որքանով դա չի վնասի նախաքննության արդյունավետությանը), իսկ որոշ դեպքերում Պաշտպանը բողոքներ է ստացել, որ քննչական մարմինը մահացածի հարազատներին գործնականում չի ներգրավում գործերի քննությանը¹³¹:

ու օբյեկտիվությունն ապահովելու պահանջն այսուհետ կվերաբերվի ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության այնքանով, որքանով դա վերաբերվում է ՊՆ առանձնացված այդ ստորաբաժանման լիազորություններին:

¹²⁹ *Kelly and Others v. UK* (2001)

¹³⁰ *Zelilof v. Greece* (2007)

¹³¹ *McKerr v. UK* (2001)

Առաջարկ. խստացնել գերատեսչական հսկողությունը Ռազմական ոստիկանության գործունեության նկատմամբ, ապահովել մահվան դեպքերով քննության սկզբնական փուլում անհետաձգելի քննչական և դատավարական գործողությունների պատշաճ կատարումը, ապացույցների օպերատիվ ձեռքբերումն ու ամրագրումը մինչև գործում քննիչի ներգրավումը, ստուգել և վերստուգել Ռազմական ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները, հատկապես չբացահայտված քրեական գործերով օպերատիվ-հետախուզական միջոցառումների մասով:

1.4.3 Գրանցվել են Նախարարության ռազմական ոստիկանության և քննչական ծառայության որոշ պաշտոնատար անձանց կողմից զինծառայողների խոշտանգման և այլ դաժան վերաբերմունքի մասին առանձին գանգատներ:

Նախարարությունը հայտնել է, որ 2014 թվականի Նախարարության ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց գործառույթներն իրականացնելիս պաշտոնական դիրքի չարաշահումների կամ այլ անօրինական գործողությունների վերաբերյալ որևէ բողոք-ահազանգ չի եղել, զինծառայողների նկատմամբ խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի դեպքեր ՀՀ ՊՆ Ռազմական ոստիկանությունում չեն արձանագրվել: Սակայն 2014 թվականին ՀՀ զինված ուժերից զորացրված պարտադիր ժամկետային երկու զինծառայող Պաշտպանին տեղեկություններ են հայտնել իրենց նկատմամբ Ռազմական ոստիկանության աշխատակիցների կողմից բռնությունների կիրառման մասին¹³²: Մասնավորապես, նախկին զինծառայողներից մեկը պատմել է, որ իրեն և երկու այլ ծառայակցի ռազմական ոստիկանության աշխատակիցները ծեծել են՝ պահանջելով հայտնել զորամասում մեկ այլ զինծառայողի ծեծի ենթարկողի անունը և սպառնալով օրերով պահել անազատության մեջ: Նախկին զինծառայողներից մյուսը պատմել է, որ իրենց զորամասում կատարված հանցագործության քննության շրջանակներում Ռազմական ոստիկանության ծառայողն իրեն հարցաքննելու ամբողջ ընթացքում ձեռքի ցուցամատով և միջնամատով անդադար թեթև հարվածել է իր կրծքավանդակին: Նախկին զինծառայողը նշել է, որ այդ պահին ինքն ուշադրություն չի դարձրել ոստիկանության աշխատակցի կողմից իր կրծքավանդակի հարվածներին, քանի որ դրանք որևէ ցավ չեն պատճառել, սակայն 2 օր անց կրծքավանդակը սկսել է սաստիկ ցավել այնպես, որ ինքը շատ դժվարությամբ է կարողացել շնչել: Մեկ այլ դեպքով զինծառայողի սպանության վերաբերյալ քրեական գործով որպես վկա ներգրավված զինծառայողները հայտնել են ՊՆ քննչական ծառայության քննիչի կողմից իրենց նկատմամբ բռնություն գործադրվելու մասին՝ կոնկրետ մատնանշելով բռնություն գործադրած քննիչին և նկարագրելով նրա գործողությունները, սակայն նույն Քննչական ծառայության կողմից նախապատրաստված նյութերով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը

¹³² Չինծառայողները հրաժարվել են դիմել ՀՀ հատուկ քննչական ծառայություն՝ նշելով տարբեր պատճառներ. չեն ցանկացել ներգրավվել քրեական վարույթից բխող քաջքշուկներում, չեն ցանկացել ծառայությունից արձակված լինելու պարագայում «վատություն անել» համապատասխան պաշտոնատար անձանց, կասկածանքով են վերաբերվել դեպքերը բացահայտելու հնարավորությանը:

մերժելու մասին¹³³:

Առաջարկ. խստացնել հսկողությունը հատկապես հանցագործության դեպքերի քննության սկզբնական փուլում Ռազմական ոստիկանության ծառայողների գործունեության նկատմամբ, խրախուսել զինված ուժերում խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու պրակտիկան՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով այդ զինծառայողներին հնարավոր վրեժխնդրությունից կամ խտրական վերաբերմունքից պաշտպանելու ուղղությամբ, ներդնել ռազմական ոստիկանությունում զինծառայողների հարցաքննությունը և այլ քննչական ու դատավարական գործողությունները տեսաձայնագրելու պրակտիկան¹³⁴, հետևողական կերպով իրականացնել խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ դասընթացների կազմակերպում:

1.4.4 Մի շարք դեպքերում թերի է իրականացվել գորակոչիկների առողջական վիճակի փորձաքննությունը, չնայած տարկետման հիմքերի առկայությանը՝ գորակոչվել են առողջական խնդիրներ ունեցող գորակոչիկներ, փորձաքննության արդյունքում կայացվել են օրենսդրությամբ չնախատեսված որոշումներ:

Նախարարության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2014 թվականի ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի (ԿԲՀ) կայացրած որոշումների վերաբերյալ ՀՀ զինվորական կոմիսարին հասցեագրվել է 1254 բողոք¹³⁵, որից 393-ը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունից, 38-ը՝ ՀՀ գլխավոր շտաբից, 9-ը՝ ՀՀ նախագահի վերահսկողության վարչությունից, 2-ը՝ ՀՀ Ազգային ժողովից, 37-ը՝ ՀՀ զինվորական դատախազությունից, 74-ը՝ Մարդու իրավունքների պաշտպանից, 17-ը՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակից, 382-ը՝ ՊՆ առընթեր հասարակական խորհրդից, 302-ը՝ քաղաքացիներից: Բողոքների հիման վրա լրացուցիչ հետազոտությունների արդյունքում 102 որոշում է փոխվել: Վիճակագրական այս տվյալների ուսումնասիրությունից հետևում է, որ առնվազն 102 դեպքով գորակոչիկների առողջական վիճակի փորձաքննությունը սկզբնապես թերի է իրականացվել: Կարևոր է նշել, որ ի տարբերություն նախորդ տարվա, որի ընթացքում գորակոչիկների առողջական վիճակի փորձաքննության արդյունքների վերաբերյալ ստացված 728 բողոքի դեպքում փոփոխության էր ենթարկվել միայն 21 որոշում (բողոքարկված որոշումների մոտ 3%-ը)՝ 2014 թվականին ներկայացված 1254 բողոքից փոփոխության է ենթարկվել 102-ը (մոտ 8%-ը), ինչից կարելի է եզրակացնել, որ

¹³³ Հետագայում ՀՀ հատուկ քննչական ծառայությունը ևս հրաժարվել է քրեական գործ հարուցել:

¹³⁴ Հարցաքննությունների տեսաձայնագրման առկա միջազգային փորձն ուսումնասիրելու և տեսաձայնագրման համակարգը Հայաստանի Հանրապետությունում ներդնելու նպատակահարմարության վերաբերյալ առաջարկ ներկայացնելու շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի 07.10.2014թ. թիվ 510-1-432 գրությամբ ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմին է ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարության դրական դիրքորոշումը՝ նշված համակարգը ՀՀ-ում ներդնելու անհրաժեշտության վերաբերյալ:

¹³⁵ 2013 թվականին ներկայացվել է 728 դիմում-բողոք:

զինակոչիկների բժշկական հետազոտությանը և նրանց վերաբերյալ կայացված որոշումների վերանայմանն առավել մեծ ուշադրություն է դարձվել: Պաշտպանի միջամտությամբ կատարված կրկնակի բժշկական հետազոտության արդյունքում զորակոչիկների վերաբերյալ կայացված որոշումները մի շարք դեպքերում փոխվել են. մեկ դեպքով զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի ճանաչված զորակոչիկը ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար՝ հանվելով զինվորական հաշվառումից, զինվորական ծառայության համար սահմանափակմամբ պիտանի ճանաչված զորակոչիկները ճանաչվել են ոչ պիտանի զինվորական ծառայության համար խաղաղ ժամանակ և հաշվառվել պահեստագործում կամ ճանաչվել են բուժման կարիք ունեցող կամ զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի, և նրանց տրվել է տարկետում: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում ԿԲՀ-ի որոշումները չեն փոխվել՝ չնայած դրա համար անհրաժեշտ հիմքերի ակնհայտ առկայությանը, և Պաշտպանը որոշում է կայացրել մարդու իրավունքների խախտման մասին: Նախարարության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ հիվանդության պատճառով վաղաժամկետ զորացրվել է 2014 թվականին զորակոչված 67 ժամկետային զինծառայող, որից 8-ի հիվանդությունը կարող էր հայտնաբերվել զորակոչի ընթացքում, ինչը նշանակում է, որ այդ զինծառայողների առողջական վիճակի փորձաքննությունը նույնպես թերի է իրականացվել: Դրանով հանդերձ՝ Նախարարությունը հայտնել է, որ հանձնաժողովի բժշկի սխալ չի հայտնաբերվել, ինչը մտահոգիչ է՝ առնվազն հաշվի առնելով վերը նշված բացթողումները զորակոչիկների առողջական վիճակի փորձաքննության գործընթացում: Ընդ որում, մտահոգիչ է նաև այն, որ գրանցվել են դեպքեր, երբ հանձնաժողովի կողմից հաշվի չեն առնվել տեղական զորակոչային հանձնաժողովի կողմից քաղաքացիական բուժհաստատություններ ուղարկված զորակոչիկների բժշկական հետազոտությունների արդյունքները, սակայն Պաշտպանի աշխատակազմի կողմից դրանց վրա ուշադրություն հրավիրելուց հետո հանձնաժողովը համարժեք քննարկել է դրանք: Պաշտպանին հայտնի մեկ դեպքով զորակոչիկի առողջական վիճակի փորձաքննության արդյունքում կենտրոնական բժշկական հանձնաժողովը կայացրել է տվյալ դեպքի համար օրենսդրությամբ չնախատեսված որոշում. կոնկրետ դիմումատուի առողջական խնդրի առկայության դեպքում օրենսդրությամբ¹³⁶ նախատեսված չէ ոչ պատերազմական ժամանակ զորակոչիկին սահմանափակումով պիտանի ճանաչելու հնարավորություն, սակայն նա ճանաչվել է այդպիսին և զորակոչվել զինված ուժեր: Մեկ այլ դեպքով զորակոչիկն առողջական վիճակի պատճառով ճանաչվել է բուժման կարիք ունեցող, և նրան 4-րդ անգամ է տրվել մինչև մեկ տարի ժամկետով տարկետում՝ հակառակ նրան, որ այդպիսի դեպքերում օրենքով նախատեսված է առավելագույնը 3 անգամ տարկետում տրամադրելու հնարավորություն¹³⁷: Պաշտպանի աշխատակազմի կողմից զորակոչի ընթացքում հանձնաժողովի նիստերին կատարված այցերի ընթացքում արձանագրվել են նաև հանձնաժողովի կազմում ընդգրկված ռազմական ոստիկանության

¹³⁶ «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ՊՆ 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410 հրաման

¹³⁷ «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 15, մաս 1

ներկայացուցիչների կողմից հանձնաժողովի բժշկ-փորձագետների գործունեությանը անհարկի միջամտելու, նրանց ցուցումներ տալու դեպքեր:¹³⁸

Առաջարկ. ապահովել զորակոչիկների մանրակրկիտ բժշկական զննությունը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով բուժհաստատությունների կողմից ստացիոնար հետազոտության արդյունքներին, խստացնել հսկողությունը զորակոչիկների բժշկական հետազոտությունը կարգավորող օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, այդ թվում՝ բացառել օրենսդրությամբ չնախատեսված որոշումների կայացումը, ցուցում տալ հանձնաժողովների կազմում ընդգրկված ռազմական ոստիկանության ներկայացուցիչներին՝ չմիջամտելու բժշկական ոլորտին վերաբերող հարցերի քննարկմանն ու լուծմանը:

1.4.5 Զորակոչիկներին և զինծառայողներին երբեմն չեն տրամադրվել իրենց բժշկական հետազոտության և/կամ առողջական վիճակի փորձաքննության արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը:

Նախարարությունը հայտնել է, որ տարածքային զինվորական կոմիսարներին տրվել է գրավոր ցուցում՝ զինակոչիկներին կամ նրանց օրինական ներկայացուցիչներին, համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում, տրամադրել իրենց առողջական վիճակին վերաբերող փաստաթղթերի, ինչպես նաև բժշկական հանձնաժողովների կողմից տրված եզրակացությունների պատճենները, և այս հարցի առնչությամբ ՀՀ զինվորական կոմիսարիատում դիմում-բողոքներ չեն ստացվել: Բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից զորակոչիկներին իրենց վերաբերող որոշումների, ինչպես նաև բժշկական հաստատությունների կողմից բժշկական զննության եզրակացության ակտի տրամադրման պարտադիր կարգը պահպանելու խնդրի կարգավորման անհրաժեշտությունն ամրագրվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում, որով նախատեսվել է համապատասխան կարգ ընդունել բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից զորակոչիկներին իրենց վերաբերող որոշումների, ինչպես նաև բժշկական հաստատությունների կողմից բժշկական զննության եզրակացության ակտի տրամադրումն ապահովելու նպատակով (կատարման վերջնաժամկետը՝ 2014 թվականի չորրորդ եռամսյակ)¹³⁹: Նախարարությունը հայտնել է, որ «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվել է, որ զինապարտն իրավունք ունի ծանոթանալ իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալ դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնել առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, օրենքով սահմանված կարգով բողոքարկել իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը: Սակայն Պաշտպանը մի

¹³⁸ Այս մասին Պաշտպանին դժգոհություններ են հայտնել նաև հենց հանձնաժողովների կազմում ընդգրկված բժշկ-մասնագետները՝ խնդրելով պահպանել տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը:

¹³⁹ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշումը, կետ 109

շարք բողոքներ է ստացել բժշկական հանձնաժողովի կողմից գորակոչիկներին (նրանց ծնողներին) և ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից զինծառայողներին բժշկական փորձաքննության և/կամ բժշկական հետազոտության արդյունքների մասին չտեղեկացնելու, համապատասխան փաստաթղթերը չտրամադրելու վերաբերյալ: Ընդ որում, մի շարք դեպքերում գորակոչիկները և նրանց օրինական ներկայացուցիչները, զինծառայողները հայտնել են, որ իրենք պահանջել են համապատասխան փաստաթղթերը, սակայն մերժվել են: Այնուամենայնիվ, Պաշտպանի միջամտության արդյունքում բոլոր դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերը տրամադրվել են: Կարևոր է նշել, որ գորակոչիկների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննություններն իրականացնող հանձնաժողովները վարչական մարմիններ են և պարտավոր են իրենց կայացրած վարչական ակտերը (եզրակացություններ, որոշումներ) եռօրյա ժամկետում հանձնել շահագրգիռ անձանց՝ անկախ դիմումի առկայության հանգամանքից¹⁴⁰: Դեռ ավելին, հաշվի առնելով գորակոչի, զինվորական ծառայության և բժշկական հանձնաժողովի գործունեության առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է գործնականում առաջին իսկ օբյեկտիվ հնարավորության դեպքում տրամադրել գորակոչիկների իրավունքներին անմիջականորեն առնչվող այդ փաստաթղթերը, ինչն անհրաժեշտ նախապայման է իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների սահմանադրական իրավունքի իրացման համար¹⁴¹:

Առաջարկ. ապահովել գորակոչիկների և զինծառայողների բժշկական փորձաքննության և հետազոտման արդյունքում կայացվող որոշումների ու եզրակացությունների տրամադրումը:

1.4.6 Առողջական խնդիրների պատճառով զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչված գորակոչիկները և զինծառայողները մի շարք դեպքերում չեն տեղեկացվել իրենց հակացուցված ծառայության ձևերի մասին, և նրանց տրվել են առողջական վիճակի հետ անհամատեղելի հրամաններ:

Պաշտպանը մի շարք դիմումներ է ստացել բժշկական հանձնաժողովների (ԿԲՀ, ԿՌԲՀ) կողմից զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչված գորակոչիկներին և զինծառայողներին իրենց հակացուցված ծառայության ձևերից անտեղյակ լինելու մասին: Նախարարի հրամանով նախատեսված է, որ եթե գորակոչիկների և զինծառայողների մոտ հայտնաբերվում են զինծառայության համար սահմանափակ պիտանելիության հիմք տվող առողջական խնդիրներ, ապա դրանց մասին նշում է կատարվում համապատասխան փաստաթղթերում¹⁴², սակայն

¹⁴⁰ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 59, մաս 2

¹⁴¹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 18

¹⁴² «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175-

իրավական ակտը չի նախատեսում այդ տեղեկատվության մասին գորակոչիկներին և զինծառայողներին իրազեկելու պարտադիր պահանջ, ինչի պատճառով հետագայում նրանց նկատմամբ սահմանված հակացուցումները չեն պահպանվում: Այս առումով կարևոր է նշել, որ ՀՀ ՋՈւ գլխավոր շտաբի պետի հրամանի համաձայն՝ առողջական սահմանափակումներով շարային ծառայությանը պիտանի զինծառայողները նշանակվում են իրենց առողջությանը չվնասող պաշտոններում, սակայն անհրաժեշտ է նաև հսկողություն իրականացնել ծառայության ընթացքում հրամանատարական կազմի կողմից սահմանափակումների պահպանման նկատմամբ: Պաշտպանը դիմումներ է ստացել զինվորական ծառայության ընթացքում զինծառայողներին իրենց առողջական վիճակի հետ անհամատեղելի ծառայության ձևերում ներգրավելու մասին, որը բացասաբար է ազդել այդ զինծառայողների առողջական վիճակի վրա: Պաշտպանի միջամտության արդյունքում Նախարարությունն անհապաղ ցուցում է տվել համապատասխան գորամասի հրամանատարությանը՝ զինծառայողին բժշկական օգնություն ցուցաբերելու և նախատեսված սահմանափակումները հետագայում խստորեն պահպանելու վերաբերյալ: Գովելի է նաև, որ 2014 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում իրականացվել է նշված հարցի վերահսկման շուրջ 10 ստուգում, որոնց արդյունքում մի շարք պաշտոնյաներ ենթարկվել են պատասխանատվության:

Առաջարկ. առողջական խնդիրների պատճառով զինծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչված գորակոչիկներին և զինծառայողներին գործնականում գրավոր իրազեկել իրենց հակացուցված ծառայության ձևերի մասին, հաճախակիացնել գորամասերում սահմանափակումների պահպանման նկատմամբ իրականացվող ստուգումները, օրենսդրորեն նախատեսել սահմանափակումով պիտանի ճանաչված գորակոչիկներին և զինծառայողներին իրենց հակացուցված ծառայության ձևերի մասին գրավոր իրազեկելու պահանջը:

1.4.7 Գրանցվել են զինծառայողներին պատշաճ բժշկական օգնություն չտրամադրելու առանձին դեպքեր:

Ստացվել են մի շարք դիմում-բողոքներ՝ գորամասերում զինծառայողներին անհրաժեշտ բժշկական օգնություն չցուցաբերելու վերաբերյալ: Նախարարության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2014 թվականի ընթացքում ՀՀ ՋՈւ ռազմաբժշկական վարչությունը ստացել է զինծառայողներին պատշաճ բուժօգնություն չցուցաբերելու մասին 852 գրավոր դիմում, որոնց վերաբերյալ գրություններ են ուղարկվել ՋՈւ գորամասեր, և ըստ այդմ՝ բոլոր զինծառայողները կրկնակի հետազոտվել են, անհրաժեշտության դեպքում ստացել ստացիոնար բուժում և փորձաքննվել: Պաշտպանի միջամտության արդյունքում նույնպես Նախարարության կողմից անհապաղ միջոցներ են ձեռնարկվել զինծառայողներին անհրաժեշտ բուժօգնություն ցուցաբերելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում զինծառայողները տեղափոխվել են զինվորական բուժհաստատություններ

Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ՊՆ 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410 հրաման, կետեր 35, 92:

(հոսպիտալներ): Ըստ Պաշտպանին հասցեագրված դիմումների՝ զինծառայողներին ժամանակին և բավարար բուժօգնություն չցուցաբերելը պայմանավորված է եղել հիմնականում հետևյալ հանգամանքներով. զինծառայողների առողջական խնդիրները ժամանակին հայտնաբերելու և բուժօգնություն ցուցաբերելու համար պատասխանատու պաշտոնատար անձանց թերացում, անհրաժեշտ դեղորայքի բացակայություն, զինծառայողի կողմից առողջական խնդիրը թաքցնելը:

Առաջարկ. խստացնել հսկողությունը և վերահսկողությունը՝ զինծառայողներին բուժօգնություն տրամադրելու համար պատասխանատու անձանց պարտականությունների կատարման նկատմամբ, զորամասերն ապահովել անհրաժեշտ դեղամիջոցներով և սարքավորումներով:

1.4.8 Արձանագրվել է զինծառայողներին վատորակ սննդի տրամադրման և պարենամթերքի բաշխման ընթացքում չարաշահումների վերաբերյալ մի քանի դժգոհություն:

Պաշտպանը երկու քաղաքացուց բանավոր դիմումներ է ստացել զորամասերում տրամադրված սննդի պատճառով իրենց զինծառայող որդիների թունավորումների վերաբերյալ: Սակայն ծնողները հրաժարվել են գրավոր դիմում ներկայացնել խնդրի վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ իրենց որդիներին անհապաղ կերպով ցուցաբերվել է անհրաժեշտ բժշկական օգնություն, և տեղեկատվությունը հայտնելու պահին բուժումը դեռևս ընթացքի մեջ է եղել: 2014 թվականին պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված մի քանի զինծառայող Մարդու իրավունքների պաշտպանին տեղեկացրել են, որ իրենց ծառայած զորամասերում զինծառայողներին հաճախ չեն մատուցվել իրենց հասանելիք սննդատեսակների չափաբաժինները¹⁴³:

Առաջարկ. հաճախակիացնել պարենային ապրանքների որակի ապահովման և պատշաճ բաշխման գործընթացի նկատմամբ հսկողությանն ու վերահսկողությանն ուղղված միջոցառումների իրականացումը:

1.4.9 Տարածքային զինվորական կոմիսարիատները մի քանի դեպքով անհիմն ձգձել կամ մերժել են զինվորական գրքույկ տրամադրելը:

Պաշտպանը դիմումներ է ստացել տարածքային զինվորական կոմիսարիատների կողմից զինվորական հաշվառման վերցնելը և զինվորական գրքույկ տրամադրելն անհիմն ձգձգելու և մերժելու վերաբերյալ: Պաշտպանի միջամտության արդյունքում բոլոր դեպքերում Նախարարության ցուցումով դիմողները վերցվել են զինվորական հաշվառման, և նրանց տրամադրվել են զինվորական գրքույկներ: Սակայն մինչ այդ դիմումատուները հայտնել են, որ զինկոմիսարիատներում իրենցից անհիմն կերպով պահանջում են փաստաթղթեր՝ պատճառաբանելով, որ դրանք անհրաժեշտ են հաշվառելու և զինվորական գրքույկ տրամադրելու համար. Պաշտպանի կողմից

¹⁴³ Այս դեպքերում ևս զինծառայողները տարբեր պատճառներով չեն ցանկացել, որ իրենց հայտնած տեղեկատվությունը հասցեագրվի իրավասու պետական մարմիններին:

առանձին դիմումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ զինկոմիսարիատի կողմից պահանջվել են ավելորդ փաստաթղթեր, որպիսի գործելառճը նաև անհամատեղելի է ձևական պահանջները չարաշահելու արգելքի սկզբունքին¹⁴⁴: Խնդիրն այն է, որ օրենսդրորեն հստակ նախատեսված չեն զինվորական գրքույկների տրամադրման կարգը, ժամկետները: Այսպես, քաղաքացիների զինվորական հաշվառման կարգն ամրագրված է Կառավարության որոշմամբ¹⁴⁵: Նշված որոշմամբ նախատեսված է, որ զինվորական գրքույկի ձևերն ու դա լրացնելու կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով (կետ 11), սակայն այդպիսի հրաման ՀՀ պաշտոնական տեղեկագրում չի հրապարակվել, և զինգրքույկ տրամադրելու գործընթացի կանոնակարգված չլինելը կամայականությունների տեղիք է տալիս:

Առաջարկ. միջոցներ ձեռնարկել տարածքային զինվորական կոմիսարիատների կողմից քաղաքացիների զինվորական գրքույկները ողջամիտ ժամկետներում տրամադրելն ապահովելու ուղղությամբ, օրենսդրորեն կանոնակարգել զինվորական գրքույկների տրամադրման գործընթացը:

1.4.10 Մի շարք դեպքերում խախտվել են պայմանագրային զինծառայողների՝ զինծառայությունից արձակման ժամկետները, ինչպես նաև արձակվելու զեկուցագիր ներկայացնելը որոշ դեպքերում նույնացվել է զինվորական ծառայության անցման պայմանները չկատարելու հետ:

Պաշտպանը մի շարք դիմումներ է ստացել պայմանագրային զինծառայողներից, որոնք հրամանատարությանը զեկուցագիր են ներկայացրել մինչև պայմանագրի ժամկետի ավարտը ծառայությունից արձակվելու համար՝ պատրաստակամություն հայտնելով փոխհատուցել ուսման ծախսերը, սակայն իրենց պատասխանելու ժամկետը լրացել է, և որևէ պատասխան չեն ստացել: Այսպես, «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելիս զինծառայողները պարտավոր են փոխհատուցել ուսման ծախսերը՝ կառավարության սահմանած կարգով¹⁴⁶: ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու զեկուցագիր ստացած հրամանատարը (պետը) պարտավոր է ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում զեկուցագիրը կից գրությամբ ուղարկել լիազոր մարմնի կադրային ստորաբաժանման ղեկավարին, որը փաստաթղթերը կադրային մարմնում մուտք լինելուց հետո ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում պարտավոր է զինծառայողի ծառայությունից արձակումը համաձայնեցնել շահագրգիռ ծառայությունների հետ և ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը

¹⁴⁴ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 5

¹⁴⁵ ՀՀ Կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշումը «Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի թիվ 282 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

¹⁴⁶ «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենք, հոդված 51, մաս 1, կետ 10

ներկայացնել զինծառայողին¹⁴⁷: Այսինքն՝ օրենսդրությամբ նախատեսված է ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը ներկայացնելու հստակ ժամկետ՝ 15 օր, մինչդեռ այդ ժամկետը մի շարք դեպքերում չի պահպանվել՝ զինծառայողներին չի ներկայացվել ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը, և նրանք չեն արձակվել զինվորական ծառայությունից: Մի շարք դեպքերում Պաշտպանի միջամտության արդյունքում խնդիրը դրական լուծում է ստացել. Նախարարության կողմից զինծառայողներին ներկայացվել է փոխհատուցման ենթակա ծախսերի հաշվարկը, և նրանք արձակվել են զինվորական ծառայությունից: Բացի դրանից՝ զինվորական ծառայությունից արձակվելու համար զեկուցագիր ներկայացրած որոշ զինծառայողներ ծառայությունից օրենքի խախտմամբ արձակվել են մեկ այլ՝ զինվորական ծառայության անցման պայմանները չկատարելու հիմքով: «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածը նախատեսում է զինծառայողին զինվորական ծառայությունից արձակելու հիմքերը: Հոդվածի համաձայն՝ զինվորական ծառայությունից արձակման հիմք է նաև պայմանագրի՝ զինվորական ծառայության անցման պայմանները չկատարելը կամ զինծառայողի պատիվն արատավորող արարք կատարելը¹⁴⁸: Այսինքն՝ օրենքը հստակ սահմանազատում է զինվորական ծառայությունից արձակելու վերը նշված երկու դեպքերը՝ դիտելով դրանք որպես ինքնուրույն, միմյանցով չպայմանավորված հիմքեր: Մինչդեռ զինծառայողների կողմից մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու վերաբերյալ զեկուցագիր ներկայացնելու հանգամանքը երբեմն նույնացվել է զինվորական ծառայության անցման պայմանները չկատարելու փաստի հետ, և նրանք պահեստագոր են արձակվել նշված վերջին հիմքով: Ընդ որում, օրենքը նախատեսում է նաև, որ եթե առկա են պայմանագրային ծառայությունից արձակելու մեկից ավելի հիմքեր, զինծառայողն արձակվում է իր ընտրած հիմքով (52-րդ հոդված, 2-րդ մաս):

Առաջարկ. խստացնել հսկողությունը՝ պայմանագրային զինծառայողների կողմից ծառայությունից արձակվելու համար զեկուցագիր ներկայացնելու դեպքում փոխհատուցման ենթակա, ուսման ծախսերի հաշվարկը ներկայացնելու և զինծառայությունից արձակելու գործընթացի նկատմամբ, բացառել զեկուցագիր ներկայացնելու պարագայում զինվորական ծառայության անցման պայմանները չկատարելու հիմքով արձակելու դեպքերը:

1.4.11 Չեն ձեռնարկվել բավարար միջոցներ՝ 2014 թվականին ՀՀ զինվորական դատախազությունում ժամկետային զինծառայողների ծառայության անցնելու հնարավորությունը լիովին բացառելու ուղղությամբ:

Դեռևս 2013 թվականի Տարեկան զեկույցում Մարդու իրավունքների պաշտպանն

¹⁴⁷ ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի թիվ 393-Ն որոշումը «Ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինծառայողների կողմից հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու դեպքում ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման» կարգը սահմանելու մասին, 7-րդ կետ

¹⁴⁸ «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենք, հոդված 51, մաս 1, կետ 9

անդադարձել էր ՀՀ զինվորական դատախազությունում ժամկետային զինձառայողների ձառայության խնդրին՝ կարևորելով այդպիսի հնարավորությունը թե գործնականում և թե նույնիսկ տեսականորեն բացառելու անհրաժեշտությունը: Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ այն նույնիսկ ընդգրկվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում (կատարման վերջնաժամկետը՝ 2014 թվականի երրորդ եռամսյակ)¹⁴⁹: Թեև Նախարարությունը հավաստիացրել է, որ ժամկետային զինձառայողների՝ զինվորական դատախազությունում ձառայելու հնարավորությունը գործնականում բացառվում է, բայց օրենսդրորեն հստակ նախատեսված արգելքի բացակայությունը տեղիք է տալիս այս հարցով չարաշահումների: Այնուամենայնիվ, դրական է, որ այս հարցի լուծումը տրվել է «Զինապարտության և զինվորական ձառայության մասին» ՀՀ օրենքի նախագծում¹⁵⁰: Այսպես, ի տարբերություն «Զինվորական ձառայություն անցնելու մասին» ՀՀ գործող օրենքի, ըստ որի՝ զինձառայողը կարող է տեղափոխվել հետագա ձառայությունը շարունակելու պետական այլ լիազոր մարմին¹⁵¹, «Զինապարտության և զինվորական ձառայության մասին» ՀՀ օրենքի նախագծով հստակ սահմանվել է, որ այլ պետական մարմին ձառայությունը շարունակելու կարող է տեղափոխվել միայն պայմանագրային զինձառայողը¹⁵²:

Առաջարկ. մինչև «Զինապարտության և զինվորական ձառայության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը միջոցներ ձեռնարկել ՀՀ զինվորական դատախազությունում ժամկետային զինձառայողների ձառայության անցնելը բացառելու ուղղությամբ՝ մասնավորապես խստացնելով հսկողությունն ու վերահսկողությունն այդ պետական մարմնում ձառայության նշանակելու գործընթացի նկատմամբ և հաճախակիացնելով ստուգումներն այդ ուղղությամբ:

¹⁴⁹ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշումը, կետ 44

¹⁵⁰ Օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն է ներկայացվել 2014 թվականի հոկտեմբերին, և օրենքի ընդունումը նախատեսվում է 2015 թվականի ընթացքում:

¹⁵¹ «Զինվորական ձառայության անցնելու մասին» ՀՀ օրենք, հոդված 25

¹⁵² «Զինապարտության և զինվորական ձառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 50

1.5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՈՂԹԵՐ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ ԿԱ ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) իրավասության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- 2014 թվականին Ճանապարհային ոստիկանության կողմից Երևան քաղաքի թվով 7 խաչմերուկներում տեղադրվել են ձայնաազդանշանային սարքեր, որոնք միանում են հետիոտնային լուսացույցի կանաչ ազդանշանների հետ միաժամանակ:
- Փախստականի կարգավիճակ ստացած անձանց տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթերը միջազգայնորեն հաստատված չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով նախապատրաստվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որը գտնվում է ՀՀ Ազգային ժողովում:
- Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հարցերով զբաղվող աշխատանքային խմբի կողմից 2014 թվականին համապատասխան աջակցություն և միջամտություն է ցուցաբերվել հայտնաբերված մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասներին և նրանց ընտանիքներին՝ մասնավորապես տրվել են հանձնարարականներ 5 մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների ընտանիքների հետ կապված հարցերն շահագրգիռ կառույցների հետ համատեղ լուծելու համար, ինչպես նաև աշխատանքային խմբի կայացրած որոշման հիման վրա Ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններում ստեղծվել են աշխատանքային խմբեր:
- Ոստիկանության կողմից կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում, որի ընթացքում բարձրացվել է խոսքի ազատության և ազգային անվտանգության ապահովման չափանիշների միջև առկա սահմանազատման միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխանացնելու հարցերը, որին մասնակցել են շուրջ երկու տասնյակ լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ ու փորձագետներ:
- 2014թ. ընթացքում ՀՀ կառավարության 2013թ. փետրվարի 28-ի թիվ 186-Ն որոշմամբ հաստատված՝ «ՀՀ-ում 2013-2015 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրի»

շրջանակներում իրականացվել են մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ոլորտի բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

Առկա թերություններն ու խնդիրները

1.5.1 2014 թվականին կրկին գրանցվել են Ոստիկանության կողմից խաղաղ հավաքների սահմանափակման որոշ դեպքեր, այդ թվում՝ ոչ իրավաչափորեն հավաքի ցրում, հավաքի մասնակիցների նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառում, նրանց ազատ տեղաշարժի սահմանափակում, իսկ որոշ դեպքերում՝ անհարկի բերման ենթարկում:

Խաղաղ հավաքների իրավունքի սահմանափակման վերաբերյալ 2014 թվականի ընթացքում Պաշտպանը ստացել է բազմաթիվ ահազանգեր և արձանագրել է մի շարք խնդիրներ: Այսպես, որոշ հավաքների դեպքերով քաղաքացիները հայտնել են, որ Ոստիկանության աշխատակիցները խոչընդոտել են իրենց ազատ տեղաշարժմանը՝ այն որակելով հասարակական կարգի խախտում, և պահանջել դադարեցնել ակցիան: Նշենք, սակայն, որ խաղաղ հավաքի արդյունքում հասարակական կարգի խախտումն անգամ հավաքի դադարեցման համար հիմք չէ¹⁵³: Պաշտպանի միջամտության արդյունքում որոշ դեպքերում խնդիրները ստացել են դրական լուծում: Միաժամանակ, ինչպես հասարակական, այնպես էլ պաշտոնական տարբեր հավաքները/միջոցառումները կարող են որոշակի անհարմարություններ պատճառել դրանց չմասնակցող անձանց, սակայն պետության միջամտությունը դրանց թույլատրելի է միայն այն դեպքերում, երբ հավաքի մասնակիցների գործողությունները ակնհայտորեն դուրս են համաչափության սահմաններից¹⁵⁴: Ավելին, բազմաթիվ դեպքերում հավաքը դադարեցնելու փոխարեն Ոստիկանությունը իրավիճակի կարգավորման այլընտրանք է ունեցել, օրինակ՝ ավտոտրանսպորտային միջոցների երթևեկության սահմանափակման դեպքում՝ կազմակերպել երթևեկությունը հարակից փողոցներով, այդպիսով ապահովելով և՛ խաղաղ հավաքի անցկացումը, և՛ տրանսպորտային միջոցների անխափան երթևեկության հնարավորությունը: Ընդ որում, հավաքների և հանրային միջոցառումների անցկացման ժամանակ տրանսպորտի երթևեկության և հետիոտնի շարժի ժամանակավոր սահմանափակման

¹⁵³ Guidelines on Freedom of Peaceful Assembly, <http://www.osce.org/odihr/73405?download=true>,

¹⁵⁴ ԵԱՀԿ-ի կողմից 2004 թվականին հրապարակված Հավաքների ազատության մասին օրենքների մշակման ուղեցույց: Վենետիկի հանձնաժողովը 2010 թվականին ևս ներկայացրել է խաղաղ հավաքների ազատության ուղեցույց, որտեղ նշվում է, որ «խաղաղ» եզրույթը պետք է մեկնաբանվի այնպես, որ ներառի այն գործողությունները, որոնք կարող են վրդովվեցնել կամ վիրավորել և անգամ այն գործողությունները, որոնք ժամանակավորապես խոչընդոտում և խանգարում են երրորդ անձանց գործողություններին, իրավունքների և շահերի իրականացմանը: ՄԻԵԴ-ը, անդրադառնալով այս հարցին (*Balcik v. Turkey* (2007) և *Ashughyan v. Armenia* (2008)), նշել է, որ կարևոր է, որ պետական մարմինները ցուցաբերեն որոշակի հանդուրժողականություն այն դեպքերում, երբ ցույցերը չեն կորցնում խաղաղ լինելու իրենց բնույթը: ՄԻԵԴ-ը նաև նշել է, որ պետությունները պետք է ոչ միայն պաշտպանեն խաղաղ հավաքների իրավունքը, այլ նաև զերծ մնան այդ իրավունքի անուղղակի սահմանափակումներից:

հնարավորություն նախատեսված է նաև «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 22 հոդվածի 6-րդ կետով:

Մի շարք այլ դեպքերում հավաքները ցրվել են Ոստիկանության կողմից անհամաչափ ուժի գործադրմամբ: Օրինակ՝ 2014 թվականի մարտի 7-ին ՀՀ ֆինանսների նախարարության շենքի մոտ կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ անցկացված բողոքի ակցիան, որը ցրվել է Ոստիկանության կողմից անհամաչափ ուժի գործադրմամբ¹⁵⁵: Հավաքներից մեկի ժամանակ (23.06.2014 թվականին Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի շենքի մոտ՝ Սարյան փողոցում, անցկացված բողոքի ակցիա) Ոստիկանության ծառայողներն անգամ ցուցարարների կողմից դիմադրության բացակայության պարագայում վերջիններիս նկատմամբ կիրառել են ոչ իրավաչափ ֆիզիկական ուժ: Նշված դեպքի կապակցությամբ Պաշտպանի կողմից հայտարարությամբ նշվել է, որ «*Ոստիկանի կողմից հասարակական կարգ պահպանելը չի նշանակում ձեռքի քաղաքացիներին, իսկ պաշտոնեական պարտականությունները կատարելիս սեփական հույզերով առաջնորդվելը վկայում է ցածր պրոֆեսիոնալիզմի մասին: Հետևաբար, համարժեք քայլեր ենք ակնկալում հավաքի մասնակիցների վրա անհամաչափ ուժ կիրառած բոլոր ոստիկանների նկատմամբ*»¹⁵⁶: Հաշվի առնելով Ոստիկանության կողմից ոչ իրավաչափ ֆիզիկական ուժի կիրառման խնդրի առկայությունը՝ դրա վերացմանն ուղղված միջոցառումներ նախատեսվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրով¹⁵⁷, այն է՝ իրավապահ մարմինների և համայնքային ծառայողների համար կազմակերպել շարունակական վերապատրաստումներ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի և համապատասխան կանոնակարգերի դրույթների պրակտիկ կիրառման վերաբերյալ: Նշվածի կապակցությամբ Ոստիկանությունը կազմակերպել մի շարք դասընթացներ, սեմինարներ և այլ միջոցառումներ, սակայն 2014 թվականին գրանցված դեպքերը վկայում են այն մասին, որ նման միջոցառումները չեն տվել անհրաժեշտ արդյունք: Այսպես, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության ծառայողը պարտավոր է ձգտել, որ իրավախախտին պատճառվող վնասը հասցվի նվազագույնի, իսկ հարկադրական բնույթի լիազորությունների իրականացումը պետք է ուղղված լինի Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակներին, իսկ դրանց հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) սահմանել է նաև, որ, երբ անձն արդեն փաստացիորեն վնասագերծված է, վերջինիս նկատմամբ ուժի չարդարացված կիրառումը հանդիսանում է մարդու իրավունքների խախտում¹⁵⁸, այսինքն՝ վնասագերծված և այլ իրավախախտում չկատարող անձանց նկատմամբ ոստիկանների կողմից ֆիզիկական ուժի կիրառման դեպքերը անընդունելի են: Այնուհանդերձ, 2014 թվականին գրանցված դեպքերը վկայել են այն մասին, որ

¹⁵⁵ <https://www.amnesty.org/en/documents/pol10/0001/2015/en/>

¹⁵⁶ <http://pashtpan.am/guard/view/article/439/type/1/page/119>,

¹⁵⁷ ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշում Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին

¹⁵⁸ *Klass and Others v. Germany* (1978), *Rehbock v. Slovenia* (2000)

Ոստիկանության ծառայողների կողմից բազմիցս խախտվել են օրենքի վերոնշյալ դրույթները: Ոստիկանությունը հայտնել է, որ 2014 թվականին ոստիկանության ծառայողների կողմից խոչընդոտվել կամ ոչ համաչափորեն սահմանափակվել են անձանց խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքի իրականացման թվով 4 դեպք, որոնց կապակցությամբ անցկացվել են ծառայողական քննություններ, իսկ ոչ անհրաժեշտ և անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման 1 դեպք, որոնց վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել են քրեական գործեր: Ոստիկանության ներկայացված տվյալների համադրումը Պաշտպանի կողմից ստացված դիմում-բողոքների, ինչպես նաև ՋԼՄ-ներով ներկայացված տվյալների և միջազգային զեկույցների տվյալների¹⁵⁹ հետ վկայում է բազմաթիվ հավաքների ընթացքում Ոստիկանության ծառայողների կողմից կատարված արարքներին ոչ պատշաճ արձանագրման և դրանց հետագոտման մասին: Ավելին, նշվածի համատեքստում հատկանշական է, որ 2014 թվականին առհասարակ արձանագրվել են Ոստիկանության մի շարք ծառայողների կողմից քաղաքացիների հետ հավաքներին հաղորդակցման ժամանակ մասնագիտական էթիկայի կանոնների չպահպանման դեպքեր, որոնք, մասնավորապես, արտահայտվել են՝ անհարգալից, վիրավորական արտահայտություններ գործածելու միջոցով: Այստեղ պետք է հաշվի առնել, որ նույնիսկ երբ քաղաքացիները վիրավորում են ոստիկանին՝ դրանով իսկ կատարելով իրավախախտում, նման իրավիճակներում ոստիկանները պետք է ոչ թե քաղաքացիներին հակադարձեն վիրավորանքներով, այլև այդ անձին՝ օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկեն: Նման դեպքերը լրջորեն վնասում են ՀՀ ոստիկանության նկատմամբ հանրության մեջ հարգանքի և վստահության ձևավորմանը: Միաժամանակ, հավաքի մասնակիցներին որոշ դեպքերում անհիմն բերման են ենթարկել վարչական իրավախախտման համար արձանագրություն կազմելու նպատակով, որն իրականացվել է ուղղակիորեն հավաքը ցրելու նպատակով նույնիսկ այն դեպքերում, երբ հնարավոր է եղել տեղում կազմել զանցանք կատարելու վերաբերյալ արձանագրություն: Այսպես, ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ հավաքների մասնակիցների դեմ վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ գործերով 2014 թվականին ՀՀ վարչական դատարան են ներկայացվել թվով 119 հայցադիմումներ, որոնց մի մասը վերաբերել է 2013 թվականին արձանագրված իրավախախտումներին: Իսկ 2014 թվականին ներկայացված 17 գործով Ոստիկանությունը հրաժարվել է հայցերից, 21 գործերով՝ հայցադիմումները դատարանի կողմից վերադարձվել են թույլ տրված սխալները վերացնելու նպատակով, սակայն Ոստիկանության կողմից նորից չեն ներկայացվել դատարան՝ ապացույցների անբավարար լինելու հիմքով, 12 գործերով՝ Վարչական դատարանի կողմից բավարարվել են Ոստիկանության հայցերը, իսկ 69 գործեր գտնվում են քննության փուլում: Ավելին՝ դատարան դիմելուց հետո Ոստիկանությունը, ըստ էության, հրաժարվել է հավաքի մասնակիցների դեմ ներկայացված 38 հայցադիմումներից՝ հիմնականում ապացույցների անբավարարության պատճառաբանությամբ: Այս ցուցանիշը վկայում է նաև այն մասին, որ համապատասխան դեպքերում վարչական

¹⁵⁹ «Human rightst watch», 2014 http://www.hrw.org/sites/default/files/wr2015_web.pdf,

իրավախախտման վերաբերյալ արձանագրությունները, ինչպես նաև հավաքի մասնակիցներին վարչական ձեռքարկման և վարչական բերման ենթարկելու գործողությունները ևս եղել են չհիմնավորված: Պաշտպանին հասցեագրված մի շարք դիմումներից և ուսումնասիրություններից կարելի է եզրահանգել, որ Ոստիկանությունը մի շարք դեպքերում կազմել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, որի հիման վրա գործը փոխանցել է դատարան՝ առանց պատշաճ քննություն իրականացնելու:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ ապահովելու խաղաղ հավաքների իրավունքը, այդ թվում՝ բացառել ոչ համաչափ ֆիզիկական ուժի կիրառման, ոչ իրավաչափորեն հավաքը ցրելու, անձանց ազատ տեղաշարժը սահմանափակելու, ինչպես նաև անհարկի բերման ենթարկելու դեպքերը, ինչպես նաև նախաձեռնել համակարգային միջոցառումներ՝ ուղղված Ոստիկանության ծառայողների էթիկայի կանոնների և մասնագիտական հմտությունների բարձրացմանը:

1.5.2 Կրկին գրանցվել են իրավապաշտպանների, լրագրողների օրինական գործունեության խոչընդոտման, վերջիններիս նկատմամբ բռնության կիրառման դեպքեր, որոնց կանխման, բացահայտման և մեղավորներին պատժելու ուղղությամբ Ոստիկանությունը չի ձեռնարկել բավարար քայլեր:

Պաշտպանի կողմից բազմաթիվ ահազանգերի և դիմում-բողոքների հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրվել են լրագրողների, իրավապաշտպան գործունեությամբ զբաղվողների նկատմամբ բռնության, իրենց օրինական գործունեությանը խոչընդոտելու և նրանց իրավունքները խախտելու դեպքերը: 2014 թվականի ընթացքում Պաշտպանի դիմումների, ահազանգերի և արագ արձագանքումների հիման վրա արձանագրվել է լրագրողների և իրավապաշտպանների նկատմամբ բռնության և նրանց օրինական գործունեության խոչընդոտման շուրջ 30 դեպք: Ավելին, Պաշտպանի ներկայացուցիչների կողմից ուսումնասիրված բազմաթիվ դեպքերում լրագրողների և իրավապաշտպանների օրինական գործունեության իրականացմանը խոչընդոտել են հենց Ոստիկանության ծառայողները: Այսպես, պետությունը պարտավոր է պաշտպանել լրագրողներին և իրավապաշտպաններին հնարավոր հարձակումներից, սպառնալիքներից, պարտավոր է ապահովել վերոնշյալ անձանց նկատմամբ հարձակումների և սպառնալիքների վերաբերյալ հաղորդումների անհապաղ և համապարփակ ուսումնասիրությունը՝ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու և տուժողների իրավունքները վերականգնելու նպատակով¹⁶⁰: Այս իմաստով Ոստիկանության գործառույթն է ոչ միայն տվյալ դեպքերի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը, այլև անձանց, հատկապես լրագրողների, իրավապաշտպանների, անվտանգությունն ու անձեռնմխելիության ապահովումը:

¹⁶⁰ Concluding observations adopted by the Human Rights Committee at its 105th session, 9-27 հուլիս 2012 թվական, կետ 26 <file:///H:/Data/Downloads/CCPRCARMCO2.pdf>.

Այնուամենայնիվ, իրավապաշտպանները դեռևս լիարժեք ապահովված չեն բռնությունից: Չնայած այն հանգամանքին, որ չկա հստակ սահմանում, թե ով է համարվում իրավապաշտպան գործունեություն իրականացնող, այնուամենայնիվ, համաձայն ՄԱԿ-ի Իրավապաշտպանների մասին հռչակագրի՝ իրավապաշտպան կարող է լինել ցանկացած անձ կամ անձանց խումբ, որոնք աջակցում են մարդու իրավունքների պաշտպանությանը¹⁶¹: Անհրաժեշտ է նշել, որ իրավապաշտպաններ կարող են համարվել ոչ միայն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, այլ նաև, որոշ դեպքերում քաղաքացիները, պաշտոնատար անձինք (government officials), ինչպես նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչները¹⁶²: Նշենք, որ մինչդեռ լրագրողների գործունեության խոչընդոտումը քրեորեն հետապնդելի արարք է¹⁶³, իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց գործունեության խոչընդոտման արգելքի դրույթներ ընդհանրապես նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ¹⁶⁴: Թեև Պաշտպանի կողմից բազմիցս նշվել է, որ խաղաղ հավաքի մասնակիցների կողմից երթևեկության բնականոն ընթացքին խոչընդոտելը դեռևս չի նշանակում հասարակական կարգի խախտում, քանզի կարող են կիրառվել այլընտրանքային միջոցներ երթևեկությունը կարգավորելու համար, այնուհանդերձ Ոստիկանության կողմից նշված հիմքով եղել են անձանց բերման ենթարկելու մի շարք դեպքեր: Այսպես, դեպքերից մեկով Պաշտպանի ներկայացուցիչները պարզել են, որ մի խումբ անձանց, որոնք իրենց և այլոց իրավունքների պաշտպանության նպատակով բողոքի ակցիա էին կազմակերպել, բերման են ենթարկել Ոստիկանության բաժին: Պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում պարզ է դարձել, որ բերման ենթարկելու պատճառը Ոստիկանության ծառայողի պահանջը չկատարելու համար¹⁶⁵՝ այն է՝ դուրս գալ ճանապարհի երթևեկելի մասից: Բացի դրանից՝ Ոստիկանության կողմից նման իրավիճակներում նույնիսկ հնարավորության առկայության դեպքում տեղում չի կազմվել վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը, այլ՝ անձանց բերման են ենթարկել բաժին՝ այդպիսով ուղղակիորեն խոչընդոտելով իրավապաշտպանների գործունեությանը: Պաշտպանին հայտնած մեկ այլ դեպքով մի խումբ անձանց թույլատրվել է հավաք անցկացնել ՀՀ գլխավոր դատախազության շենքի դիմացի մայթին: Մակայն, երբ ակցիայի մասնակիցներից երկուսը փորձել են անցնել փողոցը և ակցիան շարունակել անմիջապես Գլխավոր դատախազության շենքի մայթին, Ոստիկանության ծառայողները նրանց բերման են ենթարկել: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչի այն պնդմանը, որ օրենքով դատախազության շենքի դիմաց հավաքի իրականացումն արգելված չէ, եթե շենքի ելումուտը չի խոչընդոտվում, իսկ բանավոր պայմանավորվածությունը այս պարագայում իրավական առումով որևէ հետևանք չի

¹⁶¹ Յուրաքանչյուր ոք իրավունք ունի անհատապես կամ այլ անձանց հետ համատեղ խրախուսել և ձգտել պաշտպանելու մարդու իրավունքները և հիմնարար ազատություններ ներպետական կամ միջազգային հարթակներում: http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/defender.shtml, հոդված 1

¹⁶² <http://www.ohchr.org/EN/Issues/SRHRDefenders/Pages/Defender.aspx>,

¹⁶³ ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 164

¹⁶⁴ Մանրամասն տես՝ ՀՀ արդարադատության նախարարության գլխում

¹⁶⁵ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված 182

կարող առաջացնել, Ոստիկանության ծառայողները պատասխանել են, որ պարզաբանումներ կարող են ստանալ ոստիկանության լրատվական ծառայությունից: ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը դեռևս 2010 թվականին Հայաստանում մարդու իրավունքների վիճակի մասին զեկույցում իր մտահոգությունն էր հայտնել իրավապաշտպանների օրինական գործունեության խոչընդոտման և բռնության դեպքերի վերաբերյալ¹⁶⁶: Նշված զեկույցում, որպես գլխավոր խնդիր, նշվել էր իրավապաշտպանների և լրագրողի իրավունքների ոտնահարման դեպքում իրավախախտների չբացահայտումը՝ պատճառաբանելով նշվածը Հայաստանում արմատավորված անպատժելիության մշակույթով: 2014 թվականին տեղի ունեցած բռնությունների վերաբերյալ հայտարարություն է արվել նաև Հայաստանում ԵՄ պատվիրակության կողմից, որով մտահոգություն է հայտնվել քաղաքացիական ակտիվիստների և ընդդիմադիր քաղաքական գործիչների նկատմամբ հարձակումների առնչությամբ¹⁶⁷: Միաժամանակ, «Amnesty International» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը իր 2014/2015թթ. զեկույցում նշել է, որ նոյեմբերի 5-ին «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ ներկայացուցիչների և այլ կանանց իրավունքների իրավապաշտպանների նկատմամբ հնչեցվել են սպառնալիքներ և վիրավորանքներ դատարանից դուրս գալու ժամանակ, որտեղ նրանք աջակցություն էին ցույց տալիս մի կնոջ, որը տուժող էր ճանաչվել ընտանեկան բռնության արդյունքում, միաժամանակ, զեկույցում նշվել է, որ տվյալ դեպքով իրավասու մարմինների կողմից չի իրականացվել արդյունավետ քննություն¹⁶⁸:

2014 թվականի ընթացքում արձանագրվել են նաև լրագրողի օրինական գործունեությունը խոչընդոտելու և լրագրողի նկատմամբ բռնություն կիրառելու մի շարք դեպքեր: Նշված դեպքերից մեկով «Հետք» կայքի լրագրող Անի Հովհաննիսյանի հասցեին հնչած հայհոյանքների և տեսախցիկին հարվածելու կապակցությամբ հարցաքննության ընթացքում ոստիկանը լրագրողին ասել է. **«Դուք էլ եք բզբզացել, ինքն ասել է՝ ինձ մի նկարի, դուք նկարել եք»**¹⁶⁹: Բռնության և օրինական գործունեությանը խոչընդոտելու այլ դեպքեր պատահել են «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Քնար Մանուկյանի, «ararum.am»-ի համահիմնադիր Հովհաննես Եսայանի, «iLur.am» լրատվական կայքի օպերատոր Սարգիս Գևորգյանի, «Ա1+»-ի լրագրող Մարինե Խաչատրյանի և «Չորրորդ իշխանություն» թերթի լրագրող Անի Գևորգյանի¹⁷⁰ հետ: Վերջինիս դեպքի կապակցությամբ Պաշտպանն իր կողմից արված հայտարարության մեջ նշել է. *«Լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելը, առավել ևս՝ նրա նկատմամբ բռնությունը, քրեորեն պատժելի են և խիստ դատապարտելի, հատկապես, եթե այդ հանցագործությունները կատարվել են պետական պաշտոնյաների կողմից:*

¹⁶⁶ <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/179/19/PDF/G1017919.pdf/OpenElement>

¹⁶⁷ http://eeas.europa.eu/delegations/armenia/press_corner/all_news/news/2014/2014_12_16_en.htm

¹⁶⁸ <https://www.amnesty.org/en/documents/pol10/0001/2015/en/>

¹⁶⁹ <http://hetq.am/arm/news/56431/ostikanutyuny-hakvats-che-bacahaytel-lragroxneri-nkatmamb-brnutyunneri-depqery-hancakazmy-grete-misht-bacakayum-e.html>

¹⁷⁰ Նշենք, որ այս դեպքին անդրադարձ է կատարվել նաև «Human rights watch»-ի 2014 թվականի զեկույցում http://www.hrw.org/sites/default/files/wr2015_web.pdf

Նման հանցագործությունները կանխարգելելու միակ եղանակը իրավապահ մարմինների օպերատիվ, խիստ և համաչափ արձագանքն է: (...) ակնկալում ենք ՀՀ հատուկ քննչական ծառայության պատշաճ և բազմակողմանի քննությունը, ինչպես նաև դրա արդյունքների վերաբերյալ հանրությանը իրազեկումը՝ սեղմ ժամկետներում»: Նշված դեպքի առթիվ, օրինակ, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը հարուցել է քրեական գործ, սակայն հետագայում որոշում կայացրել քրեական գործի վարույթը կարճելու մասին¹⁷¹: Չնայած նրան, որ 2014 թվականին տեղի են ունեցել բազմաթիվ նման դեպքեր, այնուամենայնիվ, Ոստիկանության տվյալներով՝ 2014 թվականի ընթացքում լրագրողի նկատմամբ բռնություն կիրառելու, մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու կամ հակաօրինական այլ գործողություններ իրականացնելու վերաբերյալ Ոստիկանությունում նախապատրաստվել է 6 նյութ, կատարվել 1 ծառայողական քննություն, սակայն այդ 6 դեպքով կայացվել է կա՛մ գործի հարուցումը մերժելու, կա՛մ քրեական գործը կարճելու մասին որոշում՝ հիմնականում հանցակազմի բացակայության հիմքով: Նշվածը վկայում է, որ Ոստիկանության կողմից ձեռնարկված քայլերը դեռևս բավարար չեն լրագրողի գործունեության պաշտպանության ուղղությամբ: Մասնավորապես, Ոստիկանությունը բազմաթիվ դեպքերում չի իրականացրել պատշաճ քննություն գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար՝ չնայած այն հանգամանքին, որ օրենսդրությամբ Ոստիկանությունն է այն մարմինը, որը պետք է ապահովի անձանց անվտանգությունը, կանխի և բացահայտի հանցագործությունները:

Լրագրողների օրինական գործունեության խոչընդոտման և բռնության դեպքերին են անդրադարձել նաև մի շարք միջազգային կառույցներ: Մասնավորապես, «Amnesty International»-ի զեկույցում, անդրադառնալով հավաքների ազատությանը, նշվել է, որ 23.06.2014 թվականին Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի շենքի մոտ տեղի ունեցած բողոքի ակցիայի ընթացքում Ոստիկանության ծառայողները ֆիզիկական ուժ են կիրառել 3 լրագրողների նկատմամբ, որոնք Կենտրոն համայնքի Ոստիկանության բաժնի մոտ սպասում էին հավաքի մասնակիցների ազատ արձակմանը¹⁷²: Բացի դրանից՝ 2014 թվականի ընթացքում մի քանի անգամ հայտարարություններով հանդես է եկել նաև Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Դունյա Միյատովիչը՝ հայտնել իր մտահոգություն հանրային ակցիաները լուսաբանելու ժամանակ ոստիկանության կողմից լրագրողների աշխատանքին խոչընդոտելու դեպքերի կապակցությամբ, ինչպես նաև կոչ արել պատասխանատվության ենթարկել լրագրողների վրա հարձակումներ գործողներին, վերացնել անպատժելիության միջավայրը լրագրողների նկատմամբ բռնությունների դեպքերով:¹⁷³ Մասնավորապես, ԵԱՀԿ ներկայացուցչի հայտարարություններից մեկի մեջ նշվում էր, որ անհրաժեշտ է. «(...) իրականացնել մանրակրկիտ և թափանցիկ հետաքննություն ու անել հնարավոր ամեն ինչ՝ հետագայում լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ ոստիկանության անհարիր վարքագիծը կանխելու

¹⁷¹ Հայտնի է նաև, որ Անի Գևորգյանի կողմից հիշյալ որոշումը բողոքարկվել է դատական կարգով, և բողոքը գտնվում է ՀՀ վճռաբեկ դատարանում:

¹⁷² <https://www.amnesty.org/en/documents/pol10/0001/2015/en/>

¹⁷³ <http://www.osce.org/hy/fom/111401> (14.02.2014), <http://www.osce.org/fom/124611> (30.02.014)

համար:»:

Լրագրողների և իրավապաշտպանների նկատմամբ բռնություն կիրառելու բազմաթիվ դեպքերի կապակցությամբ Պաշտպանը և նրա աշխատակազմը հանդես են եկել հրապարակային հայտարարություններով ու կոչերով, որոնցով խստորեն դատապարտել են լրագրողների, փաստաբանների, իրավապաշտպանների, կանանց իրավապաշտպան կազմակերպությունների, քաղաքական գործիչների հասցեին սպառնալիքներ հնչեցնելը, նրանց նկատմամբ ոնտոգությունների և բռնության դեպքերը:¹⁷⁴

Առաջարկ. ձեռնարկել բավարար միջոցներ լրագրողների, իրավապաշտպանների օրինական գործունեությանը խոչընդոտելու և վերջիններիս նկատմամբ բռնության դեպքերի հանազամանքները մանրամասն ուսումնասիրելու, դրանք բացահայտելու, իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու և հետագայում նմանատիպ դեպքերը կանխելու ուղղությամբ:

1.5.3 Մի շարք դեպքերում, հակառակ օրենքի պահանջին, Ոստիկանության աշխատակիցները բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց չեն ապահովել փաստաբանով և չեն պարզաբանել իրենց իրավունքները:

Պաշտպանի աշխատակազմը տարվա ընթացքում ստացել է մի շարք դիմում-բողոքներ և ահազանգեր, որ բերման ենթարկված անձինք չեն ապահովվում փաստաբան հրավիրելու և իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությամբ, քանի դեռ բերման ենթարկված անձի վերաբերյալ չի կազմվել ձերբակալման արձանագրություն կամ չի կայացվել խափանման միջոց ընտրելու մասին որոշում: Պաշտպանին ներկայացված մի շարք ահազանգերով և՛ քաղաքացիները, և՛ իրենց փաստաբանները հայտնել են այն մասին, որ Ոստիկանության կողմից խոչընդոտներ են ստեղծվում տեսակցելու փաստաբաններին/վստահորդներին: Ոստիկանության ծառայողների կողմից փաստաբաններին՝ իրենց վստահորդների հետ տեսակցելու հնարավորության սահմանափակումը, հիմնականում, կատարվել է առանց լուրջ հիմնավորումներ ներկայացնելու՝ ուղղակի արհեստականորեն ձգձգելով տեսակցության իրականացումը: Մի շարք այդպիսի դեպքերում Պաշտպանի ներկայացուցիչների անմիջական միջամտության արդյունքում նշված խնդիրները լուծում են ստացել: Այսպիսով, Ոստիկանության նման գործողություններով խախտվել է անձանց՝ իրավաբանական օգնություն ստանալու, իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու սահմանադրական իրավունքը¹⁷⁵: Միաժամանակ, անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու օբյեկտիվ պահանջն անհրաժեշտություն է դարձնում ոչ միայն նշված իրավունքի ամրագրումը, այլև դրա իրականացման երաշխիքների սահմանումը: Ավելին, պաշտպան ունենալու իրավունքը հանցանքի կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձին օրենքով վերապահված կարևորագույն իրավունքներից մեկն է: Միաժամանակ, այն իրական երաշխիք է կասկածյալին և մեղադրյալին տրված մնացած իրավունքների (ցուցմունքներ

¹⁷⁴ http://ombuds.am/library/view_news/article/1128; http://ombuds.am/library/view_news/article/1172
http://ombuds.am/library/view_news/article/1142; http://ombuds.am/library/view_news/article/1237

¹⁷⁵ Սահմանադրության 20-րդ հոդված

տալու, նյութեր ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, բողոքներ ներկայացնելու, գործի նյութերին ծանոթանալու և այլնի) իրականացման համար, քանի որ մեղադրանքից պաշտպանվելու ընթացքում անձն իր պաշտպանից ստանում է նաև իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով¹⁷⁶: Առհասարակ, այն պահից, երբ կասկածյալը/մեղադրյալը պաշտպան ունենալու ցանկություն է հայտնում, քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը դառնում է պարտադիր¹⁷⁷: Իսկ Ոստիկանությունը պարտավոր է անձին վարչական շենք բերելուց հետո ապահովել նրա փաստաբան հրավիրելու համար հեռախոսագանգեր կատարելու հնարավորությունը և իրավաբանական օգնություն ստանալը: Քրեադատավարական այս իրավունքը կարևոր երաշխիք է, քանի որ ցածր իրավագիտակցության պատճառով անձի իրավունքներն առավել հաճախ խախտվում են վարույթի հենց այս փուլում: Մասնավորապես, քրեական գործերի հարուցման և հետագայում մեղադրական եզրակացության հիմքում որպես ապացույցի տեսակ հաճախ դրվում է անձի ցուցմունքը, որը շատ դեպքերում կրում է ինքնախոստովանական բնույթ, և որից նրանք հրաժարվում են վարույթի մյուս փուլերում՝ համապատասխան իրավաբանական օգնություն ստանալուց հետո: Ուստի, հնարավոր խախտումների նվազեցման նպատակով Ոստիկանությունը չպետք է որևէ ձևով խոչընդոտի ձերբակալվածի հետ փաստաբանի անհապաղ կարգով տեսակցությանը:

Ինչ վերաբերում է բերման ենթարկված անձանց իրենց իրավունքների պարզաբանման խնդրին, ապա անձի ազատության սահմանափակման պահից, իր կարգավիճակի առանձնահատկությունից ելնելով (բերման ենթարկված, ինչպես նաև սահմանափակման նախնական և կարճաժամկետ բնույթը), վերջինս օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով. ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը, (բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին, (գ) հրավիրելու իր փաստաբանին, (դ) լռելու¹⁷⁸, քանի որ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքով բերման ենթարկվածը չունի հատուկ կարգավիճակ, որից բխեն նրա իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ, Ոստիկանության պետի 17.09.2007թ. թիվ 3-Ն հրամանի համաձայն՝ ոստիկանության աշխատակիցների կողմից իրավունքների ծանուցումից հետո կազմվում են համապատասխան արձանագրություններ: Նշվածից կարելի է ենթադրել, որ Հրամանը պարտադրում է Ոստիկանության աշխատակիցներին անձանց ազատության սահմանափակման պահից վերջիններիս պարզաբանել իրենց իրավունքները: Սակայն, ստացված ահազանգերն ու բողոքները ցույց են տալիս, որ գործնականում ինչպես Վճռաբեկ դատարանի որոշման, այնպես էլ նշված Հրամանի պահանջները բազմաթիվ դեպքերում չեն կատարվել Ոստիկանության կողմից, իսկ շատ դեպքերում իրազեկումը կրել է ձևական բնույթ,

¹⁷⁶ ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունների գիտագործնական ժողովածու, 2010 Երևան

¹⁷⁷ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 69

¹⁷⁸ Վճռաբեկ դատարանի ԵԱԴԴ 0085/06/09 որոշում

«Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.06.2007թ. թիվ 818-Ն որոշմամբ նույնպես ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերման ենթարկված անձինք սահմանված կարգի համաձայն՝ պարտադիր պետք է ծանուցվեն որոշ իրավունքների մասին:

քանի որ, ստորագրելով իրազեկված լինելու վերաբերյալ արձանագրությունը, անձինք փաստացի չեն ծանոթացել իրենց իրավունքներին կամ դրանք չեն պարզաբանվել: Հատկանշական է, որ չնայած Պաշտպանի ստացած մի շարք ահազանգերին՝ Ոստիկանության կողմից 2014թ. հայտնաբերվել է բերման ենթարկված քաղաքացիներին իրենց իրավունքներն ու ազատությունները չպարզաբանելու վերաբերյալ՝ ընդամենը 1 դեպք, իսկ փաստաբաններին իրենց վստահորդների հետ հանդիպելուն, քննչական գործողություններին մասնակցելուն խոչընդոտելու կամ չթույլատրելու դեպքեր ընդհանրապես չեն արձանագրվել:

Առաջարկ. պատշաճ կերպով ապահովել բերման ենթարկված, ձերբակալված անձանց տեսակցությունն իրենց փաստաբանի հետ, ապահովել, որպեսզի Ոստիկանության աշխատակիցների կողմից ազատությունը սահմանափակված անձանց պատշաճ կերպով պարզաբանվեն իրենց իրավունքները:

1.5.4 Կրկին գրանցվել են Ոստիկանության կողմից բերման ենթարկված անձանց հաշվառման մատյաններում ուշ գրանցելու, ընդհանրապես չգրանցելու, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերը քաղաքացիներից անհարկի վերցնելու դեպքեր:

2014 թվականին նորից ստացվել են բազմաթիվ ահազանգեր և դիմում-բողոքներ առ այն, որ Ոստիկանություն բերման ենթարկված անձանց վերաբերյալ տվյալները (անձնական, բերման ենթարկելու ժամ, պատճառ և այլն) հաշվառման մատյաններում ուշ են գրանցել կամ ընդհանրապես չեն գրանցել, ինչպես նաև որոշ դեպքերում քաղաքացիներից անհարկի վերցրել են անձը հաստատող փաստաթղթերը: Նշված գործողությունների արդյունքում անձինք Ոստիկանության բաժնում պահվել են ավելի երկար, քան պահանջում է օրենքը¹⁷⁹, չգրանցելու հետևանքով անտեղյակ են եղել իրենց կարգավիճակի մասին (կասկածյալ, վկա և այլն), որը հանգեցրել է անձնաց կողմից իրենց իրավունքների չիմացությանը, այդպիսով՝ սահմանափակվել է անձանց պաշտպանության արդյունավետ իրականացման իրավունքը: Նման դեպքերից մեկով քաղաքացու ահազանգի հիման վրա Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են, որ Ոստիկանության բաժնի հաշվառման մատյանում քաղաքացու վերաբերյալ առկա չէ որևէ գրառում: Պարզ է դարձել, որ տվյալ դեպքում անձը գործով ներգրավված է եղել որպես կասկածյալ, սակայն Ոստիկանության աշխատակիցների կողմից համապատասխան գրանցում չի կատարվել մատյանում, քանի որ հավանական է եղել, որ նրա կարգավիճակը հետագայում փոխվի: Չնայած նրան, որ Ոստիկանության բաժին բերված յուրաքանչյուր անձ պետք է գրանցվի հերթապահ մասի բերման ենթարկվածների հաշվառման գրքում¹⁸⁰, այնուամենայնիվ, դեպքերից մեկով անձին տվյալ բերման ենթարկելուց հետո ողջ օրվա ընթացքում չի կատարվել որևէ գրառում: Հարկավոր է նշել, որ Պաշտպանի ներկայացուցիչների կողմից նմանատիպ բազմաթիվ

¹⁷⁹ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 131¹

¹⁸⁰ ՀՀ ՆԳ նախարարի հերթապահ մասերի գործունեությունը կարգավորող 01.12.1994թ. թիվ 977 հրամանով սահմանվում է պահանջ, համաձայն որի՝ Ոստիկանության բաժին բերված յուրաքանչյուր անձ գրանցվում է հերթապահ մասի բերման ենթարկվածների հաշվառման գրքում:

դեպքեր են արձանագրվել, այնինչ, ըստ Ոստիկանության ներկայացված տվյալների՝ բերման ենթարկվածների հաշվառման գիրքը թերություններով լրացնելու փաստով 2014 թվականին անցկացվել է 1 ծառայողական քննություն, որի արդյունքներով կարգապահական տույժ չի կիրառվել, իսկ անձին ոստիկանության բաժին բերման ենթարկելուց հետո կազմված արձանագրության մեջ բերման ենթարկելու ավելի ուշ ժամ նշելու համար 1 ծառայողի տրվել է «նկատողություն»:

2014 թվականին գրանցվել են նաև քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերն անհիմն վերցնելու դեպքեր: Պաշտպանի աշխատակազմի կողմից արձանագրված նման դեպքերից մեկով 2 քաղաքացիների հարցաքննել են ոստիկանության բաժնում, որից հետո ոստիկանները վերցրել են վերջիններիս անձնագրերը և չեն վերադարձրել: Պաշտպանի ներկայացուցիչների գործողությունների արդյունքում պարզ է դարձել, որ անձինք ներգրավված են եղել որպես վկաներ, այնինչ օրենսդրությամբ չի նախատեսվում վկայի անձը հաստատող փաստաթուղթ վերցնելու իրավասություն Ոստիկանության ծառայողների համար¹⁸¹: Նմանատիպ մեկ այլ գործով բացահայտվել է, որ Ոստիկանության ծառայողը քրեական վարույթի ընթացքում առանց անձին որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավելու՝ վերցրել է քաղաքացի Բ. Չ. անձնագիրը և այն վերադարձրել շուրջ 5 օրից, ընդ որում՝ Պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում: Նշվածի վերաբերյալ Ոստիկանությունից հայտնել են, որ քաղաքացին ուղղակի մոռացել է ետ վերցնել իր փաստաթղթերը:

Առաջարկ. **վերահսկել Ոստիկանության բաժանմունք բերման ենթարկված անձանց վերաբերյալ հաշվառման մատյաններում գրանցումների ժամանակին և լիարժեք կատարումը, բացառել քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերն անհիմն վերցնելու պրակտիկան:**

1.5.5 Ոստիկանության ծառայողների կողմից առանձին դեպքերում շարունակվել են խախտվել հաղորդումների քննարկման ժամկետը, դրանք քննարկելիս օրենքով սահմանված որոշումներից մեկի կայացման, ինչպես նաև հայերենին չտիրապետող անձից բացատրություն վերցնելիս նրան պատշաճ կերպով թարգմանչով ապահովելու պահանջները:

2014 թվականի ընթացքում գրանցվել են դեպքեր Ոստիկանության ծառայողների կողմից հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետները խախտելու, դրանք քննարկելիս օրենքով սահմանված որոշումներից մեկի չկայացման վերաբերյալ, ինչպես նաև առանձին դեպքերում չեն պահպանվել դատավարական և քննչական գործողությունների իրականացման համար օրենքով սահմանված կարգը: Նշենք, որ

¹⁸¹ «ՀՀ քաղաքացու մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ *կասկածյալից կամ մեղադրյալից* անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը, և այն պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց անմիջապես հետո: Բացի դրանից՝ ՀՀ Կառավարության թիվ 821 որոշման պահանջների համաձայն՝ *կասկածյալների, մեղադրյալների*, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը կամ կալանքը, անձնագրերը ժամանակավորապես վերցնում են հետաքննության կամ նախաքննության մարմինները կամ դատարանը:

նույն խնդիրները Պաշտպանի կողմից արձանագրվել է նաև 2012, 2013 թվականներին, ինչը վկայում է դրանց լուծմանն ուղղված քայլերի ոչ բավարար լինելու մասին:

Այսպես, Պաշտպանը 2014թ. ընթացքում ստացել տարբեր ահազանգեր և դիմում-բողոքներ, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Ոստիկանության ծառայողների կողմից խախտվել են դատավարական և քննչական գործողությունների իրականացման կարգերը: Մասնավորապես, առանձին դեպքերում անձի հարցաքննությունն իրականացվել է առանց օրենքով սահմանված ծանուցման կարգը պահպանելու¹⁸², որի արդյունքում անձը զրկվել է իր կարգավիճակից բխող իրավունքների իրականացման հնարավորությունից: Մեկ այլ դեպքով Ոստիկանության ծառայողները հայտերենին չտիրապետող անձից բացատրություն ստանալու նպատակով ներգրավել են համապատասխան որակավորում չունեցող թարգմանչի և նրա ծառայությունների մատուցման ծախսերը պահանջել են քաղաքացուց: Դրանով խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այն դրույթը, համաձայն որի՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական միջոցների հաշվին հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց իրավունքները¹⁸³: Տարբեր ահազանգեր, դիմում-բողոքներ, ինչպես նաև Ոստիկանության ներկայացրած տվյալներ վկայում են, որ մի շարք դեպքերում Ոստիկանության ծառայողների կողմից խախտվել է հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը: Մասնավորապես, հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առթիվ օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում¹⁸⁴, սակայն, նշված ժամկետային պահանջը ոչ միշտ է պահպանվել: 2014թ. ընթացքում դատավարական և քննչական գործողությունները անհարկի ձգձգելու և խախտումներով իրականացնելու համար, ըստ Ոստիկանության տվյալների, կատարվել է 10 ծառայողական քննություն և ուսումնասիրություն: Դրանցից 2-ը թողնվել են անհետևանք, իսկ 7-ի արդյունքներով ոստիկանության 8 ծառայող ենթարկվել է կարգապահական տույժերի, իսկ 1 ծառայողական քննություն գտնվում է ընթացքի մեջ: Ոստիկանության տվյալներով՝ Ոստիկանության աշխատակիցների կողմից հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման 10-օրյա ժամկետի խախտման 18 դեպք է գրանցվել (2013թ.-ին՝ 1399): Դրական է, որ նախորդ տարվա համեմատ ընթացիկ տարում ավելի պակասել են նմանատիպ խախտումները, այնուհանդերձ անհրաժեշտ է ձեռնարկել շարունակական քայլեր այս խախտումները բացառելու ուղղությամբ: Այնուհանդերձ, Ոստիկանությունը հայտնել է, որ խախտումների 18 դեպքերից 7-ը տեղի է ունեցել ոչ օբյեկտիվ պատճառների արդյունքում, իսկ մնացածը՝ օբյեկտիվ: Սակայն նշված օբյեկտիվ պատճառները (օրինակ՝ ուշացել են կատարված հարցումների կամ նշանակված փորձաքննությունների

¹⁸² ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 205

¹⁸³ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 15

¹⁸⁴ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 180

պատասխանները), ըստ գործող քրեական դատավարության օրենսգրքի՝ որևէ կերպ չեն կարող հանդիսանալ հիմնավորում վերոնշյալ 10-օրյա ժամկետը խախտելու համար, քանի որ նմանատիպ պատճառներն առկա են արդեն երկար տարիներ, և չեն ձեռնարկվել անհրաժեշտ միջոցներ դրանց վերացման ուղղությամբ: Օրինակ՝ գործնականում Ոստիկանությունը սահմանված ժամկետի չպահպանելու պատճառ նշել է նաև թմրամիջոցների դատաքիմիական փորձաքննության երկար տևողությունը, որը ժամանակակից սարքավորումների բացակայության պատճառով գրեթե միշտ գերազանցում է 10 օրը: Բացի նշված խախտումներից, Պաշտպանի աշխատակազմի կողմից պարզվել է նաև, որ Ոստիկանության ծառայողների կողմից հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս ոչ բոլոր դեպքերում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որոշումներից որևէ մեկը¹⁸⁵: Մասնավորապես, Ոստիկանության ծառայողները քրեական գործ հարուցելու նպատակով նյութեր են նախապատրաստել, իսկ հետագայում դրանց հիման վրա կազմել են *եզրակացություն*, ինչի արդյունքում խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով սահմանված պահանջը, այն է՝ նախատեսված 3 որոշումներից (քրեական գործ հարուցելու, քրեական գործ հարուցելը մերժելու, հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին) մեկը կայացնելը: Ոստիկանության աշխատակիցները նման *եզրակացություն* կազմելիս առաջնորդվում են ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ. թիվ 12/354 հրամանով, այնինչ պետք է կիրառվի օրենսգրքով նախատեսված կարգը: Նշվածի վերաբերյալ Ոստիկանությունը հայտնել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված 3 որոշումներից որևէ մեկը չկայացնելու վերաբերյալ գրանցվել 9 բողոք: Այսպիսով, Ոստիկանության նման գործելաճի արդյունքում մի շարք անձինք գրկվել են ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված բողոքարկման իրավունքից, քանի որ նշված հոդվածը նախատեսում է «որոշման», այլ ոչ թե «եզրակացության» բողոքարկման հիմքերն ու կարգը: Միաժամանակ, պետք է նշել, որ օրենքով իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Սահմանադրության և տվյալ ակտից ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը¹⁸⁶, այսինքն՝ նշված դեպքում պետք է կիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, այլ ոչ միջգերատեսչական հրամանը:

Առաջարկ. Բացառել հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման 10-օրյա ժամկետի խախտումները, հաղորդումները քննարկելիս ընդունել օրենսգրքով նախատեսված 3 որոշումներից մեկը, բացատրություն ստանալու ժամանակ անհրաժեշտության դեպքում անձանց պատշաճ կերպով ապահովել թարգմանչով:

¹⁸⁵ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 181

¹⁸⁶ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 24

1.5.6 Ոստիկանությունը, որպես մարդու անվտանգությունը, հանցագործությունների կանխումն ապահովող իրավասու մարմին, չի կանխել ընտանեկան բռնության բազմաթիվ դեպքերը և պատշաճ չի արձագանքել դրանց:

2014 թվականին Պաշտպանին հասցեագրված ահազանգերով և դիմում-բողոքներով վերհանվել են ընտանեկան բռնության բազմաթիվ դեպքեր: Դիմումներից մեկով պարզվել է, որ Ոստիկանության ծառայողների կողմից բավարար քայլեր չեն ձեռնարկվել՝ հայտնաբերելու և բացահայտելու մոր կողմից անչափահաս երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության դրսևորման դեպքերը: Նշված դեպքով, Ոստիկանությունը մերժել է քրեական գործի հարուցումը, սակայն այդ որոշումը հետագայում վերացվել է ՀՀ դատախազության կողմից և, անձի արարքները որակվելով որպես ծեծ¹⁸⁷, փոխանցվել է նախաքննություն իրականացնող մարմնին, որն էլ դրանք վերաորակել է որպես խոշտանգում¹⁸⁸: Այնուահանդերձ, նախաքննության ընթացքում ձեռք բերված նոր ապացույցների արդյունքում պարզվել են անձի կողմից իր մյուս անչափահաս երեխաների նկատմամբ ընտանեկան բռնության դրսևորման նոր դեպքեր: Ըստ Ոստիկանության գրանցած տվյալների՝ 2014 թվականի ընթացքում գրանցվել է ընտանեկան բռնության 678 դեպք, այդ թվում՝ կանանց նկատմամբ՝ 551, անչափահասների նկատմամբ՝ 10¹⁸⁹: Հիշյալ 10 դեպքից 2-ով հարուցվել է քրեական գործ, իսկ 8-ով քրեական գործի հարուցումը մերժվել է: Հատկանշական է, որ կանանց նկատմամբ գրանցված ընտանեկան բռնության 551 դեպքերից միայն 55-ով է հարուցվել քրեական գործ, իսկ 496-ով քրեական գործի հարուցումը նյութերով մերժվել է: Ընտանեկան բռնության դեպքերի կապակցությամբ գործերի հարուցման նման ցածր ցուցանիշները վկայում են այն մասին, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր եղել արարքը որակել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցակազմով: Ելնելով ընտանեկան բռնության դեպքերի առանձնահատկություններից՝ հետաքննիչը կամ քննիչը հաճախ դժվարանում են ընտանեկան բռնության այս կամ այն դրսևորումը (օրինակ՝ նյութական կախվածության չարաշահումը, պարբերական բնույթ կրող սպառնալիքները, մեկ ապտակը և այլն) որակել ՀՀ քրեական օրենսգրքի որևէ հոդվածով: Տվյալ հարցի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է նաև օրենսդրական բարեփոխումներ իրականացնել, քանի որ գործող իրավական ակտերով չի սահմանվում «ընտանեկան բռնությունը» և չեն կարգավորվում դրանից բխող հարաբերությունները: Անհրաժեշտ է առանձին օրենքով կարգավորել ընտանեկան բռնության հետ կապված հարաբերությունները, սահմանել ընտանեկան բռնության հասկացությունը, ընտանեկան բռնության համար պատասխանատվությունը և այլն¹⁹⁰: Հատկանշական է, որ Ոստիկանության խնդիրներից են մարդու անվտանգության ապահովումը,

¹⁸⁷ ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 118

¹⁸⁸ ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 119

¹⁸⁹ Հնարավոր է, որ պաշտոնական վիճակագրության հետ համեմատած՝ գործնականում ընտանեկան բռնության դեպքերն անհամեմատ ավելի շատ լինեն, քանի որ մի շարք դեպքերում բռնության ենթարկված անձինք տարբեր պատճառներով չեն դիմել Ոստիկանություն:

¹⁹⁰ Մանրամասն տե՛ս «ՀՀ արդարադատության նախարարություն» գլխում

հանցագործությունների, վարչական իրավախախտումների կանխումը և խափանումը, ինչպես նաև հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործով նախնական քննության ապահովումը¹⁹¹: Այնուամենայնիվ, վերոնշյալ խնդիրների և ընտանեկան բռնության նման վիճակագրության առկայության դեպքում կարելի է եզրահանգել, որ Ոստիկանությունն իր առջև դրված խնդիրներին հասնելու նպատակով չի իրականացրել բավարար գործողություններ:

Մտազարկ. ընտանեկան բռնության դեպքերով իրականացնել պատշաճ քննություն, ձեռնարկել անհրաժեշտ քայլեր մեղավորներին հայտնաբերելու ուղղությամբ, համագործակցել այլ իրավասու մարմինների հետ ընտանեկան բռնության արարքներին պատշաճ որակում տալու նպատակով օրենդրական փոփոխություններ առաջարկելու ուղղությամբ:

1.5.7 Պաշտպանի կողմից դեռևս 2013 թվականին բարձրաձայնվել և մինչ օրս չի լուծվել անձանց, այդ թվում՝ անչափահասներին, Ոստիկանության բաժին «հրավիրելու» և այնտեղ իրենց կամքին հակառակ պահելու պրակտիկան:

Ստացվել են բազմաթիվ ահազանգեր քաղաքացիներին ոստիկանության բաժին տանելու և վերջինիս գտնվելու վայրի վերաբերյալ որևէ տեղեկություն չտրամադրելու վերաբերյալ: Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությամբ տասնյակ դեպքերում ոստիկանություն «հրավիրված» անձինք ազատ են արձակվել բաժնից: Ավելին, Պաշտպանի ներկայացուցիչների կողմից արձանագրվել են նաև դեպքեր, երբ «հրավիրվածը» եղել է անչափահաս՝ չնայած նրան, որ տասնվեց տարին չլրացած անձի օպերատիվ հարցումը կարող է դիտարկվել իրավաչափ միայն նրա օրինական ներկայացուցչի մասնակցությամբ¹⁹²: Խնդրի կապակցությամբ Ոստիկանության ներկայացված տվյալներով՝ Ոստիկանություն հրավիրելու, ապօրինի պահելու, հարցմանը մասնակցելու կամավոր բնույթի մասին վերջինիս չպարզաբանելու կապակցությամբ անցկացվել է 4 ծառայողական քննություն, որոնցից 2-ով նշված փաստերը չեն հիմնավորվել, իսկ 2-ի արդյունքում Ոստիկանության 6 ծառայող ենթարկվել է կարգապահական տույժերի: Պաշտպանի ներկայացուցիչները գործնականում պարզել են, որ անձանց բաժին հրավիրելը Ոստիկանությունը կատարել է օպերատիվ հարցում իրականացնելու¹⁹³ կամ բացատրություններ վերցնելու նպատակով՝ հիմնավորելով, որ անձն ինքնակամ, առանց իրավունքների սահմանափակման, ներկայանում է ոստիկանության բաժին և ոստիկանության ստորաբաժանում հրավիրելն իրավաչափ է: Մակայն, նման հիմնավորումը չի բխում

¹⁹¹ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, հոդված 2

¹⁹² ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 441

¹⁹³ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 15. «Հարցումը կատարված, նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելն է՝ իրականում կամ հավանաբար այդպիսի տեղեկատվության տիրապետող իրավաբանական և ֆիզիկական անձանց *հարցեր տալու (հարցումներ անելու) և պատասխաններ ստանալու միջոցով*»:

անձի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի երաշխիքից, քանի որ մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով¹⁹⁴: Ավելին, և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքը և ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չեն նախատեսում այնպիսի կարգավորումներ, որոնց առկայության դեպքում անձին «հրավիրելը» կհամարվեր իրավաչափ: Բացի դրանից՝ նշված օրենքի 15-րդ հոդվածը բացառապես վերաբերում է Ոստիկանության աշխատակիցների կողմից տեղեկությունների հավաքագրմանը, սակայն գործնականում Ոստիկանության կողմից մեկնաբանվում է, որ չկա որևէ սահմանափակում օպերատիվ հարցում իրականացնելու վայրի վերաբերյալ: Այսինքն՝ դրույթը, չնայած մարդու իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման իր ռիսկին, հստակ սահմանափակումներ չի նախատեսում օպերատիվ հարցումներ իրականացնելու կարգի, վայրի, ժամանակի և նման այլ հանգամանքների, ինչպես նաև անչափահասների նկատմամբ տվյալ հարցման իրականացման հատուկ կարգի վերաբերյալ: Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգիրքը չի նախատեսում անձի կողմից բացատրություններ տալու որևէ կարգ: Նշված բացթողումների հետևանքով անձինք չեն տեղեկացվել համապատասխան հարցման կամավորության, Ոստիկանության ստորաբաժանում չներկայանալու և տեղեկություններ հայտնելուց հրաժարվելու իրենց իրավունքի մասին: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ այս հարցի վերաբերյալ առկա է ինչպես Ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողություններ իրականացնելու, այնպես էլ, առհասարակ, օրենսդրական բացի խնդիր:

Առաջարկ. Բացառել Ոստիկանության ծառայողների կողմից անձանց ոչ իրավաչափորեն բաժին հրավիրելու պրակտիկան, մշակել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնք հստակ կսահմանեն անձանց, այդ թվում՝ անչափահասներին, Ոստիկանություն հրավիրելու ընթացակարգը՝ երաշխավորելով այդ գործողության կամավոր բնույթը:

1.5.8 2014 թվականին ևս չեն ձեռնարկվել բավարար քայլեր Ոստիկանության ծառայողների կողմից խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև բռնության այլ դեպքերի վերհանման, նախապատրաստվող նյութերի մեջ դրանց արարքի իրական բնույթն ու շարժառիթներն պատշաճ արտացոլելու և հետազայում կանխելու ուղղությամբ:

Կրկին արձանագրվել են Ոստիկանության ծառայողների կողմից անձանց խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև բռնության ենթարկելու մի շարք դեպքեր: Ոստիկանության տվյալներով՝ 2014 թվականին խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև բռնության միայն 3 դեպք է արձանագրվել, և այդ դեպքերով նախապատրաստած նյութերը փոխանցվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

¹⁹⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 16

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական օրենսգրքը նախատեսում է կոնկրետ հանցակազմ՝ քննիչի կողմից սպառնալիք գործադրելու կամ այլ ապօրինի գործողություններով՝ վկային, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին կամ տուժողին ցուցմունք տալուն, ինչպես նաև սահմանում է խոշտանգման հանցակազմ¹⁹⁵, այնուամենայնիվ, ուսումնասիրությունները վկայում են, որ նշված հոդվածների հիման վրա Ոստիկանության կողմից փոխանցված նյութերով որևէ քրեական գործ չի հարուցվել Ոստիկանության ծառայողների նկատմամբ: Փոխարենը՝ դեպքերից 3-ով հարուցվել են քրեական գործեր՝ անձի պաշտոնական լիազորությունների չարաշահման¹⁹⁶ և լրագրողների օրինական գործունեության խոչընդոտման կապակցությամբ^{197 198}: Դրա պատճառներից է նաև, որ Ոստիկանության կողմից նման դեպքերով ՀՀ հատուկ քննչական ծառայություն փոխանցված նյութերը ոչ բոլոր դեպքերում են արտացոլել արարքի իրական բնույթն ու շարժառիթները, ինչի արդյունքում հակաիրավական գործողություններին տրվել են այլ որակումներ: Նշվածը խնդրահարույց է այնքանով, որ անձինք հիմնականում ենթարկվել են բռնությունների համապատասխան պաշտոնատար անձանց կողմից որոշակի տեղեկություններ և/կամ ցուցմունքներ ստանալու նպատակով: Նշված խնդիրների կանխմանը կարող է նպաստել նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի 36-րդ և 60-րդ կետերով սահմանված գործողությունների իրականացումը, որոնց համաձայն՝ պետք է ուսումնասիրել հարցաքննությունների տեսաձայնագրման միջազգային փորձը և ներկայացնել առաջարկություն տեսաձայնագրման համակարգը Հայաստանում ներդնելու նպատակահարմարության կապակցությամբ, ինչպես նաև ստեղծել անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար նախատեսված հատուկ սենյակներ¹⁹⁹: Այս առումով, ողջունելի է, որ Ոստիկանությունը սկսել է իր ստորաբաժանումների վարչական շենքերում (մասնավորապես՝ միջանցքներում) տեղադրել տեսախցիկներ, սակայն առ այսօր հարցաքննության և/կամ բացատրություններ տալու համար տեսախցիկներով կահավորված հարցաքննության սենյակներ չկան, որոնք որոշ չափով կնվազեցնեն Ոստիկանության ծառայողների կողմից հակաօրինական գործողությունների կատարման ռիսկերը: Ուստի գտնում ենք, որ դեռևս չեն ձեռնարկվել բավարար քայլեր Ոստիկանության ծառայողների կողմից խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև բռնության այլ դեպքերի վերհանման և կանխարգելման ուղղությամբ: Ավելին, Ոստիկանության ծառայողների կողմից հակաօրինական գործողությունների միայն 3 դեպքի բացահայտումը գոհացնող ցուցանիշ չէ՝ հաշվի առնելով Պաշտպանի աշխատակազմին հայտնած նման դեպքերի

¹⁹⁵ ՀՀ քրեական օրենսգրք, հոդվածներ 119, 341

¹⁹⁶ ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 309, մաս 2

¹⁹⁷ ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 164

¹⁹⁸ Գործերից մեկով հետազայում մեղադրական եզրակացություն ուղարկվել է դատարան, մյուսը՝ նախաքննության փուլում է, իսկ վերջինով քրեական գործի վարույթը կարճվել է, սակայն այդ որոշումը բողոքարկվել է դատարան:

¹⁹⁹ ՀՀ կառավարություն 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-ն «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշում

քանակությունը, նման պրակտիկայի վտանգի աստիճանը և այլն: Հաշվի առնելով նշվածի կարևորությունը՝ դրա վերացմանն ուղղված միջոցառումներ ընդգրկվել են նաև Ռեզոլուցիայի 2000-ի 2014 թվականին խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի արգելքի վերաբերյալ իրավապահ մարմինների աշխատողների շրջանում պարբերական դասընթացների կազմակերպում: Չնայած ձեռնարկված քայլերին՝ «Amnesty International»-ն իր 2014/2015 թթ. զեկույցում նշել է, որ իրավապաշտպանները բազմիցս իրենց մտահոգությունն են հայտնել Ոստիկանությունում պահվող անձանց նկատմամբ ծեծի և վատ վերաբերմունքի բազմաթիվ հաղորդումների վերաբերյալ²⁰¹:

Առաջարկ. ձեռնարկել անհրաժեշտ և բավարար քայլեր Ոստիկանության ծառայողների կողմից խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև բռնության այլ դեպքերի վերհանման, դրանց վերաբերյալ նախապատրաստվող նյութերի մեջ արարքի իրական բնույթն ու շարժառիթները հստակ արտացոլելու և հետազայում նման դեպքերը կանխելու ուղղությամբ:

1.5.9 Կրկին արձանագրվել են ձեռքարկված անձանց բուժօգնությունը ոչ պատշաճ կազմակերպելու, մատյաններում վնասվածքների մասին թերի գրառումներ կատարելու խնդիրներ:

Պաշտպանի ներկայացուցիչների այցելությունների ընթացքում վերհանվել են մի շարք խնդիրներ ձեռքարկվածների պահման վայրեր (ՁՊՎ) ընդունվող անձանց բուժօգնության կազմակերպման հետ կապված: Հակառակ օրենսդրական արգելքին՝ ՁՊՎ ընդունվող անձանց արտաքին գնության իրականացմանը մասնակցել են հերթապահ ոստիկանը և ուղեկցող ոստիկանը: Ընդ որում՝ արտաքին գնությունն իրականացվել է խուզարկությանը զուգահեռ, այնինչ, այն պետք է իրականացվի ՁՊՎ վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս²⁰²: Արձանագրվել են նաև խախտումներ ՁՊՎ-ների մատյաններում վնասվածքների մասին թերի գրառումներ կատարելու վերաբերյալ: Պաշտպանի ներկայացուցիչների կողմից գրանցված դեպքերից մեկով Երևան ՁՊՎ-ում փաստագրված անձ Խ.Ա.-ի մոտ ՁՊՎ մուտք գործելու պահին արձանագրվել էին վերքեր մարմնի տարբեր մասերում, սակայն մատյանում նշված չի եղել վնասվածքի տեղակայումը, չափերը, ձևը, գույնը և այլ մանրամասներ, ինչն իր հերթին կարող է հետազայում հանգեցնել պատշաճ բուժօգնություն ցուցաբերելու դժվարությունների: Պետք է նշել, որ Ոստիկանության կողմից 2014 թվականի ընթացքում ՁՊՎ-ներում վարվող մատյանների լրացման, արձանագրված մարմնական վնասվածքների մասին տեղեկատվությունը բավարար տվյալներ չպարունակելու և արտաքին գնություն

²⁰⁰ 2014 թվականի փետրվարի 27-ի ՀՀ կառավարության որոշումը «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», կետ 43

²⁰¹ <https://www.amnesty.org/en/documents/pol10/0001/2015/en/>

²⁰² «Ձեռքարկված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք

չիրականացնելու հետ կապված հայտնաբերվել է ընդամենը 3 խախտում: Այսպիսով, վերոնշյալ խնդիրները հանգեցնում են պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքի խախտման, ինչպես նաև քրեական հետապնդում իրականացնող մարմինների առջև արդյունավետ իրավական պաշտպանություն ստանալու հնարավորության ոչ պատշաճ իրականացմանը:

Առաջարկ. խստացնել հսկողությունը ձերբակալված անձանց վնասվածքների վերաբերյալ մատյաններում ամբողջական և պատշաճ գրառումների կատարման, ինչպես նաև ՁՊՎ ընդունվող անձանց բուժզննության պատշաճ կազմակերպման նկատմամբ:

1.5.10 Ճանապարհային ոստիկանությունը մի շարք դեպքերով վարորդներին նշանակել է անհիմն տուգանքներ, նրանց անօրինական պահանջներ ներկայացրել, արձանագրված վարչական իրավախախտումների վերաբերյալ անձանց պատշաճ չի ծանուցել, անհիմն կատարողական վարույթներ հարուցել ու կրկնապատկել վարորդների տուգանքները:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանությունն (ՃՈ) իր գործառույթներն իրականացնելիս թույլ է տվել մի շարք խախտումներ և թերացումներ: Մասնավորապես, դեպքերից մեկով պարզվել է, որ ձայնային ազդանշան տալու համար ոստիկանը ցանկացել է քաղաքացու ավտոմեքենան անհիմն տանել տուգանային հրապարակ, սակայն Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությամբ խնդիրը լուծվել է: Մեկ այլ դիմումով պարզ է դարձել, որ ՃՈ տեսանկարահանման միջոցով հայտնաբերված խախտումների արձանագրման կենտրոնի տեսուչներից մեկի կողմից 24.07.2014 թվականին կայացվել է «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշում, որով քաղաքացին ենթարկվել է վարչական պատասխանատվության տրանսպորտային միջոցով սահմանված արագությունը գերազանցելու համար²⁰³, այնինչ քաղաքացին վարչական իրավախախտումը կատարել է 12.07.2014 թվականին: Ընդ որում, «Վարչական տույժ նշանակելու մասին» որոշումն իրեն հանձնվել է 31.07.2014 թվականին՝ ակտն ընդունելուց հետո օրենքով սահմանված 3-օրյա ժամկետից ուշ²⁰⁴: Արձանագրվել են այլ դեպքեր, երբ ՃՈ աշխատակիցներն անձանց ենթարկել են վարչական պատասխանատվության առանց պատշաճ հիմնավորումների և/կամ անօրինական պահանջներ են ներկայացրել վարորդներին: Քաղաքացիների կողմից ներկայացվել են նաև բազմաթիվ դժգոհություններ ՃՈ կողմից վարչական իրավախախտումների վերաբերյալ նրանց ոչ պատշաճ ծանուցելու, ինչպես նաև անհիմն կատարողական վարույթներ հարուցելու և/կամ տուգանքներն անհիմն կրկնապատկելու վերաբերյալ: Վարչական տույժ նշանակելու մասին որոշումները հասցեատերերին հանձնվել է փոստային ծառայությունների «Հայփոստ» ՓԲԸ, «Հատուկ կապ» ՓԲԸ միջոցով, իսկ ՃՈ

²⁰³ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 124.4, մաս 2

²⁰⁴ «Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 6, 7

կողմից իրականացվող գործողությունների հաջորդականությունը կառուցվել է այդ ընկերությունների կողմից վարչական տույժ նշանակելու մասին որոշումները հասցեատերերին հանձնելու կամ հանձնված չլինելու մասին տրամադրված տեղեկատվության հիման վրա: Չնայած նրան, որ բազմաթիվ դեպքերում նշված կազմակերպությունները տրամադրել են տեղեկատվության, որ վարչական ակտերը հանձնվել են հասցեատերերին, սակայն լրացուցիչ ստուգումների արդյունքում ՃՈ-ը պարզել է, որ վարչական ակտերն իրականում փաստացի չեն հանձնվել: Ողջունելի է, որ 2014 թվականի մայիսից ՃՈ-ը հրաժարվել է «Հատուկ կապ» ՓԲԸ հետ համագործակցելուց, որի մատուցած ծառայություններից են առաջացել քաղաքացիների հիմնական զանգվածի դժգոհությունը: Միաժամանակ 2014 թվականի նոյեմբերի 3-ից ուժի մեջ է մտել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի նոր խմբագրությունը, ինչը զգալիորեն կարգավորել է ծանուցման գործընթացը, սահմանել ծանուցման այլընտրանքային ձևեր: Քաղաքացիների կողմից եղել նաև ահազանգեր ՃՈ կողմից վճարված տուգանքներով կատարողական վարույթների հարուցման վերաբերյալ: Նշվածի առնչությամբ ՃՈ-ը հայտնել է, որ հիմնական խնդիրը կապված է եղել բանկերում կամ վճարային կազմակերպություններում տուգանքի գումարը վճարելիս վճարի ճանաչման համար որպես նույնականացման ինդեքս համարվող որոշման տասանիշ համարը ճիշտ չնշելու, կամ ընդհանրապես չնշելու կամ այլ դաշտում գրված լինելու հետ, ինչի պատճառով վճարումը չի նույնականացվել: Բացի դրանից՝ մինչև 2014 թվականի սեպտեմբեր ամիսը ՀՀ ֆինանսների նախարարության «Client-treasury» համակարգի ծրագրային թերության պատճառով ներբեռնվող տվյալներում եղել են անճշտություններ, ինչի պատճառով Ոստիկանության էլեկտրոնային համակարգը չի կարողացել նույնականացնել բոլոր վճարումները:

Ոստիկանության տվյալների համաձայն՝ 2014 թվականին ՃՈ-ում ստացվել է 15284 դիմում-բողոք, առանց պատշաճ հիմնավորումների վարորդներին վարչական պատասխանատվության ենթարկելու կամ նրանց անօրինական պահանջներ ներկայացնելու համար կատարվել է 5 ծառայողական քննություն, որոնցից 1-ի ընթացքը կասեցվել է և նյութերն ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայության քննարկմանը, իսկ 4-ով՝ ՃՈ 6 ծառայողներ ենթարկվել են կարգապահական տույժերի: Այսպիսով, չնայած ՃՈ կողմից ձեռնարկվել են օպերատիվ միջոցներ նշված խնդիրները վերացնելու ուղղությամբ, այնուամենայնիվ 2014 թվականին գրանցված բազմաթիվ ահազանգերը, քաղաքացիների դժգոհությունները վկայում են, որ ձեռնարկված միջոցները բավարար չեն եղել խնդիրները վերացնելու համար:

Առաջարկ. Բացառել վարորդներին անհիմն տուգանքներ նշանակելու, անօրինական պահանջներ ներկայացնելու դեպքերը, ապահովել վարչական տուգանքների վերաբերյալ անձանց պատշաճ ծանուցումը, կատարողական վարույթների պատշաճ հարուցումը, կանխել տուգանքների չափի անհիմն ավելացումները:

- 1.5.11 Գործող օրենսդրությամբ, կրոնական համոզմունքներից ելնելով, նույնականացման քարտերից հրաժարված անձինք գրկվել են իրենց կենսաթոշակը ստանալու իրավունքից:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում մի շարք քաղաքացիներ իրենց դժգոհությունն են բարձրաձայնել, որ նույնականացման քարտերից²⁰⁵ հրաժարվելու արդյունքում նրանք չեն կարողանում ստանալ իրենց օրենքով հասանելիք կենսաթոշակը: Նույնականացման քարտից հրաժարվելու պատճառ քաղաքացիները նշել են իրենց կրոնական համոզմունքների հետ նույնականացման քարտերի որոշ հատկանիշների (օրինակ՝ նույնականացման քարտի էլեկտրոնային բնույթը, էլեկտրոնային պահոցը) անհամատեղելիությունը: Այսպես, ըստ օրենքի՝ նույնականացման քարտ քաղաքացին ստանում է կամավոր՝ 16 տարին լրանալու օրվանից: Միաժամանակ նշենք, որ անձնագիր ստանալու համար քաղաքացին ներկայացնում է նույնականացման քարտ, իսկ մինչև 16 տարեկան քաղաքացին՝ ծննդյան վկայական²⁰⁶: Փաստորեն, քաղաքացու ինքնությունը (անձը) և ՀՀ քաղաքացիությունը հավաստող ներկայումս կիրառելի փաստաթուղթը նույնականացման քարտն է և (կամ) անձնագիրը, այսինքն՝ կենսաթոշակ ստացող անձը կենսաթոշակի գումարն ստանալու համար պարտավոր է ներկայացնել նշյալ փաստաթղթերից մեկը²⁰⁷: Այսպիսով, նույնականացման քարտ ստանալու կամավոր լինելը կրում է զուտ հռչակագրային բնույթ, մինչդեռ նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն²⁰⁸: Նմանատիպ գործով ՀՀ Սահմանադրական դատարանը օրենքի դրույթը ճանաչել է հակասահմանադրական, նշելով, որ յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով առանձին դեպքերում: Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ սոցիալական քարտի²⁰⁹ առկայությունը դարձնելով պարտադիր պայման մի շարք գործառույթներում, ներառյալ՝ կենսապահովման այնպիսի միջոցներ, ինչպիսիք են կենսաթոշակը, նպաստը, հատուցումը, դրամական փոխանցման ստացումը, օրենքը մի շարք քաղաքացիների դրել է երկրնտրանքի առջև. կամ գրկվել իրենց սոցիալական իրավունքների իրականացումից, կամ համոզմունք ունենալու և դրան հավատարիմ մնալու իրավունքից²¹⁰: Ավելին, Սահմանադրական դատարանն իր մեկ այլ որոշմամբ դիրքորոշում է հայտնել, որ անձին կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է²¹¹: Հետևաբար, օրենքի նման կարգավորումը խնդրահարույց է նաև անձի՝ սեփականության իրավունքի

²⁰⁵ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույնականացման քարտը ՀՀ քաղաքացու ինքնությունը և ՀՀ քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ է, որը նախատեսված է Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու համար:

²⁰⁶ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենք

²⁰⁷ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենք

²⁰⁸ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 45, մաս 3

²⁰⁹ Նշյալ դեպքում նույնականացման քարտի առկայությունը

²¹⁰ ՄԴՈ-649, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=27418u>

²¹¹ ՄԴՈ-649

պաշտպանության տեսանկյունից:

Առաջարկ. ստեղծել այլընտրանքային համակարգ և/կամ մշակել նոր օրենսդրական մեխանիզմներ, որպեսզի նույնականացման քարտից հրաժարվելու դեպքում չխախտվեն անձանց կենսաթոշակ ստանալու և այլ իրավունքները:

1.5.12 Ոստիկանության անձնագրային համակարգում մատնահետքերի միասնական բազայի ստեղծմամբ խախտվում է անձանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

2014 թվականի ընթացքում Պաշտպանի կողմից բարձրացվել է խնդիր, որ Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության կողմից քաղաքացիների մատնահետքերը մեկ միասնական բազայում պահելը հանգեցնում է անձանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտման: Այսպես, Ոստիկանությունը հայտնել է, որ նույնականացման քարտ ստանալիս անձը մատնադրոշմներ է հանձնում, որոնք պահպանվում են Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության անձնագրային համակարգի տեղեկատվական բազայում (բնակչության պետական ռեգիստրի, անձնագրային բազաներ, որոնք համակցված կազմում են մեկ միասնական բազա): Մատնադրոշմերի պահպանման նմանատիպ պրակտիկան մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից խնդիրներ է առաջացրել մի շարք պետություններում: Օրինակ՝ Նիդեռլանդների դատարաններից մեկը, 2014 թվականին անդրադառնալով համանման խնդրին, նշել է, որ մատնադրոշմների պահպանման միասնական բազայի ստեղծումն իրավաչափ չէ և չի համապատասխանում անձին նույնականացնելու նպատակին: Բացի դրանից՝ Եվրոպական միության (ԵՄ) Արդարադատության դատարանը, անդրադառնալով անձնագրի տրամադրման համար մատնադրոշմները վերցնելու և բիոմետրիկ տեղեկատվության պահպանման խնդրին, նշել է, որ Եվրախորհրդի 2004 թվականի թիվ 2252/2004 կարգավորումը նախատեսում է մատնադրոշմների պահումը բացառապես անձնագրի մեջ, որը պատկանում է միայն այն տնօրինող անձին²¹²: Հարցի կապակցությամբ ուսումնասիրվել է նաև մի շարք երկրների փորձ, որի համաձայն՝ անձը հաստատող փաստաթղթի կեղծման հնարավորությունը նվազագույնի կարելի է հասցնել: Ավելին, անձի նույնականացումը կարելի է կատարել նաև առանց անձնական տվյալների միասնական բազայի ստեղծման, որպեսզի մատնադրոշմը պահվի ոչ թե այդպիսի տվյալների բազայում, այլ՝ նույնականացման քարտի մեջ՝ անձի և այդ քարտի նույնականացումն ապահովելու համար²¹³:

Առաջարկ. կատարել անհրաժեշտ օրենսդրական և այլ փոփոխություններ՝ պահպանելու

²¹² <http://curia.europa.eu/jcms/upload/docs/application/pdf/2013-10/cp130135en.pdf>

²¹³ Արևմտյան Եվրոպայի մի շարք պետություններում նույնականացման նպատակով ձեռք բերված մատնադրոշմները պահպանում են նույնականացման քարտում, այլ ոչ միասնական տվյալների բազայում: Օրինակ, Գերմանիայի Դաշնության «Անձնագրերի մասի» օրենքի համաձայն՝ անձնագիր տրամադրելու նպատակով ստացված մատնադրոշմները ենթակա են ոչնչացման ոչ ուշ, քան անձնագիրը քաղաքացուն տրամադրվելուց անմիջապես հետո: Նույն օրենքով արգելվում է ստեղծել բիոմետրիկ տվյալների (մատնադրոշմների) դաշնային միասնական բազա:

ՀՀ քաղաքացիների մատնադրոշմները ոչ թե միասնական տեղեկատվական բազայում, այլ անմիջապես անձի նույնականացման քարտում:

1.5.13 Օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով ֆիզիկական տարբեր խնդիրներ ունեցող որոշ անձանց չեն թույլատրել տրանսպորտային միջոցներ վարել:

Պաշտպանը ստացել է դիմում-բողոքներ առ այն, որ օրենսդրությամբ տրանսպորտային միջոցների հարմարեցման հստակ չափանիշներ չնախատեսելու պատճառով ֆիզիկական հաշմանդամություն ունեցող որոշ անձինք զրկվել են վարորդական իրավունք ստանալու հնարավորությունից: Այսպես, արգելվում է տրանսպորտային միջոցի երթևեկությունը, եթե բացակայում են վարորդի աչքը կամ վերին կամ ստորին վերջույթը, դաստակը կամ ոտնաթաթը, կամ առկա են շարժումները սահմանափակող՝ դաստակի կամ ոտնաթաթի ձևախախտում, ինչպես նաև ձեռքերի մատների կամ ֆալանգների ձևախախտումներ և արատներ, որոնք հանգեցնում են վերջույթի ֆունկցիաների խիստ խանգարման, *բացառությամբ տվյալ անձի հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոցներ վարելու դեպքերի*²¹⁴: Նշենք, որ հստակ սահմանված կարգավորումների և մեխանիզմների բացակայության պատճառով պարզ չէ, թե ֆիզիկական խնդիրներ ունեցող անձն ինչ անհրաժեշտ փոփոխություններ պետք է կատարի տրանսպորտային միջոցի վրա, որպեսզի իրավասու մարմինը այն համարի անձի հնարավորություններին հարմարեցված: Վերոգրյալը խնդրահարույց է նաև իրավական որոշակիության տեսանկյունից: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը իր ՄԴՈ-753 որոշմամբ հայտնել, որ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական/ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Ավելին, ՄԻԵԴ-ն, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, նշել է, որ այն նախատեսում է, որ նորմը պետք է ձևակերպված լինի այնպիսի հստակությամբ, որը թույլ կտա շահագրգիռ անձին, անհրաժեշտության դեպքում նաև խորհրդատվությունից օգտվելով, համապատասխանեցնելու իր վարքագիծը սահմանված կարգավորումներին և կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ համապատասխան գործողությունների հետևանքով²¹⁵: Պարզվել է, որ խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N 1327-Ն որոշման մեջ: Տվյալ որոշմամբ սահմանվել է բժշկական եզրակացության 2 տեսակ («պիտանի է իր հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոց վարելու» կամ «պիտանի չէ»), ուստի այն դեպքում, երբ թույլատրվում է տրանսպորտային միջոց վարել լրացուցիչ պայմանի կատարման դեպքում (օրինակ՝ ակնոցով) հավատարմագրում իրականացնող

²¹⁴ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 1, ենթակետ «ժէ»

²¹⁵ *Sunday Times v. UK* (1979)

մասնագետը որպես եզրակացություն կատարում է «պիտանի է իր հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոց վարելու» գրառումը: Եթե հավատարմագրման արդյունքում տրվում է «Պիտանի է իր հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոց վարելու» եզրակացությունը, և տվյալ անձի կողմից ներկայացվում է իր հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոց, ապա ճանապարհային ուստիկանությունն այդ տրանսպորտային միջոցով ընդունում է գործնական քննություն: Նշվածն իրականացվում է միայն այն դեպքերում, երբ անձի մոտ առկա է վերջույթների հետ կապված որևէ խնդիր, սակայն պարզ չէ, թե երբ անձի մոտ բացակայում է որևէ օրգան, օրինակ՝ աչքը, տրանսպորտային միջոցը ինչպես պետք է հարմարեցվի վերջինիս հնարավորություններին: Պաշտպանի կողմից հարցի բարձրաձայնման արդյունքում ՀՀ Վարչապետը հանձնարարել է իրավասու պետական մարմիններին ուսումնասիրել խնդիրը և անհրաժեշտության դեպքում իրականացնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ և լրացումներ:

Առաջարկ. կատարել փոփոխություններ և լրացումներ ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N 1327-Ն որոշման մեջ՝ սահմանելով ֆիզիկական հաշմանդամության առկայության պարագայում տրանսպորտային միջոցի հարմարեցման չափանիշների ավելի լայն շրջանակ:

1.5.14 Ոստիկանության կողմից տեղադրված տեսախցիկներով կատարվող առցանց տեսաձայնագրումը խախտում է անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Ստացվել են բողոքներ, որ Երևան քաղաքում հասարակական կարգի պահպանման նպատակով Ոստիկանության տեղադրած տեսախցիկները կատարում են առցանց տեսաձայնագրում՝ բացահայտելով տեսանյութում նկարահանված անձանց ինքնությունը: Պարզվել է, որ նշված տեսախցիկները կատարում են առցանց տեսաձայնագրում, որին կարող են հետևել ոչ միայն Ոստիկանության ծառայողները, այլև Ոստիկանության կայքէջ այցելող յուրաքանչյուր անձ: Նման պրակտիկան կարող է խախտել անձանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Նշվածի կապակցությամբ Ոստիկանությունը հայտնել է, որ Երևան քաղաքի կենտրոնական մի շարք տարածքներում տեղադրվել են 18 տեսախցիկներ՝ ապահովելու մարդու անվտանգությունը, հանցագործությունների ու վարչական իրավախախտումների կանխումը և խափանումը, հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, հասարակական կարգի պահպանությունը և հասարակական անվտանգությունը և այլն²¹⁶: Այնուհանդերձ, Սահմանադրությամբ արգելվում է առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Միաժամանակ, ըստ օրենքի՝ անհատական տվյալ է հանդիսանում անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս/կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը²¹⁷: Այսինքն, Ոստիկանության

²¹⁶ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, հոդված 3

²¹⁷ «Անհատական տվյալների մասին» ՀՀ օրենք, հոդված 3

կողմից ձայնագրվող տեսանյութը պարունակում է անհատական տվյալներ և հետևաբար, դրանց մշակումը պետք է իրականացվի օրենքի պահանջներից ելնելով²¹⁸:

Առաջարկ. տեսախցիկներով իրականացվող առցանց տեսաձայնագրման հեռարձակումը կայքէջում հասանելի դարձնել միայն Ոստիկանության համապատասխան ծառայողներին:

²¹⁸ Նույն տեղում

1.6 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

2014 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Կոմիտեն նոր ստեղծված կառույց է, և «ՀՀ քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքը ուժի մեջ է մտել 2014 թվականի հունիսի 28-ին, որով ՀՀ ԿԱ ոստիկանության և պաշտպանության բնագավառի պետական լիազոր մարմինների քննիչներն ընդգրկվել են Կոմիտեի կազմում՝ հարկ ենք համարում նշել, որ Կոմիտեի պատասխանատվության ոլորտին առնչվող որոշ խնդիրներ ընդգրկված են միաժամանակ նաև ՀՀ ԿԱ ոստիկանության, ՀՀ պաշտպանության նախարարության, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ Դատախազության վերաբերյալ գլուխներում:

Արձանագրված դրական զարգացումները

- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ քննչական կոմիտեի միջև ստորագրված մարդու իրավունքների և ազատությունների պահպանման ոլորտում համագործակցության վերաբերյալ Փոխըմբռնման հուշագրի արդյունքում քաղաքացիների դիմում-բողոքների ուսումնասիրության ընթացքում ի հայտ եկած խնդիրները համատեղ քննարկումների միջոցով ստանում են օպերատիվ և արդյունավետ լուծումներ:
- Կոմիտեի նոր կառուցվող վարչական շենքում կնախատեսվեն անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար հատուկ սենյակներ: Նշված խնդրի կարևորությունը հաշվի առնելով՝ այն ընդգրկվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրերի ցանկում: Միաժամանակ՝ Կոմիտեի կողմից նախատեսվում է շրջանառության մեջ դնել «ՀՀ քննչական կոմիտեում բարեփոխումների 2015-2016 թվականների ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի» նախագիծ, որի շրջանակներում ներառվելու է նաև անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար հատուկ սենյակների ստեղծումը, ինչը հնարավոր կլինի իրագործել Կոմիտեի տարածքային ստորաբաժանումներին առանձին շենքային պայմաններով ապահովելու դեպքում:

Առկա թերություններն ու խնդիրները

1.6.1 Կոմիտեի քննիչների կողմից որոշ դեպքերում կայացրած որոշումների և գործողությունների արդյունքում անձը տեսական ժամանակ զրկվել է իր հարազատներին տեսակցելու իրավունքից, առանձին դեպքերում էլ՝ գոյատևելու և առողջական խնդիրները լուծելու վերջին միջոցներից:

Պաշտպանը 2014թ. ընթացքում ստացել է տարբեր ահազանգեր և դիմում-բողոքներ, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Կոմիտեի քննիչների կողմից որոշ դեպքերում դատավարական և քննչական գործողությունների իրականացման արդյունքում սահմանափակվել են անձանց իրավունքները: Օրինակ, դեպքերից մեկով Կոմիտեի քննիչի որոշմամբ անձին արգելանքի տակ վերցնելուց հետո արգելվել են քաղաքացու (մեղադրյալի) հեռախոսային խոսակցությունները, ինչպես նաև մերձավոր ազգականների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ տեսակցությունը: Նման որոշումը քննիչը պատճառաբանել է նրանով, որ «Քրեական գործով դեռևս կան պարզաբանման ենթակա հանգամանքներ, քննությանը հնարավոր է ի հայտ գան գործով չպարզված անձինք, այդ ընթացքում մեղադրյալը իրեն տեսակցության եկած ազգականների, այլ անձանց, ինչպես նաև հեռախոսային խոսակցությունների միջոցով կարող է անօրինական ազդեցություն ունենալ իր հնարավոր հանցակիցների, գործով առնչվող անձանց վրա, պայմանավորվածություններ ձեռք բերել, հրապարակել քրեական գործով հրապարակման ոչ ենթակա տեղեկություններ, որի արդյունքում կարող են վերանալ քրեական գործով կարևոր ապացուցողական նշանակություն ունեցող հանգամանքներ»: Սակայն, ավելի քան 6 ամիս անց քննիչը, վերլուծելով քրեական գործի նյութերը, թույլատրել է մեղադրյալին տեսակցել իր կնոջ ու երեխաների հետ: Նշվածը խնդրահարույց է այն իմաստով, որ քննիչի կողմից մարդու անձնական և ընտանեկան կյանքին միջամտությունը, այն է՝ ընտանիքի անդամների հետ տեսակցության չափազանց երկար տևողությամբ արգելքը, համաչափ չի եղել ընտրված նպատակին հասնելու համար: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ), իր որոշումներից մեկում անդրադառնալով նմանատիպ խնդրի, նշել է, որ ընտանիքի անդամների այցելությունների սահմանափակումը կարող է համարվել միջամտություն անձի ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին, որը երաշխավորված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (ՄԻԵԿ) 8-րդ հոդվածի 1-ին կետով. այն է՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք: Ավելին, նշված գործով ՄԻԵԴ-ը եզրահանգել է նաև, որ անձի իրավունքի իրականացման հետ կապված միջամտությունը անհամապատասխան է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հետ, քանի որ տվյալ գործով համապատասխան պետական մարմնի կողմից սահմանվել էր տեսակցություն ընտանիքի անդամների հետ առավելագույնը մեկ անգամ մեկ ամսվա ընթացքում և ընդամենը 1 ժամով, որը նշանակվել էր՝ հաշվի առնելով անձի

կապը կազմակերպված հանցավոր խմբի հետ²¹⁹: Պաշտպանին հասցեագրված մեկ այլ դեպքով քաղաքացին հայտնել է, որ քննիչները գողություն կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով մեղադրանք են առաջադրել իր որդուն և կատարել բնակարանի խուզարկություն: Խուզարկություն կատարելու ընթացքում քննիչները վերցրել են մեղադրյալի մոր թոշակի գումարը՝ 30.000 ՀՀ դրամ, իր աղջկա կողմից արտերկրից ուղարկված 100 եվրո գումարը և իր քրոջը պատկանող 300 ԱՄՆ դոլարը՝ այդպիսով փաստացի գրկելով անձին իր դրամական միջոցներից: Չնայած այն հանգամանքին, որ այդ գումարները պատկանել են տվյալ կնոջը, այլ ոչ թե՝ որդուն, այսինքն՝ դրանք ձեռք չեն բերվել հանցավոր ճանապարհով, Կոմիտեի աշխատակիցները հրաժարվել է դրանք վերադարձնելուց՝ պատճառաբանելով, որ նշվածին անդրադարձ կկատարվի գործի նախաքննության ավարտման ժամանակ: Այսինքն, քննիչների գործողությունների արդյունքում անձը, ունենալով ֆինանսական և առողջական լուրջ խնդիրներ, գրկվել է ապրելու և առողջական խնդիրները լուծելու վերջին միջոցներից, այդ թվում նաև՝ կենսաթոշակից, այդ պահին չի ունեցել խնամող և դեղորայք գնելու հնարավորություն: ՄԻԵԴ-ն իր որոշումներից մեկում նշել է, որ սեփականության նկատմամբ յուրաքանչյուր միջամտություն պետք է ոչ միայն լինի օրինական և հետապնդի օրինական նպատակ, այլ նաև պետք է բավարարի համաչափության պահանջը²²⁰: Ավելին, ՄԻԵԴ-ը մի շարք որոշումներում ամրագրել է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինները պարտավոր են հնարավորինս սեղմ, ողջամիտ ժամկետներում իրականացնել արդյունավետ նախաքննություն և կայացնել որոշում²²¹: Հետևաբար, տվյալ գործով նախաքննական մարմինը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում պարզեր ազդարարված գումարների պատկանելության հարցը և քննարկեր դրանց վերադարձման հնարավորությունը՝ այդպիսով անձին տևական ժամանակով չգրկելու համար գոյատևման միջոցներից: Նշենք նաև, որ Կոմիտեի հայտնած տվյալներով՝ նոյեմբերի 18-ից դեկտեմբերի 18-ն ընկած ժամանակահատվածում, Կոմիտեի ծառայողների կողմից դատավարական և քննչական գործողությունները խախտումներով կատարելու 31 դեպք է գրացվել:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ քննիչների կողմից կայացված որոշումներով և գործողություններով անձանց իրավունքների անհիմն սահմանափակման դեպքերը վերացնելու ուղղությամբ՝ խստացնելով գերատեսչական հսկողությունն ու վերահսկողությունը քննիչների գործողությունների նկատմամբ, միաժամանակ, հնարավորինս օբյեկտիվ և օպերատիվ գնահատել իրավունքների սահմանափակումների համաչափությունը:

1.6.2 Դժգոհություններ են եղել զինծառայողների մահվան մի շարք դեպքերի քննության բազմակողմանիության, լրիվության և հրապարակայնության ապահովման կապակցությամբ:

²¹⁹ *Messina v. Italy* (2000)

²²⁰ *Gladyshev v. Russia* (2009)

²²¹ *Eckle v. Germany* (1982); *Deweert v. Belgium* (1980); *Wemhoff v. Germany* (1968)

2014 թվականին մահացած զինծառայողների հարազատներից ոմանք Պաշտպանին դժգոհություն են հայտնել Կոմիտեի կողմից զինծառայողների մահվան առանձին դեպքերի կապակցությամբ քննության, մասնավորապես՝ դեպքերի որակման կապակցությամբ (զենքի հետ վարվելու կանոնները խախտելը, մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, ինքնասպանության հասցնելը): Խնդիրն այն է, որ մահացած զինծառայողների հարազատներն արժանահավատ չեն համարել քննչական մարմնի կողմից ի սկզբանե առաջ քաշված մահվան պատճառի վարկածը: Բանակում մահվան դեպքերի քննության հետ կապված խնդիրներին Հայաստանի վերաբերյալ իր գեկույցում անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը՝ մատնանշելով գործերի քննության ընթացքում առավել օրինաչափ թերացումները²²²: Նույնպիսի մտահոգություններ են հայտնել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները²²³: Դեպքերից մեկով զինծառայողների հարազատները Պաշտպանին հայտնել են, որ խիստ կասկածելի են համարում մահացածի ինքնասպանության վարկածը՝ իրենց կասկածը պատճառաբանելով զինծառայողի կողմից ծառայության պայմաններից ու ծառայակիցների վերաբերմունքից երբևէ չդժգոհելու հանգամանքով: Մեկ այլ դեպքով մահացած զինծառայողների հարազատները Պաշտպանին տեղեկացրել են, որ թեև քննության սկզբնական փուլում իրենց՝ որպես տուժողի իրավահաջորդ, ներգրավել են գործի քննությանը, թույլատրել մասնակցել դիակի դատաբժշկական փորձաքննությանը, սակայն դրանից հետո բավական երկար ժամանակ իրենց գործի քննության ընթացքի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվել: Հարկ է նշել, որ տուժողի իրավահաջորդներին գործի քննությանը ներգրավելն ու պարբերաբար տեղեկատվություն տրամադրելը զինված ուժերում մահվան դեպքերի քննության անաչառության կարևոր երաշխիքներից են, ինչի մասին բազմիցս նշել է նաև ՄԻԵԴ-ը իր որոշումներում²²⁴: Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ բանակում ոչ մարտական պայմաններում մահվան բոլոր դեպքերի արագ, անաչառ և մանրամասն քննությունն ապահովելու պահանջն ամրագրվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում²²⁵: Չնայած Կոմիտեի կողմից բանակում մահվան դեպքերի քննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու հրապարակայնությունն ապահովելուն ուղղված միջոցներ ձեռնարկելուն՝ այնուամենայնիվ, Կոմիտեի գործունեության կարճ ժամանակահատվածում այդ քրեական գործերի կապակցությամբ արդեն իսկ ահազանգեր և դժգոհություններ են ստացվում:

²²² <https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2701645&SecMode=1&DocId=2243332&Usage=2>, կետեր 85, 86

²²³ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության գեկույցը «Զինված ուժերում 2014 թվականի մահացության դեպքերի մասին»

²²⁴ Օրինակ, ՄԻԵԴ վճիռը ՄաքԿերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով, 4 մայիսի 2001թ., կետ 115

²²⁵ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշում, կետ 35

Առաջարկ. միջոցներ ձեռնարկել բանակում ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի քննության բազմակողմանիությունն ու լրիվությունն ապահովելու ուղղությամբ՝ խստացնել գերատեսչական հսկողությունն անհետաձգելի քննչական ու դատավարական գործողությունների ժամանակին և պատշաճ կատարման նկատմամբ, քրեական գործերի քննությանն ակտիվորեն ներգրավել տուժողի իրավահաջորդին, մանրակրկիտ ուսումնասիրել մահվան պատճառների բոլոր, այդ թվում՝ տուժողի իրավահաջորդի առաջադրած վարկածները:

1.7 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

2014 թվականի ընթացքում ՀՀ ԿԱ ազային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- ԱԱԾ-ի կողմից ձեռքբերվածների տեսակցություններն իրենց հարազատների հետ կազմակերպելու համար բացվել և վարվում է ձեռքբերվածների տեսակցությունների և զանգերի հաշվառման մատյան, իսկ տեղադրված հեռախոս-ավտոմատի միջոցով ձեռքբերվածները կարողանում են զանգահարել իրենց հարազատներին և բարեկամներին:
- ԱԱԾ-ի ձեռքբերվածների պահման վայրում իրականացվել է խցերի սանհանգույցների ամբողջական մեկուսացում խցի բնակելի մասից, զբոսանքի վայրում տեղադրվել է նստարան, ձեռքբերված անձանց համար նախատեսված ճաշացանկը փակցվում է համապատասխան վայրում, միաժամանակ բռնության հնարավոր դեպքերը բացահայտելու և կանխելու նպատակով ԱԱԾ-ում հարցաքննությունից հետո արձանագրվում է ձեռքբերվածների մոտ մարմնական վնասվածքների առկայությունը կամ բացակայությունը:

Առկա թերություններն ու խնդիրները

1.7.1 2014 թվականի ընթացքում մի քանի դեպքերով արձանագրվել են խնդիրներ՝ կապված Ծառայության բաժիններ/ստորաբաժանումներ բերման ենթարկված կամ ձեռքբերված անձանց փաստաբանով չապահովելու, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերն անհարկի վերցնելու հետ:

Պաշտպանի աշխատակազմը 2014 թվականի ընթացքում ստացել է դիմում-բողոքներ և ահազանգեր, որ Ծառայություն բերման ենթարկված անձինք չեն ապահովվում փաստաբան հրավիրելու և իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությամբ: Մի շարք դեպքերով Ծառայության աշխատակիցները խոչընդոտել են փաստաբաններին՝ տեսակցելու հանցագործության կասկածանքով բերման ենթարկված իրենց վստահորդներին: Այնինչ, պաշտպան ունենալու իրավունքը հանցանքի կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձին օրենքով վերապահված կարևորագույն իրավունքներից մեկն է: Այսպես, Սահմանադրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնության, ինչպես նաև իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք²²⁶: Բացի դրանից՝ այն պահից, երբ

²²⁶ ՀՀ Սահմանադրություն, հոդված 20

կասկածյալը/մեղադրյալը պաշտպան ունենալու ցանկություն է հայտնում, քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը դառնում է պարտադիր²²⁷: Ուստի, Ծառայության աշխատակիցները պարտավոր են յուրաքանչյուր դեպքում անձին վարչական շենք բերելուց հետո ապահովել նրա՝ փաստաբան հրավիրելու և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը: Քրեադատավարական այս իրավունքը կարևորվում է նրանով, որ անձի իրավունքներն առավել հաճախ խախտվում են վարույթի սկզբնական փուլում, քանի որ շատ դեպքերում, իր իրավունքների չիմացության հետևանքով, անձը գրկվում է օրենքով նախատեսված պաշտպանական արդյունավետ միջոցներն իրագործելու հնարավորությունից: Միաժամանակ, ստացվել են ահազանգեր Ծառայության աշխատակիցների կողմից քաղաքացիներից իրենց անձը հաստատող փաստաթղթերն անհիմն վերցնելու վերաբերյալ: Օրինակ՝ Պաշտպանը ահազանգ է ստացել, որ Ծառայության աշխատակիցները վերցրել են քրեական գործում որպես վկա ներգրավված քաղաքացու անձը հաստատող փաստաթուղթը և հրաժարվել են այն վերադարձնել՝ պատճառաբանելով հետագայում անձի՝ վկայի կարգավիճակի փոփոխման հավանականությամբ: Մինչդեռ, ՀՀ օրենսդրությունը չի սահմանում հիմքեր և ընթացակարգ, որոնք թույլ են տալիս վարույթն իրականացնող մարմիններին վերցնել վկայի կարգավիճակ ունեցող անձի փաստաթղթերը²²⁸: Նշենք, որ Պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում անձնագիրը վերադարձվել է քաղաքացուն:

Առաջարկ. անձի ազատությունը սահմանափակելու յուրաքանչյուր դեպքում ապահովել իրավաբանական օգնություն ստանալու նրա իրավունքը, ինչպես նաև վերացնել օրենսդրության խախտմամբ անձը հաստատող փաստաթղթերը վերցնելու պրակտիկան:

1.7.2 Ծառայության աշխատակիցներն առանձին դեպքերում խախտել են ձեռքակալված անձանց անձնական ազատության ու անձեռնմխելիության իրավունքը՝ նրանց անազատության մեջ պահելով սահմանված 72 ժամից ավելի:

Պաշտպանը դեռևս 2014 թվականի ապրիլի 15-ի իր հայտարարությամբ ներկայացրել էր իր մտահոգությունը Ծառայության կողմից ձեռքակալված անձանց՝ 72-ժամից ավելի պահելու հավանականության վերաբերյալ և առաջարկել համապատասխան քայլեր ձեռնարկել, ինչի արդյունքում Ծառայության տնօրենի կողմից հանձնարարվել էր ԱԱԾ քննչական վարչության հետ համագործակցությամբ խստագույնս բացառել նման դեպքերի հնարավորությունը:²²⁹ Այդուհանդերձ, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները արձանագրել են դեպքեր, երբ անձին շարունակել են պահել անազատության մեջ այն պարագայում, երբ ձեռքակալման 72-ժամյա կամ դատարանի որոշմամբ սահմանված կալանավորման ժամկետը լրացած է եղել, սակայն կալանավորման կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին դատարանի

²²⁷ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 69

²²⁸ «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենք, հոդված 8

²²⁹ http://pashtpan.am/library/view_news/article/1164

որոշումներն առկա չեն եղել: Չնայած ձեռքակալվածների պահման վայրի վարչակազմի ներկայացուցիչները հայտնել են, որ բանավոր տեղեկատվություն ունեն այն մասին, որ դատարանը համապատասխան որոշում է կայացրել՝ այնուամենայնիվ, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների այցի պահին դատարանի որոշումը չի ներկայացվել: Մինչդեռ ձեռքակալվածներին պահելու վայրի վարչակազմի ղեկավարը պարտավոր է ազատել ձեռքակալվածին, եթե լրացել է ձեռքակալման առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել:²³⁰ Հանցագործության կատարման մեջ կասկածվող անձը կարող է գրկվել ազատությունից, սակայն այդ հանգամանքը բավարար հիմք չէ անձին 72 ժամից հետո էլ անազատության մեջ պահելու համար:²³¹ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ), անդրադառնալով անձի ազատության սահմանափակման օրինաչափության խնդրին, ընդգծել է, որ ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի ընձեռած պաշտպանությունից անձը չի կարող գրկվել դրանից կամովին հրաժարվելու և/կամ կալանքի տակ վերցվելու հետևանքով, այսինքն՝ տվյալ իրավունքի իրացումը սահմանափակված չէ որևէ հանգամանքով, և յուրաքանչյուր դեպքում դրա իրացման հնարավորությունը պետք է ընձեռված լինի անձին:²³² Հետևաբար, անձին 72 ժամից ավելի անազատության մեջ պահելը, առանց կալանավորման մասին դատարանի համապատասխան որոշման առկայության, խախտում է և ՀՀ Սահմանադրությամբ, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ազատության անհիմն սահմանափակման երաշխիքները, ինչը չի կարող ունենալ որևէ օբյեկտիվ հիմնավորում: *Առաջարկ. ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու Ծառայության աշխատակիցների կողմից ձեռքակալման դեպքում անձին անազատության մեջ պահելու օրենքով սահմանված ժամկետները պահպանելու ուղղությամբ, այդ թվում՝ յուրաքանչյուր նման դեպքում իրականացնել պատշաճ քննություն թերացումներ կատարած պաշտոնատար անձանց հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:*

1.7.3 Օրենսդրական անորոշ ձևակերպումն առաջացնում է որոշ օպերատիվ-հետախուզական միջոցառումների կամայական իրականացման վտանգ, ինչի հետևանքով կարող են ռոտահարվել մարդու իրավունքները:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն (ՕՀՄ)՝ մարդու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները սահմանափակող որոշ ՕՀՄ-ներ (նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում և այլն) կարելի է անցկացնել, եթե կան *հիմնավոր ապացույցներ*, որ այլ եղանակով ՕՀՄ անցկացնող մարմնի կողմից իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է²³³: Նշված դրույթը խնդրահարույց է

²³⁰ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հոդված 132

²³¹ ՀՀ Սահմանադրության գիտագործնական մեկնաբանությունների ժողովածու

<http://concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>

²³² *De Wilde, Ooms and Versyp v. Belgium* (1971)

²³³ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 4

իրավական որոշակիության տեսանկյունից և առաջացնում է լայն հայեցողության ու կամայական մոտեցման ցուցաբերման վտանգ, քանի որ սահմանված չէ «հիմնավոր ապացույցներ» հասկացությունը: Ուստի, անհասկանալի է, թե ինչ ապացույցների մասին է խոսքը, ու ինչ չափանիշների հիման վրա և ում կողմից պետք է գնահատվի դրանց հիմնավոր լինելը: Արդյունքում, տվյալ եզրույթի ոչ որոշակի լինելու հետևանքով կարող են վտանգվել անձի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների գաղտնիության, բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական իրավունքները:²³⁴ Հատկանշական է, որ ԱԱԾ-ի կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ 2014 թվականի ընթացքում ԱԱԾ-ի ծառայողների կողմից տվյալ դրույթի կիրառմամբ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկման, ինչպես նաև բանկային գաղտնիք առգրավելու 130 միջնորդություն է ներկայացվել դատարան, որոնցից 129-ը բավարարվել է, իսկ 1-ը բավարարվել է մասնակի: Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում նշել է, որ նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական/ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:²³⁵ Միաժամանակ, ՄԻԵԴ-ը, անդրադառնալով նույն խնդրին, նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքը նախատեսում է, որ նորմը պետք է ձևակերպված լինի այնպիսի հստակությամբ, որը թույլ կտա շահագրգիռ անձին, անհրաժեշտության դեպքում, նաև խորհրդատվությունից օգտվելով, համապատասխանեցնելու իր վարքագիծը սահմանված կարգավորումներին և կանխատեսելու այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ համապատասխան գործողությունների հետևանքով:²³⁶ Հետևաբար, վերոնշյալ ՕՀՄ-ները պետք է լինեն խիստ կանոնակարգված, քանի որ ոչ պատշաճ իրականացման դեպքում կարող են խախտել և/կամ ոչ իրավաչափորեն սահմանափակել անձանց՝ ՀՀ Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները:²³⁷

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու ուղղությամբ՝ «հիմնավոր ապացույցներ» հասկացությունն օրենսդրորեն հստակեցնելու նպատակով:

1.7.4 Դեռևս շարունակվում են անձանց օպերատիվ հարցման կամ նրանցից բացատրություններ ստանալու նպատակով ԱԱԾ «հրավիրելու» դեպքերը չնայած օրենսդրությամբ նման ընթացակարգի բացակայությանը:

Պաշտպանին 2014 թվականի ընթացքում հասցեագրված ահազանգերի և դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ Ծառայության աշխատակիցներն

²³⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 16, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 11

²³⁵ ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՄԴՈ-753 որոշում

²³⁶ *Sunday Times v. UK* (1979)

²³⁷ ՀՀ Սահմանադրություն, հոդված 16, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 11

ատանձին դեպքերում անձանց «հրավիրել են» Ծառայություն՝ օպերատիվ հարցման կամ բացատրություններ ստանալու նպատակներով: Դեպքերից մեկով Պաշտպանի ներկայացուցիչները պարզել են, որ անձը՝ որպես վկա, «հրավիրվել» է հարցաքննության: Մինչդեռ, օրենսգրքի համաձայն՝ վկան քննիչի մոտ կանչվում է ծանուցագրով, որում նշվում է, թե ով է կանչում, ում, դատավարական ինչպիսի կարգավիճակով, ուր և երբ (օրն ու ժամը) պետք է ներկայանա կանչվողը, ինչպես նաև անհարգելի պատճառներով չներկայանալու հետևանքները:²³⁸ Սակայն գործնականում գերակշիռ դեպքերում անձանց «հրավիրել են»՝ օպերատիվ հարցման կամ բացատրություններ ստանալու նպատակով, իսկ այս դեպքերի համար օրենսդրությունը ոչ մի ընթացակարգ, առավել ևս անձի համար վարույթն իրականացնող մարմին ներկայանալու պարտականություն չի նախատեսում: Միաժամանակ, օրենքով օպերատիվ հարցում է համարվում կատարված, նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելը՝ իրականում կամ, հավանաբար, այդպիսի տեղեկատվության տիրապետող իրավաբանական և ֆիզիկական անձանց հարցեր տալու (հարցումներ անելու) և պատասխաններ ստանալու միջոցով:²³⁹ Նշվածից երևում է, որ օրենքի տվյալ դրույթն անձին իրավասու մարմին հրավիրելու և այնտեղ գտնվելու գործընթացի և/կամ իրավաչափության վերաբերյալ որևէ կարգավորում չի նախատեսում: Միաժամանակ, բացատրություններ տալու համար անձին քրեական վարույթն իրականացնող մարմին հրավիրելու համար ընթացակարգ սահմանված չէ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Արդյունքում, քանի որ գործնականում օրենսդրությունը չի նախատեսում հստակ կարգավորումներ՝ օպերատիվ հարցումներ իրականացնելու կամ բացատրություններ տալու կարգի, այդ թվում՝ դրանց շրջանակներում մարդու իրավունքների ու պարտականությունների և պաշտոնատար անձանց լիազորությունների վերաբերյալ, անձինք չեն տեղեկացվում համապատասխան հարցման կամ բացատրություն տալու (այն դեպքում, երբ անձը չունի որևէ քրեադատավարական կարգավիճակ) կամավորության և իրենց իրավունքների, հատկապես համապատասխան ստորաբաժանում չներկայանալու և տեղեկություններ հայտնելուց յուրաքանչյուր պահի հրաժարվելու իրավունք ունենալու վերաբերյալ:

Առաջարկ. անձանց ԱԱԾ մարմիններ «հրավիրելու» յուրաքանչյուր դեպքում պարզաբանել նրանց ներկայանալու և տեղեկություններ հայտնելու կամավոր բնույթը, միաժամանակ միջոցներ ձեռնարկել «հրավիրելու» գործընթացի կարգն օրենսդրությամբ սահմանելու ուղղությամբ:

²³⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 205

²³⁹ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 15

2.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Մարզային բժշկական հաստատությունների կառուցում, վերանորոգում և վերազինում առողջապահական համակարգի արդիականացման և օպտիմալացման» ծրագրի շրջանակներում 5 գյուղական համայնքներում ավարտվել են բժշկական ամբուլատորիաների կառուցման աշխատանքները, և միաժամանակ մեկնարկել են ՀՀ Տավուշի մարզի Ոսկեվան համայնքի նոր ամբուլատորիայի կառուցման շինարարական աշխատանքները:
- 2014 թվականից սկսած՝ պոլիկլինիկաներում իրականացվում են զինակոչիկների պատվաստումներ, ինչի շնորհիվ հետպատվաստումային շրջանում նրանց առողջական վիճակը լիարժեք հսկողության տակ է:
- 2014 թվականին կատարված համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2015 թվականին մեկնարկել է սրտի անհետաձգելի վիրահատության ծրագիրը, որի համար կառավարությունը 500 մլն դրամ է հատկացրել:
- 2014 թվականի նոյեմբերի 20-ին Ազգային ժողովը ընդունել է «Երեխաներին կրծքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
- ՀՀ պետական աշխատողներին տրամադրվող սոցիալական փաթեթի տրամադրման կարգում փոփոխություն կատարելու արդյունքում սոցփաթեթի շահառուները տարեկան գոնե 1 անգամ պետք է որոշակի հետազոտություններ անցնեն իրենց սպասարկող ամբուլատոր պոլիկլինիկաներում, համապատասխան բժշկական ցուցումների առկայության դեպքում կարող են արտահիվանդանոցային պայմաններում օգտվել հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններից և այլն:

Առկա թերություններն ու խնդիրները

2.1.1 Օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով 2014 թվականին ևս ձեռք է բերվել ոչ պատշաճ որակի դեղորայք, որը դժգոհություններ է առաջացրել պետական պատվերի շրջանակներում դրանք ստացող քաղաքացիների շրջանում:

Շարունակվել են ստացվել դժգոհություններ քաղաքացիներից պետական պատվերով գնված դեղերի որակի վերաբերյալ, ինչի պատճառներից է նախևառաջ պետական գնումների մրցույթներում նվազագույն գին ներկայացնողի հաղթելու սկզբունքը: Այսպես, ըստ օրենքի՝ պետության կարիքների համար անհրաժեշտ դեղերի կենտրոնացված կարգով ձեռքբերումն իրականացվում է ընդհանուր պետական գնումների ընթացակարգով, որի ժամանակ մրցույթում հաղթում է, ի թիվս այլ պահանջների, նվազագույն գին ներկայացրած հայտը²⁴⁰: Արդյունքում մի շարք դեպքերում պետական գնումների մրցույցներում գնվող դեղորայքի որակի պահանջը ստորադասվել է առավել ցածր գնի պահանջին, ինչի արդյունքում մրցույթը շահած դեղորայքի մատակարարը ցածր, ոչ պատշաճ որակի դեղ է մատակարարել: Նշյալ խնդրին համապատասխան անդրադարձ էր կատարվել նաև Պաշտպանի 2013 թվականի Տարեկան զեկույցում, սակայն այն պատշաճ լուծում չի ստացել 2014 թվականի ընթացքում ևս: Նշենք, որ Պաշտպանը ստացել է բազմաթիվ դիմում-բողոքներ, որոնցով քաղաքացիները դժգոհել են պետական պատվերի շրջանակներում անվճար տրամադրվող դեղորայքի որակից: Այսպես, օրինակ, մի շարք քաղաքացիներ և հասարակական կազմակերպություններ բարձրացրել են պետության կողմից հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անվճար տրամադրվող դեղերի ոչ պատշաճ որակի խնդիրը: Վերջիններիս կողմից նշվել է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք պետությունից անվճար ստացել են հնդկական հումքից պատրաստված «Ձուլաքսա» դեղը, որը, շատերի պնդմամբ, բացասական ազդեցություն է ունեցել հիվանդների առողջության վրա, ավելի վատացրել իրենց վիճակը, սրացումներ առաջացրել: Տվյալ հարցի կապակցությամբ Նախարարությունից ի սկզբանե հայտնել էին, որ հաստատվել է դեղի կենսասահմարժեքությունը դրա օրիգինալ «Ջիպրեքսա» դեղի հետ, այն համապատասխանել է ՀՀ-ում ընդունված սպեցիֆիկացիաների պահանջներին, իսկ դրա կողմնակի երևույթների բացահայտման ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանից բողոքողները կազմում են դեղը ստացողների 3.7%-ը (դեղը ստացած հիվանդների ընդհանուր թիվը՝ 318): Ինչպես նաև պարզաբանվել է, որ պետությունն իր քաղաքացիներին չի կարող անվճար տրամադրել օրիգինալ դեղեր, որոնք անհամեմատ թանկ են ջեներիկ դեղերից, սակայն նշվել է, որ եթե կողմնակի ազդեցության դեպքերի դրսևորման հաճախականությունը գերազանցի դեղի կիրառման հրահանգում նշված սահմանները, կամ ի հայտ գան կյանքին սպառնացող երևույթներ, ապա Նախարարությունն իրավասու է կասեցնել դեղի գրանցումը և շրջանառությունը հանրապետությունում: Այնուամենայնիվ, բազմաթիվ դժգոհություններից և Պաշտպանի

²⁴⁰ Մանրամասն տես՝ «ՀՀ ֆինանսների նախարարություն» բաժնում «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 2, կետ 1

գրություններից հետո Առողջապահության նախարարի հանձնարարականով ստեղծված հանձնաժողովը պարզել է, որ մի շարք հիվանդների մոտ տրամադրվող դեղն առաջացրել է կողմնակի երևույթներ՝ ընդհանուր թուլություն, անհանգստություն, լարվածություն, իսկ Նախարարությունը դիմել է մի շարք բարեգործական կազմակերպությունների՝ դեղը՝ որպես մարդասիրական օգնություն, ստանալու նպատակով: Այսպիսով, չնայած կոնկրետ տեսակի դեղորայքի ուսումնասիրության դեպքով Նախարարությունը վեր է հանել մի շարք թերություններ, սակայն պետության կարիքների համար ձեռք բերվող դեղերի գնումների կազմակերպման գործող կարգը որևէ կերպ չի նպաստում դեղերի ոչ պատշաճ որակի հարցի լուծմանը:

Առաջարկ. վերանայել պետության կարիքների համար գնվող դեղերի գնումների գործընթացը, խստացնել վերահսկողությունը պետական գնումներով ձեռք բերվող դեղորայքին առաջադրված պահանջների կատարման, դեղերի որակի նկատմամբ, պատշաճ կերպով ուսումնասիրել հիվանդների բողոքները՝ պետական պատվերով տրամադրվող դեղերի որակի վերաբերյալ:

2.1.2 Նախարարության Առողջապահական պետական տեսչության թույլ վերահսկողության հետևանքով մի շարք գործատուներ խախտել են աշխատողների իրավունքները, չեն պահպանել աշխատանքային օրենսդրության նորմերը:

Կրկին ստացվել են մի շարք դիմում-բողոքներ Առողջապահական պետական տեսչության (Տեսչություն) կողմից իր գործառույթները թերի կատարելու, պատշաճ վերահսկողություն չիրականացնելու, իրավախախտ գործատուների նկատմամբ անհրաժեշտ միջոցներ չձեռնարկելու վերաբերյալ, ինչի հետևանքով բազմաթիվ դեպքերում խախտվել են անձանց աշխատանքային իրավունքները: Աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ Պաշտպանին ուղղված բողոքներում նշվել է, օրինակ, տվյալ կազմակերպությունում աշխատակիցներին արտաժամյա և գիշերային աշխատանքի, հանգստյան և ոչ աշխատանքային օրերին կատարված աշխատանքի համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված չափով չվարձատրելու, չօգտագործված ամենամյա արձակուրդի համար դրամական հատուցումները սխալ հաշվարկելու, գործատուի կողմից աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ներքին իրավական ակտերի առկայությունը չապահովելու և այլ խախտումների մասին²⁴¹: Նշենք, որ Տեսչությունն իրականացնում է օրենքով իրեն վերապահված վերահսկողական գործառույթներ, կիրառում պատասխանատվության միջոցներ առողջապահության, աշխատանքի անվտանգության և աշխատանքային օրենսդրության նորմերի խախտումների դեպքում²⁴²: Մի շարք դիմումատուներ դժգոհել են նաև

²⁴¹ <http://mul.ombuds.am/tasks/doc.php?id=19268&out=0>

²⁴² [ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N857-Ն որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության կանոնադրություն](#)

Տեսչության²⁴³ կողմից իրենց գործատուների կազմակերպություններում կատարված ստուգումներից՝ համարելով, որ դրանք իրականացվել են ոչ լիարժեք, չեն ընդգրկել անհրաժեշտ ժամանակահատվածը: Այնուհանդերձ, թերություններով կատարված ստուգումներից հետո Տեսչությունը հրաժարվել է նորից ստուգում անցկացնել նույն տնտեսավարող սուբյեկտի մոտ՝ համարելով դա վերստուգում, որն իրականացնելու հիմքերը, կարգն ու պայմաններն ավելի խիստ են²⁴⁴: Սակայն հաշվի չեն առնվել առաջին անգամ անցկացված ստուգումների լուրջ թերությունները, որոնց հետևանքով 2-րդ անգամ իրականացվելիք ստուգումները ոչ թե վերստուգում, այլ՝ ըստ անհրաժեշտության՝ լիարժեք ստուգում պետք է որակել:

Առաջարկ. խստացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքով և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով սահմանված նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողությունը, իրականացնել աշխատանքային իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկման լայնածավալ միջոցառումներ, բարձրացնել գործատուների մոտ իրականացվող ստուգումների արդյունավետությունը:

2.1.3 Կրկին արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև մինչև յոթ տարեկան երեխաները չեն ստացել անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր իրազեկման պակասի, բուժաշխատողների կողմից դեղերի չտրամադրման պատճառով կամ հրաժարվել են դրանցից դեղերի ոչ պատշաճ որակի հետևանքով:

Արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև մինչև յոթ տարեկան երեխաները չեն ստացել անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր, կամ ստացված դեղերի որակը եղել է ոչ բավարար: Այսպես, 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամները և հաշմանդամ երեխաներն, ըստ դեղատոմսերի, ապահովվում են անվճար դեղորայքով, իսկ 3-րդ խմբի հաշմանդամները դեղերը ստանում 50% զեղչով²⁴⁵: Միաժամանակ, Կառավարության համապատասխան որոշմամբ հստակեցվում են անվճար պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերը և այն հիվանդությունները, որոնց առկայության դեպքում դեղերը տրվում են անվճար²⁴⁶: Նույն որոշմամբ հիվանդության դեպքում անվճար դեղորայք է տրվում նաև 0-7 տարեկան երեխաներին: Այնուամենայնիվ, բողոքներ են ստացվել, որ ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց, այնպես էլ մինչև 7 տարեկան երեխաներին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերով ապահովման համակարգն արդյունավետ չէ: Այսպես, մի շարք

²⁴³ Նշենք, որ Նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը միաձուլման ձևով վերակազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության:

²⁴⁴ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, հոդված 5

²⁴⁵ «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք

²⁴⁶ ՀՀ Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշում

դեպքերում վերոնշյալ անձինք տեղեկացված չեն եղել իրենց՝ հասանելիք դեղերն անվճար ստանալու իրավունքի վերաբերյալ:²⁴⁷ Համաձայն Օքսֆամի կատարած հետազոտությունների՝ վերոնշյալ որոշման մեջ ընդգրկված խմբերի անձանց 34%-ը, հատկապես 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամները, չեն օգտվել պետության կողմից տրամադրվող անվճար բուժապասարկումից, քանի որ չեն տիրապետել համապատասխան տեղեկատվության²⁴⁸: Դրական գնահատելով Նախարարության կողմից օրենսդրական առաջարկը, որի համաձայն՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունքի մասին իրազեկումը ապահովվում է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից՝ բնակչության համար տեսանելի վայրերում թերթիկների և պաստառների տեղադրման միջոցով²⁴⁹՝ այնուամենայնիվ, 2014 թվականի ընթացքում իրազեկման պակասի խնդիրը փաստացի դեռևս չի լուծվել: Միաժամանակ, մինչև 7 տարեկան երեխաների մի շարք ծնողներ, պայմանավորված բժշկի կամ բուժհաստատության կողմից նման իրավունքի մասին տեղեկատվության չտրամադրմամբ, սեփական միջոցներով են դեղատներից ձեռք բերել դեղատոմսով նշանակված մանկական դեղորայքը: Այնինչ, բժշկական հաստատությունը պարտավոր է նշանակված դեղերը տրամադրել անվճար: Զուգահեռաբար գրանցվել են նաև դեպքեր, երբ թե երեխաների ծնողները, թե հաշմանդամություն ունեցող անձինք հրաժարվել են անվճար տրամադրվող դեղորայքից՝ չվստահելով պետական գնումներով ձեռք բերվող դեղերի որակին: Տվյալ խնդրի հրատապությունից ելնելով՝ Նախարարությունը դեռևս 2013 թվականին մշակել էր «Բնակչության սահմանված սոցիալական խմբերին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերի տրամադրման գործընթացի պարզեցման և բարելավման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ: Այս նախագծով նախատեսվում է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված բնակչության ՀՀ Կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի 1717-Ն որոշմամբ սահմանված սոցիալական խմբերին տրամադրվող դեղերի ապահովման գործընթացի բարելավմանը սպասարկման և մատակարարման առավել պարզ և արդյունավետ համակարգի ներդրման ճանապարհով: Բայցևայնպես, նախագիծը չի ընդունվել 2014 թվականի ընթացքում՝ չնայած դեռևս 2013 թվականին ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց և 0-7 տարեկան երեխաներին դեղերի տրամադրման գործընթացը պարզեցնելու և դրա արդյունավետությունը բարձրացնելու, քաղաքացիներին անվճար դեղորայք ստանալու հնարավորության մասին պատշաճ կերպով իրազեկելու ուղղությամբ:

²⁴⁷ 2012 թվականի գեկույցին զուգահեռ 2013 թվականին ՀՀ կառավարության կողմից ներկայացված ստվերային գեկույց՝ ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիային համապատասխան (Shadow report to 2012 initial report submitted by the Government of the Republic of Armenia under the UN Convention of rights of persons with disabilities, 2013)

²⁴⁸ 2012 թվականի գեկույցին զուգահեռ 2013 թվականին ՀՀ կառավարության կողմից ներկայացված ստվերային գեկույց՝ ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի համապատասխան

²⁴⁹ «ՀՀ առողջապահության նախարարի 01.11.2013 թվականի թիվ 70-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի նախագիծ

2.1.4 Հանրակրթական, այդ թվում՝ հատուկ դպրոցներում բացահայտվել են մի շարք թերություններ երեխաների բուժօգնություն կազմակերպելու և դպրոցները համապատասխան դեղորայքով և պարագաներով ապահովելու հարցերում:

2014-2015 թվականների ուսումնական տարվան ընդառաջ Պաշտպանի կողմից ուսումնասիրվել են մի շարք հանրակրթական, այդ թվում՝ հատուկ դպրոցներում երեխաների համար պատշաճ բուժօգնություն կազմակերպելու և դպրոցները համապատասխան դեղորայքով և պարագաներով ապահովելու ուղղությամբ կատարված միջոցառումները: Արդյունքում բացահայտվել են մի շարք թերություններ, այդ թվում՝ բուժկետներում օրենսդրությամբ նախատեսված որոշ անհրաժեշտ դեղերի ու պարագաների բացակայություն, լվացարանակոնքի բացակայություն բուժկետներում, ոչ ստերիլ պայմաններում բժշկական գործիքների պահպանում, բուժքույրների բացակայություն երեխաների դասերի ժամերին և այլն: Նշվածը չի համապատասխանել ՀՀ առողջապահության նախարարի՝ 2002 թվականի փետրվարի 11-ի թիվ 82 հրամանով հաստատված դպրոցի բժշկական առանձնասենյակի սարքավորումների և գործիքների ցանկի²⁵⁰, ինչպես նաև Նախարարի՝ 2013 թվականի ապրիլի 9-ի թիվ 874-Ա հրամանով հաստատված դպրոցի բուժկետում անհրաժեշտ դեղերի ցանկի և բուժկետի սարքավորումներով ու գործիքներով հագեցվածության ծավալի պահանջներին²⁵¹: Միաժամանակ, Նախարարության կանոնադրության համաձայն՝ Նախարարությունը մշակում է բժշկական օգնության կազմակերպման և բուժօգնության որակի գնահատման չափորոշիչներ ու չափանիշներ, *դիտարկում դրանց իրականացումը*²⁵², ինչը վկայում է, որ Նախարարությունը պետք է դիտարկի նաև, թե հանրակրթական դպրոցներում ինչպես են պահպանվում օրենսդրությամբ սահմանված չափորոշիչները: Բացի դրանից՝ Նախարարի թիվ 82 հրամանի ուժով հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության Երևան քաղաքի, մարզային կենտրոնների և ներմարզային կայանների գլխավոր բժիշկները պարտավորվում են սահմանել հսկողություն՝ «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» N 2.III.4.2... սանիտարական կանոնների պահանջների կատարման նկատմամբ: Ուստի, Պաշտպանի միջամտության արդյունքում Նախարարությունից գրություններ են ուղղվել ՀՀ մարզեր և Երևանի քաղաքապետարան, որպեսզի ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցառումները Երևանում և մարզերում գործող դպրոցները օրենսդրությամբ նախատեսված դեղորայքով ապահովելու, ինչպես նաև հատուկ դպրոցները մանկական ստոմատոլոգիական և տարածքային առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) բժշկական կազմակերպություններին կցելու ուղղությամբ:

Առաջարկ. յուրաքանչյուր տարի՝ նախքան ուսումնական տարվա սկսելը, դպրոցները համապատասխան դեղորայքով և պարագաներով ապահովելու նպատակով խստացնել

²⁵⁰ «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և Պահպանման» N 2.Iii.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին»

²⁵¹ «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների բուժապասարկման կարգը հաստատելու մասին»

²⁵² ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 15-ի թիվ 1300-Ն որոշմամբ հաստատված

հսկողությունը ՀՀ առողջապահության նախարարի 01.11.2013թ. N70-Ն, 09.04.2013թ. N874-Ս, 11.02.2002թ. N 82 հրամանների պահանջների պատշաճ կատարման նկատմամբ:

2.1.5 Նախարարության կողմից օրենսդրության սխալ մեկնաբանության հետևանքով հատուկ հանրակրթական դպրոցի երեխաները հաճախ չեն օգտվել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունից:

Պաշտպանի ներկայացուցիչների՝ հատուկ հանրակրթական դպրոցներ կատարած այցերի արդյունքում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ տվյալ ուսումնական հաստատություններում սովորող տարբեր ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող երեխաների համար չեն ապահովվել ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի թիվ 70-Ն հրամանով (Հրաման) ամրագրված երաշխիքները. այն է՝ առողջության առաջնային պահպանման համակարգում անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների համար: Մասնավորապես, հատուկ դպրոցներ հաճախող երեխաները չեն ստացել տվյալ Հրամանով նախատեսված մի շարք անվճար բժշկական ծառայություններ, այդ թվում՝ անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն: Պարզվել է, որ դրա պատճառը Նախարարության կողմից նշված հրամանի ոչ ստույգ մեկնաբանությունն է: Այսպես, «հանրակրթական ուսումնական հաստատություն» Նախարարությունը համարել է միայն ընդհանուր հանրակրթական դպրոցները, մինչդեռ «Հանրակրթության մասին» օրենքի իմաստով հատուկ դպրոցներն էլ են համարվում հանրակրթական ուսումնական հաստատություն: Պաշտպանի միջամտության արդյունքում Նախարարը պաշտոնական պարզաբանում է ներկայացրել, որ Հրամանով ամրագրված անվճար բուժօգնության երաշխիքները տարածվում են նաև հանրակրթություն²⁵³ իրականացնող հատուկ դպրոցներ հաճախող աշակերտների վրա: Այնուհանդերձ, օրենսդրության տարրնթերցման խնդիրը հաղթահարելուց հետո նշվել է, որ Հրամանի պահանջի կատարման համար 2014 թվականի ընթացքում չի եղել համապատասխան ֆինանսավորում:

Առաջարկ. տրամադրել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ հատուկ հանրակրթական դպրոցներ հաճախող աշակերտներին ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի թիվ 70-Ն հրամանով սահմանված երաշխիքների տրամադրման նպատակով:

2.1.6 Ինչպես 2013, այնպես էլ 2014 թվականին չեն մշակվել բավարար և անհրաժեշտ մեխանիզմներ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների (սելեկտիվ աբորտների) կանխարգելման համար:

Ինչպես 2012, այնպես էլ 2013 թվականների Պաշտպանի տարեկան զեկույցներում մանրամասն վերլուծվել էր պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական

²⁵³ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հանրակրթությունն անձի ուսուցման և դաստիարակության գործընթացն է, որն իրականացվում է նախադպրոցական, տարրական, հիմնական, միջնակարգ կրթության հիմնական և լրացուցիչ ծրագրերով:

ընդհատումների (սելեկտիվ աբորտների) կանխարգելման համար անհրաժեշտ ու քավարար մեխանիզմների բացակայության հարցը, մինչդեռ խնդիրը մինչ օրս շարունակում է մնալ չլուծված: Խնդիրը օրենսդրությամբ կարգավորելու և տվյալ թեմայով ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտության մասին նշվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում²⁵⁴: Այս ուղղությամբ 2014 թվականի ընթացքում Նախարարության կողմից մշակվել է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով բուժաշխատողին արգելվում է մինչև հղիության 30 շաբաթը լրանալը ապագա երեխայի սեռի վերաբերյալ գրավոր կամ բանավոր կամ որևէ այլ եղանակով տվյալներ ներկայացնել հղի կնոջը կամ նրա ընտանիքի անդամներին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականությունը կամ այլ բժշկական կամ սոցիալական ցուցումներ: Դրական համարելով խնդրի կարգավորման նախաձեռնությունը՝ անհրաժեշտ է նշել, որ խնդրի բացառապես օրենսդրական ճանապարհով կարգավորումը չի ապահովի ակնկալվող արդյունքները: Մասնավորապես, օրենսդրական ներկայիս կարգավորումներով սեռով պայմանավորված հղիության ընդհատումը մինչև 22 շաբաթական հղիության պարագայում հնարավոր է իրականացնել միայն բժշկասոցիալական ցուցումների դեպքում, կնոջ համաձայնությամբ, ինչն արդեն իսկ վկայում է համապատասխան ժամկետում սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման անօրինականության մասին: Այսինքն, պրակտիկան ցույց է տվել, որ մինչ օրս օրենսդրությունը չի կարողացել կանխարգելել խնդիրը, քանի որ նման պրակտիկան բխում է նախնառաջ հասարակությունում կնոջ դերի վերաբերյալ կարծրատիպերից: Ուստի, անհրաժեշտ է համալիր միջոցառումներ ձեռնարկել՝ ուղղված սելեկտիվ աբորտների վտանգավոր հետևանքների վերաբերյալ բնակչության իրավագիտակցության բարձրացմանը, հասարակության մեջ կանանց դերի բարձրացմանը, ինչպես նաև կանանց և տղամարդկանց հավասարության խթանմանը: Այսպես, դեռևս 2011 թվականի ԵԽԽՎ-ի թիվ 1829 հանձնարարականով²⁵⁵ Հայաստանին հանձնարարվել է, ի թիվս այլ գործողությունների, առաջին հերթին ուսումնասիրել սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման պատճառները, քայլեր ձեռնարկել կանանց դերի բարձրացմանն ուղղությամբ, ապահովել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող իրավական նորմերի կիրառումը, աշխատանքներ իրականացնել համապատասխան բուժաշխատողների հետ՝ ներկայացնելով խնդիրը և վերջինիս հնարավոր հետևանքները:

Առաջարկ. **խնդրի համակարգային լուծման նպատակով մշակել համալիր միջոցառումներ՝ վեր հանելով խնդրի առաջացման իրական պատճառները, ուժեղացնել հսկողությունը բժիշկների գործողությունների նկատմամբ բժշկասոցիալական ցուցումների պահպանման նպատակով:**

²⁵⁴ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշում

²⁵⁵ http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7_28

2.1.7 Առանձին հոգեբուժական հաստատությունների հիվանդասենյակներում, խոհանոցներում հայտնաբերվել են սանիտարահիգիենիկ պայմանների խախտումներ, հիվանդների պահման վատ պայմաններ, գերբնակեցման դեպքեր, հիվանդների բուժման ոչ պատշաճ իրականացում:

Պաշտպանի աշխատակազմի կողմից 2014 թվականի ընթացքում կատարվել են արտապլանային այցեր մի շարք հոգեբուժական հաստատություններ, որոնց ժամանակ բացահայտվել են մի շարք խնդիրներ: Մասնավորապես, արձանագրվել են հիվանդների պահման պայմանների վատ վիճակի, գերբնակեցման, հիվանդների բուժման համար բարենպաստ պայմանների բացակայության դեպքեր²⁵⁶: Այցերի արդյունքում արձանագրվել են նաև զսպման միջոցների ընթացակարգի պահպանման խախտումներ, ինչպես նաև սահմանված օրական միջին չափաբաժնից ավելի քիչ սննդի տրամադրման դեպքեր: Մի շարք հոգեբուժարաններում արձանագրվել են հիվանդների զբոսանքի պատշաճ կարգով չկազմակերպման, ինչպես նաև վատ վերաբերմունքի և շահագործման դեպքեր: Գրանցվել են նաև զսպման միջոցների ընթացակարգի չպահպանման, այդ թվում՝ այլ հիվանդների ներկայությամբ զսպման միջոցների կիրառման դեպքեր: Նկատի ունենալով Նախարարի նախկինում տված հանձնարարականների կատարմանն ուղղված քայլերը՝ նշված հաստատություններում նկատելի է դրական լուրջ տեղաշարժ, այնուամենայնիվ դեռևս կան չլուծված խնդիրներ: Այսպես, ԲԿԱՄ փորձագետների կատարած այցերի ընթացքում պարզվել է, որ առանձին հոգեբուժական հաստատություններում հիվանդասենյակներն ու աշխատասենյակները, խոհանոցն ու լվացքատունը բարվոք վիճակում չեն, որոշ հոգեբուժական հիմնարկներում հոգեբույժների ու սանիտարների թվաքանակը բավարար չէ հիվանդների լիարժեք բուժման և խնամքի կազմակերպման համար: Այսպես, օրինակ, Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերում հոգեբույժի 7 հաստիքից միայն 3-ն է համալրված, ինչը անհամաչափ է դիսպանսերում խնամվող հիվանդների թվաքանակին: Այլ դեպքով «Նորք» հոգեբուժական կլինիկա ԲԿԱՄ փորձագետների այցի օրը՝ 2014 թվականի հուլիսի 15-ին, հակառակ օրենսդրական պահանջի, առկա չէին մատուցվող սննդի ճաշացանկը և նախորդ օրվա սննդի նմուշները: Նույն ժամանակահատվածում Սևանի հոգեբուժարանում հայտնաբերվել է երեք անուն ժամկետանց դեղ²⁵⁷: Նշենք նաև, որ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (Կոմիտե) դեռևս 2010 թվականին Հայաստանի Կառավարությանն ուղղված զեկույցում անդրադարձել է Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքի պահման պայմաններին՝ արձանագրելով, որ «... առկա է կացարանների ծանրաբեռնվածություն, ճաշարանի մոտ գտնվող 12 քմ մակերեսով սենյակում պահվող կանանց չէր ապահովվում անձի առանձնությունը, քանի որ ճաղավանդակով միջնորմի միջով նրանց կարող էին տեսնել անցնող տղամարդիկ: Կոմիտեն նշել է նաև, որ երկու բաժանմունքում կացարաններն ու սարքավորումները հնամաշ էին և օգտագործվում էին համատեղ, ինչով խախտվում էր առանձնության իրավունքը»²⁵⁸: ԲԿԱՄ փորձագետների կատարած

²⁵⁶ Մանրամասն տես՝ ԲԿԱՄ տարեկան զեկույցը (2014)

²⁵⁷ Մանրամասն տես՝ ԲԿԱՄ տարեկան զեկույցը (2014)

²⁵⁸ http://www.gov.am/u_files/file/kron/Report-final.pdf

այցի արդյունքում որևէ դրական տեղաշարժ չի նկատվել Կոմիտեի կողմից մատնանշված պայմանների բարելավման հարցում:

Առաջարկ. ձեռնարկել քայլեր՝ հոգեբուժական հաստատություններում պատշաճ խնամք կազմակերպելու, պահման պայմանների և բուժասարկման կազմակերպման վերաբերյալ տվյալ հաստատություններին ներկայացվող համապատասխան օրենսդրական պահանջների կատարումն ապահովելու ուղղությամբ:

2.1.8 ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդիկ բազմաթիվ դեպքերում հանդիպում են խտրականության՝ իրենց մոտ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առկայության հիմքով, որի արդյունքում վերջիններիս իրավունքները հաճախ խախտվում են հենց բուժհաստատություններում:

Մի շարք հասարակական կազմակերպություններ մշտապես բարձրաձայնել են, որ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդիկ²⁵⁹ բազմաթիվ դեպքերում հանդիպում են խտրականության՝ իրենց մոտ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առկայության հիմքով, որի արդյունքում խախտվում են վերջիններիս իրավունքները: Հատկանշական է, որ խտրական վերաբերմունքի դրսևորման դեպքերի մեծ մասը, փորձագետների պնդմամբ, տեղի է ունեցել հիմնականում բուժհաստատություններում՝ չնայած «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ բոլոր մարդիկ ունեն բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հավասար իրավունք, իսկ բուժաշխատողները պարտավոր են պահպանել իրենց պացիենտների բժշկական գաղտնիքը և վերջիններիս նկատմամբ դրսևորել հարգալից վերաբերմունք²⁶⁰: Սա նշանակում է, որ անկախ անձի ՄԻԱՎ ունենալու հանգամանքից՝ բուժաշխատողները պարտավոր են վերջինիս ապահովել բժշկական սպասարկմամբ և բուժմամբ: Սակայն, ոլորտում աշխատող մի շարք հասարակական կազմակերպությունների պնդմամբ, մի շարք դեպքերում բժիշկները գործնականում հրաժարվել, հնարավորինս խուսափել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող անձին զննելուց, վիրահատելուց, տրամադրելուց անհրաժեշտ բուժօգնություն՝ մերժումն արդարացնելով համապատասխան մասնագետի կամ սարքավորման բացակայությամբ կամ այլ պատճառներով:²⁶¹ Չնայած նշված ոլորտում Նախարարության կողմից իրականացված բազմաթիվ միջոցառումներին, բուժաշխատողների համար կազմակերպված սեմինարներին՝ այնուամենայնիվ, ոլորտի փորձագետները նշում են նաև, որ բուժաշխատողներն ապատեղեկացված են կամ թյուր կարծիք ունեն ՄԻԱՎ-ի տարածման ուղիների վերաբերյալ, ինչի պատճառով էլ խուսափում են պացիենտներին բուժօգնություն տրամադրելուց: Ավելին, փորձագետները նշում են, որ խտրականության դեպքերի նկատմամբ հատկապես խոցելի են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանայք, ովքեր լուրջ խնդիրների են բխվում

²⁵⁹ Ըստ Նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի տվյալների՝ 1988-2014թթ. դեկտեմբերի 1-ը ՀՀ-ում գրանցվել է ՄԻԱՎ վարակի 1924 դեպք ՀՀ քաղաքացիների շրջանում, որոնցից 305-ը՝ 2014 թվականի 11 ամիսների ընթացքում, ինչն արդեն իսկ գերազանցում է նախորդ բոլոր տարիների տարեկան դեպքերի թիվը: http://www.arm aids.am/main/free_code.php?lng=2&parent=3

²⁶⁰ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, հոդված 4

²⁶¹ <http://www.aravot.am/2014/07/07/477755/>

ատողջապահական համակարգում: ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունենալու փաստը հայտնաբերելու դեպքում կանայք ենթարկվում են մեղադրանքի և բռնության, ինչի հետևանքով հաճախ խուսափում են ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտության կամ բուժման ծառայությունների դիմելուց:

Առաջարկ. ձեռնարկել քայլեր՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բուժաշխատողների իրազեկվածությունը բարձրացնելու, բուժանձնակազմի կողմից խտրական վերաբերմունքի դեպքերը վերացնելու համար, ինչպես նաև ցուցաբերել հետևողականություն՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց նկատմամբ խտրականություն ցուցաբերած բուժաշխատողներին պատասխանատվության ենթարկվելու ուղղությամբ:

2.1.9 Պալիատիվ խնամքի ներդրումը Հայաստանում դանդաղ է իրականացվում, ինչի հետևանքով դրա կարիքն ունեցող մի շարք անձինք անցնում են անհիմն ցավի և տառապանքի միջով:

Բազմաթիվ բժիշկներ և իրավապաշտպաններ բարձրաձայնում են, որ Հայաստանում գրանցված մահացության բազմաթիվ դեպքերում անձանց անհրաժեշտ է եղել պալիատիվ (ցավամոքիչ) բժշկական օգնություն, որը համակողմանի և արհեստավարժ օգնությունն է պացիենտին, ում մոտ առկա է հիվանդությունների առաջընթաց դրանց զարգացման վերջին փուլում:²⁶² Նման օգնության նպատակն է ցավի և մյուս բացասական ախտանիշների վերացումը, ինչպես նաև հոգեբանական, սոցիալական և հոգևոր աջակցությունը: Ընդ որում, պալիատիվ խնամքն անհրաժեշտ է ոչ միայն քաղցկեղով հիվանդ անձանց, ինչպես ընդունված է մտածել, այլև ոչ քաղցկեղային, կյանքին սպառնացող հիվանդություններ (ՄԻԱՎ/ՁԻԱՀ, նեյրոդեքեներտիկ հիվանդություններ, նեյրոպաթիկ ցավեր) ունեցողներին (ինչպես մեծահասակներին, այնպես էլ երեխաներին. մանկական պալիատիվ խնամք²⁶³): Հայաստանում գործող օփիոդային/հոգեներգործող դեղորայքի նշանակման և ստացման շատ բարդ և ժամանակատար ընթացակարգը խոչընդոտում է հիվանդներին ստանալու պալիատիվ խնամք, որի հետևանքով շատ հիվանդներ ստիպված անցնում են ավելորդ տառապանքների և ցավի միջով:²⁶⁴ Նշենք նաև, որ չնայած նրան, որ մորֆինը ապահով, ոչ թանկ և արդյունավետ դեղամիջոց է, որով հնարավոր է թեթևացնել մի շարք հիվանդություններից առաջացող ցավերը՝ Հայաստանում մորֆինի և վերջինիս այլընտրանքային միջոցների քանակը չի բավարարում դրա կարիքն ունեցող բոլոր հիվանդներին՝ շատերին թողնելով առանց ցավազրկող դեղամիջոցների իրենց հիվանդության վերջին փուլերում:²⁶⁵ Հայաստանում ներկայումս բացակայում է հաբերի ձևով մորֆինը, և վերջինս առկա է միայն սրվակներով:²⁶⁶ Չնայած նրան, որ Հայաստանում հազարավոր մարդիկ տառապում են ցավից՝ այնուամենայնիվ,

²⁶² ՀՀ կառավարության նիստի N32 արձանագրություն, 09 օգոստոսի 2012 թվական <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77569>

²⁶³ <https://www.youtube.com/watch?v=9l8e3DnOe1c>

²⁶⁴ http://www.hrw.org/sites/default/files/wr2014_web_0.pdf

²⁶⁵ http://www.hrw.org/sites/default/files/wr2014_web_0.pdf, էջ 409

²⁶⁶ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77569>, կետ 49

պալիատիվ բժշկական օգնության համար անհրաժեշտ ներերակային մորֆինի (injectable morphine) գրանցման ոլորտում 2014 թվականի ընթացքում անկում է նկատվել²⁶⁷: Պալիատիվ բժշկական օգնության ներդրման ուղղությամբ անհրաժեշտ է նաև անցկացնել վերապատրաստումներ բուժաշխատողների, հոգեբանների և սոցիալական աշխատողների հետ: Ըստ Նախարարության հայտնած տվյալների՝ պալիատիվ բուժօգնության ներդրման հնարավորությունների գնահատման նպատակով մշակվել և հանրապետության չորս բուժհաստատություններում կիրառվել է փորձարարական ծրագիր, և իրականացվել է պիլոտային ծրագրի արդյունքների վերլուծություն, որի շրջանակներում պիլոտային տեղամասերում գործող մոբիլ թիմերի միջոցով իրականացվել են հիվանդների տնային խնամքի ծառայություններ՝ համադրվելով ամբուլատոր սպասարկմամբ և հիվանդանոցային ծառայությունների մատուցմամբ: Այնուամենայնիվ, մի շարք անձինք դեռևս գրկված են նման բուժում ստանալու հնարավորությունից, ինչի մասին է վկայում նաև այն, որ 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ պիլոտային ծրագրի շրջանակներում պալիատիվ խնամք է տրամադրվել միայն 436 հիվանդի:

Առաջարկ. առավել հրատապ իրականացնել պալիատիվ խնամքի ներդրումը Հայաստանում, օրենսդրորեն պատշաճ կարգավորել վերջինիս տրամադրման գործընթացը, կարգավորել թմրամիջոցների և հոգեմետ նյութերի տրամադրման կարգը, վերապատրաստել համապատասխան մասնագետներին, ապահովել պալիատիվ խնամքի կարիք ունեցող անձանց՝ արտահիվանդանոցային պայմաններում նման խնամքի ստացումը²⁶⁸:

2.1.10 Հեպատիտ B և C հիվանդությամբ ապրող մարդկանց չեն տրամադրվում անվճար բուժսպասարկում, դեղորայք, մի շարք հետազոտություններ, ինչպես նաև շարունակվել է խտրական վերաբերմունքը վերջիններիս նկատմամբ:

Ոլորտի մասնագետների պնդմամբ՝ վերջին տարիներին Հայաստանում աճել է Հեպատիտով ապրող մարդկանց թիվը: Վերջիններս նշում են, որ այժմ Հայաստանի բնակչության 3-4%-ն ապրում է Հեպատիտով: Այնուամենայնիվ, առ այսօր առկա չէ պետական հոգածության ծրագիր քրոնիկ Հեպատիտով ապրող անձանց համար, այսինքն՝ չեն տրամադրվում անվճար բուժսպասարկում և դեղորայք, ինչպես նաև 2014 թվականին Հեպատիտ C-ի մի շարք հետազոտությունների (օրինակ՝ գենոտիպի որոշման, ֆիբրոտեստի և այլն) իրականացման համար որևէ բժշկական հաստատությունում պետական պատվեր չի տեղադրվել: Բազմաթիվ հասարակական կազմակերպություններ նշել են նաև, որ Հեպատիտ C-ի բուժումը բավականին թանկ է, ինչը դարձնում է այն անհասանելի մի շարք հիվանդների համար: Ոլորտի փորձագետները նշում են նաև, որ առ այսօր Հայաստանում չի վարվում Հեպատիտի վարակման վիճակագրություն, և առկա չէ խնդրի վերաբերյալ ազգային ծրագիր²⁶⁹: Բացի

²⁶⁷ file:///H:/Data/Downloads/JS2_UPR21_ARM_E_Main.pdf, էջ 7

²⁶⁸ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=77569>

²⁶⁹ <https://www.youtube.com/watch?v=d556US-dyuE>

դրանից՝ ոլորտում աշխատող հասարակական կազմակերպությունների և լրագրողների պնդմամբ՝ առկա է նաև խտրական մոտեցում Հեպատիտով ապրող անձանց նկատմամբ, այդ թվում՝ բուժհաստատությունների անձնակազմի կողմից: Մասնավորապես, բուժաշխատողը, օրինակ՝ ատամնաբույժը, իմանալով անձի՝ Հեպատիտ ունենալու մասին, հրաժարվում է իրականացնել բուժսպասարկում: Սա վկայում է նաև անձանց, այդ թվում՝ բուժաշխատողների ցածր իրազեկվածության մասին: Մինչդեռ, օրենքով ամրագրված է յուրաքանչյուրի՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը²⁷⁰:

Առաջարկ. ընդլայնել Հեպատիտով ապրող անձանց համար անվճար հետազոտությունների շրջանակը, իրականացնել Հեպատիտ C-ով վարակված անձանց վիճակագրական հաշվառում, ձեռնարկել քայլեր՝ շուկայում անհրաժեշտ դեղամիջոցների արժեքների իջեցման նպատակով:

2.1.11 Դեռևս պահպանվել է բժիշկներ կողմից պացիենտի բժշկական գաղտնիքը չպահպանելու պրակտիկան, որին նպաստում է ինչպես անպատժելիության միջավայրը, այնպես էլ օրենքի թերի կարգավորումը:

Չնայած նրան, որ բժշկական գաղտնիքը պաշտպանվում է օրենքով սահմանված կարգով, այնուհանդերձ, գործնականում բազմաթիվ դեպքերում բժիշկները չեն պահպանել պացիենտի բժշկական գաղտնիքը: Գործնականում բժշկի կողմից պացիենտի բժշկական գաղտնիքի չպահպանման վտանգը հաճախ անձանց, հատկապես առավել խոցելի խմբերի ներկայացուցիչներին (օրինակ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, Հեպատիտ C-ով ապրող անձինք) հետ է պահում բժշկական ծառայությունների դիմելուց: Ավելին, 2014 թվականին Նախարարության կողմից Պաշտպանին կարծիքի է ներկայացվել ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (Նախագիծ): Դրական համարելով, որ Նախագծով սահմանվել է բժշկական գաղտնիք եզրույթը՝ միաժամանակ Նախագծում առկա են եղել մի շարք խնդրահարույց կարգավորումներ: Մասնավորապես, Պաշտպանի կողմից առաջարկվել է հստակեցնել դատարանում բժշկական գաղտնիքը հրապարակելու հիմքերը, ինչպես նաև այն անձանց շրջանակը, որոնց կարող են փոխանցվել բժշկական գաղտնիք համարվող տվյալները՝ առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության²⁷¹, սակայն նշյալ առաջարկները

²⁷⁰ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, հոդված 4

²⁷¹ Նախագծով սահմանվել է, որ բժշկական գաղտնիք համարվող տվյալները, առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, կարող են փոխանցվել միայն հիվանդի ամուսնուն, անձի հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամին, համատեղ բնակվող այլ անձին, եթե հիվանդը հրաժարվում է տեղեկացնել այդ մասին սույն կետում նշված անձանց՝ դրա անհրաժեշտության մասին բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից իրեն տրամադրված խորհրդատվությունից հետո, և երբ առկա է հիվանդության փոխանցման իրական վտանգ: ՀՀ կառավարությունը սահմանում է այն հիվանդությունների ցանկը, որոնց դեպքում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողը սույն կետին համապատասխան կարող է, առանց անձի համաձայնության, բժշկական գաղտնիք համարվող տեղեկություններ փոխանցել անձի ամուսնուն կամ նրա հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամին կամ այլ անձի: Սակայն «այլ անձի» բառակապակցության սահմանումը կարող է տարակածությունների

Նախարարության կողմից չեն ընդունվել: Այնուհանդերձ, բժշկական գաղտնիքի պաշտպանության օրենսդրական ամրագրումը միայն բավարար չէ հարցի լուծման համար: Համարում ենք, որ նաև պետք է իրավակիրառական պրակտիկայում հետևողականորեն գործադրել պատասխանատվության միջոցներ իրավախախտ բուժաշխատողների նկատմամբ, որպեսզի հետագայում կանխվի նման արատավոր պրակտիկան, և ձևավորվի պացիենտի անձնական տվյալների անձեռնմխելիության ապահովման մշակույթ:

Առաջարկ. **ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և գործնական միջոցները՝ հիվանդների բժշկական գաղտնիքը պահպանելու, պացիենտի իրավունքներն արդյունավետ պաշտպանելու և օրինախախտ բժիշկներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:**

2.1.12 Առ այսօր օրենսդրորեն սահմանված չէ «բժշկական սխալ» հասկացությունը, ինչպես նաև մշակված և ներդրված չեն բժշկական չափորոշիչները (ստանդարտները), հիվանդությունների ախտորոշման, բուժման ուղեցույցերը, ինչին անդրադարձ էր կատարվել նաև Պաշտպանի 2013 թվականի տարեկան զեկույցում:

Բժշկական չափորոշիչների (ստանդարտների), հիվանդությունների ախտորոշման, բուժման միասնական ուղեցույցերի բացակայության հետևանքով՝ հնարավոր չէ հայտնաբերել և որոշել բժշկի սխալը, ինչի հետևանքով բժշկի անփութության, սխալ բժշկական միջամտության ցուցաբերման դեպքերում մի շարք բժիշկներ և բուժաշխատողներ մնացել են անպատիժ: Այսպես, դեռևս 2012 թվականից Նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից սկսվել է բժշկական ստանդարտների մշակման գործընթացը, սակայն առ այսօր այդ աշխատանքները չեն ավարտվել: Այնինչ, նման ուղեցույցերի ու ստանդարտների բացակայությունը խոչընդոտում է բուժաշխատողի կատարած արարքին հստակ որակում տալուն, բժշկական սխալը բացահայտելուն և պատասխանատվության համապատասխան միջոցներ կիրառելուն: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով «բժշկական սխալ» հասկացության օրենսդրական կարգավորումը սահմանող իրավական ակտի մշակման և կառավարություն ներկայացնելու ժամկետ է սահմանվել 2016 թվականի 4-րդ եռամսյակը²⁷², սակայն խնդրի լուծման ուղղությամբ առ այսօր նշանակալից քայլեր չեն ձեռնարկվել: Հարկ է նշել, որ նշված խնդիրը ներկայացվել է նաև Պաշտպանի 2013 թվականի տարեկան զեկույցում:

Առաջարկ. **ձեռնարկել միջոցներ՝ հնարավորինս սեղմ ժամկետներում բժշկական չափորոշիչների (ստանդարտների), միասնական ուղեցույցերի մշակման և ներդրման, ինչպես նաև «բժշկական սխալի» սահմանման ուղղությամբ:**

տեղիք տալ, ինչպես նաև պարունակում է կոռուպցիոն ռիսկեր, ուստի առաջարկվել է հստակեցնել այն անձանց շրջանակը, որոնց կարող են փոխանցվել բժշկական գաղտնիք համարվող տվյալները՝ առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության:

²⁷² ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27 N303-Ն որոշում

2.1.13 Օրենքը չի կարգավորվում լիցենզավորված դեղատների կողմից դեղերի առաքման գործընթացը և չի սահմանվում այդ գործընթացի կարգավորմանն ուղղված պարտադիր պահանջներ, ինչը խնդրահարույց է դեղորայքի անվտանգության տեսանկյունից:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում արդեն իսկ լիցենզավորված դեղատների կողմից դեղերի առաքման գործընթացը և չի սահմանում այդ գործընթացի կարգավորմանն ուղղված պարտադիր պահանջներ, ինչը գործնականում կարող է խնդիրներ առաջացնել առաքվող դեղորայքի անվտանգության առումով և անձանց առողջության վրա բացասական ազդեցություն ունենալ (օրինակ՝ դեղը կարող է փոխադրվել այնպիսի պայմաններում, որոնք կարող են ազդել դեղի որակի վրա): Մասնավորապես, մանրամասն չի կարգավորվում դեղատների կամ դեղատնային կրպակների կողմից դեղերի առաքման գործընթացը, ինչը կազմակերպվում է բավականին բարձր մակարդակով մի շարք եվրոպական երկրներում²⁷³: Այս առումով մտահոգիչ է, որ առանց ոլորտը կարգավորող որևէ չափորոշիչի առկայության՝ Հայաստանի մի շարք դեղատների կողմից գործնականում անհայտ պայմաններում իրականացվում են դեղերի առաքումներ: Նախարարության հայտնած տեղեկությունների համաձայն՝ շրջանառության մեջ է դրվել շրջաբերական՝ ուղղված ապրանքների առաքմամբ զբաղվող կազմակերպություններին՝ այլ ապրանքների հետ մեկտեղ դեղերի առաքում չիրականացնելու և դրանից զերծ մնալու վերաբերյալ: Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունից պարզվել է, որ նախկինում դեղերի առաքում իրականացնող որոշ ընկերություններ դադարեցրել են դեղերի առաքումը, սակայն մի շարք ընկերություններ, այդ թվում՝ որոշ բժշկական կենտրոններին կից դեղատներ գործնականում շարունակում են իրականացնել դեղերի առաքում: Հաշվի առնելով գործնականում նման գործունեության իրականացումը, ինչպես նաև միջազգային փորձում դեղերի առաքման պրակտիկայի լայն տարածումը՝ անհրաժեշտ է մշակել համապատասխան օրենսդրական երաշխիքներ նման գործունեությունը օրինականացնելու և վերջինիս իրականացման համար հստակ չափանիշներ և երաշխիքներ սահմանելու ուղղությամբ:

***Առաջարկ.* օրենսդրորեն կարգավորել դեղատների կամ դեղատնային կրպակների կողմից դեղերի առաքման, վերջիններիս սպասարկման ինտերնետային կայքերի միջոցով դեղերի առցանց պատվերի և առաքման գործընթացները:**

²⁷³ Մասնավորապես, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, ինչպես նաև Ֆրանսիայի Հանրապետության համապատասխան իրավական ակտերով համապարփակ և մանրամասն կարգավորումներ են նախատեսվում լիցենզավորված դեղատների կողմից դեղերի առաքման, վերջիններիս սպասարկման, ինտերնետային կայքերի միջոցով դեղերի առցանց պատվերի և առաքման գործընթացների կարգավորման համար:

2.2 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Ընդունվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի փաթեթը (թվով 9 օրենք), որով ապահովվել է 2014թ. հուլիսի 1-ից պետական կառավարման մարմիններում ներդրվող վարձատրության միասնական համակարգի ամբողջական կիրառման մեխանիզմը, ինչպես նաև բարձրացվել են պետական մարմինների աշխատակիցների աշխատավարձերը:
- Սահմանվել է մայրության միանվագ նպաստի նոր կարգ, որի արդյունքում երրորդ և չորրորդ երեխայի ծննդյան համար պետության կողմից կտրամադրվի 1 մլն դրամ, իսկ հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1 մլն 500 հազար դրամ:
- «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում՝ հղիության և ծննդաբերության նպաստ կհատկացվի նաև չաշխատող կանանց:
- Նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 143-Ա/1 հրամանով հաստատվել են Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման չափորոշիչները, ինչպես նաև դրանց կիրառման ուղեցույցը:
- Նախարարության կողմից մշակված և Կառավարության կողմից 2014 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված N 1452-Ն որոշման համաձայն՝ «Ակունք» հասարակական կազմակերպությունը ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացնում է ծրագիր, որի շրջանակներում մանկատան շրջանավարտներին տրամադրվում են սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված աջակցություն, իրավաբանական խորհրդատվություն և մասնագիտական կողմնորոշում, իրականացվում է շահառուների ներգրավում բժշկական անվճար օգնության ծառայության շրջանակներում:
- 2014 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցով Լոռու և Շիրակի մարզերում իրականացվել են մանկատաների բեռնաթափման ծրագրեր, որոնց արդյունքում 50

երեխա հաստատություններից վերադարձել է կենսաբանական ընտանիք, և 50 երեխայի մուտքը հաստատություններ կանխարգելվել է:

- ՀՀ կառավարության 2000 թվականի հուլիսի 20-ի N 410 որոշման մեջ կատարված փոփոխության արդյունքում բռնադատվածներին և նրանց առաջին հերթի ժառանգներին տրամադրված վարկերի ինդեքսավորման ենթակա գումարները և ժամկետանց պարտավորությունների դիմաց հաշվարկված տույժերը զիջվում են ամբողջ ծավալով, իսկ վարկառուների կողմից ինդեքսավորման և ժամկետանց պարտավորությունների դիմաց վճարված գումարները հաշվարկվում են որպես վարկի հիմնական գումարի մարում:

Առկա թերություններն ու խնդիրները

2.2.1 Սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող օգնության համակարգում առկա են լուրջ խնդիրներ, այդ թվում՝ կոռուպցիոն ռիսկեր, չարաշահումներ, ավելորդ վարչարարություն, օրենսդրական թերություններ:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում մի շարք քաղաքացիներ բարձրացրել են ընտանիքի անապահովության գնահատման համակարգին (Համակարգ) առնչվող տարաբնույթ խնդիրներ: Մասնավորապես, առկա են խնդիրներ՝ ընտանիքի անապահովության միավորի հաշվարկման բանաձևի թերությունների, կոմունալ ծառայությունների վճարների ավելացմամբ պայմանավորված ընտանեկան բյուջեում ծախսերի ավելացումը հաշվի չառնելու, 3 ամիս անընդմեջ նպաստ չստանալու դեպքում դրա իրավունքի դադարեցման, ընտանեկան նպաստի բանաձևի անհամարժեքության, Համակարգում առկա կոռուպցիոն ռիսկների, տեսուչների կողմից տարբեր չարաշահումների, պետական տարբեր մարմինների համար Համակարգի վերաբերյալ տեղեկատվական բազայի անհասանելիության առումներով: Առհասարակ, տարբեր վերլուծություններ վկայում են, որ սոցիալապես անապահով ընտանիքները մեծ կախվածություն ունեն պետության կողմից տրամադրվող սոցիալական տրանսֆերտների, այդ թվում՝ ընտանեկան և սոցիալական նպաստի և այլ տեսակի օգնությունից²⁷⁴: Իսկ այդ ընտանիքներին նպաստների վճարման դադարեցումն անխուսափելիորեն կհանգեցնի նրանց շրջանում աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության մակարդակի զգալի աճի²⁷⁵: Ավելին, աղքատության մակարդակի աճին գուցահեռ դա կհանգեցնի աղքատության խորության ու սրության սաստկացման, ինչպես նաև բժշկական, կրթական և մյուս ծառայությունների հասանելիության

²⁷⁴ http://www.armstat.am/file/article/4.poverty_2014a_1.pdf, ինչպես նաև Սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության ելակետային հետազոտություն և այդ ծառայությունների ազդեցությունը սոցիալապես խոցելի ընտանիքիների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, դեկտեմբեր 2013 թվական

²⁷⁵ <http://www.armstat.am/file/doc/99489153.pdf>

կրճատման, քանի որ ընտանիքի՝ անապահովության համակարգում հաշվառված լինելու դեպքում անձն օգտվում է մի շարք ոլորտներում անվճար ծառայություններ ստանալու արտոնությունից²⁷⁶: Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի արդյունավետությանն անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն: 2013 թվականի իր Եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ ծայրահեղ աղքատ ընտանիքների միայն 54.3%-ը և աղքատ ընտանիքների 4.1%-ն են կանոնավոր կերպով օգտվում այդ փաթեթներից՝ ընտանեկան նպաստի բանաձևի անհամարժեքության և գոյություն ունեցող պետական աջակցության վերաբերյալ տեղեկացվածության պակասի պատճառով²⁷⁷: Նշենք նաև, որ ըստ ԱՎԾ տվյալների՝ ընտանեկան նպաստի համակարգի շահառուները գտնվում են սպառման բաշխվածության ամենաստորին երկու քվինտիլներում²⁷⁸: Ինչ վերաբերում է նպաստների չափին, ապա ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության միջոցներն անբավարար են՝ երաշխավորելու համար համապատասխան կենսամակարդակ, այդ թվում՝ թոշակառուների և գործազուրկների համար: Կոմիտեն նշել է, որ նույնիսկ «խոցելիության գործակիցների» համակարգի (the system of “vulnerability ratios”) առկայությամբ, սոցիալական աջակցությունը բավարար չի եղել՝ հոգալու աղքատության մեջ ապրող ընտանիքների կարիքները, իսկ նպաստների չափը նույնպես անբավարար է²⁷⁹: Ընտանիքի անապահովության համակարգին առնչվող հաջորդ խնդիրն այն է, որ դրա մեջ մեծ է մարդկային գործոնը, ինչը հաճախ հանգեցնում է տարատեսակ չարաշահումների և կոռուպցիոն ռիսկերի: Բողոքներում, մասնավորապես, նշվել է, որ տնայց կատարող տեսուչները հաճախ ոչ պատշաճ են կատարել տնայցը կամ առհասարակ այց չեն կատարել: Միաժամանակ, չկան վերահսկման մեխանիզմներ՝ պարզելու, թե արդյոք տեսուչը պատշաճ կերպով է արձանագրում ընտանիքի սոցիալական պայմաններն ու գույքը: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ տեսուչները որոշակի գումարի (1-2 ամսվա նպաստի գումար) դիմաց համաձայնել են կեղծել մարդկանց տվյալները, որպեսզի նրանք կարողանան նպաստ ստանալ: Նշենք նաև, որ անապահովության հաշվարկման համակարգում մեծ ուշադրություն է դարձվում հենց անձի կենսաթոշակի չափին, սակայն համակարգը անհրաժեշտ չափով ճկուն չէ՝ յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները հաշվի առնելու համար: Ըստ Պաշտպանին ուղղված դիմումներից մեկի՝ օրինակ, 50,000 դրամ կենսաթոշակ ստացող քաղաքացին զրկվել էր սոցիալական նպաստ ստանալու իրավունքից՝ չնայած իր նպաստից միայն 40,000 դրամ

²⁷⁶ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն իր 2013 թվականի զեկույցում²⁷⁶ նշել է, որ սոցիալապես անապահով անձանց՝ անվճար բժշկական օգնություն ստանալու շեմը Հայաստանում շատ ցածր է սահմանված, ինչի արդյունքում միայն ծայրահեղ աղքատներն են օգտվում անվճար օգնություն ստանալու արտոնությունից այն դեպքում, երբ համեմատաբար ավելի բարձր եկամուտ ունեցող անձանց համար այս ծառայությունները նույնպես մատչելի չեն:

http://www.coe.int/t/dgh/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

²⁷⁷ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

²⁷⁸ <http://www.armstat.am/file/doc/99489153.pdf>

²⁷⁹ <http://bit.ly/1wWxfrM>

վճարում է իր հիվանդության համար անհրաժեշտ դեղորայքի ձեռքբերման համար: Բացի դրանից՝ գործող Համակարգը հաշվի չի առնում, տարվա ցուրտ եղանակին կոմունալ ծառայությունների վճարների ավելացմամբ պայմանավորված, ընտանեկան բյուջեում ծախսերի ավելացումը: Հաշվի առնելով ձմռանը տան ջեռուցման համար հատկացվող վճարները՝ ավելանում են ընտանիքի ծախսերը, իսկ նպաստի գումարը մնում է նույնը, ինչի արդյունքում ընտանիքի եկամուտը կտրուկ նվազում է: Մեկ այլ խնդիր վերաբերում է նրան, որ 3 ամիս անընդմեջ անհարգելի պատճառով նպաստ չստանալու դեպքում՝ նպաստառուն կորցնում է դրա իրավունքը: Նման սահմանափակումը գործնականում հաճախ կամայական է կիրառվել: Հաճախ նպաստառուն իրենից անկախ հանգամանքների բերումով չի ստացել նպաստը, իսկ լիազոր մարմինը գործնականում չի դիտարկել դրա պատճառները, այլ պարզապես դադարեցրել է նպաստի վճարումը: Խնդրահարույց է նաև Համակարգի տեղեկատվական բազայի՝ այլ պետական մարմիններում հասանելի չլինելը, ինչը լրացուցիչ վարչարարական խնդիրներ է ստեղծում քաղաքացիների համար: Օրինակ, դեպքերից մեկով ՀՀ դատական դեպարտամենտը չէր ազատում քաղաքացուն պետական տուրք՝ վճարելու պարտավորությունից, քանի դեռ քաղաքացին չէր ներկայացրել տեղեկանք՝ նպաստառու լինելու վերաբերյալ: Առհասարակ մի շարք դեպքերով անապահովության միավորի հաշվարկման ժամանակ քաղաքացու կողմից ներկայացված փաստաթղթերի արժանահավատության ապացուցման բեռը, որպես կանոն, դրվել է հենց քաղաքացու վրա, ինչը չի բխում վարչարարության հիմունքներից: Հաշվի առնելով բազմաթիվ անձանց կողմից սոցիալական աջակցության համակարգի չարաշահման ռիսկերը՝ այնուհանդերձ, նման մոտեցման արդյունքում հաճախ տուժել են բարեխիղճ քաղաքացիները: Համակարգի արդյունավետության համատեքստում նշենք, որ Համաշխարհային բանկը դեռևս 2013 թվականին վերլուծել է Վրաստանի ընտանիքի անապահովության գնահատման համակարգը²⁸⁰, որը շատ հատկանիշներով մոտ է Հայաստանի համակարգին: Արդյունքում, Վրաստանի մոդելում վեր են հանվել որոշ խնդիրներ, որոնք վերաբերելի են նաև Հայաստանի համակարգին: Այսպես, փորձագետների պնդմամբ՝ գործնականում տվյալ Համակարգով գրեթե անհնար է լինում հաշվի առնել ընտանիքի ունեցած չգրանցված եկամուտները, որոնք Հայաստանի նման ստվերային տնտեսության մեծ հատված ունեցող պետություններում կարող են զգալի գումար կազմել: Ավելին, ընտանիքի անապահովության գնահատումը հիմնվում է նաև ընտանիքի գույքի գնահատման վրա, որը հաշվի չի առնում, թե երբ և ինչպես է ձեռք բերվել տվյալ գույքը: Արդյունքում, նախկինում սոցիալապես ապահովված և վերջին շրջանում աղքատացած ընտանիքներն իրենց գույքի առկայության պատճառով չեն կարողանում օգտվել սոցիալական նպաստներից: Այսպիսով, ընտանիքի անապահովության համակարգում առկա վերոնշյալ խնդիրները հանգեցնում են Համակարգի ոչ արդյունավետ գործունեությանը և չեն նպաստում աղքատության կրճատմանը:

Առաջարկ. Բարձրացնել ընտանիքի անապահովության համակարգի արդյունավետությունն ու հասցեականությունը, այդ թվում՝ վեր հանել և կանխել

²⁸⁰ http://www.iza.org/conference_files/worldb2014/santos_i6427.pdf

կոռուպցիոն ռիսկերը, հնարավոր չարաշահումները, ուժեղացնել վերահսկողությունը տեսուչների աշխատանքի նկատմամբ, ապահովել նպաստների հասանելիությունը բոլոր խոցելի ընտանիքների համար, ինչպես նաև համակարգի վերաբերյալ տեղեկատվական բազայի հասանելիությունը համապատասխան պետական մարմինների համար, վերանայել ընտանեկան նպաստի բանաձևը:

2.2.2 Նախարարության ձեռնարկած ծրագրերը զբաղվածության խթանման ոլորտում բավականաչափ արդյունավետ չեն եղել և չեն նպաստել գործազրկության մակարդակի կրճատմանը:

Գործազրկությունը շարունակում է մնալ ամենասուր սոցիալական խնդիրներից մեկը, իսկ Նախարարության իրականացրած միջոցառումներն այս ոլորտում դեռևս բավականաչափ արդյունավետ չեն: Նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (Գործակալություն) տվյալների համաձայն՝ 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում աշխատանք փնտրողների թիվը կազմել է 72.6 հազար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 12.2%-ով²⁸¹: Ընդ որում, նույն տվյալներով գործազուրկ կանանց թիվը կազմել է գործազուրկների ընդհանուր թվի 71.8%-ը, երիտասարդների թվաքանակը՝ 23.7%-ը, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց թիվը՝ 3.2%-ը: Գործազուրկների թվաքանակում աշխատաշուկայում անմրցունակ անձանց թվաքանակը կազմել է 55.2 հազար կամ 83.8%: Նշենք, սակայն, որ գործազրկության այս վիճակագրությունը չի արտահայտում երկրում գործազրկության իրական մակարդակը, քանի որ «գործազուրկ» կարգավիճակն, ի թիվս այլ պայմանների, որոշվում է պետական լիազորված մարմնում հաշվառված լինելու հանգամանքով²⁸²: Այսպես, մի շարք քաղաքացիներ դժգոհել են Նախարարության կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետությունից, դրանցում ընդգրկվելու սահմանափակ հնարավորությունից, ինչպես նաև Գործակալության մարզային գրասենյակների ոչ պատշաճ աշխատանքից: Չնայած Գործակալության կողմից իրականացված մի շարք ծրագրերին՝ այնուամենայնիվ, Գործակալության հրապարակած տվյալները վկայում են, որ դրանք էապես չեն կրճատում գործազրկության բարձր մակարդակը: Այն դեպքում, երբ Ազգային վիճակագրական ծառայության (ՄՎԾ) տվյալներով՝ 2014 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ ՀՀ-ում գործազուրկ է եղել 238 հազ. 400 մարդ²⁸³, Զբաղվածության կարգավորման 2014 թվականի պետական ծրագրերում ընդգրկվել է 10406 անձ, իսկ ակտիվ ծրագրերում՝ 7296 աշխատանք փնտրող անձ, որոնցից 455-ը՝ հաշմանդամություն ունեցող: Նույն տվյալներով՝ 2014 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին աշխատանքի է տեղավորվել 11495 անձ՝ աշխատանք փնտրողների 15,8%-ը: Աշխատանքի տեղավորվածներից 3319-ը երիտասարդներ են, իսկ 298-ը՝ հաշմանդամություն ունեցող անձինք²⁸⁴: Իր հերթին ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների

²⁸¹ http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=131&code_id=212

²⁸² «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, հոդված 4

²⁸³ http://www.armstat.am/file/article/armenia_14_4.pdf

²⁸⁴ <http://employment.am/am/2014/report.html>

կումիտեն (Կումիտե) մտահոգություն է հայտնել ՀՀ-ում առկա գործազրկության բարձր մակարդակի վերաբերյալ հատկապես գյուղական վայրերում, ինչպես նաև մասնագիտական վերապատրաստման և զբաղվածության քաղաքականությունն ակտիվացնելու համար ոչ բավարար գումարների հատկացման վերաբերյալ: Կումիտեն խնդրահարույց է համարել, որ բազմաթիվ փաստացի գործազուրկ անձինք չեն գրանցվել որպես այդպիսիք, և, հետևաբար, վերջիններս չեն արտացոլվել գործազրկության պաշտոնական վիճակագրության մեջ: Ուստի, առաջարկվել է հավաքել և կուտակել գործազրկության վերաբերյալ թարմացված տվյալներ՝ ըստ սեռի, տարիքի, քաղաքային և գյուղական տարածքների և էթնիկ խմբերի, որպեսզի ձեռնարկվեն արդյունավետ նպատակային միջոցներ՝ ուղղված գործազրկության նվազեցմանը²⁸⁵: Նշենք նաև, որ գործազրկության առավել բարձր մակարդակ գրանցվել է հատկապես մարզերում, որտեղից ավելի շատ են մեկնում արտագնա աշխատանքի: Մարզերից դժգոհություններ են ստացվել նաև Գործակալության մարզային գրասենյակների ոչ արդյունավետ աշխատանքի վերաբերյալ: Այսպես, դեռևս 2013 թվականի նոյեմբերին ՀՀ 5 մարզերում սոցիալապես խոցելի ընտանիքիների շրջանում իրականացված հետազոտության արդյունքում պարզվել է, որ աշխատանքային միգրացիայի գործընթացին մասնակից սոցիալապես խոցելի 252 ընտանիքներից վերջին 3 տարվա ընթացքում արտագնա աշխատանքի են մեկնել 281 մարդ²⁸⁶: Նշենք, որ բնակչության զբաղվածության ապահովման խնդիրը ներառվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում: Մասնավորապես, նշված ծրագրով նախատեսվում է, որ մինչև 2014 թվականի 4-րդ եռամսյակ Նախարարությունը և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը պետք է պարբերաբար մշակեն երիտասարդության շրջանում զբաղվածության խնդրի լուծման կապակցությամբ հստակ ծրագրեր և իրականացնեն տարբեր միջոցառումներ ՀՀ բոլոր մարզերում՝ ապահովելով դրանց շարունակականությունը²⁸⁷: Բայցևայնպես, գործազրկության առկա բարձր մակարդակը ցույց է տալիս, որ Նախարարության կողմից իրականացված ծրագրերը բավարար և արդյունավետ չեն եղել գործազրկության կրճատման հարցում:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ՝ ուղղված գործազրկության իրական մակարդակի վերհանմանը և արտացոլմանը, բարձրացնել Գործակալության գրասենյակների գործունեության, ինչպես նաև զբաղվածության խթանման պետական ծրագրերի արդյունավետությունը և հասցեականությունը:

2.2.3 Նախարարությունը չի ձեռնարկել բավարար քայլեր՝ հաշմանդամություն ունեցող անձանց գործազրկության խնդիրը լուծելու ուղղությամբ:

²⁸⁵http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2FC.12%2FARM%2FCO%2F2-3&Lang=en

²⁸⁶ Սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության ելակետային հետազոտություն և այդ ծառայությունների ազդեցությունը սոցիալապես խոցելի ընտանիքիների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, դեկտեմբեր 2013 թվական

²⁸⁷ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303 -Ն որոշում

Չնայած Նախարարության ձեռնարկած միջոցներին հաշանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման ուղղությամբ՝ վերջիններիս շրջանում գործազրկությունը շարունակում է բարձր մնալ: Այսպես, Զբաղվածության պետական գործակալությունում հաշվառված մոտ 2000 հաշանդամություն ունեցող անձանցից տարվա ընթացքում ընդամենը 298-ն են ապահովվել աշխատանքով: Բացի դրանից՝ էապես կրճատվել են նախկինում վերջիններիս համար գործող արտոնություններն ու ծրագրերը: Այսպես, ՀՀ կառավարության 2014 թվականի որոշմամբ²⁸⁸ էականորեն կրճատվել են պետական աջակցության ծրագրի շահառուների թիվն ու շրջանակը այն դեպքում, երբ հաշանդամություն ունեցող անձանց համար զբաղվածությունը կենսական անհրաժեշտություն է, տնտեսապես անկախ լինելու հնարավորություն: Մասնավորապես, գործատուին աշխատավարձի փոխհատուցման ծրագիրը, նախկին 1-2 տարիների փոխարեն, գործելու է միայն 6 ամիս, և աշխատավարձի փոխհատուցման ծրագիրը, նախկինում 1-ին և 2-րդ խմբի հաշանդամություն ունեցող անձանց վրա տարածվելու փոխարեն, այսուհետ ներառելու է միայն 1-ին խմբի հաշանդամություն ունեցողներին, իսկ լրացուցիչ պայմանների բավարարման դեպքում՝ 2-րդ և 3-րդ խմբի հաշանդամություն ունեցող անձանց: Թեև Պաշտպանի կողմից առաջարկվել էր գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրի ժամկետը երկարացնել մինչև 1-2 տարի, ինչպես նաև ընդլայնել տվյալ ծրագրի շահառուների թիվը՝ 1-ին խմբի հաշանդամություն ունեցողներին զուգահեռ ընդգրկելով նաև 2-րդ խմբի հաշանդամություն ունեցող անձանց, սակայն առաջարկները չեն ընդունվել, և վերոնշյալ խնդիրներով կարգավորումներն ուժի մեջ են մտել և գործում են: Գործազրկության պայմաններում հաշանդամություն ունեցող անձինք հաճախ ստիպված են եղել ապրել միայն պետության տրամադրած հաշանդամության կենսաթոշակով, որը բավարար չէ նորմալ կենսամակարդակի ապահովման համար: Նշենք, որ Սահմանադիրը որպես պետության պոզիտիվ պարտականություն սահմանել է բնակչության զբաղվածությունը նպաստելը և հաշանդամություն ունեցող անձանց հասարակական կյանքում ներգրավելը²⁸⁹: Միաժամանակ, հաշանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովման խնդրին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունում: Այսպես, մինչև 2014 թվականի երրորդ եռամսյակը Նախարարությունը պետք է մշակեր գործուն մեխանիզմներ՝ հաշանդամություն ունեցող անձանց զբաղվածությունն ապահովելու նպատակով, ներդներ պարտադիր ապահովման նորմատիվներ (քվոտաներ):²⁹⁰ «Զբաղվածության մասին» նոր օրենքի ընդունմամբ սահմանվեց հաշանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի պարտադիր ապահովման քվոտա, սակայն վերջինս միայն 2015 թվականից է գործելու պետական, իսկ 2016 թվականից ոչ պետական կազմակերպությունների համար: Այսպիսով, 2014 թվականի ընթացքում

²⁸⁸ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» թիվ 534-Ն որոշում

²⁸⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 48

²⁹⁰ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշում

արդյունավետ չեն եղել Նախարարության քայլերն՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանը, իսկ առանձին դեպքերում՝ անգամ կրճատվել է պետական աջակցության ծավալը:

Առաջարկ. մեծացնել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանման պետական ծրագրերի շահառուների թիվը, գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրի ժամկետը երկարացնել մինչև 1-2 տարի, ինչպես նաև տվյալ ծրագրի շահառուների թիվն ընդլայնել՝ ընդգրկելով նաև 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց:

2.2.4 2014 թվականի ընթացքում չեն իրականացվել անհրաժեշտ և բավարար ծրագրեր՝ ուղղված մանկատների բեռնաթափմանը, մանկատներ երեխաների հոսքի կանխարգելմանը, հաստատությունից երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելուն, խնամակալության, որդեգրման հանձնելուն, խնամատար ընտանիքների թիվն ավելացնելու և հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրումը խթանելուն:

2014 թվականին Նախարարության կողմից չեն ձեռնարկվել անհրաժեշտ քայլեր երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի լիարժեք իրացման համար: Մասնավորապես, դեռևս բավարար չեն Նախարարության ձեռնարկված միջոցառումները՝ ուղղված մանկատների բեռնաթափմանը, նշված հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելմանը, հաստատությունից երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելուն, խնամակալության, որդեգրման հանձնելուն, խնամատար ընտանիքներ ստեղծելուն և որդեգրումը խթանելուն: Այսպես, Նախարարության տվյալներով՝ մանկատներում խնամվել է շուրջ 731 երեխա, այդ թվում 506-ը՝ մասնագիտացված մանկատներում, իսկ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում՝ սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 750 երեխա²⁹¹: Այսպես, օրինակ, Խարբերդի մասնագիտացված մանկատունը, որտեղ ապրում են մտավոր և ֆիզիկական լուրջ խնդիրներ ունեցող երեխաներ, ունի գերբեռնվածության լուրջ խնդիր: Չնայած նրան, որ հաստատությունը նախատեսված է մինչև 18 տարեկան երեխաների համար, այնտեղ մինչ օրս ապրում են նույնիսկ մինչև 35 տարեկանին մոտ բազմաթիվ անձինք: Մինչ այժմ գործող պրակտիկայի համաձայն՝ նրանցից հատկապես հոգեկան առողջության խնդիրներ ունեցողները 18 տարեկանը լրանալուց հետո տեղափոխվել են Վարդենիսի տուն-ինտերնատ: Սակայն հաճախ գործնականում դա նույնպես չի ապահովվում, քանի որ վերջինս նույնպես գերբեռնված է և ազատ տեղեր չի ունենում: Արդյունքում՝ մանկատանն առաջացել է գերբեռնվածություն. նոր երեխաներն ավելանում են, բայց շրջանավարտներ չեն լինում: Ողջունելի է, որ 2014 թվականին Լոռու և Շիրակի մարզերում իրականացվել են բեռնաթափման ծրագրեր, համաձայն որոնց՝ 50 երեխա հաստատություններից վերադարձել է կենսաբանական ընտանիք, և 50 երեխայի մուտքը հաստատություններ կանխարգելվել է: Բայցևայնպես, այսօր ՀՀ-ում բացակայում են մանկատների բեռնաթափմանն ուղղված հստակ մեխանիզմներ: Մասնավորապես, առկա չեն

²⁹¹ <http://bit.ly/1DvIk6o>

խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացմանը նպաստող գործոնները, իսկ ՀՀ կառավարությունը նշված ինստիտուտի՝ որպես երեխաների այլընտրանքային խնամքի միջոցի խթանման համար չի ձեռնարկել էական և արդյունավետ միջոցներ²⁹²: Նախարարության հայտնած տվյալների համաձայն՝ 2014 թվականին խնամատարության հանձնվել է ընդամենը երեք երեխա: Նշված խնդիրը բարձրացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով²⁹³: Մասնավորապես, Ծրագրով նախատեսվում է պետական բյուջեում համապատասխան վերաբաշխումներ կատարել և ավելացնել խնամատար ընտանիքների թիվը՝ հաշվի առնելով միջազգային փորձը, սակայն նշվածը համապարփակ լուծում չի ստացել մինչ օրս: Դեռևս չեն մշակվել հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրումը խթանող մեխանիզմներ և/կամ արտոնություններ: Այսպես, Նախարարության կենտրոնացված հաշվառման տվյալներով՝ 2014 թվականին որդեգրվել է ընդամենը 31 երեխա, որոնցից 14-ը որդեգրվել է ՀՀ քաղաքացիների կողմից, իսկ 17-ը՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից: Ընդ որում, օտարերկրացիների կողմից որդեգրված 17 երեխայից միայն մեկն է, որ չունի առողջական խնդիրներ, իսկ ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված 14 երեխաները հաշմանդամություն չունեն: Նշվածը վկայում է, որ պետության կողմից 2014 թվականի ընթացքում չեն իրականացվել անհրաժեշտ համալիր միջոցառումներ՝ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման պրակտիկայի ներդրման և խթանման ուղղությամբ: Ավելին, պրակտիկայում առկա անհարկի քաշքշուկների և խոչընդոտների, ինչպես նաև հաշմանդամության վերաբերյալ մարդկանց կարծրատիպերի և թյուր պատկերացման հետևանքով հաշմանդամություն ունեցող երեխայի որդեգրումը դառնում է դժվարին գործընթաց: Վերոնշյալ բոլոր խնդիրների և Նախարարության կողմից ոչ բավարար միջոցառումների ձեռնարկման արդյունքում սահմանափակվել է հաստատություններում բնակվող և ընտանիք վերադառնալու հնարավորություն չունեցող երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքը:

Առաջարկ. ձեռնարկել արդյունավետ միջոցառումներ՝ ուղղված մանկատների բեռնաթափմանը, նշված հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման, հաստատությունից երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու, խնամակալության հանձնելու, որդեգրման, խնամատար ընտանիքների թիվն ավելացնելու և հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրմանը խթանելու ուղղությամբ:

2.2.5 Բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում դեռևս չկան հաշմանդամության որոշման հստակ չափորոշիչներ, ինչը հանգեցնում է լուրջ կոռուպցիոն դրսևորումների, իսկ վերափորձաքննության իրականացման կարգը հիմնականում անարդունավետ է:

2014 թվականի ընթացքում Պաշտպանին ուղղված դիմում-բողոքները, ՀԿ-ների

²⁹² Մանրամասն տես՝ երեխաների իրավունքներ բաժնում

²⁹³ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշում

կատարած հարցումները վկայում են, որ Նախարարության Բժշկասոցիալական փորձաքննության²⁹⁴ (ԲՄՓ) գործակալության²⁹⁵ գործունեության ոլորտում առկա են մի շարք խնդիրներ: Այսպես, Պաշտպանի կողմից բազմիցս նշվել է, որ ԲՄՓ հանձնաժողովների կողմից հաշմանդամության խմբի սահմանման համար գործածվող, ՀՀ Կառավարության որոշմամբ²⁹⁶ հաստատված չափորոշիչները բավականին լայն են ձևակերպված, ինչը չափազանց լայն հայեցողություն է տալիս հանձնաժողովի անդամներին որոշում կայացնելիս՝ արդյունքում հաճախ հանգեցնելով կամայականության և երկակի ստանդարտների կիրառման: Ավելին, կոռուպցիայի դրսևորումների հավանականությունը մեծանում է այն դեպքերում, երբ համանման հանգամանքների դեպքում հնարավոր է հաշմանդամության տարբեր խմբեր սահմանել: Ողջունելի է, որ Նախարարի կողմից 2014 դեկտեմբերի 25-ին հաստատվել են Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (International Classification of Functioning) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման չափորոշիչները, ինչպես նաև դրանց կիրառման ուղեցույցը²⁹⁷: Բայցևայնպես, հաշվի առնելով տվյալ ոլորտում կիրառված բժշկասոցիալական փորձաքննության ոչ հստակ չափորոշիչները՝ բժիշկները հաշմանդամության խմբերը սահմանելիս ունեցել են լայն հայեցողական լիազորություններ, ինչն էլ իր հերթին հանգեցրել է մի շարք կոռուպցիոն դրսևորումների: Այսպես, հաշվի առնելով խնդրի վերաբերյալ ստացված բազմաթիվ դիմում-բողոքները, Պաշտպանի աշխատակազմը 2014 թվականին նախաձեռնել է ԲՄՓ մի շարք հանձնաժողովների գործունեության մշտադիտարկումներ փորձաքննություն անցած անձանց հետ խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) առանձնազրույցների իրականացման միջոցով²⁹⁸, որոնցով մի շարք դեպքերում հաստատվել է ոլորտում կոռուպցիայի առկայությունը: Այսպես, օրինակ, առանձնազրույցներում քաղաքացիները նշել են հաշմանդամության խումբ սահմանելու դիմաց ԲՄՓ հանձնաժողովի կողմից մի

²⁹⁴ Համաձայն Կառավարության 2006թ. թիվ 267-ն որոշման՝ Բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացվում է անձի կենսագործունեության սահմանափակման աստիճանը որոշելու, անձին հաշմանդամ ճանաչելու՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և հաշմանդամության խումբ սահմանելու, հաշմանդամ չճանաչելու, հաշմանդամության ժամկետ, պատճառական կապ, մահվան պատճառական կապ, մասնագիտական աշխատունակության կորստի աստիճան որոշելու, հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագիր մշակելու և հաստատելու, ժամանակավոր անաշխատունակության ժամկետը երկարաձգելու մասին որոշում ընդունելու նպատակով:

²⁹⁵ ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 14-ի թիվ No 1822 որոշմամբ՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում կազմավորվել է բժշկասոցիալական փորձաքննության գործակալությունը, որը նախարարության կազմում գործող ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է: http://hhbsp.am/HistoricalReview_1.php

²⁹⁶ ՀՀ Կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» թիվ N 780-Ն որոշում

²⁹⁷ ՀՀ աշխատանքի և սցիալական հարցերի նախարարի 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 143-Ս/1 հրաման

²⁹⁸ Մշտադիտարկում է իրականացվել Երևանի թիվ 3, 4, 5, 7, Գեղարքունիքի մարզի թիվ 1 և 2, Շիրակի մարզի թիվ 2 և Մյունիքի մարզի թիվ 1 ԲՄՓ հանձնաժողովների գործունեության նկատմամբ: Հարցումները կատարվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մարզային գրասենյակների (Գյումրի, Գավառ, Կապան) ներգրավմամբ:

քանի ամսվա կենսաթոշակի չափով գումար պահանջելը, առանց պատշաճ հիմնավորման՝ հաշմանդամության խմբի փոփոխումը՝ ի վնաս քաղաքացու, կամ անձին հաշմանդամ չճանաչելը՝ պայմանավորված ԲՄՓ հանձնաժողովի անդամների՝ քաղաքացիներից ունեցած որոշակի գումարային ակնկալիքներով: Ընդ որում, նշված ապօրինի գումարները հիմնականում պահանջվել և/կամ փոխանցվել են կամ ԲՄՓ հանձնաժողովի մեջ չընդգրկված միջնորդ անձի միջամտությամբ (որպես կանոն՝ նույն բուժհաստատության աշխատակցի), կամ անմիջապես ԲՄՓ հանձնաժողովի անդամներին: Ավելին, տարբեր օրերի փորձաքննությունն անցած անձանց հետ զրուցելիս նրանց կողմից նշվել են ապօրինի գումարների փոխանցման միևնույն մեխանիզմը (օրինակ՝ միջնորդ անձի միջոցով, գումարը անձնագրի մեջ դրված և այլն) և գումարի միևնույն չափը կոնկրետ հաշմանդամության խմբի դիմաց (օրինակ՝ 15.000-20.000 դրամ՝ 3-րդ խումբ սահմանելու դիմաց, կամ 2 ամսվա կենսաթոշակի չափով գումար): Հարցվողներից նաև ստացվել է տեղեկություն, որ նախապես ապօրինի գումար տված անձանց կարող են խմբավորել և հրավիրել փորձաքննության առանձին օր: Կոռուպցիոն երևույթների համատեքստում, Երևանի ԲՄՓ հանձնաժողովներում առկա իրավիճակի վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով, լրացուցիչ ուսումնասիրվել են նաև 2013-2014թթ. հաշմանդամություն ունեցող անձանց կողմից Պաշտպանին հասցեագրված բոլոր դիմում-բողոքները, որոնցից 5-ում քաղաքացիներն ուղղակիորեն նշել են կոնկրետ ԲՄՓ հանձնաժողովներում կոռուպցիայի մասին: Նշված խախտումների կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ քաղաքացիների կողմից կոռուպցիոն երևույթների մասին տեղեկություններ են եղել նաև Նախարարություն ներկայացրած մի քանի դիմումներում, ինչի հիման վրա իրականացվել են ստուգումներ: Դրանց արդյունքում աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարգապահական տույժի է ներկայացվել ԲՄՓ գործակալության 6 աշխատակից, որոնցից 2-ին հայտարարվել է նկատողություն: Այնուամենայնիվ, Նախարարության կողմից ձեռնարկված վերոնշյալ քայլերը դեռևս բավարար չեն ոլորտում առկա կոռուպցիայի դեպքերը բացառելու համար: Խնդրահարույց է նաև ԲՄՓ հանձնաժողովի որոշման բողոքարկման և վերափորձաքննությունների արդյունավետության հարցը: Քաղաքացիների բազմաթիվ դիմումներում նշվել է, որ վերափորձաքննության արդյունքում, որպես կանոն, անփոփոխ է թողնվում նախկինում Հանձնաժողովի կայացրած որոշումը: Լուրջ թերություններ կան վերափորձաքննության անկողմնակալության և օբյեկտիվ քննության ապահովման հարցում: Խնդիրն այն է, որ վերափորձաքննությունն իրականացվում է նույն կարգով, որով կատարվում է առաջին բժշկասոցիալական փորձաքննությունը՝ փորձաքննվողի հաշվառման կամ փաստացի բնակության վայրն սպասարկող հանձնաժողովի կողմից²⁹⁹: Փաստորեն, վերափորձաքննության ժամանակ կարող են ներգրավված լինել կամ նախնական որոշումը կայացնող նույն բժիշկները, կամ իրենց գործընկեր բժիշկները, և արդյունքում հաճախ անհնար է լինում բացառել գործընկեր բժիշկների կողմից քննվող գործերի անաչառությունն ու անկողմնակալ որոշում

²⁹⁹ ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 3-ի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 276-Ն որոշում

կայացնելը:

Առաջարկ. ուժեղացնել վերահսկողությունը ԲՄՓ ոլորտում կոռուպցիայի դեպքերի բացահայտման և իրավապահ մարմիններին փոխանցման, 2014 թվականի դեկտեմբերի 25-ին հաստատված հաշմանդամության սահմանման չափորոշիչների գործնականում կիրառման ապահովման նկատմամբ, ստեղծել վերափորձաքննության իրականացման արդյունավետ մեխանիզմ՝ ապահովելու որոշումների բողոքարկման օբյեկտիվությունն ու անաչառությունը:

2.2.6 2014 թվականի ընթացքում դեռևս շարունակել է չլուծված մնալ թափառաշրջիկ և մուրացիկ երեխաներին և նրանց ընտանիքներին երկարաժամկետ սոցիալական աջակցության և ծառայությունների տրամադրման, ինչպես նաև ապօրինի/հարկադիր աշխատող երեխաների հայտնաբերման և աջակցության հարցը:

Գրանցվել են բազմաթիվ դեպքեր, երբ երեխաները, լինելով կյանքի դժվարին պայմաններում, ինչպես նաև զրկված լինելով պատշաճ սոցիալական ապահովությունից, դուրս են մնացել կրթությունից և ընտանիքի սոցիալական բեռը թեթևացնելու նպատակով՝ ներգրավվել են մուրացիկության մեջ, ինչպես նաև տարբեր տեսակի, կյանքի և առողջության համար վտանգավոր, անօրինական աշխատանքներում: Խնդրի կապացույթամբ դեռևս 2013 թվականին Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ իր դիտողություններում մտահոգություն էր հայտնել ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն՝ նշելով, որ զգալի թվով երեխաներ, այդ թվում մինչև 14 տարեկան, լքում են դպրոցները՝ աշխատելու համար ոչ ֆորմալ ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը ավտոսպասարկումը, շինարարությունը, մետաղների թափոնների հավաքումը և ընտանեկան բիզնեսները³⁰⁰: Ինչպես նաև Կոմիտեն մտահոգություն է հայտնել, մուրացիկության մեջ ներգրավված երեխաների աճող թվի վերաբերյալ:³⁰¹ Նշվածը, մասնավորապես, պայմանավորված է նաև նրանով, որ մինչ օրս չեն մշակվել ապօրինի աշխատող երեխաների հայտնաբերման մեխանիզմներ, չեն հավաքվել հստակ վիճակագրական տվյալներ, և չի կատարվել իրավիճակի համալիր վերլուծություն³⁰²: Բացի դրանից՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված նման երեխաների հետ չեն իրականացվել ամենօրյա մասնագիտական աշխատանք, ինչպես նաև հսկողություն նրանց կյանքի, կենցաղային պայմանների նկատմամբ: Ըստ Նախարարության տվյալների՝ 2014 թվականի ընթացքում հաշվառվել է 8 մուրացիկ երեխա այն դեպքում, երբ Պաշտպանի աշխատակազմը ստանում է բազմաթիվ սահազանգեր հատկապես երեկոյան ժամերին մարդաշատ վայրերում ծնողի ուղեկցությամբ կամ միայնակ

³⁰⁰ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

³⁰¹ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

³⁰² 2013 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Երեխայի աշխատանքի վերաբերյալ հետազոտություն անցկացնելու նպատակով, դոնոր կազմակերպություններին ներկայացրել է ծրագրային առաջարկ, համաձայն որի՝ համապատասխան հայտ է ներկայացրել Աշխատանքի միջազգային կազմակերպությանը: Հայտը բավարարվել է, և 2014 թվականին ԱՄԿ կողմից իրենց իսկ մեթոդաբանությամբ սկսվել է հետազոտություն իրականացնելու նախնական փուլը:

մուրացկանությամբ զբաղվող երեխաների հայտնաբերման վերաբերյալ: Միննույն ժամանակ չեն մշակվել արդյունավետ մեխանիզմներ թե մուրացիկ երեխաների, թե ապօրինի աշխատող երեխաների իրավունքների խախտման կանխարգելման ուղղությամբ, ինչի արդյունքում ներկայումս գործող աջակցության ձևերը տրամադրվում են ընտանիքին/երեխային միայն համապատասխան դեպքի բացահայտումից հետո: Թեև ՀՀ ոստիկանությունը պարբերաբար աշխատանքներ է կազմակերպում շահագրգիռ գերատեսչությունների, տարածքային կառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների հետ մուրացիկ երեխաներին ուսուցման և զբաղվածության գործընթացներում ներգրավելու համար, նման երեխաները հաճախ վերադառնում են փողոց, քանի որ պետության կողմից չեն ապահովվում նրանց հիմնահարցերին երկարաժամկետ լուծումներ, այդ թվում՝ սոցիալական աջակցության միջոցով:

Առաջարկ. մշակել արդյունավետ միջոցներ՝ մուրացիկ և ապօրինի աշխատող երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-հոգեբանական երկարաժամկետ համալիր աջակցություն տրամադրելու ուղղությամբ, ինչպես նաև սահմանել մեխանիզմներ՝ երեխաների մուրացկանության և ոչ ֆորմալ/ կյանքի և առողջության համար վտանգավոր անօրինական աշխատանքներում ներգրավման դեպքերի բացահայտման և կանխարգելման համար:

2.2.7 2012 թվականից ի վեր Պաշտպանի կողմից բարձրաձայնվել և առ այսօր չի լուծվել խնամակալության և հոգաբարձության մարմնի գործունեության օրենսդրական հստակ կարգավորումների, ինչպես նաև վերահսկողության մեխանիզմի բացակայության խնդիրը:

Պաշտպանին հասցեագրված դիմումներում բազմիցս բարձրացվել է խնամակալության և հոգաբարձության մարմինների (ՀԽՄ) և նրանց առընթեր գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (ԽՀՀ) կողմից իրենց գործառույթների (երեխաների կյանքի հետազոտություններ, տնայցեր և այլն)³⁰³ ոչ պատշաճ իրականացման, մասնագիտական պատրաստվածության բացակայության, վերջիններիս գործունեության կարգի թերի օրենսդրական կարգավորման հարցը: Նշված բոլոր խնդիրները հանգեցրել են գործնականում ԽՀՄ-ների կողմից իրենց գործառույթների ոչ պատշաճ կատարմանը, իրենց համայնքում բնակվող ընտանիքների կյանքի պայմանների վերաբերյալ ոչ օբյեկտիվ եզրակացությունների տրամադրմանը: Այսպես, խնամակալության և հոգաբարձության մարմինը, ըստ Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցի³⁰⁴, պարտավոր է անցկացնել երեխայի, ինչպես նաև երեխայի դաստիարակությանը հավակնող անձի կյանքի հետազոտություն՝ պարբերաբար կազմակերպելով և կատարելով տնայցեր երեխաների բնակության վայր, հետազոտելով երեխաների կյանքի պայմանները:

³⁰³ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.09.2011 թվականի թիվ N69-Ա/1 հրամանի Հավելվածի 30-րդ կետ

³⁰⁴ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.09.2011 թվականի թիվ N69-Ա/1 հրամանի Հավելված

Մասնավորապես, այդ այցերի միջոցով ուսումնասիրվում են երեխաների հոգեբանական վիճակը, ծնողների վերաբերմունքը իր հետ բնակվող երեխաների նկատմամբ, նրանց ծնողավարման հմտությունները, երեխաների առաջադիմությունը և այլն³⁰⁵: Այնինչ, ԽՀՄ-ն հաճախ տրամադրում է եզրակացություն միայն մեկ տնային այցից հետո՝ առանց երեխայի կյանքի հանգամանքները համակողմանի և պատշաճ կերպով հետազոտելու՝ հաճախ հաշվի առնելով միայն գույքային պայմանները և ուշադրություն չդարձնելով երեխայի հոգեկան վիճակին, ծնողի վերաբերմունքին, ծնողավարման հմտությունների առկայությանը: Ավելին, ԽՀՀ-ների անդամները աշխատում են հասարակական հիմունքներով, իրենց կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան³⁰⁶, և վերջիններիս աշխատանքի նկատմամբ պատշաճ վերահսկողության բացակայության պայմաններում նրանց կողմից իրականացվող կամայականությունները հաճախակի բնույթ են կրում: Այս կապակցությամբ կարելի է նշել, որ վերջիններիս գործունեության արդյունավետությանը կարող են նպաստել ԽՀՀ անդամների՝ պարբերական բնույթ կրող մասնագիտական վերապատրաստումները, հաստիքների վճարովի դարձնելը, գործառույթների հստակեցումը և դրանց նկատմամբ հսկողության մեխանիզմների մշակումը: Ի դեպ, Նախարարությունից հայտնել են, որ 2014 թվականի ընթացքում ԽՀՀ անդամների մասնագիտական որևէ վերապատրաստում չի իրականացվել: Միաժամանակ, Նախարարությունը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ սկսել է իրականացնել երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների ծրագիր: Տվյալ ծրագրի շրջանակներում մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2014 թվականի նոյեմբերի 13-ին հաստատվել է ՀՀ կառավարության N 1273-Ն որոշումը³⁰⁷, որով նախատեսվում է որդեգրողի, խնամակալության և հոգաբարձության մեխանիզմների հստակեցում, որդեգրողի, խնամակալի (հոգաբարձուի) ու խնամատար ընտանիքներում խնամվող երեխաների խնամքի նկատմամբ վերահսկողության ապահովում օրենսդրական դաշտի կատարելագործման միջոցով³⁰⁸: Չնայած այս ոլորտում Նախարարության կողմից ձեռնարկված միջոցառումներին՝ 2014 թվականին շոշափելի առաջընթաց չի արձանագրվել ԽՀՄ-ի աշխատանքի արդյունավետության բարձրացման հարցում:

Առաջարկ. սահմանել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության հստակ իրավական կարգավորումներ, նախատեսել վճարովի հաստիքներ, պարբերաբար կազմակերպել մասնագիտական պատրաստածության դասընթացներ վերջիններիս անդամների համար, մշակել նրանց գործառույթների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ:

³⁰⁵ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ N164-Ն որոշման Հավելվածով հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրություն

³⁰⁶ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ N164-Ն որոշման Հավելվածով հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրություն, կետ 10

³⁰⁷ ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1273-Ն որոշում

³⁰⁸ ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1273-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների 8-րդ կետ

2.2.8 Պաշտպանի կողմից 2013 թվականին բարձրացվել էր մանկատան շրջանավարտների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանով ապահովված չլինելու հարցը, որը 2014 թվականի ընթացքում ևս չի լուծվել:

Տարիներ ի վեր մանկատան շրջանավարտները ստիպված են եղել սպասել հերթացուցակներում՝ օրենքով իրենց հասանելիք բնակարանները ստանալու համար, իսկ մինչ օրս ստացված բազմաթիվ բնակարաններ, նորմալ կենցաղային պայմանների բացակայության պատճառով, պիտանի չեն բնակության համար: Ավելին, արձանագրվել են դեպքեր, երբ մանկատան նախկին սաներն իրենք են հրաժարվել մարզերում իրենց հատկացված բնակարաններից՝ պատճառաբանելով, որ այնտեղ պայմաններ՝ չկան աշխատելու և սեփական ապրուստը հոգալու համար: Նշված խնդրի կապակցությամբ ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն դեռևս 2013 թվականին ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցների վերաբերյալ իր ամփոփոխյ դիտարկումներում³⁰⁹ նշել է, որ խնամքի հաստատություններից դուրս եկող երեխաների սոցիալական աջակցությունը շարունակում է մնալ անբավարար: Կոմիտեն առաջարկել է, որ պետությունը կրթության և աշխատանքի հնարավորություններ գտնելու հարցում համապատասխան աջակցություն ցուցաբերի այն երեխաներին, ովքեր լքում են խնամքի հաստատությունները, և, համապատասխանաբար, նրանց ապահովի բնակարաններով: Բայցևայնպես, Նախարարության կողմից չեն իրականացվել անհրաժեշտ և բավարար ծրագրեր՝ մանկատան երեխաներին բնակարանով ապահովելու ուղղությամբ: Մեկ այլ խնդիր կապված է մասնագիտացված մանկատների շրջանավարտներին բնակարանով ապահովելու հետ: Այսպես, մասնագիտացված հատուկ մանկատների հաշմանդամություն ունեցող սաները 18 տարեկանը լրանալուց հետո, համապատասխան կացարանների և խնամքի հաստատությունների բացակայության պատճառով, հաճախ ստիպված են եղել մնալ մանկատանը կամ տեղավորվել են նյարդահոգեբուժամական տուն-ինտերնատում կամ համապատասխան բժշկական հաստատությունում, ինչպես նաև ծերանոցներ: Այս կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող սոցիալապես անապահով և հատուկ խմբերին են դասվել նաև սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն չունեցող ինքնասպասարկման ապահովման ունակություն ունեցող մանկատան շրջանավարտները՝ անկախ հաշմանդամություն ունենալու հանգամանքից³¹⁰: Սակայն նշենք, որ չնայած օրենսդրական նման երաշխիքներին՝ վերջիններս ևս ստիպված են լինում տարիներով մնալ հերթացուցակում՝ հնարավորություն չունենալով անցնել բնականոն կյանքի և ինտեգրվել հասարակությանը: Համաձայն Նախարարության տվյալների՝ ներկայումս մանկատան 254 շրջանավարտներ ներառված են բնակելի տարածության կարիք ունեցող անձանց հերթացուցակում: Սակայն մինչ օրս նրանցից միայն 22-ն են ստացել բնակելի

³⁰⁹ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

³¹⁰ ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 894-Ն որոշմամբ հաստատված «Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց» ցանկ, կետ 1, ենթակետ 4

տարածություն ստանալու իրավունք: Ավելին, Նախարարության կողմից նշվել է, որ դեռևս չկան հստակ ժամկետներ առ այն, թե հերթացուցակում ընդգրկված այլ անձինք երբ են ստանալու իրենց հասանելիք բնակարանները, ինչպես նաև դեռևս ճշգրտվում են բնակելի տարածքի կարիք ունեցող անձանց ցուցակները և օգտագործման ենթակա շինությունները³¹¹: Այսպիսով, Նախարարության կողմից իրականացվող, մանկատան նախկին սաներին բնակարան տրամադրելու ծրագրերի անարդյունավետության հետևանքով մանկատների բազմաթիվ սաներ տարիներ շարունակ չեն ստացել իրենց հասանելիք բնակարանները:

Առաջարկ. ձեռնարկել անհապաղ միջոցներ՝ մանկատների շրջանավարտներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցողներին անձանց, բնակելի տարածքներով ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև սոցիալական բնակարանային ֆոնդի ընդլայնման ժամանակ հաշվի առնել նրանց կարիքները և հասարակությանն ինտեգրվելու անհրաժեշտությունը:

2.2.9 Օրենսդրական փոփոխությունների արդյունքում նվազել է մի շարք կենսաթոշակատուների մահվան դեպքում նրանց ընտանիքի անդամներին վճարվող թաղման նպաստի չափը:

Պաշտպանը ստացել է դիմում-բողոքներ առ այն, որ որոշ խմբերում ընդգրկված կենսաթոշակատուների (նախկին զինծառայողներ, դատախազներ) մահվան դեպքում վճարվող թաղման նպաստը տարբեր ժամանակաշրջաններում կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում էապես նվազել է: Այսպես, մինչ օրենսդրական փոփոխությունների իրականացումը թաղման նպաստի չափ սահմանված է եղել կենսաթոշակի 15-ապատիկի չափով³¹², իսկ աշխատանքային և սոցիալական կենսաթոշակատուների մահվան դեպքում տրվող թաղման նպաստի չափը սահմանված է եղել հիմնական կենսաթոշակի 25-ապատիկի չափով³¹³: Այնինչ, 2010 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել էր³¹⁴, որ մինչև 2010 թվականի նոյեմբերի 1-ը կենսաթոշակատուի մահվան, ինչպես նաև հաշմանդամ ճանաչված նախկին զինծառայողի՝ հաշմանդամության վերափորձաքննության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, վերափորձաքննության չներկայանալու և մահանալու դեպքում նրա ընտանիքին վճարվում է թաղման նպաստ՝ նրա կենսաթոշակի 15-ապատիկի չափով: Իսկ ծառայությունից սահմանված կարգով արձակված (ազատված), ինչպես նաև

³¹¹ Թեև 2014թ. դեկտեմբերին շահագործման են հանձնվել Երևանի Թբիլիսյան խճուղի 3/14 հասցեում գտնվող Սոցիալական բնակարանային ֆոնդի շենքի բնակարանները, դրանցից միայն 21 բնակարան է հանձնվել մանկական խնամակալան կազմակերպությունների շրջանավարտներին և առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին:

³¹² «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՕ-258 ՀՀ օրենք

³¹³ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՕ-519-Ն օրենք

³¹⁴ ՀՀ Կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 707-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 1392-Ն որոշում

բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացնող իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված և կենսաթոշակի իրավունք ձեռք բերած, սակայն կենսաթոշակ նշանակելու համար չդիմած և ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց (ազատվելուց) կամ հաշմանդամությունը հաստատվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, մահացած նախկին զինծառայողների ընտանիքների անդամներին վճարվում է թաղման նպաստ՝ բազային կենսաթոշակի 75-ապատիկի չափով: Հետագայում ՀՀ կառավարության կողմից 2010 թվականին ընդունվել են այլ կարգավորումներ³¹⁵. այն է՝ կենսաթոշակատուի մահվան դեպքում վճարվող թաղման նպաստի չափը սահմանվել է 200.000 դրամ: Այսպիսով, կատարված փոփոխությունների արդյունքում փաստացի նվազել է որոշ կենսաթոշակատուների (օրինակ՝ նախկին դատախազների) մահվան դեպքում նրանց ընտանիքի անդամներին վճարվող թաղման նպաստի չափը՝ յուրաքանչյուր դեպքում սահմանելով կոնկրետ 200.000 դրամ՝ հաշվի չառնելով նախկինում վճարվող կենսաթոշակի տեսակը և չափը: Նախարարությունից տվյալ խնդրի կապակցությամբ հայտնել են, որ կենսաթոշակատուի մահվան կապակցությամբ տրվող թաղման նպաստին առնչվող իրավահարաբերությունները ծագում են (նախկին օրենսդրությամբ՝ ծագել են) կենսաթոշակատուի մահվան դեպքում, իսկ ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանվել է, որ եթե զինվորական կենսաթոշակատուն մահացել է մինչև 2010 թվականի նոյեմբերի 1-ը (մինչև փոփոխությունները), ապա թաղման նպաստը վճարվում է նախկին օրենսդրությամբ սահմանված չափով: Ըստ այդմ, խնդրո առարկա փոփոխությունները տարածվել են 2010 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա, և դրանց հետադարձ ուժ չի տրվել: Այնինչ, մինչև Կառավարության կողմից թաղման նպաստի նոր չափ սահմանելը համապատասխան անձինք ունեին մահվան դեպքում համապատասխան չափի թաղման նպաստի լեգիտիմ ակնկալիք, քանի որ օրենքը նախատեսում էր տվյալ իրավահարաբերությունների առաջացում անձի կենսաթոշակային տարիքը լրանալուն պես³¹⁶՝ անկախ այն հանգամանքից՝ կենսաթոշակատուն մահացել է 2010 թվականի նոյեմբերի 1-ից առաջ, թե հետո: Նշենք, որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն³¹⁷: Միաժամանակ, Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում³¹⁸, այդ թվում՝ կենսաթոշակային հարաբերությունները կարգավորող նորմերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներով բազմիցս արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ հաղորդելու անթույլատրելիությունը: Սահմանադրական դատարանը կարևորել է այն հանգամանքը, որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման

³¹⁵ ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի «Հիմնական կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը և թաղման նպաստի չափը սահմանելու մասին» թիվ 1734-Ն որոշում

³¹⁶ «Պետական կենսաթոշակների մասին» օրենք, հոդված 44

³¹⁷ ՀՀ Սահմանադրություն, հոդված 42, պարբերություն 3, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 78, մաս 1, պարբերություն 2

³¹⁸ ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000

սկզբունքը իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու անձի լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը, և որ անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկն է: Ըստ Սահմանադրական դատարանի՝ այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Ուստի, Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերով³¹⁹: Այնինչ, նշյալ դեպքում զինձատայող կենսաթոշակատուների և մի շարք այլ կենսաթոշակատուների նկատմամբ հետադարձությամբ կիրառվել է վերջիններիս վիճակը վատթարացնող իրավական նորմ:

Առաջարկ. մշակել օրենսդրական փոփոխություններ, որպեսզի թաղման նպաստի նոր սահմանված չափը տարածվի միայն 2010 թվականի նոյեմբերի 1-ից հետո կենսաթոշակի իրավունք ստացած անձանց նկատմամբ:

2.2.10 Իրավական ակտերի միջև հակասության հետևանքով Նախարարության կողմից ոչ իրավաչափորեն սահմանափակվել է մի շարք քաղաքացիների՝ օրենքով հասանելիք արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունքը:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներով բարձրացվել է այն խնդիրը, որ Նախարարի 2012 թվականի N66 Հրամանի հիման վրա համատեղությամբ աշխատած մի շարք քաղաքացիներ զրկվել են արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունքից³²⁰: Նշվածն ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին: Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է (թիվ 1 ցուցակով) 55 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 15 օրացուցային տարին աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք³²¹: ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքային ժամանակից դուրս, միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային

³¹⁹ ՄԴ-ն իր ՄԴՈ-723 որոշմամբ նշել էր, որ եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն՝ երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը:

³²⁰ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի N 66 Հրաման, կետ 17

³²¹ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, հոդված 10

պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է³²²: Նշվածից բխում է, որ անձը կարող է ունենալ լրիվ աշխատանքային օրով հիմնական աշխատանք, ինչպես նաև համատեղությամբ, հիմնական աշխատանքային ժամանակից դուրս կատարել այլ աշխատանք: Մտացվում է, որ Նախարարի N66 հրամանը սահմանափակում է արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձի նշված իրավունքը՝ չնայած դա չի բխում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքից, որն ունի ավելի բարձր իրավաբանական ուժ: Այնինչ, ՀՀ Սահմանադրության³²³ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի³²⁴ համաձայն՝ բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները: Հետևաբար, նշյալ դեպքերում Նախարարությունը քաղաքացու համար արտոնյալ պայմաններով կենսաթոշակ սահմանելիս պետք է առաջնորդվի ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով, այլ ոչ թե Նախարարի N66 Հրամանով:

Առաջարկ. միջոցներ ձեռնարկել Նախարարի 2012 թվականի N66 Հրամանում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու ուղղությամբ՝ տվյալ հրամանը «Պետական կենսաթոշակների մասին» և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

2.2.11 Պետական և մասնավոր հատվածներում համատեղությամբ աշխատողներից կատարվում է սոցիալական վճարի կրկնակի գանձում, ինչի արդյունքում մի շարք մասնագետներ ստիպված են եղել հրաժարվել պետական աշխատանքից:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներով բարձրացվել է այն խնդիրը, որ պետական և մասնավոր հատվածներում համատեղությամբ աշխատողներից կատարվում է սոցիալական վճարի կրկնակի գանձում: Այսպես, 2014 թվականին ՀՀ սահմանադրական դատարանի կողմից «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ հակասահմանադրական ճանաչվեցին³²⁵, ինչից հետո օրենքում կատարվեցին մի շարք փոփոխություններ: Արդյունքում, մինչև 2017 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու իրավունք է տրվում միայն մասնավոր հատվածում աշխատող անձանց, իսկ պետական հատվածի աշխատողներին նման իրավունք չի վերապահվում³²⁶: Սակայն նշված նորմի կիրառման ժամանակ խնդիրներ են առաջանում պետական և մասնավոր հատվածներում համատեղությամբ աշխատողների համար, քանի որ նրանց երկու աշխատավայրի աշխատավարձերից կատարվում է սոցիալական վճարի կրկնակի գանձում: Արդյունքում, օրինակ, մի շարք պետական բուհերում և մասնավոր

³²² ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 99
³²³ ՀՀ Սահմանադրության, հոդված 83.5, մաս 2
³²⁴ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 4
³²⁵ 2014 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1142
³²⁶ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, հոդված 81

ընկերություններում համատեղությամբ աշխատող մոտ 30 դասախոսներ ստիպված եղան հրաժարվել ԲՈՒՀ-ում դասավանդելուց, քանի որ ֆինանսական դժվարություններ ունեցան կրկնակի սոցիալական վճարի գանձման հետևանքով: Հատկանշական է, որ ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ին կայացած նիստում Կրթության և գիտության նախարարության առաջարկով, որոշում ընդունվեց «Երևանի պետական համալսարան» և «Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ները վերակազմակերպել հիմնադրամների, ինչի արդյունքում անուղղակիորեն լուծվեց նաև այդ ԲՈՒՀ-երում համատեղությամբ աշխատող դասախոսներից սոցիալական վճարի կրկնակի գանձման հարցը: Այնուամենայնիվ, ԲՈՒՀ-երի կարգավիճակի փոփոխումը տեղի է ունեցել սոցիալական վճարներ կատարելուց հրաժարվելու համար դիմում ներկայացնելու վերջնաժամկետից ընդամենը օրեր առաջ, ինչի հետևանքով որոշ դասախոսներ չեն կարողացել ներկայացնել համապատասխան դիմումները: Փաստորեն, ՀՀ-ում առկա պետական ԲՈՒՀ-երից ընդամենը երկուսում է լուծվել համատեղությամբ աշխատողների սոցիալական վճարի խնդիրը, ինչը վկայում է, որ խնդրի լուծման ընտրված տարբերակը իրավիճակային է և համակարգային լուծում չի տրամադրում բոլոր մնացած պետական հիմնարկներում աշխատող անձանց:

Առաջարկ. **ձեռնարկել օրենսդրական փոփոխություններ՝ պետական և մասնավոր հատվածներում համատեղությամբ աշխատող անձանց աշխատավարձից սոցիալական վճարների կրկնակի գանձումը բացառելու նպատակով:**

2.2.12 Պաշտպանի կողմից 2013 թվականին բարձրաձայնվել և մինչ օրս չի լուծվել գործազրկության նպաստի վերականգնման խնդիրը, մինչդեռ այդ նպաստի վերացումը հակասում է Հայաստանի միջազգային պարտավորություններին:

Բազմաթիվ քաղաքացիներ, հասարակական կառույցներ մտահոգություն են հայտնել առ այն, որ 2014 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով վերացվել է գործազրկության նպաստի ինստիտուտը, որին փոխարինում են Նախարարության «ակտիվ» ծրագրերը (աշխատանք փնտրողների վերապատրաստում, աշխատանք փնտրելու ծախսերի փոխհատուցում, աշխատանքային տոնավաճառներ և այլն): Այնինչ, գործազրկության նպաստի վերացումը չի բխում սոցիալական պետության սկզբունքներից, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից: Այսպես, ՀՀ Սահմանադրության համաձայն³²⁷՝ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Միաժամանակ, Սահմանադրության մեկնաբանություններում նշվում է, որ սոցիալական պետությունը սոցիալական օգնություն է մատուցում գործազուրկներին, այդ թվում՝ նաև գործազրկության և այլ նպաստների սահմանման միջոցով:³²⁸ Ուստի, Սահմանադրությամբ ամրագրված սոցիալական ապահովություն, սոցիալական

³²⁷ Սահմանադրություն, հոդված 37

³²⁸ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի), Եր. «Իրավունք», 2010 թվական

պետություն եզրույթները ենթադրում են նաև պետության կողմից գործազրկության նպաստի տրամադրման պարտավորություն: Բացի դրանից՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվել է նաև, որ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները³²⁹: Պետության կողմից անձի սոցիալական ապահովության պարտավորություն է նախատեսված նաև ՀՀ կողմից վավերացված Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում³³⁰: Ընդ որում, ՀՀ կողմից Խարտիայի կիրառման վերաբերյալ Սոցիալական իրավունքների Եվրոպական Կոմիտեի 2013 թվականի Եզրակացություններում³³¹ առանձնակի շեշտվել է, ի թիվս այլ գործողությունների, գործազրկության նպաստի տրամադրման պարտավորությունը: Տվյալ զեկույցում արձանագրվել է նաև, որ Խարտիայի իմաստով սոցիալական ապահովության իրավունքը ենթադրում է պետության կողմից այնպիսի սոցիալական ապահովության համակարգի ներդնում, որը կպաշտպանի ավանդական ռիսկերից՝ հետևաբար, նախատեսելով նաև անձանց գործազրկության նպաստի տրամադրումը: Այսինքն, մեկնաբանելով Հայաստանի համար պարտադիր իրավաբանական ուժ ունեցող Խարտիայի իրավական բովանդակությունը՝ Կոմիտեն գործազրկության նպաստի տրամադրումը դիտարկում է որպես Խարտիայով ՀՀ ստանձնած պարտավորություն: Ավելին, նման պարտավորություն է նախատեսված նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածով, որն ամրագրում է սոցիալական ապահովության յուրաքանչյուր մարդու իրավունքը: Ըստ նշյալ հոդվածի Ընդհանուր մեկնաբանության՝ «բացի լիարժեք, արդյունավետ և ազատորեն ընտրված զբաղվածության խթանումից (...) աշխատանքը կորցնելու դեպքում անձին պետք է վճարվի համապատասխան գործազրկության նպաստ»³³²: Այսպիսով, գործազրկության նպաստի ամբողջական վերացումը չի բխում ՀՀ Սահմանադրությունից ու ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից և խախտում է անձի սոցիալական ապահովության իրավունքը:

Առաջարկ. վերականգնել պետության կողմից գործազուրկ անձանց տրամադրվող գործազրկության նպաստի ինստիտուտը:

2.2.13 Օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով շարունակում է չլուծված մնալ աշխատողների՝ գործադուլի իրավունքի սահմանափակման խնդիրը, որը Պաշտպանի կողմից բարձրացվել է նաև 2013 թվականի տարեկան զեկույցում:

Չնայած ՀՀ Սահմանադրությամբ աշխատողի գործադուլի իրավունքի ամրագրմանը³³³՝ օրենսդրական բացի հետևանքով աշխատողները կարող են իրականացնել իրենց գործադուլի իրավունքը միայն *կոլեկտիվ աշխատանքային վեճի* առկայության

³²⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 43, պարբերություն 2

³³⁰ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, հոդված 12

³³¹ http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

³³² Թիվ 19 Ընդհանուր մեկնաբանություն <http://bit.ly/18O5hmH>

³³³ ՀՀ Սահմանադրություն, հոդված 32

դեպքում³³⁴, ինչը գործնականում սահմանափակում է գործադուլի իրավունքի իրացման հնարավորությունը: Այսպես, ՀՀ Սահմանադրությամբ աշխատողներն իրենց *տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի* պաշտպանության նպատակով ունեն գործադուլի իրավունք: Այնինչ, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է³³⁵, որ գործադուլը կոլեկտիվ աշխատանքային վեճի լուծման նպատակով մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի լրիվ կամ մասնակի ժամանակավոր դադարեցումն է: Այսինքն, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը գործադուլի իրավունքի իրացումը պայմանավորում է միայն կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայությամբ՝ անտեսելով աշխատողների՝ Սահմանադրությամբ երաշխավորված տնտեսական և սոցիալական շահերի պաշտպանության նպատակով գործադուլի իրավունքը: Նշված նեղ մեկնաբանությունը խնդրահարույց է ոչ միայն Սահմանադրության, այլև Հայաստանի միջազգային պարտավորությունների տեսանկյունից³³⁶: Հավելենք նաև, որ Սահմանադրական դատարանը, մեկնաբանելով աշխատողների գործադուլի իրավունքը, շեշտել է, որ վերջինս առնչվում է ոչ միայն «աշխատողներ-գործատու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ-երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ-պետական մարմիններ», «գործատու-պետական մարմիններ» փոխհարաբերություններին³³⁷: Ուստի, առկա է օրենսդրական բաց, որը գործնականում կարող է գործադուլի միջոցով սոցիալական և տնտեսական աշխատանքային շահերի պաշտպանության երաշխիքի սահմանափակման պատճառ դառնալ:

Առաջարկ. մշակել օրենսդրական փոփոխություններ՝ վերացնելու աշխատողների գործադուլի անցկացումը միայն կոլեկտիվ աշխատանքային վեճով պայմանավորող սահմանափակումը:

2.2.14 Նվազագույն ամսական աշխատավարձի հաշվարկի հիմքում չի դրվել նվազագույն սպառողական զամբյուղը, ինչի արդյունքում նվազագույն աշխատավարձով աշխատողները չեն կարողանում հոգալ իրենց առաջնահերթ կարիքները:

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում 2013թ. դեկտեմբերի 12-ին կատարված փոփոխության արդյունքում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 50.000 դրամ³³⁸: Մինչդեռ, ըստ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների՝ 2014թ. չորրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով նվազագույն սպառողական զամբյուղի չափը ամսական կտրվածքով կազմել է մոտ 57.9

³³⁴ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 73, մաս 1

³³⁵ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 73, մասեր 1 և 2

³³⁶ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, հոդված 8, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, մաս 2, հոդված 6

³³⁷ ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի փետրվարի 7-ի թիվ ՍԴՈ-677

³³⁸ Նշված փոփոխությունն ուժի մեջ էր մտել 2014 թվականի հուլիսի 1-ին, իսկ մինչ այդ՝ 2014 թվականի սկզբին, նվազագույն աշխատավարձը սահմանված էր 45,000 դրամ:

հազար դրամ, իսկ պարենային զամբյուղի չափը ամսական կտրվածքով՝ 32.7 հազար դրամ³³⁹:

Ըստ Ազգային վիճակագրության ծառայության տվյալների՝

2014թ.				
	առաջին եռամսյակ ³⁴⁰ /հազար/	երկրորդ եռամսյակ ³⁴¹ /հազար/	երրորդ եռամսյակ ³⁴² /հազար/	չորրորդ եռամսյակ ³⁴³ /հազար/
նվազագույն սպառողական զամբյուղի արժեք (ամսական կտրվածքով)	58.4	59.1	56.6	57.9
պարենային զամբյուղի արժեք (ամսական կտրվածքով)	32.9	33.4	31.9	32.7

Այսինքն, թեև նվազագույն աշխատավարձի չափը համապատասխանել է ամսական պարենային զամբյուղի չափին, սակայն նվազագույն ամսական աշխատավարձը դեռևս չի համապատասխանել ամսական կտրվածքով սպառողական զամբյուղի արժեքի արժեքին: Արդյունքում նվազագույն ամսական աշխատավարձը չի բավարարում աշխատողների նվազագույն կարիքները բավարարելուն:

Առաջարկ. միջոցներ ձեռնարկել՝ նվազագույն աշխատավարձի հաշվարկման հիմքում դնելու նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը:

2.2.15 Պաշտպանի կողմից 2013 թվականին բարձրացվել և դեռևս չի կարգավորվել լուծարված կազմակերպություններում աշխատանքի ժամանակ դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման բացակայության խնդիրը:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում քաղաքացիներն իրենց մտահոգությունն են հայտնել առ այն, որ 2004 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում³⁴⁴

³³⁹ http://armstat.am/file/article/sv_12_14a_6200.pdf

³⁴⁰ http://armstat.am/file/article/sv_03_14a_6200.pdf

³⁴¹ http://armstat.am/file/article/sv_06_14a_6200.pdf

³⁴² http://armstat.am/file/article/sv_09_14a_6200.pdf

³⁴³ http://armstat.am/file/article/sv_12_14a_6200.pdf

³⁴⁴ ՀՀ կառավարության 2004թ.-ի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշմամբ՝ ուժը կորցրել է ՀՀ կառավարության 1992թ.-ի նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշմամբ հաստատված կանոնների 16-րդ կետը, այն է՝ կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման

բազմաթիվ քաղաքացիներ զրկվել են աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքից այն դեպքում, երբ պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո: Մինչդեռ, ՀՀ կողմից վավերացված «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925 թվականի Կոնվենցիան սահմանում է, որ ազգային օրենսդրությամբ պետք է նախատեսվեն այնպիսի կարգավորումներ, որոնք պատահարից տուժածներին կամ մահվան դեպքում նրանց խնամքի տակ գտնվող անձանց կապահովեն համապատասխան փոխհատուցման վճարում, եթե նման վճարում գործատուն կամ ապահովագրողն ի վիճակի չէ կատարել: Հարցին իրավական կարգավորում տալու համար 2009 թվականի ՀՀ կառավարության թիվ 914-Ն որոշմամբ սահմանվել է միայն վերոնշյալ որոշման ընդունումից հետո սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը, սակայն լուծում չի տրվել մինչ այդ իրավաբանական անձանց գործունեության դադարեցման դեպքում պարտավորությունների մարման հարցին: 2011 թվականի ընթացքում մշակվել է «ՀՀ-ում արտադրական դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից ապահովագրության ներդրման» հայեցակարգ, որն, ըստ Նախարարության տվյալների, գտնվում է ՀՀ կառավարության աշխատակազմում: Միաժամանակ, «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» 1992 թվականի Կոնվենցիայի³⁴⁵ համաձայն՝ գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանությունն իրականացնում են երաշխիքային հաստատությունները: Նշենք, սակայն, որ ըստ Նախարարության հայտնած տվյալների՝ Կառավարությունը ձեռնպահ է մնում երաշխիքային հաստատությունների միջոցով աշխատողների պահանջների բավարարման մեխանիզմների ներդրումից՝ պատճառաբանելով, որ երաշխիքային հաստատությունների ստեղծումը գործատուների ֆինանսական բեռի ավելացման պատճառ կդառնա, քանի որ գործատուները պետք է որոշակի մասհանումներ կատարեն երաշխիքային հաստատություններին: Տվյալ մոտեցումը խոչընդոտում է խնդրի լուծմանը, քանի որ դեռևս ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված չէ իրավահաջորդի բացակայության դեպքում վնասի հատուցում կատարելու պարտականություն կրող կազմակերպություն կամ հատուցման որևէ համակարգ: Այսպիսով, դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու կարգի բացակայության արդյունքում մի շարք քաղաքացիներ, որոնց գործատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո, զրկվում են իրենց հասանելի փոխհատուցումը ստանալու իրավունքից այն դեպքում, երբ

դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին: ³⁴⁵ ՀՀ համար ուժի մեջ է մտել 18.05.2006 թվականին:

պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո:

Առաջարկ. սահմանել աշխատանքի վայրում աշխատողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը (դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների դեպքում) հատուցելու հստակ կարգ գործատուի կազմակերպության լուծարված լինելու դեպքում:

2.2.16 Գործատու կազմակերպությունից կենսաթոշակ ստանալու համար՝ համապատասխան տեղեկանք ներկայացնելու պահանջի արդյունքում՝ լուծարված կազմակերպությունների աշխատակիցները չեն կարողանում ձեռք բերել անհրաժեշտ տեղեկանքը և զրկվում են արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունքից:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներով արտոնյալ կենսաթոշակի իրավունք ունեցող մի շարք քաղաքացիներ հայտնել են, որ իրենց նախկին գործատու-կազմակերպության լուծարման և դրա իրավահաջորդի բացակայության դեպքում չեն կարողացել ձեռք բերել աշխատանքային ստաժը հաստատելու համար արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթի մասին բավարար տվյալներ պարունակող տեղեկանք: Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող, ՀՀ կառավարության սահմանած այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով: Սակայն ՀՀ կառավարության որոշման³⁴⁶ համաձայն՝ եթե աշխատանքային գրքույկում չկան արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթի մասին բավարար տվյալներ, ապա աշխատանքի բնույթը հաստատվում է կազմակերպության տված, արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի մասին տեղեկանքով: Նշենք, սակայն, որ համապատասխան կազմակերպության կողմից տրված տեղեկանքի առկայության անհրաժեշտությունը սահմանափակում է քաղաքացիների՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունքը, քանի որ գործատու-կազմակերպության լուծարման դեպքում նույն տեղեկատվությունը կարող է հաստատվել նաև արխիվային տեղեկանքով: Արտոնյալ կենսաթոշակ ստանալու իրավունքի նմանատիպ սահմանափակումը չունի որևէ օբյեկտիվ հիմնավորում և չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից: «Բավարար» եզրույթի սահմանումը արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթի մասին տվյալների ցանկի հստակեցման հիմք չէ, սակայն այն հնարավորություն է տալիս պետական մարմնին աշխատանքային գրքույկում առկա տվյալները գնահատել ոչ բավարար և անձին զրկել արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունքից: 2014 թվականին Նախարարությունից հայտնել էին, որ շրջանառության մեջ է ՀՀ

³⁴⁶ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշում, N 2 հավելված, կետ 39, <http://www.arlis.am/documentview.aspx?docid=92207>

կառավարության համապատասխան որոշման³⁴⁷ մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշման նախագիծը, որի շրջանակներում կհստակեցվի խնդրո առարկա «բավարար» եզրույթի կիրառական նշանակությունը, սակայն խնդիրն առ այսօր մնում է չլուծված՝ գործնականում հանգեցնելով բազմաթիվ քաղաքացիների՝ կենսաթոշակ ստանալու իրավունքի սահմանափակման:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ սահմանված, աշխատավայրից տեղեկանքի ներկայացման պահանջի վերացման՝ այն դեպքերում, երբ համապատասխան ընկերությունը լուծարվել, և սահմանված «բավարար» եզրույթի հստակեցման ուղղությամբ:

³⁴⁷ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշում

2.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- 2013 թվականի Պաշտպանի տարեկան զեկույցում առաջարկվել էր սոցիալապես անապահով ուսանողների ուսման վարձի վճարման ժամկետը հետաձգել մինչև ուսումնական տարվա կեսը կամ ավարտը: Ուսման վարձի վճարման ժամկետը հետաձգելու խնդրանքով 2014 թվականի ընթացքում Նախարարությանը դիմել են շուրջ 1400 սոցիալապես անապահով ուսանողներ և նրանց բոլորին ուսման վարձը մաս-մաս վճարելու հնարավորություն է տրվել:
- Ներդրվել է ուսանողների սոցիալական աջակցության փաթեթը, ըստ որի՝ ուսանողի բարձր առաջադիմության և սոցիալական խմբի հիման վրա ԲՈԻՀ-ը իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում³⁴⁸:
- Ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը, որով հանրակրթական համակարգում անցում է կատարվել համընդհանուր ներառման՝ հանրակրթությունը հասանելի դարձնելով բոլոր երեխաների համար:
- Հայաստանի ԲՈԻՀ-երում սովորող ԼՂՀ-ում, Վրաստանի որոշ նահանգներում գրանցված և բնակվող հայազգի, ՀՀ փախստական ճանաչված և ապաստան ստացած ծագումով հայ քաղաքացիների համար սահմանվել է ուսման վարձավճարի նույն չափը, որը վճարում է համանման պայմաններում սովորող ՀՀ քաղաքացին³⁴⁹:
- Նախարարությունը բացահայտել է մի շարք հատուկ դպրոցներում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող բազմաթիվ երեխաներ, որոնք մինչև 2014-2015 ուսումնական տարվա ավարտը կտեղափոխվեն հանրակրթական ուսումնական հաստատություններ:

³⁴⁸ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին 2014 թվականի մայիսի 19-ին ընդունված ՀՀ օրենք

³⁴⁹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91344>,

Առկա թերություններն ու խնդիրները

2.3.1 Միջնակարգ կրթության որակն անբավարար է, քանի որ դպրոցների միջև կան կրթական որակի էական տարբերություններ, ուսուցիչների կողմից հաճախ առարկաները պատշաճ չեն դասավանդվում, դպրոցներում առկա է համապատասխան կադրերի պակաս, դասարանները գերբեռնված են, որոշ դասագրքեր դժվարամատչելի են աշակերտների համար:

Բազմաթիվ աշակերտներ, ծնողներ ու փորձագետներ պարբերաբար բարձրաձայնում են միջնակարգ կրթության անբավարար որակի խնդրի մասին, որի պատճառներից են կրթության անհամաչափ զարգացումը, տարբեր դպրոցներում կրթության որակի կտրուկ տարբերությունները, ցածր վարձատրվող ուսուցիչների կողմից առարկաների ոչ պատշաճ դասավանդումը, համապատասխան որակավորում ունեցող ուսուցիչների պակասը որոշ դպրոցներում, դասարանների բարձր խտությունը: Այսպես, միջնակարգ կրթության անհամաչափ ու անհավասար զարգացումը հանրապետության տարածքում հանգեցրել է կրթության որակի էական վատթարացմանը որոշ դպրոցներում: Որակի տարբերություններ առկա են ինչպես հանրակրթական պետական դպրոցների, այնպես էլ մասնավոր վճարովի և պետական անվճար դպրոցների միջև: Նման տարբերությունների արդյունքում հարուստ ընտանիքների, պաշտոնատար անձանց երեխաները կենտրոնացել են մասնավոր կամ պետական, այսպես կոչված, «էլիտար» դպրոցներում, իսկ մյուսները՝ սովորական՝ համեմատաբար ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող դպրոցներում: Կրթության որակի անհամաչափություն է նկատվել նաև քաղաքային և գյուղական համայնքների դպրոցների միջև: Օրինակ՝ տարբեր գյուղական համայնքներում ավագ դպրոցների բացակայության հետևանքով գյուղաբնակ երեխայի կրթական մակարդակը զիջում է քաղաքաբնակ երեխայի մակարդակին, քանի որ տարբեր առարկաներ ավագ դպրոցներում դասավանդվում են ավելի խորացված³⁵⁰: Արդյունքում, գյուղական համայնքների աշակերտները չեն կարողացել կառավարության ծրագրին համապատասխան ավագ դպրոցում անցում կատարել կրեդիտային համակարգին:³⁵¹ Նշենք, որ ՀՀ կողմից վավերացված ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը (Հոդված 13) ամրագրում է, որ միջնակարգ կրթությունն իր զանազան ձևերով պետք է լինի բաց և մատչելի բոլորի համար: ՄԱԿ-ի համանուն Կոմիտեն իր N13 ընդհանուր մեկնաբանությամբ պարզաբանել է, որ կրթության ձևն ու բովանդակությունը, այդ թվում ծրագիրն ու դասավանդման մեթոդները, պետք է ընդունելի (օրինակ, *պատշաճ որակի, ակտուալ* և *այլն*) լինեն աշակերտների, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ծնողների համար³⁵²: Նույն մեկնաբանությամբ նշվում է, որ միջնակարգ կրթությունը պետք է նախապատրաստի աշակերտներին մասնագիտական և բարձրագույն կրթության

³⁵⁰ <http://bit.ly/1GPtows>

³⁵¹ [http://ewebapps.worldbank.org/apps/ip/PanelCases/94%20-%20Eligibility%20Report%20and%20Recommendation%20\(English\).pdf](http://ewebapps.worldbank.org/apps/ip/PanelCases/94%20-%20Eligibility%20Report%20and%20Recommendation%20(English).pdf)

³⁵² <http://www.refworld.org/docid/4538838c22.html>

համար, իսկ «բոլորի համար մատչելի» միջնակարգ կրթության ապահովումը (Հոդված 13, բ) ենթադրում է, որ *պետության ողջ տարածքում միջնակարգ կրթությունը պետք է հավասարապես հասանելի լինի բոլորի համար*: Այսպիսով, միջնակարգ կրթության որակի անհամաչափ զարգացման արդյունքում երեխաների մի մասի համար հասանելի չէ և չի ապահովվում մատչելի ու պատշաճ որակի միջնակարգ կրթություն, ինչը հակասում է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի պահանջներին: Առհասարակ, միջազգային փորձը ցույց է տալիս, որ դպրոցների միջև որակի տարբերություններն ու միջնակարգ կրթության անհամաչափ զարգացումը կարող է հետագայում հանգեցնել հասարակականության մեջ սոցիալական բևեռացման մեծացմանն ու աղքատության սրացմանը: Բացի դրանից՝ ստացվել են բողոքներ՝ կապված ուսուցիչների կողմից իրենց աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, դասերը մասնակցային ձևով չվարելու, երեխայի գիտելիքները օբյեկտիվ չստուգելու ու գնահատելու հետ: Առհասարակ, ցածր վարձատրվող ուսուցիչները (միջինում 60-80 հազար դրամ) դասապրոցեսի ընթացքում հաճախ դիտավորյալ լիարժեք չեն դասավանդում իրենց առարկան, հատկապես քննական առարկաները, որպեսզի աշակերտները գիտելիքի բացը լրացնելու նպատակով ստիպված լինեն հաճախել վճարովի արտադասարանական պարապմունքների³⁵³: Միաժամանակ, մի շարք դպրոցներում գրանցվել է համապատասխան որակավորում ունեցող կոմպետենտ ուսուցիչների պակաս³⁵⁴: Այսպես, տվյալ խնդրի վերաբերյալ դեռևս 2012 թվականին կատարված հետազոտության ժամանակ 450 հարցված աշակերտից 126-ը նշել են, որ ունեն 1-ից 2 ուսուցիչ, ովքեր միաժամանակ դասավանդում են մի քանի առարկա, իսկ 148 աշակերտի պնդմամբ՝ միաժամանակ մի քանի առարկա են դասավանդում 3-ից 4 ուսուցիչներ³⁵⁵: Ավելին, Նախարարության հայտնած տվյալների համաձայն՝ հանրապետության բազմաթիվ դպրոցներում աշխատում են համապատասխան մասնագիտական որակավորում չունեցող ուսուցիչներ³⁵⁶: Ծնողների, ոլորտի փորձագետների պնդմամբ՝ ուսուցիչների կողմից իրենց մասնագիտական պարտականությունները պատշաճ չկատարելու, դպրոցներում կադրերի անհամապատասխանատվության պատճառով հանրակրթական դպրոցում երեխային տրված գիտելիքները չեն բավարարում ԲՈՒՀ ընդունվելու համար, և վերջիններս ստիպված են լինում ընդունելության քննությունների նախապատրաստման համար հաճախել մասնավոր պարապմունքների, դիմել կրկնուսույցների և այլ լրացուցիչ ծախսեր կրել: Այս խնդրի պատճառով ավելի խոցելի են դառնում սոցիալապես անապահով ընտանիքները, քանի որ վերջիններս հնարավորություն չունեն իրենց դիմորդ երեխաներին ուղարկել մասնավոր

³⁵³ <http://bit.ly/1wU01Jf>

³⁵⁴ <http://bit.ly/1GPtows>

³⁵⁵ http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Access-to-School-Education-Report_Armenian.pdf,

³⁵⁶ Երևան քաղաքի 39 ուսումնական հաստատությունների թվով 66, ՀՀ մարզերի 11 ավագ դպրոցների թվով 17, ՀՀ Արմավիրի մարզի 63 ուսումնական հաստատությունների թվով 79, ՀՀ Կոտայքի մարզի 15 ուսումնական հաստատությունների թվով 21 ուսուցիչներ չունեն համապատասխան մասնագիտական որակավորում:

պարապմունքների կրկնուսույցների մոտ³⁵⁷: Երևանի պետական համալսարանի առաջին և երկրորդ կուրսերի 95 ուսանողի շրջանում անցկացված հետազոտությունը ցույց է տվել, որ նրանցից միայն չորսը չեն դիմել կրկնուսույցի՝ ընդունելության քննություններին պատրաստվելու ժամանակ, ինչը կազմում է այդ ուսանողների միայն 1%-ը³⁵⁸: Հատկանշական է, որ տվյալ հարցին անդրադարձել է նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի կոմիտեն: Այսպես, 2014 թվականի Եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ ավագ դպրոցի աշակերտները հաճախ ստիպված են լինում հաճախելու մասնավոր կրկնուսույցների մոտ, որպեսզի ձեռք բերեն ԲՈՒՀ ընդունվելու համար անհրաժեշտ գիտելիքներ³⁵⁹: Կոմիտեն նշել է նաև, որ նման պրակտիկան հանգեցնում է ԲՈՒՀ-երում ուսանողների ընդունելության ցուցանիշներում անհավասարության՝ պայմանավորված դիմորդների սոցիալ-տնտեսական վիճակով, իսկ դա իր հերթին կարող է բերել բնակչության սոցիալական շարժունության սահմանափակման: Ուստի, Կոմիտեն առաջարկել է առավել ուժեղացնել գործադրվող ջանքերը, որպեսզի աղքատության գործոնը չազդի երեխայի կրթական կամ աշխատանքային հեռանկարների վրա: Մինևույն ժամանակ, խնդրահարույց է դասարաններում աշակերտների մեծ քանակը, որի հետևանքով ուսուցիչը հավասարապես չի աշխատում բոլոր աշակերտների հետ: Համաձայն գործող կարգի,³⁶⁰ դասարանների միջին խտությունը՝ կրթական երեք աստիճանների համար սահմանվում է 25-30 սովորող, ընդ որում սովորողների թիվը չի կարող գերազանցել 35-ը³⁶⁰: Եթե աշակերտների թիվը գերազանցում է թույլատրվող քանակը, ապա դասարանը կիսվում է, իսկ սահմանվածից ավելի պակաս խտությամբ դասարան կարող է բացվել դպրոցի լրացուցիչ ֆինանսավորման միջոցների հաշվին: Հաշվի առնելով այս չափորոշիչները՝ բազմաթիվ դպրոցների տնօրեններ գործնականում ձգտում են դասարաններում աշակերտների թիվը պահել առավելագույն թույլատրվող թվին մոտ, որպեսզի դասարանի կիսվելու դեպքում ստիպված չլինեն աշխատանքի վերցնել նոր ուսուցիչների կամ վարձատրել ուսուցիչներին ավելի շատ քանակով դասաժամերի համար: Արդյունքում բազմաթիվ դասարաններ գերբեռնված են, իսկ ուսուցիչը չի կարողանում հավասարապես աշխատել բոլոր աշակերտների հետ: Առկա են խնդիրներ նաև դպրոցական դասագրքերի որակի և մատչելիության հարցում: Հատկապես բարձր դասարանների աշակերտները դժգոհում են, որ իրենց որոշ դասագրքեր մշակվել են ոլորտի գիտական աշխատողների, ԲՈՒՀ-երի դասախոսների կողմից, եղել են խիստ մասնագիտական ու հաճախ դժվարամատչելի լեզվով գրված:

³⁵⁷ ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիրը հաստատելու մասին 2011թ. հունիսի 23-ին ընդունված ՀՀ օրենքի Հավելված, կետ 16, 17

³⁵⁸ [http://ewebapps.worldbank.org/apps/ip/PanelCases/94%20-%20Request%20for%20Inspection%20\(English\).pdf](http://ewebapps.worldbank.org/apps/ip/PanelCases/94%20-%20Request%20for%20Inspection%20(English).pdf)

³⁵⁹ Committee on Economic, Social and Cultural Rights Concluding observations on the combined second and third periodic reports of Armenia* E/C.12/ARM/CO/2-3,

https://www.ecoi.net/file_upload/1930_1406729825_g1408576.pdf,

³⁶⁰ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013թ. հունիսի 1-ի N730-Ն հրաման Հանրակրթական հիմնական և հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2013-2014թթ. ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները հաստատելու մասին:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ բոլոր դպրոցներում կրթության հավասար որակի ապահովման, ուսուցիչների կողմից իրենց մասնագիտական պարտականությունների պատշաճ կատարման վերահսկման, դպրոցները համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող կադրերով ապահովման, դասարաններում աշակերտների քանակի կրճատման, դասագրքերը աշակերտների կարիքներին համապատասխանեցման ուղղությամբ:

2.3.2 Տարիներ շարունակ դպրոցներում շարունակվում են անօրինականության դեպքերը, ինչպիսիք են՝ դրամահավաքը, մանկավարժների նկատմամբ տարբերակված մոտեցումը, տնօրենների կողմից լուրջ խախտումները:

Ընթացիկ տարում աշակերտների ծնողներից, հասարակական կազմակերպություններից ու մի շարք ՋԼՄ-երից ստացվել են ահազանգեր և տեղեկություններ հանրակրթական դպրոցներում անօրինական դրամահավաքի, ինչպես նաև տնօրենների կողմից անօրինականությունների վերաբերյալ³⁶¹: Այսպես, ծնողների պնդմամբ այնպիսի օրերին, ինչպիսիք են՝ Ուսուցչի տոն, Մարտի 8, Ապրիլի 7 և այլն, իրենք ստիպված են լինում ուսուցիչներին «*վերաբերմունք ցույց տալ*»՝ հետագայում իրենց երեխաների նկատմամբ վերջիններիս լավ տրամադրելու նպատակով³⁶²: Առանձին դեպքերում ուսուցիչներն անձամբ են հայտնել, թե ինչ նվեր են նախընտրում ստանալ: Առանձին դպրոցներում ծնողները հայտնում են նաև «*Ֆոնդի փող*» հավաքելու դեպքերի վերաբերյալ: Նման դեպքերում գումարների հավաքումը, որպես կանոն, իրականացվում է ծնողական կոմիտեների միջոցով՝ նախօրոք պայմանավորված գումարի չափով:³⁶³ Մի շարք դեպքերում տնօրենների հրահանգով գումարներ են հավաքվում դպրոցի վերանորոգման համար, հաշվի չառնելով այն, որ պետական բյուջեով այդ նպատակով, ինչպես նաև «Վերջին զանգ»-ի և այլ միջոցառումների կազմակերպման համար գումար դպրոցին արդեն իսկ հատկացված է: Միաժամանակ, Նախարարության տրամադրած տվյալներով՝ «Թեժ գիծ» հեռախոսակապով և Նախարարության էլեկտրոնային փոստով 2014 թվականի ընթացքում ստացվել է հանրակրթական դպրոցներում կատարվող անօրինականությունների, այդ թվում անօրինական դրամահավաքի և կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ 61 ահազանգ, գրանցվել է 25 բողոք, որոնցից 8-ը չեն հիմնավորվել: Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման ընթացքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ Նախարարի կողմից ուսումնական հաստատությունների տնօրեններին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ: Այդուհանդերձ, Նախարարությունից չեն հայտնում, թե արդյոք նշված դեպքերի կապակցությամբ կատարվել է ծառայողական քննություն,

³⁶¹ Ընդ որում, սույն Ձեկույցի իմաստով անօրինական դրամահավաք չեն դիտարկվում այն դեպքերը, երբ ծնողները/աշակերտները կամավոր, առանց ճնշման որևէ կերպ շնորհակալություն են հայտնել ուսուցիչներին, իսկ աշակերտների նկատմամբ վերջիններիս վերաբերմունքը կամ գիտելիքների գնահատումը պայմանավորված չէ նման քայլերի ակնկալիքով կամ իրականացմամբ:

³⁶² <http://www.aravot.am/2015/02/21/544253/>, <http://bit.ly/1KWgOBR>

³⁶³ <https://www.youtube.com/watch?v=8OdrSveSkbQ>

կամ արդյոք օրինախախտները ենթարկվել են պատասխանատվության՝ հաշվի առնելով, որ բացահայտված խախտումների վերաբերյալ կարող էր հաղորդում ներկայացվել իրավապահ համապատասխան մարմիններին: Բացի դրանից՝ նման խախտումների դեպքում Նախարարության կողմից ձեռնարկված միջոցառումները չեն կարող համարվել համարժեք, քանի որ օրինախախտների նկատմամբ պատասխանատվության որևէ միջոց, որը միտված կլիներ խախտման վերացմանն ու կանխարգելմանը չի կիրառվել: Մյուս կողմից, «անօրինական դրամահավաք» երևույթի դեմ պայքարի հիմնական խոչընդոտն այն է, որ առկա չեն խնդրահարույց դեպքերի բացահայտման և կանխարգելման համար բավարար մեխանիզմներ:

Առաջարկ. ուժեղացնել դպրոցներում անօրինականության դեպքերի հայտնաբերման, կանխարգելման մեխանիզմը, դրանց կապակցությամբ ծառայողական քննություն անցկացնել, ինչպես նաև բացահայտված խախտումների վերաբերյալ տեղեկությունները տրամադրել համապատասխան իրավապահ մարմիններին:

2.3.3 Օրենսդրական բացթողումների հետևանքով դպրոցների տնօրենների ընտրությունները, որոշ դեպքերում, չեն եղել օբյեկտիվ ու թափանցիկ:

2014 թվականի ընթացքում Պաշտպանը ստացել է մի շարք դիմում-բողոքներ հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ընտրությունների վերաբերյալ: Մասնավորապես, քաղաքացիները հայտնել են, որ մի շարք դեպքերում դպրոցի տնօրեն է ընտրվում ոչ թե առավել բարձր որակավորում և այլ անհրաժեշտ հատկանիշներ ունեցող թեկանծուն, այլ, օրինակ, մարզպետի, քաղաքապետի կամ այլ պաշտոնատար անձի հետ բարեկամական կամ այլ մերձավոր կապի մեջ գտնվող անձը: Թեև դպրոցների տնօրենների ընտրության սահմանված կարգը տեսականորեն ապահովում է բազմակարծությունը և հավասար պայմաններ թեկնածուների համար, սակայն համապատասխան իրավական ակտերում³⁶⁴ առկա են մի շարք թերություններ, ինչի հետևանքով բազմաթիվ դեպքերում ընտրություններն անցկացվել են բացթողումներով, ոչ օբյեկտիվ ու թափանցիկ: 2013 թվականի տարեկան զեկույցում Պաշտպանն անդրադարձել էր ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի հետ կապված տարբերքային հարցին³⁶⁵: Ողջունելի է, որ 2014 թվականի ընթացքում Նախարարության կողմից կատարվել է նշյալ դրույթի փոփոխություն, որի արդյունքում վերջինս հստակեցվել է³⁶⁶: Այնուամենայնիվ, գտնում ենք, որ դպրոցների տնօրենների ընտրության թափանցիկության ապահովմանը կարող է նպաստել նաև այդ գործընթացում ՀԿ-ների ներկայացուցիչների ներգրավումը: Նշենք, որ թեև օրենսդրությամբ հնարավորություն է ընձեռվում կրթության ոլորտում գործունեություն իրականացնող ՀԿ-ների և զանգվածային լրատվության միջոցների

³⁶⁴ ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշում

³⁶⁵ ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետի ձևակերպումը տնօրենների ընտրության համար կրկնակի քվեարկության հնարավորության դեպքում առաջացնում էր տարբերքային (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=57435>)

³⁶⁶ 31.07.2014, ՀՀ կառավարության թիվ 817-Ն որոշում, (<https://www.e-gov.am/gov-decrees/item/24609/>)

ներկայացուցիչներին դիտորդի կարգավիճակով մասնակցելու **դպրոցների տնօրենների ընտրությանը**³⁶⁷, դրա իրականացման, դիտորդների կողմից բարձրաձայնված խախտումների քննության և այլ հարցերի համար սահմանված չէ հստակ կարգ: Նշվածը, գործնականում, կարող է ՀԿ-ների մասնակցության համար անհամաչափ սահմանափակումների հիմք հանդիսանալ կամ ՀԿ-ների մասնակցությունը տնօրենների ընտրության գործընթացին դարձնել անարդյունավետ:

Առաջարկ. սահմանել հանրակրթական դպրոցների տնօրենների ընտրություններում հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների՝ որպես դիտորդի մասնակցության հստակ կարգ, խրախուսել վերջիններիս մասնակցությունը ընտրությունների դիտարկմանը:

2.3.4 Նախարարության ենթակայության տակ գտնվող մի շարք հանրակրթական և հատուկ դպրոցներում բացահայտվել են սննդի և բուժսպասարկման կազմակերպման խախտումներ:

2014 թվականին Պաշտպանի ներկայացուցիչների՝ Նախարարության ենթակայության տակ գտնվող մի շարք հանրակրթական, այդ թվում՝ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ կատարած այցելությունների արդյունքում բացահայտել են սննդի և բուժսպասարկման կազմակերպման լուրջ բացթողումներ³⁶⁸: Մասնավորապես, մի շարք հատուկ դպրոցների երեխաների տրամադրվել է ժամկետանց սնունդ, սնունդը պահվել է ոչ պատշաճ պայմաններում, չեն պահպանվել սննդի նմուշները, հայտնաբերվել են օրենսդրությամբ արգելված սննդամթերք, հիգիենիկ պահանջների խախտումներ, սննդի որակի և քանակի խնդիրներ, ինչպես նաև ոչ պատշաճ կերպով է կազմակերպվել երեխաների բժշկական սպասարկումը հանրակրթական և հատուկ հանրակրթական դպրոցներում: Մինչդեռ, դպրոցի հիմնադրի և Նախարարության պարտականությունն է իրականացնել հանրակրթական դպրոցի գործունեության վերահսկողությունը³⁶⁹: Պաշտպանի կողմից խնդրի բարձրաձայնումից հետո Նախարարության ենթակայության տակ գործող հատուկ դպրոցներում Նախարարի համապատասխան շրջաբերականներով³⁷⁰ հանձնարարվել է վերացնել երեխաներին սննդով ապահովելու հետ կապված խախտումները, ինչպես նաև հետագայում նմանօրինակ դեպքերը բացառելու նպատակով խստացնել հսկողությունը երեխաների սննդի պատշաճ կազմակերպման նկատմամբ: Պաշտպանի միջամտությամբ կարգավորվել է նաև հատուկ դպրոցների աշակերտներին ստոմատոլոգիական ծառայություններ տրամադրելու խնդիրը՝ երեխաներին համապատասխան ծրագրում

³⁶⁷ ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշում,

³⁶⁸ Տվյալ ոլորտները կարգավորվում են ՀՀ առողջապահության նախարարի 2013թ. նոյեմբերի 1-ի թիվ 70-Ն հրամանի դրույթներով և 2013 թ. ապրիլի 9-ի թիվ 874-Ս հրամանով; ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի N 815-Ն որոշման N13 հավելվածի, ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. փետրվարի 11 -ի N 82 հրամանի 9-րդ մասի, ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 20-ի N34-Ն որոշման պահանջներով:

³⁶⁹ ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն, հոդված 48, 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշում

³⁷⁰ ՀՀ ԿԳ նախարարի շրջաբերականներ՝ 17.06.2014թ N04/07.1/7337-14 և 27.08.2014թ N04/07.1/9921-14

ընդգրկելու միջոցով: Բացի դրանից՝ քաղաքացիների ահազանգերի հիման վրա 2014 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին այցեր են իրականացվել տարբեր վարչական շրջանների հանրակրթական դպրոցներ: Այսպես, Նախարարության ենթակայության մի շարք դպրոցների բուֆետներում արձանագրվել են երեխաների առողջության համար վնասակար սննդատեսակների (գազավորված ըմպելիքներ, չիպսեր, ապխտած կամ կիսաապխտած երշիկեղենով բրդուճներ, սուրճ և այլն) իրացման դեպքեր³⁷¹: Այցելած դպրոցներում վաճառվող հացաբուլկեղենի փաթեթավորման վրա արտադրության և պիտանիության ժամկետի, ինչպես նաև բաղադրության վերաբերյալ որևէ մակնշում չկար³⁷², որոշ բուֆետների աշխատակիցներ չէին կրում սանիտարական մաքուր հագուստ, ինչը խախտում է սննդի ոլորտի աշխատողների անձնական հիգիենայի կանոնները, ինչպես նաև սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները³⁷³: Խնդրի բարձրաձայնումից հետո Նախարարի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից իրականացվել են ընտրանքային ուսումնասիրություններ՝ հասարակական սննդի կազմակերպման գործընթացում արձանագրված խախտումները շտկվելու նպատակով: Միևնույն ժամանակ, Նախարարության ենթակայության տակ գտնվող հանրակրթական դպրոցների տնօրեններին հանձնարարվել է խստացնել հսկողությունը սննդի կազմակերպման և սննդի իրացման վերաբերյալ օրենսդրական չափորոշիչների լիարժեք պահպանման նկատմամբ:

Առաջարկ. խստացնել հսկողությունը հանրակրթական և հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի և բուժապասարկման պատշաճ կազմակերպման ուղղությամբ:

2.3.5 Արդեն մի քանի տարի է՝ Պաշտպանի կողմից բարձրացվում է ԲՈՒՀ-երում ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության խնդիրը, ինչը հակասում է ԲՈՒՀ-երում լիարժեք ակադեմիական ազատության ապահովման սկզբունքին:

Տարբեր բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդները տարիների ընթացքում ձեռք են բերել քաղաքական ուղղվածություն, քանի որ դրանց անդամների գերակշռող մասը, որևէ քաղաքական կուսակցությանն անդամակցելով, օգտագործում են ուսխորհրդով իրենց տրված լիազորությունները ԲՈՒՀ-ում կուսակցական քարոզչության, կուսակցական շահերի պաշտպանության համար: 2014 թվականին գրանցվել են դեպքեր, երբ առանձին կուսակցության անդամ հանդիսացող ուսանողական խորհրդի նախագահն ու անդամները վիճաբանել են, այնուհետև խոչընդոտել մեկ այլ կուսակցության ակտիվիստներին բաժանել

³⁷¹Տվյալ սննդատեսակների վաճառքը ուսումնական հաստատություններում արգելվում է ՀՀ առողջապահության նախարարի 2014թ. հունիսի 6-ին N 32-Ն հրամանի 26-րդ կետով:

³⁷² «Մանուկների անվտանգության մասին» ՀՀ օրենք, 2014թ.,

³⁷³ ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. փետրվարի 11-ի N82 հրաման,

տեղեկատվական թռուցիկներ, ինչը տեղի է ունեցել երեկոյան ժամին ԲՈՒՀ-ի տարածքից դուրս: Ավելին, դեռևս 2013 թվականին լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու դեպքով հայտնի դարձած ուսանողական խորհրդի նախագահը ոչ միայն չի ենթարկվել պատասխանատվության օրենքի խախտման համար, այլև 2014 թվականին նշանակվել է նույն ԲՈՒՀ-ի պրոռեկտոր: Առհասարակ, ԲՈՒՀ-երում անցկացված հետազոտությունները վկայում են, որ ուսանողական ներկայիս միավորումներից շատերը «...*ուղղված են իրենց առաջնորդների համար քաղաքական կարիերա ապահովելուն, քան ակտիվ ներգրավվածություն ունեցող առաջնորդներին բարձրագույն ուսումնական հաստատություններ փերելուն*»³⁷⁴: Անկուսակցական ուսանողներին հիմնականում անհանգստացնում է այն, որ ուսխորհուրդների նախագահները խորհրդի գործունեությունը հարմարեցնում են կուսակցական ուղղվածությանը: Հաճախ նման գործունեությունը չի համապատասխանում բարձրագույն լիբերալ կրթությանը ներկայացվող պահանջներին, ավելին՝ առանձին դեպքերում ուղակիորեն հակասության մեջ է մտնում ուսանողների իրական շահերի պաշտպանության հետ: Մինչդեռ, ԲՈՒՀ-երի ուսանողական խորհրդի անդամներն ընտրվում են տվյալ բուհերի ուսանողների կողմից և պետք է լինեն ուսանողության ներկայացուցչական մարմին, որն անկողմնակալ կերպով պաշտպանում և ներկայացնում է ուսանողների շահերը: Նշենք, որ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը, որին անդամակցում է նաև Հայաստանը, պարտավորեցնում է պետությանը բոլորի համար հավասարապես մատչելի կազմակերպել բարձրագույն կրթությունը³⁷⁵: Մինևնույն ժամանակ, ՄԱԿ-ի **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի համոզմամբ** ուսումնական հաստատությունների համեմատ ԲՈՒՀ-ի դասախոսները և ուսանողներն ավելի խոցելի են քաղաքական և այլ ճնշումների նկատմամբ, որոնք կարող են սպառնալ իրենց գիտական և ակադեմիական ազատությանը, ինչն անհրաժեշտ է կրթության իրավունքի լիարժեք իրացման համար³⁷⁶: ԲՈՒՀ-ի ինքնավարության ապահովման և ազատ գիտա-հետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով ԲՈՒՀ-երում ակադեմիական ազատության ապահովման պահանջը նախատեսվում է նաև կրթական համակարգի բարեփոխման Բոլոնյան Գործընթացով, որին 2005 թվականից միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը: Չնայած վերոնշյալ միջազգային չափորոշիչներով կրթությանը ներկայացվող պահանջներին՝ Հայաստանի բազմաթիվ ԲՈՒՀ-երում քաղաքականացված ուսխորհուրդները ոչ միայն չեն նպաստում ուսանողների գիտական ազատության ապահովմանը, այլև հաճախ քաղաքական ուղղվածություն են տալիս ուսանողական նախաձեռնություններին/միջոցառումներին: Նշենք, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ԲՈՒՀ-ի ուսանողական խորհրդի կանոնադրությունը

³⁷⁴ «Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն»;

http://www.osf.am/wp-content/uploads/2013/10/OSF_HE_report_ARM.pdf

³⁷⁵ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, 3-րդ հոդված http://www.un.am/res/UN%20Treaties/III_3.pdf

³⁷⁶ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն N13, 1999: <http://www.refworld.org/docid/4538838c22.html>,

հաստատվում է Նախարարության կողմից³⁷⁷: Այսինքն, Նախարարությունը կարող է օրենսդրական համապատասխան փոփոխություններով ապահովել ուսխորհուրդների անկողմնակալ գործունեությունը: Գիտակցելով, որ ուսանողին որևէ կուսակցության անդամագրվելու արգելքը խնդրի լուծում չէ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել տվյալ մարմինը տարբեր կուսակցությունների կողմից քաղաքական նպատակներով օգտագործելը կանխելու համար:

Առաջարկ. ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և այլ քայլեր ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների գործունեության անկողմնակալության ապահովման և վերջիններիս քաղաքական ազդեցությունից զերծ պահելու ուղղությամբ:

2.3.6 Ներառական կրթություն իրականացնող բազմաթիվ դպրոցներում չեն ձեռնարկվել անհրաժեշտ քայլեր հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելիության ապահովման ուղղությամբ:

Չնայած նրան, որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում նախատեսվում է հանրակրթության համակարգում աստիճանական անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, այսուհանդերձ, Նախարարությունը չի ձեռնարկում բավարար քայլեր իր ենթակայության տակ գտնվող ներառական կրթություն իրականացնող դպրոցներում լիարժեք մատչելիության ապահովման ուղղությամբ: Հայաստանի Հանրապետությունում կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրով սահմանված է տարեկան ներառական դպրոցների ցանցի ընդլայնում առնվազն 15 դպրոցով: Սակայն, քաղաքացիներից, ոլորտում աշխատող հասարակական կազմակերպություններից ստացվում են բազմաթիվ բողոքներ առ այն, որ ներառական կրթություն իրականացնող դպրոցները լիարժեք մատչելի չեն հաշմանդամություն ունեցող, և հատկապես, հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար³⁷⁸: Այսպես, Հայաստանում գործող ներառական կրթություն իրականացնող 139 հանրակրթական ուսումնական հաստատությունների³⁷⁹ մի մասը չի վերանորոգվել և լիարժեք մատչելի չէ հաշմանդամություն ունեցող երեխաների համար, մյուսներում մատչելիությունը սահմանափակվել է միայն դպրոցի մուտքի մոտ թեքահարթակի կառուցմամբ, իսկ առանձին դպրոցներում վերակառուցման ընթացքում անգամ չեն պահպանվել համապատասխան շինարարական նորմերը, որոնք անհրաժեշտ են մատչելի միջավայր ապահովելու համար³⁸⁰: Անմատչելի դպրոցների գերակշռող մասում հաշմանդամություն ունեցող աշակերտ ունեցող դասարանների համար դասադրոցներ

³⁷⁷ «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 28

³⁷⁸ Մատչելիության պահանջը բխում է ՀՀ կողմից վավերացված Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիայից, ինչպես նաև ՀՀ մի շարք օրենքներից և իրավական ակտերից:

³⁷⁹ 2015 թվականի հունվար ամսվա դրությամբ ՀՀ-ում գրանցվել է ներառական կրթություն իրականացնող 139 հանրակրթական դպրոց: (<http://www.edu.am/DownloadFile/349arm-nerar-cucak.pdf>)

³⁸⁰ Կարգավորվում է ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 16-ին ընդունված N

392 որոշմամբ, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ին ընդունված N 253 հրամանով,

կազմակերպվում է դպրոցի առաջին հարկում, քանի որ տվյալ դպրոցներում բացակայում են նաև վերելակներ կամ ամբարձիչներ: Արդյունքում, հաշմանդամություն ունեցող երեխան հաճախ չի կարողանա առանց ուղեկցողի մուտք գործել անմատչելի դպրոց, տեղաշարժվել դպրոցի ներսում, օգտվել սանհանգույցից և այլն:

*Առաջարկ. քայլեր ձեռնարկել դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար մատչելիության ապահովման ուղղությամբ*³⁸¹:

2.3.7 Երևանի պետական բժշկական համալսարանը օրենքից չբխող սահմանափակումներ է ընդունել, ինչի հետևանքով պետության կողմից հատկացված անվճար տեղերի մի մասը չի տրամադրվել ուսանողներին:

2014 թվականին Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներից պարզվել է, որ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ընդհանուր բժշկության ֆակուլտետին 2011-2012թթ. ուսումնական տարում հատկացված 54 անվճար տեղերից³⁸² 2014-2015թթ. ուսումնական տարում բաշխվել է միայն 29-ը: Նշենք, որ, ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի և մասնագիտությունների, բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը, որը տեղափոխվում է կուրսից կուրս³⁸³: Ստացվում է, որ 2011-2012թթ. ուսումնական տարում հատկացված 54 տեղերն ամբողջությամբ չեն տեղափոխվել կուրսից կուրս: Նախարարությունից հայտնել են, որ նշյալ անվճար ուսուցման տեղերի մի մասը մնացել է թափուր, քանի որ ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների փոխատեղումը կատարվել է՝ համաձայն բուհի կողմից 27.11.2013 թվականին հաստատված «Ուսանողների գնահատման համակարգում ստուգարքների և քննությունների անցկացման ու հանձնման» կարգի (Կարգ) պահանջների: Նշյալ Կարգով սահմանվում է, որ ակադեմիական պարտքերի մարման շրջանում պարտքերը հանձնած ուսանողները չեն կարող մասնակցել ուսման վարձի լրիվ փոխհատուցման (անվճար) համակարգում ընդգրկվելու համար անցկացվող փոխատեղման մրցույթին (ռոտացիա)³⁸⁴: Հարկ է նշել, սակայն, որ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» մասին ՀՀ օրենքի (Օրենք)³⁸⁵ և ԲՈՒՀ-ի և ուսանողի միջև կնքված երկկողմ պայմանագրի համաձայն՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում ֆինանսական միջոցների տրամադրման կարգի հաստատումը, ներառյալ՝ ուսման վարձը փոխհատուցելու կարգը սահմանում է

³⁸¹ Մանրամասն տես՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների բաժինը

³⁸² ՀՀ կառավարության 2011 թվականիի ապրիլի 28-ի թիվ 610-Ն որոշում

³⁸³ ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին» կարգ

³⁸⁴ http://www.ysmu.am/images/stories/downloads/PDF/karg_exam.pdf, 24-րդ կետ

³⁸⁵ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետ

ՀՀ կառավարությունը: ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ³⁸⁶ սահմանվում է, որ առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է ՀՀ պետական ԲՈՒՀ-երի ընդունելության կանոններով սահմանված կարգով ԲՈՒՀ ընդունված ուսանողներին, իսկ հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգաքննների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով: Ավելին, օրենսդրությամբ չի սահմանվում «առավել բարձր առաջադիմություն» եզրույթը, իսկ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ չի նախատեսվում ռոտացիայի մրցութային մասնակցելու բացառություն ակադեմիական պարտք ունեցող ուսանողի համար: Ստացվում է, որ Կարգով սահմանափակվում է ԲՈՒՀ-ին հատկացված անվճար տեղերի մրցութային մասնակցելու ուսանողի իրավունքը: Նշենք, որ Սահմանադրությամբ հստակ նշվում է, որ Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները³⁸⁷ սահմանվում են բացառապես ՀՀ օրենքներով: Տվյալ դեպքում ստացվում է, որ Կարգով սահմանափակվել են ուսանողների իրավունքները: Փաստորեն, «առավել բարձր առաջադիմություն» եզրույթի օրենսդրական ձևակերպման բացակայության հետևանքով, ԲՈՒՀ-ի ներքին իրավական ակտով սահմանափակվել է մի շարք ուսանողների՝ պետության կողմից հատկացված անվճար տեղերից օգտվելու իրավունքը:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ «առավել բարձր առաջադիմություն» եզրույթի օրենսդրական սահմանման նախատեսման, ինչպես նաև ուսանողների՝ պետության կողմից հատկացված անվճար տեղերից օգտվելու իրավունքի վերականգնման ուղղությամբ:

2.3.8 Հաշմանդամություն ունեցող անձինք զրկված են Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ ընդունվելու և այնտեղ սովորելու հնարավորությունից:

Հաշմանդամություն ունեցող անձինք (հատկապես հենաշարժողական խնդիրներ ունեցող) զրկված են Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ (**Ֆիզկուլտուրայի ինստիտուտ**) ընդունվելու և սովորելու հնարավորությունից: Այսպես, ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 26-ի N 597-Ն որոշումը, որը կարգավորում է ՀՀ պետական և ոչ պետական ԲՈՒՀ-եր ընդունելության գործընթացը, նախատեսում է, որ **Ֆիզկուլտուրայի ինստիտուտի** մասնագիտական առարկաների քննությունները հանդիսանում են ներբուհական քննություններ և անցկացվում են սովյալ մասնագիտության առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին

³⁸⁶ ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու մասին» կարգ

³⁸⁷ ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.5, կետ 2

համապատասխան: Սակայն, ԲՈԻՀ-ի ընդունման կարգում հաշվի չեն առնվում հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատուկ կարիքները, քանի որ անկախ ընտրած մասնագիտությունից, բոլոր դիմորդները պարտավոր են հանձնել «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկան³⁸⁸ (*ներառում է վազք, եռացատկ, ձգումներ և այլն*), ինչպես նաև ներկայացնել բժշկական գնության եզրակացություն: Արդյունքում, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք, հնարավորություն չունենալով հանձնել այս առարկայից քննություն, զրկվում են տվյալ ԲՈԻՀ-ում կրթություն ստանալու հնարավորությունից: Մինչդեռ, համաձայն օրենսդրության՝ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն ողջամիտ հարմարեցումների ապահովմամբ համապատասխան բարձրագույն կրթություն ստանալու իրավունք³⁸⁹: Նախարարությանն առաջարկվել է վերանայել **Ֆիզկուլտուրայի ինստիտուտ** ընդունվելու կարգը, որի հիման վրա Նախարարի կողմից ԲՈԻՀ-ին տրվել է հանձնարարական՝ մշակելու համապատասխան ծրագրեր և մեթոդական փաստաթղթեր հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք կրթությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև հարմարեցնելու ԲՈԻՀ-ի ենթակառուցվածքները:

Առաջարկ. վերահսկել Նախարարի վերոնշյալ հանձնարարականի կատարումը՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց համար Ֆիզկուլտուրայի ինստիտուտ ընդունվելու և ուսանելու հնարավորությունը:

³⁸⁸ «Ֆիզիկական Կուլտուրա և Սպորտ» մասնագիտության ընդունելության քննության ծրագիրը և գնահատման չափանիշները «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկայից հաստատվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից 2009 թվականին:
<http://www.asipc.am/index.php?lng=am&p=page53>,

³⁸⁹ Վերոնշյալը բխում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ մի շարք օրենքների հաշմանդամություն ունեցող անձանց բարձրագույն կրթություն ստանալու իրավունքին վերաբերող իրավակարգավորումների, ինչպես նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջների համալիր վերլուծությունից:

2.4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացվում են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն այլ խմբերի համար սոցիալական ծառայությունների հասանելիությունը բարձրացնելու նպատակով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև ՀՀ կառավարության 16.08.2001թ. թիվ 762 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին օրենսդրական նախագծեր են մշակվել և ներկայացվել ՀՀ կառավարության քննարկմանը:
- «Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրի շրջանակներում միջպետական որոշ ավտոճանապարհներին տեղադրվել են անվտանգ երթևեկությունն ապահովող ճանապարհային նշաններ³⁹⁰:
- Հիմնանորոգվել և շահագործման է հանձնվել ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհի 4.5 կմ երկարություն ունեցող հատվածը³⁹¹, ինչպես նաև հիմնանորոգման կարիք ունեցող որոշ այլ ճանապարհներ³⁹²:

Առկա թերություններն ու խնդիրները

2.4.1 Հանրությունը պատշաճ չի իրազեկվել միջհամայնքային հանրային տրանսպորտի չվացուցակների վերաբերյալ, բողոքներ են եղել չվացուցակների կարգից հաճախակի շեղումների վերաբերյալ:

2014 թվականի ընթացքում միջհամայնքային հանրային տրանսպորտի չվացուցակների վերաբերյալ հանրությունը պատշաճ չի իրազեկվել: Այսպես, Նախարարությունը երթուղիների չվացուցակների վերաբերյալ հասարակության իրազեկվածությունն ապահովում է չվացուցակները հրապարակելով միայն ՀՀ տրանսպորտի և կապի

³⁹⁰ http://www.mtc.am/pages.php?lang=1&id=5681&page_name=news/

³⁹¹ http://www.mtc.am/pages.php?lang=1&id=5671&page_name=news/

³⁹² Մասնավորապես, Սյունիքի մարզի Խնածախ-Քարաշեն ավտոճանապարհի փլուզված հատվածները, Ներքին Գետաշեն-Վերին Գետաշեն-Մաղինա ավտոճանապարհը, Թեղուտ տանող ավտոճանապարհը և այլն

նախարարության ինտերնետային կայքում: Այնինչ, մի շարք եվրոպական երկրների փորձը ցույց է տալիս, որ հանրության պատշաճ իրազեկումն ապահովվում է այն դեպքում, երբ չվացուցակները փակցված են համապատասխան կանգառներում և, ժամանակ առ ժամանակ, դրանց արտաքին տեսքը և բովանդակությունը թարմացվում է՝ հաշվի առնելով, որ ոչ բոլորին և ոչ բոլոր դեպքերում է (օրինակ՝ ինտերնետ կապի բացակայություն) հասանելի կայքէջի միջոցով ստուգել չվացուցակում նշված ժամերը: Ավելին, չնայած նրան, որ ըստ Նախարարության տվյալների՝ հանրապետությունում գործում են շուրջ 180 երթուղիներ³⁹³, այնուամենայնիվ, Նախարարության կայքէջի «Չվացուցակներ, ուղեգծեր, կանգառներ» պատուհանում ներկայացված են միայն մի քանի երթուղիների չվացուցակներ, որոնք վերջին անգամ թարմացվել են 2013 թվականի օգոստոսին³⁹⁴: Միաժամանակ, շարունակվել են նաև դժգոհություններ հնչել միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցների չվացուցակների կարգից հաճախակի շեղումների մասին: Այսպես, դեռևս 2013 թվականի ընթացքում կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման վերաբերյալ ՀՀ տրանսպորտային տեսչություն ստացվել էր 15 դիմում-բողոք, որոնցից 5-ը՝ կանոնավոր երթուղիների չվացուցակների խախտումների վերաբերյալ: Իսկ 2014 թվականի ընթացքում նշված խնդրի վերաբերյալ ստացված բողոքների քանակն աճել է. տեսչություն ստացված 81 բողոքներից (գրավոր և բանավոր) և առաջարկություններից 27-ը վերաբերել են կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման չվացուցակների խախտումներին, 4-ը՝ ուղեգծերից շեղմանը: Ստացված բողոքների քանակի աճը վկայում է, որ խնդրին 2014 թվականի ընթացքում համակարգային լուծում չի տրվել:

Առաջարկ. պարբերաբար թարմացնել երթուղիների չվացուցակների վերաբերյալ Նախարարության կայքէջը, բոլոր կանգառներում փակցնել շարունակաբար թարմացվող չվացուցակները, միջոցներ ձեռնարկել բացառելու միջհամայնքային հանրային տրանսպորտի չվացուցակների կարգից հաճախակի շեղումները:

2.4.2 Շարունակում են անբարեկարգ վիճակում գտնվել ներհամայնքային և մարզային նշանակության մի շարք ճանապարհներ, ինչը խոչընդոտում է անձանց ազատ տեղաշարժմանը և բեռնափոխադրումների անարգել իրականացմանը:

Տարիներ շարունակ քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնել ներհամայնքային և մարզային նշանակության ճանապարհների խիստ անբարեկարգ վիճակում գտնվելու մասին, ինչը խոչընդոտում և վտանգում է անձանց տեղաշարժը որոշ համայնքներում, ինչպես նաև մի շարք բարդություններ ստեղծում բեռնափոխադրումներ իրականացնելիս: Օրինակ, անբարեկարգ են Ալավերդի-Վանաձոր միջպետական ճանապարհի Չորագետ-Փամբակ ճանապարհահատվածում գտնվող երեք թունելները, որոնցից, թերևս, Շահալի երկաթուղային կայարանի հարևանությամբ գտնվողը (կառուցված 1962 թվականին) գրեթե փլուզման շեմին է: Մասնավորապես, թունելի

³⁹³ <http://www.mtc.am/edfiles/files/sakagner/sakagin300813.pdf>

³⁹⁴ 2014 թվականի փետրվարի 25-ի դրությամբ. http://mtc.am/main.php?lang=1&page_id=612

ներսում առկա են ասֆալտի անորակ փոսանորոգումներ, որոնք դժվար հաղթահարելի են, մանավանդ բեռնատարների համար: Բեռնատարների համար մեծ խնդիր է նաև թունելի ցածր բարձրությունը, ինչի հետևանքով թունելով անցնելիս բեռնատարների վերին հատվածի և թունելի առաստաղի շփումից անընդհատ քարեր են թափվում: Միաժամանակ, ջրահեռացման խնդրի պատճառով անձրևներից առաջացած լեռնային ջրահոսքերը լցվում են թունել՝ կրկին առաջացնելով փլուզման և քարաթափման վտանգներ: Թունելը նաև լուսավորված չէ: Բացի դրանից՝ մի շարք վարորդներ վտանգավոր են համարում նաև Վանաձոր-Ալավերդի և Փամբակ-Ալավերդի ճանապարհները՝ նշելով վերջիններիս կապիտալ վերանորոգման անհրաժեշտության մասին³⁹⁵: Ներհամայնքային և մարզային նշանակության ճանապարհների հիմնանորոգման խնդրով Նախարարություն ներկայացված թվով 11 դիմում-բողոքներից երևում է, որ անբարեկարգ վիճակում են գտնվում նաև ՀՀ Տավուշի մարզի Կիրանց, Դիլիջան քաղաքային, Վազաշեն, ՀՀ Կոտայքի մարզի Գեղարդ, ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր համայնքների ճանապարհները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախարարության կողմից չեն իրականացվել բավարար քայլեր ներհամայնքային և մարզային նշանակության մի շարք ճանապարհների բարեկարգման ուղղությամբ, ինչը վտանգում է այդ ճանապարհներից օգտվող անձանց անվտանգությունը:

Առաջարկ. միջոցներ ձեռնարկել՝ ուղղված ներհամայնքային և մարզային նշանակության ճանապարհների բարեկարգմանը:

2.4.3 Առ այսօր լուծված չէ միջհամայնքային հանրային տրանսպորտի գերծանրաբեռնվածության, ոչ պատշաճ սպասարկման որակի ապահովման հարցը:

Մի շարք քաղաքացիներ իրենց դժգոհության մասին են բարձրաձայնել միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցների գերծանրաբեռնվածության, անսարք վիճակում գտնվող տրանսպորտային միջոցի շահագործման, ոչ բավարար սանիտարահիգիենիկ վիճակի, տրանսպորտային միջոցն արագ վարելու, վարորդի ծխելու, բարձր երաժշտություն միացնելու և այլ խնդիրների վերաբերյալ: Օրինակ, Արարատի մարզի Հայանիստ համայնքի բնակիչների բողոքն առ այն, որ համայնքը սպասարկող միակ միկրոավտոբուսը սպասարկում է նաև մի քանի այլ համայնքներ, ինչի հետևանքով Հայանիստի բնակիչների համար անհնարին է դառնում օգտվել տվյալ տրանսպորտային միջոցից³⁹⁶: Բնակիչների հավաստիացմամբ՝ խնդրի մասին բարձրաձայնվել էր դեռևս մի քանի տարի առաջ, սակայն լուծում այդպես էլ չի ստացել: Ավելին, խնդրի մասին բնակիչները 2014 թվականի հոկտեմբերին դիմում են ներկայացրել Նախարարություն, սակայն դիմումին արձագանքել են միայն տվյալ խնդրի վերաբերյալ ՁԼՄ-ներով ահազանգելուց հետո³⁹⁷: Նմանատիպ իրավիճակի մասին էր բարձրաձայնել նաև Արմավիրի մարզի Մերձավան գյուղի մի բնակիչ, ով դեռևս 2013 թվականի մայիսին բաց

³⁹⁵ <http://hetq.am/arm/news/57689/varordnery-sarsapov-en-hatum-mijpetakan-tchanaparhi-tunely.html>

³⁹⁶ <http://news-book.org/?p=42102&l=am>

³⁹⁷ http://mtc.am/pages.php?lang=1&id=5489&page_name=news

նամակով դիմել էր Նախարարին³⁹⁸՝ ահագանգելով, որ 205 համարի միկրոավտոբուսը (որը Երևան-գ.Մերձավան-գ.Նորակերտ և հակառակ երթուղին³⁹⁹ սպասարկող միակ տրանսպորտային միջոցն է) Երևանում միայն մինչև Հայրենիք կինոթատրոն, իսկ գյուղերից՝ մինչև Մերձավան է կարելի նստել, քանի որ դրանից հետո երթուղայինում ոչ միայն նստելու, այլև կանգնելու տեղ չի լինում՝ մանրամասնելով, որ. «...նման իրավիճակում լինում են վեճեր և ուղևորների, և վարորդի միջև, հնարավոր են նաև գրպանահատումներ: Չի պահպանվում անվտանգության ոչ մի կանոն. 13 տեղանոց երթուղայինում 20-30 հոգի են, էլ չեմ ասում երթուղայինների հալումաշ վիճակի մասին»⁴⁰⁰: Մտահոգիչ է, որ նույն խնդիրը, փաստացիորեն լուծում չստանալով, կրկին բարձրաձայնվել է նաև 2014 թվականին⁴⁰¹: Խնդրի առնչությամբ Նախարարությունից հայտնել են, որ տեսանելի արդյունքներ ունենալու համար համապատասխան երկարաժամկետ ուսումնասիրություններ պետք է կատարվեն⁴⁰²՝ պատճառաբանելով, որ թեժ սեզոններին⁴⁰³ տրանսպորտային միջոցների գերբեռնվածությունը լիարժեքորեն չի կարող արտացոլել ընդհանուր երթուղու աշխատանքը: Մինչդեռ, անկախ սեզոնի թեժ լինելու հանգամանքից՝ Սահմանադրության համաձայն, յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում⁴⁰⁴, ինչն այն տարածքն է, որտեղ ապրում և աշխատում է մարդը, ինչը շրջապատում է նրան և ազդում նրա վրա, և այն ներառում է ինչպես բնական, այնպես էլ արհեստական և սոցիալական միջավայրը⁴⁰⁵: Մեկ այլ նմանատիպ խնդիր վերաբերում է Արարատ-Երևան և հակառակ ուղղությամբ երթուղին սպասարկող տրանսպորտային միջոցի գերբեռնվածությանը, ինչպես նաև՝ չվացուցակի անհարմարությանը⁴⁰⁶ (շարժվում է 50 րոպեն մեկ): Թեև դեռևս 2013 թվականի նոյեմբերին Նախարարությունից հավաստիացրել էին, որ մեկ ամիս կամ առավելագույնը 45 օր հետո փոփոխություն կնկատվի նշված երթուղում⁴⁰⁷, այնուամենայնիվ, խնդիրը մինչ օրս չի լուծվել: Այսպիսով, բազմաթիվ քաղաքացիներ շարունակում են կրել մի շարք անհարմարություններ միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցներից օգտվելիս:

³⁹⁸ <http://bit.ly/19ZcUYr>, Հրապարակված է՝ 4 մայիսի, 2013 թվական

³⁹⁹ Ըստ բնակչի հայտնած տեղեկատվության՝ թիվ 205 միկրոավտոբուսի երթուղին է՝ Էրեբունի - Արցախի փ. - կթ. Հայրենիք - Յրդ մաս - Փարաքար - Արգավանդ - Թախրով - Մերձավան - Այգեկ - Բաղրամյան - Նորակերտ: <http://bit.ly/19ZcUYr>

⁴⁰⁰ <http://bit.ly/19ZcUYr>, հրապարակված է՝ 4 մայիսի, 2013 թվական:

⁴⁰¹ http://www.irakan.info/full_news.php?id=20986/, հրապարակված է՝ 29 հոկտեմբերի, 2014 թվական:

⁴⁰² http://www.irakan.info/full_news.php?id=20986/

⁴⁰³ Խնդրի մասին ԶԼՄ-ներով ահագանգել են 2014թ հոկտեմբերի 29-ին (http://www.irakan.info/full_news.php?id=20986/), ինչից կարելի է ենթադրել, որ խոսքը վերաբերում է ուսումնական տարվա բացումն ազդանշանող սեպտեմբերից բացվող սեզոնին, երբ ուսանողների շարժն ակտիվանում է:

⁴⁰⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 33.2

⁴⁰⁵ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի), Եր.: «Իրավունք», 2010թ.

⁴⁰⁶ <http://bit.ly/1FfYJHR/> (տեսանյութ)

⁴⁰⁷ <http://bit.ly/1FfYJHR/> (աուդիոնյութի 05:00 րոպեից)

Առաջարկ. ավելացնել միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցների խմբաքանակը, միկրոավտոբուսները փոխարինել ավտոբուսներով և բարձրացնել նշված տրանսպորտային միջոցների ընդհանուր սպասարկման որակը:

2.4.4 Ռադիոյի և հեռուստատեսության թվայնացման գործընթացի վերաբերյալ հասարակության ոչ բավարար իրազեկումը, ինչպես նաև սոցիալապես անապահով անձանց համար բավարար երաշխիքների բացակայությունը վտանգում են վերջիններիս տեղեկատվության ազատության իրավունքը:

Հայաստանի Հանրապետության սեփականությունը համարվող թվային հեռարձակման ցանցի ստեղծման, պահպանման և շահագործման գործառույթների իրականացման իրավասությունները վերապահված է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը⁴⁰⁸՝ ի դեմս «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի⁴⁰⁹: Թեև ռադիո և հեռուստահաղորդումների՝ անալոգային հեռարձակման տարբերակից թվային տարբերակի անցման վերջնաժամկետ է սահմանված 2015 թվականի հուլիսի 1-ը, այնուամենայնիվ, ոլորտի մի շարք մասնագետներ⁴¹⁰ մտահոգված են, որ թվայնացման նախապատրաստական աշխատանքները ոչ միայն դեռ չեն ավարտվել, այլև դրանք ունեն մի շարք օրենսդրական, սոցիալական և տեխնիկական բացթողումներ, ինչը կարող է վտանգել տեղեկատվության ազատության իրավունքը: Միաժամանակ, թվային ազդանշանն ընդունելու համար քաղաքացիները կամ պետք է ունենան նոր սերնդի հեռուստացույց, կամ իրենց ունեցած հեռուստացույցին միացնեն ապակողավորիչ, ինչը լրացուցիչ ծախս է նրանց համար⁴¹¹: ՀՀ կառավարության որոշմամբ⁴¹² նախատեսվել էր համապատասխան սարքերով ապահովել 150.000 անապահով ընտանիքների: Նշվածի հետ մեկտեղ հատկանշական է, որ բնակչության անապահով խավին անվճար թվային ընդունիչներ տրամադրելու ուղղությամբ դեռևս հստակեցված չեն սոցիալական ծրագրի իրականացման սկզբունքները: Միաժամանակ, նշենք, որ Նախարարության տեղեկացմամբ 2014 թվականին ՀՀ բնակչությունն իրազեկվել է անալոգային հեռարձակումից թվային հեռարձակմանն անցնելու գործընթացի, ակնկալվող արդյունքների և նոր տեխնոլոգիայի օգտագործման գիտելիքների վերաբերյալ

⁴⁰⁸ ՀՀ կառավարության 07.04.2011 թվականի թիվ 362-Ա որոշում, ինչպես նաև ՀՀ կառավարության 30.06.2011 թվականի թիվ 948-Ն որոշում

⁴⁰⁹ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» (ՀՀՌՑ) փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է 1957 թվականին: Ներկայումս ՀՀՌՑ-ն 100 տոկոս պետական բաժնեմասով փակ բաժնետիրական ընկերություն է: http://www.mtc.am/main.php?lang=1&page_id=523

⁴¹⁰ «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե»՝ ի դեմս նախագահ Աշոտ Մելիքյանի, Երևանի մամուլի ակումբ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն: Տես էջ 7, <http://www.osce.org/hy/yerevan/125556?download=true>

⁴¹¹ Ըստ ոլորտի մասնագետների՝ սարքի արժեքը նվազագույնն արժե 20-25 ԱՄՆ դոլար, <http://www.hraparak.am/?p=64997&l=am/analogayinic+tvayin+herardzakman+ancnelis+herustaynkerutyuner+kpa+kven>, <http://www.azatutyun.mobi/a/26711717.html>

⁴¹² ՀՀ կառավարության՝ 12.11.2009 թվականի Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգին հավանություն տալու մասին թիվ 47 արձանագրային որոշում: <http://www.irtek.am/views/act.aspx?aid=51094>

Նախարարության կայքէջի միջոցով, տարբեր ՁԼՄ-ներին տրված հարցազրույցներով, 2014 թվականի նոյեմբերի 26-ին Նախարարությունում կազմակերպված կլոր սեղան-քննարկման միջոցով, որը լուսաբանվել է հեռուստատեսությամբ: Այնուամենայնիվ, բազմաթիվ դժգոհություններ են հնչում, որ հասարակության ստվար զանգված (հատկապես մարզերում) անտեղյակ է, թե, ըստ էության, ինչ է իրենից ներկայացնում հեռուստատեսության և ռադիոյի թվայնացումը, ինչպես պետք է օգտվել ապակողովորիչ սարքից և այլն, ինչը վտանգում է 2015 թվականի հուլիսի 1-ից անձանց տեղեկատվություն ստանալու իրավունքի իրականացումը: Այնինչ, յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից⁴¹³:

Առաջարկ. բարձրացնել հեռուստատեսության և ռադիոյի թվայնացման վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը, հստակեցնել անապահով ընտանիքներին անվճար թվային ընդունիչներ տրամադրելու սոցիալական ծրագրի իրականացման սկզբունքները:

2.4.5 Շարունակվում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց համար միջհամայնքային տրանսպորտի մատչելիության ապահովման խնդիրը:

Պաշտպանը բազմիցս բարձրաձայնել է հաշմանդամություն ունեցող անձանց՝ հանրային տրանսպորտային միջոցներից օգտվելու մատչելիության ապահովման խնդիրը, ինչը, սակայն, 2014 թվականին լուծում չի ստացել: Այնինչ, ՀՀ կառավարությունը պարտավորություն է ստանձնել⁴¹⁴ տրանսպորտային միջոցները հաշմանդամություն ունեցող անձանց օգտագործմանը հավասարապես մատչելի դարձնելու համար⁴¹⁵: Նշված պարտավորությունն առկա է նաև Հայաստանի կողմից վավերացված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, որտեղ նշվում է նաև, որ պետական իշխանության և կառավարման մարմինները հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովում են հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության միջոցներից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը⁴¹⁶: Նախարարության տվյալներով՝ 2014 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման իրավունքի խախտումների վերաբերյալ բողոքներ չեն ստացվել, սակայն հայտնի է, որ խնդիրն առկա է և տարիներ շարունակ խախտվում է հաշմանդամություն ունեցող անձանց

⁴¹³ ՀՀ Սահմանադրություն, հոդված 27

⁴¹⁴ ՀՀ կառավարության կողմից 2012թ. դեկտեմբերի 20-ի նիստի ընթացքում թիվ 51 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ 2012թ. հաշվետվությունը, որում նշվել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիության ապահովումը, բացի տեղական ինքնակառավարման մարմիններից, դրված է նաև ՀՀ կառավարության վրա:

⁴¹⁵ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի 2006թ. դեկտեմբերի 13-ի կոնվենցիա՝ վավերացված 2010թ.

⁴¹⁶ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 21

ագատ տեղաշարժման իրավունքը: Նշենք, որ հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն այլ խմբերի համար սոցիալական ծառայությունների հասանելիությունը բարձրացնելու նպատակով Նախարարության կողմից «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ⁴¹⁷ փոփոխությունների նախագծեր են ներկայացվել ՀՀ կառավարություն, որոնցով նախատեսվել է սահմանել, որ հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթին պետք է ներկայացվեն նաև հաշմանդամություն ունեցող և սակավաշարժ անձանց նստեցման և իջեցման համար հարմարեցված ավտոբուսներ⁴¹⁸, այնուամենայնիվ, խնդիրը դեռևս շարունակում է մնալ չլուծված:

Առաջարկ. ձեռնարկել բավարար միջոցներ՝ պրակտիկայում ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց համար միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցների մատչելիությունը:

2.4.6 Նախարարի հրամանով ստեղծված փոստային կապի ծառայություն իրականացնող կազմակերպությունը մի շարք դեպքերում չի ծանուցել քաղաքացիներին վարչական տուգանքների վերաբերյալ, ինչի արդյունքում խախտվել են քաղաքացիների իրավունքները:

2014 թվականի ընթացքում քաղաքացիները բազմիցս դժգոհել են, որ փոստային կապի ծառայություն իրականացնող կազմակերպությունն իրենց պատշաճ չի ծանուցել Ճանապարհային ոստիկանության (ՃՈ) կողմից նշանակած վարչական իրավախախտումների տուգանքների վերաբերյալ: Արդյունքում, մի շարք քաղաքացիներ ստիպված են եղել վճարել ՃՈ կողմից նշանակված վարչական իրավախախտումների տուգանքների անհիմն կրկնապատկված գումարները: Այսպես, ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ վարչական տույժ նշանակելու մասին ՃՈ որոշումները հասցեատերերին հանձնելու գործառույթն իրականացվել է նաև «Հատուկ կապ» ՓԲԸ-ի միջոցով: Նշենք, որ «Հատուկ կապ» ՓԲԸ-ն Նախարարության իրավաբանական անձի կարգավիճակով հատուկ նշանակություն ունեցող ընկերություն է⁴¹⁹՝ ստեղծված ՀՀ կապի նախարարության համապատասխան որոշման և հրամանի համաձայն⁴²⁰, որի հիմնադրի անունից հանդես եկող պետական կառավարման լիազորված մարմինն է ՀՀ տրանսպորտի և կապի

⁴¹⁷ ՀՀ կառավարության 16.08.2001թ. «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 762 որոշում

⁴¹⁸ Նախագիծը՝ <http://www.regulations.am/am/transportation-sector/>

⁴¹⁹ http://www.mtc.am/main.php?lang=1&page_id=522

⁴²⁰ ՀՀ կապի նախարարության 1997 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 5 որոշման և 1998 թվականի հունվարի 8-ի թիվ 1 հրաման (Տես՝ «Հատուկ կապ» ՓԲԸ-ի կանոնադրություն՝ հաստատված ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2009 թվականի թիվ 219-Ս հրամանով, <http://www.mtc.am/edfiles/files/Hramanner/219.2.pdf>):

նախարարությունը⁴²¹: Թեև վերջինս ՃՈ-ին տրամադրած սկզբնական տեղեկատվության համաձայն, տուգանքների վերաբերյալ վարչական ակտերը հանձնել էր քաղաքացիներին, այնուամենայնիվ, հիմք ընդունելով մի շարք քաղաքացիների դժգոհությունները, ՃՈ-ն պարզել է, որ նշված վարչական ակտերն իրականում փաստացի չեն հանձնվել հասցեատերերին: Արդյունքում, ՃՈ-ն հարկադրված է եղել հրաժարվել «Հատուկ կապ» ՓԲԸ-ի հետ համագործակցելուց, որի մատուցած ծառայություններից է առաջացել կրկնակի տույժ վճարելու վերաբերյալ քաղաքացիների հիմնական զանգվածի դժգոհությունը: Նշվածի վերաբերյալ Նախարարությունը հայտնել է, որ «Հատուկ կապ» ՓԲԸ-ի վերոգրյալ խախտումները կրում են քաղաքացիական բնույթ և նշված կազմակերպությունն իրականացրել է իր գործողությունները ՀՀ ոստիկանության հետ կնքած պայմանագրերի հիման վրա, հետևաբար Նախարարությունն իրավասու չէ միջամտելու ոլորտում գործող իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական հարաբերություններին: Այնինչ, Նախարարության կանոնադրական խնդիրներից և նպատակներից է նաև փոստի գործունեության արդյունավետ կառավարումը և համակարգումը⁴²²:

Առաջարկ. արդյունավետ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու «Հատուկ կապ» ՓԲԸ-ի միջոցով փոստային կապի ծառայության պատշաճ մատուցումը քաղաքացիներին:

⁴²¹ «Հատուկ կապ» ՓԲԸ-ի կանոնադրություն, կետ 1, պարբերություն 4

⁴²² ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կանոնադրության կետ 7(բ)՝ հաստատված ՀՀ կառավարության 21.11.2002 թվականի թիվ 1809-Ն որոշմամբ

2.5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2014 թվականին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ոլորտում դրական զարգացումներն արձանագրված չեն, քանի որ 2014 թվականի զեկույցի համար Հանձնաժողովի կողմից չի տրամադրվել համապատասխան պատշաճ տեղեկատվություն:

Առկա թերություններն ու խնդիրները

2.5.1 Հեռուստահեռարձակման դաշտում առ այսօր առկա է բազմակարծության պակաս, ինչին անդրադարձ էր կատարվել դեռևս 2013 թվականի Պաշտպանի տարեկան զեկույցում:

Չնայած նրան, որ տպագիր և առցանց մամուլին հիմնականում հաջողվում է ապահովել բազմազան քաղաքական, հասարակական ու գաղափարախոսական ուղղվածության տեղեկատվության տրամադրումը՝ հեռուստահեռարձակվող լրատվամիջոցներում դեռևս առկա է բազմակարծության պակաս: Նշված խնդրի առաջացմանը նպաստել են նաև Հանձնաժողովի կողմից ոլորտի թերի վերահսկողությունը, մի քանի տարի շարունակ հեռուստահաճախականությունների մրցույթներ չանցկացնելը, ինչպես նաև հանրային հեռուստաընկերության կողմնակալությունը տեղեկատվության հաղորդման ոլորտում: Այսպես, հեռուստաձեռքբերի հեռարձակումն իրականացվում է լիցենզիայի հիման վրա, որի տրամադրման համար անցկացվող մրցույթում Հանձնաժողովը հաշվի է առնում թեկնածուների բազմակարծություն խթանելու կարողությունը՝ որպես լիցենզավորված անձի ընտրության չափանիշ⁴²³: Առհասարակ, որպես ոլորտի լիազոր մարմին Հանձնաժողովը պարտավոր է հաշվի առնել բազմակարծության գործոնը ոչ միայն լիցենզիա տրամադրելու ժամանակ, այլև, համաձայն ԵԽԽՎ հանձնարարականի, դրանից հետո էլ պետք է քայլեր ձեռնարկի՝ ապահովելու բազմակարծությունը հեռարձակման ոլորտում (անգամ թվային հեռարձակման համակարգի անցման ժամանակ)⁴²⁴: Մինչդեռ ողջ տարվա ընթացքում շարունակվել են դժգոհությունները հեռուստահեռարձակման դաշտում բազմակարծության պակասի վերաբերյալ, ինչպես նաև մի շարք իրավապաշտպան կառույցներ անդրադարձել են խնդրի առկայությանը, սակայն Հանձնաժողովի կողմից վերոնշյալ չափանիշների խախտման որևէ դեպք չի արձանագրվել: Մյուս կողմից, Հանձնաժողովը չի ձեռնարկել բավարար և անհրաժեշտ

⁴²³ Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենք, հոդված 49

⁴²⁴ ԵԽԽՎ Rec(2003)9, <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=38043&Site=CM>

քայլեր տվյալ ոլորտում բազմակարծության խթանման ուղղությամբ: Այսպես, ոլորտի փորձագետների համոզմամբ հեռուստատեսությունը, լինելով հասարակության համար տեղեկատվություն ստանալու հիմնական և մատչելի աղբյուր, հիմնականում վերահսկվում է, իսկ լրատվամիջոցների մեծ մասը կախվածության մեջ է խոշոր ընկերություններից, մի շարք քաղաքական կուսակցություններից⁴²⁵: Նույն հարցը բարձրացրել է նաև «Human rights watch» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը 2014, 2015 թվականներին հրապարակված իր զեկույցներում, որտեղ, ի թիվս այլ խնդիրների, բազմակարծության պակասի դրսևորում է նշվել այն, որ Հայաստանի 13 հեռուստատեսություններից միայն մեկն է ցուցադրում ուղիղ հեռարձակմամբ քաղաքական հաղորդումներ⁴²⁶: Ավելին, բազմաթիվ փորձագետների պնդմամբ հեռարձակվող ՋԼՄ-ներում բազմակարծության ապահովման խոչընդոտներից է եղել նաև Հանձնաժողովի կողմից 2010 թվականից ի վեր հեռուստահաճախականությունների մրցույթներ չանցկացնելը: Նշվածը Հանձնաժողովի կողմից պատճառաբանվել է թվային հեռարձակման անցման փաստով, սակայն այս անցման ժամկետի երկարաձգման հետևանքով (նախատեսվում է 2015 թվականի հուլիսից) հեռուստահաճախականությունների մրցույթներ չեն անցկացվել արդեն 5 տարի, որի ընթացքում ոչ մի նոր ընկերություն հեռարձակում իրականացնելու համար լիցենզիա ստանալու հնարավորություն չի ունեցել: Իսկ Հայաստանում հեռուստահաճախականությունների մրցույթների անցկացման կարգի վերաբերյալ ԵԽԽՎ վերահսկիչ մարմինը դեռևս 2011 թվականին նշել էր, որ 2010 թվականի դեկտեմբերի մրցույթին Հանձնաժողովը անհրաժեշտ չափով ուշադրություն չի դարձրել բազմակարծության ապահովման չափանիշին, որի հետևանքով մրցույթը չի հանգեցրել եթերում ավելի պլուրալիստական միջավայրի ձևավորմանը⁴²⁷: Նշենք նաև, որ ինչպես 2013, այնպես էլ 2014 թվականին բազմակարծության սկզբունքների պահպանումը Հանձնաժողովը հիմնավորել է միայն 2012 թվականի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների և 2013 թվականի Հանրապետության Նախագահի և Երևանի ավագանու ընտրությունների համակողմանի և հավասար պայմաններով լուսաբանման փաստով և նշված ժամանակահատվածում խախտումներ չարձանագրելու հանգամանքով: Մինչդեռ, եթերի բազմակարծության լիարժեք ապահովումը չի կարող հիմնավորվել միայն նախորդ տարիներին տեղի ունեցած ընտրությունների ընթացքում հեռարձակման հավասար պայմանների ապահովմամբ: Մյուս կողմից, մի շարք իրավապաշտպաններ, քաղաքական գործիչներ ու ակտիվիստներ դժգոհություններ են հայտնել հանրային հեռուստաընկերության կողմից կողմնակալ, ոչ պատշաճ կերպով տեղեկատվության մատուցման վերաբերյալ: Մասնավորապես, բողոքներ են ստացվել առ այն, որ հանրային հեռուստաընկերության կողմից լիարժեք ու համակողմանիորոն չեն լուսաբանվել, իսկ առանձին դեպքերում՝ ընդհանրապես չեն լուսաբանվել տեղի ունեցած բազմաթիվ քաղաքացիական միջոցառումներ, խաղաղ հավաքներ և այլն: Այս

⁴²⁵ Հայաստանում մեդիաների թվայնացման քարտեզագրում

<http://www.opensocietyfoundations.org/sites/default/files/mapping-digital-media-armenia-ar-20140331.pdf>,

⁴²⁶ http://www.hrw.org/sites/default/files/wr2015_web.pdf, էջ 71, /live political talk shows/

⁴²⁷ «ԵԽԽՎ վերահսկիչ կոմիտեն արձանագրեց Հայաստանի հեռարձակման ոլորտում առկա բացթողումներ», սպրիլ 2011թ., <http://www.ypc.am/bulletin/ln/en/t/45072>

խնդիրը բարձրաձայնվել է նաև ՀՀ Ազգային ժողովում Հանրային հեռուստառադիոընկերության 2013 թվականի գործունեության վերաբերյալ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հաղորդման ժամանակ⁴²⁸: ԱԺ պատգամավորները նաև քննարկել են այն հարցը, որ մի շարք դեպքերում Հանրային հեռուստաընկերության քաղաքական հաղորդումներին չեն հրավիրվում ընդդիմության ներկայացուցիչներ: Սակայն, ըստ օրենքի՝ հանրային հեռուստաընկերությունը պետք է լինի անկախ, իր գործունեությամբ ապահովի տեղեկատվական, քաղաքական, տնտեսական և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանությունը⁴²⁹:

Առաջարկ. վերահսկել լիցենզավորված ընկերությունների կողմից բազմակարծությունը խթանելու պահանջի կատարումը, անհրաժեշտ չափով ուշադրություն դարձնել բազմակարծության խթանման կարողության չափանիշին հետազայում անցկացվելիք մրցույթների ժամանակ, վերահսկել հանրային հեռուստաընկերության կողմից տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանության ապահովումը:

2.5.1 Գործող օրենսդրությունը չի կարգավորում արբանյակային, ինտերնետային, ինչպես նաև բջջային կապի միջոցով հաղորդումներ հեռարձակող ընկերությունների գործունեությունը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ մամուլի ազատության վրա:

Փորձագետների պնդմամբ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք) չի կարգավորում արբանյակային, ինտերնետային, ինչպես նաև բջջային կապի միջոցով հեռարձակումները՝ չնայած նրան, որ գործնականում դրանք իրականացվում են: Ըստ օրենքի՝ ՀՀ տարածքում հեռուստառադիոծրագրերի հեռարձակումը հնարավոր է իրականացնել միայն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում⁴³⁰: Նման կարգավորումն, ըստ էության, հետազայում կարող է դառնալ արբանյակային, ինտերնետային, ինչպես նաև բջջային կապի միջոցով հեռարձակումների արգելման, սահմանափակման հիմք, քանի որ հեռարձակման այդ տեսակներն օրենքում հստակ սահմանազատված չեն, նախատեսված չեն կարգավորումներ այլ դեպքերի համար⁴³¹: Ստացվում է, որ օրենքում չեն տարբերակվում արբանյակային, ինտերնետային, ինչպես նաև բջջային կապի միջոցով հեռարձակման դեպքերը, և հաշվի չեն առնվում դրանց առանձնահատկությունները: Ավելին, նման կարգավորումների բացակայությունը կարող է գործնականում հանգեցնել հեռարձակման թույլտվության սահմանափակման այն ընկերությունների կողմից, որոնց հեռարձակման միջոցները չեն կարգավորվում Օրենքով սահմանված կարգով: Այս խնդրին անդրադարձել է նաև մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Դունյա Միյատովիչը⁴³²՝ նշելով արբանյակային, ինտերնետային, ինչպես նաև բջջային

⁴²⁸ http://parliament.am/draft_docs5/483.pdf

⁴²⁹ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, հոդված 26

⁴³⁰ Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենք, հոդված 46

⁴³¹ <http://www.osce.org/fom/68242?download=true>

⁴³² <http://www.osce.org/fom/69431>

կապի միջոցով հեռարձակման օրենսդրական կարգավորումների բացակայության մասին: Առհասարակ, լրատվամիջոցների բազմազանությունը նպաստում է տեղեկատվական դաշտի մեծացմանը, տեղեկատվության աղբյուրների բազմազանությանը և անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ ներկայիս օրենսդրությունը տեխնոլոգիաների զարգացմանը համահունչ փոփոխելու և բարելավվելու ուղղությամբ⁴³³:

Առաջարկ. օրենսդրությամբ տարանջատել հեռարձակման յուրաքանչյուր ձևի կարգավորումը՝ հաշվի առնելով դրա առանձնահատկությունները:

2.5.2 Դեռևս 2013 թվականի Պաշտպանի տարեկան զեկույցում նշվել և մինչ օրս չի լուծվել մանկական և լրատվական հեռուստահաղորդումները լուսագրերով և ժեստերի լեզվով թարգմանությամբ պատշաճ կերպով ապահովելու խնդիրը:

Պաշտպանի և բազմաթիվ քաղաքացիների կողմից բազմիցս բարձրաձայնվել է այն, որ, հակառակ օրենքի պահանջին, լսողական խնդիրներ ունեցողների համար մատչելի չեն հեռարձակվող մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումները: Իսկ մի շարք հաղորդումների ժամանակ լուսագրերը, որպես սուրդոթարգմանության այլընտրանք, պարունակել են միայն հակիրճ տեղեկատվություն ամբողջ նյութից՝ չապահովելով ամբողջական տեղեկատվության տրամադրումը: Այսպես, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով ամրագրվում է, որ հանրային հեռուստառադիոընկերությունը և ՀՀ-ում գործող այլ մասնավոր հեռուստաընկերությունները, որոնք հեռարձակում են մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող անձանց համար հնարավոր տեղեկատվության ստացման մատչելիությունը, օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրերով: Ավելին, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն՝ պետությունը պարտավոր է ՋԼՄ-ների և ինտերնետի միջոցով տեղեկատվություն տրամադրողներից պահանջել իրենց ծառայությունները մատչելի դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրում նախատեսված է Հանրային հեռուստաընկերության կողմից ապահովել հանրության համար առավել հարմար ժամի հեռարձակվող լրատվական հաղորդումներում սուրդոթարգմանություն կամ հայերեն լուսագրեր՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան⁴³⁴: Չնայած պետության միջազգային պարտավորություններին և ներպետական օրենսդրության պահանջներին՝ բազմաթիվ դեպքերում չի ապահովվել նշյալ անձանց համար տեղեկատվության մատչելիությունը պատշաճ լուսագրերի ու

⁴³³ <http://www.osce.org/fom/69431>

⁴³⁴ ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշում Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին

սուրդոթարգմանության բացակայության պատճառով: Հանձնաժողովին առաջարկվել էր միջոցներ ձեռնարկել ապահովելու լսողական խնդիրներ ունեցող անձանց համար լիարժեք տեղեկատվության ստացումը և դրա մատչելիությունը: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը հայտնել էր, որ ընթացիկ տարում խնդրի կապակցությամբ բողոքներ չեն ներկայացվել և գործող հեռուստաընկերությունների կողմից Օրենքի նշյալ պահանջների խախտումներ իրենք չեն արձանագրել: Ստացվում է, որ 2014 թվականի ընթացքում Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ չի կատարել բավարար քայլեր՝ ուսումնասիրելու օրենսդրական պահանջների կատարումը հեռուստաընկերությունների կողմից, ինչպես նաև մշակելու նոր մեխանիզմներ լսողական խնդիրներ ունեցող անձանց լիարժեք տեղեկատվության ստացման մատչելիության ապահովման նպատակով:

Առաջարկ. վերահսկել հանրային հեռուստաընկերության և մասնավոր հեռուստաընկերությունների կողմից հեռարձակվող մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներում ժեստերի լեզվով թարգմանության կամ լուսագրերի ապահովման պահանջի կատարումը:

2.5.3 Մի քանի տարի շարունակ Հանձնաժողովը չի ձեռնարկել քայլեր ցերեկային ժամերին էրոտիկ կադրերով կամ բռնություն պարունակող հաղորդումների ցուցադրումները բացառելու ուղղությամբ:

Օրենքով էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-ից մինչև 06.00-ն ընկած ժամանակահատվածում (*վերջիններիս չափորոշիչները պետք է սահմանվեն օրենքով*)⁴³⁵: Սակայն, առ այսօր չեն մշակվել նշյալ չափորոշիչները, որոնցով հնարավոր կլիներ գնահատել, որակել հաղորդումները որպես արգելված բնույթի և սահմանափակել դրանց ցուցադրումը: Գործնականում սա հանգեցնում է ցերեկային ժամերին տարբեր հեռուստաալիքների եթերում էրոտիկ կադրերով և բռնության տեսարաններով, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների ազատ ցուցադրմանը: Այսպես, օրինակ, 2014 թվականին մի խումբ քաղաքացիներ դիմումներ են ներկայացրել Հանձնաժողովին արգելված տեսարաններով սերիալների ցուցադրությունը մինչև ժամը 24.00-ը արգելելու պահանջով⁴³⁶: Սակայն, Հանձնաժողովն ընթացք չի տվել այդ դիմումներին՝ պատճառաբանելով օրենքում համապատասխան չափորոշիչների բացակայությամբ: Հիշեցնենք՝ Հանձնաժողովի կողմից նմանատիպ հիմնավորմամբ մեկ այլ դիմում էլ մերժվել է նաև 2013 թվականին, երբ քաղաքացու կողմից բարձրացվել էր հեռուստաալիքներից մեկով էրոտիկ կադրերով մուլտֆիլմի հեռարձակումը սահմանափակելու հարցը: Այսպիսով, օրենքով անհրաժեշտ

⁴³⁵ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 2

⁴³⁶ «Հեռուստատեղի մաքրման պահանջ» նախաձեռնությունը դիմել է Հանձնաժողովին համապատասխան սերիալի ցուցադրում մինչև 24.00 դադարեցնելու պահանջով

չափորոշիչներ չսահմանելը գործնականում հանգեցրել է մի իրավիճակի, երբ օրենքի խախտման դեպքում օրինախախտը մնացել է անպատիժ, իսկ արգելված տեսարաններով հաղորդումները շարունակվել են ցուցադրվել արգելված ժամերին: Չնայած նրան, որ Հանձնաժողովը օրենսդրական նախաձեռնությամբ օժտված մարմին չէ, գտնում ենք, որ, որպես ոլորտի լիազոր մարմին, կարող է օրենսդրական նախաձեռնությամբ օժտված մարմինների միջոցով և համատեղ համապատասխան օրենքների կատարելագործման նպատակով իրականացնել նախագծերի մշակում: Առավել ևս, որ նման չափորոշիչներ արդեն սահմանված են Հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 15-ի որոշմամբ⁴³⁷, և անհրաժեշտ է միայն վերջիններս ամրագրել համապատասխան օրենքում:

Առաջարկ. ցուցաբերել նախաձեռնողականություն՝ ուղղված էրոտիկ բնույթի հեռուստատաղիտհաղորդումների, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչներն օրենքով սահմանելու և իրավասու մարմիններին ներկայացնելու ուղղությամբ:

2.5.4 Գործող օրենսդրությունը նախատեսում է սահմանափակումներ ազգային փոքրամասնությունների լեզուներով հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումների եթերաժամի համար:

Հանրային հեռուստատաղիտընկերությունը պարտավոր է եթերային ժամանակ տրամադրել Հայաստանում ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար, սակայն, ըստ օրենքի, այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը⁴³⁸: Եթերաժամի սահմանափակում նախատեսող ՀՀ օրենսդրության վերոնշյալ կարգավորումները սահմանվել են օրենքում 2008 թվականին ընդունված փոփոխությունների արդյունքում⁴³⁹, ինչը փորձագետների կողմից համարվել է խնդրահարույց: Այս համատեքստում պետք է նշել, որ ՀՀ կողմից վավերացված Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին 1995 թվականի շրջանակային կոնվենցիան նախատեսում է, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիքներ ունենալու և փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությունը: Ավելին, համաձայն Կոնվենցիայի՝ լրատվական միջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք չպետք է ենթարկվեն խտրականության⁴⁴⁰: Եվրոպայի Խորհրդի

⁴³⁷ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56607>

⁴³⁸ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5.րդ մասի 3-րդ կետի դ.

ենթակետով

⁴³⁹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=49184>, ՀՕ-29-Ն

⁴⁴⁰ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81178>

Նախարարների կոմիտեի գնահատմամբ օրենքի նշյալ դրույթը սահմանափակում է ազգային փոքրամասնությունների լեզուներով հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումները⁴⁴¹, ինչը չի բխում Կոնվենցիայի պահանջներից: Ավելին, Կոմիտեն ավստասանքով նշել է, որ 2008 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում Հայաստանում ազգային փոքրամասնությունների լեզուներով ծրագրերի համար չի սահմանվում որևէ նվազագույն ժամանակ⁴⁴²: Նշյալ կարգավորումների արդյունքում խախտվում են ազգային փոքրամասնության պատկանող անձանց՝ իրենց կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը:

Առաջարկ. ի կատարումն ԵՄ Նախարարների կոմիտեի 2012թ. CM/ResCMG(2012)1 բանաձևի՝ ցուցաբերել նախաձեռնողականություն համապատասխան օրենսդրական փոփոխություններ իրականացնելու ուղղությամբ՝ սահմանելով երաշխավորված նվազագույն ժամանակահատված ազգային փոքրամասնության լեզուներով հեռարձակումների համար և վերացնելով այդ լեզուներով հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումների եթերաժամի սահմանափակումները:

⁴⁴¹ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (http://www.gov.am/u_files/file/kron/Resolution.pdf) իրականացմանվերաբերյալ ԵՄ 2012 թվականի բանաձև http://www.gov.am/u_files/file/kron/Resolution.pdf
http://www.gov.am/u_files/file/kron/Opinion.pdf

⁴⁴² http://www.gov.am/u_files/file/kron/Opinion.pdf, կետ 81

2.6 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության (Նախարարություն) իրավասությունների ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- 31 ՓՀԷԿ-ում կատարված ստուգումների արդյունքում հաշվարկվել է վարչական իրավախախտման վերաբերյալ 4.45 մլն դրամի տուգանք և շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցում՝ 89.1 մլն դրամ:
- «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի հետ սկսել է «Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներին՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» ծրագիրը՝ ՓՀԷԿ-երի կառուցման և գետի վրա առաջացող ծանրաբեռնվածության հետևանքների վերաբերյալ համալիր ու բազմակողմանի ուսումնասիրություններ և գիտական վերլուծություն ապահովելու համար:
- Նախարարությունը ձեռնարկել է համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի փաթեթի մշակումը և քննարկումը, որոնցով մասնավորապես սահմանել են բնապահպանական վճարի դրույքաչափեր՝ երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում (արտադրական լցակայաններում) օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման և հարստացման արդյունքում առաջացած ապարների պահման համար՝ խթանելով անթափոն տեխնոլոգիաների ներդրումը:

Առկա թերություններն ու խնդիրները

- 2.6.1 **«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում առկա են մի շարք բացթողումներ ու թերություններ, որոնք հակասում են Հայաստանի միջազգային պարտավորություններին և խոչընդոտում շրջակա միջավայրի արդյունավետ պաշտպանությանը:**

2014 թվականի հունիսի 21-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (Օրենք) ընդունումը առաջ է բերել մի շարք բնապահպանների և հասարակական կազմակերպությունների մոտ դժգոհություններ: Մասնավորապես, Օրենքում կան մի շարք բացթողումներ և թերություններ, որոնք հակասության մեջ են մտնում Հայաստանի կողմից վավերացված

Օրհուսի կոնվենցիայի (Կոնվենցիա) պահանջների հետև և խոչընդոտում են բնապահպանական մի շարք խնդիրների լուծմանը: Այսպես, մինչ Օրենքի ընդունումը գործում էր «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (1995թ.), որի գործողության ընթացքում Կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն (Compliance Committee) (Կոմիտե) իր կայացրած որոշումներում⁴⁴³ անդրադարձել էր ՀՀ օրենսդրության և պրակտիկայի անհամապատասխանությանը Կոնվենցիային և առաջարկել փոխել օրենսդրությունը՝ համապատասխանեցնելով այն Կոնվենցիայի դրույթներին⁴⁴⁴: Մասնավորապես, Կոմիտեն նշել է, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներն, ինչպես նաև հանրային մասնակցության մեխանիզմները պարզեցման կարիք ունեն⁴⁴⁵, անհրաժեշտ է վերացնել բոլոր տեսակի խոչընդոտները: Օրենսդրական փոփոխությունների հետևանքով, սակայն, այդ գործընթացն ավելի է բարդացվել, իսկ հանրային մասնակցությունը այդ գործընթացում՝ հասցվել նվազագույնի: Մասնավորապես՝ Կոմիտեն նշել է, որ որոշումների ընդունման գործընթացում հանրությունը պետք է տեղեկացվի հնարավորինս շուտ⁴⁴⁶, այսինքն, մինչև օրենքի փոփոխությունը նախկինում սահմանված 30 օր ծանուցման ժամկետը պետք է երկարացվեր, սակայն փոփոխությունների արդյունքում սահմանվել է ավելի կարճ ժամանակահատված՝ 7 օր: Բացի դրանից՝ Կոմիտեն նշել է, որ հանրային մասնակցության կազմակերպման գործում տարբեր դերակատարների (պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկողի) պարտականությունները պետք է առավել պարզ տարանջատված լինեն⁴⁴⁷: 1995 թվականի օրենքում հստակ նշված էր բնապահպանական փորձաքննության գործընթացում մասնակցող յուրաքանչյուր մարմնի՝ հանրությանը ծանուցելու պարտականությունը⁴⁴⁸, սակայն նոր օրենքում պարտականությունները հստակ բաշխված չեն, և պարզ չէ գործընթացի փուլերի հաջորդականությունը: Բացի դրանից՝ փոփոխությունների արդյունքում օրենքից հանվել է նաև համայնքի կամ շահագրգիռ կողմերի պահանջով փորձաքննություն իրականացնելու պահանջը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում այլընտրանքային լուծումները դիտարկելու պահանջը: Փոխարենը, Օրենքում ավելացվել է մի խնդրահարույց դրույթ, որը խառնաշփոթ է ստեղծում շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման հարցում և նվազեցնում դրանց արդյունավետությունը:

⁴⁴³ <http://www.unece.org/env/pp/ccimplementation.html> , <http://www.unece.org/env/pp/cc.html>

⁴⁴⁴ http://www.un.am/res/UN%20Treaties/XVII_22.pdf (հայերեն),

<http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/cep43e.pdf> (անգլերեն)

⁴⁴⁵ Decision IV/9a on compliance by Armenia with its obligations under the Convention, 4(a) <http://bit.ly/1vqBkOC>

Decision V/9a on compliance by Armenia 4(c)(i), <http://bit.ly/186JL6>

Օրհուսի կոնվենցիայի (Կոնվենցիա) հոդված 3

⁴⁴⁶ Decision IV/9a on compliance by Armenia with its obligations under the Convention, 4(b) <http://bit.ly/1vqBkOC>

Decision V/9a on compliance by Armenia 4(c)(ii), <http://bit.ly/186JL6>

Կոնվենցիայի հոդված 6, մաս 4

⁴⁴⁷ Decision IV/9a on compliance by Armenia with its obligations under the Convention, 4(c) <http://bit.ly/1vqBkOC>

Decision V/9a on compliance by Armenia 4(c)(iii), <http://bit.ly/186JL6>

⁴⁴⁸ <http://bit.ly/1FcIFaf>

Մասնավորապես, նոր դրույթի համաձայն՝ փորձաքննության կարող են ներկայացվել ոչ թե գործունեության տեսակները, այլ այն սարքավորումները, որոնց միջոցով իրականացվում են համապատասխան նախագծերը⁴⁴⁹: Միաժամանակ, Օրենքը չի նախատեսում ամբողջական մեխանիզմներ, որոնցով կիրականացվի ցանկացած նախագծի/ծրագրի իրականացումից տնտեսությանը տրվող օգուտների, սակայն միաժամանակ նաև բնապահպանությանը հասցվող վնասների համեմատական վերլուծությունը, համալիր գնահատումը, և որի իրականացման արդյունքը ցույց կտա նշված օգուտների և վնասների հարաբերակցությունը: Օրենքը թեև նախատեսում է, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատում է ՀՀ կառավարությունը⁴⁵⁰, սակայն մտահոգիչ է, որ Նախարարությունը նշված հարցը կարգավորող իրավական ակտի նախագիծը նախապես չի մշակել և ներկայացրել ՀՀ կառավարություն Օրենքի նախագծի ներկայացման հետ միաժամանակ⁴⁵¹: Արդյունքում, Օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից բազմաթիվ թույլտվություններ են տրվել տարբեր տեսակի գործունեությունների համար՝ առանց հաշվի առնելու վերը հիշատակված օգուտների և վնասների հարաբերակցության վերաբերյալ վերլուծությունը: Այսպիսով, հիմնականում չեն կատարվել Օրենքի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի թիվ IV/9a որոշման պահանջները⁴⁵²: Ըստ բնապահպանների՝ նշված թերությունների և Օրենքում առկա մի շարք այլ բացերի մասին ՀԿ-ները և միջազգային փորձագետներն իրենց առաջարկությունները և դիտողությունները ներկայացրել են պատկան մարմիններ դեռևս Օրենքի նախագծային փուլում: Նախարարությունը, թեև հավաստիացրել է, որ բոլոր առաջարկները հաշվի են առնվել և մշակվել է նախագծի նոր տարբերակ, այնուամենայնիվ Օրենքի նախագծի բովանդակությունը մնացել էր անփոփոխ՝ ներառելով նույն թերությունները:⁴⁵³ Սրան զուգահեռ Նախարարությունը խուսափել է տեղեկատվություն ներկայացնել, թե ո՞ր հարցերի շուրջ արված առաջարկներն են մերժվել և ի՞նչ հիմնավորմամբ են դրանք մերժվել:

Առաջարկ. մշակել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի փոփոխություններ և լրացումներ՝ այն համապատասխանեցնելու Օրենքի կոնվենցիայի պահանջներին, ինչպես նաև քննարկման դնել օրենսդրական նախագծերի վերաբերյալ բնապահպանների ներկայացրած դիտողությունները:

⁴⁴⁹ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդված 9

⁴⁵⁰ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդված 17, մաս 4

⁴⁵¹ Օրենքն ընդունվել է 2014 թվականի հունիսի 21-ին, իսկ «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելու վերջնաժամկետ է նախատեսված 2015 թ. մարտի 3-րդ տասնօրյակը: (ՀՀ վարչապատեի 19.08.2014 թվականի թիվ 782-Ա որոշում)

⁴⁵² Decision IV/9a on compliance by Armenia with its obligations under the Convention <http://bit.ly/1vqBkOC>

⁴⁵³ <http://bit.ly/1FcIFaf>

2.6.2 Առանց իրավաչափ հիմնավորման շուրջ 2 տարի ձգձգվել է «Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական տեսչական ստուգումների անցկացումը, ինչով խախտվել է քաղաքացիների՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Նախարարությունը բազմիցս (շուրջ երկու տարի) հավաստիացրել է, որ «Թեղուտ» ՓԲԸ-ն ընդգրկված է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության ստուգման ենթակա կազմակերպությունների՝ 2013, 2014 և 2015 թվականների ցանկերում⁴⁵⁴, սակայն մինչ օրս որևէ տեսչական ստուգումներ չեն իրականացվել: Խնդիրն այն է, որ մի շարք բնապահպաններ ահազանգել են, որ Թեղուտի հանքավայրի շահագործումը կատարվում է ոչ թե 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԲՓ-135 փորձաքննական դրական եզրակացության պահանջներին համապատասխան, այլ 2010 թվականին փոփոխված նախագծի հիման վրա, որը չի անցել օրենքով սահմանված ընթացակարգերը և չի ենթարկվել բնապահպանական փորձաքննության: Այնինչ, ըստ ստացված բողոքների՝ հանքավայրի անհիմն կերպով կազմակերպված շահագործման արդյունքում նախագծային շեղումների պատճառով վնաս է հասցվել Հայաստանի Հանրապետությանը,⁴⁵⁵ Թեղուտ և Շնող համայնքներին և համայնքի բնակիչներին⁴⁵⁶: Նշենք, որ առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 2010 թվականին փոփոխված նախագծով Թեղուտի հանքավայրի շահագործումը չի բխել այն ժամանակ գործող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» 1995 թվականի ՀՀ օրենքի պահանջներից⁴⁵⁷: Ավելին, նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում փորձաքննական եզրակացության պայմանները խախտելու դեպքում լիազորված մարմինը⁴⁵⁸ պարտավոր է մասամբ կամ ամբողջովին փակել,

⁴⁵⁴ Թեև, ըստ Նախարարության, «Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական ստուգումներ պետք է իրականացվեին 2013թ. չորրորդ եռամսյակում, հետագայում Նախարարությունը հետաձգեց այդ ստուգումների իրականացումը՝ դրանք նախատեսելով իրականացնել 2014թ.: 2013թ.-ին նախատեսվող ստուգումների չանցկացումը պատճառաբանվում էր հանքավայրի փաստացի հանքաշահագործում չիրականացնելու հանգամանքով, մինչդեռ ներկայումս հանքավայրը շահագործվում է առանց համապատասխան անհրաժեշտ ստուգումների: Այժմ դա նախատեսված է կատարել 2015թ.:

⁴⁵⁵ 357 հա անտառի հատում, ինչպես նաև անկախ փորձագետների գնահատմամբ՝ ավելի քան 1000 հա անտառների ուղղակի և անուղղակի ոչնչացում (ջրազրկման, թունավոր թափոնների ազդեցության, արդյունահանման ծավալների մեծացման արդյունքում), ինչը կհանգեցնի այդ տարածքում էկոհամակարգի իսպառ ոչնչացման: <http://bit.ly/16RC4Gk>

⁴⁵⁶ Հանքարդյունաբերությունը բացասաբար է անդրադառնում համայնքներում արտադրվող սննդամթերքի շուկայական վարկանիշի վրա՝ մեծացնելով բնակիչների տնտեսական խոցելիությունն ու նվազեցնելով կենսապահովման այլընտրանքների հնարավորությունը: <http://bit.ly/16RC4Gk>

⁴⁵⁷ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք /ուժը կորցրած է ճանաչվել 09.08.2014թվականին/, 12-րդ հոդված

⁴⁵⁸ Բնապահպանական պետական տեսուչը պարտավոր է՝ օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված իրավասությունների սահմաններում ուսումնասիրել քաղաքացիների, կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բողոքներն ու դիմումները և դրանց ընթացք տալ, բնապահպանական օրենսդրության և դրան համապատասխան ընդունված իրավական ակտերի դրույթների կիրառման վերաբերյալ իրականացնել բացատրական

կասեցնել կամ արգելել նախատեսվող գործունեության իրականացումը մինչև փորձաքննական եզրակացության համար համապատասխան պայմանների ապահովումը⁴⁵⁹: Միաժամանակ, վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել⁴⁶⁰: Տվյալ դեպքում հակառակն ապացուցելու համար Նախարարությունը չի կատարել օրենքով իրեն վերապահված լիազորությունները, մասնավորապես՝ օրենքով սահմանված կարգով չի ուսումնասիրել քաղաքացիների, կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բողոքներն ու դիմումները և դրանց ընթացք չի տվել: Այսպիսով, Նախարարությունը խախտել է քաղաքացիների՝ իրավունքների և ազատությունների պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը⁴⁶¹:

Առաջարկ. **ողջամիտ ժամկետներում ապահովել «Թեղուտ» ՓԲԸ-ում օրենքով սահմանված կարգով անհրաժեշտ ստուգումների իրականացումը, ինչպես նաև վերահսկել Թեղուտի հանքավայրի շահագործումը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:**

2.6.3 Նախարարությունն իր իրավասության շրջանակներում չի ձեռնարկել բնապահպանության ոլորտում խախտումների կանխարգելման արդյունավետ միջոցներ, ինչպես նաև չի իրականացրել անհրաժեշտ քանակությամբ բնապահպանական տեսչական ստուգումներ՝ բացահայտելու և կանխելու հնարավոր խախտումները:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ Նախարարության կողմից բնապահպանության օրենսդրության խախտումների հայտնաբերման նպատակով ստուգված կազմակերպությունների քանակը զգալի նվազել է վերջին տարիներին. ստուգված կազմակերպությունների քանակը 1752-ից (2008թ.) նվազել է մինչև 88 (2013թ.)⁴⁶²՝ չնայած նրան, որ 2013 թվականին պլանավորվել էր ստուգումներ կատարել 2593 օբյեկտներում: Ստուգման ցուցանիշի անկման մասին է վկայում նաև Բնապահպանական պետական

աշխատանքներ, հանցագործության հատկանիշներով բնապահպանական օրենսդրության խախտման դեպքերի մասին իրազեկել իրավապահ մարմիններին: Իսկ բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ստուգումների իրականացման համար առանձնահատուկ դեպքեր են համարվում քաղաքացիների և կազմակերպությունների դիմում-բողոքներն ու հաղորդումները, որոնց դեպքում ստուգումները կարող են տևել ոչ ավելի, քան 15 օրացուցային օր: («Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված)

⁴⁵⁹ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք /ուժը կորցրած է ճանաչվել 09.08.2014թ. -ին/, հոդված 11, մաս 6

⁴⁶⁰ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 10

⁴⁶¹ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, հոդված 13

⁴⁶² Հայաստանի բնապահպանական վիճակագրությունը 2013թ. և ցուցանիշների 2008-2013թթ. շարժընթացը, էջ 19, <http://bit.ly/194IR28>

տեսչության կողմից 2014 և 2015թթ. ստուգման ենթակա կազմակերպությունների ցանկի բովանդակությունը⁴⁶³: Այսպես, Նախարարությունը 2014 թվականին նախատեսել էր տեսչական ստուգումներ իրականացնել 2332 օբյեկտում, սակայն փաստացի ստուգվել են 120-ը⁴⁶⁴: 2013 թվականի ցուցանիշների հետ համեմատ՝ 2014 թվականին 120 օբյեկտում ստուգումներ իրականացնելու արդյունքում գրանցվել է նաև խախտումների, հասցված վնասի և, հետևաբար, վարչական տուգանքի նշանակման դեպքերի աճ: Բացահայտված խախտումները վկայում են այն մասին, որ Նախարարությունը կամ բավարար քանակի կանխարգելիչ միջոցներ չի ձեռնարկել, կամ ձեռնարկված կանխարգելիչ միջոցները արդյունավետ չեն եղել: Նշենք, որ Նախարարության կանոնադրական խնդիրներից է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը⁴⁶⁵: Նշված ցուցանիշներից ակնհայտ է, որ միայն ստուգումների ընթացքում խախտումներ հայտնաբերելը և համապատասխանաբար վարչական պատասխանատվության ենթարկելը չի կանխում նույն խախտումը հետագայում կրկնվելու հավանականությունը: Անհրաժեշտ է ոչ միայն լիարժեք կերպով իրականացնել պատշաճ հսկողություն, այլև խախտումը հայտնաբերելիս պարզել նաև խախտման պատճառը, դրան նպաստող գործոնները, որպեսզի դրանց վերացմամբ հետագայում կանխվեն նմանատիպ խախտումները:

Առաջարկ. Բնապահպանական տեսչական ստուգումներն իրականացնել Բնապահպանական պետական տեսչության տարեկան ծրագրին համապատասխան, ներառել ստուգվող օբյեկտների հնարավորինս լայն շրջանակ, ինչպես նաև արդյունավետ միջոցներ ձեռնարկել իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու և խախտումների պատճառները բացահայտելու ու կանխարգելելու ուղղությամբ:

2.6.4 Արձանագրվել են մի շարք բողոքներ, այդ թվում՝ Թուխմանուկի հանքավայրի պոչամբարի նախագծի և շրջակա միջավայրին առնչվող այլ հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման իրավաչափության, հասարակական լուծումների ոչ պատշաճ կազմակերպման կապակցությամբ:

Ընդհանուր առմամբ, բնապահպանական խնդիրների վերաբերյալ 2014 թվականին Նախարարություն ստացվել է շուրջ 100 բողոք: Ստացված բողոքների մեջ եղել են նաև շրջակա միջավայրին առնչվող որոշումների վերաբերյալ բողոքներ, որոնք վերաբերել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերին, լիազորված անձի կողմից նախագծային փաստաթղթերին ծանոթանալու և դրանց վերաբերյալ համապատասխանաբար հասարակական և մասնագիտական

⁴⁶³ Բնապահպանական Պետական Տեսչության հաշվետվություններ, <http://bit.ly/1Cco2HU%20>

⁴⁶⁴ Ստուգման արդյունքների բողոքարկման մասին Նախարարությունը 2014թ. ընթացքում ստացել է 11 դիմում-բողոք:

⁴⁶⁵ ՀՀ կառավարության 08.08.2002թ. թիվ 1237-Ն որոշում

լսումներ կազմակերպելու միջև ընկած փոքր ժամանակահատվածին, հասարակական լսման համար նախատեսված տարածքի փոքր լինելուն, նախագծերի և դրանց վերաբերյալ հասարակական լսումների մասին հայտարարության՝ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում ուշ տեղադրմանը և այլն: Օրինակ, ըստ Մեխիքյուղ համայնքի թվով 74 բնակիչների բողոքների՝ վերջիններս տեղյակ չեն եղել այն մասին, որ 03.02.2014 թվականին Նախարարության կայքում տեղադրված հայտարարության համաձայն՝ նախկինում գործող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի⁴⁶⁶ 8-րդ հոդվածով սահմանված կարգով 10.02.2014 թվականին ժամը 11:00-ին Երևան քաղաքի Սուևոլկյան փողոցի 23/100 հասցեում տեղի են ունեցել «Մեզո-Գոլդ» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի հանքավայրի պոչամբարի նախագծի լրամշակված բնապահպանական մասի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ⁴⁶⁷: Ուստի, նշված քննարկումը տեղի է ունեցել առանց ազդակիր համայնքի բնակիչների մասնակցության: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ օրենքով սահմանված կարգով չի պահպանվել վերը նշված ընթացակարգին նախորդող՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ընթացակարգը⁴⁶⁸՝ նախատեսվող գործունեության իրականացման իրազեկումն ապահովելու համար: Այսպես, ցանկացած ձեռնարկողի (տվյալ դեպքում՝ «Մեզո-Գոլդ» ՍՊԸ-ի) կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա որևէ գործունեության⁴⁶⁹ իրականացման նպատակի մասին ծանուցում ստանալուց հետո լիազոր մարմինը 7-օրյա ժամկետում պետք է իրազեկեր ազդակիր համայնքի ղեկավարներին և հասարակայնությանը նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին, որպեսզի ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը ծանուցումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում կազմակերպեն նախատեսվող գործունեության վերաբերյալ հասարակական լսումներ՝ լրատվական միջոցներով տեղեկություններ հաղորդելով նախատեսվող գործունեության, լսումների տեղի և ժամկետի մասին: Ըստ օրենքի՝ եթե 30 օրվա ընթացքում ազդակիր համայնքի կամ հասարակայնության կողմից առաջարկներ չեն ուղարկվում լիազորված մարմին, ապա ազդակիր համայնքի կարծիքը համարվում է դրական: Տվյալ դեպքում, Նախարարությունը 17.01.2014թ.-ին գրությամբ ծանուցել է Մեխիքյուղ համայնքի ղեկավարին օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի իրականացման շրջանակներում նախատեսվող գործունեության մասին, սակայն այնուհետ նախքան օրենքով սահմանված 30-օրյա ժամկետի լրանալը 01.02.2014թ.-ին հասարակական լսումների վերաբերյալ տեղեկատվություն է հրապարակվել, և դրա հիման վրա 10.02.2014թ.-ին կազմակերպվել են հասարակական

⁴⁶⁶ Ուժը կորցրել է 09.08.2014 թվականին:

⁴⁶⁷ <http://www.mnp.am/?aid=2443>

«Հասարակական լսումներ» եզրույթն օգտագործվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում:

⁴⁶⁸ Հոդված 6. Նախատեսվող գործունեության իրականացման ծանուցման կարգը:

⁴⁶⁹ Նշված գործունեությունները թվարկված են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում:

լուսմներ, որոնք ուղղված են եղել օրենքի 8-րդ հոդվածով⁴⁷⁰ սահմանված ընթացակարգով փաստաթղթերի ուսումնասիրմանը, ինչն էլ ըստ էության հանդիսանում էր շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ողջ ընթացակարգի 2-րդ փուլը: Այսպես, օրենքով հստակ սահմանված են պարտադիր կատարման հասարակական լուսմների ժամկետները, որոնց նպատակն արդյունքում տարբեր ընթացակարգերի ապահովումն է և իրականացվելիք գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ ամբողջական և լիարժեք եզրակացության առկայությունը: Ուստի, Նախարարությունը ազդակիր համայնքին պետք է հնարավորություն տար օրենքով սահմանված 30-օրյա ժամկետում ներկայացնելու իր կարծիքը, որի չներկայացվելու դեպքում միայն այն կհամարվեր դրական: Այսպիսով, Նախարարության կողմից խախտվել է վերը նշված ժամկետը և ավելի վաղ ձեռնարկվել հետագա միջոցառումները⁴⁷¹:

Առաջարկ. բացառել հասարակական լուսմների կազմակերպման ընթացակարգերի խախտումները՝ ապահովելու շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերին, նախագծային փաստաթղթերի պատշաճ քննարկումը, ազդակիր համայնքի լիարժեք ներգրավումը այդ ընթացակարգին:

2.6.5 Շարունակվում են բողոքներ ստացվել, որ փոքր ՀԷԿ-երի ներդրման զարգացմանը զուգահեռ առաջացել են ջրային ռեսուրսների գերօգտագործման, գետային էկոհամակարգերի և բնակչության սոցիալական վիճակի հետ կապված խնդիրներ:

Վերջին տարիներին մի շարք հասարակական կազմակերպություններ բազմիցս բարձրաձայնել են, որ փոքր ՀԷԿ-երի (ՓՀԷԿ) շահագործումը շատ դեպքերում ուղեկցվել է մի շարք խախտումներով: Այսպես, շահագործման ընթացքում, երբ չի ապահովվում պատշաճ էկոլոգիական թողք⁴⁷², այսինքն՝ ՓՀԷԿ-ի կողմից օգտագործվում է թույլատրելի քանակից ավել ջուր, գետերը կանգնում են չորացման վտանգի առաջ: Նախարարությունը պատշաճ ուսումնասիրություն չի իրականացրել գետերի վրա մեծ քանակությամբ ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման հետևանքով գետերի ծանրաբեռնվածության⁴⁷³ առաջացման հարցի վերաբերյալ⁴⁷⁴, այնինչ բնապահպանների

⁴⁷⁰ Հոդված 8. Փորձաքննությանը ենթակա փաստաթղթերի հրապարակումը և քննարկումը:

⁴⁷¹ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 05.02.2015 թվականի որոշումը մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու և այն վերացնելու նպատակով անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու առաջարկ ներկայացնելու մասին: <http://ombuds.am/article/1247>

⁴⁷² Էկոլոգիական թողք՝ ջրի նվազագույն էլք, որն ապահովում է ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռությունը և ինքնավերականգնումը: (ՀՀ ջրային օրենսգիրք):

⁴⁷³ Օրինակ, երբ որ նույն գետի վրա մի քանի ՓՀԷԿ է կառուցվում և շահագործվում՝ առանց հաշվի առնելու գետի հնարավորությունը:

⁴⁷⁴ Նախարարությունը հայտնել է, որ ՓՀԷԿ-երի կառուցման և գետի վրա առաջացող ծանրաբեռնվածության հետևանքների վերաբերյալ բարձրացված հարցերը պահանջում են համալիր ու բազմակողմանի ուսումնասիրություններ և գիտական վերլուծություն:

կողմից կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ ՓՀԷԿ-երի շահագործման հետևանքով ուսումնասիրված 47 գետերից 16-ը՝ ճգնաժամային (Ամբերդ, Դարբ, Վարարակ, Փամբակ, Գեղարոտ, Մեղրի, Վաղուտ, Լորաձոր, Դարանակ, Գիծգետ, Այրի, Պաղջուր, Կարակայա, Գողթ, Գետիկ, Սարց), իսկ 3-ը աղետալի վիճակում են (Կիստում, Այաս, Եղեգիս (Էլեգիս)):⁴⁷⁵ Ավելին, ՓՀԷԿ-երի նախագծման և ներդրման ընթացքում հիմնականում հաշվի չեն առնվել ջրային կենդանական աշխարհի պահանջները, և միաժամանակ չի ուսումնասիրվել և գնահատվել լեռնային գետերի ջրի ռեժիմի ազդեցությունը ջրային և ափամերձ էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա: Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի շրջանակներում 2014 թվականի ընթացքում իրականացված մոնիտորինգի արդյունքում պարզ է դարձել, որ ձկների համար ձվադրման վայր հանդիսացող գետերի վրա կառուցված ՓՀԷԿ-երը հիմնականում չունեն ձկնապահպանման պատշաճ կոնստրուկցիաներ և ուղղակիորեն սպառնում են հասուն ձկնատեսակների գոյությանը, քանի որ վերջինները չեն կարողանում բարձրանալ գետի ակունք ձվադրման համար⁴⁷⁶: Բացի դրանից՝ ՓՀԷԿ-երի կառուցումն իր հետ բերում է նաև այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են անտառահատումները⁴⁷⁷, իսկ ջրային ռեսուրսների ոչ ճիշտ օգտագործումը մեծ ազդեցություն է թողնում համայնքների սոցիալական վիճակի վրա՝ համայնքին թողնելով առանց ոռոգման և խմելու ջրի, ինչի հետևանքով նվազում է գյուղմթերքների արտադրությունը և բնակիչների եկամուտը⁴⁷⁸: Բնապահպանների պնդմամբ՝ Նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը ոչ թափանցիկ է աշխատում, մերժում է տրամադրել հասարակական լուսմների արձանագրությունները, կարծիքներն ու բնապահպանական փորձաքննական եզրակացությունները⁴⁷⁹, ինչը սակայն օրենսդրության⁴⁸⁰ և Օրհուսի Կոնվենցիայի դրույթների խախտում է⁴⁸¹: Հատկանշական է, որ Նախարարությունը բողոքներ է ստացել տարբեր ՓՀԷԿ-երի շահագործման կանոնների խախտման վերաբերյալ, որոնք են, մասնավորապես, «Խաչաղբյուր-1», «Խաչաղբյուր-2», «Գետիկ-4», Եղեգիս գետի ավազանի ՓՀԷԿ-եր, ՀՀ Տավուշի մարզի Ծաղկավազ գյուղում «Արգիճի» ՓՀԷԿ, ՀՀ Արագածոտնի մարզի Արագած գյուղում կառուցվելիք երրորդ ՓՀԷԿ, ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի հարևանությամբ՝ Մարտիրոս գյուղի վարչական տարածքում կառուցվող ՓՀԷԿ: Ահազանգերը հիմնականում վերաբերել են ՓՀԷԿ-երը շահագործող

⁴⁷⁵ «Փոքր ՀԷԿ-երի սոցիալ-էկոլոգիական ազդեցության վերլուծություն» զեկույց, հրապարակված՝ 2014 թվականի հունիսի 4-ին, Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան, մանրամասն՝ <http://bit.ly/1CgZzHV>

⁴⁷⁶ ՄԱԿ-ի՝ «Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիայի՝ ՀՀ 5-րդ ազգային զեկույց, էջ 49, <http://bit.ly/1Fy3MEu>

⁴⁷⁷ <http://bit.ly/1ISvCjZ>; <http://bit.ly/1E0ISxE>

⁴⁷⁸ ՄԱԿ-ի՝ «Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիայի՝ Հայաստանի Հանրապետության 5-րդ ազգային զեկույց, Երևան 2014, մանրամասն՝ <http://bit.ly/1Fy3MEu>, <http://bit.ly/1zL65D8>

⁴⁷⁹ http://www.armenianow.com/hy/society/environment/54989/armenia_small_hydropower_plants_environment

⁴⁸⁰ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին ՀՀ օրենքի /ուժը կորցրել է 09.08.2014թ./ հոդված 11, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք, հոդված 5, մաս 2, կետ 6:

⁴⁸¹ Կոնվենցիայի հոդված 5, մաս 2

կազմակերպությունների կողմից գետերի բնապահպանական թողքը չպահպանելուն, ՓՀԷԿ-երի շահագործման ընթացքում տնտեսվարողների կողմից իրականացվող բնապահպանական իրավախախտումների և խնդիրների կարգավորմանը, առանց թույլտվության ՓՀԷԿ-ի շահագործմանը, ՀՀ Արագածոտնի մարզի Արագած համայնքում կառուցվող երրորդ ՓՀԷԿ-ի շահագործման հետևանքով Գեղարոտ գետի ջրերի որակական փոփոխություններին: Թեև ստացված բոլոր ահազանգերն, ըստ Նախարարության, ուսումնասիրվել են և դիմումատուներին տրվել են պարզաբանումներ, պահանջվող նյութեր, այնուամենայնիվ, խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

Առաջարկ. պատշաճ վերահսկողություն իրականացնել փոքր ՀԷԿ-երի շահագործման նկատմամբ, ինչպես նաև արդյունավետ միջոցներ ձեռնարկել դրանց միջոցով ջրային ռեսուրսների գերօգտագործման հետևանքով գետային էկոհամակարգի վնասումը կանխելու ուղղությամբ:

2.6.6 Բողոքներ են ստացվել, որ Քաջարանում օդի մեջ առկա է մեծ քանակությամբ փոշի, ինչը խախտում է բազմաթիվ անձանց՝ իրենց առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքը:

2014 թվականի ընթացքում Քաջարան քաղաքի բնակիչները բազմիցս ահազանգել են քաղաքում օդի մեջ մեծ քանակությամբ փոշու առկայության մասին, մասնավորապես նշելով, որ օրական 3-ից 4 ժամ քաղաքն ամբողջությամբ գտնվում է փոշու մեջ, որն առաջանում է Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի գործունեության արդյունքում⁴⁸²: Նշենք, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում:⁴⁸³ Հատկանշական է, որ փոշին՝ ծծմբի և ազոտի երկօքսիդների և գետնամերձ օդոնի հետ մեկտեղ, հանդիսանում է օդի գետնամերձ շերտի 4 աղտոտիչներից մեկը և ներառված է մթնոլորտն աղտոտող նյութերի ցուցակում⁴⁸⁴, իսկ Քաջարանը ընդգրկված է առավել ռիսկային և խոշոր քաղաքների ցանկում⁴⁸⁵, ինչից կարելի է եզրակացնել, որ Քաջարանում օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգ իրականացնելիս անհրաժեշտ է կատարել նաև փոշու մոնիտորինգ՝ առավել ևս, որ Նախարարությունը տեղյակ է եղել խնդրի առկայության մասին: Այնինչ, ըստ Նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության՝ Նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Քաջարանում ուսումնասիրվել է միայն ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի թույլատրելի չափերի առկայությունը, որոնք քաղաքի 15

⁴⁸² <http://ecolor.org/hy/news/air/alarm-signal-from-kajaran-our-children-in-hospital-because-of-dust-photos/6792/>

⁴⁸³ ՀՀ Սահմանադրություն, հոդված 33.2

⁴⁸⁴ <http://bit.ly/1AXfppv>, «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկ, Երևան 2011թ., «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ, ՀՀ բնապահպանության նախարարություն, <http://bit.ly/1DEzWys>

⁴⁸⁵ <http://bit.ly/1AXfppv>

դիտակետից պասիվ նմուշառիչներից վերցված փորձանմուշների ուսումնասիրման արդյունքում դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Այնուամենայնիվ, չնայած քաղաքացիների ահազանգերին⁴⁸⁶ և Նախարարության կողմից 2014 թվականին ստացված երկու հարցումներին՝ Քաջարան քաղաքում փոշու մոնիտորինգ այդպես էլ չի իրականացվել⁴⁸⁷՝ տեղում համապատասխան սարքավորումների բացակայության պատճառով: Նշենք, որ ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ և Հրազդան քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները որոշվում են հետևյալ աղյուսակով՝⁴⁸⁸ ելնելով տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից.

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 - 125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Աղյուսակի տեղեկատվությունից կարելի է եզրակացնել, որ եթե բնակավայրի բնակչության քանակը 10.000-ից պակաս է կազմում, ապա այդ բնակավայրում մթնոլորտում առկա փոշին չպետք է գերազանցի 0,2 մգ/մ³: Դեռևս 2010 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ⁴⁸⁹ Քաջարան քաղաքի բնակչությունը կազմում էր 8500⁴⁹⁰, սակայն քաղաքում մինչ օրս չի իրականացվել փոշու մոնիտորինգ, այն էլ այն դեպքում, երբ ի տարբերություն փոքր բնակչություն ունեցող այլ համայնքների՝ Քաջարանում բաց եղանակով շահագործվում է պղնձամոլիբդենային հանքավայր: Թեև Նախարարության տեղեկացմամբ՝ ներկայում աշխատանքներ են տարվում Քաջարան քաղաքում մթնոլորտային օդում փոշու մոնիտորինգ անցկացնելու նպատակով՝ այնուամենայնիվ, խնդիրը դեռևս մնում է չլուծված:

Առաջարկ. հնարավոր սեղմ ժամկետներում Քաջարան քաղաքում իրականացնել օդում փոշու թույլատրելի չափերի առկայության մոնիտորինգ և փոշու թույլատրելի սահմանաչափի խախտում հայտնաբերելու դեպքում անհապաղ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

⁴⁸⁶ <http://ecolor.org/hy/news/air/alarm-signal-from-kajaran-our-children-in-hospital-because-of-dust-photos/6792/>
⁴⁸⁷ Նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեությունը կարգավորվում է ՀՀ կառավարության 03.03.2003 թվականի N 411-Ն որոշմամբ:
⁴⁸⁸ ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ՝ http://www.armmonitoring.am/air_fone_part_1.php?page_name=9
⁴⁸⁹ http://www.armmonitoring.am/air_fone_part_1.php?page_name=9
⁴⁹⁰ «Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2010 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ» վիճակագրական տեղեկագիր, Տես՝ http://www.armstat.am/file/article/nasel_1_10_2010.pdf

2.6.7 2014 թվականին չի իրականացվել պատշաճ վերահսկողություն և չեն ձեռնարկվել արդյունավետ կանխարգելիչ միջոցներ ապօրինի անտառահատումների դեպքերի բացառման նպատակով, ինչի հետևանքով հատված ծառերի քանակը գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշները:

2014 թվականին բազմաթիվ ահազանգեր են ստացվել ապօրինի անտառահատումների վերաբերյալ: Մասնավորապես, անտառահատումներ են արձանագրվել Վայոց Ձորի Մարավան գյուղում⁴⁹¹, «Դիլիջան» ազգային պարկում⁴⁹², Իջևանի արգելավայրում⁴⁹³, Լոռիում, Տավուշում, Սյունիքում, Արագածոտնում⁴⁹⁴ և այլ վայրերում: Թեև նշված դեպքերից շատերին Նախարարությունը տվել է համապատասխան արձագանք, այնուամենայնիվ, շատ դեպքերում ծառահատումները կրկնվել են վերոնշյալ նույն տարածքներում: Ավելին, 2014 թվականի ծառահատումների պաշտոնական ցուցանիշները չեն արձանագրում դրական զարգացում: Այսպես, դեռևս 2013 թվականին ապօրինի հատված ծառերի ընդհանուր քանակը կազմել էր 2031 հատ՝ 2012թ. տարվա 1860-ի դիմաց:⁴⁹⁵ Իսկ 2014 թվականին արձանագրվել է ապօրինի հատված 2114 ծառ: Նախարարության տվյալներով՝ ընդհանուր առմամբ ապօրինի ծառահատումների համար կազմվել է 480 վարչական տուգանքի որոշում՝ 35.300.000 ՀՀ դրամի և շրջակա միջավայրին պատճառված վնասի 405 ակտ՝ 177.860.000 ՀՀ դրամի: 2013 թվականի համեմատությամբ⁴⁹⁶ 2014 թվականին 141 դեպքով ավելացել են հայտնաբերված իրավախախտումները, իսկ հայտնաբերված իրավախախտումների հետևանքով շրջակա միջավայրին պատճառված վնասն աճել է 75.400.000 ՀՀ դրամով՝ ի համեմատություն 2013 թվականին արձանագրված 102.450.000 ՀՀ դրամի: Թեև ապօրինի ծառահատումները հետագայում կանխարգելելու համար 2015 թվականին Նախարարությունը նախատեսվում է ակտիվացնել ոլորտի վերահսկողությունը, այնուամենայնիվ, 2012, 2013 և 2014 թվականներին արձանագրված ցուցանիշների վերլուծությունից պարզ է, որ խնդիրը դեռևս առկա է:

Առաջարկ. ձեռնարկել արդյունավետ կանխարգելիչ միջոցներ անօրինական ծառահատումների կանխման նպատակով, ինչպես նաև ուժեղացնել վերահսկողությունը հատկապես հատուկ պահպանվող տարածքներում անտառահատումների դեպքերը բացառելու նպատակով:

⁴⁹¹ <http://bit.ly/195mxVq> 2014 թվականի մայիսի 16, <http://bit.ly/1BjpuMg> 2014 թվականի մայիսի 19, <http://bit.ly/1wkuErb> 2014 թվականի մայիսի 27

<http://bit.ly/1Hnve8z> 2014 թվականի դեկտեմբերի 1

⁴⁹² <http://bit.ly/1AaIaKl> 2014 թվականի սեպտեմբերի 12, <http://bit.ly/1BjpMTA> 2014 թվականի սեպտեմբերի 22, <http://bit.ly/1Gy8pBy> 2014 թվականի հոկտեմբերի 1, <http://bit.ly/1MnflSp> 2014 թվականի նոյեմբերի 22, <http://bit.ly/1BYQjpG> 2014 թվականի դեկտեմբերի 8, <http://bit.ly/1EL4sY5> 2014 թվականի դեկտեմբերի 18

⁴⁹³ <http://bit.ly/1ISvCjZ> 2014 թվականի նոյեմբերի 18

⁴⁹⁴ <http://bit.ly/1Hnvwg4> 2014 թվականի հոկտեմբերի 21, <http://bit.ly/1Hnve8z> 2014 թվականի դեկտեմբերի 1

⁴⁹⁵ Պաշտպանի 2013 թվականի տարեկան զեկույց, <http://ombuds.am/library/library/page/101/type/3>

⁴⁹⁶ Ըստ Նախարարության տվյալների՝ 2013 թվականին բնապահպանական պետական տեսչության կողմից հայտնաբերվել է ապօրինի ծառահատումների 536 դեպք, ինչի արդյունքում կազմվել է 419 վարչական իրավախախտման ակտ:

2.7 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Զբոսաշրջային երթուղիներում ընդգրկված առավել հայտնի հուշարձանների տարածքներում տեղադրվել են 15 բրայլյան տեղեկատվական վահանակներ⁴⁹⁷:
- 2014 թվականի ընթացքում իրականացվել են մշակույթի համաչափ զարգացմանը, մշակութային կյանքի աշխուժացմանն ու միջմարզային մշակութային համագործակցության խթանմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր ՀՀ Շիրակի, Լոռու, Կոտայքի, Սյունիքի և այլ մարզերում:

Առկա թերություններն ու խնդիրները

2.7.1 Նախարարության կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվել պատմամշակութային արգելոց-թանգարանները տնտեսական և այլ նպատակներով օգտագործման նկատմամբ⁴⁹⁸, ինչի հետևանքով խախտվել է տվյալ օբյեկտների՝ միայն օրենքով սահմանված դեպքերում տնտեսական և այլ նպատակներով օգտագործելու պահանջը:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներից, ինչպես նաև ԶԼՄ-ներով տարածված տեղեկություններից պարզ է դարձել, որ Նախարարության կողմից պատշաճ հսկողություն չիրականացնելու արդյունքում մի շարք պատմամշակութային արգելոց-թանգարաններ տնտեսական և այլ նպատակներով օգտագործվել են օրենքի սահմաններից դուրս, ինչի արդյունքում խախտվել է տվյալ օբյեկտների՝ միայն գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված (ադապտացիոն) գործառնական նշանակությամբ օգտագործելու օրենսդրական պահանջը⁴⁹⁹: Այսպես, 2014 թվականին «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում սկսվել են սեզոնային սրճարանի կազմակերպման և տեղադրման աշխատանքները, իսկ հունիսին առանձին մասնավոր կազմակերպություններ և պետական մարմիններ «Գառնի» թանգարանում

⁴⁹⁷ (Գյումրի, Գեղարդ, Նորավանք, Էրեբունի թանգարան, Արուձ, Աղքք, Ագարակ հնավայր, Ամբերդ, Զվարթնոց, Սևանավանք, Նորատուս, Ախթալա, Հաղպատ, Մանահին, Գոշավանք)

⁴⁹⁸ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

⁴⁹⁹ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, հոդված 38

վարձակալական հիմունքներով, հուշարձանների պահպանական գոտիների տարածքներում անցկացրել են «կորպորատիվ» միջոցառումներ: Այսպես, մամուլում տարածված տեղեկությունների համաձայն՝ Նախարարության «Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը դեռևս 2013 թվականին էր նախատեսում «Գառնի» թանգարանի պահպանական գոտիների տարածքներում սրճարանի կառուցումը, սակայն շինարարական աշխատանքները մի քանի անգամ սկսվել և դադարեցվել են համայնքի ղեկավարի՝ շինարարություն իրականացնելու վերաբերյալ համապատասխան թույլտվության բացակայության պատճառով⁵⁰⁰: Խնդրի վերաբերյալ Նախարարությունից հայտնել էին, որ 2014 թվականի գարնանը նշյալ տարածքում իրականացվել են միայն հենապատի ամրակայման աշխատանքներ, որոնք չեն պահանջում շինարարության թույլտվություն, իսկ սեզոնային սրճարանի կազմակերպման և տեղադրման հետ կապված փաստաթղթերը ներկայացվել են համայնքի ղեկավարին: Նշենք, սակայն, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից որոշ լրատվամիջոցներով արված հայտարարության համաձայն՝ Նախարարը տեղյակ էր կառուցվող սրճարանի շուրջ ստեղծված աղմուկի մասին, դեռ ավելին՝ նա հրահանգել էր տաճարի տոմսարկղի մոտ համապատասխան հայտարարություն փակցնել, որ ամեն ինչ արվում է օրենքի սահմաններում: Ինչ վերաբերում է առանձին կազմակերպություններին «Զվարթնոց» և «Գառնի» թանգարանները տարբեր միջոցառումների համար վարձակալության տալուն, ապա «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը և Նախարարությունն այս խնդրի կապակցությամբ ԶԼՄ-ներով պարզաբանել էին, որ հուշարձանների վարձակալությունն օրենքով թույլատրված է: Նշվածը դեպքերը մեծ հնչեղություն են ստացել հանրության շրջանում, քանի որ այդ միջոցառման համար օգտագործվել էր ոչ միայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում 1011 համարի⁵⁰¹ ներքո ընգրկված Զվարթնոցի տաճարի խոտածածկ տարածությունը, այլև ավերակների՝ պուների հետին հատվածը, որտեղ տեղադրվել էին մետաղական հարմարանքներ՝ էկրան ամրացնելու համար⁵⁰²: Ավելին, «Գառնի» թանգարանի պահպանական գոտիներում անցկացված միջոցառման պատճառով ժամը 21.00-ի փոխարեն զբոսաշրջիկների ու այցելուների առջև դռները փակվել են 5-ին, և տասնյակ այցելուներ չեն կարողացել այցելել հուշարձանը⁵⁰³: Փաստորեն նշված գործողություններով խոչընդոտել են անձանց՝ մշակութային արժեքներից ազատորեն օգտվելու իրավունքի իրականացմանը: Նշենք, որ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը (Օրենք) հուշարձանների տնտեսական և այլ նպատակներով օգտագործումը թույլատրում է միայն օրենքով սահմանված պայմանների պահպանման դեպքում: Մասնավորապես՝ հուշարձանները

⁵⁰⁰ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 23

⁵⁰¹ <http://whc.unesco.org/en/list/1011>

⁵⁰² <http://hetq.am/arm/news/55239/zvartnocy-karox-e-hanvel-yunesko-i-hamashkharhayin-zharangutyancankic-lusankarner.html>

⁵⁰³ <http://www.azatutyun.am/content/article/25427093.html>

գերազանցապես օգտագործվում են գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված (ադապտացիոն) գործառնական նշանակությամբ⁵⁰⁴: Ավելին, հուշարձանների օգտագործումը տնտեսական և այլ նպատակներով թույլատրվում է, եթե այդպիսի օգտագործումը համապատասխանում է հուշարձանի բնույթին, չի վնասում հուշարձանի անվթարությունը, չի նսեմացնում կամ աղճատում դրա պատմական, գիտական և գեղարվեստական արժեքը⁵⁰⁵: Այսպիսով, չնայած նրան, որ օրենքով թույլատրված է հուշարձանների օգտագործումը տնտեսական և այլ նպատակներով, առկա է հստակ սահմանված պահանջ, համաձայն որի՝ դրանք պետք է օգտագործվեն «բացառապես գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով», ինչը վերոնշյալ դեպքերում չի պահպանվել:

Առաջարկ. սահմանել պատշաճ հսկողություն պատմամշակութային արգելոց-թանգարանների տնտեսական և այլ նպատակներով օգտագործումը միայն գիտական, կրթական, մշակութային և ճանաչողական նպատակներով իրականացնելու նկատմամբ, ինչպես նաև իրենց սկզբնական ու հարմարեցված գործառնական նշանակությամբ օգտագործելու օրենսդրական պահանջի ապահովման նկատմամբ:

2.7.2 «Զվարթոց» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում լուսանկարվելու համար քաղաքացիներից անհիմն 5000-10000 դրամ է գանձվել:

Պաշտպանին հասցեագրված դիմումով քաղաքացին հայտնել է, որ «Զվարթոց» պատմամշակութային արգելոց-թանգարանի տարածքում լուսանկարվելու համար վերջինից պահանջել են 5.000 ՀՀ դրամ գումար: Հարցի առնչությամբ Նախարարությունից տեղեկացրել են, որ Նախարարի հրամանով⁵⁰⁶ սահմանված թանգարանների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների ցանկով և սակագներով մասնագիտական լուսանկարչական ապարատով լուսանկարահանում և տեսանկարահանում ծառայության մատուցման (այսինքն՝ թույլտվության) սակագինը 1-2 ժամի համար նախատեսված է 5000-10000 ՀՀ դրամ: Ավելին, Նախարարությունից հայտնել են, որ եթե լուսանկարահանումը և տեսանկարահանումը իրականացվում է մասնագիտական լուսանկարչական ապարատով 1-2 ժամ տևողությամբ, դա վկայում է, որ այն կարող է օգտագործվել առևտրային կամ գովազդային նպատակով և չի կարող դիտվել սիրողական նկարահանում: Նման դեպքերում, ըստ ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի 2004 թվականի N446-Ն հրամանի, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը իրավասու է մատուցված ծառայության համար գանձումներ իրականացնել, ինչը հանդիսանում է տվյալ կազմակերպության

⁵⁰⁴ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, հոդված 38

⁵⁰⁵ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, հոդված 38

⁵⁰⁶ Նախարարի 2009 թվականի օգոստոսի 7-ի N 463-Ս հրաման

աշխատակիցների իրավասությունը⁵⁰⁷: Այնուամենայնիվ, անհասկանալի է գործնականում քաղաքացիների կողմից իրականացվող նկարահանումների գնահատման և տևողության չափանիշները, քանի որ համապատասխան իրավական ակտով դրանք սահմանված չեն: Խնդրի կապակցությամբ ՀՀ Արդարադատության նախարարությունից հայտնել են, որ վերոնշյալ հրամանն իր բնույթով նորմատիվ իրավական ակտ է և պետք է ընդունվեր ու ուժի մեջ մտներ ՀՀ արդարադատության նախարարության կողմից պետական գրանցում ստանալուց հետո:⁵⁰⁸ Մինչդեռ, Նախարարության ենթակայության թանգարանների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների ցանկն ու սակագները հաստատվել են ՀՀ մշակույթի նախարարի վերոնշյալ հրամանով, ինչը հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին: Պաշտպանի կողմից հարցը բարձրացնելուց հետո ՀՀ մշակույթի նախարարը չեղյալ է ճանաչել ՀՀ մշակույթի նախարարի 2009 թվականի օգոստոսի 7-ի «Թանգարանների կողմից մատուցվող ծառայությունների ցանկը և սակագները սահմանելու մասին» N 463-Ս հրամանը⁵⁰⁹:

Առաջարկ. հետևողական լինել՝ բացառելու քաղաքացիների՝ մշակութային արժեքներից օգտվելու իրավունքի անհիմն սահմանափակումները, ինչպես նաև անհիմն գումարների գանձումները:

2.7.3 Դեռևս 2013 թվականին Պաշտպանի կողմից բարձրացվել էր մշակութային շենքերի, վայրերի, ինչպես նաև մշակութային միջոցառումների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի չլինելու խնդիրը, որը 2014 թվականին ևս համապարփակ լուծում չի ստացել:

2014 թվականին Նախարարության կողմից չեն ձեռնարկվել անհրաժեշտ և բավարար միջոցառումներ մշակութային շենքերը, վայրերը, ինչպես նաև մշակութային միջոցառումները և մշակութային իտերնետային կայքերը հարմարեցնելու ու մատչելի դարձնելու ուղղությամբ: Հայաստանում գործող մշակութային կառույցների շենքերը մեծ մասամբ հին են և հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի ու ելքի համար, ինչը խախտում է նրանց՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:⁵¹⁰ Ավելին, մի շարք կինոթատրոնների, թատրոնների և այլ մշակութային կառույցների դահլիճներում ընդհանրապես բացակայում են հենաշարժողական, ինչպես նաև լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար հատուկ հարմարեցված տարածքներ: Միաժամանակ մի շարք հին մշակութային կառույցներ չունեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց մուտքն ու ելքն ապահովելու համար նախատեսված համապատասխան հարմարություններ: Նշենք, որ Հաշմանդամություն

⁵⁰⁷ ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարի 2004 թվականի նոյեմբերի 24-ի N 446-Ն հրաման, որի N3 հավելվածի համաձայն՝ թանգարանների ֆինանսական միջոցները գոյանում են՝ ի հաշիվ մշակութային գործունեության վճարովի ձևերից առաջացած եկամուտների (թանգարանային առարկաների լուսանկարահանում, պատճենահանում, հուշանվերների պատրաստում և իրացում, ցուցադրությունների մուտքի և բացատրությունների վճարներ)

⁵⁰⁸ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 2

⁵⁰⁹ ՀՀ մշակույթի նախարարի 2014 թվականի հուլիսի 15-ի N 407-Ս հրաման

⁵¹⁰ ՀՀ Սահմանադրություն, 40-րդ հոդված

ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիան⁵¹¹ պարտավորեցնում է պետությանը ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը և ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նրանց համար մշակութային գործերի, հեռուստահաղորդումների, ֆիլմերի, թատրոնի և մշակութային ներկայացումների ու ծառայությունների մատչելիությունը ապահովելու համար⁵¹²: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի (Կոմիտե) ընդհանուր մեկնաբանության մեջ⁵¹³ նշվում է, որ մատչելիությունը բաղկացած է անհատների ու համայնքների համար արդյունավետ և կոնկրետ հնարավորություններից՝ լիարժեքորեն վայելելու մշակույթը՝ բոլորին ֆիզիկապես և ֆինանսապես հասանելի լինելու միջոցով՝ ինչպես քաղաքային այնպես էլ գյուղական բնակավայրերում առանց խտրականության: Կոմիտեն 2014 թվականի Հայաստանի երկրորդ և երրորդ համատեղ պարբերական զեկույցների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում իր մտահոգությունն է հայտնել մշակութային միջոցառումների և վայրերի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանափակ մատչելիության վերաբերյալ⁵¹⁴: Նշենք, որ դեռևս 2013 թվականին Նախարարությունից հայտնել էին, որ մշակութային շինությունների՝ սահմանափակ կարողություններով անձանց հարմարեցնելու խնդիրը կարող է իր լուծումը ստանալ միայն մշակութային կազմակերպությունների հիմնանորոգումների դեպքում, այնինչ, ոչ բոլոր մշակութային հաստատություններն են ենթակա հիմնանորոգման: Այդ պատճառով այն բոլոր մշակութային հաստատություններում, որտեղ բացակայում են հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին մասնակցելու ապահովման համար անհրաժեշտ պայմանները, անհրաժեշտ է նախատեսել ժամանակավոր լուծումներ՝ թեքահարթակներ կամ այլ անհրաժեշտ հարմարանքներ: Նշված խնդիրը ներառվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում: Մասնավորապես, նշված ծրագրով նախատեսվում է, որ ելնելով մշակութային հաստատությունների շենքերի տեխնիկական պայմաններից՝ Նախարարությունը պետք է հնարավորության սահմաններում միջոցներ ձեռնարկի՝ շենքերը հարմարեցնելու հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի ու ելքի համար⁵¹⁵: Բայցևայնպես, Պաշտպանի հարցմանը, թե քանի հարմարեցված և չհարմարեցված մշակութային հաստատություն կա, Նախարարությունից պատասխանել են, որ սահմանափակ կարողություններով անձանց մուտքն ու ելքը հնարավոր է 21 մշակութային հաստատություններում⁵¹⁶:

⁵¹¹ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2010 թվականի հոկտեմբերի 22-ին:

⁵¹² Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 30

⁵¹³

http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2fC.12%2fGC%2f21&Lang=en

⁵¹⁴ Committee on Economic, Social and Cultural Rights Concluding observations on the combined second and third periodic reports of Armenia* E/C.12/ARM/CO/2-3 <file:///H:/Data/Downloads/G1408576.pdf>

⁵¹⁵ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303 -Ն որոշում:

⁵¹⁶ 10-ը՝ ունի թեքահարթակ, 5-ը՝ գտնվում է առաջին հարկում և թեքահարթակների անհրաժեշտություն չկա, 6-ում՝ ստեղծված են անհրաժեշտ հնարավորություններ:

Սակայն, նման ցուցանիշը վկայում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի մուտքի ու ելքի, ինչպես նաև շինությունների ներսում նրանց ազատ տեղաշարժի համար հարմարեցված մշակութային հաստատությունները չեն կազմում ՀՀ-ում առկա մշակութային հաստատությունների նույնիսկ կեսը⁵¹⁷: Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ Հայաստանի մշակութային հաստատությունների կեսից ավելին առ այսօր մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի, ինչպես նաև շինությունների ներսում նրանց ազատ տեղաշարժի համար:

Առաջարկ. **ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ մշակութային շենքերը, վայրերը, միջոցառումները հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցնելու ու մատչելի դարձնելու ուղղությամբ՝ անհրաժեշտության դեպքում նախատեսելով նաև ժամանակավոր լուծումներ՝ թեքահարթակներ կամ այլ անհրաժեշտ հարմարանքներ:**

2.7.4 Նախարարությունը չի վարել հետևողական քաղաքականություն պատմության և մշակույթի հուշարձանների պահպանությունն ապահովելու ուղղությամբ, ինչի հետևանքով ապամոնտաժվել է Երևանի Տերյան 11 հասցեում գտնվող «Աֆրիկյանների բնակելի տուն» հուշարձանը:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներով մի շարք քաղաքացիներ հայտնել են Երևանի Տերյան 11 հասցեում գտնվող «Աֆրիկյանների բնակելի տուն» հուշարձանն այլ վայր տեղափոխելու նպատակով այն ապամոնտաժելու մասին⁵¹⁸, որի հիմք է նշվել հուշարձանի զբաղեցրած տարածքը պետական կարևորություն ունեցող քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով օգտագործման ծայրահեղ անհրաժեշտությունը: Նշվածը, սակայն, հակասում է ՀՀ կողմից վավերացված «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին» Գրանադայի կոնվենցիային (Գրանադայի կոնվենցիա)⁵¹⁹, քանի որ կոնվենցիայով սահմանված այն բացառիկ դեպքերը, որոնք «հրամայաբար պահանջում են» հուշարձանի տեղափոխում, վերաբերում են միայն «հուշարձանի նյութական պահպանությանը»: Այսպես, ՀՀ օրենսդրության մեջ պատմամշակութային հուշարձանների պաշտպանության, մասնավորապես՝ դրանց տեղափոխման հետ կապված առկա են էական բացթողումներ: Ըստ ապամոնտաժման ժամանակ գործող օրենքի խմբագրության⁵²⁰՝ հանրապետական և տեղական նշանակության հուշարձանների տեղափոխումը, հանրապետական նշանակության հուշարձանների փոփոխումը կարող էր կատարվել միայն բացառիկ դեպքերում՝ ՀՀ կառավարության

⁵¹⁷ <http://mincult.am/organisations.html>, 09.03.2014 թվականի դրությամբ

⁵¹⁸ ՀՀ կառավարության 2004թ.-ի հոկտեմբերի 7-ի թիվ 1616-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկի ուժով՝ թույլատրվել է Երևան քաղաքի Տերյան 11 հասցեում գտնվող Աֆրիկյանների բնակելի տան տեղափոխումը:

⁵¹⁹ Գրանադայի կոնվենցիան ՀՀ կողմից վավերացվել է 2008 թվականի նոյեմբերի 21-ին, <http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/121.htm>

⁵²⁰ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, ՀՕ-261

թույլտվությամբ⁵²¹: Միաժամանակ, կառավարության որոշմամբ թույլատրվում էր պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխումը բացառիկ դեպքերում՝ տարածքի բնակլիմայական պայմանների վատթարացման (հեղեղատներ, սողանքներ, նստվածքներ, փլուզումներ և այլն) հետևանքով հուշարձանի կորուստը կանխելու և (կամ) հուշարձանի զբաղեցրած տարածքը պետական կարևորություն ունեցող քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով օգտագործման ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում⁵²²: Այսինքն՝ կառավարության որոշմամբ մասնավորեցվել էին այն դեպքերը, որոնք «հրամայաբար պահանջում են» հուշարձանի տեղափոխումը: Մինչդեռ, Գրանադայի կոնվենցիայով արգելվում է պահպանվող որևէ հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումը, բացառությամբ այն դեպքի, երբ այդպիսի հուշարձանի նյութական պահպանությունը հրամայաբար պահանջում է այն տեղափոխել: Ավելին, ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո: Ըստ սահմանադրական նորմի մեկնաբանության՝ պետության պարտականությունն է ոչ միայն փրկել հուշարձանները նյութական կորստից, այլև ապահովել դրանց բանական իմաստավորումը, և սերունդների շարունակական հաղորդակցումն այդ արժեքներին⁵²³: Նշենք, որ վերջին նպատակների իրագործումը հիմնականում հնարավոր է այն դեպքում, երբ հուշարձանը գտնվում է իր կառուցման վայրում⁵²⁴: Մինևույն ժամանակ, միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում և եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը⁵²⁵: Ստացվում է, որ տվյալ պարագայում պետք է կիրառվեն ոչ թե «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը և դրա հիման վրա 2005 թվականին ընդունված Կառավարության որոշումը, որոնք չափազանց լայն հայեցողություն էին սահմանում պատմամշակութային հուշարձանների տեղափոխման հարցում, այլ պետք է կիրառվեր Գրանադայի կոնվենցիայով նախատեսված կարգավորումը: Նշենք նաև, որ ակտիվիստների հայտնած տեղեկություններով՝ Նախարարության կողմից չի իրականացվել պատշաճ հսկողություն արդեն իսկ ապամոնտաժված «Աֆրիկյանների բնակելի տուն» հուշարձանի քարերի պահպանության նկատմամբ, և հայտնի չէ, թե որտեղ և ինչ պայմաններում են պահվում ապամոնտաժված Աֆրիկյանների բնակելի տան շենքի քարերը⁵²⁶: Երևանի քաղաքապետարանից հայտնած տվյալների համաձայն՝ Աֆրիկյանների տան ապամոնտաժված քարերը պահպանվում են Սեբաստիա 37 հասցեում: Ապամոնտաժված հուշարձան-շենքերի հատվածամասերի պահպանման

⁵²¹ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված

⁵²² ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2338-Ն որոշման Հավելված

⁵²³ «ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ» 2010 թվականի գիտագործնական ժողովածու

⁵²⁴ http://pashtpan.am/library/view_news/article/1195

⁵²⁵ ՀՀ Սահմանադրություն, 6-րդ հոդված

⁵²⁶ <http://168.am/2014/07/01/383180.html>

կարգը իրականացվում է Նախարարության և սեփականատիրոջ (ձեռքբերողի) հետ կնքվող հուշարձանի պահպանական պարտավորագրերի համաձայն: Սակայն, «Պահպանենք Աֆրիկյանների ակումբի շենքը» նախաձեռնության անդամներն, անդրադառնալով նախկինում ապամոնտաժված որոշ շենքերի ճակատագրին, նշել են, որ այդ շինությունների քարերը թափված են տարբեր կազմակերպությունների շինհրապարակներում և արևի, անձրևի, ձյան տակ վնասվում են⁵²⁷: Գրանադայի կոնվենցիան սահմանում է, որ իրավասու մարմինը պետք է անվտանգության անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի՝ հարմար վայրում հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման և վերականգնման համար, ինչը, սակայն, Նախարարության կողմից պատշաճ չի ապահովվել⁵²⁸: Արդյունքում, 2014 թվականին, կիրառելով ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտը, անտեսելով Գրանադայի կոնվենցիայի պահանջները, ապամոնտաժվել էր «Աֆրիկյանների բնակելի տուն» հուշարձանը, որից հետո միայն, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքում կատարվեց համապատասխան փոփոխություն:⁵²⁹

Առաջարկ. ապահովել պատմության և մշակութային հուշարձանների արդյունավետ պահպանությունը, պահպանման կանոնները խախտած անձանց նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, ինչպես նաև հետևողական լինել, որպեսզի ապամոնտաժված պատմամշակութային հուշարձանների քարերը պահպանվեն պատշաճ պայմաններում:

2.7.5 Դեռևս 2013 թվականին Պաշտպանի կողմից անդրադարձ էր կատարվել սոցիալապես անապահով անձանց՝ մշակութային կյանքին մասնակցելու և գիտության նվաճումներից օգտվելու խոչընդոտների վերացման խնդրին, ինչը սակայն դեռ լուծում չի ստացել:

Սոցիալապես անապահով անձանց համար 2014 թվականի ընթացքում Նախարարության կողմից չեն սահմանվել համապատասխան գեղչեր, օրինակ՝ թանգարանների, թատրոնների, կինոթատրոնների և համերգասրահների տոմսերի համար: Նշվածի արդյունքում սահմանափակվել է մի շարք անձանց՝ գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին

⁵²⁷ <http://www.aravot.am/2014/06/12/470180/>

⁵²⁸ Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին Գրանադայի կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր կողմ պարտավորվում է արգելել պահպանվող որևէ հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումը, բացի այն դեպքի, երբ այդպիսի հուշարձանի նյութական պահպանությունը հրամայաբար պահանջում է այն տեղափոխել: Այս դեպքում, իրավասու մարմինը անվտանգության անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկի՝ հարմար վայրում հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման և վերականգնման համար:

⁵²⁹ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի տեքստը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ. «Հուշարձանների քանդումն արգելվում է: Հանրապետական և տեղական նշանակության հուշարձանի ամբողջական կամ մասնակի տեղափոխումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքում, եթե հուշարձանի նյութական պահպանությունը հրամայաբար պահանջում է այն տեղափոխել: (...):»:

մասնակցելու իրավունքը⁵³⁰: Նշենք, որ յուրաքանչյուր մարդու մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը սահմանված է նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրով (Դաշնագիր)⁵³¹: Այդ իրավունքի լրիվ իրականացման նպատակով Դաշնագրին մասնակցող պետությունների կողմից պետք է ձեռնարկվեն միջոցներ, ներառյալ այն միջոցները, որոնք անհրաժեշտ են կրթության և մշակույթի նվաճումների պաշտպանության, զարգացման և տարածման համար: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի ընդհանուր մեկնաբանությամբ նշել է, որ մատչելիությունը արտահայտվում է նաև մշակույթը բոլորին ֆինանսապես հասանելի լինելու միջոցով՝ ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում առանց խտրականության⁵³²: Այս առումով, կարևոր է նպաստել և ապահովել մշակութային կյանքի մատչելիությունը նաև այն անձանց համար, ովքեր ապրում են սոցիալապես վատ պայմաններում: Ավելին, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու՝ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորված իրավունքն, առաջին հերթին, նշանակում է, որ մարդը կարող է մասնակցել դրանց (այդ նվաճումների) ստեղծմանը, երկրորդ՝ կարող է ազատորեն օգտվել մշակութային արժեքներից և նվաճումներից, երրորդ՝ ՀՀ պարտականությունն է յուրաքանչյուրի համար ապահովել ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ ժողովրդի մշակութային հաստատությունների (գրադարաններ, թանգարաններ, թատրոններ, համերգասրահներ, պատկերասրահներ, կինոթատրոններ, պատմամշակութային հուշարձաններ և այլն) մատչելիությունը⁵³³, ինչը, սակայն, պետության կողմից պատշաճ չի ապահովվում: Նշված խնդիրը ներառվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում: Մասնավորապես, նշված ծրագրով նախատեսվում է, որ Նախարարությունը պետք է հասարակության անապահով և խոցելի խմբերի համար ներդնի վճարովի մշակութային ծառայություններից օգտվելու զեղչերի համակարգ⁵³⁴: Նախարարությունից հայտնել են, որ ի կատարումն վերոնշյալ միջոցառումների ծրագրի՝ հասարակության անապահով խմբերի համար թանգարաններում և գրադարաններում շարունակում են տրամադրել որոշակի արտոնություններ, սակայն նշենք որ վերջիններս ուղղակիորեն նախատեսված չեն հենց սոցիալապես անապահով անձանց համար⁵³⁵: Նշել են նաև, որ վճարովի

⁵³⁰ ՀՀ Սահմանադրություն, հոդված 40

⁵³¹ ՀՀ-ն միացել է 1993 թվականի հունիսի 9-ին

⁵³² http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2fC.12%2fGC%2f21&Lang=en

⁵³³ «ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ» 2010 թվականի գիտագործնական ժողովածու

⁵³⁴ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303 -Ն որոշում

⁵³⁵ Թանգարաններում շարունակվել է դպրոցական տարիքի երեխաների, ուսանողների և թոշակառուների համար սահմանված մշտական այցելության տոմսի արժեքի (ոչ ավելի, քան 300 դրամ) արտոնության կիրառումը, բոլոր այցելուների համար յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը սահմանված անվճար այցելության արտոնության կիրառումը: Գրադարաններում շարունակվել է սակավաշարժ անձանց գրադարանային սպասարկման ապահովման «Ընտանեկան գրադարանավար» ծրագիրը, որով իրականացվում է տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ ունեցողների տնային

մշակութային ծառայություններից օգտվելու գեղջերի համակարգի ներդրման նպատակով Նախարարության կողմից ուսումնասիրվում է արտերկրի փորձը, ինչպես նաև գեղջային համակարգի կիրառման հնարավորությունների շուրջ քննարկումներ են կազմակերպվում թատրոնների և համերգասրահների տնօրենների հետ: Նշվածից կարելի է եզրակացնել, որ հասարակության սոցիալապես անապահով խմբերի համար թանգարաններում և գրադարաններում դեռևս սակավաթիվ արտոնություններ են կիրառվում, իսկ թատրոններում և համերգասրահներում՝ այդպիսիք գրեթե բացակայում են: Նշվածը, սակայն բավարար չէ սոցիալապես անապահով անձանց՝ գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատության, գիտության նվաճումներից օգտվելու և հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի լիարժեք իրականացման համար:

Առաջարկ. սոցիալապես անապահով անձանց համար սահմանել գեղջեր և այլ արտոնություններ՝ վերջիններիս մշակութային կյանքին մասնակցելու, գիտության նվաճումներից օգտվելու իրավունքի լիարժեք ապահովման համար:

2.8 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Նախարարությունը պետական ծրագրերի շրջանակներում ապահովել է ՀՀ մարզական պատվիրակության մասնակցությունը 2014 թվականի Սոչիի ձմեռային պարաօլիմպիկ խաղերին, ինչպես նաև 2014 թվականին Խորվաթիայում կայացած խուլերի շախմատի օլիմպիական առաջնությանը:
- ՀՀ հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության առավել արդյունավետ մեխանիզմների ներդրման, մարզային ՀԿ-ների գործունեության խթանման, ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում երիտասարդական քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել «ՀՀ հասարակական-քաղաքական գործընթացներին մարզային երիտասարդության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ստեղծման ծրագիրը և ծրագրի միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը⁵³⁶:

Առկա թերություններն ու խնդիրները

2.8.1 Շարունակվում է չլուծված մնալ բազմաթիվ երիտասարդների, հատկապես՝ մարզաբնակ, ինչպես նաև մասնագիտական կրթություն չունեցողների համար զբաղվածության ապահովման խնդիրը:

Թեև Նախարարության նպատակներից ու խնդիրներից է մասնագիտական կողմնորոշման ու զբաղվածության երիտասարդական ծառայությունների և կենտրոնների ստեղծումն ու զարգացումը, երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը, նրանց իրավունքների և օրինական շահերի իրականացմանն աջակցությունը⁵³⁷, այնուամենայնիվ, Նախարարության ձեռնարկած ծրագրերն ու միջոցառումները երիտասարդներին աշխատանքով ապահովելու ուղղությամբ եղել են

⁵³⁶ <http://www.msy.am/files/post/1421328012-Sexmagir2014.pdf>

⁵³⁷ «ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 12 հուլիսի 2007 թվականի N 825-Ն որոշում

սակավաթիվ, ինչը չի նպաստել երիտասարդների զբաղվածության հիմնահարցերի լուծմանը: Այսպես, ըստ պաշտոնական տվյալների, 2014թ. ՀՀ-ում գործազուրկ է եղել 18-30 տարիքային խմբի անձանց 18.7%-ը, ինչպես նաև 20-24 տարիքային խմբի անձանց 23.4%-ը⁵³⁸: Մինևույն ժամանակ, 15-24 տարեկանների շրջանում գործազրկության մակարդակը գերազանցել է 40 տոկոսը⁵³⁹: Բազմաթիվ մասնագիտական կրթություն ունեցող մարզաբնակ երիտասարդներ աշխատանք չգտնելու պատճառով ստիպված են եղել արտագաղթել կամ սեզոնային աշխատանք կատարելու նպատակով տեղափոխվել այլ երկիր: Մի շարք մասնագիտական կրթություն չունեցող երիտասարդներ առհասարակ չեն կարողացել իրենց համապատասխան աշխատանք գտնել՝ նախնական մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման ծրագրերի բացակայության կամ դրանց անարդյունավետության պատճառով: Չնայած նրան, որ Նախարարության կողմից 2014 թվականին ՀՀ որոշ մարզերում իրականացվել են երիտասարդության զբաղվածության ապահովմանն ուղղված որոշ միջոցառումներ⁵⁴⁰, բայցևայնպես, վերջիններս չեն կարող բավարար համարվել, քանի որ չեն ընդգրկել հանրապետության բոլոր մարզերն ու համայնքները, ինչպես նաև չեն կրում շարունակական բնույթ: Խնդրահարույց է նաև այն, որ ըստ Նախարարության տրամադրած տեղեկությունների՝ նշված ծրագրերի իրականացման արդյունքում աշխատանքի տեղավորման կամ բիզնես հիմնադրելու վերաբերյալ տվյալներ առկա չեն, ինչը վկայում է, որ Նախարարությունը չի իրականացրել վերոգրյալ ծրագրերի արդյունավետության մոնիթորինգ: Հատկանշական է, որ քննարկվող խնդիրը ներառվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունում⁵⁴¹, որով նախատեսվում է երիտասարդության շրջանում զբաղվածության խնդրի լուծման կապակցությամբ մշակել հստակ ծրագրեր և իրականացնել տարբեր միջոցառումներ ՀՀ բոլոր մարզերում՝ ապահովելով դրանց շարունակական բնույթը: Երիտասարդների շրջանում գործազրկության ներկա մակարդակի առկայությունը ցույց է տալիս, որ Նախարարության կողմից չի մշակվել արդյունավետ քաղաքականություն՝ ուղղված երիտասարդների զբաղվածության ապահովմանը և աշխատատեղերի ստեղծմանը, երիտասարդների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելուն, ավելին՝ չեն իրականացվել մշտադիտարկումներ՝ իրականացված սակավաթիվ ծրագրերի արդյունավետությունը պարզելու համար:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ երիտասարդների՝ հատկապես մարզաբնակ և մասնագիտական կրթություն չունեցողների համար զբաղվածության և աշխատատեղերի ստեղծման խնդիրը գործնականում լուծելու ուղղությամբ, ինչպես նաև իրականացնել վերահսկողություն ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունավետությունը

⁵³⁸ <http://unfpa.am/sites/default/files/WPD-2014-Youth-factsheet.pdf>

⁵³⁹ <http://unfpa.am/sites/default/files/WPD-2014-Youth-factsheet.pdf>

⁵⁴⁰ ՀՀ Կոտայքի մարզի Աղվերան, Չարենցավան քաղաքներում և հարակից համայնքներում, ինչպես նաև ՀԿ-ների ներկայացրած ծրագրերի հիման վրա՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան և Ազատան համայնքներում, ՀՀ Սյունիքի մարզի Միսիան քաղաքում,

⁵⁴¹ ՀՀ կառավարության 27.02.2014թ. «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N303 որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկ, 22-րդ կետ

պարզելու և արդյունքների հիման վրա հետազայում տվյալ քաղաքականությունը բարելավելու համար:

2.8.2 Երիտասարդ ընտանիքներին մատչելի բնակարանի ապահովման պետական ծրագրով առավելագույն տարիքային շեմի նախատեսման պատճառով կրճատվում է ծրագրի հնարավոր շահառուների թիվը:

ՀՀ կառավարության 2010 թվականի որոշմամբ⁵⁴² հաստատված «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրով, որի իրականացմանը մասնակցում է նաև Նախարարությունը, սահմանվել է ծրագրի շահառուների՝ երիտասարդ ընտանիքների համար գումարային տարիքի առավելագույն շեմ, ինչի հետևանքով, բազմաթիվ երիտասարդ ընտանիքներ չեն կարողանում օգտվել նշված ծրագրից: Մասնավորապես, որպես նշված ծրագրի շահառուներ հանդես են գալիս երիտասարդ ընտանիքները, որտեղ ամուսիններից առնվազն մեկը 18-30 (ներառյալ) տարեկան ՀՀ քաղաքացի է, և ամուսինների տարիքային գումարը չի գերազանցում 60-ը՝ միաժամանակ նրանցից ոչ մեկի տարիքը չի գերազանցում 35-ը (ներառյալ): Բայցևայնպես, նման տարիքային շեմի սահմանումը խոչընդոտում է ծրագրի արդյունավետությանը, քանի որ զգալիորեն կրճատվում է այն երիտասարդ ընտանիքների թիվը, որոնք կարող են դառնալ ծրագրի շահառուներ: Մինչդեռ, վերջին տարիներին ՀՀ-ում բարձրացել է ամուսնության միջին տարիքը՝ տղամարդկանց դեպքում կազմելով 30.2 տարեկան, իսկ կանանց՝ 26.5 տարեկան (Տես՝ Աղյուսակ 1)⁵⁴³:

Աղյուսակ 1.

Տարի Year	Ամուսնացողների միջին տարիքը, տարի Mean age at marriage, year		Առաջին տեղում ամուսնացողների միջին տարիքը, տարի Mean age at marriage, year	
	Տղամարդու For man	Կնոջ For woman	Տղամարդու For man	Կնոջ For woman
	1996	26.8	22.7	26.5
1997	27.7	23.1	26.8	22.7
1998	27.7	23.0	26.6	22.4
1999	27.7	23.1	26.7	22.6
2000	28.0	23.6	27.1	23.0
2001	27.8	23.1	26.9	22.8
2002	28.1	23.7	27.1	23.2
2003	28.3	24.4	27.4	22.8
2004	28.4	24.0	27.5	23.5
2005	28.6	24.2	28.0	23.9
2006	28.9	24.5	28.2	24.1
2007	29.2	24.9	28.3	24.4
2008	29.2	24.2	28.4	24.5
2009	29.0	24.9	28.1	24.4
2010	29.3	25.2	28.4	24.6
2011	29.6	25.6	28.7	25.0
2012	29.7	25.9	28.8	25.3
2013	30.2	26.5	29.1	25.8

Նշենք, որ Ծրագիրը հաստատվել էր դեռևս 2010 թվականին, երբ ամուսնության միջին

⁵⁴² ՀՀ կառավարության 29.01. 2010 թ. թիվ 98-Ն որոշում

⁵⁴³ http://armstat.am/file/article/demos_14_7.pdf

տարիքը տղամարդկանց դեպքում կազմում էր 29.3 տարեկան, իսկ կանանց դեպքում՝ 25.2: Սակայն գրանցված աճի պայմաններում, ներկայումս, երիտասարդ ընտանիքներում ամուսինների գումարային տարիքը բազմաթիվ դեպքերում գերազանցում է սահմանված շեմը: Խնդրի վերաբերյալ Նախարարությունից հայտնել են, որ 2013 թվականին մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել կառավարության համապատասխան որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը⁵⁴⁴, որով առաջարկվել է վերանայել երիտասարդ ընտանիքի գումարային տարիքի սահմանափակումը՝ 60-ից բարձրացնելով մինչև 65 տարեկան, միևնույն ժամանակ վերին տարիքային շեմը թողնելով անփոփոխ՝ 35: Սակայն, նախագիծը 2014 թվականի ընթացում չի ընդունվել: Այսպիսով, երիտասարդ ընտանիքներում ամուսինների գումարային տարիքի սահմանված շեմի հետևանքով բազմաթիվ երիտասարդ ընտանիքները զրկվել են սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված պետական աջակցությունից:

Առաջարկ. ձեռնարկել քայլեր «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի շահառուների գումարային տարիքի շեմի բարձրացման ուղղությամբ՝ ապահովելու ծրագրի շահառուների հնարավորինս լայն շրջանակ:

2.8.3 Ինչպես 2013, այնպես էլ 2014 թվականի ընթացքում չեն ձեռնարկվել բավարար միջոցներ մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչների վերապատրաստման ուղղությամբ, ինչը բացասաբար է անդրադարձել մարզաձևերի ուսուցման որակի վրա:

Դեռևս 2013 թվականի տարեկան զեկույցում Պաշտպանի կողմից բարձրացվել էր այն խնդիրը, որ Նախարարության կողմից չեն ձեռնարկվում համապատասխան միջոցներ մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչների վերապատրաստման ուղղությամբ, ինչը բացասաբար է անդրադարձնում վերջիններիս կողմից մարզաձևերի ուսուցման որակի, ինչպես նաև համապատասխան մրցումներում մարզադպրոցների սաների գրանցած արդյունքների վրա: Այնինչ, օրենքով Նախարարությունը, որպես ոլորտի պետական լիազոր մարմին, պատասխանատու է մանկապատանեկան սպորտի բնագավառի մասնագետների (մարզիչների, մանկավարժների և այլն) պատրաստման և վերապատրաստման համար:⁵⁴⁵ Խնդիրն առավել սուր է մարզային մանկապատանեկան մարզադպրոցներում, որտեղ տարիներ շարունակ վերապատրաստումներ չեն իրականացվել: Խնդրի մասին բարձրաձայնել են նաև Սյունիքի⁵⁴⁶ և Գեղարքունիքի⁵⁴⁷ մարզերի որոշ մարզադպրոցների մարզիչներ: Վերջիններս նշել են, որ մրցումների ժամանակ են միայն տեղեկանում նոր ծրագրերի մասին, ինչն էլ իր հերթին ազդում է նաև մրցումների արդյունքների վրա: Այսպիսով, Նախարարության կողմից՝ օրենքով

⁵⁴⁴«ՀՀ կառավարության 2010թվականի հունվարի 29-ի № 98-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

⁵⁴⁵«Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենք, 21-րդ հոդված

⁵⁴⁶<http://www.aravot.am/2014/11/24/518746/>

⁵⁴⁷<http://gegharkunik.gov.am/news/item/2014/11/18/sku/>

սահմանված իր պարտավորության՝ մանկապատանեկան սպորտի բնագավառի մասնագետների վերապատրաստման ոչ պատշաճ իրականացումը հանգեցնում է ուսուցանվող մարզաձևերի որակի վատթարացմանը և մրցումներում մարզադպրոցների սաների կողմից ցածր արդյունքների գրանցմանը:

Առաջարկ. իրականացնել մանկապատանեկան սպորտի մասնագետների, հատկապես՝ մարզերում մանկապատանեկան մարզադպրոցների մարզիչների շարունակական վերապատրաստման դասընթացներ:

3.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- 2014 թվականին Նախարարության աջակցությամբ կազմակերպվել է թվով 6 փառատոն՝ ուղղված հայրենական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, Հայաստանում զբոսաշրջային սեզոնի երկարաձգմանը, համայնքներում զբոսաշրջության և կարողությունների զարգացմանը:
- Նախարարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն զբոսաշրջության ազգային ադմինիստրացիայի միջև ստորագրվել է «Չինաստանի զբոսաշրջիկների՝ դեպի Հայաստան խմբային ճանապարհորդությունը դյուրացնելու մասին» փոխըմբռնման հուշագիր, որով, ըստ էության, Չինաստանի կառավարության կողմից Հայաստանին շնորհվել է «Երաշխավորված զբոսաշրջային երկիր-Approved Destination Status» կարգավիճակ:
- Նախարարության կողմից ուսումնասիրվել են գործարար միջավայրին առնչվող խնդիրները, «Գործարարությամբ զբաղվելը» 2015 թվականի զեկույցի մեթոդաբանությունը, վերջինում Համաշխարհային բանկի կողմից իրականացված և նախատեսվող փոփոխությունները, որոնց հիման վրա մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2015 թվականի միջոցառումների ծրագիրը:

Առկա թերություններն ու խնդիրները

3.1.1 Նախարարությունը չի ձեռնարկել անհրաժեշտ և բավարար քայլեր փոքր և միջին բիզնեսի աջակցության համար, ինչի արդյունքում նվազել է նման ձեռնարկությունների քանակը:

Նախարարությունը գործարար միջավայրի բարելավման շրջանակներում չի իրականացրել բավարար միջոցառումներ փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների (ՓՄՁ) զարգացման և աջակցության ուղղությամբ, որի մասին է վկայում 2013 թվականի համեմատությամբ մանրածախ առևտրային օբյեկտների քանակի նվազեցումը: Նշենք, որ Նախարարության խնդիրներից է գործարարության, ներդրումների և արտահանման խթանումը, գործարարության համար բարենպաստ և

միջազգային մակարդակով մրցունակ միջավայրի ապահովումը⁵⁴⁸, որի կապակցությամբ մշակվում է գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությունը⁵⁴⁹: Վերոնշյալ հարցի կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ 2014 թվականի ընթացքում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամն իրականացրել է Նախարարության կողմից մշակված «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» ծրագիրը, որի համար հատկացվել է 151,983.7 հազ. դրամ⁵⁵⁰: Ծրագրով նախատեսվում էր 2014 թվականին ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում ուսուցողական աջակցություն ցուցաբերել 350-450 սկսնակ գործարարի, և ֆինանսական աջակցություն՝ 250-300 սկսնակ գործարարի՝ այդպիսով ստեղծելով 300-450 նոր աշխատատեղ: Այնուամենայնիվ, չնայած իրականացված միջոցառումներին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները⁵⁵¹ վկայում են ՀՀ-ում 2014 թվականին մանրածախ առևտրի օբյեկտների շրջանում ցուցանիշների նվազման մասին: Մասնավորապես, 2012-2014 թվականների ընթացքում գերփոքր խանութների թիվը նվազել է 1341-ով, իսկ փոքր խանութների թիվը՝ 58-ով: Նույն ժամանակահատվածում ընդհանուր խանութների թիվը նվազել է 1377 խանութով⁵⁵², բացի դրանից՝ մանրածախ առևտրի օբյեկտների շարքում զգալի նվազել է կրպակների քանակը՝ 2417 միավոր կրպակով⁵⁵³: Մինչդեռ, նույն ժամանակաշրջանի համար ԱՎԾ-ը չի արձանագրել նմանատիպ կտրուկ նվազեցում միջին և խոշոր խանութների դեպքում: Նշված տվյալները վկայում են այն մասին, 2011 թվականից ի վեր ամեն տարի իրականացվող «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» ծրագիրը բավարար չէ ՓՄՁ-ների զարգացման համար և անհրաժեշտ է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել գործարար միջավայրի խթանման համար:

Առաջարկ. բարձրացնել փոքր և միջին ձեռնարկությունների աջակցության ծրագրերի արդյունավետությունը, ինչպես նաև մշակել նոր ծրագրեր բիզնեսի զարգացման և նրանց գործունեության խթանման ուղղությամբ:

3.1.2 Նախարարության կողմից բավարար քայլեր չեն ձեռնարկվել սպառողներին իրենց իրավունքների վերաբերյալ պատշաճ իրազեկելու ուղղությամբ:

Չնայած սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովման նպատակով պետությունն իրականացնում է օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության

⁵⁴⁸ ՀՀ կառավարության 11 հուլիսի 2002 թվականի N 1229-Ն որոշման 1-ին հավելված, կետ 8, ենթակետ 5

⁵⁴⁹ ՀՀ կառավարության 11 հուլիսի 2002 թվականի N 1229-Ն որոշման 1-ին հավելված, կետ 9, ենթակետ 5

⁵⁵⁰ ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1511-Ն որոշում

⁵⁵¹ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-դեկտեմբերին»

http://www.armstat.am/file/article/sv_12_11a_126.pdfhttp://www.armstat.am/file/article/sv_12_12a_126.pdf

http://www.armstat.am/file/article/sv_12_13a_126.pdfhttp://www.armstat.am/file/article/sv_12_14a_126.pdf

⁵⁵² ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումների համաձայն՝ փոքր խանութ է համարվում 6-15 մարդ աշխատող ունեցող խանութը

⁵⁵³ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կրպակ է առևտրակա նգործունեության իրականացման համար նախատեսված շինությունը, որը չունի առևտրական դահլիճ

ուղղությամբ⁵⁵⁴, այդուհանդերձ, շուկայում դեռևս առկա են բազմաթիվ խախտումներ: Նշված խախտումների կանխարգելումը և վերացումը, ինչպես նաև ոչ պարենային արտադրանքների ու ապրանքների (աշխատանքների, ծառայությունների՝ բացառությամբ հանրային սննդի կազմակերպություններում մատուցվող ծառայությունների) անվտանգության ապահովումը Նախարարության շուկայի վերահսկողության պետական տեսչության (Տեսչություն) նպատակների և խնդիրների շարքում է⁵⁵⁵: Սակայն, բավարար չեն եղել հանրության իրազեկման կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումները հասարակության լայն շերտերին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման համար: Թեև տեսչությունից հայտնել են, որ հանրության իրազեկումը կատարվում է ՁԼՄ-ների հետ ուղիղ և հետադարձ կապի միջոցով, յուրաքանչյուր եռամսյակ կազմակերպվում են հանդիպումներ հասարակական կազմակերպությունների հետ, ինչպես նաև տեղեկատվություն է տրամադրվում prosafe.am և mineconomy.am կայք էջերի միջոցով, այնուամենայնիվ, գտնում ենք, որ Տեսչության պաշտոնական կայքում վտանգավոր ապրանքների մասին հրապարակված տեղեկությունը պատշաճ ձևով չի մատուցվում հասարակությանը: Ավելին, պաշտոնական կայքում զետեղված տեղեկատվությունը, շատ դեպքերում, կարող է հասանելի չլինել այն անձանց համար, որոնք համացանցից օգտվելու հնարավորություն չունեն: Նշենք, որ սպառողների իրավունքների պաշտպանության գործում առաջնային նշանակություն ունի սպառողների լայն շրջանակի՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկության ապահովումը⁵⁵⁶: Բացի դրանից՝ սպառողների պաշտպանության համատեքստում հանրության իրազեկումն իր մեջ ներառում է ոչ միայն կոնկրետ ապրանքների վերաբերյալ հանրությանը տեղեկատվության տրամադրում, այլև սպառողին իր իրավունքների, դրանց պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում (օրինակ՝ ո՞ր մարմինն է իրականացնում սպառողների իրավունքների պաշտպանություն, ու՞ր դիմի, ի՞նչ քայլեր սպառողը պետք է ձեռնարկի իր իրավունքների հնարավոր խախտման դեպքում և այլն)⁵⁵⁷: Միաժամանակ, նման իրազեկումը պետք է լինի հնարավորինս օպերատիվ, օրինակ՝ հանրության լայն շրջանակների համար վտանգավոր ապրանքի մասին տեղեկատվության հասանելիության ապահովումը այդ ապրանքը հայտնաբերելուց անմիջապես հետո:

⁵⁵⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 31.1 և 27, «ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ» 2010թ. գիտագործնական մեկնաբանությունների ժողովածու. «Սպառողների իրավունքները ևս չեն կարող կենսագործվել կյանքում առանց որակյալ և անորակ ապրանքների մասին բավարար և հավաստի տեղեկությունների, առանց գովազդի և հակագովազդի, առանց ճշմարիտ տեղեկության համեմատական թեստավորման մասին և այլն»:

⁵⁵⁵ «Շուկայի վերահսկողության պետական տեսչության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23 ապրիլի 2003 թվականի N 524-Ն որոշում, կետ 6

⁵⁵⁶ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված

⁵⁵⁷ Շուկայում իրականացվող ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ռիսկային ոչ պարենային արտադրանքների, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների՝ բացառությամբ հանրային սննդի կազմակերպություններում մատուցվող ծառայությունների) վերաբերյալ հանրության իրազեկման պարտականությունը դրված է Տեսչության վրա: «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ տեսչական մարմինն իր վերահսկման ոլորտում հնարավոր խախտումները կանխելու և հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով իրականացնում է կանխարգելիչ գործունեություն(...):

Հատկանշական է, որ հանրության իրազեկման հարցին անդրադարձել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունն (OECD-SՀԶԿ) իր «Սպառողական ուսուցում. ՏՀԶԿ-ի Սպառողական ռազմավարության հանձնաժողովի ռազմավարական առաջարկություններ» փաստաթղթում⁵⁵⁸, որտեղ կարևորվում է սպառողական ուսուցումը դպրոցներում⁵⁵⁹, ՁԼՄ-ների օգտագործման նոր միջոցները⁵⁶⁰, ինչպես նաև համացանցի մեծածավալ ռեսուրսների լիարժեք օգտագործումը⁵⁶¹: Բացի դրանից՝ ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի Սպառողների պաշտպանության ՄԱԿ-ի ուղեցույցում⁵⁶² նշված է, որ սպառողների պաշտպանության հետ կապված ծրագրերի իրականացման ժամանակ հատուկ ուշադրություն է պետք դարձնել անապահով, ցածր եկամուտ և գրագիտություն ունեցող սպառողների կարիքներին՝ թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակավայրերում⁵⁶³: Միաժամանակ, սպառողների իրազեկման մակարդակը բարձրացնելու նպատակով կարելի է նաև ստեղծել մեկ միասնական խորհրդատվական համակարգ⁵⁶⁴: Հաշվի առնելով ՀՀ-ում սպառողների իրազեկության ցածր մակարդակը, ինչպես նաև դրա ապահովման համար առավել ժամանակակից մեխանիզմների կիրառման անհրաժեշտությունը, գտնում ենք, որ Տեսչությունը պետք է իրավական և գործնական քայլեր ձեռնարկի ոչ միայն տեսչական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտների իրազեկման ապահովման⁵⁶⁵ միջոցառումների իրականացման ուղղությամբ, այլ նաև կիրառի ՏՀԶԿ առաջարկությամբ և ՄԱԿ-ի ուղեցույցով նախատեսված սպառողների իրազեկման ավելի լայն մոտեցումները:

Առաջարկ. դպրոցներում կազմակերպել սպառողների իրավունքների պաշտպանության

⁵⁵⁸ Consumer Education, Policy Recommendations of the OECD'S Committee on Consumer Policy, 2009

<http://www.oecd.org/internet/consumer/44110333.pdf>

⁵⁵⁹ ՏՀԶԿ առաջարկություններ, Էջ 5. Դպրոցները հնարավորություն են տալիս սովորեցնելու երեխաներին սպառողական խնդիրների մասին և օգնելու զարգացնելու կարևոր հմտություններ, ինչի համար անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչները ծանոթ լինեն սպառողական խնդիրներին և ունենան անհրաժեշտ ուսումնական նյութեր:

⁵⁶⁰ ՏՀԶԿ առաջարկություններ, Էջ 6. Չնայած նրան, որ որոշ սպառողական ուսուցման քարոզարշավներ (campaigns) հանրության լայն շերտերում տեղեկատվության տարածման համար օգտագործում են ՁԼՄ-ները, անհրաժեշտ է ուսումնասիրել ՁԼՄ-ների օգտագործման նոր միջոցներ՝ իրազեկության ապահովման համար:

⁵⁶¹ ՏՀԶԿ առաջարկություններ, Էջ 6. Համացանցն, իր ռեսուրսների մեծ զանգվածով՝ հաղորդակցման ուղիներով, առցանց գործիքներով, ինչպիսիք են ուսումնական պորտալները, հարցումները, խաղերը, առցանց սոցիալական ցանցերը, բլոգերը, առցանց նորությունները և տեսանյութերը, պետք է օգտագործվեն առավել լիարժեք՝ սպառողների իրազեկությունն ապահովելու համար:

⁵⁶² Department of Economic and Social Affairs, United Nations Guidelines for Consumer Protection (as expanded in 1999), UNITED NATIONS New York, 2003

http://www.consumersinternational.org/media/33866/consumption_en.pdf

⁵⁶³ http://www.consumersinternational.org/media/33866/consumption_en.pdf

⁵⁶⁴ Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում գործող սպառողների իրազեկման միասնական համակարգը (*National Association of Citizens Advice Bureaux; Department for Business, Innovation and Skills*)՝ Քաղաքացիների խորհրդատվության բյուրոյի ազգային ասոցիացիայի շրջանակներում, որը տրամադրում է ազատ, անկախ, կոնֆիդենցիալ և անկողմնակալ խորհրդատվություն բոլորին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

⁵⁶⁵ «Տեսչական մարմինների մասին» ՀՀօրենք, հոդված 13

վերաբերյալ դասընթացներ, ինչպես նաև հանրության լայն շերտերում իրականացնել սպառողների իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ, այլ մարմինների հետ համագործակցությամբ ուսումնասիրել սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտում մեկ միասնական «թեժ գիծ» ծառայություն և կայքէջ ներդնելու հնարավորությունը:

3.1.3 Բազմաթիվ մանրածախ առևտրի կետերում, հակառակ օրենքի պահանջին, հրաժարվել են սպառողների կողմից գնված ապրանքը ետ վերցնել կամ փոխանակել, ինչի կապակցությամբ Տեսչությունը չի իրականացրել բավարար միջոցառումներ:

Սպառողների իրավունքների խախտումների շարքում շարունակում են արդիական մնալ վաճառակետերի կողմից՝ գնված ապրանքը փոխարինելու կամ ետ վերցնելու գնորդի իրավունքի խախտումները: Այսպես, ստացված տեղեկատվության համաձայն՝ բազմաթիվ առևտրի կետերը, խախտելով օրենքը, հրաժարվել են ընդունել (կամ փոխանակել) գնված ապրանքը և վերադարձնել վճարված գումարը՝ փակցնելով «Գնված ապրանքը հետ չի ընդունվում» գրությունը կամ, վկայակոչելով իրենց ներքին կանոնակարգը, իսկ որոշ դեպքերում, սահմանել են ապրանքի վերադարձման այլ կարգ կամ ժամկետներ (օրինակ՝ զեղչված ապրանքը կարող է վերադարձվել 3 օրում): Մինչդեռ, ապրանքը փոխարինելու և վերադարձնելու գնորդի իրավունքի պատշաճ իրականացումը ենթադրում է, որ սահմանված կարգի, ժամկետների պահպանման և փոխարինելու համար անհրաժեշտ ապրանքի բացակայության դեպքում գնորդն իրավունք ունի վաճառողին վերադարձնել ձեռք բերած ապրանքը և ստանալ դրա դիմաց վճարած գումարը⁵⁶⁶: Նշենք, որ Նախարարությունից հայտնել են, որ գործող օրենսդրության համապատասխան դրույթներում⁵⁶⁷ գնված ոչ պարենային ապրանքը վերադարձնելու որևէ արգելք սահմանված չէ: Ուստի, մանրածախ առևտրով զբաղվող առևտրի կետերի կողմից նման սահմանափակումների նախատեսումը ոչ իրավաչափ է և խախտում է սպառողների իրավունքները: Այս առումով նշենք, որ Շուկայի վերահսկողության պետական տեսչությունը Նախարարության առանձնացված ստորաբաժանում է, որի նպատակներից և խնդիրներից է սպառողների իրավունքների պաշտպանությունը⁵⁶⁸: Վերջինիս ապահովման համար Տեսչությունն իրականացնում է, մասնավորապես, սպառողների անորոշ շրջանակի իրավունքների խախտումներին ուղղված ուսումնասիրություններ, տվյալների հավաքագրում, դրանց հիմա վրա վերլուծությունների հրապարակում և օրենսդրությամբ վերապահված իրավասությունների շրջանակներում այլ միջոցառումներ⁵⁶⁹: Այսպես,

⁵⁶⁶ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 517, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 13

⁵⁶⁷ Տե՛ս նույն տեղում

⁵⁶⁸ «Շուկայի վերահսկողության պետական տեսչության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23 ապրիլի 2003 թվականի N 524-Ն որոշում, <http://mineconomy.am/uploads/22.pdf>

⁵⁶⁹ Տե՛ս նույն տեղում

Նախարարությունից հայտնել են, որ տարբեր առևտրի կետերում առկա՝ գնված ոչ պարենային ապրանքի վերադարձնելը արգելող ցուցանակների վերացման ուղղությամբ կազմակերպվել են քննարկումներ սպառողների հասարակական կազմակերպությունների և տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում վերջիններիս պարզաբանվել է խնդիրը, ինչի արդյունքում զգալի նվազել է տնտեսավարող սուբյեկտների կողմից տեղադրվող նման ցուցանակների թիվը: Այնուամենայնիվ, նշված միջոցառումների իրականացումը գործնականում չի հանգեցրել խնդրի վերացմանը, ինչի մասին վկայում են ինչպես փոքր առևտրի կրպակներում, այնպես էլ մի շարք մեծ առևտրի կենտրոններում գնված ապրանքը ետ վերցնելու կամ փոխանակելու սպառողների իրավունքի խախտումները: Հետևաբար, Տեսչությունը պետք է ակտիվ քայլեր ձեռնարկի նշյալ մանրածախ առևտուր իրականացնող կետերում ոչ պարենային ապրանքների փոխանակման կամ վերադարձման սահմանափակման դեպքերի վերհանման, դրանց վերացման և համապատասխան պատասխանատվության միջոցներ կիրառելու ուղղությամբ:

Առաջարկ. իրականացնել բավարար քայլեր և արդյունավետ միջոցառումներ՝ սպառողներին իրազեկելու գնված ոչ պարենային ապրանքի վերադարձման կամ փոխանակման արգելքներ սահմանելու ոչ իրավաչափ պահանջի դեպքում իրենց իրավունքների մասին, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտներին իրազեկել նման սահմանափակման ոչ իրավաչափության մասին:

3.1.4 Չեն ստեղծվել գործուն մեխանիզմներ օտարերկրյա գործարարների գործարարությամբ զբաղվելու խթանման համար, ինչը նպաստել է օտարերկրյա ներդրումները կրճատմանը:

Ոլորտի մասնագետների պնդմամբ՝ վերջին տարիներին ՀՀ-ում նվազել են օտարերկրյա ներդրումները, ինչի արդյունքում նվազել է նաև տնտեսական աճը: Առհասարակ, տնտեսական աճի նվազումը հանգեցնում է սոցիալական-տնտեսական վիճակի վատթարացմանը, ինչի հետևանքով բազմաթիվ անձինք զրկվում են իրենց սոցիալական իրավունքների իրականացման հնարավորությունից: Մի շարք փորձագետների պնդմամբ՝ Հայաստանում օտարերկրյա ներդրումների կրճատումը պայմանավորված է, ինչպես աշխարհաքաղաքական, սոցիալական գործոններով և տարածաշրջանային հակամարտություններով, ինչպես էլ երկրի ներսում տնտեսական մրցակցության պաշտպանության ուղղությամբ ձեռնարկված ոչ բավարար քայլերով: Միաժամանակ, առանձին օտարերկրյա գործարարներ, որպես Հայաստանում գործարարության զբաղվելու խոչընդոտներ, նշել են ներդրումների իրականացման համար ցածր կանխատեսելիությունը և վստահություն պետության իրավական դաշտի հանդեպ, առանձին դեպքերում ոչ հավասար հնարավորությունների ապահովումը տեղացի ու արտասահմանյան, մեծ ու փոքր ընկերությունների համար: Նշենք, որ Համաշխարհային բանկի կողմից 2014 թվականի աշնանը հրապարակված Հայաստանի տնտեսության 6-րդ

հաշվետվության⁵⁷⁰ համաձայն՝ 2013 թվականին Հայաստանի տնտեսական աճը նվազել է 3.5%-ով և 2014 թվականի առաջին կիսամյակում 2.7%-ով, ինչը պայմանավորված է եղել մի շարք գործոններով, այդ թվում՝ օտարերկրյա ներդրումների նվազմամբ: Մինչդեռ, Նախարարությունը տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունների մշակման բնագավառում պետք է խթանի գործարարությունը, ներդրումները և արտահանումը, գործարարության համար բարենպաստ և միջազգային մակարդակով մրցունակ միջավայր ապահովի, զարգացնի բարձրարժեք ծառայություն մատուցող ոլորտները:⁵⁷¹ Նշվածի իրագործման համար Նախարարություն մշակում է գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականությունը, իրականացնում է ՀՀ-ն որպես «Գործարարությամբ զբաղվելու գերազանցության կենտրոն» ծրագրի դիտանցում, մշակում է ներդրումների և ներդրողների պաշտպանության քաղաքականությունը և իրականացնում դիտանցում:⁵⁷² Չնայած Նախարարության կողմից մշակվել են օտարերկրյա ներդրումների ավելացման ուղղությամբ մի շարք միջոցառումներ (օրինակ՝ օտարերկրյա տնտեսավարողներին մատուցվող ծառայությունների մատչելիությունն ապահովելու, օտարերկրյա ներդրումները խթանելու նպատակով գործում է E-register.am կայքի անգլերեն լեզվով տարբերակը, իրականացվել են մի շարք օրենսդրական բարփոխումներ և այլն), այնուամենայնիվ, ներդրումների նվազումը խոսում է Նախարարության ձեռնարկած քայլերի անբավարարության մասին:

Առաջարկ. Նախարարության իրավասությունների շրջանակում իրականացնել համապատասխան միջոցառումներ օտարերկրյա գործարարների կողմից ՀՀ-ում գործարարությամբ զբաղվելու իրավական և գործնական դաշտը բարելավելու ուղղությամբ:

⁵⁷⁰ <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/21084/930020WPOP1181000PUBLIC00Armenia0ER.pdf?sequence=1>

⁵⁷¹ <http://www.mineconomy.am/uploads/20130406132942853.pdf>

⁵⁷² <http://www.mineconomy.am/uploads/20130406132942853.pdf>

3.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Դրական զարգացումները

- Հստակեցվել է «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «բ» ենթակետում նշված «անձ» եզրույթը («այն անձին» բառերը փոխարինվել է «անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձին» բառերով)⁵⁷³, ինչի արդյունքում կբացառվի որոշ տնտեսվարողների կողմից միաժամանակ և ԱԱՀ-ի գումարների, և շրջանառության հարկի՝ տույժերով ու տուգանքներով վճարումը:
- «Բաց կառավարման գործընկերություն» ՀՀ 2-րդ գործողությունների ծրագրի (2014-2016թթ.) համաձայն՝ 2015 թվականի հունիսից նախատեսվում է ապահովել նիստերի առցանց հեռարձակում, ինչի կապակցությամբ Նախարարության աշխատակազմի ղեկավարի 05.12.2014 թվականի թիվ 1/250-Ա հրամանով ձևավորվել է մասնագիտական խումբ՝ պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակումն ապահովելու համար անհրաժեշտ սարքավորումների գնման նպատակով:
- Օպերատիվ հետախուզության վարչության իրականացրած հսկողական 3.795 միջոցառումների արդյունքում արձանագրվել է բյուջե լրացուցիչ վճարման ենթակա գումար՝ 13 միլիարդ 936 միլիոն դրամի չափով:
- 2014 թվականի հունվար-նոյեմբերին միջին անվանական աշխատավարձն աճել է 8.0%-ով՝ կազմելով 167 215 դրամ, որը 2.2 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա աճի տեմպը, ընդ որում՝ պետական և ոչ պետական հատվածներում աշխատավարձերն աճել են համապատասխանաբար 8.1 և 7.7 %-ով:

Առկա թերություններն ու խնդիրները

3.2.1 Նախարարության կողմից օրենքի ոչ պատշաճ մեկնաբանման և կիրառման արդյունքում մի շարք դեպքերում ֆիզիկական անձանց ներկայացվել է ավելացված արժեքի հարկի վճարումներ (նաև տույժ և տուգանքներ) կատարելու ոչ իրավաչափ պահանջ:

Պաշտպանին հասցեագրված մի շարք դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ Նախարարության հարկային մարմնի աշխատակիցների կողմից

⁵⁷³ ««Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.06.2014 թ.-ի ՀՀ օրենք

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (Օրենք) սխալ կիրառման արդյունքում ֆիզիկական անձանցից ոչ իրավաչափորեն պահանջել են կատարել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումներ, իսկ չվճարման դեպքում նաև նշանակել օրենսդրությամբ սահմանված տույժ և տուգանքներ: Խնդիրն այն է, որ Օրենքի իմաստով՝ ֆիզիկական անձանց կողմից իրականացված գործարքները կարող են համարվել ապրանքների մատակարարում այն դեպքում, երբ մեկ օրացուցային տարվա ընթացքում օտարվում է նույն տեսակի առնվազն 2 այնպիսի գույք, որոնք երկուսն էլ ձեռք են բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում: Ընդ որում, ԱԱՀ-ի վճարման պարտավորություն առաջանում է այդպիսի գույքի յուրաքանչյուր երկրորդ և հաջորդ միավորի օտարման պարագայում⁵⁷⁴: Սակայն նշված նորմը կիրառելիս Նախարարությունն առաջնորդվել է այն դիրքորոշմամբ, որ Օրենքի՝ «օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում» դրույթը վերաբերում է երկրորդ և ավելի թվով անգամ գույքի օտարմանը: Մինչդեռ, Օրենքի նման մեկնաբանությունը հիմնավոր չէ, քանի որ այդպիսի մոտեցման պարագայում ԱԱՀ պետք է գանձվի նաև այն դեպքերում, երբ օտարվող գույքի երկու միավորից երկրորդն է ձեռք բերվել օտարմանը նախորդող մեկ օրացուցային տարին գերազանցող ժամանակահատվածում, ինչը չի արտացոլում օրենքի տրամաբանությունը և դրույթի նպատակը: Բացի դրանից՝ նորմի այդպիսի մեկնաբանման և կիրառման հետևանքով առաջանում է այնպիսի իրավիճակ, երբ նույն տեսակի երկու միավոր գույքի օտարումը, կախված օտարման գործարքների հաջորդականությունից, մի դեպքում կհարկվի ԱԱՀ-ով, իսկ մյուս դեպքում՝ ոչ⁵⁷⁵: Նմանատիպ պարագայում ԱԱՀ վճարելու հայեցողությունը կարող է թողնվել հարկ վճարող ֆիզիկական անձին: Նշենք, որ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները⁵⁷⁶: Վերոնշյալն ամրապնդում է այն տեսակետը, որ ապրանքների մատակարարում պետք է համարվի և, հետևաբար, ԱԱՀ-ով հարկվի միմիայն մեկ տարվա ընթացքում գույքի երկու և ավելի միավորների այնպիսի հատուցելի օտարումը, որն իրականացվել է գույքի բոլոր միավորների ձեռքբերմանը հաջորդող մեկ տարվա ժամանակահատվածում: Այսպիսով, Նախարարության կողմից Օրենքի ոչ պատշաճ մեկնաբանման արդյունքում քաղաքացիները ստիպված են եղել վճարել ԱԱՀ այն դեպքում, երբ օրենսդրությամբ նման պահանջ սահմանված չի եղել:

Առաջարկ. ապահովել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթի պատշաճ մեկնաբանությունը և կիրառումը՝ ԱԱՀ վճարում կատարելու ոչ իրավաչափ պահանջի բացառման ուղղությամբ:

⁵⁷⁴ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 1, կետ «բ»

⁵⁷⁵ Եթե, օրինակ, գույքի երկու միավորից սկզբում օտարվի մեկ տարուց ավելի վաղ ձեռք բերվածը, իսկ հետո՝ մեկամյա ժամկետում ձեռք բերվածը, ապա գործարքները կլինեն ապրանքների մատակարարում, իսկ հակառակ հերթականությամբ օտարելու դեպքում՝ ոչ, և հետևաբար, ԱԱՀ-ի վճարման պարտավորություն չի առաջանա:

⁵⁷⁶ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 86, մաս 1

3.2.2 Պաշտպանի կողմից մի քանի տարի բարձրաձայնվել, սակայն դեռևս չի լուծվել հարկային մարմնի աշխատակիցների կողմից մի շարք դեպքերում, առանց բավարար հիմնավորումների և/կամ պատճառաբանության, հարկատուներից ստուգման նպատակներին անմիջապես չառնչվող նյութեր վերցնելու, իսկ վերցնելիս օրենսդրությամբ սահմանված կարգը չպահպանելու խնդիրը:

Տնտեսվարող սուբյեկտներից և նրանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններից ստացվել են բողոքներ, որ ստուգումն իրականացնող Հարկային մարմնի աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս հաճախ, առանց բավարար հիմնավորումների կամ պատճառաբանության, վերցրել են հարկատուների աշխատավայրում գտնվող տարբեր իրեր, օրինակ՝ համակարգիչ և այլն, որոնք անմիջապես չեն առնչվել ստուգման նպատակներին կամ Հարկային մարմնին ոչ անհրաժեշտ տեղեկատվություն են եղել: Իսկ մի շարք դեպքերում նույնիսկ ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող նյութեր վերցնելիս ստուգում իրականացնող անձինք չեն պահպանել օրենսդրությամբ սահմանված կարգը, օրինակ՝ նյութեր վերցնելու դեպքում այդ մասին պատշաճ արձանագրություն չի կազմվել, վերցված փաստաթղթերի կրկնօրինակը չի կնքվել և չի հանձնվել տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչներին⁵⁷⁷ և այլն: Խնդիրն այն է, որ օրենսդրությամբ հստակորեն չի սահմանվում *«ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող և տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին չխոչընդոտող անհրաժեշտ նյութեր»* հասկացությունը, ինչը կարող է տարամեկնաբանությունների տեղիք տալ: Այսպես, «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով (Օրենք) ստուգման նպատակը տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենսդրության հիման վրա պետական մարմիններին ներկայացված կամ հրապարակված հաշվետվությունների արժանահավատությունը պարզելը, ՀՀ օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելը և տնտեսվարող սուբյեկտի գույքային իրավունքները պաշտպանելն է⁵⁷⁸: Միաժամանակ նշենք, որ Օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի 7-րդ պարբերությամբ նախատեսվող ուսումնասիրությունների անցկացման կարգերը սահմանվում են Օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածներով⁵⁷⁹: Նույն օրենքով՝ հարկային մարմնի աշխատակիցն իր լիազորություններն իրականացնելիս իրավունք ունի վերցնել փաստաթղթեր, կրկնօրինակներ, լուսապատճեններ, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին և

⁵⁷⁷ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 2

⁵⁷⁸ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, հոդված 3, մաս 1

⁵⁷⁹ ՀՀ մաքսային օրենսգիրք, հոդված 1, մաս 3. Ուսումնասիրությունը տնտեսվարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը, վերջինիս ներկայացրած հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների հիման վրա, ստուգումն իրականացնող մարմնի կողմից ստուգող մարմնում՝ պարզաբանելու նպատակով իրականացվող ներքին ընթացակարգ է՝ *բացառությամբ սույն կետի յոթերորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի:*

չեն խոչընդոտում տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին⁵⁸⁰: Այնուամենայնիվ, վերոնշյալ սահմանումից պարզ չէ, թե որ դեպքում կարող է անհրաժեշտ նյութը անմիջականորեն առնչվել ստուգման նպատակներին, ինչպես կամ որ մարմնի կողմից է դա որոշվում: Պարզ չէ նաև, թե ինչ չափորոշիչների հիման վրա է որոշվում՝ արդյոք ստուգումն իրականացնող անձանց կողմից վերցված իրերը խոչընդոտում են տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին, թե՞ ոչ: Այսինքն, հստակ չափորոշիչների բացակայության դեպքում ստուգումն իրականացնող անձինք կարող են «վերցնել» իրեր նույնիսկ այն դեպքում, երբ բացակայում է որևէ հիմնավորված կասկած, որ տնտեսվարող սուբյեկտը կատարել է խախտում, կամ նշված իրը ստուգումների իրականացման համար որևէ էական նշանակություն ունի: Հարկային մարմնի տվյալ լիազորության ոչ հստակ սահմանումն ու առանձին դեպքերում օրենքի դրույթի կամայական կիրառումը կարող են հանգեցնել անձանց տնտեսական գործունեության ազատության և սեփականության տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավունքի անհիմն սահմանափակման⁵⁸¹: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ստուգում իրականացնող անձանց կողմից կամայականորեն վերցված նյութերը կարող են պարունակել գաղտնաբառեր, առևտրային գաղտնիք հանդիսացող կամ անձնական տվյալներ, համարում ենք, որ առանձին դեպքերում վտանգվում է նշված տեղեկատվության գաղտնիությունը: Այսպիսով, խնդրահարույց է ոչ միայն վերոնշյալ ոչ ամբողջական օրենսդրական կարգավորումը, այլև այն, որ Նախարարության աշխատակիցները ստուգումների իրականացման ընթացքում շատ դեպքերում նյութերը վերցրել են՝ առանց համապատասխան պայմանները հաշվի առնելու և սահմանված կարգի խախտմամբ՝ վտանգելով համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը:

Առաջարկ. ապահովել հարկային մարմնի կողմից ստուգումներ իրականացնելիս միայն բավարար հիմնավորումների և/կամ պատճառաբանության առկայության դեպքում և պատշաճ ընթացակարգերի պահպանմամբ հարկատուների աշխատավայրում գտնվող իրերը վերցնելը, սահմանել չափանիշներ՝ որոշելու ստուգումն իրականացնողի կողմից իրերը վերցնելու՝ տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին խոչընդոտելը, ինչպես նաև բացառել ստուգման նպատակներին անմիջապես չառնչվող տեղեկատվության վերցնելու դեպքերը:

3.2.3 Մի շարք դեպքերում Նախարարության աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս խախտել են օրենսդրությամբ սահմանված կարգը, ինչի կապակցությամբ Նախարարությունը չի իրականացրել պատշաճ ծառայողական քննություններ՝ վերջիններիս պատասխանատվության ենթարկելու, հարկատուների իրավունքները պաշտպանելու և նման դեպքերը հետագայում բացառելու ուղղությամբ:

Բազմաթիվ գործարարներ, քաղաքացիներ դիմում-բողոքներ, տեղեկություններ են փոխանցել Պաշտպանին հարկային մարմնի աշխատակիցների ոչ իրավաչափ

⁵⁸⁰ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, հոդված 7, կետ «գ»

⁵⁸¹ ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 8, 31

գործողությունների, ինչպես նաև գործարարների, նրանց աշխատակիցների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի վերաբերյալ: Մասնավորապես, հարկատուների պնդմամբ՝ Նախարարության աշխատակիցները հերթական ստուգումների կամ օպերատիվ հետախուզական միջոցառումների շրջանակներում ոչ պատշաճ են վերաբերվել քաղաքացիներին, իրենց անհիմն պահանջները չկատարելու դեպքում սպառնացել են քրեական գործ հարուցել, խոչընդոտել են փաստաբանի գործունեությանը և այլ գործողություններով խախտել հարկային ծառայողի վարքագծի կանոնները (Կանոններ)⁵⁸²: Հարկատուներից բազմաթիվ դժգոհություններ են ստացվել նաև հարկային ծառայողների կողմից հեռախոսագանգերի միջոցով շահութահարկի կանխավճարներ պահանջելու և, չվճարելու դեպքում, վերջիններիս համար անբարենպաստ հետևանքների առաջացման սպառնալիքների վերաբերյալ: Նշենք, որ ՀՀ Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարումը, ինչպես նաև քաղաքացիների, հարկատուների օրինական շահերի և իրավունքների պահպանումը հարկային մարմնի և մաքսային ծառայողների պարտականությունն են⁵⁸³: Ավելին, Կանոնների համաձայն՝ հարկային ծառայողը պարտավոր է անհարկի չընդգծել իր պաշտոնական դիրքը, լինել քաղաքավարի հարկատուների, գործընկերների, ենթակա անձանց և ղեկավարության հետ և ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը⁵⁸⁴: Փաստորեն, Նախարարության աշխատակիցներն իրենց լիազորությունների կատարման ընթացքում իրենց գործողություններով խախտել են ոչ միայն ՀՀ օրենսդրությունը, այլև ոտնահարել քաղաքացու և տնտեսվարողի իրավունքներն ու օրինական շահերը: Առանձին՝ դեպքերում հարկատուները Նախարարության աշխատակիցների, մասնավորապես՝ հարկային ծառայողների ոչ իրավաչափ գործողությունների կապակցությամբ ահազանգել և դեպքի վայր են կանչել ինչպես Պաշտպանի արագ արձագանքման ծառայության, այնպես էլ ՀՀ ոստիկանության աշխատակիցներին: Պաշտպանի աշխատակազմին հայտնի մեկ այլ դեպքով հարկային մարմնի քննիչների կողմից կատարվող խուզարկության ընթացքում չի թույլատրվել փաստաբանի մասնակցությունը՝ պատճառաբանելով, որ փաստաբանը խուզարկության վայր է ժամանել այն սկզբվելուց հետո, այնինչ, քննիչը իրավասու չէ արգելել փաստաբանի մասնակցությունը նման գործողությանը⁵⁸⁵: Նշված դեպքերից մի քանիսի կապակցությամբ ինչպես Պաշտպանի, այնպես էլ ՀՀ ոստիկանության կողմից Նախարարությանն առաջարկվել էր անցկացնել ծառայողական քննություն: Մասնավորապես, «Անտարես» ՍՊԸ-ում ղեկտեմբեր ամսին տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ⁵⁸⁶ Պաշտպանի և Ոստիկանության կողմից Նախարարություն

⁵⁸² ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 10-ի N 1624-Ն որոշմամբ հաստատված հարկային ծառայողի վարքագծի կանոններ

⁵⁸³ Հարկային ծառայության մասին ՀՀ օրենք, հոդված 10 և Մաքսային ծառայության մասին ՀՀ օրենք, հոդված 24

⁵⁸⁴ ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 10-ի N 1624-Ն որոշմամբ հաստատված հարկային ծառայողի վարքագծի կանոններ, կետ 4

⁵⁸⁵ ՀՀ սահմանադրական դատարանի 08.11.2013թ-ի թիվ ՍԴՈ-1119 որոշում

⁵⁸⁶ <http://www.ilur.am/news/view/38919.html>

ներկայացվել են գրություններ՝ համապատասխան աշխատակիցների նկատմամբ ծառայողական քննություն նշանակելու վերաբերյալ: Ըստ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը ծառայողական քննություն է անցկացնում հարկային մարմնի ղեկավարի սահմանած կարգով⁵⁸⁷: Ավելին, հարկային մարմինը պարտավոր է իրականացնել ծառայողական քննություն հարկային ծառայողների կատարած խախտումների վերաբերյալ⁵⁸⁸: Միաժամանակ, հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը հսկողություն է իրականացնում հարկային ծառայողների վարքագծի կանոնների նկատմամբ⁵⁸⁹: Ավելին, հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննության անցկացման կարգը հաստատող ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 398-Ա հրամանի համաձայն՝ ծառայողական քննություն կարող է անցկացվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդման դեպքում⁵⁹⁰: Այնուհանդերձ, համապատասխան աշխատակիցների նկատմամբ ծառայողական քննություն նշանակելու վերաբերյալ գրության հիման վրա Նախարարությունը ծառայողական քննություն չի իրականացրել՝ պնդելով, որ հարկային աշխատակիցների կողմից իրականացված գործողություններում բացակայում են խախտումներ: Սակայն, առանց ծառայողական քննություն իրականացնելու, պարզ չէ, թե ինչ միջոցներով է հաստատվել համապատասխան աշխատակիցների գործողություններում խախտումների բացակայությունը այն դեպքում, երբ համաձայն դիմումատուի նշած հանգամանքների՝ առկա է եղել ծառայողական քննության անցկացման համար օրենքով սահմանված կարգով հիմք հանդիսացող տեղեկատվություն (հարկային մարմնի աշխատակիցների կողմից դրսևորվել են վարքագծի կանոնների ակնհայտ խախտումներ, ծառայողական պարտականությունների նկատմամբ անպատասխանատու վերաբերմունք): Նախարարության նման մոտեցումը չի համապատասխանում հարկային և մաքսային ծառայողների իրավասության և վարքագծի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված պահանջներին⁵⁹¹, ծառայողական քննության անցկացման կարգին: Նշենք, որ Նախարարության հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից 2014 թվականի ընթացքում իրականացվել է ընդամենը 46 ծառայողական քննություն, որը, ոլորտում առկա բողոքների համեմատ, փոքր թիվ է կազմում:

Առաջարկ. խստացնել վերահսկողությունը հարկային մարմնի աշխատակիցների գործունեության նկատմամբ, ինչպես նաև համապատասխան բողոքների և տեղեկատվության ստացման դեպքում ապահովել պատշաճ ծառայողական քննության իրականացում, պատասխանատվության ենթարկել իրավախախտ աշխատակիցներին:

⁵⁸⁷ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 43, մաս 3, կետ 2

⁵⁸⁸ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 1, կետ 9

⁵⁸⁹ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 43, մաս 3, կետ 1

⁵⁹⁰ ՀՀ ֆինանսների նախարարի 30.06.2014 թվականի թիվ 398-Ա հրաման

⁵⁹¹ ՀՀ կառավարության 10 հոկտեմբերի 2002 թվականի «Հարկային ծառայողի վարքագծի կանոնները հաստատելու մասին» N 1624-Ն որոշում

3.2.4 Հարկային մարմինը բազմաթիվ դեպքերում գործածել է քրեական գործ հարուցելու իր լիազորությունը՝ հարկադրելու հարկատուներին վճարել չվճարված հարկերը:

Համաձայն օրենսդրության՝ քրեական պատասխանատվություն առաջացնող մի շարք արարքների (օրինակ՝ կեղծ ձեռնարկատիրությունը, հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը)⁵⁹² դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում է հանցագործությամբ պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները⁵⁹³: Սակայն տնտեսվարող սուբյեկտները բազմաթիվ դժգոհություններ են հայտնել, որ նմանատիպ գործերով հարկային մարմնի քննիչները հանցագործության կատարման փաստի առթիվ հարուցել են քրեական գործեր⁵⁹⁴ նախօրոք իմանալով, որ հարկ վճարողը կնախընտրի օգտվել ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվությունից ազատող դրույթից և արդյունքում կկատարի հարկային պարտավորությունը: Այսպիսով, գործածելով քրեական օրենսգրքի դրույթները, հարկային մարմնի քննիչները անուղղակիորեն ճնշում են գործադրում հարկ վճարողների վրա նույնիսկ այն դեպքերում, երբ հաստատված չէ հարկ վճարողների կողմից հակաիրավական արարքի կատարման դեպքը: Պետք է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածի 5-րդ մասի գործնական կիրառումը ռիսկային է և որոշ դեպքերում կարող է հարկային մարմնի ձեռքերում դառնալ հարկ վճարողի վրա ազդելու և վերջինիս հարկային պարտավորությունների գանձումը արագ կերպով իրականացնելու գործիք, որը, սակայն, պարունակում է հակաիրավական ներգործության տարրեր: Որպես կանոն, անձինք նախընտրում են շտապ վճարել հարկերը և տույժ-տուգանքները, այլ ոչ թե բողոքարկել դրանց հիմնավորվածությունը հարկատուի համար: Այսինքն, ստեղծված իրավիճակը, այն է՝ քրեական գործի հարուցումը, անուղղակիորեն հետ է պահում անձին իր իրավունքները դատական կարգով պաշտպանելուց⁵⁹⁵: Հատկանշական է, որ Նախարարության քննչական վարչության կողմից 2014 թվականին հարուցվել և վարույթ է ընդունվել 449 քրեական գործ, որից 64 քրեական գործով նախաքննությունը ավարտվել է և մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան (37), կամ քրեական գործով վարույթը կասեցվել է (27): Փաստորեն, հարուցված և վարույթ ընդունված 449 քրեական գործերից միայն 37-ն է մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան: Համեմատության համար նշենք, որ նման պրակտիկան հարկային մարմնի կողմից կրկնվում է արդեն մի քանի

⁵⁹² ՀՀ քրեական օրենսգրք, հոդվածներ. 188՝ առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացում, 189՝ կեղծ ձեռնարկատիրությունը, 193՝ կանխամտածված սնանկությունը, 194՝ կեղծ սնանկությունը, 205՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը

⁵⁹³ ՀՀ քրեական օրենսգրք, հոդված 189, մաս 5

⁵⁹⁴ ՀՀ քրեական օրենսգրք, հոդվածներ. 188՝ առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացում, 189՝ կեղծ ձեռնարկատիրությունը, 193՝ կանխամտածված սնանկությունը, 194՝ կեղծ սնանկությունը, 205՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը

⁵⁹⁵ ՀՀ Սահմանդրություն, հոդված 18

տարի: Այսպես, օրինակ, 2013 թվականին հարուցվել և վարույթ է ընդունվել 613 քրեական գործ, որից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել միայն 66-ը:

Առաջարկ. պատշաճ հսկողություն իրականացնել Հարկային մարմնի կողմից քրեական գործերի հարուցման հիմնավորվածության նկատմամբ՝ բացառելու համար քրեական պատասխանատվության սպառնալիքը՝ որպես հարկային պարտավորությունների կատարմանը հարկադրելու լծակ գործածելը:

3.2.5 Նախարարությունը չի իրականացրել բավարար վերահսկողություն՝ հարկային և մաքսային ծառայողների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքերը վեր հանելու և բացառելու ուղղությամբ:

Մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից ստացված դժգոհություններ վերաբերել են այն խնդրին, որ առանձին հարկային և մաքսային ծառայողներ, չնայած օրենսդրական արգելքին, զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ և իրենց պաշտոնական դիրքը գործածել են իրենց բիզնեսի համար արտոնություններ ստեղծելու, ինչպես նաև շուկայում մրցակիցների համար հնարավորությունները սահմանափակելու նպատակով: Առկա թերի վերահսկողության արդյունքում վերոնշյալ անձինք հաճախ ձեռք են բերում օրենքով արգելված առավելություններ մյուս ձեռնարկատերերի նկատմամբ, ինչի արդյունքում սահմանափակվում է այլ անձանց՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, խաթարվում են տնտեսական մրցակցությունը և հավասարությունը: Այսպես, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի⁵⁹⁶ համաձայն՝ հարկային ծառայող է հարկային մարմնում հարկային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող անձը: Ավելին, հարկային ծառայողն իրավունք չունի զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ⁵⁹⁷: Նման արգելք սահմանված է նաև մաքսային ծառայողների համար: Մասնավորապես, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի ուժով՝ մաքսային ծառայող է մաքսային մարմիններում որոշակի պաշտոններ զբաղեցնող անձը, և այդ անձն իրավունք չունի անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ⁵⁹⁸: Նշենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության⁵⁹⁹ համաձայն՝ Նախարարության նպատակներից և խնդիրներից են հարկային⁶⁰⁰ և մաքսային⁶⁰¹ մարմինների օրենսդրության և այլ

⁵⁹⁶ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 4

⁵⁹⁷ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 3

⁵⁹⁸ «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 5 և 25

⁵⁹⁹ ՀՀ կառավարության որոշում, 15 մայիս 2008 թվական N 503-Ն որոշում, Հավելված N 1

⁶⁰⁰ ՀՀ կառավարության որոշում, 15 մայիս 2008 թվական N 503-Ն որոշում, Հավելված N 1, կետ 9, ենթակետ 12, «ա». Նախարարության նպատակները և խնդիրներն են հարկային ծառայության մասով՝ ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների կատարման ու կիրառման նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը:

⁶⁰¹ ՀՀ կառավարության որոշում, 15 մայիս 2008 թվական N 503-Ն որոշում, Հավելված N 1, կետ 9, ենթակետ 13, «բ»: Նախարարության նպատակները և խնդիրներն են մաքսային ծառայության մասով՝ մաքսային

իրավական ակտերի պահանջների կատարման կիրառման նկատմամբ վերահսկողության կամ հսկողության իրականացումը: Այսպիսով, չնայած օրենսդրական արգելքին՝ բազմաթիվ տնտեսվարողներ դժգոհել են, որ Նախարարության կողմից թերի վերահսկողության իրականացման արդյունքում հարկային և մաքսային մարմինների որոշ ծառայողներ շարունակել են իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ ապօրինի առավելություն ստանալով այլ գործարարների նկատմամբ:

Առաջարկ. իրականացնել բավարար վերահսկողություն՝ հարկային և մաքսային մարմինների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքերը վեր հանելու, իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

3.2.6 Նախարարության մաքսային մարմինը բազմաթիվ դեպքերում անհիմն մերժել է ապրանքի գործարքի գնի մեթոդով մաքսազերծման իրականացումը, հայտարարատուին գրավոր չի ներկայացրել այդ մերժման պատճառները, ինչպես նաև այդ որոշման բողոքարկումը գործնականում խնդիրներ է առաջացրել քաղաքացիների համար:

2014 թվականի ընթացքում գրանցվել են բազմաթիվ դեպքեր, ստացվել են բազմաթիվ դիմում-բողոքներ առ այն, որ Նախարարության մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից անհիմն մերժվել է ՀՀ մաքսային օրենսգրքով (Օրենսգիրք) նախատեսված մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդով մաքսազերծման իրականացումը⁶⁰²: Այսպես, քաղաքացիներն առավել հաճախ տվյալ խնդրի հետ բախվել են, երբ մաքսային մարմինը մերժել է մաքսազերծել տրանսպորտային միջոցներն իրենց ձեռքբերման գնով, այսինքն՝ չի կիրառել գործարքի գնի մեթոդով մաքսային արժեք որոշելու ռեժիմը՝ պատճառաբանելով ներկայացված փաստաթղթերում առկա ոչ էական, շտկելի թերությունների առկայությամբ: Մինչդեռ, ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն՝ մաքսային մարմինները մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու մերժման վերաբերյալ մինչև վերջնական որոշում ընդունելը պարտավոր են հայտարարատուին գրավոր ներկայացնել գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքները և առաջարկել հայտարարատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ⁶⁰³: Սակայն Պաշտպանին ուղղված մի շարք դիմումների ուսումնասիրությունից պարզվել է, որ նույնիսկ այդ հնարավորությունը երբեմն չի տրվել: Նշենք, որ Նախարարության հայտնած տեղեկատվության համաձայն՝ 2014 թվականի ընթացքում «Ներմուծում՝ ազատ

օրենսդրության դրույթների կիրառման ապահովումը և մաքսային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

⁶⁰² Այսուհետ՝ ՀՀ մաքսային օրենսգիրք [ԱԺ.06.07.2000.ՀՕ-83](#) ինկորպորացիայի համապատասխան⁶⁰², հոդված 87: Նշենք, որ Մաքսային օրենսգիրքն ուժը կորցրել է 17.12.14 թվականի ՀՕ-241-Ն ՀՀ օրենքով, բացառությամբ նույն օրենքի [259-րդ հոդվածով](#) սահմանված դրույթների, ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՇԵՍՆԵՐՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (7-րդ գլուխը համաձայն 17.12.14 ՀՕ-241-Ն ՀՀ օրենքի [259-րդ հոդվածի](#) 2-րդ մասի) շարունակում է գործել մինչև 02.07.16 թվականը:

⁶⁰³ ՀՀ մաքսային օրենսգիրք, հոդված 96, մաս 2.1

շրջանառության համար» մաքսային ռեժիմով ՀՀ է ներմուծվել 46474 հատ ավտոտրանսպորտային միջոց, որից ընդամենը 1533 հատի (3.29%) մաքսային արժեքն է հայտարարագրվել գործարքի գնի մեթոդով: Վերոնշյալ ոչ իրավաչափ վարչարարության համատեքստում հատկանշական է ՀՀ Սահմանադրական դատարանի 2014 թվականի թիվ ՍԴՈ 1176 որոշումը, որի համաձայն՝ *մաքսագերծման ժամանակ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն ընդհանուր կանոն է, իսկ մաքսային արժեքի որոշման մյուս այլ մեթոդները՝ բացառություն ընդհանուր կանոնից*, մինչդեռ գործնականում 2014 թվականի ընթացքում հակառակ պատկերն է եղել: Վերոնշյալ որոշման համաձայն՝ Մաքսային մարմինը, մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հարցում անհամաձայնության դեպքում, պարտավոր է կայացնել *պատճառաբանված որոշում*, որը տրամադրվում է հայտարարատուին՝ իր իրավունքների պաշտպանության ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու համար⁶⁰⁴: Միաժամանակ, գործարքի գնի մեթոդի մերժման որոշումների՝ վերադասության կարգով կամ դատական ատյաններում բողոքարկումը քաղաքացիների համար հաճախ լրացուցիչ դժվարություններ է առաջացրել, քանի որ այդ ժամանակահատվածում նրանք ստիպված են եղել դեռևս չմաքսագերծված տրանսպորտային միջոցը կայանել մաքսային պահեստում, ինչի համար գանձվում է առանձին մաքսային վճար⁶⁰⁵: Փաստորեն, բացի նրանից, որ մաքսային մարմինը բազմաթիվ դեպքերում անհիմն մերժել է ապրանքի գործարքի գնի մեթոդով մաքսային արժեքի որոշումը, նաև բողոքարկման գործող ընթացակարգերն անուղղակիորեն հետ են պահում քաղաքացիներին իրենց իրավունքների ոտնահարման դեպքում օրինական պաշտպանության միջոցների դիմելուց⁶⁰⁶:

Առաջարկ. ապահովել գործնականում ՍԴՈ 1176 որոշման կատարումը՝ բացառելով անհիմն պատճառներով քաղաքացիներին գործարքի գնի մեթոդով մաքսագերծման իրականացման մերժումը, մշակել մեխանիզմներ՝ քաղաքացիների համար Մաքսային մարմնի կայացրած որոշումների բողոքարկման մատչելիության ապահովման ուղղությամբ:

⁶⁰⁴ ՍԴՈ-1176. «(...)մաքսային մարմինը, հայտարարատուի կողմից հայտարարագրված մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ կապված անհամաձայնության դեպքում, պարտավոր է օրենսգրքով սահմանված ժամկետներում դրա վերաբերյալ կայացնել պատճառաբանված եզրակացություն և/կամ որոշում, և անկախ հայտարարատուի գրավոր կամ բանավոր պահանջից՝ պետք է հայտարարատուին տրամադրի նշյալ եզրակացությունը և/կամ որոշումը՝ վերջինիս կողմից Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքների պաշտպանության ուղղությամբ համարժեք միջոցներ ձեռնարկելու համար: Իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի սահմանադրաիրավական առումով իրավաչափ նման մոտեցմամբ»:

⁶⁰⁵ ՀՀ մաքսային օրենսգիրք, հոդված 96, մաս 3. «Մաքսային մարմինների կողմից մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ անհամաձայնության դեպքում հայտարարատուն, մերժման եզրակացությունն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կարող է բողոքարկել վերադաս մաքսային մարմին կամ դատարան: Վերադաս մաքսային մարմինը պարտավոր է 30-օրյա ժամկետում կայացնել համապատասխան որոշում և տեղյակ պահել հայտարարատուին: *Բողոքարկումը չի ազատում հայտարարատուին սահմանված ժամկետներում բողոքարկման առարկայի հետ կապված պարտավորությունների կատարումից*»:

⁶⁰⁶ Տես՝ «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ» 2010թ. գիտագործնական մեկնաբանությունների ժողովածու, էջ 209՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի վերաբերյալ

3.2.7 Հարկային օրենսդրությամբ և այլ իրավական ակտով նույն արարքի կատարման համար պատասխանատվության միջոցներ սահմանված լինելու հետևանքով անձը կարող է ենթարկվել կրկնակի պատասխանատվության, ավելին՝ հարկային օրենսդրությամբ սահմանված են պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոցներ, ինչը չի բխում օրենսդրության էությունից:

Մի շարք դիմումատուներ Պաշտպանին հայտնել են, որ իրավակիրառ պրակտիկայում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով սահմանված դրույթն առաջացնում է մի շարք խնդիրներ: Այսպես, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում նշված օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավելի ցույց տալու դեպքում ռեզիդենտ հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավելի ցույց տված վնասի 20%-ի չափով⁶⁰⁷: Սակայն գործնականում նշված դրույթը կիրառվել է՝ առանց հաշվի առնելու, թե վնասը ավելի ցույց տալը արդյոք հանգեցրել է հարկի նվազեցմանը, թե՞ ոչ, այսինքն՝ արդյոք դրա հետևանքով պետությանը և հասարակությանը հասցվել է գույքային վնաս: Նշենք, որ եթե վարչական պատասխանատվության նպատակը վարչական իրավախախտում կատարած անձին ուղղելն է և ինչպես իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը կանխելն է⁶⁰⁸, ապա հարկային պատասխանատվության նպատակը պետությանը և հասարակությանը հասցված գույքային վնասի հատուցումն է⁶⁰⁹: Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն դրույթը, ըստ էության, պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոց է (ինչպես, օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի սանկցիաները), պետք է, վարչական տույժ նշանակելու ընդհանուր կանոնների համաձայն, տույժ նշանակելիս հաշվի առնել կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, ինչը վիճարկվող դրույթում բացակայում է: Նշենք, որ տնտեսվարող սուբյեկտը հաշվարկված վնասն ավելի ցույց տալու դեպքում կարող է պատասխանատվության ենթարկվել նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն՝ հաշվապահական հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու, հաշվապահական հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերն ու տեղեկությունները սխալ կազմելու համար հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով պակաս հաշվարկված հարկերի գումարի 10%-ի չափով⁶¹⁰: Ավելին, հաշվապահական հաշվառումից բացի՝ օրենսդրությամբ նախատեսված այլ հաշվառում (գրանցում) չվարելը կամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը կամ հաշվառումը (գրանցումը) այնպիսի խախտումով վարելը կամ հայտարարագրի կամ հաշվարկի կամ

⁶⁰⁷ Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 69

⁶⁰⁸ Վարչական իրավախախտումներ վերաբերյալ ՀՀ օրենսգրք, հոդված 22

⁶⁰⁹ ՀՀ սահմանադրական դատարանի 18.02.2014թ.-ի թիվ ՄԴՈ-1139 որոշում

⁶¹⁰ «Հարկերի մասին» ՀՀ օրենք, հոդված 25

հաշվետվության կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթի մեջ այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը, որոնք կարող են առաջացնել հարկի նվազեցում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից մինչև քսանհինգապատիկի չափով⁶¹¹: Հատկանշական է, վերոնշյալ երկու դրույթներով էլ («Հարկերի մասին» ՀՀ օրենք և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի) կարևորվում է պետությանը վճարվող հարկի նվազումը: Փաստորեն, տնտեսվարող սուբյեկտի մոտ շահութահարկի հաշվարկում սահմանված կարգով հաշվարկված վնասն ավելի ցույց տալու դեպքում այս սուբյեկտը կարող է պատասխանատվության ենթարկվել նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով: Այսպիսով, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի կիրառման արդյունքում տնտեսվարողը գործնականում կարող է կրկնակի պատասխանատվության ենթարկվել սույն դրույթով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով (եթե գործողությամբ նվազել է պետությանը վճարվող հարկի գումարը) և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով (որպես պատժիչ բնույթ կրող պատասխանատվություն): Փաստորեն, տվյալ դրույթի կիրառման արդյունքում խախտվում է անձի՝ միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության չենթարկելու սկզբունքը⁶¹², ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսվում է պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոց, ինչի սահմանադրականության վիճարկման նպատակով Պաշտպանը 13.11.2014 թվականին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

Առաջարկ. մշակել օրենսդրական փոփոխություններ՝ հարկային օրենսդրության մեջ պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոցները փոխելու ուղղությամբ, ինչպես նաև բացառել անձին միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության ենթարկելը:

3.2.8 Նախարարությունը չի ձեռնարկել բավարար քայլեր՝ պետական գնումների գործընթացի թափանցիկությունն ապահովելու, բողոքարկման խորհրդի անդամների և մրցույթի մասնակիցների միջև հնարավոր շահերի բախումը կանխելու, ինչպես նաև խորհրդի պատշաճ գործունեության համար անհրաժեշտ երաշխիքներ սահմանելու ուղղությամբ:

Ոլորտի մի շարք փորձագետներ ու տնտեսվարող սուբյեկտներ դժգոհություն են հայտնել, որ պետական գնումների ոլորտում մինչ օրս արդյունավետ կերպով չեն ապահովվում պատշաճ թափանցիկությունը, շահերի բախումների⁶¹³ և բողոքը քննելու համար խորհրդի (Խորհուրդ) անդամների անձնական շահագրգռվածության

⁶¹¹ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 169¹

⁶¹² ՀՀ Սահմանադրություն, հոդված 22

⁶¹³ Իրավիճակ, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձն իր լիազորություններն իրականացնելիս պետք է կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 5

բացառումը, ինչի պատճառն է նաև գնումների կազմակերպման թերի իրավական մեխանիզմները, համապատասխան վիճակագրության բացակայությունը: Այսպես, համաձայն Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի «ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգ 2011-2013թթ.» զեկույցի (ԹԻ զեկույց)՝ ոլորտի լավագույն փորձը վկայում է այն մասին, որ Խորհրդի անդամները պետք է հայտարարագրեն իրենց շահերը, ինչը պետք է դառնա քննության առարկա: Չնայած այն հանգամանքին, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված է նմանատիպ դրույթ⁶¹⁴՝ պրակտիկայում դրա կիրառությունը արդյունավետ կերպով չի հավաստվում: Մասնավորապես, ԹԻ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից ուսումնասիրվել է 83 որոշում⁶¹⁵, և դրանցից ոչ մեկում չի եղել որևէ տեղեկություն՝ Խորհրդի անդամների շահերի բախման հիմքով փոփոխության կամ դրա բացակայության մասին⁶¹⁶: Նշենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի ուժով՝ առանձին ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող խորհրդի անդամները ինքնաբացարկ են հայտնում տվյալ ընթացակարգից, հակառակ դեպքում նրանց բացարկ է հայտնում Խորհրդի նախագահը: Ավելին, Հանձնաժողովի անդամները ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն⁶¹⁷: Փաստորեն, չնայած շահերի բախման վերաբերյալ առկա կարգավորմանը՝ գործնականում այն չի կիրառվում, ինչի մասին վկայում են գնումների ոլորտում առկա բազմաթիվ շահերի բախումների դեպքերի վերաբերյալ դժգոհությունները, ՁԼՄ-ների հրապարակումները և այլն: Խնդրահարույց է նաև այն, որ շահերի բախումների գրանցման և բացահայտման վերաբերյալ չի վարվում վիճակագրություն: Ավելին, պարզ չէ, թե որ մարմինն է պատասխանատու այս Խորհրդի անդամների կողմից շահերի հայտարարագրման գործընթացի նկատմամբ հսկողություն իրականացնելու համար⁶¹⁸: Նման հարցի թերի կարգավորումը նվազեցնում է ոչ միայն գնումների գործընթացի թափանցիկությունը, այլև ստեղծում է պետական գնումների գործընթացում կոռուպցիոն լուրջ ռիսկեր: Միաժամանակ, հաճախ խնդրահարույց է Խորհրդի անդամների համար լիարժեք անկախության ապահովումը, ինչպես Խորհրդի նիստերին նրանց՝ պատշաճ կերպով ներկայանալու պատրաստակամությունը: Խնդրի կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ Խորհրդի հանրային ծառայողներ հանդիսացող անդամները Խորհրդի կազմում իրականացված աշխատանքների դիմաց չեն վարձատրվում: Նշվածը, մասնագետների պնդմամբ, նվազեցնում է Խորհրդի նիստերին ներկայանալու գրավչությունը, իսկ չներկայանալու համար պատասխանատվության միջոցներ սահմանված չեն⁶¹⁹: Ավելին, ԹԻ զեկույցում նշվում է, որ 2011 թվականից ի վեր խորհրդի 6 անդամներ չեն մասնակցել որևէ Հանձնաժողովի

⁶¹⁴ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 47, կետ 3

⁶¹⁵ 2011 թ.-ից մինչև 2013 թ.-ի 1-ին եռամսյակը ներառյալ բողոքների վերաբերյալ բողոքարկման Խորհրդի կողմից ընդունվել է 83 որոշում:

⁶¹⁶ <http://transparency.am/hy/publications/view/98>, էջ 11-12

⁶¹⁷ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 30, 47

⁶¹⁸ ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2009-2012 թթ. միջոցառումների ծրագիր (այսուհետ՝ Հակակոռուպցիոն ծրագիր), կետ 137

⁶¹⁹ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 47, մաս 4. Եթե ՀՀ օրենքով այլ բան նախատեսված չէ, հանձնաժողովի անդամները վարձատրվում են:

նիստի⁶²⁰: Փաստորեն, ներկայիս կարգավորման պարագայում Խորհրդի անդամների պատշաճ գործունեության համար խոչընդոտ է ոչ միայն աշխատավարձի բացակայությունը, այլև գնումների բողոքարկման Խորհրդի անդամների նիստերից բացակայելու դեպքում նրանց նկատմամբ պատասխանատվության միջոցների բացակայությունը:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ՝ կարգավորելու բողոքարկման խորհրդի անդամների շահերի բախման պատշաճ հայտարարագրման կարգը, դրա վերաբերյալ վիճակագրություն վարումը, ստեղծել հայտարարագրման վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև խորհրդի անկախության և պատշաճ աշխատանքի ապահովման նպատակով լրացուցիչ մեխանիզմներ, օրինակ՝ վարձատրություն կամ այլ խրախուսման միջոցներ, սանկցիաներ նիստերից անհարգելի բացակայելու համար և այլն:

3.2.9 Մեկ անձից կատարվող և ոչ մրցակցային ընթացակարգերով գնումները մեծ թիվ են կազմում գնումների շարքում, ինչը բացասաբար է անդրադառնում գնումների ընթացքում պատշաճ մրցակցության սկզբունքի ապահովման վրա:

Բազմաթիվ դժգոհություններ կան, որ ՀՀ-ում ոչ մրցակցային ընթացակարգերով գնումները⁶²¹՝ մեկ անձից կատարվող գնումները, մեծ տեղ են զբաղեցնում ընդհանուր գնումների մեջ, ինչը խնդրահարույց է գնումների ընթացքում պատշաճ մրցակցության սկզբունքի ապահովման տեսանկյունից: Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի կազմակերպում այնպիսի դեպքերում, եթե օրինակ՝ գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից՝ պայմանավորված նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ, կամ երբ գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը (1 մլն դրամ)⁶²²: Նմանատիպ կարգավորումներ նախատեսվում են նաև Պետական գնումների մասին համաձայնագրով⁶²³, որի համաձայն՝ սահմանափակ մրցառքային ընթացակարգերն այն ընթացակարգերն են, երբ սուբյեկտը կապ է հաստատում մատակարարների հետ անհատապես՝ պայմանով, որ սահմանափակ մրցառքը չի օգտագործվի հնարավոր առավելագույն մրցակցությունից խուսափելու նպատակով կամ այնպիսի ձևով, որը հնարավորություն կստեղծի խտրականություն դնելու այլ Կողմերի մատակարարների միջև կամ պաշտպանելու տեղական արտադրողներին կամ մատակարարներին⁶²⁴: Այսպես, Նախարարությունից ստացված ցուցանիշների համաձայն՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ստացված տվյալներով՝ 2014 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված գնումների 43,48%-ը վերաբերել է այն դեպքերին, երբ գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ

⁶²⁰ <http://transparency.am/hy/publications/view/98>, էջ 11

⁶²¹ Պետական գնումների մասին համաձայնագիր, հոդված 7, մաս 3, կետ «գ»

⁶²² «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 20, մաս 5

⁶²³ Պետական գնումների մասին համաձայնագիր, հոդված 7, մաս 3, կետ «գ»

⁶²⁴ Պետական գնումների մասին համաձայնագիր, հոդված 15

ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ⁶²⁵, իսկ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի կազմակերպումը կազմել է գնումների 46,75%-ը: Ավելին, նույն տվյալների համաձայն՝ Հայաստանի մրցույթներին միջին մասնակցությունը 9 ամիսների ընթացքում կազմել է 2,9 մասնակից, ինչը վկայում է մրցակցության ցածր մակարդակի, ինչպես նաև այն փաստի մասին, որ հայտարարված բոլոր մրցույթներում հաղթում են սահմանափակ թվով միևնույն տնտեսվարող սուբյեկտները: Հարկ է նշել, որ ԹԻ հակակոռուպցիոն կենտրոնի հրապարակած զեկույցի համաձայն՝ առանց հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը 2011-2013թթ. ընթացքում եղել է գնումների ոլորտում նախապատվելի ընթացակարգ⁶²⁶: Մասնավորապես, ըստ նույն զեկույցի՝ այս ժամանակաշրջանում կայացած մրցույթների շուրջ 60%-ն իրականացվել է այս հիմքով, ինչը չի համապատասխանում միջազգայնորեն ընդունելի նորմերին, որոնց դեպքում վերոնշյալ ընթացակարգով կատարված գնումները կազմել են գնումների ընդհանուր քանակի 10%-ը, իսկ ամբողջ գնումների գնի մեջ՝ 5%-ը⁶²⁷: Այսպես, օրինակ, ոչ մրցակցային գնումների վերաբերյալ Եվրոպայի արդարադատության դատարանը իր գործերից մեկով հաստատել է, որ այն դեպքերում, երբ պայմանագրի կողմը ցանկանում է պայմանագիր կնքել առանց մրցակցության՝ կիրառելով «բանակցային ընթացակարգի կազմակերպում առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու» ձևը, ապա համապատասխան ԵՄ հանձնարարականով⁶²⁸ նախատեսված պայմանները պետք է մեկնաբանվեն *սահմանափակ կերպով*, և պայմանագրի կնքումը առանց մրցակցության պետք է կիրառվի *միայն բացառիկ դեպքերում*⁶²⁹: Այսպես, վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ սահմանափակ մրցառքային ընթացակարգերի դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմանները բավականին լայն են, ինչի արդյունքում սահմանափակվում է պետական գնումներում մրցակցության սկզբունքի ապահովման հնարավորությունը: Այսպիսով, այս իմաստով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով կատարվող գնումները, օրինակ, երբ գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, պետք է կիրառվեն բացառիկ դեպքերում:

Առաջարկ. վերանայել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի կազմակերպման հիմքերը՝ սահմանափակելու մեկ անձի կողմից կատարվող գնումների քանակը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու պատշաճ մրցակցությունը պետական գնումների ընթացքում:

⁶²⁵ ՀՀ կառավարության 10.02.2011 թ.-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշում, կետ 32, ենթակետ 4

⁶²⁶ <http://transparency.am/hy/publications/view/98>, էջ 85

⁶²⁷ <http://transparency.am/hy/publications/view/98>, էջ 85

⁶²⁸ EU Directive 2004/18/EC

⁶²⁹ <http://transparency.am/hy/publications/view/98>, էջ 54

3.2.10 Պետական գնումների մրցույթներում նվազագույն գին ներկայացնողի հաղթելու սկզբունքը հանգեցրել է մի շարք դեպքերում ցածր, ոչ պատշաճ որակի ապրանքի/ծառայության մատակարարմանը:

Գործնականում հաճախ նվազագույն գնով ձեռք բերվող ապրանքները չեն եղել պատշաճ որակի, իսկ առանձին դեպքերում, օրինակ, պետպատվերով տրամադրվող դեղորայքի դեպքում անգամ բացասական հետևանքներ են ունեցել դրանց շահառուների առողջության վրա: Նշենք, որ ըստ Օրենքի՝ մրցույթում հաղթելու սկզբունքը, ի թիվս այլ պահանջների, նվազագույն գին ներկայացնելն է, երբ նախապատվություն տրվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին⁶³⁰: Այսպես, պետության կարիքների համար անհրաժեշտ դեղերի կենտրոնացված կարգով ձեռքբերումը նույնպես իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համապատասխան, ինչի հետևանքով շարունակվել են ստացվել դժգոհություններ: Մի շարք քաղաքացիների և ՀԿ-ների կողմից նշվել է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք պետությունից անվճար ստացել են հնդկական հումքից պատրաստված «Ձուլաքս» դեղը, որը, շատերի պնդմամբ, բացասական ազդեցություն է ունեցել հիվանդների առողջության վրա, ավելի վատացրել վերջինների վիճակը, սրացումներ առաջացրել: Բազմաթիվ դժգոհություններից և Պաշտպանի գրություններից հետո ՀՀ առողջապահության նախարարի հանձնարարականով ստեղծված Հանձնաժողովը պարզել է, որ մի շարք հիվանդների մոտ տրամադրվող դեղն իսկապես առաջացրել է կողմնակի բացասական երևույթներ: Տվյալ խնդիրը պայմանավորված է, նախևառաջ, նրանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է հիմնականում առավելապես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից *նվազագույն գնային առաջարկ* ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Եվ չնայած գնահատող հանձնաժողովը գնահատում է հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին՝ այնուամենայնիվ, պրակտիկայում առկա են բազմաթիվ բողոքներ՝ նվազագույն գնային առաջարկը հաշվի առնելով ձեռք բերված ապրանքների ցածր որակի վերաբերյալ, ինչի արդյունքում կարելի է ենթադրել, որ նվազագույն գնային առաջարկով մասնակցին նախապատվություն տալու սկզբունքի համար առկա չէ բավարար կարգավորում՝ ապահովելու համար ձեռք բերվող ապրանքների պատշաճ որակ: Փաստորեն, գնումների ընթացքում նվազագույն գնային առաջարկի հիման վրա տրվող նախապատվությունը շատ դեպքերում կարող է բացասաբար անդրադառնալ ապրանքի պատշաճ որակի վրա: Միաժամանակ, նշենք, որ մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության՝ պայմանագրի պայմաններին չհամապատասխանելու, այդ թվում՝ ոչ պատշաճ որակի լինելու դեպքում հակազդեցության միջոցի կիրառումը օրենքով դրված է պատվիրատուի վրա⁶³¹, ինչը

⁶³⁰ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 2, կետ 1

⁶³¹ ՀՀ կառավարության 10.02.2011 թ-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 121-րդ կետի համաձայն՝ Արձանագրությունն ստորագրվում է, եթե

այնքան էլ արդյունավետ չէ որակի պատշաճ վերահսկողության իրականացման տեսանկյունից, քանի որ պատվիրատուն, շատ դեպքերում շահագրգռված լինելով պայմանագիրը կնքել հնարավորինս ցածր գնով, առաջնային կհամարի ցածր գինը և կանտեսի պայմանագրի պայմաններին համապատասխան որակի առկայությունը: Այսպիսով, առկա կարգավորման պարագայում, երբ գործում է նվազագույն գնային առաջարկը ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքը, և առկա չեն գնման առարկայի՝ պայմանագրի պայմանների համապատասխանության վերահսկման արդյունավետ մեխանիզմներ, հնարավոր են որակին առաջադրվող իրավական պահանջների խախտումներ:

Առաջարկ. մշակել համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ բացառելու համար պետական գնումների ընթացակարգում ապրանքի որակի պահանջը նվազագույն գնի պահանջին ստորադասելը, ինչպես նաև որակի չպահպանման դեպքում վերահսկողությունը թողնել ոչ միայն պատվիրատուի, այլև գործընթացում շահագրգռվածություն չունեցող անձի/մարմնի վրա:

3.2.11 **Գնումների գործընթացի արդյունքների արտադատական բողոքարկումը դեռևս արդյունավետ չէ, իսկ բողոքարկման խորհրդում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավվածությունը ցածր է, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ տնտեսվարող սուբյեկտների շահերի պաշտպանության վրա:**

Ոլորտի փորձագետները բարձրաձայնում են գնումների գործընթացի արդյունքների արտադատական բողոքարկման մեխանիզմի⁶³² անարդյունավետության մասին, ինչը գործնականում հաճախ հետ է պահում մրցույթի մասնակիցներին իրենց ունահարված իրավունքները պաշտպանելուց: Այսպես, պրակտիկայում բողոքի բավարարման դեպքում գնման սխալ ընթացակարգը դադարեցվում կամ չեղյալ է համարվում, իսկ բողոքի հայտ ներկայացրած գործարարները հետ են ստանում միայն բողոքի ներկայացման համար վճարված գումարը (30000 ՀՀ դրամ) և, որպես կանոն, չեն դիմում դատարան՝ ստանալու համար կրած վնասների կամ հնարավոր բաց թողնված օգուտների փոխհատուցում: Նշենք, որ բազմաթիվ տնտեսվարողների պնդմամբ՝ նման դեպքերում դատարան չդիմելու պատճառներից է նաև այն մտավախությունը, որ դա հետագայում կարող է վատթարացնել հարաբերությունները գնումների բողոքարկման

մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը/մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում, բացառությամբ գյուղատնտեսական ապրանքների, գնման պայմանագիր կնքած անձը ներկայացնում է այդ ապրանքների ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Մակայն եթե այդ ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի կարող պահանջվել: Հակառակ դեպքում, պայմանագրի/դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում, և պատվիրատուն՝ 1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները, 2) կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

⁶³² «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 45, մաս 3, կետ 1

խորհրդի (Խորհուրդ) անդամների հետ և սահմանափակել հետագա մրցույթներում հաղթելու հնարավորությունը: Ստացվում է, որ նույնիսկ Խորհրդում բողոքարկելու գործընթացում հաղթելու դեպքում գործարարները ֆինանսապես տուժում են, քանի որ ստիպված են լինում մյուսների հետ հավասար հիմունքներով նորից մասնակցել նոր մրցույթին և կրել համապատասխան ծախսերը: Նշենք, որ Նախարարությունից հայտնել են, որ Խորհուրդը 2014 թվականին ստացել է ընդամենը 48 բողոք, որից բավարարվել է 20-ը, մերժվել՝ 24-ը, իսկ 2-ը թողնվել է առանց քննության՝ բողոք ներկայացրած մասնակիցների համապատասխան դիմումների հիման վրա: Միաժամանակ, ըստ «Պետական գնումների մասին» համաձայնագրի 20-րդ հոդվածի 6-րդ կետի՝ բողոքները քննվելու են դատարաններում կամ անկողմնակալ և անկախ՝ վերստուգող մարմնի կողմից, որը շահագրգռված չէ գնումների արդյունքների մեջ, և որի անդամները պաշտոնավարության ընթացքում պաշտպանված են արտաքին ազդեցությունից: Սակայն ցածր է հասարակական կազմակերպությունների ներգրավվածությունը Խորհրդի աշխատանքներում: Այսպես, չնայած նրան, որ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդի կազմում թեկնածություն առաջադրելու նպատակով 01.10.2014 թվականի դրությամբ ծանուցել է շուրջ 101 ՀԿ-ների՝ այնուամենայնիվ, «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսվող Խորհրդի կազմում⁶³³ հասարակական հատվածի ներկայացուցիչները դեռևս անհամեմատ փոքր թիվ են կազմում, ինչը կարող է խնդրահարույց լինել հասարակական վերահսկողության և բողոքարկման գործընթացի թափանցիկության ու արդյունավետության ապահովման տեսանկյունից:

Առաջարկ. Բարելավել գնումների բողոքարկման կարգը՝ մասնակիցների համար ստեղծելով մեխանիզմներ՝ կրած վնասների կամ հնարավոր բաց թողնված օգուտների փոխհատուցման համար, ձեռնարկել միջոցներ՝ խրախուսելու ՀԿ-ների ակտիվ մասնակցությունն ու ներգրավվածությունը բողոքարկման Խորհրդի կազմում:

3.2.12 Նախարարության «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ը մի շարք դեպքերում ներմուծել է անորակ ՀԴՄ սարքեր, չի հասցրել բավարարել ՀԴՄ սարքեր ձեռք բերելու վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումները:

Տնտեսվարող սուբյեկտներից ստացվել են բողոքներ՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի ոչ պատշաճ գործունեության վերաբերյալ, մասնավորապես՝ ՊՈԱԿ-ը ոչ բոլոր տնտեսվարող սուբյեկտներին է մատակարարել ՀԴՄ-ներ, իսկ տրամադրված սարքերը հաճախ եղել են ցածր որակի: Այսպես, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նախորդ տարվա արդյունքներով 500.0 մլն դրամ և ավելի իրացումից հասույթ չունեցող և այլ խմբում ընդգրկված հարկ վճարողները պարտավոր էին 19.12.2012 թվականի

⁶³³ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 46, մաս 3. Խորհրդի կազմում ընդգրկվում են մեկական ներկայացուցիչ՝ 1) ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված պետական կառավարման մարմիններից, 2) ՀՀ քաղաքային համայնքներից, 3) ՀՀ կենտրոնական բանկից, 4) ՀՀ-ում գրանցված և լիազորված մարմին գրավոր դիմում ներկայացրած հասարակական կազմակերպություններից (միավորումներից):

փոփոխության դրությամբ⁶³⁴ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը (պահանջը, սակայն, 2015 թվականից երկարաձգվել է մինչև 2016 թվականի հունվարի 1-ը⁶³⁵) ձեռք բերել ՀԴՄ-ներ: Ստացված բողոքների համաձայն՝ սակայն, ՀԴՄ ՊՈԱԿ-ն ընթացիկ տարվա հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին չի հասցրել բավարարել ՀԴՄ ձեռք բերելու համար տնտեսվարող սուբյեկտների դիմումները: ՀԴՄ ՊՈԱԿ-ը նշված ուշացումները հիմնավորել էր դիմումների մեծ քանակով (հոկտեմբերի 29-ին ու 30-ին՝ երկու օրում, միանգամից ստացվել է 3000-4000 դիմում): Ավելին, ոլորտի մասնագետները, ինչպես նաև հարկատուները բազմիցս նշել են, որ ՀԴՄ-ների որոշակի մասը անորակ է և շուտ է շարքից դուրս գալիս, ինչի արդյունքում տնտեսվարող սուբյեկտները անում են ավելորդ ծախսեր՝ նոր ՀԴՄ-ներ ձեռք բերելու առումով: Նշենք, որ Կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի «Հսկիչ-դրամարկդային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ ստեղծելու մասին» թիվ 1419-Ն որոշման համաձայն՝ ՊՈԱԿ-ի գործունեության առարկաներից և նպատակներից է, ի թիվս այլոց, ՀԴՄ-ների ներդրման, դրանց տեխնիկական սպասարկման, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ընտրության նպատակով մրցույթի կազմակերպումը: Փաստորեն, ՀԴՄ ՊՈԱԿ-ը, լինելով ՀԴՄ-ների ներդրման ոլորտի պատասխանատուն և միակ ներմուծողը, չի կարողացել պատշաճ կերպով բավարարել ՀԴՄ-ների՝ օրենսդրությամբ կոնկրետ ժամկետի սահմանման պահանջով պայմանավորված մեծ պահանջարկը, ինչը տնտեսվարող սուբյեկտներին, ՀԴՄ սարքերի ներդրման ժամկետը չփոխելու դեպքում, կարող էր ավելորդ խնդիրների առաջ կանգնեցնել:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ՝ ըստ գործարարների պահանջարկի ապահովելու ՀԴՄ-ների պատշաճ տրամադրումը, ինչպես նաև իրականացնել վերահսկողություն՝ ձեռք բերվող ՀԴՄ-ների պատշաճ որակի ապահովման ուղղությամբ:

3.2.13 Թերի օրենսդրական կարգավորման արդյունքում սահմանափակվում է ԽՍՀՄ Խնայբանկում ավանդներ ներդրած անձանց՝ ավանդի մայր գումարն ու կուտակված տոկոսները հետ ստանալու հնարավորությունը:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներով բարձրացվել է այն խնդիրը, որ ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգում կատարված փոփոխության⁶³⁶ և «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում (Օրենք) նախատեսված կարգավորման արդյունքում կարող է սահմանափակվել ԽՍՀՄ Խնայբանկում ավանդներ ներդրած անձանց՝ ավանդի մայր գումարը և կուտակված տոկոսները հետ ստանալու իրավունքը: Մասնավորապես, Օրենքում տեղ գտած ձևակերպման համաձայն՝ 2006-2013 թվականների ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու

⁶³⁴ [ԱԺ.19.12.2012.ՀՕ-244-Ն](#)

⁶³⁵ [ԱԺ.17.12.2014.ՀՕ-224-Ն](#)

⁶³⁶ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 16-ի N 352-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 460-Ն որոշում

քաղաքացիների՝ որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստացած ավանդատուների ավանդային գրքույկներում առկա գումարը (ռուբլով), որի նկատմամբ հաշվարկվել է փոխհատուցման գումարը, համարվում է *մարված*⁶³⁷: Ավելին, ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ (Որոշում) սահմանվում է, որ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ին պետք է տրամադրվի համապատասխան ժամանակահատվածում և համապատասխան կարգով ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստացած անձանց ցուցակը՝ դրանում ներառելով այն ավանդային գրքույկների համարները և ներդրված գումարի (ԽՍՀՄ ռուբլով) չափը, որոնց դիմաց վճարվել է փոխհատուցում՝ ԽՍՀՄ ռուբլով ավանդը *մարած համարելու* նպատակով⁶³⁸: Նշենք, սակայն, որ բանկային պրակտիկայում բանկային ավանդի պայմանագրով մի կողմը (բանկը), ընդունելով մյուս կողմից (ավանդատուից) ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը (ավանդը), պարտավորվում է ավանդատուին վերադարձնել ավանդի գումարը և պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով տոկոսներ վճարել դրանից: Այսինքն, Օրենքում և Որոշման մեջ նշված «փոխհատուցում» եզրույթը չի կարող փոխարինել ավանդի մայր գումարին և կուտակված տոկոսներին, իսկ ավանդը մարված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ վերադարձվել է ավանդի գումարը, և դրանից վճարվել են կուտակված տոկոսները: Ուստի, Օրենքով և Որոշմամբ նախատեսված վերոնշյալ կարգավորումները սահմանափակում են ԽՍՀՄ Խնայքանկում ավանդներ ներդրած անձանց՝ իրենց ներդրած ավանդի գումարը և կուտակված տոկոսները հետագայում հետ ստանալու հնարավորությունը:

Առաջարկ. կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N460-Ն որոշման մեջ՝ ապահովելու ԽՍՀՄ Խնայքանկում ավանդներ ներդրած անձանց կողմից իրենց ներդրած ավանդի գումարը և կուտակված տոկոսները հետագայում հետ ստանալու հնարավորությունը:

⁶³⁷ «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, կետ 17

⁶³⁸ ՀՀ կառավարության 23 ապրիլի 2014 թվականի «ՀՀ կառավարության որոշումը նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 16-ի N 352-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 460-Ն որոշում, կետ 3, ենթակետ 2

3.3 ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2014 թվականին Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Օրինախախտ տնտեսվարողներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ բոլոր որոշումներն ընդունվել են հրապարակային նիստերի ընթացքում՝ ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ:
- Հանձնաժողովը նախագրուշացում է տվել գազի իրացման ընթացքում, բացի իրացված գազի արժեքից, առանց նախապես տեղեկատվություն ներկայացնելու հավելյալ գումար (որպես թեյավճար) գանձող տնտեսվարող սուբյեկտներին, ինչ արդյունքում նման դեպքերի քանակը կտրուկ նվազել է:

Առկա թերություններն ու խնդիրները

3.3.1 Չնայած 2014 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ապրանքի գների կտրուկ աճի վերաբերյալ սպառողների դժգոհություններին՝ Հանձնաժողովը չի գտել գերիշխող դիրք ունեցողների և այլ տնտեսվարողների կողմից խախտումների և չարաշահումների դեպքեր:

2014 թվականի վերջին փոխարժեքի տատանմանը զուգահեռ գրանցվել է ապրանքների գների կտրուկ բարձրացում, որը հաճախ եղել է տարբեր տնտեսվարողների կողմից հակամրցակցային վարքագծի հետևանք, ինչի արդյունքում տուժել են սպառողները: Այսպես, որոշ փորձագետներ պնդում են, որ սպառողական ապրանքների գնաճի պատճառներից է եղել մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից հակամրցակցային վարքագծի դրսևորումը, այդ թվում՝ ապրանքների գների չհիմնավորված տատանումները (հորիզոնական հակամրցակցային համաձայնությունների դեպքում)⁶³⁹ կամ չհիմնավորված գների սահմանումը կամ կիրառումը (գերիշխող դիրքի չարաշահման դեպքում)⁶⁴⁰: Չնայած սպառողների բազմաթիվ դժգոհությունների առկայությանը՝ Հանձնաժողովը գտել է, որ ուսումնասիրված գնային փոփոխությունները տատանվել են 2-ից մինչև 12-13%

⁶³⁹ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 3, կետ 3

⁶⁴⁰ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 2, կետ «ա»

միջակայքում, այն դեպքում, երբ փոխարժեքի արժեզրկումը կազմել է 13%⁶⁴¹: Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են խոշոր ընկերությունների ապրանքային շուկաները և այն ապրանքների գները, որոնք ունեն սոցիալական նշանակություն՝ շաքարավազ, կարագ, ձեթ, հավի միս, հավկիթ, սուրճ, այլուր և այլն: Այնուհանդերձ, փոխարժեքի տատանումներին զուգահեռ թանկացել են սոցիալական նշանակության որոշ ապրանքատեսակներ այն դեպքում, երբ տվյալ ապրանքի հիմնական մասը չէր ներկրվել կամ արտադրվել փոխարժեքի տատանման բացասական հետևանքների ներքո: Այսինքն, առանձին ապրանքների գնաճը տեղի է ունեցել մի քանի օրվա և նույնիսկ մի քանի ժամվա ընթացքում, որի դեպքում փոխարժեքի տատանումը դեռևս չէր կարող տվյալ ապրանքի գների էական բարձրացման բերել, ինչպես նաև արտադրության համար ներմուծվող հումքի շուկայում: Այնինչ, նման գնաճը կարող էր տեղի ունենալ որոշ ժամանակ հետո միայն, երբ կմատակարարվեր կամ կներմուծվեր արդեն փոխարժեքի բարձրացմամբ պայմանավորված ավելի թանկ ապրանքը: Ավելին, մի շարք խոշոր խանութներում թանկացումը տարածվել է նաև ոչ արագ փչացող սննդատեսակների վրա⁶⁴² (շաքարավազ, սուրճ և այլն): Վերոնշյալ գնային տատանումների հետ կապված խնդիրը դառնում է Հանձնաժողովի վերահսկողության առարկա, երբ գների չհիմնավորված բարձրացումը տեղի է ունենում հակամրցակցային վարքագծի դրսևորումներով, օրինակ՝ հակամրցակցային համաձայնությամբ կամ գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների՝ խոշոր ներմուծողների, առևտրային ցանցերի (սուպերմարկետներ) կողմից իրենց դիրքի չարաշահմամբ: Նման չարաշահման հավանականությունը և սպառողների շահերի ոտնահարման ռիսկը բավականին բարձր է՝ հաշվի առնելով, որ խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի շրջանառության մոտ 63% (682167.1 մլն դրամ 1080149.4 մլն դրամից) իրականացվում է 31 և ավելի աշխատող ունեցող խոշոր խանութների միջոցով⁶⁴³: Իսկ շատ դեպքերում խոշոր խանութները, որոնցից հաճախ ապրանք է ձեռք բերում փոքր և միջին գործարարը, ունենում են կոնկրետ ապրանքի շուկայում գերիշխող դիրք: Հարկ է նշել, որ օրենքն արգելում է գերիշխող դիրք ունեցող կազմակերպությունների կողմից ապրանքի գնի չհիմնավորված բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը՝ այն համարելով գերիշխող դիրքի չարաշահում⁶⁴⁴: Ավելին, օրենքի իմաստով հակամրցակցային համաձայնություն է համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը⁶⁴⁵ և վերաբերում են ապրանքների գների չհիմնավորված բարձրացմանը, իջեցմանը կամ պահպանմանը (հորիզոնական համաձայնություն)⁶⁴⁶: Հանձնաժողովը, լինելով

⁶⁴¹ 11.12.2014 թ.-ի Կառավարության նիստ, <http://www.gov.am/am/news/item/11712/>

⁶⁴² ՀՀ առողջապահության նախարարի 28.12.2001 թվականի N 961 հրաման «Հատկապես արագ փչացող սննդամթերքի պահպանման ժամկետները և պայմանները» n 2-iii-4.4-1 սանիտարական կանոններն ու նորմերը հաստատելու մասին»

⁶⁴³ http://www.armstat.am/file/article/sv_12_14a_126.pdf

⁶⁴⁴ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 2, կետ «ժ»

⁶⁴⁵ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 1

⁶⁴⁶ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 3

տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում լիազոր պետական մարմին⁶⁴⁷, իրականացնում է վերահսկողություն տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ, ինչպես նաև տնտեսական մրցակցության պաշտպանում ու խրախուսում ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով⁶⁴⁸: Հանձնաժողովը քննարկում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերը և ընդունում է որոշումներ՝ այդ թվում նախագուշացում տալու կամ տուգանք նշանակելու վերաբերյալ⁶⁴⁹: Նշենք, որ ապրանքների գնաճի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից իրականացվող ուսումնասիրությունները, ըստ Հանձնաժողովի հայտնած պաշտոնական տեղեկատվության, 2015 թվականի մարտի 2-ի դրությամբ դեռևս ավարտված չեն եղել, իսկ 2014 թվականի դեկտեմբերի 11-ի դրությամբ գնաճը համարվել է փոխարժեքի համահունչ⁶⁵⁰: Այնուամենայնիվ, վերոնշյալ ժամանակահատվածում գրանցվել են նաև գնաճի դեպքեր, որոնք չեն կարող հիմնավորվել փոխարժեքի տատանմամբ: Ավելին, ոլորտի փորձագետների պնդմամբ⁶⁵¹ որոշ ապրանքների դեպքում տեղի ունեցած գնաճը գերազանցել է թույլատրելի չափը: Այսպիսով, չնայած ապրանքների կտրուկ գնաճին և սպառողների բազմաթիվ դժգոհություններին, Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում գնաճը համարվել է հիմնավորված փոխարժեքի տատանման միջակայքում տեղի ունենալու պատճառաբանությամբ, ինչպես նաև չի հայտնաբերվել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահման կամ տնտեսական մրցակցությանը խոչընդելու այլ դեպք:

Առաջարկ. փոխարժեքի տատանմամբ պայմանավորված գնաճի դեպքում իրականացնել ապրանքային շուկայի պատշաճ վերահսկողություն՝ կանխելու գների անհիմն բարձրացման դեպքերը և պատասխանատվության ենթարկելու փոխարժեքի տատանմամբ գների բարձրացումը ոչ տեղին հիմնավորող իրավախախտ գործարարներին:

3.3.2 Հանձնաժողովը չի ձեռնարկել բավարար քայլեր պետական գնումների գործընթացում հակամրցակցային վարքագիծ դրսևորած գործարարներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Հանձնաժողովի ոչ բավարար վերահսկողության արդյունքում մի շարք դեպքերում պետական գնումների գործընթացում ընկերությունները միմյանց հետ պայմանավորվածության ձեռքբերմամբ դրսևորել են հակամրցակցային վարքագիծ: Մասնավորապես, գնումների ոլորտը դիտարկող հասարակական կազմակերպության⁶⁵²

⁶⁴⁷ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 17

⁶⁴⁸ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 1

⁶⁴⁹ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 1

⁶⁵⁰ 11.12.2014 թ.-ի Կառավարության նիստ, <http://www.gov.am/am/news/item/11712/>

⁶⁵¹ <http://bit.ly/1LgaCRV> , <http://bit.ly/1FwX0RS>

⁶⁵² Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի «ՀՀ պետական գնումների համակարգի մոնիտորինգ 2011-2013թթ.» զեկույց

կողմից նշվել է, որ առանձին դեպքերում տնտեսվարողների միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել տարբեր ընկերությունների կողմից համապատասխան մրցույթը հերթով հաղթելու վերաբերյալ, ինչպես նաև եղել են դեպքեր, երբ միևնույն գործարարի կողմից տարբեր անվանումներով ընկերությունների գրանցմամբ յուրաքանչյուր ընկերության անունից մրցույթին առանձին փաթեթներ են ներկայացվել՝ դրանում առկա տեսականու համար սահմանելով տարբեր գներ: Նշենք, որ հորիզոնական հակամրցակցային համաձայնությունը կնքվում է միևնույն ապրանքային շուկայում գործող հնարավոր կամ փաստացի մրցակից հանդիսացող տնտեսվարող սուբյեկտների միջև, որն արգելված է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով⁶⁵³: Ավելին, հորիզոնական հակամրցակցային համաձայնությունները վերաբերում են նաև պետական գնումների կամ մրցույթների կամ աճուրդների պայմանների կամ արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությանը կամ արդյունքների կեղծմանը (խեղաթյուրմանը)⁶⁵⁴: Միևնույն ժամանակ, օրենսդրությունը Հանձնաժողովին կարևոր գործառույթներ է վերապահել պետական գնումների գործընթացում՝ կապված պետական գնումներում մրցակցության պատշաճ ապահովման հետ: Այսպես, օրենսդրության համաձայն՝ Հանձնաժողովը գնումների գործընթացում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների, այդ թվում՝ հակամրցակցային համաձայնությունների և գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտման նպատակով, համագործակցում է իրավասու այլ մարմինների հետ⁶⁵⁵: Մասնավորապես, 2014 թվականի ընթացքում Հանձնաժողովը համագործակցել է Նախարարության «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (Կենտրոն) հետ և կազմակերպությունների հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման դրսևորման փաստի ապացուցված լինելու դեպքում ներկայացրել է այդ կազմակերպությունների ցանկը Կենտրոն՝ ցանկում ընդգրկված սուբյեկտներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում («սև ցուցակում») ներառելու նպատակով⁶⁵⁶: Նշենք, որ Հանձնաժողովից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2014 թվականի ընթացքում հակամրցակցային համաձայնության դեպքեր չեն բացահայտվել, սակայն ՀՀ ֆինանսների նախարարության տվյալներով՝ Հանձնաժողովը 2014 թվականին գնումների գործընթացում հակամրցակցային վարքագիծ դրսևորելու հիմքով Կենտրոն է ներկայացրել 6 կազմակերպությունների տվյալներ: Փաստորեն, չնայած գնումների գործընթացում առկա հակամրցակցային երևույթների կապակցությամբ տնտեսվարող սուբյեկտների բազմաթիվ դժգոհություններին և ՀԿ-ների տրամադրած տվյալներին՝ Հանձնաժողովը չի իրականացրել լիարժեք վերահսկողություն մրցույթների ընթացքում հակամրցակցային վարքագիծ դրսևորած գործարարներին բացահայտելու ուղղությամբ:

Առաջարկ. ուժեղացնել վերահսկողությունը պետական գնումների ընթացքում հակամրցակցային վարքագիծ դրսևորած տնտեսվարող սուբյեկտների հայտնաբերման և

⁶⁵³ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 6

⁶⁵⁴ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, մաս 3, կետ 7

⁶⁵⁵ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 36, մաս 2

⁶⁵⁶ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 36, մաս 3

պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, համագործակցել պատկան մարմինների հետ՝ սահմանափակելու վերջիններիս մասնակցությունը պետական գնումների մրցույթներին:

3.3.3 Հանձնաժողովը չի ձեռնարկել բավարար քայլեր՝ բացառելու անբարեխիղճ մրցակցության դրսևորում հանդիսացող անտեսանելի գնաճը, ինչի արդյունքում տուժել են սպառողները:

Հանձնաժողովի կողմից անբարեխիղճ մրցակցության բացառմանն ուղղված վերահսկողությունը եղել է ոչ բավարար, ինչի արդյունքում սպառողների շրջանում եղել են բազմաթիվ դժգոհություններ, մասնավորապես, կապված առանց ապրանքի գնի համաչափ իջեցման ապրանքի որակական կամ քանակական հատկանիշների նվազեցման հետ: Այսպես, օրինակ, 2014 թվականի ընթացքում սպառողներն ու տարբեր լրատվամիջոցներ բազմիցս բարձրաձայնել են, որ մի շարք սննդատեսակների, օրինակ՝ հացաբուլկեղենի⁶⁵⁷, կաթնամթերքի⁶⁵⁸ շուկայում մի շարք ապրանքների քաշի նվազեցումը չի ուղեկցվել տվյալ ապրանքների գնի իջեցմամբ: Միաժամանակ, եղել են դժգոհություններ խոնավ շաքարավազի վաճառքի դեպքերի վերաբերյալ, երբ խոնավության պատճառով արհեստականորեն ավելացվել է շաքարավազի քաշը, ինչի արդյունքում նվազել է միևնույն գումարի դիմաց գնորդի ձեռքբերած շաքարավազի քանակը:⁶⁵⁹ Վերոնշյալ երևույթն առավել խնդրահարույց է դառնում, երբ նմանատիպ դեպքերում գնի նվազման փոխարեն տեղի է ունեցել գնաճ, ինչն ընդունված է անվանել «անտեսանելի գնաճ»: Վերջինիս դեպքում տնտեսվարող սուբյեկտները ապրանքների գինը թողնում են նույնը կամ թանկացնում, սակայն իջեցնում կամ նվազեցնում են մեկ միավոր ապրանքի որակը, չափը, ծավալը, քանակը: Նման դեպքերում, քանի որ ապրանքների արտաքին տեսքը մնում է նույնը (կամ տեղի են ունենում ոչ այնքան տեսանելի փոփոխություններ), սպառողի մոտ գնումներ կատարելիս շփոթություն է առաջանում կապված ապրանքի իրական ծավալի հետ, իսկ նման գործողությունները կամ վարքագիծը անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ են և արգելված են օրենքով⁶⁶⁰: Ավելին, անբարեխիղճ մրցակցությունն ու սպառողի իրավունքների խախտումներն ավելի ակնհայտ են դառնում այն ապրանքների դեպքում, որոնք չունեն ուղեկցող փաստաթղթեր, որոնք գնորդին կտրամադրեն ապրանքի հատկանիշների՝ քաշի, ծավալի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն (օրինակ՝ հացի դեպքում): Հարկ է նշել, որ օրենքի վերոնշյալ դրույթի խախտման դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ նախազգուշացնելու, նշանակելու տուգանք⁶⁶¹, ընդունելու որոշումներ ապրանքային շուկաների ուսումնասիրության, վարչական վարույթ հարուցելու, ստուգում, ուսումնասիրություն իրականացնելու վերաբերյալ⁶⁶²: Թեև 2014 թվականի

⁶⁵⁷ <http://www.aravot.am/2014/12/19/526787/>

⁶⁵⁸ <http://www.aravot.am/2014/12/19/526633/>

⁶⁵⁹ <http://shabat.am/?p=34439&l=am>

⁶⁶⁰ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 2, կետ 7

⁶⁶¹ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 1

⁶⁶² «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 19

ընթացքում Հանձնաժողովը բացահայտել է անբարեխիղճ մրցակցության 38 դեպք և կիրառել է պատասխանատվության համապատասխան միջոցներ⁶⁶³, այնուամենայնիվ, իրականացված քայլերը բավարար չեն եղել «անտեսանելի գնաճի» բազմաթիվ դեպքերի վերհանման ու կանխարգելման ուղղությամբ:

Առաջարկ. պատշաճ կերպով ուսումնասիրել «անտեսանելի գնաճի» դեպքերի վերաբերյալ սպառողների բողոքները և ՋԼՄ-ների հրապարակումները՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորումները հայտնաբերելու և հետագայում կանխելու նպատակով:

3.3.4 Չնայած բազմաթիվ դժգոհությունների առկայությանը՝ Հանձնաժողովը չի իրականացրել պատշաճ ուսումնասիրություններ ներմուծման ժամանակ առանձին տնտեսվարողներին անօրինական պետական օժանդակության հնարավոր դեպքերի բացահայտման նպատակով:

Բազմաթիվ տնտեսվարողներ, այդ թվում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող անձինք դժգոհություններ են հայտնել, որ որոշ դեպքերում շուկայում հայտնվել է ներմուծված ոչ օբյեկտիվորեն ցածր գնով վաճառվող ապրանք, որը գնային առավելության արդյունքում հանգեցրել է շուկայում տեղական արտադրողի ապրանքի մրցակցության սահմանափակմանը: Ներմուծված ապրանքի ցածր գնի վերաբերյալ տնտեսվարողների շրջանում տեսակետներ են եղել, համաձայն որոնց՝ դրանց էժան գինը կարող է պայմանավորված լինել ներմուծման ժամանակ առանձին տնտեսվարող սուբյեկտներին ապօրինի պետական օժանդակության տրամադրմամբ կամ ներմուծման համար համապատասխան վճարներից (մաքսային տուրքեր) խուսափելով: Մտացված բողոքների համաձայն՝ կոնկրետ ապրանքատեսակի ներմուծման դեպքում դրա արժեքը պետք է ավելի բարձր լիներ այդ ընթացքում վաճառքի դրված գնից, քանի որ տեսականորեն հնարավոր չէ գործող բարձր մաքսային արժեքի պարագայում ներմուծվող կոնկրետ ապրանքների համար սահմանել նման ցածր գին: Նշենք, որ պետական օժանդակություն է համարվում պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից կոնկրետ տնտեսվարող սուբյեկտի կամ տնտեսվարող սուբյեկտների որոշակի խմբի տրամադրվող ցանկացած օժանդակությունը (ներառյալ՝ ֆինանսական միջոցներ, այդ թվում՝ օգնություն, վարկ, փոխառություն, գույք, արտոնություններ կամ այլ պայմաններ)⁶⁶⁴: Ավելին, արգելվում է պետական օժանդակությունը, որն ուղղակի կամ անուղղակի կերպով հանգեցնում կամ կարող է հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը կամ վնասում կամ կարող է վնասել սպառողների շահերը⁶⁶⁵: Հարկ է նշել, որ հնարավոր չարաշահումներով, այդ թվում՝ հնարավոր ապօրինի պետական օժանդակությամբ ներմուծում իրականացված դեպքերից մեկի կապակցությամբ գյուղատնտեսությամբ զբաղվողների բողոքների հիման վրա Պաշտպանը դիմել էր Հանձնաժողովին՝

⁶⁶³ Հանձնաժողովի տվյալներով թվով 38 տնտեսվարող սուբյեկտներից 4-ի նկատմամբ նշանակվել է տուգանք, իսկ 34 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել է նախազգուշացում:

⁶⁶⁴ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 16¹, մաս 1

⁶⁶⁵ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 16¹, մաս 2

առաջարկելով ուսումնասիրել շուկայում տեղական ու ներմուծված լոլիկի գներն ու գնագոյացման վրա ազդող գործոնները, ինչպիսին կարող է լինել մաքսային տուրքի չափը: Չնայած նրան, որ Հանձնաժողովը, ըստ օրենքի⁶⁶⁶, ապահովում է բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, կանխարգելում, սահմանափակում և նախազգուշացնում է հակամրցակցային գործունեությունը, այնուհանդերձ, տվյալ հարցի ուսումնասիրությունը մերժվել է՝ պատճառաբանելով, որ խնդիրը վերաբերում է մաքսային ընթացակարգերի կիրարկմանը, իսկ Հանձնաժողովը մաքսային օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության լիազորություններ չունի: Այսպիսով, չնայած տնտեսվարողների բազմաթիվ դժգոհություններին՝ Հանձնաժողովի կողմից չեն իրականացվել բավարար քայլեր՝ տնտեսական մրցակցությունը սահմանափակող ապօրինի պետական օժանդակության ռիսկեր պարունակող դեպքերի ուսումնասիրության ուղղությամբ, ինչի արդյունքում վերջնականապես չի բացառվել/փարատվել ներմուծման մի շարք դեպքերում հնարավոր պետական օժանդակության առկայության վարկածը:

Առաջարկ. քննության առնել և մանրամասն ուսումնասիրել տնտեսական մրցակցությունը սահմանափակող ապօրինի պետական օժանդակության և այլ հնարավոր խախտումների վերաբերյալ գործարարների ներկայացրած վարկածները՝ դրանց իսկությունը պարզելու և իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու նպատակով:

3.3.5 Հանձնաժողովը իր գործունեության հրապարակայնությունը պատշաճ չի ապահովել՝ իր պաշտոնական կայքում ոչ ամբողջությամբ հրապարակելով Հանձնաժողովի կայացրած որոշումները:

Հանձնաժողովը պատշաճ չի իրագրել հանրությանն իր կողմից կայացված հրապարակման ենթակա որոշումների վերաբերյալ, ինչի արդյունքում չի ապահովվել իր գործունեության լիարժեք հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Այսպես, չնայած Հանձնաժողովը հայտնել է, որ 2014 թվականի ընթացքում Հանձնաժողովի մամուլի և հասարակայնության հետ կապերի ծառայությունը հասարակությանը շարունակաբար իրագրել է մրցակցային ոլորտում իրականացված աշխատանքների և դրանց արդյունքների մասին, այնուամենայնիվ, Հանձնաժողովի պաշտոնական կայքէջի (<http://www.competition.am>) «Հանձնաժողովի որոշումներ» բաժնում վերջին նյութը տեղադրվել է 2013 թվականին⁶⁶⁷, ինչի հետևանքով քաղաքացիներն ու տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն չեն ունեցել ծանոթանալու Հանձնաժողովի կայացրած որոշումներին: Միաժամանակ, օրենքով սահմանվում է Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովման պարտավորությունը⁶⁶⁸, իսկ համապատասխան տեղեկատվության հրապարակայնացումը տնտեսվարող սուբյեկտների կողմից հակամրցակցային վարքագծի դրսևորումների հարցում կարող է կարևոր կանխարգելիչ

⁶⁶⁶ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 2

⁶⁶⁷ <http://www.competition.am/index.php?menu=149&lng=1>, 07.03.2015 թվականի դրությամբ

⁶⁶⁸ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 2

նշանակություն ունենալ: Փաստորեն, Հանձնաժողովը չի իրականացրել բավարար քայլեր իր կողմից կայացված որոշումների հրապարակայնության ապահովման ուղղությամբ, ինչի արդյունքում սպառողները, տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն չեն ունեցել պատշաճ իրազեկվելու հանձնաժողովի գործունեության և մրցակցության խախտման դեպքերի վերաբերյալ:

Առաջարկ. **ձեռնարկել բավարար քայլեր օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովի՝ հրապարակման ենթակա բոլոր որոշումների հրապարակման և հանրության համար դրանց մատչելիության ապահովման ուղղությամբ:**

3.4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Ընդերքօգտագործման ոլորտում առավել արդյունավետ հսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 21.08.2014թ թիվ 114-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից ընդերքօգտագործման ոլորտում իրականացված ապօրինի աշխատանքների վերաբերյալ արձանագրության օրինակելի ձև:
- Հայաստանի Հանրապետությունում կատարվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ և ստեղծվել են խրախուսական մեխանիզմներ վերականգնվող էներգետիկ աղբյուրները օգտագործելու նպատակով:

Առկա թերություններն ու խնդիրները

3.4.1 Նախարարությունը չի իրականացրել բավարար քանակի միջոցառումներ ու ծրագրեր՝ ուղղված ստորերկրյա ջրերի ողջամիտ և համալիր օգտագործմանն ու պահպանությանը:

Խնդրահարույց է ստորերկրյա ջրերի ոչ ողջամիտ ու խնայողաբար օգտագործումը, ինչն ապագայում կարող է բերել ոչ միայն օգտակար հանածոների իսպառ վերացմանը, այլ կարող է աղետալի հետևանքներ ունենալ Հայաստանի էկոհամակարգի համար⁶⁶⁹: Մասնավորապես, առկա է խնդիր կապված արտեզյան ջրերի ոչ արդյունավետ և ապօրինի օգտագործման հետ, ինչը, համաձայն ոլորտի մասնագետների, Արարատյան և Արմավիրի մարզերում կարող է բնապահպանական աղետի պատճառ հանդիսանալ⁶⁷⁰: Կատարված ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ջրային այս պաշարների մոտ 30%-ը հանվում է անօրինական⁶⁷¹: Ավելին, «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի⁶⁷² (Ծրագիր) շրջանակներում իրականացված «Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների գնահատում» ուսումնասիրության հաշվետվության մեջ նշված է, որ վերջին 7-8 տարիներին ձկնաբուծական տնտեսությունների բուռն զարգացման արդյունքում Արարատյան արտեզյան ավազանում (ԱԱԱ) միայն ձկնաբուծական նպատակով ջրառը

⁶⁶⁹ <http://www.armecofront.net/Irahos/dzknabutsutyun-patuhaz/>

⁶⁷⁰ <http://bit.ly/18tP9qR>

⁶⁷¹ <http://bit.ly/18tP9qR>

⁶⁷² http://cew.am/uploads/library/AGWS_Final_Report_March_ARM1.pdf/

կազմել է ընդհանուրի մոտ 64 տոկոսը (ձկնաբուծության համար 1119,4 մլն.մ³/տարի⁶⁷³՝ ընդհանուր 1753,4 մլն.մ³/տարի⁶⁷⁴ օգտագործվածից): Նշենք, որ Ծրագրի համաձայն՝ ԱԱԱ ստորերկրյա ջրերի ինքնաշատրվանող գոտում ստորերկրյա ջրերից հորատանցքերով օգտագործվող միջին տարեկան ջրառը չպետք է գերազանցի 473,0 մլն.մ³/տարի ջրաքանակը, այդ թվում՝ ձկնաբուծության նպատակով: Փաստորեն, վերոնշյալ ցուցանիշներից ակնհայտ է, որ ներկայումս առկա է խնդիր կապված ԱԱԱ-ի ոչ պատշաճ օգտագործման հետ, երբ փաստացի օգտագործվող ջրի մոտ 73 %-ը գերազանցում է թույլատրելի սահմանը: Արդյունքում, ԱԱԱ-ում դրական ճնշում ունեցող ստորերկրյա ջրերի տարածքի մակերեսը նվազել է 3 անգամ և 31 համայնքներ զրկվել են ինքնաշատրվանող հորատանցքերով ստացվող ոռոգման և խմելու կենցաղային ջրից: Նշենք, որ Նախարարության գործառույթների շարքին է դասվում ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման ու պահպանության պետական ծրագրերի, հայեցակարգերի մշակումն ու իրականացումը⁶⁷⁵, իսկ ըստ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի՝ ընդերք է հողաձածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մասը, որը մատչելի է ընդերքօգտագործման համար⁶⁷⁶: Այսպիսով, ստորերկրյա ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման կապակցությամբ Նախարարությունը պետք է իրականացնի համապատասխան ծրագրեր և այլ միջոցառումներ՝ դրանց ոչ նպատակային և ապօրինի օգտագործումը կանխելու, ինչպես նաև ընդերքի պահպանությունն իրականացնելու նպատակով:

Առաջարկ. **իրականացնել ստորերկրյա ջրերի ողջամիտ օգտագործման ու պահպանության ծրագրեր և այլ անհրաժեշտ միջոցառումներ, որոնց արդյունքում կապահովվի նաև էկոհամակարգի պահպանությունը:**

3.4.2 Օրենսդրության թերի կարգավորման արդյունքում ընդերքօգտագործման արդյունքում առաջացած նյութերի կուտակումների համար սահմանված չեն բնապահպանական վճարներ, ինչը կարող է վնաս պատճառել և՛ անձանց առողջությանը, և՛ շրջակա միջավայրին:

Խնդրահարույց է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով թափոնների հասկացության բացակայությունը, ինչի արդյունքում մի շարք կուտակումների և լցակույտերի համար չեն գանձվում բնապահպանական վճարներ: Ավելին, պոչամբարների և արտադրական լցակույտերի⁶⁷⁷ համար ներկայումս չեն գանձվում բնապահպանական վճարներ, քանի

⁶⁷³ Ծրագրի համաձայն. «2013թ. դրությամբ ԱԱԱ-ում ձկնաբուծության նպատակով փաստացի օգտագործվել է 470 հորատանցք 1119,4 մլն.մ³/տարի գումարային ջրակլորով»:

⁶⁷⁴ Ծրագրի համաձայն. «2013թ. ԱԱԱ-ում գոյություն ունեցող 3318 հորատանցքերից օգտագործվել է 1781-ը՝ 55,6 մ³ /վրկ կամ 1753,4 մլն.մ³ /տարի ...»:

⁶⁷⁵ ՀՀ կառավարության 15 մայիսի 2008 թվականի N 654-Ն որոշում, հավելված 1, կետ 8, ենթակետ 24

⁶⁷⁶ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի, հոդված 3, մաս 1, կետ 1

⁶⁷⁷ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի, հոդված 3, մաս 1, կետ 12 արտադրական լցակույտեր (պոչամբարները)՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման

որ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով նմանատիպ նորմ նախատեսված չէ⁶⁷⁸: Չնայած այն հանգամանքին որ «Թափոնների մասին» ՀՀ օրենքով տրվում է թափոնի հասկացությունը, այնամենայնիվ, այն սահմանված չէ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտով՝ Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով: Մասնավորապես, Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով տրվում է տեխնածին հանքավայրի հակացությունը⁶⁷⁹, որը, սակայն, մասնագետների պնդմամբ, ևս պետք է համարվի թափոն: Ստացվում է մի իրավիճակ, որ օրենսդրական թերի կարգավորման արդյունքում հանքարդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող թափոնների համար օրենքով դրույքաչափ չի սահմանվում, ինչի հետևանքով նման թափոնների տեղափոխման և օգտագործման համար չեն կատարվում բնապահպանական վճարներ: Նշենք, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը նախաձեռնել էր փոփոխություններ և լրացումներ կատարել «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքում, որի պարագայում հանքարդյունաբերության արդյունքում առաջացող մի շարք չհարկվող թափոնների համար կգանձվեր բնապահպանական վճար, սակայն Նախարարությունը դեմ է հանդես եկել այդ նախաձեռնությանը⁶⁸⁰: Վերոնշյալը վկայում է այն մասին, որ Նախարարության կողմից ընդերքօգտագործման ընթացքում բավարար ձևով չի ապահովվում շրջակա միջավայրի պահպանությունը այն դեպքում, երբ ընդերքօգտագործման և բնապահպանության հետ կապված իրավահարաբերությունները փոխկապակցված են և տվյալ դեպքում թափոնները և դրանց համար գանձվող վճարները հանդիսանում են ընդերքօգտագործման արդյունք կամ հետևանք: Ավելին, «ՀՀ հարստապուշերի հետ կապված առաջնահերթ խնդիրները» գիտական աշխատության մեջ⁶⁸¹ նշվում է, որ Հայաստանում կուտակվել է մոտ 1 միլիարդ տոննա հանքարդյունաբերական թափոն: Այսպես, հաշվի առնելով այն, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի համաձայն՝ ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմնի իրավասություններից է ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործման և պահպանության պետական ծրագրերի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև ընդերքօգտագործման ոլորտում իրավահարաբերությունները կարգավորող իրավական ակտերի մշակումը, գտնում ենք, որ պետք է հստակ սահմանվեն թե ինչպիսի՞ գործունեության հետևանքով առաջացած արգասիքները, արդյունքներն են համարվում թափոն և սահմանվեն վերջիններիս համար բնապահպանական վճարներ:

Առաջարկ. հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ պոչամբար, արտադրական լցակույտ, պոչեր և այլ չհարկվող թափոններ հասկացությունների հստակեցման և դրանց համար, համապատասխանաբար, բնապահպանական վճարներ սահմանելու

արդյունքում առաջացած ապարների կուտակումներ՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում

⁶⁷⁸ <http://ecolor.org/hy/news/mining/whether-energy-and-natural-resources-ministry-changed-its-policy-on-mining-wastes/6948/>

⁶⁷⁹ <http://www.ecolor.org/hy/news/mining/144-patients-3-of-them-incurable-in-the-community-influenced-by-geghanush-tailing-dump-photos/6814/>

⁶⁸⁰ <http://civilnet.am/2014/12/10/karen-chshmaritian-armecofront/#.VPAVEfmUfrM>, <http://bit.ly/1F6HRpe>

⁶⁸¹ Հեղինակներ՝ Ռ.Ս Մովսեյանը և Հ.Բ. Մովսիսյանը, ԵՊՀ Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոն:

նպատակով:

3.4.3 Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամանակ հանրային մասնակցությունը պատշաճ ձևով չի ապահովվում, ինչի հետևանքով հաշվի չի առնվում հասարակության կարծիքը և սահմանափակվում է տեղեկատվության ազատության իրավունքը:

Նախարարությունը, որպես ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման սահմանված պահանջները ապահովող մարմին⁶⁸², չի ապահովում հասարակության պատշաճ մասնակցությունը ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման դեպքում, ինչի արդյունքում հաշվի չի առնվում հանրության կարծիքը և խախտվում է անձի տեղեկություններ ստանալու իրավունքը⁶⁸³: Ավելին, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված չեն համապատասխան երաշխիքներ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման դեպքում հանրային քննարկումների կազմակերպման կամ համապատասխան որոշման կայացման դեպքում հասարակության մասնակցության ապահովման համար: Այսպես, ՀՀ-ի կողմից վավերացված Օրհուսի կոնվենցիայի⁶⁸⁴ 6-րդ հոդվածը նախատեսում է հասարակության մասնակցությունը ընդերքօգտագործման վերաբերվող թույլտվության տրամադրմանը, որը Կոնվենցիայի իմաստով կարող է իրականացվել Նախարարության կողմից իր իրավասությունների շրջանակում: Մինչդեռ, գործնականում հասարակության մասնակցությունը և հանրային լսումները պատշաճ կերպով չեն իրականացվում: Այս կապակցությամբ գտնում ենք, որ Նախարարությունը՝ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման սահմանված պահանջների ապահովման և իր իրավասության սահմաններում ընդերքօգտագործման հետ կապված գործունեության հրապարակայնության ապահովման կապակցությամբ⁶⁸⁵ պետք է միջոցներ ձեռնարկի նաև գործունեության կոնկրետ տեսակների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում հասարակության մասնակցության ապահովման համար:

Առաջարկ. **ընդերքօգտագործման իրավունքի (թույլտվության) տրամադրման գործընթացում հասարակության մասնակցության ապահովման նպատակով նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ:**

⁶⁸² ՀՀ կառավարության 15 մայիսի 2008 թվականի N 654-Ն որոշում

⁶⁸³ ՀՀ Սահմանադրություն, հոդված 27.1, «ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ» 2010թ. գիտագործնական մեկնաբանությունների ժողովածուի մեջ նշվում է, որ տեղեկատվական թափանցիկությունը, բացախսությունը, կառավարական քաղաքականության կանխատեսելիությունը ժողովրդավարական գործընթացի կարևորագույն բաղադրատարրերն են, առանց որոնց ժողովրդաիշխանությունից մնում են միայն արտաքին ձևերը:

⁶⁸⁴ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» 1998 թվականի Օրհուսի կոնվենցիա

⁶⁸⁵ ՀՀ կառավարության 15 մայիսի 2008 թվականի N 654-Ն որոշում

3.5 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման գործընթացը խթանելու նպատակով մշակվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կարգավորելու է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման, անդամակցության, գործունեության իրականացման, կառավարման և այլ հարաբերություններ:
- Բարձրացել է ցորենի ինքնաբավության մակարդակը, որի արդյունքում արտադարված ցորենի բերքը 2014 թվականին կազմել է ամբողջ պահանջարկի 50 տոկոսը:
- Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2014 թվականին կազմել է 74.2 տոկոս, նախորդ տարվա 71 տոկոսի դիմաց:
- Կտրուկ ավելացել է նաև հանրապետությունից թարմ, սառեցված և վերամշակված ձկնամթերքի արտահանման ծավալը՝ կազմելով գրեթե 2.2 հազար տոննա, ինչը 400 տոննայով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

Առկա թերություններն ու խնդիրները

3.5.1 Նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը չի ձեռնարկել բավարար քայլեր ոլորտում առկա խախտումների վերացման, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին և սպառողներին իրազեկելու ուղղությամբ:

Գրանցվել են խնդիրներ սննդամթերքի անվտանգության նկատմամբ պետական վերահսկողության իրականացման և այդ ուղղությամբ հասարակությանը իրազեկելու հետ կապված, ինչի արդյունքում վտանգվել է հանրության առողջությունը: Այսպես, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական

խնդիրներից է՝ իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր⁶⁸⁶: Դրանցից է նաև պետության կողմից պարենային ապրանքների որակի նկատմամբ հսկողության իրականացումը⁶⁸⁷: Այսպես, Նախարարության Մանդատերքի անվտանգության պետական ծառայության (Ծառայություն) կողմից 2014 թվականին այս ուղղությամբ իրականացվել են տարբեր միջոցառումներ⁶⁸⁸, մասնավորապես՝ ստուգումների արդյունքում արձանագրվել են 463, իսկ դիտարկումների՝ 120 իրավախախտումներ, ինչի արդյունքում վարչական պատասխանատվության են ենթարկվել 463 տնտեսվարող սուբյեկտներ: Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ եղել են նաև Ծառայության կողմից ոչ բավարար վերահսկողության դեպքեր: Այսպես, օրինակ, բողոքներ են եղել շուկայում աղտոտված կճեպով հավկիթների վաճառքի վերաբերյալ, ինչը հակասում է օրենսդրական պահանջներին և վտանգավոր է սպառողի առողջության համար⁶⁸⁹: Բացի դրանից՝ ստացված ահազանգերի համաձայն՝ շուկայում առկա են եղել առանց հայերեն մակնշման ներկրված հավկիթներ⁶⁹⁰, որոնք հիմնականում առաջարկվել են սննդի արտադրությամբ զբաղվող ընկերություններին: Որոշ դեպքերում մակնշումը եղել է թերի⁶⁹¹ կամ մակնշման մեջ առկա ամսաթիվը չի համապատասխանել փաստացի ամսաթվին (օրինակ՝ վաճառվող հավկիթների մակնշումը եղել է գալիք ամսաթվով): Մինչդեռ, Ծառայության կողմից թերի մակնշմամբ և աղտոտված կճեպով հավկիթների դիտարկում իրականացվել է Երևան քաղաքի ընդամենը 29 առևտրի օբյեկտներում և խանութներում, ինչը բավարար չէ շուկայում արդյունավետ վերահսկողության, խախտումներից բխող վտանգի կանխման տեսանկյունից: Միաժամանակ, չնայած Ծառայության կողմից իրականացված գործողությունների արդյունքում անվտանգության պահանջներին չհամապատասխանող հավկիթները հանվել են վաճառքից, այնուամենայնիվ, շուկայում շարունակել են շրջանառվել թերի մակնշումով հավկիթներ: Բացի դրանից՝ 2014 թվականի վերջին ամիսներին արձանագրվել են սատկած խոզերի մսի վաճառքի դեպքեր: Ծառայության աշխատակիցները մասնակցել են Երևանի մսի վաճառքի մի քանի կետերում ՀՀ ոստիկանության կողմից իրականացված ստուգայցերին: Այնուհանդերձ, նման դեպքերն ինքնին վկայում են, որ պատշաճ չեն վերահսկվում սպանդանոցները⁶⁹², սննդամթերքի հիգիենայի պայմանների պահպանումը դրա տեղափոխման, պահման, պահպանման, իրացման (վաճառքի), ոչնչացման և

⁶⁸⁶ ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ կետ

⁶⁸⁷ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի), Եր.: «Իրավունք», 2010թ.

⁶⁸⁸ <http://bit.ly/1zd4fWP>,

⁶⁸⁹ ՀՀ կառավարության 29.09.2011թ. թիվ 1438-Ն որոշում, կետ 14,

⁶⁹⁰ Օրինակ՝ Ծառայության կողմից ձվի շուկայում հոկտեմբերի 9-ից 15-ը Վանաձորի 17 վաճառակետերում կատարված դիտարկումների ընթացքում վաճառակետերից մեկում հայտնաբերվել է Իրանի Իսլամական Հանրապետության 18.09.2014թ.-ի արտադրության 500 ձու, որոնց վրա բացակայել են հայերեն մակնշումները: <http://snund.am/hy/main/content/id/1722/alias/dzu-10-2014/>

⁶⁹¹ <http://snund.am/hy/main/content/id/1722/alias/dzu-10-2014/>,

<http://snund.am/hy/main/content/id/1807/alias/davrub-27-11-2014/>

⁶⁹² 29.06.2006թ.-ի «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 993-Ն որոշում:

օգտահանման փուլերում, ինչպես նաև ծառայությունների մատուցման, օգտագործվող տրանսպորտային միջոցների, արտադրամասերի, պահեստային և այլ տարածքներում: Ավելին, չնայած հսկողություն իրականացնելու համար համապատասխան լիազորություն ունենալուն⁶⁹³ Շառայությունը 2014 թվականին սպանդանոցներում ստուգումներ չի իրականացրել: Շարունակում է ցածր մնալ սննդամթերքի շուկայում սպառողների իրազեկվածությունը, որի բարձրացման ուղղությամբ չեն ձեռնարկվել լայնածավալ քայլեր⁶⁹⁴: Ավելին, Շառայության կողմից սննդամթերքի անվտանգության վերաբերյալ արված հայտարարությունները չեն պարունակել սպառողի համար բավարար տեղեկատվություն, ինչպես օրինակ՝ սպառողի առողջությունը վտանգող սննդամթերքի խմբաքանակի, տարբեր սննդատեսակների հետ վարվելու վերաբերյալ և այլն⁶⁹⁵: Այսպիսով, բավարար չեն եղել սննդամթերքի անվտանգության ոլորտում առկա խախտումների վերացմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության համակարգի գործունեության վերաբերյալ հանրությանը հստակ, ամբողջական և հավաստի տեղեկատվություն տրամադրելը:

Առաջարկ. **իրականացնել լիարժեք վերահսկողություն ապրանքաշուկայում վաճառքի ներկայացված և մինչև սննդամթերքի իրացումը սննդամթերքի անվտանգության ապահովման, ինչպես նաև սպառողներին սննդամթերքի անվտանգության վերաբերյալ հստակ, ամբողջական և հավաստի տեղեկատվություն տրամադրելու ուղղությամբ:**

3.5.2 Չի իրականացվել բավարար վերահսկողություն մանկապարտեզներում և դպրոցներում սննդի անվտանգության ապահովման նկատմամբ:

2014 թվականի ընթացքում գրանցվել են սննդի անվտանգության ապահովման խնդիրներ նախադպրոցական և հանրակրթական, այդ թվում՝ հատուկ հանրակրթական դպրոցներում: Այսպես, Շառայությունը Երևանում գործող 65 մանկապարտեզում ստուգումների ընթացքում կատարված լաբորատոր փորձարկման արդյունքում տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների խախտումներ չի հայտնաբերել: Այնուամենայնիվ, Նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն⁶⁹⁶՝ 2014 թվականի մարտի 25-ից ապրիլի 10-ը 11 մանկապարտեզում կատարված ստուգումների արդյունքում արձանագրվել են սննդամթերքի անվտանգության պահանջների խախտումներ Երևանի թիվ 53 մանկապարտեզում⁶⁹⁷: Միաժամանակ, մամուլի հրապարակումներից պարզ է դարձել, որ սննդի անվտանգության ապահովման խախտումներ են եղել նաև ՀՀ տարբեր մարզերի մի քանի մանկապարտեզներում: Օրինակ, 2014 թվականի նոյեմբերի 28-ին

⁶⁹³ «Սննդամթերքի անվտանգության պեական հսկողության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդված

⁶⁹⁴ ՀՀ Կառավարության՝ 30.12.2010թ. թիվ 1730-Ն որոշման 8-րդ կետի 4-րդ ենթակետ Շառայության աշխատանքի սկզբունքներից է սննդամթերքի անվտանգության համակարգի գործունեության վերաբերյալ հանրությանը հստակ, ամբողջական և հավաստի տեղեկատվության տրամադրումը:

⁶⁹⁵ <http://bit.ly/19b4xst>, ,

⁶⁹⁶ <http://snund.am/hy/main/content/id/1644/alias/mankapartezner-usumnasirutyun/>

⁶⁹⁷ <http://snund.am/hy/main/content/id/1133/alias/stugum-mankapartez/>,

«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 34-Ն որոշում:

Կոտայքի մարզի Եղվարդի թիվ 1 մանկապարտեզում արձանագրվել են թունավորման դեպքեր⁶⁹⁸: Թունավորման նախորդ օրը մանկապարտեզի ճաշացանկում եղել է նրբերշիկ, որի սպառումը մանկապարտեզում արգելված է օրենքով⁶⁹⁹: Այնուամենայնիվ, Ծառայության կողմից մանկապարտեզում առկա սննդամթերքից վերցված նմուշների լաբորատոր փորձաքննության արդյունքում անվտանգության ցուցանիշներով անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել⁷⁰⁰: Ծառայության պետի կողմից հանձնարարական էր տրվել նրբերշիկը մատակարարող կազմակերպությունում իրականացնել համապատասխան ստուգումներ: Միաժամանակ, Պաշտպանը քաղաքացիների կողմից ահազանգեր է ստացել հանրակրթական դպրոցների ճաշարաններում ոչ պատշաճ սննդատեսակների իրացման վերաբերյալ: Դրանց հիման վրա 2014 թվականի հոկտեմբեր ամսին այցեր են իրականացվել պատահականության սկզբունքով ընտրված տարբեր դպրոցներ: Այցելությունների ընթացքում արձանագրվել է, որ դպրոցի ճաշարաններում հաճախ իրացվում են երեխաների առողջության համար ոչ անվտանգ սննդատեսակներ, օրինակ՝ գազավորված ըմպելիքներ, չիպսեր, ապխտած կամ կիսաապխտած երշիկեղենով բրդուճներ, սուրճ և այլն: Միաժամանակ, երեխաներին սննդով ապահովելու հետ կապված նմանատիպ խախտումներ հանդիպել են ՀՀ կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող առանձին հատուկ հանրակրթական դպրոցներում⁷⁰¹: Պաշտպանի աշխատակազմի՝ հատուկ դպրոցներում անցկացրած դիտարկումների արդյունքում պարզվել է, որ այս հաստատություններում սննդի անվտանգության ապահովման նկատմամբ չի իրականացվել բավարար և պարբերական վերահսկողություն Ծառայության կողմից: Մինչդեռ, սննդամթերքի որակի և անվտանգության նկատմամբ վերահսկողության, ինչպես նաև հումքային բազայի զարգացման գործառույթների իրականացումը վերապահված է Ծառայությանը⁷⁰²: Պաշտպանի կողմից խնդրի մասին բարձրաձայնումից հետո պարզվել է, որ մի շարք տնտեսվարողներ անտեսել են «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի պահանջը, համաձայն որի սննդի շղթայի փուլերում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են իրենց գործունեության մասին ներկայացնել տեղեկատվություն և գրանցվել Ծառայությունում: Տվյալ պահանջը չկատարելու արդյունքում նշված իրավախախտ տնտեսվարողները չէին ընդգրկվել Ծառայության 2014 թվականի Ստուգումների տարեկան ծրագրում: Այնուամենայնիվ, Ծառայությունը ՀՀ կրթության և գիտության նախարարին խնդրել է տրամադրել դպրոցներին սնունդ մատակարարող տնտեսվարողների ցանկը՝ այնտեղ 2014 թվականին արտապլանային

⁶⁹⁸ <http://civilnet.am/2014/12/02/yeghvard-kindergarten-intoxication-sausage/#.VPVsDHZGfY8>

⁶⁹⁹ «Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-01-2013 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 12.08.2013թ.-ի թիվ N 42-Ն հրաման:

⁷⁰⁰ http://snund.am/hy/main/content/id/1850/alias/tunavorum_eghvard4/,

⁷⁰¹ Մանրամասն տես՝ «ՀՀ կրթության և գիտության նախարարություն», «Երևանի քաղաքապետարան» գլուխներում:

⁷⁰² ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի N 33 արձանագրային որոշմամբ հաստատված «Կայուն դպրոցական սնունդ ծրագրի» ռազմավարություն, ՀՀ ԳՆ Սննդի անվտանգության ծառայության կանոնադրություն, ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1730-Ն որոշման 42-րդ կետ:

ստուգումներ անցկացնելու կամ 2015 թվականի տարեկան ծրագրում ներառելու համար: Այսպիսով, Ծառայության կողմից չի իրականացվել բավարար վերահսկողություն նախադպրոցական, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի պատշաճ որակի ապահովման և նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջների կատարման ուղղությամբ:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ՝ խստացնելու վերահսկողությունը նախադպրոցական, հանրակրթական, հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի պատշաճ կազմակերպման և սննդի անվտանգության ապահովման նկատմամբ:

3.5.3 Ոռոգման համակարգերի բացակայության կամ թերի լինելու պատճառով գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք զրկված են եղել մի շարք հողատարածքներ մշակելու հնարավորությունից:

Ոռոգման և ջրահեռացման ոլորտը շարունակում է մնալ զարգացման կարևոր մարտահրավեր Հայաստանի համար⁷⁰³, իսկ ոռոգման համակարգերի կատարելագործման հարցում կարևորվում է նոր ջրամբարների կառուցումը և/կամ հների վերակառուցումը: Վերջինս հիմնարար նշանակություն ունի և՛ գյուղացիական տնտեսությունների համար արդյունավետ միջավայրի ստեղծման, և՛ Սևանա լճի էկոհամակարգի պաշտպանության տեսանկյունից: Ըստ Համաշխարհային բանկի, ներկայումս ջրային պաշարները բավարար են մարզերի մեծ մասում ոռոգումն ապահովելու համար⁷⁰⁴, ինչը ևս մեկ անգամ վկայում է, որ խնդիրը ոչ թե Հայաստանի ջրային պաշարների սակավության, այլ գործող ոռոգման համակարգում առկա թերությունների մեջ է: Ըստ Նախարարության տվյալների՝ ՀՀ-ում ընդհանուր առմամբ ոռոգվում է 154.4 հազ. հեկտար հողատարածք, որը կազմում է ոռոգելի համարվող հողատարածքների 74%-ը: Չնայած նրան, որ Նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ ներկայումս կատարվում են տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ, բանակցություններ են վարվում դոնոր կազմակերպությունների հետ Կապսի, Վեդու, Եղվարդի⁷⁰⁵ և Մաստարայի ջրամբարների կառուցման հնարավորությունների վերաբերյալ, 2014 թվականին ոչ մի ջրամբար չի կառուցվել և/կամ վերակառուցվել Նախարարության կողմից: Մինչդեռ, ոռոգման և ջրահեռացման համակարգի կատարելագործումը անհրաժեշտ է ոչ միայն

⁷⁰³ Համաշխարհային բանկի «Հայաստանի գյուղատնտեսական համակարգի խոցելիության նվազեցումը՝ կապված կլիմայի փոփոխության հետ» 2014 թվականի զեկույց, Armenia Country Program Snapshot, էջ 13. <http://www.worldbank.org/content/dam/Worldbank/document/Armenia-Snapshot.pdf>

⁷⁰⁴ Նույն տեղում՝ էջ 6

⁷⁰⁵ Դեռևս 80-ական թվականներին սկսվել էին Եղվարդի ջրամբարի կառուցման աշխատանքները, իսկ 2001 թվականի դեկտեմբերի 14-ին ընդունված «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների շարքում է Եղվարդի ջրամբարի կառուցումը, որի համար նախատեսված ժամկետն էր 2003 թվականը և շարունակական: Նշենք, որ ֆինանսավորումը կատարվել է Համաշխարհային բանկից կողմից՝ 70 մլն դոլարի չափով:

գյուղացիական տնտեսությունների համար, այլ նաև ունի կարևոր բնապահպանական նշանակություն:

Առաջարկ. **իրականացնել համապատասխան միջոցառումներ առկա ոռոգման համակարգերի բարելավման, նոր ոռոգման համակարգերի կառուցման, ինչպես նաև ջրամբարների վերակառուցման և նորերի կառուցման ուղղությամբ:**

3.5.4 Պաշտպանի կողմից դեռևս 2013 թվականին բարձրացվել և մինչ օրս չի լուծվել գյուղատնտեսության ոլորտում ոչ ձեռնտու պայմաններով տրամադրվող վարկերի հարցը:

2014 թվականի ընթացքում գյուղատնտեսությամբ զբաղվողներից բողոքներ են ստացվել գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի պայմաններից, քանի որ դրանք ունեցել են բարձր տոկոսադրույքներ և բավականին կարճ մարման ժամկետներ: Այսպես, տրամադրված վարկերի 90 տոկոսից ավելին տրվել է ուղիղ 6 ամիս արտոնյալ ժամկետով, այնինչ օրենսդրությամբ նախատեսված վարկի տոկոսների վճարման և մայր գումարի մարման պարտականությունը վարկառուի մոտ առաջանում է վարկի տրամադրման պահից սկսած առնվազն 6 ամիս հետո⁷⁰⁶: Չնայած նրան, որ 2014 թվականին շարունակվել է գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը⁷⁰⁷, ներկայումս գյուղատնտեսությամբ զբաղվողների համար վարկավորումը կրկին շարունակում է մնալ իրենց գործունեության անշահավետ ֆինանսավորման եղանակ: Խնդրի առնչությամբ դեռևս 2013 թվականին Նախարարությունից հայտնել են, որ մշակվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել օրենսդրական առաջարկություն⁷⁰⁸, որով առաջարկվում է 4 տոկոսային կետով սուբսիդավորել վերամշակող ընկերություններին տրամադրվող վարկերը, սակայն տվյալ նախագիծը մինչ օրս չի ընդունվել: Գյուղատնտեսական վարկերի խնդիրներին ադրադարձել էր նաև Համաշխարհային բանկը՝ նշելով, որ ֆերմերների համար նոր տեխնոլոգիաների հասանելիության, բուսաբուծական և անասնաբուծական եկամտաբերության բարձրացման համար Հայաստանում անհրաժեշտ են լավ թիրախավորված և մատչելի պայմաններով տրամադրվող վարկեր⁷⁰⁹:

Առաջարկ. **ձեռնարկել միջոցառումներ գյուղատնտեսական վարկերի փաստացի տոկոսադրույքի նվազեցման, վարկի մարման առավելագույն ժամկետի ավելացման, ինչպես նաև արտոնյալ ժամկետի նվազագույն շեմի բարձրացման ուղղությամբ:**

⁷⁰⁶ ՀՀ կառավարության 31 մարտի 2011 թվականի N 349-Ն որոշում

⁷⁰⁷ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվել են 14 %-ով վարկեր, որոնց 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է, իսկ հանրապետության առավել կարիքավոր 225 համայնքների համար սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը:

⁷⁰⁸ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 349-Ն որոշման մեջ լրացում կատարելու, ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

⁷⁰⁹ Reducing the Vulnerability of Armenia's Agricultural Systems to Climate Change, World Bank study, էջ 11.

3.5.5 Պետության կողմից ոչ բավարար երաշխիքների տրամադրման հետևանքով ջերմոցային տնտեսությունների վարումը շարունակել է մնալ անշահավետ:

Ջերմոցային և ջերմատնային տնտեսությունները հնարավորություն են ընձեռում ամբողջ տարվա ընթացքում, բնակլիմայական պայմանների հետ կապված նվազագույն ռիսկերով, միավոր տարածքից ստանալ կայուն և երաշխավորված քանակի բերք՝ ապահովելով ավելի բարձր եկամտաբերություն: Տվյալ ոլորտը Հայաստանի նման սակավահող երկրի համար ունի կարևոր նշանակություն և կարող է դառնալ գյուղատնտեսության զարգացման ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերից մեկը: Այնուհանդերձ, ջերմոցային տնտեսությամբ զբաղվելը Հայաստանում մնում է անշահավետ գործունեության տեսակ, քանի որ Նախարարության կողմից չեն մշակվել ջերմոցային տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ծրագրեր: Մասնավորապես, ջերմոցային տնտեսությամբ զբաղվող անձանց գործունեության հիմնական խոչընդոտներից է, օրինակ, ջերմոցներում աճեցված արտադրանքի բարձր գինը, որը պայմանավորված է լինում հիմնականում գազի բարձր սակագնով: Միաժամանակ, ջերմոցային տնտեսությունների զարգացման խոչընդոտ է հանդիսացել նաև արտասահմանից ներմուծվող, շուկայում առավել մատչելի գներով իրացվող ապրանքը: Օրինակ, ֆերմերները դժգոհել են, որ Հայաստանում ջերմոցային պայմաններում աճեցրած օրգանապես մաքուր լոլիկը տեղական շուկայում մրցունակ չէ Թուրքիայից ներկրված, անորոշ ծագմամբ, անհայտ պայմաններով սպառողին հասած լոլիկի համեմատությամբ: Այսպես, ջերմոցային արտադրանքի մրցունակության բարձրացման նպատակով «Ջերմոցային ասոցիացիա» ՀԿ-ի կողմից առաջարկվել էր ջերմոցային տնտեսությունների սպառած գազի գումարը գանձել բերքը հավաքելուց հետո միայն, սակայն Նախարարության հայտնած տվյալներով «Հայրուսգագարդ» ՓԲԸ-ի հետ բանակցություններն այս հարցի շուրջ որևէ արդյունք չեն տվել: Միաժամանակ, Ջերմոցային տնտեսության խթանման հայեցակարգում⁷¹⁰ նշված խնդիրների լուծման համար նախատեսված է շրջանառու հիմնադրամի ստեղծում, որտեղ կուտակված ֆինանսական միջոցները նպաստավոր պայմաններով կհատկացվեն ջերմատների կառուցման, վերակառուցման, արդիականացման և այլ աշխատանքների իրականացմանն աջակցելու համար: Մասնագետների պնդմամբ շրջանառու հիմնադրամի միջոցով ջերմատների արդիականացումը կբարձրացնի գազի օգտագործման արդյունավետությունը, որի դեպքում հնարավոր կլինի մինչև 3 անգամ գազի տնտեսում: Նախարարությունից հայտնել են, որ շրջանառու հիմնադրամի ստեղծման վերաբերյալ անցկացվել է քննարկում շահագրգիռ կողմերի հետ, որի արդյունքում շրջանառու հիմնադրամի ստեղծման առաջարկը հավանության է արժանացել, սակայն 2014 թվականի ընթացքում գազի սակագնի թանկացումից հետո ջերմոցատերերն ի վիճակի չեն հիմնադրամի ստեղծման համար ներդրումներ կատարել: Այսպիսով, ջերմոցային և ջերմատնային տնտեսությունների զարգացման գործում կարևորվում է պետության կողմից ակտիվ և նպատակաուղղված միջոցառումների

⁷¹⁰ 26.12.2013թ.-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսություններում ջերմոցային տնտեսության խթանման հայեցակարգին և ժամանակացույցին հավանություն տալու մասին» Կառավարության թիվ 53 արձանագրային որոշում, կետ 21:

իրականացումը՝ ուղղված այս տնտեսությունների համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Առաջարկ. սահմանել հարկային արտոնություններ և իրականացնել գազի սակագնի իջեցում (պետական սուբսիդավորմամբ) ջերմոցային և ջերմատնային տնտեսությամբ զբաղվողների համար, ձեռնարկել այլ քայլեր շրջանառու հիմնադրամի համար բարենպաստ միջավայրի ստեղծման ուղղությամբ:

3.5.6 Բնական աղետների հետևանքով գյուղատնտեսությամբ զբաղվողների բերքին հասցված վնասի հատուցումը Նախարարության կողմից տարիների ընթացքում շարունակել է մնալ անհամարժեք:

Այն գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց, որոնց բերքին վնաս էր հասցվել բնական աղետների հետևանքով չի տրամադրվել անհրաժեշտ և բավարար փոխհատուցում: Այսպես, 2014 թվականին միայն ցրտահարության հետևանքով գյուղատնտեսությունը կրել է 181 միլիոն դրամի վնաս, որից տուժել է 3174 տնտեսվարող սուբյեկտ⁷¹¹ (մեծ մասամբ ցրտահարվել են ծիրանի այգիները): Արդյունքում գյուղատնտեսությամբ զբաղվող մի շարք անձինք կորցրել են իրենց ապրուստի միակ միջոցը՝ հայտնվելով սոցիալական ծանր դրության մեջ: Նախարարությունից նշել են, որ վերջիններիս ցուցաբերվել է այնպիսի օգնություն, որը թույլ կտա նրանց շարունակել իրենց գործունեությունը⁷¹²: Սակայն գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք նման աջակցությունը բավարար չեն համարել, քանի որ, նախևառաջ նրանցից ոչ բոլորն են պետությունից ստացել անհրաժեշտ սերմացուն, իսկ ստացողներն էլ նշել են, որ չեն կարող «կտրել ծիրանի ծառերը և փոխարենն աճեցնել ձմերուկ»: Բացի դրանից պետության նման աջակցությամբ հնարավոր չէ մարել գյուղատնտեսությամբ զբաղվողների կողմից վերցրած գյուղատնտեսական վարկերը⁷¹³: Չնայած ցրտահարությունից և բնական այլ աղետներից տուժած ֆերմերներին դրամական փոխհատուցում չի տրամադրվել⁷¹⁴, Նախարարությունից հայտնել են, որ ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարկավորող կազմակերպությունների հետ անցկացվել են քննարկումներ, որոնց արդյունքում հանձնարարվել է վարկերի վերադարձման հետ կապված խնդիրներ առաջանալու դեպքում վարկառուներին ցուցաբերել անհատական մոտեցում՝ վարկերի պայմանների վերանայման (բարելավման) ուղղությամբ: Փաստորեն, բնական աղետից տուժած գյուղատնտեսությամբ զբաղվող անձի վիճակը պատշաճ չի վերականգնվել, քանի որ վերջիններիս տրամադրված աջակցությունը չի եղել բավարար:

⁷¹¹ 6711 հեկտար տարածք գրոյական բերք է տվել, <https://www.youtube.com/watch?v=8VjK0zv6TWI>

⁷¹² ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 10-ի N 398-Ն որոշման համաձայն՝ առավել տուժած հողօգտագործողներին ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ՀՀ մարզպետարանների միջոցով հատկացվել է բանջար-բոստանային մշակաբույսերի սերմացուներ, օրինակ՝ գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց տրամադրվել է ձմերուկի սերմացու, սոճու տնկիներ:

⁷¹³ <https://www.youtube.com/watch?v=8VjK0zv6TWI>,

⁷¹⁴ «Սերմացուների ձեռքբերումը թույլատրելու և դրանք ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Վայոց Ձորի և Տավուշի մարզերի՝ ցրտահարությունից տուժած հողօգտագործողներին հատկացնելու մասին» ՀՀ կառավարության 10 ապրիլի 2014 թվականի N 398-Ն որոշում:

Առաջարկ. ավելացնել բնական աղետների հետևանքով գյուղատնտեսությամբ զբաղվողների բերքին հասցված վնասի հատուցումը՝ որոշ դեպքերում նախատեսելով նաև դրամական օգնություն:

3.5.7 Դեռևս 2013 թվականին Պաշտպանի կողմից բարձրաձայնվել և առ այսօր լիարժեք չի լուծվել հակակարկտային կայանների հիմնման և ռադիոլոկացիոն ցանցի ներդրման հարցը, ինչի արդյունքում էական վնաս է հասցվել գյուղացիական տնտեսություններին:

Չնայած նրան, որ գյուղատնտեսական ռիսկերի նվազեցման նպատակով իրականացվել են մի շարք հակակարկտային ծառայության վերականգնման միջոցառումներ⁷¹⁵, այնուհանդերձ, Հայաստանի տարածքում դեռ ոչ բոլոր մարզերն են ամբողջովին համալրված հակակարկտային տեղակայանքներով և ռադիոլոկացիոն ցանցով, ինչի հետևանքով գյուղացիական տնտեսությունները շարունակում են էական վնաս կրել կարկտահարությունից: Հատկանշական է, որ Նախարարության տվյալներով 2014 թվականի մայիսի 24-ին տեղի ունեցած կարկտահարության հետևանքով ՀՀ Լոռու մարզում տուժել է 11 համայնք, ՀՀ Շիրակի մարզում 2014 թվականի հունիսի 19-ին, 30-ին, հուլիսի 7-ին, 26-ին, Լոռու մարզում մայիսի 24-ին և հուլիսի 8-ին տեղի ունեցած կարկտահարության հետևանքով ՀՀ Շիրակի մարզում տուժել է 34 և ՀՀ Լոռու մարզում՝ 15 համայնք: Միաժամանակ, 2014 թվականին ավարտվել են նախատեսված 80 հակակարկտային կայանների տեղակայման աշխատանքները⁷¹⁶: Նշենք, որ հակակարկտային կայաններից 50-ը տեղակայված է ՀՀ Արմավիրի մարզում, իսկ 30-ը որոշվել է տեղակայել ՀՀ Արարատի մարզում՝ 18 հատ, Արագածոտնի մարզում՝ 7 հատ, Լոռու մարզում՝ 5 հատ: Այնուամենայնիվ, գրանցվել են դեպքեր, երբ հակակարկտային տեղակայանքներն անհրաժեշտության դեպքում չեն գործել և/կամ սկսել են գործել ուշացմամբ, երբ արդեն գյուղատնտեսական նշանակության հողատարածքներին զգալի վնաս էր պատճառվել կարկտի հետևանքով (օրինակ՝ ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավանի շրջան, Ագարակ և Գյուլագարակ գյուղական համայնքներ): Այսպիսով, հակակարկտային տեղակայանքների և ռադիոլոկացիոն ցանցի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն նմանատիպ տեղակայանքների կառուցման անհրաժեշտությամբ, այլ գործող կայանների պատշաճ շահագործման ապահովմամբ:

Առաջարկ. ավելացնել հակակարկտային տեղակայանքները գյուղական համայնքներում՝ հաշվի առնելով տարածքի բնակլիմայական պայմանները և տարածքային առանձնահատկությունները, դրանց բաշխումը իրականացնել, պահպանելով տարածքային համաչափությունը, ինչպես նաև վերահսկել կայանների պատշաճ գործարկման հնարավորությունները:

⁷¹⁵ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1476-Ն որոշում. «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին»:

⁷¹⁶ ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 6-ի N 888-Ս որոշում

3.5.8 Դեռևս չեն լուծվել սպանդանոցների ոչ բավարար քանակի, դրանց ոչ պատշաճ սանիտարահիգիենիկ պայմանների հարցերը, որոնք բարձրացվել էին Պաշտպանի կողմից դեռևս 2013 թվականին:

2014 թվականի ընթացքում չեն հիմնվել բավարար քանակի սպանդանոցներ անասնազվիսաքանակի մորթը պատշաճ իրականացնելու համար, իսկ գործող սպանդանոցների սանիտարահիգիենիկ վիճակը եղել է ոչ բավարար: Ավելին, արդյունավետ կերպով վերահսկողություն չի իրականացվել մսի պատշաճ որակն ապահովելու ուղղությամբ: Արդյունքում շուկայում գրանցվել է ժամկետն անցած և անհայտ ծագման մսամթերքի վաճառք, որը վտանգում է սպառողի առողջությունը: Չնայած ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից դեռևս 2009 թվականից իրականացվող «Հայաստանում սպանդանոցների զարգացման» ծրագրի առկայությանը՝ փորձագետների պնդմամբ ոլորտը կարգավորող իրավական ակտերը⁷¹⁷ գործնականում չեն պահպանվում, որը պայմանավորված է առավելապես թերի պետական վերահսկողությամբ և սպանդանոցների ցանցի բացակայությամբ: Այսպես, Նախարարությունից հայտնել են, որ ՀՀ-ում առկա է 24 սպանդանոց⁷¹⁸, որոնք գրեթե չեն գործում կամ գործում են չնչին հզորությամբ: Նշված սպանդանոցներից 16-ում կա սարքավորումների համալրման, արդիականացման և վերանորոգման կարիք: Այսպես, տարբեր մասնագետներ պնդում են, որ շուկայում առկա մսամթերքի շատ քիչ մասն է ստացվում սպանդանոցներում իրականացվող մորթի արդյունքում: Ավելին, քանի որ մասնագետների պնդմամբ սպանդանոցները հիմնականում կառուցված են քաղաքային բնակավայրերում, իսկ անասուններին դեպի սպանդանոց տեղափոխելը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում (ռեսուրսների, ենթակառուցվածքների բացակայություն, ծախսատարություն և այլն), անասնապահական գյուղացիական և ֆերմերային տնտեսությունները չեն կարողացել ապահովել դրանց արդյունավետ շահագործումը: Նման իրավիճակում անձինք նախընտրում են անձամբ իրականացնել մորթը՝ այդպիսով խախտելով տարբեր իրավական ակտերով նախատեսված պահանջներ⁷¹⁹: Մյուս կողմից, գործող սպանդանոցներում խնդիրներ են գրանցվել անբավարար սանիտարահիգիենիկ պայմանների, սպանդանոցներում մորթվող կենդանիների մսի որակի (հիվանդ կամ սատկած կենդանիներ), և հետևաբար նաև սպանդանոցներից ստացվող մսի որակի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու հետ կապված: Մասնավորապես, Նախարարության տվյալներով՝ Ծառայության կողմից 2014 թվականին սպանդանոցներում սանիտարահիգիենիկ պայմանների նկատմամբ ստուգում չի իրականացվել, մինչդեռ սպանդանոցները մսամթերքի՝ մինչև սպառողին հասնելու շղթայում առաջին և կարևոր օղակներից մեկն

⁷¹⁷ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենք, «Սպանդանոցներում գյուղատնտեսական կենդանիների սպանդի կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի թիվ 993-Ն որոշում

⁷¹⁸ Նշված 24 սպանդանոցներից 3-ը տեղակայված են Երևան քաղաքում, 3-ը՝ ՀՀ Սյունիքի, 4-ը՝ ՀՀ Կոտայքի, 4-ը՝ ՀՀ Լոռու, 2-ական՝ ՀՀ Արագածոտնի, ՀՀ Գեղար-քունիքի, ՀՀ Տավուշի և ՀՀ Վայոց ձորի մարզերում և մեկական՝ ՀՀ Արարատի և ՀՀ Շիրակի մարզերում:

⁷¹⁹ Օրինակ՝ կենդանու մոտ կոնկրետ հիվանդությունների առկայության դեպքում այն ենթակա չէ սպանդի, անասնաբուժասանիտարական փորձաքննության չենթարկված կենդանիների սպանդից գոյացած մթերքների իրացումն արգելվում է և այլն:

են: Փաստորեն, սպանդանոցների սանիտարահիգիենիկ պայմանների նկատմամբ չկա պատշաճ պետական վերահսկողություն: Այսպիսով, նոր սպանդանոցների կառուցմանը զուգահեռ անհրաժեշտ է նաև գործող սպանդանոցներում ուժեղացնել վերահսկողությունը սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման նկատմամբ:

Առաջարկ. **խթանել կենդանիների սպանդանոցային մորթը (համապատասխանաբար մոտ սպանդանոցների ակայության և դեպի սպանդանոց տանող ենթակառուցվածքների դեպքում), ինչպես նաև առկա սպանդանոցներում իրականացնել ստուգումներ սանիտարահիգիենիկ պայմանների նկատմամբ:**

3.5.9 Պետությունը չի ձեռնարկել բավարար քայլեր գյուղատնտեսությամբ զբաղվելու համար արդյունավետ բիզնես միջավայրի ապահովման կապակցությամբ, ինչպես նաև չի լուծել համայնքները գյուղատնտեսական տեխնիկայով ապահովելու հարցը:

Գյուղատնտեսության զարգացման համար կարևորագույն պայմաններից է տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքի մրցունակության բարձրացումը, համապատասխան բիզնես միջավայրի խրախուսումը, ինչպես նաև գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներին անհրաժեշտ տեխնիկայով ապահովումը: Մասնավորապես, գյուղատնտեսական հումքի վերամշակման, ագրոպարենային ոլորտում ձեռնարկատիրական գործունեության զարգացման, ըստ նպատակահարմարության ներմուծվող պարենամթերքների փոխարինման և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ է պետության ակտիվ մասնակցությունը՝ կոնկրետ և գործուն քայլերի ձեռնարկմամբ, որպեսզի գյուղացիական տնտեսությունների վարումը դառնա շահավետ գործունեության տեսակ: Նախարարությունից հայտնել են, որ ընթացիկ տարում իրականացվել են ռեսուրսների բարձրացման, սկսնակ գործարարների աջակցության, դրամաշնորհային և ներդրումային մի շարք ծրագրեր: Այնուամենայնիվ, Համաշխարհային բանկի զեկույցի մեջ կարևորվում է գյուղատնտեսական տեխնոլոգիաների և տեղեկատվության հասանելիությունը ֆերմերների համար և զարգացման ծառայությունների որակի, արտադրողականության և հասանելիության բարելավումը: Նույն զեկույցում նաև անդրադարձ է կատարվում տեղական շուկայի հասանելիության զարգացմանը, հատուկ առաջարկներ են ներկայացվում գյուղական բնակավայրերում արտադրանքի և անասունների իրացվելիության զարգացման կապակցությամբ, ֆերմերների շրջանում մարքեթինգի ընկալման փոփոխությանը, շուկայի վերաբերյալ տեղեկատվության հավաքման կամ տարածման մեխանիզմների ներմուծման, կոոպերատիվների ստեղծման և այլ հարցերի վերաբերյալ⁷²⁰: Միաժամանակ, պետության աջակցությունը կարևոր է նաև գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրման հարցում, որը հիմնականում հասանելի չէ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներին: Չնայած Նախարարության

⁷²⁰ Reducing the Vulnerability of Armenia's Agricultural Systems to Climate Change, World Bank study, p. 11
244

կողմից մի շարք գյուղատնտեսությունների վաճառքի, լիզինգային եղանակով գյուղատնտեսական տեխնիկայի տրամադրմանը՝ դեռևս առկա են խնդիրներ, օրինակ, հացահատիկահավաք կոմբայնների շարժակազմը թարմացնելու հարցում, քանի որ տվյալ տեխնիկայի մաշվածության պատճառով զգալիորեն բարձր է բերքի կորուստը: Նմանատիպ գյուղատնտեսական տեխնիկայի անհրաժեշտություն կա բազմաթիվ գյուղական համայնքներում, սակայն 2014 թվականի ընթացքում այդպիսի տեխնիկա Հայաստան չի ներկրվել և համայնքներին չի տրամադրվել: Որպես արդյունք՝ հաճախ գյուղացիներն անհրաժեշտ գյուղտեխնիկան անշահավետ պայմաններով վարձակալել են, ինչը տվյալ անձանց համար գյուղատնտեսությամբ զբաղվելը դարձրել է ոչ շահութաբեր: Այսպիսով, չնայած գյուղատնտեսության զարգացման գործում համապատասխան ծրագրերի իրականացմանը՝ գյուղացիների համար անհրաժեշտ գյուղտեխնիկայի բացակայությունը շարունակել է մնալ գյուղատնտեսության զարգացման խոչընդոտներից մեկը:

Առաջարկ. իրականացնել միջոցառումներ և ծրագրեր գյուղատնտեսությամբ զբաղվելու համար արդյունավետ բիզնես միջավայրի ապահովման, գյուղացիների համար գյուղտեխնիկան հնարավորինս մատչելի դարձնելու, ինչպես նաև հնամաշ տեխնիկան թարմացնելու ուղղությամբ:

3.5.10 Ոռոգման նպատակով Սևանա լճից լրացուցիչ ջրառի արդյունքում վերցված ջուրը ոչ բոլոր դեպքերում է օգտագործվել ոռոգման համար:

2014 թվականին Կառավարության որոշման⁷²¹ հիման վրա Սևանից բաց է թողնվել 270.0 մլն մ³ ջուր՝ նախկինում սահմանված 170.0 մլն մ³ –ի փոխարեն⁷²², ինչը մի շարք դեպքերում ոչ միայն չի ծառայել իր հողատարածքների ոռոգման նպատակին, այլև՝ վտանգել է Սևանի, որպես Հայաստանի ամենամեծ ջրային ռեսուրսի, գոյությունը: Թեև բարձրաձայնված խնդիրը պատճառաբանվել է երաշտի առկայությամբ, այնուամենայնիվ, մասնագետների պնդմամբ⁷²³՝ 2014 թվականի ընթացքում եղել են բավարար քանակությամբ անձրևներ, իսկ պատասխանատու մարմինների կողմից նշված ձնհալից և այլ եղանակներով ջրամբարներում հավաքված ջրի կորուստ չէր գրանցվի, եթե դրանք սարքին լինեին և արտահոսք չունենային⁷²⁴: Նշենք, որ ջրառի⁷²⁵ արդյունքում վերցված ջրի օգտագործման արդյունավետության ստուգման նպատակով բնապահպանները կամավորության սկզբունքով կատարել են ստուգայցեր Հայաստանի համապատասխան բնակավայրեր, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ ջրառի մի մասն անցկացվել է առանձին հիդրոէլեկտրակայաններով, իսկ աշխատած ջուրը

⁷²¹ ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 857-Ս որոշում

⁷²² ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 432-Ս որոշում

⁷²³ <http://www.aravot.am/2014/05/07/458105/>

⁷²⁴ <http://ankakh.com/article/1693/havyelyal-djarri-hyetyevanqvov-syevani-makardakn-idjyel-e-10-sm-vov-yev-minchyev-taryevyerdj-ksharunaki-idjnyel-djaraban> , <http://www.lragir.am/index/arm/0/interview/view/103533>

⁷²⁵ Գետից կամ ջրամբարից ջուրը ոռոգման ցանցին՝ նավագնացական ջրանցքին կամ ջրամատակարարման համակարգին տալը բաց թողնելը:

տուրբիններից հետո լցվել է գետը և գնացել հարևան երկրներ⁷²⁶: Նրանց պնդմամբ՝ ջուրը բաց է թողնվել գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց տալու պատրվակով, բայց իրականում այն նրանց ոչ միշտ է հասել: Միաժամանակ, բնապահպանները ջրառից հետո ոռոգման համակարգի փոփոխությունների և ազդեցության վերաբերյալ հարցումներ են իրականացրել գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց շրջանում, որի ընթացքում բոլոր հարցվածները բողոքել են, որ ջուր չեն ստացել, այգիները, ցանքսերը չորանում են⁷²⁷: Նշենք նաև, որ Բնապահպանության նախարարությունը հայտնել է, որ 2014 թվականին Սևանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն չափաքանակի փոփոխություն նախատեսող համապատասխան օրենքի նախագծի⁷²⁸ լրամշակված տարբերակի վերաբերյալ սահմանված ժամկետներում չի կարողացել գրավոր եզրակացություն ներկայացնել՝ նախագիծը հրատապ կարգով ՀՀ ԱԺ-ում ընդունվելու պատճառով: Հիշեցնենք, որ Նախարարության նպատակներից և խնդիրներից են՝ պետական սեփականություն հանդիսացող ջրային և ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգերի կառավարումն ու անվտանգ օգտագործման ապահովումը, ոռոգման ծրագրերի մշակումը և իրականացման մոնիթորինգը, իր իրավասության սահմաններում ջրի ազգային ծրագրի իրականացման ապահովումը, ջրային համակարգերի ներդրումային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ինչպես նաև ներդրումային ծրագրերի փորձաքննության կազմակերպումը⁷²⁹: Նշվածը վկայում է, որ Նախարարությունը պետք է հետևողական լինի՝ պարզելու, թե արդյոք Սևանից բաց թողնված ջուրը օգտագործվել է ոռոգման նպատակով, իսկ նշված բնական ռեսուրսի օգտագործման նկատմամբ ավելի խիստ վերահսկողության համար պետք է նաև տեղեկացված լինի, թե բաց թողնված ջրով կոնկրետ որ տարածքներն են ոռոգվել և ինչ հաճախականությամբ: Ավելին, Նախարարությունը պետք է համապատասխան դիտարկումների միջոցով վերահսկի, որպեսզի ջրի բացթողումը ուղղված լինի բացառապես ոռոգման ապահովմանը՝ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության համապատասխան որոշումը⁷³⁰ վերաբերում է միայն ոռոգման նպատակով Սևանա լճից ջրառին:

Առաջարկ. պատշաճ վերահսկել, որպեսզի Սևանա լճից բաց թողնված ջուրը օգտագործվի բացառապես ոռոգման նպատակներով, ինչպես նաև լրացուցիչ ջրառի վերաբերյալ օրենսդրական նոր փոփոխություններ մշակելիս պատշաճ կերպով քննարկել դրանք բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

⁷²⁶<http://ankakh.com/article/1693/havyelyal-djrarri-hyetyevanqvov-syevani-makardakn-idjyel-e-10-sm-vov-yev-minchyev-taryevyerdj-ksharunaki-idjnyel--djraban>

⁷²⁷<http://ankakh.com/article/1693/havyelyal-djrarri-hyetyevanqvov-syevani-makardakn-idjyel-e-10-sm-vov-yev-minchyev-taryevyerdj-ksharunaki-idjnyel--djraban>

⁷²⁸«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

⁷²⁹ ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N1516-Ն որոշում <http://minagro.am/public/uploads/2014/03/kanonadrutyun-2.pdf>

⁷³⁰ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 432-Ս որոշում

3.6 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2014 թվականին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Սպառողների սպասարկման որակի բարելավման նպատակով լրամշակվել են էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները:
- Տեխնիկապես վերազինվել է Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային կայքէջը՝ տեղեկատվության տրամադրման առավել լայն հնարավորություններ ընձեռելով քաղաքացիներին:
- 2014 թվականի ընթացքում Հանձնաժողովի գործողությունների և ստուգումների արդյունքում պատասխանատվության են ենթարկվել 27 կազմակերպություններ (30 դեպք):

Առկա խնդիրներն ու թերությունները

3.6.1 Հանձնաժողովը բավարար կերպով չի հիմնավորել էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման անհրաժեշտությունը, ինչը հանգեցրել է հանրության լայն շերտերի դժգոհություններին:

2014 թվականի հուլիսի 1-ին Հանձնաժողովի որոշմամբ սահմանվեցին էլեկտրաէներգիայի նոր՝ ավելի բարձր սակագներ⁷³¹, ինչն առաջացրեց հանրության լայն զանգվածների անհամաձայնությունն ու դժգոհությունը: Այսպես, դեռևս հունիսի 4-ից Հանձնաժողովի կողմից խնդրի վերաբերյալ կազմակերպվել էին քննարկումներ և հանդիպումներ շահագրգիռ կողմերի՝ ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի, Հանրային խորհրդի, ԶԼՄ-ների, կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ու քաղաքացիների

⁷³¹ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014թ. հուլիսի 1-ի թիվ 233-Ն որոշմամբ էլեկտրաէներգիայի սակագինը սահմանվել է 1) 35 կՎ և բարձր լարմամբ սնվող սպառողների համար՝ ցերեկային սակագին՝ 32.85 դրամ/կՎտժ՝ ներառյալ գիշերային սակագին՝ 28.85 դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀառ2) 6 (10) կՎ լարմամբ սնվող սպառողների համար՝ ցերեկային սակագին՝ 38.85 դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ, գիշերային սակագին՝ 28.85 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկԱԱՀ; 3) 0,38 կՎ լարմամբ սնվող սպառողների (այդ թվում՝ բնակչության) համար՝ ցերեկային սակագին՝ 41.85 դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ, գիշերային սակագին՝ 31.85 դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ:

հետ⁷³², ինչի ընթացքում որպես էլեկտրաէներգիայի սակագների բարձրացման հիմնավորում ներկայացվել էր էլեկտրաէներգետիկ համակարգում առաջացող շուրջ 20 մլրդ դրամ ֆինանսական ճեղքվածքը փակելու անհրաժեշտությունը⁷³³, ինչը մի շարք շահագրգիռ կողմերի համար համոզիչ չի եղել: Վերջիններիս կողմից որպես հակափաստարկ բերվել է այն, որ քաղաքացիները պարտավոր չեն էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությունների թերի աշխատանքի հետևանքով հավելյալ ֆինանսական բեռ կրել: Բացի դրանից՝ էլեկտրաէներգիայի սակագնի 10%-ով բարձրացումը, ըստ մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, մեծ ազդեցություն է ունենալու սպառողական ապրանքների գնաճի վրա, բացասաբար է անդրադառնալու ինչպես փոքր, այնպես էլ մեծ ձեռնարկատիրությունների աշխատանքի վրա⁷³⁴ և նպաստելու է երկրում աղքատության խորացմանը⁷³⁵: Մի շարք քաղաքացիների պնդմամբ՝ սակագնի շուրջ քննարկումները եղել են անարդյունավետ, քանի որ Հանձնաժողովի կողմից պատշաճ չեն ուսումնասիրվել տարբեր կողմերի ներկայացրած հակափաստարկներն ու հիմնավորումները: Հետագայում բազմաթիվ քաղաքացիներ էլեկտրաէներգիայի սակագնի թանկացումը կանխելու պահանջով բողոքի ակցիաներ են կազմակերպել Հանձնաժողովի շենքի մոտ: Մինչդեռ, Հանձնաժողովը, ըստ օրենքի հանդիսանալով սպառողների և էներգետիկայի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների շահերը հավասարակշռող մարմին⁷³⁶, պետք է ապահովի սակագների սահմանման կանխատեսելիությունը և սակագնի ողջամիտ չափը՝ ելնելով հասարակության սոցիալ-տնտեսական վիճակից, հակառակ դեպքում նշված բարձրացումները կարող են շարունակական բնույթ կրել: Բացի դրանից՝ էլեկտրաէներգիայի սակագինը փոփոխելիս մի շարք հասարակական և քաղաքական գործիչների պնդմամբ, անհրաժեշտ էր իրականացնել ողջ էներգետիկ համակարգի և դրանում առկա խնդիրների խորքային և համապարփակ գնահատում՝ դիտարկելով նաև գոյացած 20 մլրդ դրամ ֆինանսական ճեղքվածքի հաղթահարման այլընտրանքային տարբերակները, այլ ոչ թե խնդիրն անմիջականորեն լուծել սպառողների համար էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ⁷³⁷: Շահագրգիռ կողմերի սուր քննադատությունների և հանրային անհամաձայնության արդյունքում էլեկտրաէներգիայի սակագնի թանկացումը կարող է խորացնել բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրները:

Առաջարկ. ապահովել էլեկտրական էներգիայի, ինչպես նաև բոլոր այլ հանրային ծառայությունների սակագների փոփոխման կանխատեսելիությունն ու ոլորտում առկա խնդիրների խորքային վերլուծությունը, քննարկել խնդիրների այլընտրանքային լուծումների հնարավորությունը:

⁷³² <http://www.psrc.am/am/?module=news&mid=4&id=2089>

⁷³³ <http://www.psrc.am/am/?module=news&mid=3&id=2081>

⁷³⁴ <http://www.aravot.am/2014/07/23/482428/>

⁷³⁵ <http://www.ecolor.org/hy/news/quotecolorquot-press-club/aram-grigoryan-increase-in-electricity-price-to-lead-to-inflation-and-deterioration-of-poverty/6360/>

⁷³⁶ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք, հոդված 4

⁷³⁷ <http://168.am/2014/06/12/375899.html>

3.6.2 Բնական գազի սակագնի բարձրացմանը զուգահեռ մի շարք տնտեսվարող սուբյեկտների համար չեն սահմանվել տարբերակված սակագներ, ինչը հանգեցրել է տվյալ տնտեսվարողների շուկայում մրցունակության էական նվազմանը:

Դեռևս 2013 թվականին Հանձնաժողովի որոշմամբ սահմանվեց «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի ավելի բարձր սակագին⁷³⁸: Այդ որոշումը ոչ միայն առաջ բերեց հանրության դժգոհությունը՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական խնդիրները, այլև հետագայում բացասաբար ազդեց գյուղատնտեսության առանձին ոլորտների վրա: Մասնավորապես, ջերմոցային տնտեսությամբ զբաղվող անձինք բազմիցս բողոքել են, որ գազի բարձրացված սակագինը հանգեցրել է ջերմոցներում աճեցված արտադրանքի գնի բարձրացմանը, ինչն իր հերթին ջերմոցային կուլտուրաներն էապես անմրցունակ է դարձրել շուկայում և խոչընդոտել ջերմոցային տնտեսության ոլորտի զարգացմանը: Այսպես, ջերմոցային տնտեսությամբ զբաղվողները դժգոհել են, որ Հայաստանում ջերմոցային պայմաններում աճեցրած, օրինակ, օրգանապես մաքուր լոլիկը տեղական շուկայում մրցունակ չէ, Թուրքիայից ներկրված, անորոշ ծագման և անհայտ պայմաններով սպառողին հասած լոլիկի համեմատությամբ⁷³⁹: Քննարկվող խնդրի վերաբերյալ Հանձնաժողովը հայտնել է, որ իրենց կողմից իրականացված վերլուծության նախնական արդյունքների համաձայն՝ գազի սակագնի հետ կապված խնդիրներն առաջանում են զգալիորեն փոքր թվով սպառողների մոտ, և սպառողների մեծ մասն իր տնտեսական գործունեությունն արդեն իսկ հարմարեցրել է գազի նոր սակագներին: Մինչդեռ, ջերմոցային տնտեսությունների համար գազի առանձին սակագներ սահմանելու առաջարկությամբ հանդես եկած «Ջերմոցային ասոցիացիա»-ի կազմում շուրջ 950-1000 ջերմոցային տնտեսություններ կան, որոնց մեծ մասը փոքր և միջին ձեռնարկություններ են: Նշվածը վկայում է, որ իրականում բազմաթիվ ՓՄՁ-ներ իրենց գործունեությունը չեն կարողացել հարմարեցնել գազի ավելի բարձր սակագներին և շարունակաբար բախվել են իրենց տնտեսական գործունեությունը վտանգող լուրջ ֆինանսական խնդիրների: Այսինքն, ստացվում է, որ Հանձնաժողովն այս հարցում չի կարողացել արդյունավետ հավասարակշռել սպառողների և գազ մատակարարող ընկերության շահերը⁷⁴⁰: Մինչդեռ, Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում մասնակցում է ՀՀ կառավարության տնտեսական և ֆինանսական ծրագրերի մշակմանը և դրանց վերաբերյալ տալիս առաջարկություններ⁷⁴¹: Թեև Հանձնաժողովի հավաստիացմամբ՝ առանձին սպառողական խմբերի համար բնական գազի սակագնի վերանայման հարցը մշտապես

⁷³⁸ Ամսական մինչև 10 հազար խմ գազ օգտագործելու դեպքում սպառողների համար մեկ խորանարդ մետր գազի գինը սահմանվեց 156000 դրամ՝ նախկին 132000 դրամի փոխարեն, իսկ 10 հազար խորանարդ մետրից ավելի սպառողների համար յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի գին սահմանվեց 276 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ նախկին 243 ԱՄՆ դոլարի փոխարեն: Տես՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013թ. հունիսի 7-ի թիվ 190-Ն որոշում:

⁷³⁹ Մանրամասն՝ տես ՀՀ գյուղատնտեսության նախարարության բաժնում

⁷⁴⁰ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք, հոդված 5

⁷⁴¹ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենք, հոդված 13

գտնվում է իրենց ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ, փաստ է, որ մի շարք տնտեսվարող սուբյեկտների համար գազի սակագնային այլ՝ ավելի շահավետ համակարգի նախատեսումը շարունակում է մինչ օրս մնալ չլուծված:

Առաջարկ. քննարկել առանձին տնտեսվարող սուբյեկտների (ներառյալ՝ ջերմոցային տնտեսությամբ զբաղվողների) համար բնական գազի տարբերակված սակագներ սահմանելու հնարավորությունը՝ վերջիններիս արտադրանքի շուկայում մրցունակության բարձրացման նպատակով:

4.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարության (Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի «ՀՀ 2014 թվականի պետական բյուջեում, ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N1414-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և ՀՀ Շիրակի մարզպետարանին գումար հատկացնելու մասին» N1151-Ն որոշման համաձայն՝ Գյումրի քաղաքում արդեն իսկ սկսվել է բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացը, որով նախատեսվում է լուծել մոտ 215 ընտանքիների բնակարանային խնդիրները:
- Կառուցվող օբյեկտներում քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների պատշաճ կատարման նկատմամբ 2014 թվականին կատարված վերահսկողության ընթացքում ստուգվել է 571 օբյեկտ, որից 469-ով կայացվել է տուգանք նշանակելու մասին որոշում, իսկ 42-ով տրվել են պարտադիր կատարման ցուցումներ: 469 որոշումներով նշանակվել է 56,350 հազ. դրամ տուգանք, որը 2014 թվականի բյուջեով նախատեսվածի (55.300 հազ. դրամ) համեմատ կազմում է 102%: Նշված տուգանքից 1600.000 դրամը նշանակվել է թվով 18 պաշտոնատար անձանց (համայնքների ղեկավարների) նկատմամբ:
- ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 1137-Ն որոշմամբ փախստականների բնակապահովման հետ կապված հարցերը կարգավորող իրավական ակտերում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում⁷⁴² տարանջատվել են իրավական ակտերում կիրառվող՝ «կացարան» և «հանրակացարան» եզրույթների սահմանումները, ինչի արդյունքում բացի հանրակացարաններից, նաև ժամանակավոր այլ կացարաններում (հյուրանոցներ, հանգստյան տներ, պանսիոնատներ, առողջարաններ և այլն) բնակվելիս բռնագաղթված և ՀՀ քաղաքացիություն ստացած անձինք ազատվում են բնակության համար սահմանված վարձը վճարելուց (բացառությամբ էլեկտրաէներգիայի և կոմունալ ծախսերի), ինչպես նաև կարող են օգտվել ՀՀ տարածքային կառավարման նախարարի՝ 28.08.2008 թվականի թիվ 47-Ս

⁷⁴² ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303 -Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկ, կետ 90

հրամանով սահմանված այլ իրավունքներից:

Առկա թերություններն ու խնդիրները

4.1.1 Մինչ օրս չի լուծվել աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակելի տներով ապահովելու հարցը:

2013 թվականին 808 ընտանիք ճանաչվել էր աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակապահովման ծրագրի շահառու: Սակայն 2013 թվականի ընթացքում նշված 808 ընտանիքից ընդամենը 45 ընտանիքի էր հատկացվել բնակելի տներ, իսկ 15 ընտանիքի տրամադրվել էր ուղղակի ֆինանսական աջակցություն՝ յուրաքանչյուրին 3.0 մլն դրամի չափով⁷⁴³՝ բնակարանային պայմանների բարելավման նպատակով: Մնացած 763 ընտանիքի բնակարանային խնդիրները Նախարարությունը նախատեսում էր լուծել 2014 թվականին իրականացվելիք բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացմամբ: Ի հավելումս, 2014 թվականին շարունակվել է ծրագրի շրջանակներում դատական կարգով բնակապահովման իրենց իրավունքը վերականգնած անձանց փաստաթղթային փաթեթների ուսումնասիրության գործընթացը, ինչի արդյունքում 2014 թվականի ընթացքում ծրագրի շահառու է ճանաչվել ևս 31 ընտանիք: Իսկ 2014 թվականի ընթացքում ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում նախորդ տարիներին շահառու ճանաչվածների համար կառուցվել է 91 բնակելի տուն և շարունակվել են ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 3 բազմաբնակարան շենքերի շինարարական աշխատանքները: Ներկայումս, ըստ Նախարարության տվյալների, լուծման կարիք ունի դեռևս 2008 թվականին մեկնարկած ծրագրի շահառու ճանաչված, սակայն ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները դեռևս չբարելավված 1198 ընտանիքի բնակարանային խնդիրը: ՀՀ վարչապետի 2014 թվականի հուլիսի 22-ին Գյումրի քաղաք կատարած այցելության շրջանակներում ՀՀ Շիրակի մարզպետարանում կայացած խորհրդակցության արդյունքում, ինչպես նաև կատարված հարցումների վերլուծության արդյունքներով՝ հաշվի առնելով շահառուների մեծամասնության կարծիքը, ըստ Նախարարության, աղետի գոտու բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված, սակայն ծրագրի շրջանակներում բնակարանային պայմանները դեռևս չբարելավված ընտանիքների բնակարանային խնդիրը նախատեսվում է լուծել ֆինանսական աջակցության տրամադրմամբ՝ փուլային մոտեցման կիրառմամբ 2015-2016 թվականների ընթացքում: Թեև վերը նշված 1198 ընտանիքից խնդրի լուծման համար Գյումրի քաղաքի 215 ընտանիքի ՀՀ կառավարության որոշմամբ⁷⁴⁴ հնարավորություն է ընձեռվում 2015 թվականի 1-ին կիսամյակում բարելավել իրենց բնակարանային պայմանները բնակարանների (բնակելի տների) ձեռքբերման համար ֆինանսական աջակցության տրամադրմամբ, իսկ մնացած 983 ընտանիքի բնակարանային խնդիրները

⁷⁴³ ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 21-ի N1296-Ն որոշում

⁷⁴⁴ ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի N1151-Ն որոշում

նախատեսվում է լուծել 2015-2016 թվականների ընթացքում (որոնցից Գյումրի քաղաքի 230 ընտանիքին՝ 2015 թվականի 2-րդ կիսամյակում): Այնուամենայնիվ, չնայած 2013 թվականին Նախարարության կատարած կանխատեսումներին՝ անօթևան մնացած ընտանիքներին բնակարաններով ապահովելու հարցում 2014 թվականին փաստացի չի արձանագրվել որևէ փոփոխություն, ինչպես նաև շահառու ճանաչված ընտանիքներին բնակարան հատկացնելու փոխարեն չի տրամադրվել նաև դրամական փոխհատուցում:

Առաջարկ. **հետևողական միջոցներ ձեռնարկել աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին նախատեսված ժամկետներում և չափով համապատասխան ֆինանսական աջակցության տրամադրման հարցում:**

4.1.2 Հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման նպատակով չի իրականացվել պատշաճ վերահսկողություն:

Բազմաթիվ հասարակական կազմակերպությունների և հաշմանդամություն ունեցող անձանց պնդմամբ թե՛ Երևանում, թե՛ մարզերում շարունակում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական օբյեկտների մատչելիության խնդիրը: Մինչդեռ, օրենքով չի թույլատրվում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների շինարարությունն ու վերակառուցումը, եթե դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար⁷⁴⁵: Իսկ քաղաքաշինության ոլորտում օրենսդրության, համապատասխան փաստաթղթերի կատարումը վերահսկում է Նախարարության Քաղաքաշինական պետական տեսչությունը (Տեսչություն), որը հայտնաբերված խախտումների վերացման նպատակով տալիս է պարտադիր հրահանգներ և ցուցումներ, հետևում դրանց իրականացմանը, նշանակում է վարչական տույժեր և այլն⁷⁴⁶: Բացի դրանից՝ շինարարական աշխատանքներ կատարողների գործունեությունը վերահսկելու և օրենսդրության պահանջները ապահովելու նպատակով Տեսչությունը նաև ստուգումներ է իրականացնում շինարարական օբյեկտներում:⁷⁴⁷ Այնուամենայնիվ, քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման խնդիրը կրում է համակարգային բնույթ և համատարած է ոչ միայն Երևանում, այլև Հայաստանի մարզերում: Մասնավորապես, խնդիրը հանդիպում է ոչ միայն հին, այլև նորակառույց կամ հիմնովին վերանորոգվող շինություններում, ինչը նաև լիազոր մարմնի ոչ արդյունավետ վերահսկողության հետևանք է: Այսպես, օրինակ, Լոռու մարզի համայնքներում 2014 թվականին կառուցվել է ընդամենը 1 թեքահարթակ, իսկ 51 համայնքներում դեռևս մատչելիության ապահովման խնդիր կա: Մարզի 163 կրթական հաստատություններից 103-ում առկա է թեքահարթակ (որից 5-ը կառուցվել է 2014թ.), շինարարական տեսակետից մատչելի են 26-ը, իսկ 34 դպրոցում դեռևս

⁷⁴⁵ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 22

⁷⁴⁶ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 26

⁷⁴⁷ ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի թիվ 1233-Ն որոշում

թեքահարթակ չկա:⁷⁴⁸ Միաժամանակ, բազմաթիվ են դեպքերը, երբ կառուցապատողներն, անտեսելով շինարարական նորմերի մի շարք պահանջներ, պահպանում են միայն արտաքին թեքահարթակի պահանջը: Այնինչ, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց ֆիզիկական մատչելիության խնդիրը չի սահմանափակվում միայն թեքահարթակներով. շատ դեպքերում, եթե անգամ շինության թեքահարթակը համապատասխանում է շինարարական նորմերի պահանջներին, տեղաշարժման խոչընդոտներ են առաջանում շինության ներսում, ինչը թե՛ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվնեցիայի⁷⁴⁹ և թե՛ գործող օրենսդրության պահանջների ոտնահարում է⁷⁵⁰: Այսպես, օրինակ, Պաշտպանը 2014 թվականին տեղեկացել է զանգվածային լրատվամիջոցներից⁷⁵¹, որ նշյալ խնդիրն առկա է եղել, օրինակ, Կապանի նորակառույց 2-րդ ավագ դպրոցում, որը թեև ունի թեքահարթակ, սակայն եռահարկ է, բացակայում է վերելակը, սանհանգույցները հարմարեցված չեն: Խնդրի կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ դպրոցի շինարարական աշխատանքները դեռ ընթացքի մեջ են և իրենք հետամուտ են, որ դպրոցում շինարարությունն իրականացվի շինարարական նորմերին համապատասխան: Քաղաքաշինության ոլորտում օրենսդրության չպահպանման վերոնշյալ և բազմաթիվ այլ դեպքերի արդյունքում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք ոչ միայն զրկվել են մատչելի միջավայրի, այլև դրա հետևանքով կրթություն ստանալու, առողջության պահպանման, աշխատանքի և այլ իրավունքներից, ինչը խոչընդոտում է նաև նրանց սոցիալական ինտեգրմանը: Մինևույն ժամանակ, խնդրահարույց է, որ Նախարարությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար ազատ տեղաշարժման հարմարանքներով ապահովված քաղաքաշինական օբյեկտների թվաքանակի վերաբերյալ տվյալներին չի տիրապետում: Նշվածը պատճառաբանվել է նրանով, որ օրենսդրությամբ կառուցապատողներին ճարտարապետահատակագծային առաջադրանք⁷⁵² տրամադրելու, ինչպես նաև դրա հիման վրա նախագծերի համաձայնեցման իրավասություն ունեն համայնքների ղեկավարները և, հետևաբար, նշված գործընթացներում Նախարարությունը գործառույթներ չունի: Գտնում ենք, որ Նախարարությունը, հանդիսանալով պետական մարմին, որի անմիջական խնդիրներից է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների կողմից ոլորտը կանոնակարգող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական

⁷⁴⁸ <http://lori.gov.am/files/docs/12775.pdf>

⁷⁴⁹ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվնեցիայի 9-րդ հոդված

⁷⁵⁰ Օրինակ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրամանի համաձայն՝ բնակչության սակավաշարժուն խմբերի համար բացի թեքահարթակներից, անհրաժեշտ են նաև վերելակներ և ամբարձիչներ, մատչելի սանիտարահիգիենիկ սենքեր և այլն:

⁷⁵¹ <http://disabilityinfo.am/4820>

⁷⁵² Ճարտարապետահատակագծային առաջադրանքը փաստաթուղթ է, որը, ի թիվս այլ պահանջների, հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության պահանջներին համապատասխան, սահմանում է կոնկրետ տարածքում քաղաքաշինական օբյեկտի նախագծի մշակման պարտադիր պայմաններ, պահանջներ ու սահմանափակումներ, ՀՀ Կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի թիվ 1473-Ն որոշում:

վերահսկողությունը⁷⁵³, պետք է շահագրգռված լինի ազատ տեղաշարժման հարմարանքներով ապահովված քաղաքաշինական օբյեկտների վերաբերյալ տվյալների տիրապետման հարցում: Նախարարության հավաքագրած տվյալները այս ոլորտում կարող են ծառայել նաև որպես օգտակար տեղեկատվություն Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով (Ծրագիր) նախատեսված՝ հանրակրթական դպրոցների, նախադպրոցական հաստատությունների և բուհերի շենքերը հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցնելու միջոցառումների ծրագրի մշակման համար⁷⁵⁴: Հատկանշական է, որ ըստ Ծրագրի, մինչև 2016 թվականի վերջ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող կառուցապատման օբյեկտներում պետք է ապահովված լինի հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի և անարգել քաղաքաշինական միջավայր⁷⁵⁵, և միաժամանակ պետք է աշխատանքներ կատարվեն՝ մշակութային հաստատությունների շենքերը հարմարեցնելու հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի ու ելքի համար՝ ելնելով շենքերի տեխնիկական պայմաններից⁷⁵⁶:

Առաջարկ. ապահովել արդյունավետ և շարունակական վերահսկողություն հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման նկատմամբ, իրականացնել հարմարեցված ու մատչելի քաղաքաշինական օբյեկտների վերաբերյալ տվյալների հավաքագրում, ինչպես նաև հնարավորինս սեղմ ժամկետում ՀՀ կառավարություն ներկայացնել հանրակրթական դպրոցների, նախադպրոցական հաստատությունների և բուհերի շենքերը հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցնելու միջոցառումների ծրագիրը:

4.1.3 Բազմաթիվ բնակելի շենքեր, տասնյակ դպրոցների շենքեր շարունակում են մնալ վթարային և ոչ սեյսմակայուն պայմաններում՝ վտանգելով մարդկանց առողջությունը, ինչպես նաև չեն թարմացվել 1980-ական թվականներին ընդունված որոշ շինարարական նորմերն ու կանոնները:

Դեռևս խնդրահարույց է բարձր աստիճանի վթարային և ոչ սեյսմակայուն բազմաբնակարան շենքերում քաղաքացիների բնակության հարցը, ինչի արդյունքում վտանգվում է անձանց առողջությունն ու անվտանգությունը⁷⁵⁷: Ըստ Նախարարության

⁷⁵³ ՀՀ քաղաքաշինության նախարարության կանոնադրության կետ 8(15), ՀՀ կառավարության՝ 25.06.2002թ. N 1294-Ն որոշում

⁷⁵⁴ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303 -Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկ, կետ 65

⁷⁵⁵ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303 -Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկ, կետ 68

⁷⁵⁶ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303 -Ն որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկ, կետ 94

⁷⁵⁷ ՀՀ Սահմանադրություն, հոդված 33.2

տվյալների՝ հանրապետության տարածքում ներկայումս առկա են քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող 26 բազմաբնակարան շենքեր և 1115 անհատական բնակելի տներ: Դրա հետ մեկտեղ, առկա են 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, վերականգնման-ամրացման ենթակա մոտ 450 բազմաբնակարան շենքեր: Չնայած քանդման ենթակա վթարային շենքերի (այդ թվում՝ հանրակացարանային շենքերի) բնակիչների անվտանգությունն ապահովելու և նրանց նոր բնակտարածություն տրամադրելու ուղղությամբ նախորդ տարիներին Երևան քաղաքում իրականացված միջոցառումներին⁷⁵⁸՝ դեռևս լուծման կարիք ունի քանդման ենթակա վթարային 11 բազմաբնակարան շենքերի (այդ թվում՝ հանրակացարանային շենքերի) բնակիչների վերաբնակեցման խնդիրը: Խնդրի լուծման նպատակով կառավարության և Երևան համայնքի համատեղ ֆինանսավորմամբ ներկայումս կառուցման ընթացքում են գտնվում 4 բազմաբնակարան շենքերի (Միսակյան 16, Շինարարների 6, Շինարարների 15 և Մարգարյան 45 հասցեների) շինարարական աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2015 թվականին: Այնինչ, անհրաժեշտ է պատշաճ արձագանքել նաև ՀՀ մարզերում առկա բարձր աստիճանի վթարային շենքերում բնակվող անձանց խնդիրներին՝ հաշվի առնելով բնակիչների կողմից այդ մասին անընդհատ հնչեցվող ահազանգերը և բողոքները: Օրինակ, Գյումրիի Անտառավան թաղամասի թիվ 26 շենքի բնակիչները հաճախակի բարձրաձայնում են շենքի ամեն վայրկյան փլվելու վտանգի մասին⁷⁵⁹, բարձրաձայնվել է նաև Գյումրիի Տիգրան Մեծ պողոտայի, Խաղաղության օղակի, Կազաչի պոստ թաղամասի շենքերի ծանր վիճակի⁷⁶⁰, Գորիսի Գրիգոր Տաթևացի 13 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքում ապրող բնակիչների խնդիրների մասին⁷⁶¹: Հանրապետության բնակելի շենքերի տեխնիկական վիճակի առնչությամբ բողոքներ են ստացվել նաև Արագածոտնից, Վայոց Ձորից, Արմավիրից: Բացի դրանից՝ ըստ Նախարարության տվյալների՝ մինչև 1988 թվականը հանրապետությունում կառուցվել է 1062 դպրոց, որից 856-ը՝ մարզերում 762: Նշված 1062 դպրոցից ընդամենը 23-ն է վերակառուցվել և ամրացվել, իսկ 10-ը վերակառուցման ընթացքում է: Մնացած 1029 դպրոցում անհրաժեշտ է իրականացնել սեյսմազինվածության մակարդակի ավելացման տեխնիկական միջոցառումներ: Միաժամանակ, ըստ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ-ի՝ սեյսմիկ անվտանգության առումով 2014 թվականին հանրապետությունում գործող շուրջ 1400 դպրոցից 132-ը ռիսկային են, որոնցից ամենառիսկայինների թիվը հասնում է 60-ի. Արմավիրի մարզում՝ 5, Արարատում՝ 12, Գեղարքունիքում՝ 5, Լոռու մարզում՝ 3,

⁷⁵⁸ ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի N682 և 2009 թվականի փետրվարի 25-ի N172-Ն որոշումներ

⁷⁵⁹ <http://www.azatutyun.am/content/article/25444334.html> (տեսանյութ) Հրապարակված՝ 03.07.2014, նույն շենքի մասին տեսանյութ <http://mamul.am/am/video/9320217> հրապարակված 05.12.2013թ.

⁷⁶⁰ <http://martungrigoryan.am/aj-gorcuneutyun/aj-eluytner/208-gyumru-mi-sharq-xndirner-hratap-lucman-kariq-unen.html> հրապարակված՝ 21.05.2014թ.

⁷⁶¹ <http://hetq.am/arm/print/32020/> հրապարակված 17 հունվարի, 2014թ.

⁷⁶² Արագածոտնի մարզում՝ 96, Արարատի մարզում՝ 105, Արմավիրի մարզում՝ 115, Գեղարքունիքի մարզում՝ 122, Լոռու մարզում՝ 84, Կոտայքի մարզում՝ 79, Շիրակի մարզում՝ 54, Սյունիքի մարզում՝ 93, Վայոց ձորի մարզում՝ 45 և Տավուշի մարզում՝ 63:

Կոտայքում՝ 3, Շիրակում՝ 2, Սյունիքում՝ 9, Տավուշի մարզում՝ 3, Վայոց ձորում՝ 5, և այլն: Նշված դպրոցներն ունեն երկրորդ և երրորդ աստիճանի վթարայնություն, որոնցից ամրացման և ուժեղացման ենթակա են 55-ը, իսկ մյուս 5-ի դեպքում ուժեղացումը նպատակահարմար չի համարվում, և անհրաժեշտ է փոխել դրանց նշանակությունը⁷⁶³: Նշենք, որ Նախարարության խնդիրներից է նաև շենքերի և շինությունների սեյսմակայունության, վտանգավոր երկրաբանական երևույթներից դրանց ինժեներական պաշտպանության ապահովումը⁷⁶⁴, որի նպատակով Նախարարությունը կազմակերպում և համակարգում է շենքերի անձնագրավորման, սեյսմակայունության ուղղությամբ իրականացվող հետազննական, ինչպես նաև գիտահետազոտական և փորձարարական ստորուկտորական աշխատանքները, ինչպես նաև ներդնում է շինարարությունում դրանց արդյունքները⁷⁶⁵: Շենքերի վթարայնության վերաբերյալ Նախարարության հայտնած տեղեկատվությունից կարելի է եզրակացնել, որ թեև որոշ վթարային շենքերի բնակիչների խնդիրները լուծում են ստացել⁷⁶⁶, իսկ որոշներն էլ դեռ ընթացքի մեջ են, այնուամենայնիվ բազմաթիվ անձինք շարունակում են բնակվել վթարային շենքերում՝ վտանգելով իրենց կյանքն ու առողջությունը: Բացի դրանից՝ Նախարարության գործառույթներից է նաև շինարարության ոլորտի պետական քաղաքականության մշակումը: Այս առումով նշենք, որ թեև սեյսմակայուն նախագծման շինարարական նորմերը թարմացվել են 1988 թվականից հետո, այնուամենայնիվ մինչ օրս շարունակում են գործել դեռևս 1980-ական թվականներին ընդունված շինարարական նորմերի ու կանոնների /ՇՈՒՄ/ մեծ մասը:

Առաջարկ. միջոցներ ձեռնարկել 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան շենքերի ամրացման կամ այդ շենքերում ապրող անձանց վերաբնակեցման, ՀՀ մարզերում բնակելի շենքերի ու դպրոցների շենքային պայմանների սեյսմիկ անվտանգության ապահովման ուղղությամբ, վերանայել հին շինարարական նորմերն ու կանոնները, քաղաքաշինական նոր միտումներին համապատասխան մշակել նորերը:

⁷⁶³ <http://www.armtimes.com/hy/read/60144> հրապարակված 24 Փետրվար, 2015թ.

⁷⁶⁴ ՀՀ քաղաքաշինության նախարարության կանոնադրության կետ 8(12), ՀՀ կառավարության՝ 25.06.2002թ. N 1294-Ն որոշում

⁷⁶⁵ ՀՀ քաղաքաշինության նախարարության կանոնադրության կետ 9(22), ՀՀ կառավարության՝ 25.06.2002թ. N 1294-Ն որոշում

⁷⁶⁶ ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի N 1260-Ա որոշման դրույթների համաձայն, 2014 թվականի ապրիլի 2-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից անցկացված՝ ՀՀ տարեկան պետական բյուջեներով նախատեսված միջոցների հաշվին ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում կառուցված NN 17, 22, 28 և 35 բազմաբնակարան շենքերի բնակարանների վիճակահանության բաշխման արդյունքներով լուծվել է Մարալիկ քաղաքի՝ քանդման ենթակա N 5 վթարային շենքի բնակիչների վերաբնակեցման՝ անվտանգ բնակելի տարածությամբ ապահովման խնդիրը: (հարցման պատասխանից)

4.2 ԵՐԵԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

2014 թվականին, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Պաշտպանի առաջարկությամբ Երևան քաղաքի ավագանու որոշումներով⁷⁶⁷ նախատեսվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար ավտոկայանատեղերի տուրքի վճարման արտոնություն՝ Երևանի քաղաքային համայնքի բյուջեի հաշվին, ինչպես նաև 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող կամ այդպիսի հաշմանդամներ կամ հաշմանդամի կարգավիճակ ունեցող երեխա տեղափոխող առնվազն 1 ավտոտրանսպորտային միջոցի կայանման համար հատված:
- Հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով Երևանի փողոցներում կառուցվել են շուրջ 671 թեքահարթակներ:
- Կենտրոն վարչական շրջանի տարածքում 2014 թվականի դեկտեմբերի 1-ից սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքներն իրականացվում են «Սանիտեկ» ՍՊ ընկերության կողմից, ինչի արդյունքում բարձրացել է ծառայության որակը:
- Ներկրվել են թվով 27 նոր «Հունդաի» մակնիշի քաղաքային ավտոբուսներ, որոնց շահագործման արդյունքում, ընդհանուր առմամբ, միկրոավտոբուսների քանակը կրճատվել է շուրջ 100 միավորով:

Առկա խնդիրներն ու թերությունները

4.2.1 Հստակ օրենսդրական չափորոշիչների բացակայության պատճառով Քաղաքապետարանը շարունակել է տարբերակված մոտեցում ցուցաբերել ինքնակամ շինությունների օրինականացման հարցում՝ մի դեպքում քանդելով շինությունը, մյուս դեպքում՝ թույլատրելով այն օրինականացնել:

Արդեն մի քանի տարի Պաշտպանի կողմից բարձրաձայնվում է ինքնակամ շինարարության ոլորտում Քաղաքապետարանի կողմից տարբերակված մոտեցում

⁷⁶⁷ ՀՀ Երևանի քաղաքի ավագանու 24.01.2014 թվականի թիվ 190-Ն որոշում, 25.12.2012 թվականի թիվ 561-Ն որոշում

ցուցաբերելու պրակտիկայի խնդիրը: Նշվածը հիմնականում պայմանավորված է ինքնակամ շինությունների օրինականացման որոշման հարցում հստակ և թափանցիկ պահանջների բացակայությամբ⁷⁶⁸, ինչի հետևանքով որոշում կայացնելիս Քաղաքապետարանին տրված է լայն հայեցողություն: Նման հայեցողությունը շատ դեպքերում առաջացրել է կոռուպցիոն ռիսկեր: Այսպես, քաղաքացիները բազմաթիվ գործերով նշել են, որ նույնանման հանգամանքների դեպքում մեկի ինքնակամ շինությունը քանդվել է, իսկ մյուսինը՝ օրինականացվել Քաղաքապետարանի կողմից: Օրինակ՝ մեզ հայտնած դեպքերից մեկով քաղաքացի Ա.Ա.-ն 2012 թվականից մինչ օրս բազմիցս դիմել է Քաղաքապետարան մեկ այլ՝ քաղաքացի Բ.Բ.-ի կողմից ինքնակամ իրականացվող շինարարական աշխատանքների (ինքնակամ շինության կառուցում) հետևանքով իրեն սեփականության իրավունքով պատկանող նույն հասցեի տան ճանապարհի փակման խնդրով, սակայն ստացել է պատասխաններ ոչ թե վերոնշյալ ինքնակամ կառույցի, այլ ինչ-որ պատի քանդման վերաբերյալ, որը, դիմումատուի պնդմամբ, կապ չունի իր պահանջի հետ: Հետագայում Քաղաքապետարանը հայտնել է, որ բողոքի առարկա հանդիսացող շինությունը ենթակա է օրինականացման օրենսդրությամբ սահմանված կարգով⁷⁶⁹: Քաղաքացին շինարարական աշխատանքների ողջ ընթացքում բազմիցս դիմել է Քաղաքապետարան՝ հայտնելով, որ տվյալ ինքնակամ կառույցը խախտում է իր իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, խնդրել է միջոցներ ձեռնարկել ինքնակամ շինարարության դեպքի կանխարգելման, կասեցման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ, սակայն Քաղաքապետարանը շարունակել է անգործություն դրսևորել վերոնշյալ խախտումը վերացնելու ուղղությամբ: Այս համատեքստում նշենք, որ ըստ Քաղաքապետարանի տրամադրած տվյալների՝ ինքնակամ շինարարության և հողազավթումների դեպքերի վերաբերյալ ստացված ահազանգերի,⁷⁷⁰ պարբերաբար կատարված շրջայցերի արդյունքում բացահայտվել կամ հայտնաբերվել են թվով 346 իրավախախտման դեպքեր, և 121 դեպքերում ինքնակամ շինությունները քանդվել և հողազավթումները վերացվել են: Մինչդեռ, նշված գործառույթը պետք է հստակ կանոնակարգված և կանխատեսելի լինի քաղաքացիների համար, քանի որ համայնքի ղեկավարի՝ տվյալ դեպքում Քաղաքապետի լիազորությունների մեջ է մտնում ինքնակամ շինարարության դեպքերի

⁷⁶⁸ Ըստ ՀՀ կառավարության 18.06.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները

ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

⁷⁶⁹ ՀՀ կառավարության 18.06.2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշում

⁷⁷⁰ Ըստ Քաղաքապետարանի ինքնակամ շինարարության և հողազավթումների դեպքերի հետ կապված առաջվել է շուրջ 550 ահազանգ, որոնց մի մասը չի համապատասխանել իրականությանը (օրինակ, կատարվել են այնպիսի աշխատանքներ, որոնց իրականացման համար չի պահանջվում շինարարության թույլտվություն):

կանխարգելումը, կասեցումը և դրանց հետևանքների վերացման ապահովումը:

Առաջարկ. սահմանել ինքնակամ կառույցների օրինականացման հստակ և թափանցիկ պահանջներ՝ սահմանափակելու համայնքներին տրված լայն հայեցողությունը և վերացնելու տարբերակված մոտեցման դեպքերը, վերհանել ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը, նման դեպքերը փոխանցել պատկան մարմիններին:

4.2.2 Շարունակում են բողոքներ ստացվել գիշերային ակումբների, զվարճանքի այլ վայրերի կողմից երեկոյան և գիշերային ժամերին հարակից տարածքների բնակչությանը անհանգստություն պատճառելու, քաղաքացիների հանգստի իրավունքը խախտելու վերաբերյալ:

2014 թվականին արձանագրվել են 40 բողոքներ այն մասին, որ բնակելի շենքերի հարևանությամբ գտնվող գիշերային ակումբները և զվարճանքի այլ վայրերը երեկոյան և գիշերային ժամերին իրենց գործունեության ընթացքում ստեղծվող աղմուկով անհանգստություն են պատճառել շենքերի և հարակից տարածքների բնակչությանը՝ խաթարելով վերջիններիս անդորրը⁷⁷¹: Այնինչ, Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք⁷⁷²: Ավելին, մարդու հանգստի իրավունքն ավելի լայն բովանդակություն ունի. այն ոչ թե աշխատանքային ոլորտի կամ աշխատանքի իրավունքին հարակից իրավունք է, այլ սոցիալական իրավունք, քանի որ ապահովում է հասարակության և նրա անդամների սոցիալ-կենսաբանական, բնական պահանջմունքները: Հանգստի իրավունքի սուբյեկտներ են ոչ միայն աշխատանքային պայմանագրով աշխատանքներ կատարող անձինք, ովքեր հանդիսանում են աշխատանքային իրավունքի սուբյեկտներ, այսինքն՝ աշխատող, այլև ֆիզիկական ուժ և մտավոր ունակություններ դրսևորող բոլոր անձինք⁷⁷³: Բացի դրանից՝ տվյալ խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) մի շարք որոշումներում արտահայտած դիրքորոշման համաձայն՝ թեև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) ուղղակիորեն չի նախատեսում խաղաղ շրջակա միջավայր ունենալու իրավունք, այնուամենայնիվ, այն դեպքերում, երբ աղմուկը լուրջ ներգործություն է ունենում անհատի վրա, կարող է առաջանալ ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման վտանգ:⁷⁷⁴ Օրինակ, ըստ ՄԻԵԴ-ի՝ տան հարևանությամբ գործող ակումբի չափազանց բարձր աղմուկը կարող է հանգեցնել անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի խախտման, և, հետևաբար, պետության կողմից ՄԻԵԿ-ով ստանձնած

⁷⁷¹ Աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակները նախատեսված են ՀՀ առողջապահության նախարարության՝ 06.03.2002 թվականի թիվ 138 հրամանով:

⁷⁷² ՀՀ Սահմանադրություն, հոդված 33

⁷⁷³ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի), Եր.: «Իրավունք», 2010 թվական:

⁷⁷⁴ *Oluic v. Croatia (2010)*, *Hatton and Others, López Ostra v. Spain (1994)*, *Powell and Rayner v. the United Kingdom (1990)*, and *Furlepa v. Poland (2008)*, *Moreno Gomez v. Spain (2004)*.

պարտավորության չկատարման⁷⁷⁵: Ստացվում է, որ պետությունը ոչ միայն պարտավոր է միջոցներ ձեռնարկել ուղղված բնակելի շենքերի հարևանությամբ գտնվող գիշերային ակումբներում և զվարճանքի այլ վայրերում չափազանց բարձր ադուլի վերացմանը, այլև ապահովել նշյալ երևույթների կանխարգելումը: Խնդրի վերաբերյալ Քաղաքապետարանից հայտնել են, որ արդեն շրջանառության մեջ է դրվել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում և այլ համապատասխան օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծային փաթեթ, որով, մասնավորապես, նախատեսվում է արգելել հեստապարային կազմակերպությունների, սաունաների և զվարճանքի օբյեկտների տեղակայումը բազմաբնակարան շենքերում: Այնինչ, նախագծային փաթեթը 2014 թվականի ընթացքում չի ներկայացվել ՀՀ կառավարությանը, ինչի հետևանքով վերոնշյալ խնդիրը փաստացի շարունակել է մնալ չլուծված:

Առաջարկ. ադուլի սահմանային թույլատրելի մակարդակի խախտման դեպքերում համապատասխան անձանց ենթարկել պատասխանատվության, «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում և այլ համապատասխան օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծային փաթեթը հնարավորինս սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ կառավարություն, այնուհետև գործնականում խստորեն վերահսկել դրա իրագործումը:

4.2.3 Դեռևս 2013 թվականին Պաշտպանի կողմից բարձրաձայնվել և մինչ օրս չի լուծվել մանկապարտեզների գերբեռնվածության խնդիրը, որի արդյունքում բազմաթիվ երեխաներ զրկվում են մանկապարտեզ հաճախելու իրավունքից:

2011 թվականի ապրիլի 1-ից Երևանի քաղաքապետի որոշման հիման վրա Երևան քաղաքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի նախադպրոցական կրթությունը դարձավ անվճար⁷⁷⁶, ինչն էլ հանգեցրեց մանկապարտեզներում երեխաների թվի կտրուկ աճի և առաջացրեց երկու տեսակի գերբեռնվածություն. ա) գերբեռնվածություն առհասարակ մանկապարտեզում, քանի որ սկսեցին մանկապարտեզ հաճախել ցանկացող երեխաների մեծ հերթեր գոյանալ, բ) գերբեռնվածությունը խմբերում, քանի որ երեխաների թիվը մեկ խմբում հասնում է 35-40-ի և ավելի: Նշենք, որ երեխաների առավելագույն քանակը մանկապարտեզի խմբերում սահմանված է 30-ը⁷⁷⁷: Դեռևս 2013 թվականին Քաղաքապետարանից հայտնել են, որ խմբերում երեխաների թիվը հնարավորինս համապատասխանեցվել է սահմանված չափորոշիչին, և այն չի գերազանցում 32-ը⁷⁷⁸: Այնուամենայնիվ, խմբերում երեխաների թվի կրճատմամբ մանկապարտեզների գերբեռնվածության խնդիրը, ըստ

⁷⁷⁵ *Oluic v. Croatia (2010)*

⁷⁷⁶ Երևանի քաղաքապետի՝ 31.03.2011 թվականի թիվ 1101-Ա որոշում

⁷⁷⁷ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թվականի թիվ 29-Ն հրաման

⁷⁷⁸ Ընդ որում, ըստ Քաղաքապետարանի ներկայացուցիչների, քաղաքապետը թույլ է տվել, որպեսզի խմբերում 32 երեխա լինի սահմանված 30-ի փոխարեն, հաշվի առնելով գերբեռնվածությունը, սակայն նույնիսկ այս թույլտվությունը իրավական որևէ ձևակերպում չունի:

էութեան, չի լուծվել: Մասնավորապէս, բազմաթիվ երեխաներ տարիներ շարունակ ընդգրկված են մնում հերթացուցակներում և հասնում են դպրոցական տարիքի՝ այդպէս էլ հնարավորություն չունենալով ստանալու նախադպրոցական կրթություն⁷⁷⁹: Գերբեռնվածութեան խնդրի լուծման անհնարինությունը Քաղաքապետարանը պատճառաբանել է նրանով, որ տարբեր ժամանակահատվածներում մանկապարտեզների շենքերից տարածքներ են հանձնվել այլ սուբյեկտների՝ անհատույց օգտագործման և վարձակալութեան, և դրանք կարելի է վերադարձնել միայն պայմանագրերի ժամկետների ավարտից հետո: Նշվածի կապակցությամբ Պաշտպանի կողմից ուսումնասիրվել են Քաղաքապետարանի կողմից տրամադրված վարձակալութեան և անհատույց օգտագործման հանձնված 82 տարածքների ցանկը և ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված անհատույց օգտագործման և վարձակալութեան պայմանագրերի ցանկը: Կատարված ուսումնասիրությունից պարզվել է հետևյալը.

ա. Քաղաքապետարանի կողմից անհատույց օգտագործման կամ վարձակալութեան են հանձնվել 82 տարածքներ, որոնցից միայն 34-ի վերաբերյալ են կնքվել անհատույց օգտագործման և վարձակալութեան պայմանագրեր և իրականացվել է դրանցից ծագող իրավունքների պետական գրանցում: Ընդ որում, որոշ տարածքներ այլ սուբյեկտների են տրամադրվել առանց որևէ պայմանագիր կնքելու:

բ. Կնքվել են պայմանագրեր, սակայն ՀՀ ԿԱ Կադաստրի պետական կոմիտեում դրանցից ծագող իրավունքների պետական գրանցում չի իրականացվել հետևյալ սուբյեկտների հետ. 13-ը՝ համատիրությունների, 5-ը՝ հասարակական տարբեր կազմակերպությունների, 4-ը՝ բարեգործական կազմակերպությունների, 1-ը՝ կրոնական կազմակերպութեան հետ: Նման կերպ հանձնված մի շարք տարածքներ օգտագործվում են որպէս գրադարաններ, մշակույթի տուն, արտադրամաս, արվեստանոց և այլն:

գ. 3 մանկապարտեզների տարածքներ օգտագործվում են որպէս բնակելի տներ, 2-ը՝ նախկին տնօրենների կողմից, 1-ը՝ ներկա տնօրենի կողմից 1-ը՝ ազատամարտիկի, այն էլ այն դեպքում, երբ մանկապարտեզն ունենալով մեծ հերթացուցակ նույնիսկ վերանորոգման ենթակա որևէ այլ ազատ տարածք չունի:

դ. 5 պայմանագրեր կնքվել են մասնավոր կազմակերպությունների հետ, որոնց կողմից ձեռք բերված տարածքներն օգտագործվում են որպէս մասնավոր կրթական հաստատություններ այնպիսի մանկապարտեզներում, որտեղ հերթագրված երեխաների թիվը բավականին մեծ է, իսկ մանկապարտեզն այլ ազատ տարածքներ չունի նոր խմբեր բացելու համար:

Պաշտպանի ներկայացուցչի կողմից մանկապարտեզներ իրականացված այցելությունների արդյունքում պարզվել է, որ հիշյալ տարածքների հանձնումն անհատույց օգտագործման և վարձակալութեան չի հանդիսանում մանկապարտեզների գերբեռնվածութեան միակ պատճառը. կան մի շարք մանկապարտեզներ, որոնք ազատ տարածքներ ունեն և վերանորոգման դեպքում կարող են օգտագործվել նոր խմբեր

⁷⁷⁹ Օրինակ՝ Պաշտպանի ներկայացուցչի այցելութեան ընթացքում պարզվել է, որ թիվ 92 մանկապարտեզում հաճախում է 160 երեխա, հերթագրված է՝ 150, թիվ 77 մանկապարտեզ հաճախում է 224 երեխա, հերթագրված է 130, թիվ 139 մանկապարտեզ հաճախում է 220 երեխա, հերթագրված է՝ 400 և այլն:

ստեղծելու նպատակով: Որոշ մանկապարտեզներ դիմել են Քաղաքապետարան կամ թաղապետարան նոր խմբեր ստեղծելու խնդրանքով, սակայն մերժում են ստացել, ինչը հաստատվել է նաև Քաղաքապետի ներկայացուցիչների կողմից և պատճառաբանվել ֆինանսական միջոցների բացակայությամբ:

Առաջարկ. ձեռնարկել հրատապ միջոցներ մանկապարտեզների՝ անհատույց օգտագործման և վարձակալության հանձնված տարածքները մանկապարտեզներին վերադարձնելու, ինչպես նաև յուրաքանչյուր մանկապարտեզում անհրաժեշտ քանակի խմբեր բացելու ուղղությամբ:

4.2.4 Երևանում ավտոտնակների, կրպակների և այլ կառույցների օրինականացման գործընթացում առկա են կոռուպցիոն դրսևորումներ, ինչը հանգեցնում է անձանց սեփականության իրավունքի խախտմանը:

Արձանագրվել են դեպքեր, երբ Քաղաքապետարանն անհիմն կերպով ձգձգել է տարբեր կառույցների (ավտոտնակներ, կրպակների և այլն) սեփականաշնորհման գործընթացը՝ պատճառաբանելով, թե Երևանի որոշ վարչական շրջանների քաղաքաշինական գոտիավորման նախագծեր վերջնական հստակեցման կարիք ունեն⁷⁸⁰: Այսպես, օրինակ, դիմումներից մեկով Արաբկիրի բնակիչներից մեկը դեռևս 2007 թվականին դիմել էր Քաղաքապետարան իր կողմից օգտագործվող ավտոտնակի օրինականացման խնդրանքով, Քաղաքապետարանի համապատասխան բաժնից ստացել էր հարկային հաշիվ, պահանջված գումարը վճարելու համար, սակայն ավտոտնակի սեփականաշնորհման գործընթացը մինչ օրս չի ավարտվել:⁷⁸¹ Քաղաքապետարանը սեփականաշնորհման ձգձգումն այս դեպքում պատճառաբանել է Արաբկիր վարչական շրջանի տարածքներում գոտիավորման նախագծերի վերջնական հստակեցման անհրաժեշտությամբ, այնինչ տվյալ տարածքի քաղաքաշինական գոտիավորման նախագիծը հաստատվել է դեռևս 2007 թվականին:⁷⁸² Մեկ այլ դեպքով Քաղաքապետարանի կողմից կառույցի սեփականաշնորհումը ձգձգելու պատճառաբանությունը եղել է այն, որ 2009 թվականին Երևանի կարգավիճակի փոփոխությամբ⁷⁸³ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել բնակավայրերի ծրագրային փաստաթղթերը, այդ թվում՝ գոտիավորման նախագծերը համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին: Նշենք, որ Երևան քաղաքի առանձին տարածքների գոտիավորման նախագծերի, ինչպես նաև նախագծային առաջադրանքների վերաբերյալ որոշումն ընդունում է Երևան քաղաքի ավագանին⁷⁸⁴: Սակայն հատկանշական է, որ 2013 թվականին ավագանու ընդունած

⁷⁸⁰ Գոտիավորման նախագիծն այն փաստաթուղթն է, որի հիման վրա Երևանի վարչական շրջաններում տրվում են հողամասեր, ինչպես նաև շենքերի ու շինությունների կառուցման թույլտվություն:

⁷⁸¹ <http://bit.ly/16xUhJ2>

⁷⁸² Երևանի քաղաքապետի 12.12.2007 թվականի թիվ 5412-Ս որոշում

⁷⁸³ 2009 թվականին Երևանի կարգավիճակը մարզից փոխվեց համայնքի: Տես՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 2:

⁷⁸⁴ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ

որոշման մեջ⁷⁸⁵ Երևան քաղաքի զարգացման 2014-2017 թվականների քառամյա ծրագրով Արաբկիր վարչական շրջանի գոտիավորման նախագծերի մշակման կամ փոփոխման վերաբերյալ որևէ դրույթ նախատեսված չէ: Այսինքն, ավագանու վերջին որոշմամբ նշված վարչական շրջանի գոտիավորման սխեմաները փոփոխման ենթակա չեն, ուստի բացակայում է բնակավայրերի ծրագրային փաստաթղթերի գործող օրենսդրության պահանջներին համապատասխանեցման անհրաժեշտությունը: Այլ դեպքով Քաղաքապետարանը սեփականաշնորհման ձգձգումը հիմնավորել է նաև բակային տարածքները ինքնակամ կառուցված և ժամանակավոր շինություններից ազատելու անհրաժեշտությամբ: Նման հիմնավորումն ընդունելի է միայն այն դեպքում, երբ տվյալ գործընթացը չի իրականացվում երկակի ստանդարտներով և վերաբերում է ինքնակամ կամ ժամանակավոր կառուցված բոլոր շինություններին, մինչդեռ, քաղաքացիներին բազմիցս դժգոհել են, որ առանձին անձանց պատկանող շինությունները չեն քանդվել⁷⁸⁶: Այնինչ, վարչարարության կամայականության արգելքի սկզբունքի համաձայն՝ վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք⁷⁸⁷: Վերջինի դեպքի առնչությամբ Պաշտպանի կողմից կայացվել է մարդու իրավունքների խախտման մասին որոշում: Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով մի շարք քաղաքացիներ հաճախ չեն կարողացել սեփականացնել իրենց կողմից օգտագործվող կառույցները և ստիպված են եղել սպասել տարիներ կամ նույնիսկ հարցի կարգավորումն ապահովել՝ կոռուպցիոն միջոցների դիմելով⁷⁸⁸:

Առաջարկ. քաղաքացիների կողմից օգտագործվող կառույցների օրինականացման ուղղությամբ անհապաղ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, օրինականացման գործընթացն իրականացնել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, բացառել կոռուպցիոն ռիսկերը:

4.2.5 Դեռևս առկա են բազմաթիվ թերություններ Երևանում հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպման ոլորտում, այդ թվում՝ վարորդների ոչ պատշաճ վերաբերմունքն ուղևորների նկատմամբ, մեքենայի ներսում ծխելը, տրանսպորտային միջոցների անսարքությունն ու կեղտոտ պայմանները, գերբեռնվածությունը և այլն:

Տարիներ շարունակ քաղաքացիներն իրենց դժգոհություններն են բարձրաձայնում Երևանի հասարակական տրանսպորտի սպասարկման ցածր որակի վերաբերյալ: Բազմաթիվ ահազանգեր են ստացվել երթուղային տաքսիների և ավտոբուսների վարորդների վատ վերաբերմունքի, անսարք տրանսպորտային միջոցների, դրա հետ միասին նաև տրանսպորտային միջոցների գերբեռնվածության և այլ խնդիրների վերաբերյալ: Նման թերությունների հետ մեկտեղ քաղաքացիները շարունակաբար

⁷⁸⁵ Երևան քաղաքի ավագանու 10.12.2013 թվականի թիվ 85-Ն որոշում

⁷⁸⁶ <http://bit.ly/1EL3EDR>

⁷⁸⁷ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 7

⁷⁸⁸ http://www.ombuds.am/library/view_news/article/1167

դժգոհել են հասարակական տրանսպորտի վարորդների կողմից տրանսպորտային միջոցը վարելու ընթացքում ծխելու վերաբերյալ: Առանձին դեպքում, երբ ուղևորը քաղաքավարի խնդրել է վարորդին դադարեցնել ծխելը, վերջինս կոպտել է ուղևորին և առաջարկել իջնել երթուղայինից:⁷⁸⁹ Ընդհանուր առմամբ, ըստ հարցումների՝ Երևանի բնակիչները Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի գործունեությունը գնահատում են միջին, իսկ երթուղային տաքսիների ծանրաբեռնվածության և տեխնիկական վիճակը՝ միջինից ցածր:⁷⁹⁰ Մակայն, նշված թերությունների հետ մեկտեղ շարունակվել է առավել խնդրահարույց մնալ Երևանի տարբեր թաղամասերում (հիմնականում ծայրամասերում) հասարակական տրանսպորտի սպասարկման որակի վերաբերյալ դժգոհությունները: 2014 թվականի ընթացքում հասարակական տրանսպորտի աշխատանքի հետ կապված բնակիչների կողմից ստացված մի շարք ահազանգերին Քաղաքապետարանը թեև փորձել է լուծում տալ, երկարացնելով երթուղիների ուղեգծերը, այնուամենայնիվ, շատ դեպքերում բնակիչների բողոքները վերաբերել են ոչ թե երթուղիների կարճ ուղեգծերին, այլ սպասարկման որակին: Օրինակ՝ Նուբարաշենի բնակիչները բողոքել են, որ իրենց թաղամասից ընդամենը մեկ թիվ 16 ավտոբուսն է գնում Կենտրոն համայնք, ինչը հանգեցնում է երթուղու սպասարկման դանդաղեցման, ինչի հետևանքով ուսանողները դասից ուշանում են, աշխատողները տուն չեն կարողանում վերադառնալ և այլն: Թիվ 16 ավտոբուսը կիրակի օրերին չի աշխատում, իսկ թիվ 47 երթուղայինն այդ օրերին ըստ ցանկության է աշխատում՝ երկու ժամը մեկ՝ պատճառաբանելով այդ օրերին ուղևորների սակավաթվությամբ:⁷⁹¹ Նշենք, որ երթուղիների ուղեգծերի երկարացումը՝ ոչ բավարար քանակի երթուղայինների դեպքում առաջացրել է նաև երթուղու սպասարկման դանդաղեցում:

Առաջարկ. բարձրացնել հասարակական տրանսպորտի սպասարկման որակը՝ վերահսկելով վարորդների պատշաճ վարքագիծը, տրանսպորտային միջոցների սարքին լինելը, ապահովելով ավտոբուսների պատշաճ քանակ, պարբերաբար նախաձեռնելով տրանսպորտի սպասարկման որակի ստուգումներ:

4.2.6 Չնայած ցուրտ եղանակին՝ մի շարք դպրոցներում ջեռուցումը ուշ է միացվել, ինչի հետևանքով երեխաները պարապել են ցուրտ դասասենյակներում, սեփական միջոցներով ջեռուցման կազմակերպման նպատակով սկսվել է անօրինական դրամահավաք:

Մի շարք աշակերտների ծնողներից ստացվել են բողոքներ այն մասին, որ Երևանի մի շարք դպրոցներում ջեռուցման տեղային համակարգերը Քաղաքապետարանի կողմից նախընտրելի օրն են միացվել, թեև դպրոցները ջեռուցելու անհրաժեշտությունը, պայմանավորված եղանակային ցուրտ պայմաններով, ծագել էր Քաղաքապետարանի կողմից նախընտրելի ժամկետից շուտ: Արդյունքում, ծնողների պնդմամբ երեխաները ստիպված են եղել դասապրոցեսին մասնակցել վերարկուներով, իսկ ջեռուցման

⁷⁸⁹ <https://www.youtube.com/watch?v=QViAeNlfnok#t=40>

⁷⁹⁰ <http://gallup.am/wp-content/uploads/2015/01/GIA-Yerevan-Police-2014.pdf>

⁷⁹¹ <http://bit.ly/1LUg8uY>, հրապարակված է 9.10.2014 թվականին

բացակայության հետևանքով մի քանիսը հիվանդացել են և բացակայել դասերից: Այնուամենայնիվ, դպրոցների ջեռուցումը տեղային համակարգերի միջոցով Քաղաքապետարանի որոշմամբ մեկնարկել է միայն 2014 թվականի նոյեմբերի 15-ից⁷⁹²: Նշվածի վերաբերյալ ծնողների բողոքների կապակցությամբ Քաղաքապետարանը հանրությանը պարզաբանել է, որ դպրոցների ջեռուցումը սկսվում է ոչ թե նախապես որոշված ստույգ ամսաթվին, այլ այն ժամանակ, երբ դպրոցում այլևս հնարավոր չէ բնական միջոցներով ապահովել սենյակային ջերմաստիճանը⁷⁹³: Հատկանշական է, որ դպրոցների և մանկապարտեզների ջեռուցումը նոյեմբերի 15-ից սկսելու համար առկա չէ օրենսդրական հիմք, միաժամանակ, սահմանված չէ նաև այդ նպատակով եղանակային կանխատեսումների պարբերաբար ստուգման օրենսդրական պահանջ, ինչի հետևանքով էլ Քաղաքապետարանը ջեռուցումը մեկնարկում է ամենամյա սովորույթի ուժով նոյեմբերի 15-ին: Այսպես, դպրոցների ջեռուցումը 2014 թվականի նոյեմբերի 15-ին միացնելու որոշման կայացման համար Քաղաքապետարանը կարող էր ուսումնասիրել եղանակային կանխատեսումները 01.11.2014-15.11.2014 թվականների ժամանակաշրջանի համար՝ պարզելու համար ջեռուցումը ժամկետից շուտ միացնելու անհրաժեշտության հավանականությունը: Փոխարենը, Քաղաքապետարանը ձմռան շրջանում մանկապարտեզներում և դպրոցներում սանիտարական նորմերի պահանջներին համապատասխան ջերմաստիճանի ապահովումն իրականացնում է Քաղաքապետարանի աշխատանքային ծրագրով (հանրակրթության վարչության մասով) նախատեսված վերահսկողական գործառնությունների միջոցով: Եվ չնայած նշված վերահսկողական գործողություններին՝ դպրոցների ջեռուցման վերաբերյալ բողոքներ եղել են նոյեմբերի մեջ: Բացի դրանից՝ Քաղաքապետարանը հանրությանը պարզաբանել է, որ դպրոցում սենյակային ջերմաստիճան չապահովող տնօրենները կենթարկվեն պատասխանատվության⁷⁹⁴: Մինևս ժամանակ, Քաղաքապետարանի ներկայացուցիչը ՋԼՄ-ներին տրված հարցազրույցում նշել է, որ Քաղաքապետարանը պատրաստ է փոխհատուցել դպրոցի ջեռուցման դեպքում վճարվելիք հավելյալ գումարները՝ նշելով, որ Քաղաքապետարանը համաֆինանսավորում է ջեռուցումը, դպրոցը որևէ խնդիր չունի⁷⁹⁵: Այնուամենայնիվ, ծնողների հավաստմամբ՝ դպրոցներում տեղային ջեռուցումը, 2014 թվականին ևս միացվել է միայն նոյեմբերի 15-ին, իսկ մինչև նոյեմբերի 15-ը դասասենյակները էլեկտրական սալիկներով ջեռուցման ծախսերը հոգալու նպատակով դպրոցներում անցկացվել է անօրինական դրամահավաք: Մինչդեռ,

⁷⁹² <http://bit.ly/1zVh5OJ> , հրապարակված է 06.11.2014, <http://www.aravot.am/2014/11/05/512907/> , <http://www.lin.am/1473107.html?setoption=desktop&lang=arm>

⁷⁹³ ՀՀ առողջապահության նախարարի՝ 11.02.2002 թվականի թիվ 82 հրամանի համաձայն՝ դպրոցի տարածքներում, ելնելով կլիմայական պայմաններից, սահմանվում են հետևյալ ջերմաստիճանները. դասասենյակներում և առանձնասենյակներում՝ (+17)-(+20)°C, փայտամշակման ու մետաղամշակման արհեստանոցներում՝ (+16)-(+18)°C, մարզական դահլիճում՝ (+15)-(+17)°C, մարզադահլիճի հանդերձարանում՝ (+19)-(+23)°C, զանգվածային միջոցառումների դահլիճում՝ (+17)-(+20)°C-ից ոչ պակաս, գրադարանում, վարչական առանձնասենյակներում՝ (+17)-(+21)°C, բժշկի առանձնասենյակում՝ (+21)-(+23)°C, լվացարաններում՝ (+20)-(+23)°C, նախաարհուում, հանդերձարանում՝ (+16)-(+19)°C, գուգարաններում՝ (+17)-(+21)°C, ցնցուղարաններում՝ 25°C ոչ պակաս: <http://bit.ly/1CA0Ijv>

⁷⁹⁴ <http://bit.ly/1zVh5OJ> , հրապարակված է՝ 06.11.2014

⁷⁹⁵ <http://bit.ly/1zVh5OJ> , հրապարակված է՝ 06.11.2014

Քաղաքապետարանի տրամադրած տվյալներով՝ դպրոցներում անցկացվող դրամահավաքների վերաբերյալ բոլոր ահազանգերը չեն համապատասխանել իրականությանը⁷⁹⁶: Հատկանշական է, որ քիչ են դեպքերը, երբ դպրոցի ջեռուցումը իրականացվել է մինչև նոյեմբերի 15-ը առանց դրամահավաքի: Օրինակ Երևանի թիվ 120 հիմնական դպրոցում ջեռուցումը հնարավոր է եղել միացնել մինչև սահմանված ժամկետը, քանի որ դպրոցը գազի դիմաց նախորդ ձմեռ վճարած հավելավճար է ունեցել⁷⁹⁷: Նշվածից կարելի է եզրահանգել, որ եթե Քաղաքապետարանը համաֆինանսավորում է դպրոցների ջեռուցումը մինչև նոյեմբերի 15-ը, ապա ջեռուցման արժեքի մնացած՝ Քաղաքապետարանի կողմից չհամաֆինանսավորվող հատվածի վճարումը մնում է դպրոցի հոգածությանը, ինչն էլ շատ դեպքերում հանգեցնում է դրամահավաքության:

Առաջարկ. ուժեղացնել վերահսկողությունը դպրոցներում օրենսդրությամբ նախատեսված ջերմաստիճանը ապահովելու ուղղությամբ, բացառել դպրոցի վաղաժամկետ ջեռուցման ծախսի հոգածության համար իրականացվող անօրինական դրամահավաքի դեպքերը:

4.2.7 Մի շարք հանրակրթական դպրոցներում, ինչպես նաև առանձին մանկապարտեզներում սննդի կազմակերպման և իրացման հարցում բացահայտվել են լուրջ բացթողումներ⁷⁹⁸:

Քաղաքացիներից ստացված ահազանգերի հիման վրա Պաշտպանի աշխատակիցները 2014 թվականի հոկտեմբերին այցեր են կատարել Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող տարբեր վարչական շրջանների հանրակրթական դպրոցներ, ինչի ընթացքում դպրոցների բուֆետներում արձանագրվել են երեխաների առողջության համար վնասակար սննդատեսակների (գազավորված ըմպելիքներ, չիպսեր, ապխտած կամ կիսապխտած մսամթերքով բրդուճներ, սուրճ և այլն) իրացման դեպքեր⁷⁹⁹: Մի շարք սննդատեսակներ, հակառակ օրենսդրական պահանջի, չեն ունեցել արտադրության և պիտանիության ժամկետների, ինչպես նաև բաղադրության վերաբերյալ նշումներ⁸⁰⁰: Որոշ բուֆետների աշխատակիցներ չեն կրել սանիտարական մաքուր հագուստ, ինչը խախտում է սննդի ոլորտի աշխատողների անձնական հիգիենայի կանոնները, ինչպես նաև սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ

⁷⁹⁶Սույն Ձեկույցի իմաստով անօրինական դրամահավաք չեն դիտարկվում այն դեպքերը, երբ ծնողները/աշակերտները կամավոր, առանց ճնշման որևէ կերպ շնորհակալություն են հայտնել ուսուցիչներին, իսկ աշակերտների նկատմամբ վերջիններիս վերաբերմունքը կամ գիտելիքների գնահատումը պայմանավորված չէ նման քայլերի ակնկալիքով կամ իրականացմամբ:

⁷⁹⁷ <http://bit.ly/1zVh5OJ>, Հրապարակված է 06.11.2014

⁷⁹⁸Տվյալ ոլորտները կարգավորվում են ՀՀ առողջապահության նախարարի 01.11.2013 թվականի թիվ 70-Ն հրամանի դրույթներով և 09.04.2013 թվականի թիվ 874-Ս հրամանով; ՀՀ կառավարության 31.05.2007 թվականի թիվ 815-Ն որոշման N13 հավելվածի, ՀՀ առողջապահության նախարարի 11.02.2002 թվականի թիվ 82 հրամանի 9-րդ մասի, ՀՀ կառավարության 20.01.2011 թվականի թիվ 34-Ն որոշման պահանջներով:

⁷⁹⁹Տվյալ սննդատեսակների վաճառքը ուսումնական հաստատություններում արգելվում է ՀՀ առողջապահության նախարարի 06.06.2014 թվականի թիվ 32-Ն հրամանի 26-րդ կետով:

⁸⁰⁰ «Մանուսկրիպտի անվտանգության մասին» ՀՀ օրենք, 2014 թվական

պահանջները⁸⁰¹: Խնդրահարույց է նաև ոչ պիտանի հավի մսի մատակարարումը Նոր Նորքի թիվ 101, 116 և 118 մանկապարտեզներ, ինչի հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի և անհատ ձեռնարկատեր Էդվարդ Մխիթարյանի միջև մատակարարման պայմանագրի կնքումը⁸⁰²: Թեև մատակարարի հետ կնքված պայմանագիրը դեպքից հետո լուծարվել է և քայլեր են ձեռնարկվել համապատասխան պատժամիջոցների կիրառման նպատակով, այնուամենայնիվ Մանդամթերքի անվտանգության պետական ծառայությունը նշել է, որ անհատ ձեռնարկատեր Էդվարդ Մխիթարյանը ի սկզբանե գրանցված չի եղել Մանդամթերքի անվտանգության պետական ծառայությունում:⁸⁰³ Չնայած դրան, վերոնշյալ անձի հետ կնքվել է մանկապարտեզներին սննդամթերք մատակարարելու պայմանագիր⁸⁰⁴: Ըստ Քաղաքապետարանի տրամադրած տվյալների՝ դպրոցները, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի, հանդիսանում են պատվիրատուներ, և իրենք են կազմակերպում գնման գործընթացներ, իսկ քաղաքապետարանը վերահսկողական իրավասություն չունի այդ հաստատությունների գնման գործընթացների նկատմամբ: Չնայած նշվածին՝ Քաղաքապետը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի⁸⁰⁵ համաձայն, առևտրի և սպասարկման բնագավառում իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում: Պաշտպանի կողմից խնդրի բարձրաձայնելուց հետո Քաղաքապետարանից հայտնել են, որ անհնար է ամենօրյա հսկողություն իրականացնել քաղաքապետարանի ենթակայության տակ գործող 159 հիմնական դպրոցների, 161 մանկապարտեզների նկատմամբ և բացահայտել բոլոր խախտումները: Այնուամենայնիվ, ուսումնական հաստատությունների տնօրեններին հանձնարարական է տրվել խստիվ հետևել երեխաների սննդի կազմակերպմանն ուղղված օրենքի պահանջների կատարմանը և խախտումների մասին իրագեկել Քաղաքապետարանի համապատասխան պաշտոնատար անձանց:

Առաջարկ. վերահսկել դպրոցներում և մանկապարտեզներում սննդի մատակարարման պատշաճ կազմակերպումը կարգավորող իրավական ակտերի պահանջների կատարումը, հետևողական լինել հայտնաբերված խախտումների վերացման և հատկապես դրանց կանխման ուղղությամբ:

4.2.8 Մի շարք հանրակրթական դպրոցներում արձանագրվել են խնդիրներ՝ կապված բժշկական սպասարկման և սանիտարահիգիենիկ ոչ պատշաճ վիճակի հետ:

Պաշտպանի ներկայացուցիչների կողմից 2014 թվականի սեպտեմբեր ամսին Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում գործող մի շարք հանրակրթական դպրոցներ

⁸⁰¹ ՀՀ առողջապահության նախարարի 11.02.2002 թվականի թիվ 82 հրաման:

⁸⁰² <http://www.aysor.am/am/news/2014/08/14/edvard-mkhitaryan/832786>

⁸⁰³ <http://www.lragir.am/index/arm/0/country/view/102872>, «Մանդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք, հոդված 17

⁸⁰⁴ <http://www.lragir.am/index/arm/0/country/view/102872>, <http://www.lin.am/258290.html?fullsite>

⁸⁰⁵ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենքի 60-րդ հոդված

իրականացրած այցերի արդյունքում վերհանվել են որոշ թերություններ՝ կապված երեխաների բուժապասարկման պայմանների և բուժկետերի անհրաժեշտ պարագաներով հագեցվածության հետ: Մասնավորապես, հայտնաբերվել է լվացարանակոնքի բացակայություն բուժկետերում, բժշկի առանձնացված սենյակի բացակայություն, ոչ ստերիլ պայմաններում բժշկական գործիքների պահում, օրենսդրությամբ նախատեսված առանձին դեղերի բացակայություն և այլն: Թեև այցերն իրականացվել են երեխաների դասաժամերի ընթացքում, սակայն որոշ դպրոցների բուժկետեր փակ են եղել, իսկ բուժքույրը դպրոցի տարածքում չի եղել, ինչը չի բխում նշված ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջներից⁸⁰⁶: Նշենք, որ դպրոցներում երեխաների բուժօգնությունն ու սպասարկումը կազմակերպվում է համապատասխան տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից, և տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունն իր սպասարկման տարածքում գտնվող դպրոցներին ապահովում է առաջին բուժօգնության դեղորայքով և պարագաներով: Միաժամանակ, դպրոցներում աշակերտների բուժապասարկումը տեղում իրականացվում է դպրոցական բուժքրոջ կողմից տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատության հսկողության և պատասխանատվության ներքո⁸⁰⁷: Չնայած Քաղաքապետարանի կողմից ձեռնարկված միջոցներին՝ նշված խնդիրը որոշ դպրոցներում դեռևս չի լուծվել, իսկ Քաղաքապետարանը իր նախաձեռնությամբ չի իրականացրել բավարար մշտադիտարկումներ՝ նմանատիպ խնդիրները վերհանելու և վերացնելու նպատակով: Այնինչ, նշված խնդիրների առկայությունը վտանգում է երեխաների առողջությանը՝ զրկելով վերջիններիս անհրաժեշտության դեպքում ստանալու պատշաճ բուժօգնություն: *Առաջարկ.* **իրականացնել բավարար քանակի մշտադիտարկումներ, խստացնել վերահսկողությունը դպրոցներում բժշկական սպասարկման և սանիտարահիգիենիկ վիճակի վերաբերյալ խնդիրների վերհանման և բարելավման ուղղությամբ:**

4.2.9 Երևանի մի շարք դպրոցների շենքային և գույքային պայմանները եղել են անբավարար, ինչը կարող է բացասական անդրադառնալ երեխաների կրթության իրավունքի լիարժեք իրականացման վրա:

Երևանի մի շարք դպրոցներում շենքային և գույքային պայմանները խիստ անբավարար են և հիմնանորոգման կարիք ունեն: Օրինակ, Երևանի թիվ 64, 69, 36, 152, 158, 48 դպրոցներում շենքերի ընդհանուր վիճակը, սանհանգույցները, մարզադահլիճները, հանդիսությունների դահլիճը և ընդհանուր գույքը կապիտալ վերանորոգման կարիք ունեն: Բացի դրանից՝ մի շարք դպրոցների մարզադահլիճներում չկան մարզական գույք

⁸⁰⁶ ՀՀ առողջապահության նախարարի 11.02.2002 թվականի «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և Պահպանման» N 2.Iii.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 82 հրաման, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի 09.04.2013 թվականի թիվ 874-Ս հրաման:

⁸⁰⁷ ՀՀ առողջապահության նախարարի 01.11.2013 թվականի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 70-Ն հրաման:

և պարագաներ⁸⁰⁸: Երևանի Վ. Բելինսկու անվան թիվ 38 հիմնական դպրոցն ունի մարզադահլիճի, սանհանգույցի, տանիքի և այլ վերանորոգման կարիք⁸⁰⁹: Հ. Սահյանի անվան թիվ 70 հիմնական դպրոցի տանիքի անբարեկարգ վիճակում գտնվելու պատճառով անձրևաջուրը լցվում է դասասենյակներ, խափանված է դպրոցի ջեռուցման համակարգը⁸¹⁰: Ալ. Մյասնիկյանի անվան թիվ 66 հիմնական դպրոցում անմխիթար վիճակում են դռներն ու պատուհանները, դպրոցը չունի տեղային ջեռուցում⁸¹¹: Մուշեղ Մխոյանի անվան թիվ 68 հիմնական դպրոցի հիմնական ուսումնական մասնաշենքի տեխնիկական վիճակը ընդհանուր առմամբ համարվում է անբավարար և դրա վնասվածության մակարդակը դասվում է 3-րդ աստիճանի, վատ վիճակում է նաև դպրոցի տանիքը, սպորտային դահլիճը և այլն⁸¹²: Մուշեղ Իշխանի անվան թիվ 5 կրթահամալիրի շենքը չի հիմնանորոգվել իր կառուցման օրվանից (1937 թվական), և ներկայումս դպրոցի շենքը գտնվում է ծայրահեղ վատ վիճակում⁸¹³: Հարկ է նշել, որ նման անբարեկարգ դպրոցներում բազմաթիվ անհարմարություններ են առաջանում երեխաների դասապրոցեսի կազմակերպման համար (օրինակ, դասասենյակ լցվող անձրևաջրի պատճառով), ինչը բացասաբար է անդրադառնում նրանց կրթության իրավունքի իրականացման վրա: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն ևս անդրադարձել է այս խնդրին, նշելով որ չնայած ուսումնական հաստատությունների բարելավմանն ուղղված բյուջեի համապատասխան հատկացումներին՝ շատ դպրոցների ենթակառուցվածքներ գտնվում են անմխիթար վիճակում: Կոմիտեն նաև առաջարկել է առավել արդյունավետ կերպով օգտագործել ուսումնական հաստատությունների բարելավման համար հատկացված ֆինանսական միջոցները:⁸¹⁴

Առաջարկ. բարելավել առավել վատ վիճակում գտնվող դպրոցների շենքային և գույքային պայմանները, բարձրացնել դպրոցներին հատկացվող ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման արդյունավետությունը:

4.2.10 Երևան քաղաքում դեռևս լիարժեք չի ապահովվել հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման իրավունքը, այդ թվում՝ բավարար քայլեր չեն ձեռնարկվել հասարակական տրասնպորտի և կառուցվող ու վերակառուցվող շենքերի, շինությունների մատչելիության ապահովման ուղղությամբ:

Դեռևս 2011 թվականից Պաշտպանի կողմից բարձրաձայնվել է այն խնդիրը, որ Երևան քաղաքում լիարժեք չի ապահովվում հաշմանդամություն ունեցող անձանց ազատ

⁸⁰⁸ Բյուջետային թափանցիկության և ֆինանսական հաշվետվողականության ընդլայնումը Երևանի հանրակրթության համակարգում, Երևան 2014, <http://bit.ly/1KFff65>

⁸⁰⁹ <http://www.ognirdprocid.am/school/70/>

⁸¹⁰ <http://www.ognirdprocid.am/school/101/>

⁸¹¹ <http://www.ognirdprocid.am/school/97/>

⁸¹² <http://www.ognirdprocid.am/school/99/>

⁸¹³ <http://www.ognirdprocid.am/school/38/>

⁸¹⁴ Committee on Economic, Social and Cultural Rights Concluding observations on the combined second and third periodic reports of Armenia* E/C.12/ARM/CO/2-3

տեղաշարժվելու իրավունքը: Մասնավորապես, տրանսպորտային միջոցները, տարբեր փողոցները, բազմաթիվ շինություններ առ այսօր հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման համար: Ողջունելի է, որ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտային միջոցները մատչելի դարձնելու նպատակով թվով 10 քաղաքային ավտոբուսների վրա հատուկ վերելակային հարմարանքներ տեղադրելու աշխատանքներ են տարվել, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Երևանում բնակվում է հաշմանդամություն ունեցող շուրջ 3000 մարդ, անհրաժեշտ է հետագայում ավելացնել մատչելի տրանսպորտային միջոցների թիվը: Ինչ վերաբերում է տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժմանը, ապա՝ ըստ Քաղաքապետարանի՝ այդ անձանց համար հասարակական տրանսպորտը մատչելի և հարմարավետ դարձնելու նպատակով Երևանի ներքաղաքային կանոնավոր փոխադրումների երթուղիներում շահագործվող թվով 200 «Հայգեր» մակնիշի ավտոբուսների ուղեւորահներում տեղադրված են ավտոբուսի կանգառման անհրաժեշտության մասին նախազգուշացնող սեղմվող կոճակներ: Նշենք, որ այդ կոճակները լավագույն դեպքում կարող են օգտակար լինել միայն խոսքի դժվարություն ունեցող անձանց համար: Իսկ տեսողության խնդիրներ ունեցող անձանց հասարակական տրանսպորտով ազատ տեղաշարժման համար ընդհանրապես առկա չեն արդյունավետ միջոցներ: Մասնավորապես, տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցներում չկան ձայնային ազդանշաններ, որոնք ուղևորներին կնախազգուշացնեն հաջորդող կանգառի մասին: Երևանի մետրոպոլիտենը նույնպես ընդհանրապես հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար:⁸¹⁵ Մետրոպոլիտենի մուտքերը կահավորված են թեքահարթակներով, սակայն հաշմանդամություն ունեցող (հենաշարժական համակարգի, տեսողության կամ լսողության հետ խնդիրներ ունեցող) անձը չի կարող օգտվել Երևանի մետրոպոլիտենից, քանի որ չկան, օրինակ, հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ նախատեսված վերելակներ, պլատֆորմի վրա չկան ռելիեֆային ուղեցուցիչներ, չկան երթուղու մասին վիզուալ տեսատախտակներ և այլն:⁸¹⁶ Բացի դրանից՝ բավարար քանակով փողոցներ հարմարեցված չեն հենաշարժական համակարգի, տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող հաշմանդամների համար: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, մի շարք երկրներում կույր կամ թույլ տեսողությամբ անձանց զգուշացման համար փողոցներում առկա են ռելիեֆային ուղեցուցիչներ, որոնք հուշում են այդ անձանց ճիշտ ճանապարհի ուղղությունը, ինչպես նաև բոլոր մայթերն (աստիճանները և այլն) ունեն նախազգուշացնող տեղեկություն, որն իրականացվում է

⁸¹⁵ Քաղաքապետարանի գործառնություններից է՝ իր խնդիրներին համապատասխան համակարգել բոլոր տեսակի քաղաքային ուղևորատար ընդհանուր օգտագործման տրանսպորտի (ավտոբուս, տրոլեյբուս, միկրոավտոբուս, մետրոպոլիտեն) աշխատանքը՝ անկախ դրանց պատկանելիությունից և սեփականության ձևից: (Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության կանոնադրության կետ 8(2), Երևանի քաղաքապետի 05.08.2013 թվականի թիվ 3949-Ս որոշում, <https://www.yerevan.am/am/mayors-decisions/7436/>)

⁸¹⁶ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման օրենսդրական հիմքերը Հայաստանում, Կոնվենցիայի իրականացման մոնիտորինգային հաշվետվություն, <http://bit.ly/1vOyt82>

ճանապարհաշինական ֆակտորաների ձևափոխումների միջոցով, իսկ թույլ տեսողություն ունեցող անձանց համար այդ ամենը ներկված է դեղին կամ սպիտակ գույնով⁸¹⁷: Ավելին, շարունակվում են հնչեցվել բողոքներ բազմաթիվ թեքահարթակների թեքության չափազանց բարձր լինելու մասին⁸¹⁸: Խնդիրը բազմաթիվ անգամ բարձրաձայնվել է նաև ՁԼՄ-ներով, սակայն Քաղաքապետարանի տեղեկացմամբ թեքահարթակների չափազանց բարձր թեքության աստիճանի խնդրի վերաբերյալ բողոքներ չեն ստացվել: Արդյունքում, հաճախ հենաշարժողական խնդիր ունեցող մարդկանց համար անհնար է դարձել նման թեքահարթակներից սայլակով ինքնուրույն օգտվելը⁸¹⁹: Միաժամանակ, Քաղաքապետարանի հայտնած տեղեկություններով՝ 2014 թվականին շինարարության կամ վերանորոգման ճարտարապետահատակագծային առաջադրանքի (ՃՀԱ) չպահպանմամբ հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի իրավունքների խախտումներ չեն գրանցվել: Քաղաքապետարանը ՃՀԱ պահանջների կատարման խախտման դեպքերի առանձին հաշվառում չի իրականացնում՝ պատճառաբանելով, որ տրամադրված ՃՀԱ-ների հիման վրա կառուցապատողները Երևանի քաղաքապետի համաձայնեցմանն են ներկայացնում ճարտարապետաշինարարական նախագիծ, որը համաձայնեցվում է միայն ՃՀԱ-ով ներկայացված պահանջներին համապատասխանելու դեպքում: Նշենք, սակայն, որ Քաղաքապետարանի լիազորությունն է հանդիսանում ՃՀԱ-ների պահանջների կատարման նկատմամբ նաև վերահսկողության իրականացումը⁸²⁰: Ուստի, ՃՀԱ-ի խախտմամբ նաև հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի ազատ տեղաշարժման իրավունքի խախտման դեպքերը պրակտիկայում հնարավոր է բացահայտել միայն ՃՀԱ-ի պահանջների՝ պրակտիկայում կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման միջոցով: Նշվածը վկայում է այն մասին, որ Քաղաքապետարանը կամ հետևողական չէ ՃՀԱ-ների պահանջների պրակտիկայում պահպանման ուղղությամբ, կամ չի հրապարակում վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումները:

Առաջարկ. Երևան քաղաքում հաշմանդամություն ունեցող անձանց համար ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման նպատակով հարմարեցնել ավելի մեծ թվով տրանսպորտային միջոցներ, փողոցները կահավորել համապատասխան սարքավորումներով և/կամ միջոցներով (թեքահարթակներ, ձայնային ազդանշաններ, ռելիեֆային ուղեցուցիչներ), իրականացնել պատշաճ վերահսկողություն ճարտարապետահատակագծային առաջադրանքների պահանջների պահպանման նկատմամբ:

4.2.11 Համատիրությունների կողմից հաճախ պատշաճ չեն կատարվել իրենց պարտականությունները, ինչը բազմաթիվ դեպքերում առաջացրել է քաղաքացիների դժգոհությունը:

⁸¹⁷ Մանրամասն տես՝ <http://bit.ly/1LTe8mD>

⁸¹⁸ <http://bit.ly/1LTGVHy> (լուսանկար), Հրապարակված է 11.10.2014 թվականին

⁸¹⁹ <http://www.a1plus.am/1342313.html> (լուսանկարներ), <https://www.youtube.com/watch?v=ucWw4XkHdKk> (տեսանյութ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները Երևանում»)

⁸²⁰ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 94

2014 թվականի ընթացքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանում և իր ենթակայության տակ գտնվող մարմիններում գրանցվել է շուրջ 4080 ահազանգ՝ ի տարբերություն 2013 թվականին գրանցված 3130 ահազանգերի, համատիրությունների դեմ բողոքներ՝ 2430, ի տարբերություն 2013 թվականին ստացված 1573 բողոքների: Համատիրությունների դեմ ստացված բողոքները հիմնականում վերաբերել են բազմաբնակարան շենքերում տանիքների (577), մուտքերի վերանորոգմանը (306), վերելակի անսարքության վերացման աշխատանքների կազմակերպմանը (359), ծառերի էտմանը (514), վնասատուների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպմանը (417), բակային տարածքներում արտաքին լուսավորության համակարգի տեղադրմանը (257): 2013 թվականի համեմատությամբ 2014 թվականին գրանցված ահազանգերի և բողոքների քանակը հիմք է տալիս ենթադրելու, որ Քաղաքապետարանը բավարար հետևողականություն չի ցուցաբերել նշված հարցերի արդյունավետ կարգավորման և դեռևս 2013 թվականի ընթացքում արձանագրված խնդիրներին երկարատև լուծումներ ապահովելու կապակցությամբ: Բացի դրանից՝ վերջին տարիներին շարունակաբար բողոքներ են ստացվել այն մասին, որ երբ քաղաքացիները բնակության վայրի վերաբերյալ տեղեկանք ստանալու խնդրով դիմել են համատիրություն, վերջինիս կողմից մերժում են ստացել՝ այն պատճառաբանությամբ, որ քաղաքացու կողմից չեն կատարվել գույքահարկի կամ այլ վճարների մուծումներ: 2014 թվականի ընթացքում Քաղաքապետարանը և իր ենթակայության տակ գտնվող մարմինները նմանատիպ խնդրով ստացել են 14 բողոք: Թեև Քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի միջամտության արդյունքում քաղաքացիներին տրամադրվել է պահանջվող տեղեկանքը, այնուամենայնիվ, նշված խնդիրը դեռ շարունակում է ակտուալ մնալ բնակչության շրջանում: Հարկ է նշել նաև, որ նվազել են կոմունալ-կենցաղային, մասնավորապես՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անսարքության հարցերով ահազանգերը. 2013 թվականին ստացված 2406 բողոքների համեմատությամբ 2014 թվականին ստացվել են 1863 ահազանգեր:

Առաջարկ. արդյունավետ միջոցներ ձեռնարկվել՝ ապահովելու և վերահսկելու համատիրությունների կողմից իրենց պարտականությունների պատշաճ կատարումը, օպերատիվ արձագանքել համատիրությունների ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ քաղաքացիների կողմից դժգոհություններին:

4.2.12 Երևան քաղաքի ավագանու որոշմամբ քաղաքացիների համար նախատեսվել է ձյան մաքրման պարտականություն, թեև ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտականությունները կարող են սահմանվել միայն օրենքով:

Երևան քաղաքի ավագանու 48-Ն որոշմամբ (Որոշում) որպես մայթերի պարտադիր բարեկարգման պահանջ նախատեսվում է Երևանի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ ձմռանը մայթերին տեղացած

ձյան ամենօրյա մաքրման պարտականությունը (Որոշման 13-րդ կետ)⁸²¹, թեև նշվածն օրենքով հանդիսանում է համայնքային հիմնարկի պարտականություն⁸²²: Ավագանու Որոշումն ընդունվել է՝ ի կատարումն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, որով սահմանվում են Երևանի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը:⁸²³ Այնինչ, մայթերի մաքրումը ձյունից և սառույցից, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի իմաստով, համարվում է սանիտարական մաքրում:⁸²⁴ Միաժամանակ, աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացնում են անմիջականորեն համայնքային հիմնարկները կամ համայնքի կարիքների համար գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված օպերատորը⁸²⁵: Բացի դրանից՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը նույնպես նշում է, որ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով նախատեսված այլ լիազորությունների կատարումը վերապահված է Երևանի ավագանուն (12-րդ հոդվածի 30.1 կետ) և Երևանի քաղաքապետին (55-րդ հոդվածի 11.1 կետ): Մինչդեռ, Ավագանին նշվածը մեկնաբանել է որպես բարեկարգում, և դրա իրականացման պարտականությունն իր Որոշմամբ վերապահել է անշարժ գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին: ՀՀ Սահմանադրությամբ հստակ նշվում է, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները սահմանվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով⁸²⁶, այնինչ վերոգրյալից ստացվում է, որ Ավագանին իր որոշմամբ քաղաքացիների համար սահմանել է պարտականություններ: Այնուհանդերձ, հաշվի առնելով բազմաթիվ երկրներում քաղաքացիների համար ձյան մաքրման պարտականություն սահմանելու պրակտիկան՝ սահմանադրական նորմի հետ հակասությունից խուսափելու համար նպատակահարմար է, որ անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ ձմռանը մայթերին տեղացած ձյան մաքրման պարտականությունը (Որոշման 13-րդ կետ)⁸²⁷ սահմանվի ոչ թե Երևան քաղաքի

⁸²¹ Տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11.00, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21.00-ին և դրանից հետո, ինչպես նաև ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից: Երևան քաղաքի ավագանու 02.12.2009 թվականի թիվ 48-Ն որոշում, կետ 13

⁸²² «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք

⁸²³ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 12, մաս 1, կետ 8

⁸²⁴ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք, հոդված 3

⁸²⁵ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 1

⁸²⁶ ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.5, կետ 2

⁸²⁷ Տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11.00, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21.00-ին և դրանից հետո, ինչպես նաև ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից: Երևան քաղաքի ավագանու 02.12.2009 թվականի թիվ 48-Ն որոշման 13-րդ կետ

ավագանու որոշմամբ, այլ նախատեսվի «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով:

Առաջարկ. մշակել օրենսդրական փոփոխություններ, որով անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից ձյան մաքրման պարտականությունը սահմանվի համապատասխան օրենքով:

4.3 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2014 թվականին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

- Ի կատարումն Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության⁸²⁸, մշակվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով լուծում են ստացել դեռևս 2013 թվականի Տարեկան զեկույցում բարձրաձայնված օրենսդրական կանոնակարգման անհրաժեշտություն ունեցող առանձին խնդիրներ⁸²⁹:
- Համայնքներում մշակվել է համայնքի սոցիալական աշխատողի համակարգի ներդրման մոդել, իսկ համայնքի սոցիալական աշխատողին վերապահված գործառույթներում ընդգրկվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հարցերը:

Առկա թերություններն ու խնդիրները

4.3.1 Նախարարության կողմից ոչ բավարար վարչական վերահսկողություն իրականացնելու հետևանքով ինչպես 2013, այնպես էլ 2014 թվականների ընթացքում գրանցվել են որոշ համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների չարաշահման կամ ոչ պատշաճ կատարման դեպքեր:

Պաշտպանը 2014 թվականի ընթացքում ստացել է մի շարք դիմում-բողոքներ համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների ոչ պատշաճ կատարման վերաբերյալ, ինչպես, օրինակ, քաղաքացիների բողոքներին ժամանակին կամ ընդհանրապես չպատասխանելը, ինքնակամ շինարարությունը չկանխելը և այլն: Պաշտպանին հայտնաձև դեպքերից մեկով Գյումրու քաղաքապետարանի կողմից

⁸²⁸ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303 -Ն որոշում

⁸²⁹ Մասնավորապես, կարգավորվել են փախստականների կարգավիճակի սահմանման գործընթացում մտավոր կամ այլ անկարողությամբ դիմողների համար օրինական ներկայացուցչի պարտադիր ներգրավումը, ապաստան հայցողների համար պետության կողմից ֆինանսավորվող իրավաբանական օգնության տրամադրումը և այլն:

խախտվել է քաղաքացու իրավունքը: Մասնավորապես, քաղաքացին 2012 թվականի մայիս ամսին դիմել է Գյումրու քաղաքապետարան իր տան դիմաց գտնվող բակի սեփականաշնորհման խնդրանքով, մուծել է քաղաքապետարանի կողմից պահանջված 35000 ՀՀ դրամ գումարը, սակայն մինչ 12.02.2014 թվականը քաղաքապետարանից պատասխան չի ստացել: Գյումրու քաղաքապետարանի կողմից քաղաքացու դիմումի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ⁸³⁰: Ստացվում է, որ քաղաքացու 2012 թվականի դիմումին Գյումրու քաղաքապետարանը մեկ տարուց ավել պատասխան չի տվել: Ավելին, խախտվել են դիմումի հիման վրա քաղաքապետարանի կողմից հարուցված վարչական վարույթի ժամկետները, քաղաքացին չի ծանուցվել վարույթի մասին, ինչպես նաև չի իրականացվել փաստական հանգամանքների լրիվ և օբյեկտիվ քննարկում, ինչը հակասում է օրենսդրական պահանջներին⁸³¹: Արդյունքում խախտվել է անձի՝ իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը⁸³²: Տվյալ գործով 2014 թվականին Պաշտպանի կողմից կայացվել է մարդու իրավունքների խախտում հայտնաբերելու մասին որոշում: Նշենք, որ համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացումը⁸³³, ինչպես նաև բարձրագույն մարմինների կողմից իրականացվող մասնագիտական և իրավական հսկողությանը⁸³⁴ գրավոր համաձայնություն տալը հանդիսանում են Նախարարության կանոնադրական գործառույթները⁸³⁵: Այնուամենայնիվ, համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների չարաշահման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերի մեծ քանակությունը վկայում է Նախարարության կողմից համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության անբավարարության մասին:

Առաջարկ. խստացնել վարչական վերահսկողությունը համայնքների ղեկավարների նկատմամբ՝ կանխելու իրենց գործողությունների կամ անգործության արդյունքում մարդու իրավունքների խախտումները:

⁸³⁰ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 30, մաս 1, կետ «ա»

⁸³¹ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, 59-րդ հոդվածի 2-րդ, 46-րդ հոդվածի 1-ին, 47-րդ հոդվածի 4-րդ, 36-րդ հոդվածի 1-ին, 37-րդ հոդվածի 1-ին մասեր

⁸³² ՀՀ Սահմանադրություն, հոդված 27

⁸³³ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 77¹, պարբերություն 2. համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանափակվում է՝ բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով (այսուհետ՝ իրավական հսկողություն):

⁸³⁴ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 77¹, պարբերություն 3. համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանափակվում է՝ բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով (այսուհետ՝ իրավական հսկողություն):

⁸³⁵ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1527-Ն որոշում, Հավելված N 1, կետ 8

4.3.2 Մարզերի մի շարք դպրոցներում չի իրականացվել պատշաճ ջեռուցում, ինչպես նաև ոչ բարվոք վիճակում են գտնվել որոշ դպրոցների շենքային, կոմունալ և գույքային պայմանները:

Բազմաթիվ ծնողներ իրենց դժգոհությունն են հայտնել մարզային մի շարք հանրակրթական ուսումնական հաստատությունների ջեռուցման, հիմնանորոգման անհրաժեշտության, և շենքային ու կոմունալ ոչ բարվոք պայմանների մասին: Այսպես, 2014 թվականին, չնայած ՀՀ մի շարք մարզերում օդի ջերմաստիճանի կտրուկ նվազմանը, մարզային մի շարք դպրոցներում ջեռուցումը միացվել է բավականին ուշ: Արդյունքում, դասարաններում ցածր ջերմաստիճանի պատճառով երեխաները ստիպված են եղել դասապրոցեսին մասնակցել վերարկուներն ու ձեռնոցները հագին, իսկ առանձին դեպքերում ցրտի պատճառով ստիպված են եղել դասեր բաց թողնել: Մտահոգիչ է, որ առավել ցուրտ կլիմայական պայմաններում գտնվող համայնքներում դպրոցների ջեռուցումը սկսելու համար հաշվի չեն առնվել այդ տեղանքի կլիմայական պայմանների առանձնահատկությունները: Նշենք, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների ջեռուցումն իրականացնելիս, ելնելով կլիմայական պայմաններից, դասասենյակում անհրաժեշտ է ապահովել նվազագույնը $+17^{\circ}\text{C}$ և առավելագույնը $+25^{\circ}\text{C}$, ջերմաստիճան⁸³⁶, ինչը մի շարք մարզային դպրոցներում չի կատարվել: Չնայած նրան, որ դպրոցների ճնշող մեծամասնությունն ունեն տեղային ջեռուցման համակարգեր, այնուամենայնիվ, ջեռուցումը շատ դեպքերում միացվել է բավականին ուշ, ինչը կարող է վտանգել երեխաների առողջությունը և խաթարել պատշաճ պայմաններում դասապրոցեսի կազմակերպումը: Ավելին, մի շարք աշակերտների ծնողներ և ՀԿ-ներ նշել են, որ ավագ դպրոցներն ապահովված չեն կրթության որակի ապահովման համար անհրաժեշտ գույքով, որը թույլ կտա աշակերտներին կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում⁸³⁷: Ավագ դպրոցները ապահովված չեն անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով և չունեն պատշաճ կահավորված լաբորատորիաներ և գրադարաններ, ինչպես նաև մի շարք դեպքերում, ինֆորմատիկա առարկան դասավանդելիս, ուսուցիչները չեն օգտագործում համակարգիչ⁸³⁸: Մյուս կողմից, տարվա ընթացքում ստացվել է տեղեկատվություն հանրապետության մի շարք դպրոցների ոչ բարվոք կոմունալ, ինչպես նաև շենքային պայմանների վերաբերյալ, ինչը ևս խոչընդոտել է դասապրոցեսի բնականոն ընթացքին: Մասնավորապես, ոչ բարվոք կոմունալ պայմաններ առկա են ՀՀ մի շարք մարզերի դպրոցներում, իսկ, օրինակ, Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղի դպրոցում սանհանգույցն ընդհանրապես բացակայում է: Ինչ վերաբերում է դպրոցների շենքային պայմաններին, ապա նշենք, որ անբավարար շենքային պայմաններ առկա են, մասնավորապես, Արմավիրի մարզի Պտղունք գյուղի, Տավուշի մարզի Ներքին Կարմիրաղբյուր և Վերին Կարմիրաղբյուր գյուղերի և բազմաթիվ այլ մարզային դպրոցներում: Ավելին, մի շարք մարզային

⁸³⁶ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» n 2.iii.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 82 հրաման

⁸³⁷ <http://bit.ly/1wU01Jf>

⁸³⁸ <http://bit.ly/1wU01Jf>

դպրոցներ ունեն հիմնանորոգման և սեյսմազինվածության մակարդակի ավելացման կարիք: Մասնավորապես, ՀՀ քաղաքաշինության նախարարությունից հայտնել են, որ ՀՀ-ում մինչև 1988 թվականը կառուցվել է թվով 1062 դպրոց, որից 856-ը՝ ՀՀ մարզերում⁸³⁹: Նշված 1062 դպրոցից ընդամենը 23-ն է վերակառուցվել և ամրացվել, իսկ 10-ը վերակառուցման ընթացքում է: Մնացած 1029 դպրոցում անհրաժեշտ է իրականացնել սեյսմազինվածության մակարդակի ավելացման տեխնիկական միջոցառումներ: Հայտնել են նաև, որ ՀՀ մարզերում 4-րդ աստիճանի /վթարային/ վնասվածություն ունեցող դպրոցներն են՝ ՀՀ Կոտայքի մարզի Ողջաբերդ համայնքի միջնակարգ դպրոցը, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցը և ՀՀ Շիրակի մարզի Վարդաքար համայնքի դպրոցը: Հատկանշական է, որ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն 2014 թվականին անդրադարձել էր ՀՀ-ում դպրոցների ոչ բարվոք պայմանների խնդրին, նշելով, որ չնայած ուսումնական հաստատությունների բարելավմանն ուղղված բյուջեի համապատասխան հատկացումներին, բազմաթիվ դպրոցների ենթակառուցվածքներ գտնվում են անմխիթար վիճակում⁸⁴⁰: Ուստի, Կոմիտեն առաջարկել է առավել արդյունավետորեն օգտագործել ուսումնական հաստատությունների բարելավման համար հատկացված միջոցները՝ հաշվի առնելով աշակերտների և ուսուցիչների կարիքները: Բայցևայնպես, մարզային հանրակրթական ուսումնական հաստատությունների ոչ բավարար շենքային և կոմունալ պայմանները վկայում են, որ Նախարարության կողմից չեն ձեռնարկվում բավարար միջոցներ նշված խնդիրների լուծման ուղղությամբ:

Առաջարկ. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններում օդային և ջերմային ռեժիմի պահպանման պահանջների կատարման ուղղությամբ, ինչպես նաև բարելավել ոչ բարվոք վիճակում գտնվող դպրոցների շենքային, կոմունալ և գույքային պայմանները:

4.3.3 Նախարարության կողմից չի իրականացվել պատշաճ հսկողություն մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման, մասնավորապես՝ համայնքների ղեկավարների կողմից ճարտարապետահատակագծային առաջադրանքների պահանջների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության կատարման նկատմամբ:

Բազմաթիվ հասարակական կազմակերպությունների ՀԿ-ների և հաշմանդամություն ունեցող անձանց հայտնած տեղեկություններով մարզերում շարունակում է չլուծված

⁸³⁹ Արագածոտնի մարզ – 96, Արարատի մարզ – 105, Արմավիրի մարզ – 115, Գեղարքունիքի մարզ – 122, Լոռու մարզ – 84, Կոտայքի մարզ – 79, Շիրակի մարզ – 54, Սյունիքի մարզ – 93, Վայոց ձորի մարզ – 45 և Տավուշի մարզ – 63

⁸⁴⁰ Committee on Economic, Social and Cultural Rights Concluding observations on the combined second and third periodic reports of Armenia* E/C.12/ARM/CO/2-3
http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2FC.12%2FARM%2FCO%2F2-3&Lang=en

մնալ հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական օբյեկտների մատչելիության խնդիրը: Մինչդեռ, օրենքով չի թույլատրվում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների շինարարությունն ու վերակառուցումը, եթե դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար⁸⁴¹: Նշենք, որ քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգը սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիությունն ապահովող և այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ⁸⁴², որոնց կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների համար⁸⁴³, որոնց մեջ մտնում են նաև տեղական ինքնակառավարման մարմինները⁸⁴⁴: Վերջիններս (մասնավորապես,՝ համայնքի ղեկավարը⁸⁴⁵) տալիս են քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք⁸⁴⁶ (ՃՀԱ), որում նշվում են նաև հաշմանդամություն ունեցող անձանց ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ ակտերով սահմանված պահանջներ⁸⁴⁷: Ավելին, համայնքի ղեկավարը նաև վերահսկում է կառուցապատողներին տրված ՃՀԱ-ի պահանջների կատարումը⁸⁴⁸, ինչպես նաև փաստագրում⁸⁴⁹ ավարտված շինարարության շահագործման ընդունումը⁸⁵⁰: Բայցևայնպես, մարզերում քաղաքաշինական օբյեկտների մատչելիության խնդիրը հանդիպում է ոչ միայն հին, այլև նորակառույց կամ հիմնովին վերանորոգվող շինություններում, ինչը նաև Նախարարության կողմից համայնքի ղեկավարների գործունեության նկատմամբ ոչ արդյունավետ իրավական հսկողության հետևանք է: Այսպես, օրինակ, 2014 թվականին Լոռու մարզի համայնքներում կառուցվել է ընդամենը 1 թեքահարթակ, ինչպես նաև հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար դեռևս 51 համայնքներում մատչելիության ապահովման խնդիր կա:⁸⁵¹ Մարզի 163 կրթական հաստատություններից 103-ում առկա է թեքահարթակ (որից 5-ը կառուցվել է 2014 թվականին), շինարարական տեսակետից մատչելի են 26-ը, իսկ 34

⁸⁴¹ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 22

⁸⁴² «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 16

⁸⁴³ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 16

⁸⁴⁴ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 4

⁸⁴⁵ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 6

⁸⁴⁶ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 6

⁸⁴⁷ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 2

⁸⁴⁸ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 37

⁸⁴⁹ Ավարտված շինարարության (շենքերի, շինությունների, դրանց վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ընդլայնման և բարեկարգման) շահագործման ընդունումը փաստագրվում է շահագործման ակտով՝ տվյալ օբյեկտի շինարարության թույլտվության համար հիմք հանդիսացող հաստատված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացնելուց հետո: Ավարտված շինարարական օբյեկտի շահագործումը թույլատրվում է միմիայն շահագործման ակտը ձևակերպելուց հետո: («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 25)

⁸⁵⁰ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 25, պարբերություն 2

⁸⁵¹ <http://lori.gov.am/files/docs/12775.pdf>

դպրոցում դեռևս թեքահարթակ չկա⁸⁵²: Մատչելիության խնդիրներ առկա են նաև Արմավիրի մարզում: Մասնավորապես, Արմավիր քաղաքում ընդհանրապես հարմարեցված չեն դպրոցները: Մարզում գործող ՀԿ-ներից մեկի պնդմամբ. «Արմավիրում չկա մի դպրոց, որ ունենա թեքահարթակ, առնվազն երեք աստիճան երեխային պետք է բարձրացնել, ընդհանրապես չկա մի տեղ, որ երեխաները կարողանան ինքնուրույն շարժվել»⁸⁵³: Վերջինս նշել է նաև, որ այդքանով հանդերձ, համայնքի զարգացման քառամյա ծրագրերում հազվադեպ կարելի է հանդիպել այնպիսի գերակայություններ, որոնք վերաբերեն հաշմանդամություն ունեցող անձանց⁸⁵⁴: Միաժամանակ, բազմաթիվ են դեպքերը, երբ կառուցապատողներն, անտեսելով շինարարական նորմերի մի շարք պահանջներ, պահպանել են միայն արտաքին թեքահարթակի պահանջը: Այնինչ, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց ֆիզիկական մատչելիության խնդիրը չի սահմանափակվում միայն թեքահարթակներով. շատ դեպքերում, եթե անգամ շինության թեքահարթակը համապատասխանում է շինարարական նորմերի պահանջներին, տեղաշարժման խոչընդոտներ են առաջանում շինության ներսում, ինչը թե՛ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվնեցիայի⁸⁵⁵ և թե՛ գործող օրենսդրության պահանջների խախտում է⁸⁵⁶: Այսպես, օրինակ, Պաշտպանը 2014 թվականին զանգվածային լրատվամիջոցներից տեղեկացել է⁸⁵⁷, որ նշյալ խնդիրն առկա է եղել, օրինակ, Կապանի նորակառույց 2-րդ ավագ դպրոցում, որը թեև ունի թեքահարթակ, սակայն եռահարկ է, բացակայում է վերելակը, սանհանգույցները հարմարեցված չեն: Նշված և քաղաքաշինության ոլորտում օրենսդրության չպահպանման բազմաթիվ այլ դեպքերի արդյունքում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք ոչ միայն զրկվել են մատչելի միջավայրի, այլև դրա հետևանքով կրթություն ստանալու, առողջության պահպանման, աշխատանքի և այլ իրավունքներից, ինչը խոչընդոտում է նաև նրանց սոցիալական ինտեգրմանը: Նշենք, որ համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացումը⁸⁵⁸, ինչպես նաև մասնագիտական հսկողության⁸⁵⁹, բարձրագույն մարմինների կողմից իրականացվող մասնագիտական և իրավական հսկողությանը գրավոր համաձայնություն տալը

¹⁴ <http://lori.gov.am/files/docs/12775.pdf>

⁸⁵³ <http://www.aravot.am/2015/01/17/533137/>

⁸⁵⁴ <http://www.aravot.am/2015/01/17/533137/>

⁸⁵⁵ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվնեցիա, հոդված 9

⁸⁵⁶ Օրինակ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրամանի համաձայն բնակչության սակավաշարժուն խմբերի համար բացի թեքահարթակներից, անհրաժեշտ են նաև վերելակներ և ամբարձիչներ, մատչելի սանիտարահիգիենիկ սենքեր և այլն:

⁸⁵⁷ <http://disabilityinfo.am/4820>

⁸⁵⁸ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 77¹, պարբերություն 2. համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանափակվում է՝ բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով (այսուհետ՝ իրավական հսկողություն):

⁸⁵⁹ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 77¹, պարբերություն 3. Համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանափակվում է՝ բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով (այսուհետ՝ իրավական հսկողություն):

Նախարարության կանոնադրական գործառույթներն են⁸⁶⁰: Այնուամենայնիվ, մարզերում քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման, մասնավորապես, համայնքի ղեկավարների կողմից ՃՀԱ-ների պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտականության մեջ առկա թերացումները վկայում են համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ Նախարարության իրավական հսկողության անբավարարության մասին: Ավելին, Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում սահմանվել է, որ Նախարարության կողմից պետք է ձեռնարկվեն արդյունավետ միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական անարգել միջավայրի ապահովման նպատակով՝ քաղաքաշինական բնագավառի օրենսդրական դաշտը կարգավորող իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:⁸⁶¹ Բայցևայնպես, մի շարք մարզերի 2014 թվականն ամփոփող տարեկան հաշվետվությունների մեջ ընդհանրապես բացակայել են հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական օբյեկտների մատչելիությունն ապահովելու ուղղությամբ կատարված աշխատանքների և առկա խնդիրների վերաբերյալ նշումները, ինչը վկայում է, որ նշված խնդրին կամ համարժեք կարևորություն չի տրվել, կամ համապատասխան աշխատանքներն ընդհանրապես չեն իրականացվել:

Առաջարկ. ուժեղացնել վերահսկողությունը համայնքների ղեկավարների կողմից մարզերում քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման, այդ թվում՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքների պահանջների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացման նկատմամբ:

4.3.4 Շարունակում են չլուծված մնալ մի շարք փախստականների բնակարանային ապահովության, ինչպես նաև Նախարարության ենթակայության տակ չգտնվող կացարաններում բնակվող փախստականների իրավունքների կանոնակարգման խնդիրները:

Տարիներ շարունակ ՀՀ-ում փախստականները բախվել են լուրջ բնակարանային խնդիրների, ինչի արդյունքում, մասնավորապես, բնակարանային ապահովության առաջնահերթ կարիք ունեցող 924 ընտանիք ավելի քան 25 տարի բնակվում է հիմնականում տարրական կենցաղային միջոցներից զուրկ պայմաններում⁸⁶²: Նշենք, որ 2004 թվականի Կառավարության որոշմամբ⁸⁶³ հաստատվել էր 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակապահովության առաջնահերթ ծրագիրը (Ծրագիր), որով

⁸⁶⁰ ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1527-Ն որոշում, Հավելված N 1, 8-րդ կետ

⁸⁶¹ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303 -Ն որոշում

⁸⁶² Նախարարության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի տնօրինության տակ ներկայումս գործում են հանրակացարանային 7 մասնաշենքեր:

⁸⁶³ ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին» թիվ 747-Ն որոշում:

2005-2008թթ. 1065 ընտանիք ստացել են բնակարանի գնման վկայագրեր⁸⁶⁴: Չնայած խնդրի լուծման նպատակով Նախարարության Միգրացիոն պետական ծառայության (Ծառայություն) կողմից յուրաքանչյուր տարի ներկայացվել է 4 մլրդ դրամի բյուջետային հայտ՝ սակայն 2009 թվականից ի վեր Ծրագրի իրականացման համար պետական բյուջեում միջոցներ չեն նախատեսվել⁸⁶⁵: Միննույն ժամանակ, նշենք, որ 2014 թվականի ընթացքում Ծրագրում ընդգրկված 8 ընտանիքի տրամադրվել է սոցիալական բնակարաններ ՀՀ Կոտայքի մարզի Քասախ գյուղում և 4 ընտանիքի՝ ՀՀ Արարատի մարզի Դարբնիկ գյուղում, սակայն նշվածն իրականացվել է ոչ թե պետության, այլ միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական աջակցությամբ: Միաժամանակ, Ծրագրում չընդգրկված փախստականների մյուս ընտանիքների համար (ովքեր բնակվում են ծանոթների/բարեկամների տներում կամ վարձով) բնակարանային ապահովության ծրագրեր գոյություն չունեն: Արդյունքում, բազմաթիվ փախստականներ բախվում են աշխատանքի ցածր վարձատրության պայմաններում բնակարանի վարձակալության համար բարձր վարձավճար մուծելու խնդրին: Իրավիճակն առավել խնդրահարույց է Ծառայության ենթակայության տակ չգտնվող կացարաններում, որտեղ ոչ միայն առկա են փախստականների բնակության անբարենպաստ պայմաններ, այլև նշյալ կացարանների սեփականատերերի կողմից փախստականներին բնակատեղից ցանկացած պահի զրկելու վտանգ: Հաշվի առնելով, որ գործող օրենսդրական կարգավորումները հստակ չեն երաշխավորում փախստականների՝ այդ կացարաններում բնակվելու իրավունքը, խիստ կարևորվում է Նախարարության նախաձեռնողականությունը՝ ուղղված տվյալ հարցի կարգավորմանը: Լուծման տարբերակ կարող է հանդիսանալ, օրինակ, կոնկրետ ծրագրի իրականացումը և/կամ համաձայնագիրը նշված կացարանների սեփականատերերի հետ, որոնցով կսահմանվեն վերջիններիս՝ փախստականների իրավունքների իրացման հարցում պարտավորությունները և, արդյունքում, կստեղծվի գործընթացը վերահսկելու գործուն մեխանիզմ: Նշենք, որ սույն հարցը բազմիցս բարձրացվել է Պաշտպանի կողմից, ինչպես նաև ներառվել է 2012, 2013 թվականների տարեկան զեկույցներում, սակայն, 2014 թվականի ընթացքում ևս այն լուծում չի ստացել:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ փախստականների բնակարանային ապահովման ուղղությամբ, մշակել հստակ ծրագիր և/կամ համաձայնագիր Նախարարության ենթակայության տակ չգտնվող կացարանների սեփականատերերի հետ, որով կկարգավորվի այդ կացարաններում փախստականների ապրելու իրավունքը:

4.3.5 Ապաստան հայցողների համար Ժամանակավոր տեղավորման կենտրոնում սենյակների թիվը խիստ սահմանափակ է, իսկ ապաստան հայցողներին տրամադրվող սնունդն առանձին դեպքերում եղել է ցածրորակ և միատեսակ:

Թեև օրենքով Նախարարության Միգրացիոն պետական ծառայությունը (Ծառայություն)

⁸⁶⁴ Նախարարության հարցման պատասխան

⁸⁶⁵ Նախարարության փոխանցմամբ՝ հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է շուրջ 9,8 մլրդ դրամ:

պարտավոր է ապաստան հայցողներին և նրանց ընտանիքի անդամներին տեղավորել Ժամանակավոր տեղավորման կենտրոնում (Կենտրոն)⁸⁶⁶, սակայն Ծառայության կողմից նշված պարտավորությունը պատշաճ չի իրականացվել: Նշենք, որ Կենտրոնն ունի ՀՀ-ում ապաստան հայցողների ժամանակավոր բնակության համար նախատեսված 20 սենյակ՝ 45 անձի համար, ինչը խիստ անբավարար է ապաստան հայցողների մեծ ներհոսքի դեպքում: Միաժամանակ, գործնականում, նախկինում փախստականի կարգավիճակ ստացած և այլ կացարան տեղափոխվելու հնարավորություն չունեցող անձանց պետությունը թույլատրել է ապրել Կենտրոնում: Թեև նշվածով պետությունը կանխել է տվյալ փախստական ընտանիքների անօթևան մնալու վտանգը, սակայն, դրա հետևանքով առկա են եղել մի շարք դեպքեր, երբ անհնար է եղել նոր ապաստան հայցողներին տեղավորել Կենտրոնում, ինչի հետևանքով այդ անձինք անօթևան են մնացել⁸⁶⁷: Արդյունքում, չի իրացվել ապաստան հայցողներին օրենսդրությամբ երաշխավորված կենսաապահովման նվազագույն պայմաններով ապահովման իրավունքը⁸⁶⁸: Թեև վերջին տարիներին փորձ է արվում խնդիրը լուծել ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի ֆինանսավորմամբ կառուցվող «ինտեգրման տան» միջոցով⁸⁶⁹, այնուամենայնիվ, կարևոր է, որպեսզի հենց պետությունն ամեն կերպով կատարի նշված անձանց բնակարանով ապահովելու իր պարտավորությունը⁸⁷⁰, ինչը սակայն պատշաճ չի իրականացվել: Միաժամանակ, մտահոգիչ է եղել Կենտրոնում ապաստան հայցողներին տարբեր ընկերություններից մատակարարվող սնունդի ցածր որակը, որը հաճախ հետ է վերադարձվել մատակարարներին, ինչպես նաև այն, որ յուրաքանչյուր ապաստան հայցողի, անկախ իր սննդակարգից և սահմանափակումներից, տարիքից (նաև նորածիններ և մանկահասակ երեխաներ), տրվել է միևնույն սնունդը:⁸⁷¹

Առաջարկ. ավելացել ապաստան հայցող անձանց տրամադրվող ժամանակավոր կացարանների թիվը և/կամ նրանց համար նախատեսել պետական աջակցության տրամադրման այլընտրանքային տարբերակներ, ինչպես նաև բարելավել Կենտրոնում ապաստան հայցողներին տրամադրվող սննդի որակը՝ հաշվի առնելով անձանց տարիքն ու սննդակարգային սահմանափակումները:

⁸⁶⁶ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված. «Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնը հատուկ հաստատություն է, որտեղ լիազոր մարմինը տեղավորում է ապաստան հայցողներին մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:»:

⁸⁶⁷ ԵՄ խորհրդատվական խումբ, «Հայաստանում ապաստան հայցողների կացարանների կարողությունների գնահատում», 2015թ., էջ 10
<http://www.euadvisorygroup.eu/publications/policy-papers>

⁸⁶⁸ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 24

⁸⁶⁹ Տուն, որտեղ փախստականները կկարողանան մնալ վեց ամիս մինչև վերջիններիս միջազգային պաշտպանություն ընձեռելը: (<http://www.euadvisorygroup.eu/publications/policy-papers>, էջ 11)

⁸⁷⁰ Օրինակ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով դրամական օգնության տրամադրում

⁸⁷¹ Տես՝ նույն տեղում

4.3.6 ԱՊՀ համաձայնագրում արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ ծառայողների վերաբերյալ համապատասխան նշումի բացակայության պատճառով հրշեջ ծառայության մի խումբ նախկին աշխատակիցներ զրկված են ԱՊՀ երկրներում զինվորական կենսաթոշակ ստանալու հնարավորությունից:

2014 թվականին Պաշտպանը դիմում բողոքներ է ստացել մի շարք քաղաքացիներից, որոնք նախկին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ ծառայության իրենց պաշտոններից ազատվելուց հետո ձեռք են բերել զինվորական կենսաթոշակի իրավունք, սակայն չեն կարող իրենց կենսաթոշակները ստանալ ԱՊՀ երկրների տարածքում: Այսպես, տվյալ անձինք նախկինում եղել են ՀՀ Ներքին գործերի նախարարության հրշեջ պահպանության վարչության համակարգի աշխատակիցներ, իսկ այնուհետև, ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ⁸⁷², պետական հակահրդեհային ծառայության են անցել ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունում: Զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռքբերելուց հետո վերջիններս հաշվառվել են ՀՀ զինկոմիսարիատի սոցիալական բաժնում: Նշված անձինք հետագայում ձեռք են բերել ՌԴ-ում ապրելու իրավունք և ՀՀ-ում դադարեցնելով կենսաթոշակային գործը այն տեղափոխել են ՌԴ: Այնինչ, վերջիններիս զինվորական կենսաթոշակի հաշվառման կանգնեցնելը մերժվել է ՌԴ-ի համապատասխան մարմնի կողմից այն պատճառաբանմամբ, որ «ԱՊՀ մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության և զինծառայողների պետական ապահովագրության կարգի մասին» համաձայնագրում (Համաձայնագիր) բացակայում է նախկին ՀՀ ԱԻՆ հրշեջ ծառայողների կենսաթոշակի տրամադրման հնարավորության մասին նշումը: Նշենք, որ ՌԴ և ԱՊՀ մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի համապատասխան որոշումները⁸⁷³ նախատեսում են, որ ԱՊՀ երկրների զինծառայողները կարող են իրենց կենսաթոշակները օրինական կարգով ձևակերպել և ստանալ ԱՊՀ ցանկացած պետությունում, այդ թվում նաև ՌԴ-ում: Վերոնշյալ խնդրի կարգավորման կապակցությամբ մի շարք հրշեջ ծառայողներ 2014 թվականի հուլիսին դիմել էին Նախարարությանը, սակայն խնդիրը կարգավորում չէր ստացել: Պաշտպանի կողմից խնդրի մասին բարձրաձայնումից հետո Նախարարությունը դիմել է իրավասու պետական մարմիններին Համաձայնագրում փոփոխություններ կատարելու նպատակով, սակայն խնդիրը 2014 թվականի ընթացքում վերջնական լուծում չի ստացել: Արդյունքում, խախտվել է վերոգրյալ անձանց սոցիալական ապահովության իրավունքը⁸⁷⁴:

Առաջարկ. համագործակցել իրավասու մարմինների հետ և հետևողական լինել Համաձայնագրում նախկին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ

⁸⁷² ՀՀ կառավարություն 2002 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1142-Ն որոշում

⁸⁷³ ՌԴ պաշտպանության նախարարի 1993թ. փետրվարի 12-ի թիվ 4468-1 և ԱՊՀ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի 2003թ. դեկտեմբերի 10-ի որոշումներ

⁸⁷⁴ ՀՀ Սահամանդրություն, հոդված 37

ծառայողներին կենսաթոշակի տրամադրման հնարավորությունը նախատեսող փոփոխությունների սահմանման հարցում:

4.3.7 Օրենսդրական թերի կարգավորման հետևանքով ՀՀ որոշ համայնքների ղեկավարներ պատասխանատվության չեն ենթարկվում իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Իրավական ակտերում որոշ բացթողումների և թերությունների արդյունքում 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարները կարգապահական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն դատական կարգով: Այսպես, ՀՀ համայնքների ղեկավարները, նրանց տեղակալները, խորհրդականները և այլ պաշտոնները համարվում են համայնքային պաշտոններ⁸⁷⁵: Օրենքը տարանջատում է այդ պաշտոնները համայնքային ծառայողի պաշտոնից⁸⁷⁶: Իսկ համայնքային ծառայողի նկատմամբ իրենց ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու, ոչ պատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները վերազանցելու, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում սահմանվում են մի շարք կարգապահական տույժեր՝ նախազգուշացումից ընդհուպ մինչև պաշտոնից ազատում⁸⁷⁷: Սակայն, օրենքի կարգավորման շրջանակից դուրս է մնում որոշ համայնքների ղեկավարների կողմից իրենց՝ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, լիազորությունների վերազանցման համար պատասխանատվության սահմանումը: Մասնավորապես, օրենքը սահմանում է «բարձրաստիճան պաշտոնատար անձ»-ի հասկացությունը՝ այդ խմբին դասելով նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50.000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարներին⁸⁷⁸: Միաժամանակ, 50.000 և ավել բնակիչ ունեցող համայնքների ղեկավարների նկատմամբ սահմանվում է էթիկայի հանձնաժողովի կողմից հսկողության իրականացումը, անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի կողմից վարույթի իրականացումը, իսկ էթիկայի կանոնների խախտումների մեջ հանցագործության հատկանիշներ չի հայտ գալու դեպքում՝ նաև վարույթի բոլոր նյութերը ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելը⁸⁷⁹: Սակայն, օրենքը կարգապահական պատասխանատվության ենթարկելու նման մեխանիզմի կիրառման հնարավորությունը չի տարածում 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարների նկատմամբ՝ վերջիններիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը թողնելով դատական իշխանության մարմիններին: Ստացվում է, որ օրենքի թերի կարգավորման հետևանքով 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում չի իրականացվում ուղղակի վերահսկողություն, և վերջիններս

⁸⁷⁵ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 4

⁸⁷⁶ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք

⁸⁷⁷ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, գլուխ 6

⁸⁷⁸ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, կետ 15

⁸⁷⁹ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 43

կարող են պատասխանատվության ենթարկվել միայն դատական կարգով:

Առաջարկ. ձեռնարկել համապատասխան քայլեր 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարների՝ իրենց օրենսդրական պարտականությունների չկատարման կամ թերի կատարման դեպքում պատասխանատվության ենթարկելու դատական կարգից բացի այլ ուղղակի մեխանիզմների մշակման ուղղությամբ:

4.4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԸԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

2014 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր) պատասխանատվության ոլորտում էական և համակարգային թերացումներ չեն արձանագրվել: Կադաստրը դրսևորել է պատշաճ մոտեցում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին արձագանքելու ուղղությամբ և շարունակել է բարելավել իր գործունեությունը:

Կադաստրի կողմից մշակված «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի փոփոխության նախագիծը դեռևս չի ներկայացվել ՀՀ կառավարություն, ինչի հետևանքով շարունակում են գործել օրենքում առկա որոշ խնդրահարույց իրավակարգավորումները:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ պայմանագրի հիման վրա ձեռքբերված իրավունքի պետական գրանցումը՝ պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո չեղարկվում է պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսված է, որ տվյալ պայմանագրի գործողության ժամկետի ավարտով կողմերի պարտավորությունները դադարում են⁸⁸⁰: Իսկ եթե գույքային իրավունքի ձեռքբերման համար հիմք հանդիսացած պայմանագրով կամ օրենքով պայմանագրի ժամկետի ավարտով կողմերի պարտավորությունների դադարման վերաբերյալ պայման սահմանված չէ, ապա նման պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագրի հիման վրա իրականացված իրավունքի պետական գրանցումը կարող է չեղարկվել պայմանագրի կողմերի համատեղ դիմումի հիման վրա:⁸⁸¹ Մակայն, Պաշտպանի ստացած դիմում-բողոքների համաձայն՝ գործնականում արձանագրվել են դեպքեր, երբ պայմանագրի ժամկետի ավարտից հետո պայմանագրի կողմերից մեկը դիտավորյալ խուսափել է իրավունքի պետական գրանցման չեղարկման համար դիմում ներկայացնելուց կամ վերջինիս գտնվելու վայրը հայտնի չի եղել, ինչը խոչընդոտել է մյուս կողմի սեփականության իրավունքի իրականացմանը: Խնդրի օրենդրական կարգավորման նպատակով Կադաստրի հետ իրականացրած համատեղ աշխատանքի արդյունքում Պաշտպանի կողմից բարձրացված խնդիրը ներառվել է Կադաստրի կողմից դեռևս 2013 թվականին մշակված Օրենքի նախագծում: Մասնավորապես, նախագծով նախատեսվել է, որ պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո չեղարկվում է պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա, եթե օրենքով կամ պայմանագրով այլ բան նախատեսված չէ, իսկ եթե օրենքով կամ պայմանագրով կողմերի պարտավորությունների դադարումը

⁸⁸⁰ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդված, մաս 3

⁸⁸¹ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդված, մաս 3

պայմանավորված է որոշակի պայմանով՝ բացառությամբ պայմանագրի ժամկետի ավարտով պարտավորությունների դադարման պայմանի, ապա նման պայմանագրի ժամկետի ավարտից հետո պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը կարող է չեղարկվել պայմանագրի կողմերի համատեղ դիմումի հիման վրա:⁸⁸² Այսինքն, օրենսդրական փոփոխության արդյունքում պայմանագրի մի կողմը պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո կարող է պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը չեղարկել միայն իր դիմումի հիման վրա, եթե պայմանագրում ամբողջով չի եղել այնպիսի հատուկ պայման, որով պայմանավորված է պայմանագրի կողմերի պարտավորությունների դադարումը (բացառությամբ պայմանագրի ժամկետի ավարտով պարտավորությունների դադարման պայմանի):

Մեկ այլ խնդիր վերաբերում է այն դեպքերին, երբ դատարանում գործի քննության ընթացքում ապացուցվում է, որ պարտատերը փաստացի ունի բավարար միջոցներ (օրինակ՝ անշարժ գույք), որոնցով կարող է կատարել իր պարտավորությունները, և դատարանը տալիս է կատարողական թերթ՝ ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից կատարողական վարույթ հարուցելու և համապատասխան գույքի իրացման աճուրդ կազմակերպելու համար, սակայն ԴԱՀԿ ծառայության կողմից գույքի աճուրդ կազմակերպել չի հաջողվում, քանի որ պարտապանը չի կատարում (կամ նախապես չի կատարել, կամ չարամտորեն չի կատարում) իրեն փաստացիորեն պատկանող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցումը Կադաստրում: Ստացվում է, որ պարտապանների ոչ բարեխիղճ գործողությունների և/կամ անգործության արդյունքում՝ դատարանի կայացրած վճիռը փաստացիորեն մնում է չկատարված: Տվյալ խնդրի վերաբերյալ Պաշտպանի առաջարկությամբ կրկին օրենսդրական փոփոխության նախագծով Օրենքի 24-րդ հոդվածում նախատեսվել է լրացում, որի համաձայն՝ Պետական գրանցման վարույթի հարուցման դիմում է ներկայացվում ԴԱՀԿ-ի կողմից՝ կատարողական թերթի կատարումն ապահովելու նպատակով:⁸⁸³ Այսպես, թեև Կադաստրի կողմից մշակված Օրենքի նախագիծը վերանայում է մի շարք խնդրահարույց իրավակարգավորումներ, սակայն մտահոգիչ է, որ այն մինչ օրս չի ներկայացվել ՀՀ կառավարություն, ինչի պատճառով շարունակել են գործել խնդրահարույց իրավակարգավորումները, իսկ վերոնշյալ խնդիրները դեռևս մնացել են չլուծված:

Առաջարկ. հնարավորինս սեղմ ժամկետում ՀՀ կառավարություն ներկայացնել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ դրանցում նախատեսվող բարեփոխումներին իրավական ուժ տալու գործընթացը սկսելու նպատակով:

⁸⁸² Նախագծի 13-րդ հոդված, http://www.cadastre.am/storage/files/pages/pg_0610262631_Guyq.naxagic_PDF.pdf

⁸⁸³ http://www.cadastre.am/storage/files/pages/pg_0610262631_Guyq.naxagic_PDF.pdf

5.1 ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը

Ներկայումս Պաշտպանն ունի 3 տեղակալներ, որոնք պատասխանատու են համապատասխանաբար արդար դատաքննության, խոսքի ազատության, զինծառայողների, սոցիալ-սնտեսական իրավունքների հարցերով: Պաշտպանն ունի նաև գլխավոր խորհրդական, որը պատասխանատու է երեխաների, կանանց և շրջակա միջավայրի հարցերով, ինչպես նաև խորհրդական՝ հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների և փոքրամասնությունների հարցերով: Պաշտպանի աշխատակազմում գործում են 6 առանձնացված ստորաբաժանումներ՝ Անհատական դիմումներով իրավունքների պաշտպանության, Իրավական վերլուծության, Արտաքին կապերի, Բռնությունների կանխարգելման, Արագ արձագանքման (գրադվում է նաև զինծառայողների դիմումներ-բողոքներով) վարչություններ, ինչպես նաև Գործերի կառավարչություն:

Դիմում-բողոքների և օրենսդրական առաջարկների վիճակագրություն

2014 թվականի ընթացքում Պաշտպանը ստացել է 6326 դիմում-բողոք, որից 1785-ը՝ գրավոր, 4541-ը՝ բանավոր: Ստացված բանավոր բողոքներով իրավական խորհրդատվություն է տրամադրվել 943 անձանց՝ աշխատակազմի ընդունարանում, 3323-ին՝ Թեժ գծի, 275-ին՝ Արագ արձագանքման միջոցով: Հատկանշական է, որ 2014 թվականին Թեժ գծով տրամադրվող խորհրդատվությունը 2013 թվականի համեմատությամբ (1175) աճել է 283%-ով, այսինքն՝ գրեթե 3 անգամ: Գրավոր ստացված 1785 դիմումից Պաշտպանի կողմից քննարկման են ընդունվել 1133-ը (նախորդ տարի՝ 1090), որոնցից դրական լուծում ստացած դիմումների քանակը (385) 2013 թվականի համեմատությամբ (123) աճել է 41%-ով: 2014 թվականին կայացվել է 61 խախտման որոշում, նույն քանակությամբ (61) խախտման որոշում է կայացվել նաև 2013 թվականին: 2014 թվականի ընթացքում Պաշտպանին կարծիքի են ներկայացվել շուրջ 54 օրենսդրական նախագծեր: Պաշտպանը նշված նախագծերի, ինչպես նաև 10 օրենսդրական խնդիրների շուրջ անհատական դիմում-բողոքների հիման վրա ներկայացրել է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված շուրջ 169 օրենսդրական առաջարկ՝ ի տարբերություն 2013 թվականին արված 112 առաջարկի (իսկ 2012 թվականին՝ 60 առաջարկ): Իր իրավասությունների շրջանակներում Պաշտպանը 2014 թվականի ընթացքում ներկայացրել է 7 դիմում ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ՝ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ (պաշտոնական) ստանալու նպատակով: 2014 թվականի ընթացքում Պաշտպանը հանդես է եկել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ շուրջ 70 հաղորդմամբ:

Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ամփոփ վիճակագրությունը՝ ըստ պետական մարմինների և ըստ մարզերի ներկայացված է Հավելվածում:

116 Թեժ գծի և արագ արձագանքման ծառայություններ

Պաշտպանի Թեժ գիծ ծառայությունը քաղաքացիներին տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում Պաշտպանի ներկայացուցիչներն արագ արձագանքում են իրականացրել՝ այցելելով դեպքի վայր: 2014 թվականին Թեժ գիծը ստացել է 3232 ահազանգ, մինչդեռ 2013 թվականին Թեժ գիծն ընդունել է 1175 ահազանգ: 366-ի դեպքում իրականացվել է արագ արձագանքում՝ 105 դրական ելքով: 2866 ահազանգերով քաղաքացիներին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն: Թեժ գծին ստացված ահազանգերը հիմնականում վերաբերել են անձանց անհիմն բերման ենթարկելուն, օրենքով սահմանված ժամկետից երկար ոստիկանության բաժանմունքում պահելուն, անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ վարչակազմի կողմից վատ վերաբերմունքի դրսևորմանը, հացադուլ հայտարարելուն, ոստիկանության կողմից հավաքի իրականացումը որևէ կերպով սահմանափակելուն, անձին իր կամքին հակառակ հարկադիր կարգով հոգեբուժարանում տեղավորելուն, ապօրինի շինարարություն իրականացնելուն, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին տեղեկանքներ չտրամադրելուն, հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումների ընդունումն անհիմն մերժելուն, քաղաքացիական ծառայության խորհրդում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին դիտորդական առաքելություն իրականացնել չթույլատրելուն, զինկոմիսարիատում կամ այլ վայրերում զորակոչիկների և զինծառայողների իրավունքների խախտմանը և այլ խնդիրներին: Ահազանգերի արդյունքում այցելություններ են կատարվել առավելապես ոստիկանության բաժիններ, քրեակատարողական հիմնարկներ, հավաքների իրականացման վայրեր, հոգեբուժական հաստատություններ և կառուցապատման աշխատանքների իրականացման վայրեր:

Այցելություններ կալանավայրեր, զորամասեր և այլ հաստատություններ

2014 թվականի ընթացքում Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի (ԲԿԱՄ) կողմից մի շարք հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացվել է 183 այց քրեակատարողական հիմնարկներ, ՀՀ ոստիկանության բաժիններ, ձերբակալված անձանց պահման վայրեր, ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանություն (ՌՌ), ՌՌ կարգապահական մեկուսարանի Կանազի հոսպիտալի հատուկ դեպքերի բաժանմունք, մանկատներ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, հատուկ հանրակրթական դպրոցներ, հոգեբուժական հաստատություններ, տուն-ինտերնատներ: Այցերից 125-ը եղել են պլանային և նախատեսված են եղել Պաշտպանի կողմից հաստատված ժամանակացույցով, իսկ մնացած 58-ը իրականացվել են ըստ անհրաժեշտության՝ արտապլանային կարգով:

Իրականացված պլանային և արտապլանային այցերի ընթացքում վերհանված և արձանագրված խնդիրների, դրանց արդյունավետ լուծումների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմում իրականացվել են քննարկումներ, իրավասու պետական

մարմիններին ուղարկվել են գրություններ: ԲԿԱՄ փորձագետներն ակտիվ մասնակցություն են ունեցել նաև ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների մշակման գործընթացին, համապատասխան մարմինների տրվել են առաջարկներ:

2014 թվականին Պաշտպանի տեղակալների և խորհրդականների կողմից կատարվել են այցելություններ նաև մի շարք հանրակարթական և հատուկ հանրակարթական ուսումնական հաստատություններ՝ բուժապասարկման և սննդի ապահովման պայմանները ստուգելու համար: Վերհանվել են ինչպես օրենսդրական համակարգային խնդիրներ, այնպես էլ սահմանված պահանջները չկատարելու կոնկրետ դեպքեր, որոնց առնչությամբ համապատասխան լիազոր մարմինների հետ վարվել է գրագրություն, կազմակերպվել են կլոր սեղաններ, արվել են առաջարկություններ (ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, և այլն): Պաշտպանի տեղակալը այցելություններ է իրականացրել նաև զորամասեր: Կատարվել են այցեր նաև Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող մի շարք մանկապարտեզներ՝ ուսումնասիրվել են մանկապարտեզների տարածքներից այլ սուբյեկտներին վարձակալության և անհատույց օգտագործման հանձնված տարածքների վերաբերյալ փաստաթղթեր, դրանց հիման վրա բազմաթիվ գրություններ են ուղարկվել պատկան մարմիններին: Այցելություններ են կատարվել նաև երեխաների խնամքի մասնավոր հաստատություններ, պետական մանկատուն, բռնության ենթարկված կանանց կացարան և մանկատան շրջանավարտ աղջիկների խնամքի կառույց: Նշյալ հաստատությունների շահառուների համար անցկացվել են նրանց իրավունքների վերաբերյալ դասընթացներ, իրենց խնդիրների հիման վրա Պաշտպանին ներկայացվել են անհատական դիմում-բողոքներ: Իրականացվել է Երևանի, Գյումրիի, Կապանի և Գավառի մի շարք ԲՄՓ հանձնաժողովների աշխատանքի մոնիթորինգ, վերհանվել են համակարգային խնդիրներ, մի շարք խախտումներ, որոնց հիման վրա առաջարկություններ են ներկայացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Զեկույցներ

2014 թվականին Պաշտպանը ներկայացրել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց, ԲԿԱՄ-ի միջանկյալ զեկույց, ԲԿԱՄ-ի տարեկան զեկույց, ԲԿԱՄ-ի՝ «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում» արտահերթ զեկույցը: Պաշտպանի կողմից 2014 թվականին առաջին անգամ ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկմանն է ներկայացվել Հայաստանում մարդու իրավունքների և ազատությունների ոլորտում առկա խնդիրների և խախտումների վերաբերյալ այլընտրանքային զեկույցը:

Հայտարարություններ

2014 թվականին Պաշտպանը հանդես է եկել 110 հայտարարությամբ, աշխատակազմի գործունեության վերաբերյալ հրապարակումներով և խախտման որոշումների ու դրական լուծում ստացած գործերի լուսաբանումներով: Մասնավորապես, Պաշտպանն անդրադարձել է կենսաթոշակառուների իրավունքների խախտումներին, հոգեբուժական հաստատությունների անմխիթար պայմաններին, մի շարք մարմինների ոչ իրավաչափ գործողություններին, քաղաքական գործիչների դեմ ոտնձգություններին, տարածաշրջանում իրավիճակի լարվածության սրացումներին և այլն:

Ապրիլին Պաշտպանը Եվրոպական Օմբուդսմենների ինստիտուտին տեղեկացրել է Սիրիայում քեսաբահայերի իրավունքների իրավիճակի մասին՝ իր մոնիթորինգի և միջնորդական առաքելության շրջանակներում կոչ անելով հակամարտությունում ներգրավված բոլոր կողմերին անհրաժեշտ համագործակցություն ծավալել:

Նույն ամսին Պաշտպանն հանդես է եկել հայտարարությամբ Բյուրեղավանի գիշերօթիկ հաստատությունում ԲԿԱՄ-ի կողմից բացահայտված ֆինանսական չարաշահումների ու երեխաների նկատմամբ կիրառված բռնությունների դեպքերի վերաբերյալ:

Անդրադառնալով Աֆրիկյանների տան տեղափոխմանն ու դրանից առաջացած հանրային դժգոհությանը՝ Պաշտպանն հայտարարել է, որ Հայաստանի օրենսդրությունը լիարժեք համապատասխանեցված չէ ՀՀ կողմից վավերված միջազգային կոնվենցիայի սկզբունքներին՝ միաժամանակ նշելով, որ պետության պարտականությունն է ոչ միայն փրկել հուշարձանները նյութական կորստից, այլև ապահովել դրանց բանական իմաստավորումը:

Հուլիսին Պաշտպանը ՀՀ առողջապահության նախարարին կոչ է արել շտկել հոգեբուժական հաստատություններում առկա խախտումները, ապահովել հիվանդների պատշաճ խնամքը, բարելավել հաստատություններում սանիտարահիգիենիկ պայմանները, վերացնել ժամկետանց դեղորայքի առկայության դեպքերը:

Ադրբեջանում գերի ընկած և մեկ օր անց սպանված ՀՀ քաղաքացի Կարեն Պետրոսյանի դեպքի առթիվ Պաշտպանը նամակ է հղել ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարին, ինչպես նաև նոյեմբերին խոցված հայկական ուղղաթիռի անձնակազմի վերադարձման հարցով դիմել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարին՝ կոչ անելով հանդես գալ Ադրբեջանի ապօրինի գործողությունները դատապարտող հայտարարություններով:

Դիմումներ ՀՀ Սահմանադրական դատարան

2014 թվականին Պաշտպանի կողմից ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացված 3 դիմումների քննության արդյունքում.

- Մահացած կենսաթոշակառուի չվճարված կենսաթոշակը այսուհետ կարող են ստանալ թոշակառուի մահից հետո նույնիսկ 12 ամիս անց, եթե առկա է ժառանգությունն ընդունած մյուս բոլոր ժառանգների համաձայնությունը, ինչպես

նան, եթե դատարանի կողմից հարգելի են սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառները: Փաստացի տիրապետման ուժով՝ չվճարված կենսաթոշակի գումարը նույնպես պետք է տրամադրվի առանց ժամկետային որևէ սահմանափակման:⁸⁸⁴

- Սահմանադրական դատարանը հայտնել է իր իրավական դիրքորոշումն այն մասին, որ «Վարչական իրավախատումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասում կիրառված «տևող» և «շարունակվող» իրավախախտումների հասկացությունները հստակեցված չեն, և իրավակարգավորման նշված բացը «պետք է հաղթահարվի» ՀՀ Ազգային ժողովի իրավասության շրջանակներում⁸⁸⁵:
 - Սահմանադրական դատարանը հայտնել է իր դիրքորոշումն այն մասին, որ «Զինծառայողների, զինվորական ծառայությունից գորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական երաշխիքների մասին» 1992 թվականի փետրվարի 14-ի և «Զինվորականների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և պետական ապահովագրության մասին» 1992 թվականի մայիսի 15-ի համաձայնագրերով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություն համարժեք սոցիալական երաշխիքներ ապահովելու համար: Բացի դրանից՝ Դատարանը նշել է, որ գործող օրենսդրությամբ զինծառայողին կենսաթոշակ նշանակելիս նրա դրամական բավարարման գումարը որոշելու համար հիմք ընդունվող պաշտոնային դրույքաչափերի, դրամական բավարարման մեջ հաշվառվող վճարումների տեսակների ցանկի հետ կապված հարցերը պետք է կարգավորվեն առնվազն ՀՀ կառավարության, այլ ոչ թե ՀՀ վարչապետի որոշմամբ⁸⁸⁶:
- 2014 թվականին Սահմանադրական դատարան Պաշտպանի ներկայացրած այլ 2 դիմումներով դատարանի որոշման կայացումը ակնկալվում է 2015 թվականին: Դիմումներում բարձրացված խնդիրները վերաբերում են հետևյալին.
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի գործող կարգավորումների համաձայն՝ դատարանի համար հայեցողություն է սահմանվում անձին, որի վերաբերյալ քննվում է անգործունակության ճանաչման գործը, դատաքննությանը մասնակից դարձնելու հարցում: Այսինքն, նույնիսկ եթե անձի առողջական վիճակը թույլ է տալիս վերջինիս մասնակցությունը դատաքննությանը, դատարանը հայեցողություն ունի վերջինիս դատական նիստին կանչելու հարցում: Բացի դրանից՝ անգործունակ ճանաչված անձը ուղղակիորեն զրկվում է

⁸⁸⁴ Մանրամասն տես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 14.10.2014 թվականի ՄԴՈ-1167 որոշումը:

⁸⁸⁵ Մանրամասն տես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 08.04.2014 թվականի ՄԴՈ-1143 որոշումը

⁸⁸⁶ Մանրամասն տես՝ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 10.06.2014 թվականի ՄԴՈ-1154 որոշումը

անմիջականորեն դատարան դիմելու իրավունքից՝ ապաքինման դեպքում իր գործունակությունը վերականգնելու պահանջով⁸⁸⁷:

- «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասության համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտը հարկային մարմին ներկայացրած շահութահարկի հաշվարկում «Շահութահարկի մասին» օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում կարող է կրկնակի պատասխանատվության ենթարկվել և՛ «Շահութահարկի մասին» օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասով, և՛ «Հարկերի մասին» օրենքով, և՛ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով: Բացի դրանից՝ «Շահութահարկի մասին» օրենքով սահմանված պատասխանատվության միջոցը կիրառելիս հաշվի չեն առնվում մի շարք հանգամանքներ, օրինակ՝ արարքի մեղավորությամբ կատարված լինելը, իրավախախտողի մեղքի աստիճանը, առկայությունը և այլն՝ ելնելով այն հանգամանքից, որ վիճարկվող նորմը կրում է պատժիչ բնույթ⁸⁸⁸:

Օրենսդրական առաջարկներ

2014 թվականի ընթացքում Պաշտպանին ներկայացվել է 52 օրենսդրական նախագիծ, այդ թվում՝ ՀՀ վարչական իրավախախտումների օրենսգրքի նախագիծը, «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Փախստականների և ապաստանի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը և այլ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի նախագծեր: Պաշտպանին ներկայացված օրենսդրական նախագծերի, ինչպես նաև քաղաքացիների 10 անհատական դիմում-բողոքների հիման վրա Պաշտպանը ներկայացրել է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված շուրջ 170 օրենսդրական առաջարկ:

2014 թվականի ընթացքում Պաշտպանի կողմից ներկայացված մի շարք առաջարկներ ընդունվել են, և դրանց հիման վրա խմբագրվել կամ ակնկալվում է համապատասխան նախագծերի խմբագրումը:

Օրինակ՝ «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի

⁸⁸⁷ Տես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասություն, 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասություն:

⁸⁸⁸ Տես՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասություն:

նախագծում Պաշտպանի կողմից ներկայացված 6 առաջարկից ընդունվել է 5-ը, ինչի արդյունքում, մասնավորապես՝

- զինապարտներն իրենց առողջական վիճակի, ընտանեկան դրության, հաշվառման վայրի, կրթության, աշխատանքի վայրի փոփոխությունների մասին հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ (հյուպատոսական հաշվառման մարմին) կարող են հայտնել բանավոր և գրավոր (անձամբ, փոստով, էլեկտրոնային փոստով, հեռախոսագանգի միջոցով և այլն) եղանակներով,
- օրենքով կսահմանվի պարտադիր զինվորական ծառայության վայրի ընտրությունը վիճակահանությամբ կատարելու սկզբունքը սահմանող ՀՀ ՊՆ նախարարի հրամանը և/կամ դրա սկզբունքային, մարդու իրավունքներին և շահերին վերաբերող մասերը:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված 9 առաջարկից ընդունվել է 8-ը, ինչի արդյունքում, օրինակ՝

- օրենքով հստակ կսահմանվեն բոլոր այն դեպքերը, երբ տվյալների սուբյեկտի անձնական տվյալները մշակելը համարվում է օրինական,
- մինչև հատուկ կատեգորիայի տվյալների մշակման գործընթացը սկսելը՝ մշակողն այդ մասին կձանուցի լիազոր մարմնին:

Ավելին.

- «Թրաֆիքինգի (շահագործման) ենթարկված անձանց օժանդակության մասին» ՀՀ օրենքի նախագծում կնախատեսվի «հատուկ կատեգորիայի զոհ» համարվող անձանց օրինական ներկայացուցիչների կամ խնամակալության և հոգաբարձության մարմինների պարտադիր մասնակցությունը նախագծով իրականացվող տարբեր գործընթացներին:
- «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության կարգը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի կարգադրության մեջ նախատեսվել է թեկնածուների վերջնական ցուցակի հրապարակումը նախքան Խորհրդարանական վեհաժողով ներկայացնելը, ինչպես նաև նախատեսվել է, որ մրցույթին մասնակցած յուրաքանչյուր անձ կարող է ծանոթանալ մրցույթի անցկացման ընթացքում ձեռք բերված կամ կազմված՝ իրեն վերաբերող փաստաթղթերին:
- «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսվել են հստակ և կանխատեսելի պայմաններ, որոնցով առաջնորդվելով դատարանն իր հայեցողության շրջանակներում կարող է ազատել անձին (օրինակ՝ կաշառք տվողին) օրենքով սահմանված պատասխանատվությունից:

Համագործակցություն Հայաստանի Հանրապետության գործադիր, օրենսդիր և պետական այլ մարմինների հետ

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն ունեցել են մի շարք հանդիպումներ ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների հետ, որոնց ընթացքում քննարկվել են տարբեր օրենսդրական նախաձեռնություններ և ՀՀ ԱԺ օրակարգում ներառված օրենքների նախագծեր: Մասնավորապես, 2014 թվականի ընթացքում քննարկվել են.

- «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը,
- ՀՀ քրեական օրենսգրքով ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» Կոնվենցիայի պահանջներին համապատասխանող «խոշտանգում» հանցակազմի նախատեսումը,
- ցմահ ազատազրկման դատապարտված անձանց գործերի վերանայման արդյունավետ մեխանիզմների, ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ռեժիմների փոփոխության և պատժի կրումից վաղաժամկետ ազատման ճկուն համակարգի ստեղծման համար օրենսդրական երաշխիքների սահմանումը,
- անձանց, այդ թվում՝ անչափահասների, ոստիկանության բաժին «հրավիրելու» և բաժնում իրենց կամքին հակառակ պահելու չարաշահումները վերացնելու նպատակով հստակ երաշխիքների և ընթացակարգերի սահմանումը,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածով սահմանված՝ կալանավորված անձի խնամքի տակ գտնվող անչափահասների և անաշխատունակ անձանց զոյատևման միջոցներն ապահովելու պարտականության երաշխիքների նախատեսումը,
- «Շրջանառության հարկի մասին» օրենքի նախագծի խնդրահարույց կարգավորումները,
- «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- երեխաների ներառական նախադպրոցական կրթության կազմակերպումը:

2014 թվականի հունվարին Պաշտպանի 1-ին տեղակալը Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովում ներկայացրել է արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ Պաշտպանի արտահերթ զեկույցը:

Անհատական գործերի, օրենսդրական առաջարկների և համակարգային խնդիրների լուծման նպատակով աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ են տեղի ունեցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչների հետ, ՀՀ ԿԱ ՀՀ Ոստիկանության, ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Միգրացիոն պետական ծառայության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում՝ գործազրկության նպաստի վերականգնման

անհրաժեշտությունը, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման դեմ պայքարի հիմնախնդիրները, «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի խնդրահարույց դրույթները, ⑥Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, Երևանում հանրային տրանսպորտի սակագնի փոփոխությունը և այլ հիմնախնդիրներ:

2014 թվականին Պաշտպանը և Քննչական կոմիտեի նախագահը ստորագրել են մարդու իրավունքների և ազատությունների պահպանման ոլորտում համագործակցության մասին Փոխըմբռնման հուշագիր:

Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ

ԲԿԱՄ-ի Փորձագիտական խորհուրդը, որում ներգրավված են «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ», «Հայաստանի մանկական ասոցիացիա», «ՏՐՏՈՒ», «Ընդդեմ իրավական կամայականությունների», «Project harmony International», «Սոցիալական արդարություն», «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն կազմակերպությունների», «Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամի», «Վորլդ Վիժն Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչները և 2 անկախ փորձագետներ, 2014 թվականին կրկնակի մշտադիտարկումներ է իրականացրել տասնյակ փակ և կիսափակ հաստատություններում՝ նախկինում վերհանված խնդիրների լուծման ուղղությամբ կատարված գործողությունների ստուգման նպատակով:

Պաշտպանը, ինչպես նաև աշխատակազմի ներկայացուցիչները առանձին համակարգային խնդիրների, մարդու իրավունքների խախտումների և համապատասխան առաջարկությունների մշակման ուղղությամբ հանդիպումներ, մասնագիտական քննարկումներ են ունեցել մի շարք իրավապաշտպան կազմակերպությունների հետ, այդ թվում՝ Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, Հայաստանի Հելսինկյան կոմիտեի, Լրագրողներ հանուն մարդու իրավունքների, Լրագրողների «Ասպարեզ» ակումբ և այլ կազմակերպությունների:

Երեխաների իրավունքների վերաբերյալ համատեղ ֆիլմի նկարահանման շրջանակներում Պաշտպանը և Պաշտպանի աշխատակազմը համագործակցել են «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հետ: Իրականացվել է բիզնեսին վերաբերող խնդիրների քննարկում «ՓՄՁ Համագործակցության Ասոցիացիա» ՀԿ-ի հետ, ինչի արդյունքում մի շարք գործարարների դիմումներ ուղղորդվել են Պաշտպանին: Համագործակցություն է տեղի ունեցել նաև «Կանանց աջակցման կենտրոն», «Կանանց ռեսուրսային կենտրոն», «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպությունների հետ ընտանեկան բռնության գոհերի հետ կապված հարցերով, ինչպես նաև «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի հետ

կանանց հիմնախնդիրների վերաբերյալ հարցերով: Մի շարք հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն է տեղի ունեցել նաև հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների, ինչպես նաև երեխաների իրավունքների ոլորտի համակարգային խնդիրների հարցերով: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները համագործակցել են նաև մի շարք բնապահպանական կազմակերպությունների և բնապահպան ակտիվիստների հետ: Կանանց իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ առանձին հանդիպում է տեղի ունեցել հղի կանանց տրամադրվող պետական նպաստի կրճատում նախատեսող օրենքի նախագծի վերաբերյալ: Ստամբուլյան արձանագրության վերաբերյալ ԵՄ-ի աջակցությամբ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին ԲԿԱՄ-ի աշխատակիցները հանդես են եկել որպես վերապատրաստողներ: Պաշտպանի գրասենյակը «Ընդդեմ իրավական կամայականության» և «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ների հետ համատեղ կազմակերպել է նաև խոշտանգումների դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված միջոցառում:

2014 թվականին Պաշտպանի 1-ին տեղակալի կողմից կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի և մի շարք հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի վերաբերյալ, որտեղ ներկա են եղել բազմաթիվ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ներկայացնելով իրենց դիրքորոշումներն ու առաջարկները նախագծերի վերաբերյալ:

Միջազգային հանդիպումներ

2014 թվականին Պաշտպանն ունեցել է մի շարք գործնական հանդիպումներ ինչպես այլ երկրների Օմբուդսմենների, այնպես էլ միջազգային կառույցների ներկայացուցիչների, Հայաստանում հավատարմագրված մի շարք դիվանագիտական առաքելությունների ղեկավարների հետ: Պաշտպանը և աշխատակազմի այլ ներկայացուցիչներ մասնակցել են միջազգային համաժողովների, քննարկումների, գիտաժողովների և այլն:

Մասնավորապես, Սլովակիայի Մարդու իրավունքների պաշտպանության ազգային կենտրոնի հրավերով Պաշտպանն աշխատանքային այց է կատարել Բրատիսլավա (Սլովակիա)՝ հանդիպում ունենալով Սլովակիայի Մարդու իրավունքների պաշտպանության ազգային կենտրոնի ղեկավարի և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այլ գործիչների հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նախագծել և երկու ինստիտուտների ղեկավարների միջև ստորագրել համագործակցության հուշագիր:

Հունգարիայի հիմնարար իրավունքների հանձնակատարի հրավերով Պաշտպանն այցելել է Բուդապեշտ՝ հանդիպումներ ունենալով Հունգարիայի հիմնարար իրավունքների հանձնակատարի և մի շարք այլ գործիչների հետ: Պաշտպանն իր հունգարացի գործընկերոջ հետ քննարկել է Սաֆարովի դեպքին առնչվող

մանրամասներ: Այցի արդյունքում Պաշտպանի գրասենյակի և Հունագարիայի հիմնարար իրավունքների հանձնակատարի գրասենյակի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր:

Գերմանիայի արտաքին գործերի նախարարության հրավերով Պաշտպանը աշխատանքային այց է կատարել Բեռլին: Պաշտպանն այցելել է Գերմանիայի խորհրդարան (Բունդեսթագ), Գերմանիայի արտաքին գործերի նախարարություն՝ հանդիպումներ ունենալով մի շարք բարձրաստիճան պաշտոնատար անձանց, ինչպես նաև մի շարք իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և Բեռլինի հայ համայնքի հետ:

Պաշտպանն աշխատանքային հանդիպում է ունեցել Հայաստան այցելած Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուիժնիեկսի գլխավորած պատվիրակության հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք հարցեր:

2014 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմն ակտիվ մասնակցություն է ունեցել մի շարք միջազգային համաժողովների: Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը ՀՀ արտաքին գործերի նախարարության հրավերով Բրյուսելում մասնակցել է մարդու իրավունքների շուրջ Հայաստան-ԵՄ երկխոսության վեցերորդ նիստին և հանդես է եկել «Մարդու իրավունքների ազգային ինստիտուտները» թեմայով ելույթով: ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի երևանյան գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) հրավերով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը Սան Ռեմոյում մասնակցել է Մարդասիրական իրավունքի միջազգային ինստիտուտի փախստականների իրավունքներին նվիրված դասընթացին:

Փորձի փոխանակման և վերապատրաստման նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի հրավերով՝ «ԵԱՀԿ և Մարդու իրավունքների պաշտպան. Բուդապեշտի պայմանագրից 20 տարի անց» խորագրով համաժողովին, ինչպես նաև ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հրավերով՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ «Մարդկային չափորոշիչների իրականացման հանդիպում» տարեկան ամենախոշոր համաժողովին:

Աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են նաև Զինված ուժերի ժողովրդավարական կառավարման Ժնևի կենտրոնի հրավերով՝ «Զինված ուժերի վերաբերյալ վեցերորդ միջազգային համաժողովին», ՄԱԿ ՓԳՀ գրասենյակի և «Փոքրամասնությունների հարցերով եվրոպական կենտրոն. Կովկաս» միջազգային կազմակերպության հրավերով՝ Հարավային Կովկասում կրոնի կամ հավատքի ազատության վերաբերյալ տարածաշրջանային համաժողովին:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են նաև Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների եվրոպական ցանցի հրավերով կազմակերպված մի շարք միջոցառումների հետևյալ թեմաներով՝ Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների կարողությունների զարգացմանը նվիրված ամառային ակադեմիա (Բուդապեշտ), Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների հարցերով հանդիպում (Վիեննա), Տարեցների իրավունքների հարցերով

կոնֆերանս (Բրյուսել), Փախստականների հարցերով թեմատիկ պլատֆորմ (Ստրասբուրգ) և այլն:

ԲԿԱՄ ներկայացուցիչները մասնակցել են ԲԿԱՄ կարողությունների ուժեղացման և փորձի փոխանակման համար կազմակերպված մի շարք կոնֆերանսների, մասնավորապես՝ Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի կողմից կազմակերպված «Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմը և խոշտանգումների կանխարգելումը ոստիկանությունում» խորագրով հանդիպմանը:

Միջազգային համագործակցություն

2014 թվականին Պաշտպանը և իր աշխատակազմը շարունակել են իրականացնել մի շարք տեղական և միջազգային ծրագրեր: Շարունակվել է ակտիվ համագործակցությունն ու գործընկերային հարաբերությունների ամրապնդումը մի շարք միջազգային կազմակերպությունների՝ Եվրոպական միության, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, Եվրոպայի խորհրդի, ՄԱԿ-ի, Հայաստանում հավատարմագրված մի շարք երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների, այլ երկրների օբյեկտների գրասենյակների և մի շարք այլ կառույցների հետ:

ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման նախալուսումների շրջանակներում Ժնևում միջազգային հանրության առջև ներկայացվել են Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ կարևորագույն խնդիրներ: Նախալուսումներին մասնակցել է նաև Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը՝ ներկայացնելով Հայաստանում կանանց նկատմամբ խտրականության, կանանց նկատմամբ բռնության, այդ թվում նաև ընտանեկան բռնությանն առնչվող խնդիրներ:

Ակտիվ համագործակցություն է ծավալվել Պաշտպանի գրասենյակի և ՄԱԿ-ի Միջազգային համակարգող հանձնաժողովի միջև: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցություն է ունեցել ՄԱԿ-ի Միջազգային համակարգող հանձնաժողովի 27-րդ ամենամյա հանդիպմանը, ինչպես նաև մի շարք այլ աշխատանքային հանդիպումների:

Պաշտպանի տեղակալը դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, ԵԱՀԿ, ԵԽ և ՄԱԿ) ներկայացուցիչներին ցուցադրել հայ ռազմագերի Հակոբ Ինջիդուլյանի նկատմամբ Ադրբեջանում կիրառված խոշտանգումների վերաբերյալ տեսանյութ:

Շարունակվել է համագործակցությունը Պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) միջև, որի արդյունքում ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր Պաշտպանի աշխատակազմի և ՄԱԲՀ-ի միջև քաղաքացիական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների ոլորտում համագործակցության վերաբերյալ: ՄԱԲՀ-ի աջակցությամբ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը Ժնևում մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի

հարցերով տնտեսական հանձնաժողովի Պեկին+20 տարածաշրջանային հանդիպմանը և հանդես է եկել սեռով պայմանավորված հղիության ընդհատումների թեմայով ելույթով:

Շարունակվել է համագործակցությունը Պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) միջև: Համատեղ մշակվել է երեխաների իրավունքների խախտման դեպքերի մասին երեխաների կողմից Պաշտպանին դիմելու առավել արդյունավետ մեխանիզմ: ՅՈՒՆԻՍԵՖ-ի հրավերով Պաշտպանի ներկայացուցիչը Մինսկում մասնակցել է Բելառուսի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից կազմակերպված տարածաշրջանային համաժողովին՝ նվիրված երեխաների իրավունքների պաշտպանության ազգային համակարգերի ամրապնդմանը:

Շարունակվել է համագործակցությունը Պաշտպանի գրասենյակի և Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի միջև: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցություն է ունեցել ՄԱԿ ՓԳՀ-ի «Պաշտպանության ներառումը արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգում» աշխատաժողովին, ինչպես նաև այլ աշխատանքային հանդիպումների և կլոր սեղանների:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ իրականացվել է համատեղ ծրագիր՝ ուղղված Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի (ԲԿԱՄ) կարողությունների հզորացմանը: Միաժամանակ, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հետ իրականացվող համագործակցության շրջանակներում մշտադիտարկումների իրականացման նպատակով շարունակվել են ԲԿԱՄ այցերը փակ և կիսափակ հաստատություններ: 2014 թվականի վերջին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Պաշտպանի աշխատակազմի միջև մշակվել է 2015 թվականի գործողությունների ծրագիր՝ ուղղված մի շարք ոլորտներում փոխգործակցության խորացմանը:

Շարունակվել է ակտիվ համագործակցությունը Պաշտպանի աշխատակազմի և Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ֆրանսիայի, Սլովակիայի, Հունգարիայի, Ուկրաինայի, Լեհաստանի, Լիտվայի և մի շարք այլ երկրների Օմբուդսմենների գրասենյակների միջև: Փոխհամագործակցության հուշագիր է ստորագրվել Պաշտպանի գրասենյակի և Մեքսիկայի Օմբուդսմենի գրասենյակի միջև:

ՀԱՎԵԼՎԱԾ

Պաշտպանի աշխատակազմի դիմած անձանց քանակը	6326
Պաշտպանի աշխատակազմին ներկայացված գրավոր դիմումներ	1785
Պաշտպանին ուղղված բանավոր բողոքներ	4541
Թեժ գծին ստացված բողոքներ	3323
Պաշտպանի աշխատակազմի կողմից տրամադրված բանավոր խորհրդատվություններ	4541
Դրական լուծում ստացած դիմում-բողոքներ՝ ըստ անձանց	385

Ըստ պետական մարմինների՝ վարույթ ընդունած գործերի տասնյակ	
ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն	318
ՀՀ արդարադատության նախարարություն	290
ՀՀ պաշտպանության նախարարություն	162
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	154
Երևանի քաղաքապետարան	125
ՀՀ դատարաններ	107
ՀՀ դատախազություն	71
ՀՀ քաղաքապետարաններ	49
ՀՀ գյուղապետարաններ	39
ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	28
Այլ մարմիններ	203

01.01.2014-31.12.2014 ժամանակահատվածում գրավոր դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Երևան	960
Շիրակ	144
Գեղարքունիք	143
Կոտայք	110
Լոռի	109
Արարատ	64
Արմավիր	62
Սյունիք	52
Տավուշ	38
Արագածոտն	34
Վայոց ձոր	13
Անհասցե	56
Ընդամենը	1785

01.01.2014-31.12.2014 ժամանակահատվածում խոցելի խմբերից ստացված բողոքների վիճակագրություն

Ազատագրկվածներ	255
Հաշմանդամություն ունեցող անձինք	64
Երեխաներ	29
Զինձառայողներ	51
Փախստականներ	16
Բռնադատվածներ	3
Ազգային փոքրամասնություններ	2
Ընդամենը	420

6.1 ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը անձի հիմնարար իրավունքներից է, որն ամրագրած է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանագրերով:

Այսպես, ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ հավաքների մասնակիցների դեմ վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ գործերով 2014 թվականին ՀՀ վարչական դատարան են ներկայացվել թվով 119 հայցադիմումներ, որոնց մի մասը վերաբերել է 2013 թվականին արձանագրված իրավախախտումներին: 2014 թվականին ներկայացված հայցերի ընթացքի ուսումնասիրությամբ արձանագրվել է հետևյալ վիճակագրական պատկերը.

17 գործով	Ոստիկանությունը հրաժարվել է հայցից:
21 գործով	Հայցադիմումները դատարանի կողմից վերադարձվել են թույլ տրված սխալները վերացնելու նպատակով, սակայն Ոստիկանության կողմից նորից չեն ներկայացվել դատարան՝ ապացույցների անբավարար լինելու հիմքով:
12 գործով	Վարչական դատարանի կողմից բավարարվել են Ոստիկանության հայցերը:
69 գործ	Գտնվում են քննության փուլում:

Այսպիսով, 2014 թվականին ներկայացված հայցերի ընթացքի վերլուծությամբ (բացառությամբ քննության փուլում գտնվող գործերի) արձանագրվել է, որ դատարան դիմելուց հետո Ոստիկանությունը, ըստ էության, հրաժարվել է հավաքի մասնակիցների դեմ ներկայացված 38 հայցադիմումից՝ հիմնականում ապացույցների անբավարարության պատճառաբանությամբ: Այս ցուցանիշը վկայում է նաև այն մասին, որ համապատասխան դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունները, ինչպես նաև հավաքի մասնակիցներին վարչական ձերբակալման և վարչական բերման ենթարկելու գործողությունները ևս եղել են չհիմնավորված:

Ինչ վերաբերում է վարչական ձերբակալմանը, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 259-րդ հոդվածի՝ այն կարող է իրականացվել բացառիկ դեպքերում՝ օրենքով սահմանված նախապայմանների առկայության դեպքում⁸⁸⁹: Ակնհայտ է, որ վարչական ձերբակալումը չի կարող

⁸⁸⁹ Վարչական իրավախախտումները կանխելու նպատակով, եթե սպառվել են ներգործության մյուս միջոցները, անձը պարզելու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե տեղում այն կազմելը հնարավոր չէ և եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, ինչպես նաև գործերի ժամանակին ու ճիշտ քննումը և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների կատարումը ապահովելու նպատակով:

իրականացվել վարչական իրավախախտման կատարման յուրաքանչյուր դեպքում, ինչպես նաև օրենքով սահմանված հիմքերի շրջանակից դուրս որևէ այլ հիմքով: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված է նաև խախտողին բերման ենթարկելը՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով. եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, երբ տեղում այն կազմել հնարավոր չէ, խախտողը Ոստիկանության աշխատողի կողմից կարող է բերվել Ոստիկանություն: Այնուհանդերձ, Ոստիկանության գործողությունների, արձանագրությունների և դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ դեպքերում վարչական ձեռքակալման կամ վարչական բերման գործողությունները իրականացվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավական հիմքերի բացակայությամբ: Ավելին, Ոստիկանության կողմից չեն հիմնավորվել անձին ոստիկանության բաժին բերելու հիմքերը, անհրաժեշտությունը, տեղում արձանագրություն կազմելու անհնարիությունը, իսկ մի շարք դեպքերում վարչական ձեռքակալումը կամ վարչական բերման գործողությունը ուղղակիորեն օգտագործվել են որպես հավաքը դադարեցնելու կամ խոչընդոտելու միջոց: Հավաքի մասնակիցներին առանց հիմնավորման Ոստիկանության բաժին բերելու գործողությունների իրավաչափության վերաբերյալ առկա են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռներ: Օրինակ՝ գործերից մեկով ՄԻԵԴ-ը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (ՄԻԵԿ) 11-րդ հոդվածի խախտում է ճանաչել այն հիմքով, որ հավաքի մասնակիցները ոստիկանություն էին բերվել վարչական իրավախախտում կատարելու հիմքով, սակայն Կառավարության կողմից չէր հիմնավորվել, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումը տեղում եղել է անհնար⁸⁹⁰:

Մի շարք դեպքերում Ոստիկանության կողմից ներկայացվող պահանջը հավաքի մասնակիցներին եղել է ոչ իրավաչափ, այս պահանջի չկատարումը իր հերթին հիմք է հանդիսացել անձին բերման կամ վարչական ձեռքակալման ենթարկելու և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Այսպես օրինակ, 2014 թվականի ապրիլի 4-ին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ներկա են գտնվել ՀՀ գլխավոր դատախազության շենքի մոտ անցկացվող բողոքի ակցիային, երբ հավաքի ընթացքում մասնակիցներից մեկը հատել է փողոցը և կանգնել Դատախազության շենքի դիմաց՝ պաստառը ձեռքին, վերջինիս հետևել են ևս մի քանի հավաքի մասնակիցներ: Ոստիկանության ներկայացուցիչը պահանջել է Վ. Գասպարիից և Ա. Կիվիրյանից վերադառնալ դիմացի մայթ՝ պատճառաբանելով, որ հավաքի մասնակիցները կարող են խաթարել Դատախազության բնականոն աշխատանքը: Պահանջը չկատարելուց հետո Ա. Կիվիրյանը և Վ. Գասպարին բերման են ենթարկվել: Պաշտպանի ներկայացուցիչների անմիջական դիտարկումների արդյունքում պետք է արձանագրել, որ Գլխավոր դատախազության շենքի մայթին համապատասխան անձանց կողմից անցկացվող հավաքը չէր կարող գնահատվել որպես Դատախազության բնականոն աշխատանքը կամ շենքի ազատ մուտքն ու ելքը խոչընդոտող գործողություն: Ավելին, թիվ ՎԴ/2711/05/14 վարչական գործով կայացված վճռի ուսումնասիրությամբ

⁸⁹⁰ *Navalnyy and Yashin v. Russia* (2014)

պարզվել է, որ վերոգրյալ դեպքով Ոստիկանության կողմից հայց է ներկայացվել դատարան՝ Ա. Կիվիրյանին Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, որը Վարչական դատարանի կողմից բավարարվել է: Դատարանը, մասնավորապես, արձանագրել է. «...Տվյալ դեպքում ՀՀ ոստիկանությունը փաստարկում է, որ անցկացվող ակցիայի ընթացքում պատասխանողը թույլ է տվել հասարակական կարգի խախտում՝ փորձելով բողոքի ակցիան անցկացնել ՀՀ Գլխավոր դատախազության վարչական շենքի կենտրոնական մուտքի մոտ, իսկ այդ գործողությունը դադարեցնելուն ուղղված հասարակական կարգը պահպանող Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը պատասխանողը չի կատարել՝ դրանով թույլ տալով վարչական իրավախախտում: ... Տվյալ դեպքում ՀՀ Գլխավոր դատախազության շենքի կենտրոնական մուտքի անմիջական հարևանությամբ հավաքի իրականացումը սպառնացել է տվյալ հիմնարկի բնականոն գործունեությանը, քանի որ հավաքի անցկացումն այդ վայրում կխախտեր ՀՀ Գլխավոր դատախազություն մուտք գործող անձանց, այդ թվում նաև՝ ՀՀ Գլխավոր դատախազության աշխատակազմի աշխատակիցների անարգել մուտքը դեպի շենք: ...Միաժամանակ, հաշվի առնելով, որ գործի քննությամբ պարզվել է նաև, որ պատասխանողից պահանջվել է դադարեցնել վարքագծի նման հակահասարակական դրսևորումը, որպիսի պահանջը պատասխանողը չի կատարել, ապա պետք է փաստել, որ պատասխանողի կողմից ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում կատարելու փաստն անհերքելի է»:

Նույն դեպքով Ոստիկանության կողմից հայց է ներկայացվել նաև Վ. Գասպարիին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի վերաբերյալ, որը դեռևս գտնվում է քննության փուլում:

Բացի վերոգրյալ դեպքից, արձանագրվել են նաև մի շարք այլ դեպքեր, երբ Ոստիկանության կողմից թույլ չի տրվել հավաքն անցկացնել որևէ պետական մարմնի անմիջապես հարակից տարածքում (օրինակ՝ Սահմանադրական դատարան, ՀՀ Նախագահի նստավայր, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ Ոստիկանության մասնաշենքի հարակից տարածք): Նման դեպքերում Ոստիկանության հիմնական պատճառաբանությունը եղել է համապատասխան մարմնի բնականոն աշխատանքի խոչընդոտումը: Պաշտպանի գնահատմամբ՝ շատ դեպքերում այդ արգելքը և դրան հաջորդող Ոստիկանության գործողությունները (բերում, վարչական ձերբակալում, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմում և վարչական պատասխանատվության ենթարկելու գործընթաց) եղել են ոչ իրավաչափ հետևյալ պատճառաբանությամբ: Այսպես՝ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն հավաքն իրականացվում է մեկ վայրում հավաքվելու կամ մեկ վայրից մյուսը տեղաշարժվելու միջոցով (երթ): Հավաքի վայրը պետական, համայնքային կամ մասնավոր սեփականություն հանդիսացող բացօթյա տարածք (փողոց, մայր, հրապարակ, այգի, պուրակ և այլն) կամ շինություն է, որը հավաքի անցկացման նպատակով մատչելի է յուրաքանչյուրի համար: «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ հավաքն արգելվում է, եթե հավաքն անցկացվելու է

Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության նստավայրերից, դատարաններից կամ քրեակատարողական հիմնարկներից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում այն սպառնում է դրանց բնականոն գործունեությանը: Պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք նույն օրենքով սահմանված իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են ղեկավարվել համաչափության և վարչարարության մյուս հիմնարար սկզբունքներով, այն է՝ կամայականության արգելքի սկզբունքը, որով վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք: Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով⁸⁹¹: Դրա հետ միասին, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից հաստատված Խաղաղ հավաքների վերաբերյալ ուղեցույցով (2010թ.) նախատեսված է «տեսողության և լսողության դաշտին» առնչվող սկզբունքը, համաձայն որի՝ հանրային հավաքները անցկացվում են որոշակի թիրախային **անձի, խմբի կամ կազմակերպությանը հաղորդագրություն փոխանցելու նպատակով**: Հետևաբար, որպես կանոն, աջակցություն պետք է ցուցաբերվի, որպեսզի հավաքներն անցկացվեն թիրախային անձի կամ կազմակերպության **տեսողության և լսողության դաշտում**⁸⁹²:

Միաժամանակ, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից անմիջական դիտարկումների, ինչպես նաև առանձին դեպքերով տեսաձայնագրությունների ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ մի շարք պետական մարմինների (այդ թվում՝ Գլխավոր դատախազություն, Սահմանադրական դատարան, ՀՀ Նախագահի նստավայր) անմիջապես հարակից տարածքում անցկացվել են հավաքներ, որոնք չեն արգելվել կամ խոչընդոտվել Ոստիկանության կողմից: Այդ տարածքներում անցկացված հավաքները չեն դիտարկվել և բնականաբար չեն կարող դիտարկվել որպես պետական մարմնի բնականոն գործունեությանը սպառնացող հեռավորության վրա անցկացվող հավաքներ: Մինևնույն ժամանակ, ըստ օրենքի՝ Ոստիկանությունը պարտավոր է ապահովել հավաքի անցկացման վայրում գտնվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը: Այս պարտավորությունը, բնականաբար, չի ենթադրում համապատասխան մարմնի վարչական շենքի մայթին հավաք անցկացնելու արգելք: Փոխարենը, այն ենթադրում է, որ հավաքի անցկացման հետ զուգահեռ պետք է ապահովվի հավաքի անցկացման վայրին հարող շենքերի ազատ մուտքն ու ելքը, ինչը բազմաթիվ դեպքերում ապահովվել է Ոստիկանության ներկայացուցիչների կողմից՝ չխոչընդոտելով հավաքի խաղաղ ընթացքը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ուղեցույցով (2010թ.) սահմանվել է, որ կարգավորող մարմինը պետք է պատշաճ հավասարակշռություն սահմանի խաղաղ հավաքների ազատության և դրա հետ մրցակցող այլ անձանց իրավունքների միջև, որոնք բնակվում, աշխատում, գնումներ են իրականացնում և զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ հավաքի վայրում: Այս հավասարակշռությունը պետք է ապահովվի, որպեսզի նույն վայրում

⁸⁹¹ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք

⁸⁹² <http://www.osce.org/baku/105947?download=true>

հնարավոր լինի իրականացնել հիշատակված մյուս գործունեության տեսակները, եթե դրանք իրենց բնույթով ոչ ողջամիտ բեռ չեն առաջացնում: Տրանսպորտի և հետիոտնի երթևեկության ժամանակավոր խոչընդոտումը ինքնին հիմք չի կարող հանդիսանալ հավաքների ազատությունը սահմանափակելու համար: Միաժամանակ, հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում հանդուրժողականության անհրաժեշտությունը՝ պետք է հավաքը ողջամիտ կերպով չխախտի այլոց իրավունքները և ազատությունները: Առավել ևս, որ հավաքների ազատությունը իր սահմանամբ միայն ժամանակավոր միջամտություն է այլ իրավունքների իրականացմանը⁸⁹³: ՄԻԵԴ-ը իր վճիռներից մեկով հաստատել է, որ տվյալ գործով անմիջականորեն Վարչապետի տան մայթին հավաք անցկացնելու արգելքը եղել է ոչ իրավաչափ և հանգեցրել է ՄԻԵԿ-ի 11-րդ հոդվածի խախտման: Միաժամանակ, ՄԻԵԴ-ը շեշտել է, որ ցանկացած հավաք հանրային վայրում կարող է առաջացնել բնականոն կյանքի որոշակի խոչընդոտում, իսկ տրանսպորտային երթևեկության հնարավոր խոչընդոտման փաստարկը ՄԻԵԴ-ը համարեց չհիմնավորված⁸⁹⁴: Այսպիսով, Պաշտպանի կողմից ուսումնասիրված դեպքերի հետ կապված այլ հանգամանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ դեպքերում Ոստիկանության ծառայողների կողմից հավաքի մասնակիցներին ներկայացված պահանջը՝ հավաքը/երթը/ կոնկրետ մարմնի վարչական շենքի դիմացի մայթին անցկացնելու վերաբերյալ կրել է կամայական բնույթ:

Արձանագրվել են նաև բազմաթիվ դեպքեր հավաքի մասնակիցներին՝ Ոստիկանության կողմից փողոցի երթևեկելի հատվածից դուրս գալու պահանջի ներկայացման և դրան հաջորդող գործընթացների հետ կապված⁸⁹⁵: Այս դեպքերի առնչությամբ Պաշտպանը բազմիցս հայտնել է իր դիրքորոշումը: Արձանագրենք, որ խաղաղ հավաքները, որոնց անցկացման արդյունքում կարող են փողոցներ փակվել, ճանաչվում են որպես հավաքի անցկացման իրավաչափ ձևերից մեկը: Այսպես, 2014 թվականին Պաշտպանի կողմից կայացվել են խախտման որոշումներ 2013 թվականի դեկտեմբերի 2-ին անցկացված հավաքի ընթացքում Ոստիկանության գործողությունների, այդ թվում հավաքի մի շարք մասնակիցներին Ոստիկանության բաժիններ բերելու, հավաքը խոչընդոտելու և օրենսդրության պահանջների այլ խախտումներ թույլ տալու հետ կապված: Բացի դրանից՝ 2014 թվականի հունիսի 23-ին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի վարչական շենքի մոտ տեղի ունեցած հավաքի ժամանակ Պաշտպանի կողմից արձանագրվել են Ոստիկանության ոչ իրավաչափ գործողությունների, այդ թվում՝ Ոստիկանության ծառայողների կողմից հավաքի մասնակիցների նկատմամբ անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման դեպքեր: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ականատես են եղել նրան, թե ինչպես մի քանի ոստիկաններ քաշքշել և հրել են այն քաղաքացիներին, որոնց արդեն այլ ոստիկաններ հեռացրել էին ոստիկանական մեքենայի ճանապարհից: Այնուհետև, երթևեկությունը չխոչընդոտելու պահանջ ներկայացնելուց հետո Ոստիկանության ծառայողների կողմից հավաքի մի

⁸⁹³ <http://www.osce.org/baku/105947?download=true>

⁸⁹⁴ *Patyi vs. Hungary*, (2012)

⁸⁹⁵ Բերման, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման, վարչական պատասխանատվության ենթարկելու հետ կապված գործընթացներ

շարք մասնակիցներ ենթարկվել են բերման, իսկ մի քանի մասնակից բերվել է անմիջապես մայթից երթևեկության խոչընդոտը վերանալուց հետո: Դեպքի վերաբերյալ Պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ հետևյալ բովանդակությամբ. «...Ոստիկանի կողմից հասարակական կարգ պահպանելը չի նշանակում ծեծել քաղաքացիներին, իսկ պաշտոնական պարտականությունները կատարելիս սեփական հույզերով առաջնորդվելը վկայում է ցածր պրոֆեսիոնալիզմի մասին: Հետևաբար, համարժեք քայլեր ենք ակնկալում հավաքի մասնակիցների վրա անհամաչափ ուժ կիրառած բոլոր ոստիկանների նկատմամբ...»: Նշված հավաքի ընթացքում Ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափությունը պարզելու նպատակով Ոստիկանության կողմից նշանակված ծառայողական քննությունը կասեցվել է՝ մինչև ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով նախաքննությամբ վերջնական որոշում կայացնելը: Մինևս ժամանակ, Հատուկ քննչական ծառայության կողմից հայտնված տվյալների համաձայն՝ այս գործով նախաքննությունը դեռևս չի ավարտվել:

Հատկանշական է, որ 2014 թվականին Ոստիկանության կողմից ներկայացված հայցերից որևէ մեկը Վարչական դատարանի կողմից չի մերժվել⁸⁹⁶: Հավաքների մասնակիցների նկատմամբ վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ գործերով 2013 թվականին ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցերի (որոնցով քննությունը շարունակվել/ ավարտվել է 2014թ.) ուսումնասիրությամբ արձանագրվել է հետևյալ վիճակագրական պատկերը.

4 գործով	Ոստիկանությունը հրաժարվել է հայցից:
48 գործով	Վարչական դատարանի կողմից բավարարվել են Ոստիկանության հայցերը:
39 գործ	Գտնվում են քննության փուլում:
11 գործով	Ոստիկանության հայցը մերժվել է:

2013 թվականին ներկայացված հայցերի ընթացքի վերլուծությամբ (բացառությամբ քննության փուլում գտնվող գործերի) արձանագրվել է, որ հավաքի մասնակիցներին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցերի մեծ մասը բավարարվել է, մերժվել է ընդամենը 11 հայց: Մերժված հայցերով բոլոր 11 դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հավաքի մասնակիցներին վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցերը մերժվել են, իսկ ներկայացված հակընդդեմ հայցադիմումները բավարարվել են հիմնականում հետևյալ պատճառաբանություններով.

- Իրավախախտում կատարելու փաստը ներկայացված ապացույցների հիման վրա չի հաստատվել (օրինակ՝ չի հաստատվել, որ հավաքի մասնակիցը պառկած է եղել Երևանի քաղաքապետարանի մուտքի աստիճանավանդակներին, կամ կարմիր գծանշումներ է կատարել Քաղաքապետարանի հարակից տարածքում,

⁸⁹⁶ 69 գործ դեռևս քննության փուլում է:

իր կամքով հայտնվել է փողոցի երթևեկելի մասում, առհասարակ բերման պահին գտնվել է փողոցի երթևեկելի հատվածում/Կոմիտաս 5/):

- Բարձրախոսով խոսելը, վանկարկումներ և կոչեր անելը օրվա որոշակի ժամերին (աշխատանքային օրվա ավարտից հետո, ընդմիջման ժամերին) չի կարող համարվել համապատասխան մարմնի բնականոն աշխատանքը խոչընդոտող վարքագիծ:
- Բարձրախոսով հայտարարություններ անելը, աղմկելը բողոքի ակցիայի շրջանակներում՝ այդ ակցիայի ձևաչափին համապատասխան, չի կարող համարվել հասարակական կարգի խախտում: Վկայակոչվել է նաև «Գալստյանն ընդդեմ Հայաստանի» գործով կայացված ՄԻԵԴ-ի վճիռը, որպես հիմնավորում առ այն, որ որոշակի աղմուկը հանրահավաքի ընթացքում իրավաչափ է, եթե այն չի պարունակում որևէ անպարկեշտ արտահայտություն կամ բռնության հրահրում:

Հարկ է նշել, որ 2014 թվականին Պաշտպանի կարծիքին է ներկայացվել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը, որով առաջարկվում էր հավաքի մասնակիցների պարտականությունների ցանկը լրացնել հետևյալ պարտականությամբ. *«ձեռնպահ մնալ այնպիսի դիտավորյալ գործողություններից, որոնք խախտում են այլ անձանց իրավունքները և ազատությունները կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը»*: Նախագծի վերաբերյալ Պաշտպանի ներկայացրած կարծիքով շեշտվել է, որ տվյալ նախագծի ընդունումը հղի է հավաքների ազատության իրավունքի անհամաչափ սահմանափակման վտանգներով, քանի որ դիտավորյալ կատարված գործողությունը, որը վատթարացնում է երրորդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը մի շարք դեպքերում կարող է իրավաչափ համարվել հավաքների ազատության իրականացման տեսանկյունից (օրինակ՝ երթևեկության ժամանակավոր սահմանափակումը և այլն): Նախագծին որևէ հետագա ընթացք չի տրվել և վերջինս հանվել է շրջանառությունից:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք, արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Ինչպես նաև Սահմանադրությամբ ճանաչվում է յուրաքանչյուր անձի խոսքի ազատության իրավունքը, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է (Հոդված 27):

Հայաստանի վերաբերյալ «Human rights watch»-ի կողմից հրապարակված 2014 թվականի զեկույցում շեշտադրվել է զանգվածային լրատվամիջոցներում բազմակարծության սահմանափակ բնույթը: Բազմակարծությունը խթանելու կարողությունը հանդիսանում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ) կողմից լիցենզավորված անձի ընտրության չափանիշ, թեև ինչպես 2013, այնպես էլ 2014 թվականների ընթացքում բազմաթիվ են եղել դժգոհությունները և մտահոգությունները հեռուստահեռարձակման դաշտում բազմակարծության պակասի վերաբերյալ: Այսպես,

2014 թվականին ՀՌԱՀ-ի կողմից իրականացվել են հանրապետական և մայրաքաղաքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակվող ծրագրերի 2100 և տարածքային սփռում իրականացնող հեռուստառադիոընկերությունների կողմից հեռարձակվող ծրագրերի 1860 օրերի ուղղակի դիտարկումներ, սակայն ՀՌԱՀ-ի կողմից հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկման արդյունքում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր կրկին չեն արձանագրվել: Ընդ որում, որպես բազմակարծության ապահովման տեսանկյունի քայլերի օրինակներ՝ ՀՌԱՀ-ի կողմից առանձնացվել են 2013 թվականի ընթացքում Հանրապետության Նախագահի և Երևանի ավագանու ընտրությունների համակողմանի և հավասար պայմաններով լուսաբանման և նշված ժամանակահատվածում խախտումներ չարձանագրելու դեպքերը: Փորձագետների պնդմամբ, սակայն, հեռուստատեսությունը, որը դեռևս շարունակում է մնալ տեղեկատվություն ստանալու հիմնական աղբյուրը, մեծապես վերահսկվում է: Առկա է լայնածավալ քողարկված գրաքննություն, որը լրատվամիջոցների նկատմամբ կիրառվող քաղաքական ճնշումների հետևանք է: Լրատվամիջոցների մեծ մասը կախվածության մեջ են գտնվում խոշոր ընկերություններից և քաղաքական վերնախավից, որոնց էլ դրանք ինտեգրվում են⁸⁹⁷: Պետք է արձանագրել, որ 2014 թվականին այս բնագավառում առաջընթաց չի արձանագրվել:

Միաժամանակ, ՀՌԱՀ-ի կողմից 2014 թվականին չի արձանագրվել նաև հեռուստառադիոընկերությունների հիմնադրման սահմանափակումների պահանջների խախտման որևէ դեպք: Պաշտպանի 2013 թվականի տարեկան զեկույցում նշվել է, որ հակամենաշնորհային երաշխիքները, և հեռուստառադիոընկերությունների հիմնադրման սահմանափակումների պահանջների նկատմամբ վերահսկողության մեխանիզմները և իրավական կարգավորումները բավարար չեն հեռուստառադիոընկերությունների գործունեության թափանցիկության ապահովման տեսանկյունից և ստեղծում են ոլորտի մենաշնորհացման կամ հեռուստառադիոընկերությունների գործունեությանը օրենքով արգելված միջամտության լուրջ վտանգ: Նշված հարցի կարգավորման կապակցությամբ ՀՌԱՀ-ը հայտնել է, որ հեռարձակման շուկայի գերկենտրոնացումը կամ մենաշնորհացումը կանխելու ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտություն չկա, քանի որ դա կարգավորվում է օրենքով:

2010 թվականի հուլիսին ՀՌԱՀ-ի կողմից հայտարարված 18 հեռուստահեռարձակողների լիցենզավորման մրցույթի անցկացման արդյունքում 4-ով կրճատվեց գործող հեռուստաընկերությունների թիվը: Վերջինը պատճառաբանվեց թվային հեռարձակման անցնելու գործընթացով, որի ժամկետը արդեն իսկ հետաձգվել է օրենսդրական փոփոխությունների կատարման արդյունքում: Գործող օրենսդրության համաձայն՝ ՀՀ-ի ամբողջ տարածքում անալոգային հեռուստահեռարձակման դադարեցման վերջնաժամկետը 2015 թվականի հուլիսի 1-ն է: Այնուամենայնիվ, մինչ

⁸⁹⁷ Mapping digital media, Armenia, Country report, OSF, November 2013

օրս հստակեցված չեն ՀՀ բնակչության անապահով շերտերին անվճար թվային ընդունիչներ տրամադրելու ուղղությամբ սոցիալական ծրագրի իրականացման սկզբունքները, սահմանված չեն թվայնացման գործընթացի իրավական կարգավորման համար անհրաժեշտ կանոնակարգումները «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով: Դրա հետ միասին, խիստ անբավարար են եղել թվային հեռարձակմանն անցնելու գործընթացի վերաբերյալ հանրային իրազեկմանն ուղղված միջոցառումները, ինչով էլ պայմանավորված է բնակչության շրջանում իրազեկվածության ցածր մակարդակը թվայնացման գործընթացի վերաբերյալ: Ըստ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության՝ 2014 թվականին ՀՀ բնակչությունն իրազեկվել է անալոգային հեռարձակումից թվային հեռարձակմանն անցնելու գործընթացի, ակնկալվող արդյունքների և նոր տեխնոլոգիայի օգտագործման գիտելիքների վերաբերյալ Նախարարության կայքէջի միջոցով, տարբեր ՁԼՄ-ներին տրված հարցազրույցներով, 2014 թվականի նոյեմբերի 26-ին Նախարարությունում կազմակերպված կլոր սեղան-քննարկման միջոցով, որը լուսաբանվել է հեռուստատեսությամբ: Հայտնել են նաև, որ Նախարարությունն ընդունել է տարբեր հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրավերները և մասնակցել թվային հեռուստատեսային հեռարձակման համակարգի ներդրման գործընթացի վերաբերյալ բոլոր միջոցառումներին⁸⁹⁸:

Չնայած նրան, որ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը պաշտպանվում է օրենքով, այնուհանդերձ, 2014 թվականին արձանագրվել են լրագրողների նկատմամբ բռնության, նրանց գործունեությունը խոչընդոտելու մի շարք դեպքեր, որոնց քննության և լուծման ընթացքը եղել է խնդրահարույց, ինչպես նաև հանգեցրել է նման գործերի քննության նկատմամբ հանրային վստահության անկմանը:

Այսպես, Ոստիկանության տրամադրած տվյալների համաձայն, «Մոսկվիչկա» սուպերմարկետում Armlur.am լրատվական կայքի լրագրող Ք. Մանուկյանի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու դեպքով նախապատրաստված նյութերով կայացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում՝ հանցակազմի բացակայության հիմքով: Ararum.am լրատվական կայքի համահիմնադիր Հ. Եսայանի կողմից հաղորդում է ներկայացվել այն մասին, որ երկու անձանոթ տղաներ շենքի բակում ձեռքերով և ոտքերով հարվածել են իրեն՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Հետաքննությամբ պարզվել է, որ Հ. Եսայանի առողջությանը պատճառվել է թեթև վնաս և համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի պահանջների՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հանցանք կատարելու դեպքում քրեական գործ հարուցվում է միայն դիմողի բողոքի հիման վրա, իսկ Հ. Եսայանը Ոստիկանություն ներկայացրած դիմումով և լրացուցիչ բացատրությամբ հայտնել է, որ համապատասխան անձանց նկատմամբ բողոք չունի, որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին: 23.06.2014 թվականի «Չորրորդ իշխանություն» թերթի լրագրող Ա. Գևորգյանը դիմում է ներկայացրել այն մասին, որ նույն օրը Ոստիկանության Կենտրոնական բաժնի մոտ

⁸⁹⁸ Մանրամասն տես՝ «ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն» և «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով» բաժինները:

նստիկանության ծառայողները բռնություն են գործադրել իր նկատմամբ՝ պատճառելով մարմնական վնասվածք: Այնուհետև որոշում է կայացվել նյութերը ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու մասին, որտեղ քրեական գործի վարույթը կարճվել է: Hraparak.am կայքէջում գետեղված տեղեկատվության համաձայն, «Կենտրոն» հեռուստաընկերության լրագրող Գ. Խաչատրյանը դաժան ծեծի է ենթարկվել և ազատվել աշխատանքից: Նյութերի նախապատրաստման ընթացքում չի հիմնավորվել Գ. Խաչատրյանին ծեծի ենթարկելու հանգամանքը, որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով: «Չորրորդ իշխանություն» թերթի համարում հրապարակվել է լրագրող Ա. Գևորգյանի հեղինակած հոդվածն այն մասին, որ 2014 թվականի փետրվարի 12-ին Մաշտոցի պողոտայից իրեն բերման ենթարկելու ժամանակ Ոստիկանության Կենտրոնական բաժնի պետի տեղակալ Վ. Գևորգյանը փորձել է խլել իր տեսախցիկը: Ըստ լրագրողի՝ պարեկային ավտոմեքենայում նստիկաններից մեկը հարվածել է իր ձեռքին և կրկին փորձել խլել տեսախցիկը, բաժնի պետ Ա. Պողոսյանը ապտակել է իրեն և խլել իր հեռախոսը, իսկ ավագ իրավախորհրդատու Ս. Մելիքյանը վերցրել է իր տեսանկարահանող սարքերի ինֆորմացիոն կրիչները, իսկ երբ դրանք վերադարձրել են, պարզվել է, որ տեսանկարահանված տեսանյութերը ջնջված են: Ոստիկանության ծառայողների արարքներին քրեաիրավական գնահատական տալու համար ծառայողական քննության նյութերը ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որտեղ հարուցվել է քրեական գործ: Այնուհետև որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու մասին՝ նստիկանության ծառայողների արարքներում ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ և 309-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշների բացակայության հիմքով: Ա. Գևորգյանի կողմից հիշյալ որոշումը բողոքարկվել է դատական կարգով և այժմ գտնվում է ՀՀ վճռաբեկ դատարանում:

ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տվյալների համաձայն՝ 2014 թվականի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի ենթակա ստորաբաժանումներում լրագրողների մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու դեպքերի առթիվ քննվել են հետևյալ քրեական գործերը: Այսպես՝ Ոստիկանության Գավառի բաժնում «Հետաքննող լրագրողներ» ՀԿ լրագրող Ա. Հովհաննիսյանը հաղորդում է տվել այն մասին, որ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի մուտքի մոտ սոցիալական շարժման ղեկավար ներկայացած Ռ.Ահարոնյանը վիրավորել է ակտիվիստներին և փորձել է նկարահանել միջադեպը: Ռ.Ահարոնյանին Երևանից Գավառ տեղափոխած տաքսու վարորդը և ուղևորուհին խոչընդոտել են իր լրագրողական աշխատանքը՝ փորձելով վնասել ձեռքի տեսախցիկը կամ խլել այն և սպառնացել են իրեն: Հաղորդման հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, կատարվել է նախաքննություն: Այնուհետև, որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Բացի դրանից՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի լրագրող Թ. Հովհաննիսյանը հաղորդում է տվել այն մասին, որ Երևանի Օպերայի շենքում «Հայաստան-Սփյուռք»

համաժողովի աշխատանքների լուսաբանման ընթացքում իր կողմից Ղազախստանի Հանրապետության հայկական համայնքի «Նաիրի» ասոցիացիայի ղեկավար Ա. Կարապետյանին ուղղված հարցից հետո վերջինս իր ձայնագրիչը ձեռքից վերցնելու, ինչպես նաև բջջային հեռախոսում եղած՝ տվյալ գործողության վերաբերյալ տեսաձայնագրությունը ջնջելու միջոցով խոչընդոտել է իր լրագրողական մասնագիտական գործունեությունը: Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, Թ. Հովհաննիսյանը ճանաչվել է տուժող, նախաքննությունը շարունակվում է: Հարկ է նշել, որ վերոգրյալ տեղեկատվությունը, ինչպես նաև դեպքի հանգամանքները ամբողջական չեն: 2014 թվականի ընթացքում արձանագրվել են նաև լրագրողների մասնագիտական գործունեության խոչընդոտման այլ դեպքեր, այդ թվում՝ «iLur.am» լրատվական կայքի օպերատոր Ս. Գևորգյանի, «Միվիլներթի» լրագրող Ա. Մախսուդյանի, «ԳԱԼԱ» հեռուստաընկերության օպերատոր Փ. Տահրադյանի, «Ա1+»-ի լրագրող Մ. Խաչատրյանի (վերջին որոշմամբ քրեական գործի վարույթը կրկին կարճվել է) նկատմամբ: Հարկ է արձանագրել նաև, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից Պաշտպանին չեն ներկայացվել 2014 թվականի ընթացքում լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու հետ կապված դեպքերի և դրանց քննության վերաբերյալ տվյալները: Միաժամանակ, արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ Ազգային ժողովի պատգամավորները, այլ պաշտոնատար անձինք անհարգալից և անընդունելի վարքագիծ են դրսևորել լրագրողների նկատմամբ:

Պաշտպանը բազմիցս խստորեն դատապարտել է լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու, առավել ևս՝ նրա նկատմամբ բռնություն կիրառելու ցանկացած դեպք: Պետական պաշտոնյաների կողմից այդ հանցագործությունների կատարումը չի կարող ունենալ որևէ բացատրություն: 2014 թվականին ևս Պաշտպանը հանդես է եկել նաև մի շարք դատապարտող հայտարարություններով և նման հանցագործությունները կանխարգելելու միակ եղանակը համարել է իրավապահ մարմինների օպերատիվ, խիստ և համաչափ արձագանքը:

2013 թվականի տարեկան զեկույցում Պաշտպանն արձանագրել է, որ քաղաքացիները դատարաններում զրկված են եղել ոչ հրապարակային ձևով արտահայտված վիրավորանքի դեմ իրավական պաշտպանություն միջոցների հնարավորությունից, քանի որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորումից դուրս են այն դեպքերը, երբ հայտարարությունը կատարվել է ոչ հրապարակային, երրորդ անձի բացակայությամբ: ՀՀ Սահմանադրական դատարանը դեռևս ՄԴՈ-997 որոշմամբ արձանագրել է, որ այս իրավակարգավորման բացը հաղթահարելու համար ՀՀ Ազգային ժողովն իր իրավագործության շրջանակներում առանձին քննարկման առարկա պետք է դարձնի ոչ հրապարակային վիրավորանքից պաշտպանության իրավական կանոնակարգման խնդիրը: Այնուամենայնիվ, ինչպես 2013, այնպես էլ 2014 թվականին այս խնդիրը իրավական կարգավորում չի ստացել:

Կարևորելով արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքը՝ միաժամանակ դատապարտելի է դրա յուրաքանչյուր ծայրահեղ դրսևորում, որի միջոցով տարածվում կամ հրահրվում է ռասսայական ատելություն, քսենոֆոբիա, հոմոֆոբիա,

հակասեմիտիզմ, խտրականության այլ ձևեր կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված ատելություն: Արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության շրջանակների մեջ ակնհայտորեն չեն տեղավորվում ատելության խոսք պարունակող արտահայտությունները: Անհանդուրժողականության, թշնամանքի, բռնության, ինչպես նաև ատելության շարժառիթով հանցագործությունների կատարման լուրջ վտանգ են ստեղծում ատելության խոսքի դրսևորումները, որոնք, հատկապես, կատարվում են պետական պաշտոնատար անձանց հայտարարությունների համատեքստում: Հաշվի առնելով ազդեցության առավել լայն շրջանակները՝ ատելության խոսքի տարածումը զանգվածային լրատվամիջոցներով կարող է ունենալ ավելի վտանգավոր հետևանքներ: Այսպես, ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է անձնական կամ սոցիալական բնույթի ցանկացած հանգամանքներով պայմանավորված խտրականության բացարձակ արգելք: Ավելին, 1997 թվականին Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված Ատելության խոսքի վերաբերյալ թիվ (97) 20 և Ջանգվածային լրատվամիջոցների և հանդուրժողականության մշակույթի խթանման վերաբերյալ թիվ (97) 21 հանձնարարականներով Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին կոչ է արվել օրենսդրական և գործնական բնույթի միջոցներ ձեռնարկել՝ ատելության խոսքի դեմ պայքարելու ուղղությամբ:

ՄԻԵԴ-ը բազմիցս դատապարտել է անհանդուրժողականության տարբեր դրսևորումները, որոնք վտանգում են ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքները: Ընդ որում, ատելության հրահրումը չի ենթադրում անպայմանորեն բռնի գործողության կամ հանցագործության կատարման կոչ: Դատարանը արձանագրել է, որ ատելության խոսքը, որը չի համապատասխանում ՄԻԵԿ-ով երաշխավորված և հռչակված արժեքներին, դուրս է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության շրջանակներից՝ իրավունքների չարաշահման արգելքի ուժով⁸⁹⁹:

2014 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ Ազգային ժողովի նախագահի որոշմամբ հաստատվեց ՀՀ Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման նոր կարգը, որը նախորդ կարգի համեմատությամբ առավել առաջադեմ կարգավորումներ է նախատեսում: 21.08.2009 թվականի թիվ ՆՈ-003-4 որոշմամբ հաստատված կարգով ամրագրված դրույթն առ այն, որ լրագրողի հավատարմագրումը վաղաժամկետ դադարեցվում է, եթե նա տարածել է Ազգային ժողովի և աշխատակազմի գործունեության մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը, ինչը հաստատվել է դատարանի վճռով, այլևս տեղ չի գտել նոր հավատարմագրման կարգում: Այս դրույթի նախատեսումը չէր բխում ոչ ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, ոչ «Ջանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքից և համահունչ չէր ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի պահանջներին: Այնուամենայնիվ, նոր հավատարմագրման կարգով խնդրահարույց է 8-րդ կետով սահմանված հետևյալ դրույթը. «Ազգային ժողովում կարող են հավատարմագրվել ՀՀ արդարադատության

⁸⁹⁹ Մասնավորապես, ՄԻԵԿ-ի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, որ որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունի իրականացնել այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են Կոնվենցիայով սահմանված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:

նախարարությունում հաշվառված՝ 1500 և ավելի տպաքանակ ունեցող օրաթերթերի, 1000 և ավելի տպաքանակ ունեցող ամսագրերի և շաբաթաթերթերի, օրական 2000 և ավելի այցելու (հավատարմագրման օրվան նախորդող ամսվա այցելությունների միջին ցուցանիշ) ունեցող և առնվազն շաբաթը մեկ անգամ թարմացվող ինտերնետային լրատվության միջոցների լրագրողները, լուսանկարիչներն ու տեսաձայնագրման օպերատորները»։ Մինչդեռ, նման բլանկետային արգելքի նախատեսումը չի բխում արտահայտվելու ազատության իրավունքի համաչափ սահմանափակման պահանջներից, քանի որ հաշվի չի առնվում առանձին դեպքերում ուշադրության արժանի հանգամանքները և տարածվող տեղեկատվության հանրային նշանակությունը, օրինակ՝ որոշակի սոցիալական խմբերի (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց) իրավունքներին առնչվող կամ առանձին թեմատիկ ուղղվածություն ունեցող լրատվամիջոցները հնարավոր է չունենան դիտումների կամ տպաքանակի նախատեսված քանակը՝ պայմանավորված տվյալ սոցիալական խմբի կամ թեմատիկ ուղղվածությամբ զբաղվող անձանց քանակով։ Դրան զուգահեռ նման լրատվամիջոցներով տարածվող տեղեկատվությունը կարող է ունենալ բացառիկ հանրային նշանակություն, հետևաբար, հավատարմագրումը չի կարող արգելվել ավտոմատ կերպով՝ առանց հաշվի առնելու յուրաքանչյուր կոնկրետ դեպքի հանգամանքները։

2014 թվականին արձանագրվել են ՋԼՄ-ների տեղեկատվության աղբյուրի բացահայտման պահանջի դեպքեր։ Պաշտպանն իր մտահոգությունն է հայտնել նման պարտադրանքի յուրաքանչյուր դեպքի առնչությամբ՝ հաշվի առնելով տեղեկատվության աղբյուրի բացահայտման վտանգները և սառեցնող ազդեցությունը ամբողջ լրատվական դաշտի նկատմամբ։ Տեղեկատվության աղբյուրների գաղտնիությունը պաշտպանելու լրագրողի իրավունքը երաշխավորված է թե Եվրոպայի խորհրդի շրջանակներում **ընդունված փաստաթղթերի, և թե ՄԻԵԴ նախադեպային վճիռների համատեքստում**։ Ելնելով ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի պահանջներից՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն մշակել է No. R (2000) 7 հանձնարարականը, որտեղ հստակ շեշտվում է, որ **Եվրոպայի խորհրդի** անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել օրենսդրական և գործնական միջոցներ՝ ուղղված ՋԼՄ-ների կողմից տեղեկատվության աղբյուրի չբացահայտման գործուն և հստակ պաշտպանությանը։ Միաժամանակ, նշյալ փաստաթղթում արձանագրվում է, որ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության իմաստով միայն բացառիկ դեպքերում են իշխանություններն իրավասու բացահայտել լրագրողի տեղեկատվության աղբյուրը։ ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ լրագրողական աղբյուրի պաշտպանությունը հանդիսանում է ՋԼՄ-ների ազատության հիմնական երաշխիքը, առանց այսպիսի երաշխիքի աղբյուրները կաշկանդված կլինեն դիմել լրատվամիջոցներին, որով տարածվում է հասարակությանը հետաքրքրող տեղեկատվությունը, հետևաբար, տեղեկատվության աղբյուրի բացահայտումը չի կարող լինել համատեղելի 10 - րդ հոդվածի հետ, եթե այն չի բխում հանրային շահից⁹⁰⁰։ Պաշտպանը նաև առաջարկություն է ներկայացրել ՀՀ արդարադատության

⁹⁰⁰ *Goodwin v. the United Kingdom, Nordisk Film & TV A/S v. Denmark, Voskuil v. the Netherlands, Sanoma Uitgevers B.V. v. the Netherlands*

նախարարությանը օրենսդրական լրացում կատարելու նպատակով՝ նկատի ունենալով այն, որ դատաքննության հրապարակայնության սահմանափակման պահանջից բացի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված չեն լրագրողի կողմից տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իրավունքի այլ էական նշանակություն ունեցող երաշխիքները: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածով սահմանված է վկայի կողմից ցուցմունք տալու պարտականությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով սպառիչ կերպով թվարկված են որպես վկա հարցաքննման ոչ ենթակա անձինք, որոնց ցանկում ներառված չեն լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները՝ իրենց գործունեության ընթացքում հայտնի դարձած տեղեկությունների աղբյուրի չբացահայտման երաշխիքի ապահովման նպատակով: Առաջարկվել է համապատասխան ցանկում նախատեսել նաև լրագրողներին՝ օրենքով նախատեսված վերապահմամբ:

Պաշտպանը մտահոգիչ է համարել նաև նախնական քննության տվյալների հրապարակման և դրա համար նախատեսված քրեական պատասխանատվության հետ կապված իրավակարգավորումները՝ լրագրողների գործունեության իրականացման համատեքստում, ինչի կապակցությամբ դեռևս 2014 թվականի հունիսին առաջարկություն է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարություն: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Անհրաժեշտ դեպքերում քննիչը, հետաքննության մարմինը՝ վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին, մասնագետներին, փորձագետներին, թարգմանիչներին, ընթերականներին, պաշտպաններին և գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախազգուշացնում են նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին: Վերոգրյալ հոդվածի 1-ին մասն ամրագրում է նախնական քննության տվյալների հրապարակման ընդհանուր արգելքը՝ առանց կոնկրետ սուբյեկտների հստակեցման: 2-րդ մասով ամրագրված նախաքննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին գրավոր նախազգուշացնելու վերաբերյալ դրույթը որևէ ձևով չի կարող պայմանավորել նախնական քննության տվյալները չհրապարակելու պարտականության մասին գրավոր չնախազգուշացված անձանց պատասխանատվությունը: Անկախ նրանից, թե անձը գրավոր նախազգուշացվել է տվյալներ չհրապարակելու պարտականության մասին, թե՛ ոչ, նա կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասը, առանց որևէ վերապահման, ամրագրում է առանց գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու արգելք: Մինչև ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանվում նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու համար, այն է՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝

առավելագույնը մեկ ամիս ժամկետով: Վերոգրյալ հոդվածում ևս արված չէ որևէ տարբերակում քրեական պատասխանատվության ենթակա սուբյեկտների վերաբերյալ: ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի հետ համակարգային կապի մեջ հնարավորություն է տալիս քրեական պատասխանատվության ենթարկելու ցանկացած անձի, ով առանց գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվության հրապարակել է նախաքննության կամ հետաքննության տվյալ: Միաժամանակ, «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասին համաձայն՝ օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող տեղեկատվության տարածման համար լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվության ենթակա չէ, եթե այդ տեղեկատվությունը նա ձեռք չի բերել օրենքով արգելված եղանակով, կամ ակնհայտ չի եղել, որ դա օրենքով սահմանված կարգով գաղտնիք է համարվել: Վերը թվարկված բոլոր իրավակարգավորումների լույսի ներքո նախաքննության կամ հետաքննության տվյալներ հրապարակելու համար քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել նաև լրատվական գործունեություն իրականացնող անձը, քանի որ ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, և ոչ ՀՀ քրեական օրենսգրքում նախնական քննության տվյալներ չհրապարակելու պարտականություն ունեցող սուբյեկտների ցանկը հստակեցված չէ, սահմանափակված չէ միայն քրեական դատավարությանը մասնակցող անձանցով: Հետևաբար, Պաշտպանի կողմից առաջարկվել է փոփոխություններ կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածում՝ սահմանելով գործի վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին, մասնագետներին, փորձագետներին, թարգմանիչներին, ընթերականներին, պաշտպաններին և գործին մասնակցող այլ անձանց՝ նախաքննության տվյալներն առանց թույլտվության հրապարակելու արգելքի, ինչպես նաև հրապարակելու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին գրավոր նախազգուշացնելու պարտականությունը: Դրան համապատասխան առաջարկվել է փոփոխություն կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածում՝ սահմանելով միայն առանց թույլտվության՝ հրապարակման արգելքի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով գրավոր նախազգուշացված անձի կողմից նախնական քննության տվյալները հրապարակելու համար պատասխանատվություն: Առաջարկվել է նաև հստակեցնել «նախաքննության տվյալ» հասկացությունը, քանի որ այն ենթակա է չափազանց տարածական մեկնաբանման և կարող է ընդգրկել քրեական գործին առնչվող ցանկացած տեղեկատվություն՝ ընդհուպ մինչև մեղադրյալի անուն-ազգանունը:

Պաշտպանի կողմից բազմաթիվ ահազանգերի և դիմում-բողոքների հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրվել են իրավապաշտպան գործունեությամբ զբաղվողների նկատմամբ բռնության, իրենց օրինական գործունեությունը խոչընդոտելու և նրանց իրավունքները խախտելու դեպքերը: Ուսումնասիրված մի շարք դեպքերում իրավապաշտպանների օրինական գործունեության իրականացումը խոչընդոտել են հենց պաշտոնատար անձինք, օրինակ՝ Ոստիկանության ծառայողները: Մինչդեռ, պետությունը պարտավոր է պաշտպանել

իրավապաշտպաններին հնարավոր հարձակումներից, սպառնալիքներից, պարտավոր է ապահովել վերոնշյալ անձանց նկատմամբ հարձակումների և սպառնալիքների վերաբերյալ հաղորդումների անհապաղ և համապարփակ ուսումնասիրությունը՝ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու և տուժողների իրավունքները վերականգնելու նպատակով⁹⁰¹: Այս իմաստով համապատասխան իրավապահ մարմինների գործառույթն է՝ ոչ միայն տվյալ դեպքերի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը, այլև անձանց, հատկապես՝ իրավապաշտպանների անվտանգության ու անձեռնմխելիության ապահովումը: Այնուամենայնիվ, իրավապաշտպանները դեռևս լիարժեք ապահովված չեն բռնությունից: Չնայած այն հանգամանքին, որ չկա հստակ սահամանում, թե ով է համարվում իրավապաշտպան գործունեություն իրականացնող, այնուամենայնիվ, համաձայն ՄԱԿ-ի Իրավապաշտպանների մասին հռչակագրի՝ իրավապաշտպան կարող է լինել ցանկացած անձ կամ անձանց խումբ, ովքեր աջակցում են մարդու իրավունքների պաշտպանությանը⁹⁰²: Անհրաժեշտ է նշել, որ իրավապաշտպաններ կարող են համարվել ոչ միայն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, այլ նաև, որոշ դեպքերում քաղաքայինները, պաշտոնատար անձինք (government officials), ինչպես նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչները⁹⁰³: Նշենք, որ մինչդեռ լրագրողների գործունեության խոչընդոտումը քրեորեն հետապնդելի արարք է⁹⁰⁴, իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց գործունեության խոչընդոտման արգելքի դրույթներ ընդհանրապես նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ⁹⁰⁵: Հարկ է նշել, որ իրավապաշտպանների, քաղաքացիական ակտիվիստների նկատմամբ մի շարք բռնության դեպքերի (քաղաքացիների ավտոմեքենաների հրկիզման, մարդկանց ծեծի, բռնության ենթարկելու դեպքեր) վերաբերյալ Պաշտպանը հայտնել է իր մտահոգությունը, ինչպես նաև հանրությանը տեղեկացրել, որ բոլոր այս գործերի քննությունն առաջիկայում Պաշտպանի և իր աշխատակազմի ուշադրության կենտրոնում է գտնվելու: Պաշտպանը բազմիցս նշել է, որ նման դեպքերում պահանջվում է, որ բոլոր իրավապահ մարմինները գործեն օպերատիվ և անաչառ՝ իրավախախտներին արագ բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու նպատակով: Գործի անաչառ քննությունը և սոցիալական արդարության վերականգնումը կարևոր է նաև նրանով, որ հանրությունը պետք է համոզվի, որ մեղավորներն անպատիժ չեն մնում, իսկ քաղաքացիների ապահովության սպառնալիքները վերացված են⁹⁰⁶: ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը դեռևս 2010 թվականին Հայաստանում մարդու իրավունքների վիճակի մասին զեկույցում իր մտահոգությունն էր

⁹⁰¹ Concluding observations adopted by the Human Rights Committee at its 105th session, 9-27 հուլիս 2012 թվական, կետ 26 <file:///H:/Data/Downloads/CCPRCARMCO2.pdf>

⁹⁰² Յուրաքանչյուր որ իրավունք ունի անհատապես կամ այլ անձանց հետ համատեղ խրախուսել և ձգտել պաշտպանելու մարդու իրավունքները և հիմնարար ազատություններ ներպետական կամ միջազգային հարթակներում: http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/defender.shtml, հոդված 1

⁹⁰³ <http://www.ohchr.org/EN/Issues/SRHRDefenders/Pages/Defender.aspx>

⁹⁰⁴ ՀՀ քրեական օրենսգրքը, հոդված 164

⁹⁰⁵ Մանրամասն տես՝ «ՀՀ արդարադատության նախարարություն» գլխում:

⁹⁰⁶ http://pashtpan.am/library/view_news/article/1237

հայտնել իրավապաշտպանների օրինական գործունեության խոչընդոտման և բռնության դեպքերի վերաբերյալ⁹⁰⁷: Նշյալ զեկույցում, որպես գլխավոր խնդիր, նշվել էր իրավապաշտպանների իրավունքների ոտնահարման դեպքում իրավախախտների չբացահայտումը՝ պատճառաբանելով նշվածը Հայաստանում արմատավորված անպատժելիության մշակույթով: 2014 թվականին տեղի ունեցած բռնությունների վերաբերյալ հայտարարություն է արվել նաև Հայաստանում ԵՄ պատվիրակության կողմից, որով մտահոգություն է հնչեցվել քաղաքացիական ակտիվիստների և ընդդիմադիր քաղաքական գործիչների նկատմամբ հարձակումների առնչությամբ⁹⁰⁸: Միաժամանակ, «Amnesty International» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունն իր 2014/2015 թվականների զեկույցում նշել է, որ նոյեմբերի 5-ին «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ ներկայացուցիչների և այլ կանանց իրավունքների իրավապաշտպանների նկատմամբ հնչեցվել են սպառնալիքներ և վիրավորանքներ դատարանից դուրս գալու ժամանակ, որտեղ նրանք աջակցություն էին ցույց տալիս ընտանեկան բռնության արդյունքում տուժող ճանաչված կնոջը: Զեկույցում դեպքի առնչությամբ նշվել է, որ տվյալ դեպքով իրավասու մարմինների կողմից չի իրականացվել արդյունավետ քննություն⁹⁰⁹:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական արդյունավետ միջոցների իրավունք (հոդված 18): Ինչպես նաև

յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք (հոդված 19):

Արդար դատաքննության իրավունքի համատեքստում հատկանշական է, որ ի տարբերություն նախկին իրավակարգավորման՝ «ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-86-Ն ՀՀ օրենքով նախատեսվել է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք Արդարադատության խորհրդի որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով: Այնուամենայնիվ, օրենքը ուժի մեջ մտնելուց հետո դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով Արդարադատության խորհրդում դռնբաց նիստեր տեղի չեն ունեցել, ինչը հիմնավորվել է համապատասխան դատավորների կողմից ներկայացված

⁹⁰⁷ <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/179/19/PDF/G1017919.pdf/OpenElement>

⁹⁰⁸ http://eeas.europa.eu/delegations/armenia/press_corner/all_news/news/2014/2014_12_16_en.htm

⁹⁰⁹ <https://www.amnesty.org/en/documents/pol10/0001/2015/en/>

միջնորդություններով:

2014 թվականին արձանագրվել են դատական նիստերի ընթացքում հանրության ներկայացուցիչների կողմից դահլիճ մուտք գործելու հետ կապված սահմանափակումներ՝ դահլիճում բավարար տեղ չլինելու պատճառաբանությամբ: «Human rights watch»-ի կողմից հրապարակված 2014 թվականի զեկույցում արձանագրվել է, որ Շ. Հարությունյանի գործով առաջին դատական նիստի ընթացքում արգելվել է լրագրողների և ընտանիքի անդամների մուտքը դատական դահլիճ՝ գերբեռնվածության անհիմն պատճառաբանությամբ: 2014 թվականին Պաշտպանը դիմում է ստացել 13 անձանցից այն մասին, որ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Աբովյանի նստավայրում տեղի ունեցած Վ. Պետրոսյանի վերաբերյալ քրեական գործի հերթական դատական նիստի ժամանակ դատական կարգադրիչներն իրենց արգելել են մտնել դատական նիստերի դահլիճ՝ պատճառաբանելով դահլիճում նստելու տեղ չլինելու հանգամանքով: Խնդրի վերաբերյալ Պաշտպանի կողմից կատարված հարցումներին ի պատասխան՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից տրվել են պարզաբանումներ առ այն, որ օբյեկտիվ պատճառներով դատական նիստերի դահլիճներում հնարավոր է ապահովել միայն սահմանափակ թվով անձանց միաժամանակյա մուտքն ու ներկայությունը և հնարավոր են իրավիճակներ, մասնավորապես, հասարակական հնչեղություն ունեցող գործերի պարագայում, երբ դատական նիստերի դահլիճների մարդաշատ լինելու պատճառով անձանց որոշ խմբերի հնարավորություն չտրվի մուտք գործել դատական նիստերի դահլիճ և ներկա գտնվել ընթացող դատավարությանը: Տեղեկացվել է նաև, որ հասարակական հնչեղություն ունեցող գործերի քննարկման պարագայում դատական նիստին ներկա գտնվելու ցանկություն ունեցող անձանց թիվը կարող է աննկարագրելի մեծաքանակ լինել, ինչը նախապես կանխատեսել հնարավոր չէ, հետևաբար, անհնար է նաև այդ ուղղությամբ ձեռնարկել որևէ միջոցառում: Այնուհանդերձ, հաշվի առնելով հրապարակային դատաքննության սահմանադրական սկզբունքի ապահովման անկյունաքարային կարևորությունը և նման դեպքերը ապագայում բացառելու անհրաժեշտությունը՝ Պաշտպանը ՀՀ դատարանների նախագահների խորհրդին և Դատական դեպարտամենտին առաջարկել է ձեռնարկել միջոցառումներ դատական դահլիճի տեղերի թվաքանակի հետևանքով դատաքննության հրապարակայնության սահմանափակումները կանխարգելելու ուղղությամբ, որոնք, ի թիվս այլոց, կարող են իրականացվել հետևյալ եղանակներով: Այսպես, օրինակ, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետությունների կողմից դատական դահլիճի տեղերի սահմանափակ լինելու պայմաններում դատաքննության լիարժեք հրապարակայնության ապահովման նպատակով ձեռնարկվում են տարբեր գործողություններ: Օրինակ՝ ՌԴ Գերագույն արբիտրաժային դատարանի պլենումի «Արբիտրաժային դատավարության հրապարակայնության ապահովման վերաբերյալ» 08.10.2012 թվականի թիվ 61 որոշմամբ՝ դատաքննության հրապարակայնությանն առնչվող դրույթների միասնական մեկնաբանությունն ու կիրառությունն ապահովելու նպատակով արբիտրաժային դատարաններին տրվել են հստակ պարզաբանումներ: Մասնավորապես, արբիտրաժային դատարանները պետք է հաշվի առնեն, որ դատական քննությունը դոնփակ անցկացնելու հիմքերի բացակայության պարագայում դատարանն

իրավունք չունի արգելել դատական նիստին ներկա գտնվել ցանկացող քաղաքացիների մուտքը, այդ թվում՝ դատական դահլիճում բավարար տեղ չլինելու պատճառով: Այդ դեպքերում դատարանում կարող են ստեղծվել նման անձանց կողմից դատաքննության ընթացքին ծանոթանալու հնարավորություններ, օրինակ՝ դատական նիստի հեռարձակման ապահովման միջոցով⁹¹⁰: Մեկ այլ օրինակ՝ ԱՄՆ Ջորջիա նահանգի Դատական որակավորման հանձնաժողովի կողմից 28.08.2013 թվականին ընդունված թիվ 239 եզրակացությամբ դատավորներին կոչ է արվել՝ քննարկել այն տարբերակները և այլընտրանքները, որոնք հնարավորություն կտան անձանց ծանոթանալու և մասնակցելու դատաքննությանը, հաշվի առնելով, որ շատ դատական դահլիճներ բավարար նստատեղեր չունեն, օրինակ՝ նիստը դիտելու համար առանձնացված սենյակներ հատկացնելու, լրացուցիչ նստարաններ տեղադրելու, ավելի սեղմ ժամանակացույցեր կազմելու միջոցով և այլն⁹¹¹: Եզրակացությամբ նշվել է նաև, որ հանրությունն ունի դատական քննության մատչելիության սահմանադրական իրավունք և հանրային պաշտոնատար անձինք ու ծառայողները պարտավոր են ապահովել այս մատչելիությունն անխոչընդոտ կերպով:

ՄԻԵԴ-ը բազմիցս անդրադարձել է դատական քննության հրապարակայնության սկզբունքին՝ արձանագրելով, որ դատաքննության հրապարակայնությունը հանդիսանում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով ամրագրված հիմնարար սկզբունք: Արդարադատության իրականացման թափանցիկությունն ու հրապարակայնությունը նպաստում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմնական նպատակի՝ արդար դատաքննության իրականացմանը, որի երաշխավորումը ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկն է⁹¹²: Այսպես, օրինակ, «Հումաթովն ընդդեմ Ադրբեջանի» գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ դատաքննությունը համապատասխանում է հրապարակայնության պահանջին, եթե միայն հանրությունը կարող է տեղեկատվություն ստանալ քննության ժամանակի և վայրի մասին և եթե այդ վայրը մատչելի է իր համար: Շատ դեպքերում այս պահանջները բավարարված կարող են համարվել, երբ դատական նիստը կայանում է դատական դահլիճում, որը բավարար չափով մեծ է հասարակության ներկայացուցիչներին տեղավորելու համար: Այսպիսով, թե ներպետական օրենսդրությունը, և թե դատական պրակտիկան պետք է ապահովեն հասարակության համար դատական նիստերին մասնակցելու հնարավորությունը, եթե հասարակության անդամները այդպիսի ցանկություն ունեն⁹¹³: ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտեն Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14(1)-րդ հոդվածի խախտում է ճանաչել այն դեպքում, երբ հանրային անձի վերաբերյալ գործի քննությունն իրականացվել է փոքր դատական դահլիճում, որում կարող էին տեղավորվել ընդամենը 12 անձ, և որ այդ գործի նկատմամբ ողջամտորեն կարող էր ակնկալվել հանրային զգալի հետաքրքրությունը: Կոմիտեն արձանագրել է նաև, որ պետությունը չի ներկայացրել

⁹¹⁰ <http://yurbox.ru/sudebnaya-praktika/arbitrazh/plenumy-vas-rf/item/215-postanovlenie-plenuma-vas-rf-ot-08102012-n-61>

⁹¹¹ <https://www.schr.org/files/post/files/IQCOpinion239.pdf>

⁹¹² *Axen v. Germany* (1983); *Diennet v. France* (1995); *Moser v. Austria* (2006)

⁹¹³ Legal Digest of International Fair Trial Rights, OSCE/ODIHR, 2012

փաստարկներ առ այն, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել դատական նիստին մասնակցելու ցանկություն ունեցող անձանց տեղավորելու համար, հաշվի առնելով դիմումատուի՝ որպես հանրային անձի դերը⁹¹⁴:

2014 թվականին Պաշտպանի կողմից ներկայացվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ շուրջ 70 հաղորդում, որոնցից որևէ մեկը հիմք չի հանդիսացել կարգապահական վարույթի հարուցման համար: Միաժամանակ Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովից, իսկ 2014 թվականի կատարված փոփոխությունների ուժի մեջ մտնելու հետո նաև՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովից ստացված գրություններն ու որոշումները չեն ունեցել ըստ էության պատճառաբանություններ կարգապահական վարույթի հարուցումը մերժելու վերաբերյալ: Պաշտպանի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ ներկայացված հաղորդումներից մեկը, որով արձանագրված խախտումը նույնական է եղել Արդարադատության խորհրդի կողմից այլ դատավորի նկատմամբ կայացված որոշմամբ արձանագրված խախտմանը, նորից հիմք չի հանդիսացել կարգապահական վարույթի հարուցման համար:

ՀՀ դատական դեպարտամենտի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2014 թվականի ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին ստացվել է 2331 միջնորդություն, որից 2203-ը (94.5%) բավարարվել է, 122-ը՝ (5.2%) մերժվել, իսկ 6-ը՝ թողնվել առանց քննության: Նույն ժամանակահատվածում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 572 միջնորդություն, որից 99-ը (17.3%) բավարարվել է, 462-ը (80.8%)՝ մերժվել, 9-ը (1.6%)՝ թողնվել է առանց քննության (2-ի (0.3%) քննությունը 30.12.2014թ. դրությամբ եղել է անավարտ): Հատկանշական է, որ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից հրապարակված՝ ՀՀ դատարանների 2012-2013 թվականների գործունեության վերաբերյալ համեմատական վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ գրեթե նույն իրավիճակն է եղել նաև 2013 թվականի ընթացքում: Այսպես, ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է 3172 միջնորդություն՝ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին, որոնցից 3011-ը (94.9%) բավարարվել է, 153-ը՝ (4.85%) մերժվել, իսկ 8-ը թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 576 միջնորդություն, որից 129-ը (22.4%) բավարարվել է, 427-ը (74.1%)՝ մերժվել, 16-ը թողնվել է առանց քննության: Նշված վիճակագրությունը ևս մեկ անգամ հաստատում է կալանավորումը որպես խափանման միջոց դատարանների կողմից կիրառելու լայնածավալ պրակտիկան, այն դեպքում, երբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու որոշումները հիմնականում դատարանների կողմից ըստ էության չեն պատճառաբանվում:

2013 թվականին Պաշտպանը հանդես է եկել Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցով, որով անդրադարձել է դատական համակարգում առկա ներքին ճնշումներին, կոռուպցիոն դրսևորումներին,

⁹¹⁴ Mikhail Marinich v. Belarus, Communication No. 1502/2006, U.N. Doc. CCPR/C/99/D/1502/2006 (2010)

Արդարադատության խորհրդի կողմից կիրառված երկակի ստանդարտներին և Արդարադատության խորհուրդը՝ որպես Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս ատյանի դատարանների դատավորների նկատմամբ ուղղակի և անուղղակի ճնշումների գործադրման հիմնական լծակ կիրառելու հարցերին: ԵՄ մարդու իրավունքների հանձնակատարի կողմից 2015 թվականի մարտին հրապարակված զեկույցով, ըստ էության, վերահաստատվել է նույն խնդիրների առկայությունը նաև այսօր: Այսպես, Ջեկույցով նշվել է, որ Հանձնակատարին մտահոգում են ստացված տեղեկություններն այն մասին, որ դատական բարձր ատյանները միջամտում են ավելի ցածր ատյանների դատավորների աշխատանքին: Անհատ դատավորներից յուրաքանչյուրի անկախությունը ողջ դատական համակարգի անկախության անհրաժեշտ նախադրյալն է: Նշվել է նաև, որ կարգապահական վարույթները չպետք է օգտագործվեն որպես ազդեցության կամ վրեժխնդրության գործիք դատավորների նկատմամբ, և դրանց կամայական օգտագործումը կանխելու համար պետք է ներդրվեն անհրաժեշտ երաշխիքներ:⁹¹⁵

ՀՀ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք (Սահմանադրություն, Հոդված 30): Այսպես, 2014 թվականին Պաշտպանին են ներկայացվել «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրաքվեի մասին» և մի շարք այլ հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր, որոնց վերաբերյալ Պաշտպանը ներկայացրել է մի շարք առաջարկություններ և դիտողություններ: Այսպես, «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի նախագծի (Օրենքի նախագիծ) 17-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվել է, որ հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում կենտրոնական հանձնաժողով կարող են ներկայացնել Հանրապետության Նախագահը, Ազգային ժողովը, պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը հանրաքվեի արդյունքներն ամփոփելու համար սահմանված ժամկենտի ավարտից ոչ ուշ, քան 2 օր առաջ մինչև ժամը 18.00: Այս պարագայում հանրաքվեի արդյունքները անվավեր ճանաչելու դիմում ներկայացնելու իրավունք չեն ունենում քաղաքացիները, մինչդեռ «Հանրաքվեի ժամանակ բարեխիղճ գործելակերպի կանոնագիրք» 235 բանաձևի (այսուհետ նաև՝ Բանաձև) գլուխ II-ի 3.3 կետի «e» մասի համաձայն՝ բոլոր քվեարկողները պետք է ունենան բողոքարկելու իրավունք: Բողոքարկելու համար պետք է նախատեսված լինի քվեարկողների խելամիտ քանակ: Նշենք, որ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Իռլանդիայում, Իտալիայում, Շվեյցարիայում, Ռուսաստանում և մի շարք այլ երկրներում բոլոր քվեարկողները կարող են բողոք ներկայացնել հանրաքվեի արդյունքներն անվավեր ճանաչելու կապակցությամբ: Առաջարկվել է Օրենքի նախագծով սահմանել կարգավորում, որը թույլ կտա բոլոր

⁹¹⁵<https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2701645&SecMode=1&DocId=2243332&Usage=2>

քվեարկողներին ևս հանրաքվեի արդյունքները անվավեր ճանաչելու դիմում ներկայացնել համապատասխան մարմնին:

Պաշտպանի կարծիքին ներկայացված՝ «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Նախագիծ) 21-րդ հոդվածով ՀՀ ընտրական օրենսգրքի (Օրենսգիրք) 66-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվում է նոր խմբագրությամբ, որի հետևանքով հանվում է ընտրողների ստուգման երկաստիճան համակարգը՝ անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելու ինստիտուտը, որը նպատակ ունի կանխել իրավախախտումները և չի ավելացվում այդ ինստիտուտին փոխարինող որևէ այլ մեխանիզմ: Մինչդեռ, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտրախախտումների կանխարգելման արդյունավետ մեխանիզմ է հանդիսանում ընտրողների ստուգման երկաստիճան համակարգը, այսինքն՝ ոչ միայն ընտրական ցուցակների կազմման, վարման, դրանց հրապարակայնության, ընտրական տեղամասում ընտրողների ցուցակում ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տվյալների գրանցման կանոնակարգումները, այլև դրանց դրոշմակնքումը կամ ընտրողի մատների թանաքոտումը⁹¹⁶: Դեռևս 2008 թվականին Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով դրոշմակնքման հարցին, առաջարկել էր օգտագործել մատների թանաքոտման ինստիտուտը: Իսկ 2012 թվականին ԵԽԽՎ-ն հայտնել է, որ ընտրախախտումների դեմ պայքարի առավել դասական և փորձված միջոց է ընտրողների մատների թանաքոտումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է նույնականացման քարտերի ինստիտուտը, այնուամենայնիվ անընդունելի է համարվել Նախագծով ընտրողների ստուգման երկաստիճան համակարգի վերացումն ընդհանրապես: Առաջարկվել է մշակել ստուգման երկաստիճան համակարգի նոր մեխանիզմներ, որոնք արդիական կլինեն նաև նույնականացման քարտերի ներդրման պարագայում:

Օրենսգրքի 46-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում ներկայացնել: Նշենք, որ Վենետիկի հանձնաժողովը 26.05.2011 թվականին ներկայացրել է կարծիք ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ (այսուհետ՝ Կարծիք), որտեղ, անդրադառնալով 46-րդ հոդվածի 3-րդ մասին, նշվում է, որ անհրաժեշտ է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու դիմում ներկայացնող անձանց ցուցակում ավելացնել նաև ընտրողներին կամ խումբը, որը բաղկացած կլինի ընտրողների ամբարգրված քանակից: Մինևույն ժամանակ, ՀՀ Նախագահի 2013 թվականի փետրվարի 18-ի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից կազմված «Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույցի» (ԺՀՄԻԳ նախագահական զեկույց) առաջնային՝ հանձնարարականների մեջ նշված է, որ. «Ընտրական օրենսգիրքը կարող է փոփոխվել՝ իրավունք տալով քաղաքացիներին (կամ մի խումբ քաղաքացիների),

⁹¹⁶ Նման պրակտիկա առկա է Եգիպտոսում, Լատվիայում, Հնդկաստանում, Մեքսիկայում, Պերուում և մի շարք այլ պետություններում:

հավատարմագրված տեղական դիտորդներին և քաղաքացիական հասարակության խմբերին դիմումներ ներկայացնել ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների, քարոզչության անօրինական իրականացման և ընտրությունների արդյունքների դեմ»: Միննույն ժամանակ, ՀՀ Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից կազմված «Ընտրությունների դիտորդական առաքելության վերջնական զեկույց»-ում (ԺՀՄԻԳ ԱԺ զեկույց) ևս ամրագրվել է վերոնշյալ փոփոխության անհրաժեշտության մասին:

Կարևորելով Հայաստանում նշված ինստիտուտը ներդնելու անհրաժեշտությունը՝ առաջարկվել է Նախագծով Օրենսգրքի 46-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություն, որի արդյունքում քաղաքացիներին (կամ մի խումբ քաղաքացիների), հավատարմագրված տեղական դիտորդներին և քաղաքացիական հասարակության խմբերին հնարավորություն կընձեռվի դիմումներ ներկայացնել ընտրությունների արդյունքների վիճարկման, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների որոշումների և գործողությունների, քարոզչության՝ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ իրականացնելու վերաբերյալ: Հարկ է նշել նաև, որ ՌԴ Սահմանադրական դատարանը 22.04.2013 թվականի N 8-ՈՒ որոշմամբ հակասահմանադրական է ճանաչել քաղաքացիների՝ ընտրությունների արդյունքների բողոքարկման արգելքը սահմանող նորմը:

Միաժամանակ, Օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ մասը երաշխիքներ է ստեղծում ընտրությունների ժամանակ կանանց համար գենդերային քվոտայի ապահովման համար⁹¹⁷: Սակայն, ԺՀՄԻԳ ԱԺ զեկույցի առաջնահերթ հանձնարարականի մեջ նշված է, որ թեկնածուների առաջադրման քվոտայի արդյունավետությունը պետք է վերանայվի, որպես ժամանակավոր հատուկ միջոց՝ կանանց որպես թեկնածու լինելու իրավունքի և հնարավորության փաստացի հավասարությանը հասնելու նպատակով: Մասնավորապես, վերոնշյալ զեկույցում նշվել է, որ ընտրությունների ժամանակ համամասնական ցուցակների համար 20 տոկոս գենդերային քվոտայի պահանջը բավարարվել էր, թեպետ, այս քվոտայի արդյունավետությունը սահմանափակ է, քանի որ թեկնածուները կարող են ինքնաբացարկ հայտնել ցուցակի գրանցումից հետո, մինչդեռ սկզբնական գենդերային համամասնությունը վերականգնելու պահանջ օրենսդրությամբ սահմանված չէ: Ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո պարզ է դարձել, որ ընտրված բոլոր պատգամավորներից կանանց թիվը կազմում է միայն 11 տոկոս: Սա նշանակում է, որ քվոտայի պահանջը հստակ կարգավորված չէ, որն արդյունքում կարող է կրել ձևական բնույթ: Հետևաբար, առաջարկվել է ավելի հստակ կարգավորել վերոնշյալ դրույթը, որը, մասնավորապես, ցուցակի գրանցումից հետո ինքնաբացարկ հայտնած կին թեկնածուների փոխարեն կապահովի գենդերային քվոտայի պահանջը:

ԺՀՄԻԳ նախագահական ընտրությունների վերաբերյալ զեկույցում առկա

⁹¹⁷ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ թվով հնգյակներում (2-6, 2-11, 2-16 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տոկոսը:

թերությունների շարքում է տեղական դիտորդների հավատարմագրման համար ավելորդ խոչընդոտները և դիտորդական կազմակերպության հավատարմագրումը կամայականորեն չեղյալ համարելը, որի վերաբերյալ հանձնարարականում նշված է. «Ընտրական օրենսգիրքը կարող է փոփոխվել, որպեսզի հնարավոր լինի խուսափել տեղական դիտորդական կազմակերպության հավատարմագրումը կամայականորեն չեղյալ համարելու հնարավորությունից՝ նրա անհատ անդամների կողմից խախտումների դեպքում»: Թեև Նախագծի 11-րդ հոդվածով նախատեսվում է Օրենսգրքի 30-րդ հոդվածում կատարել որոշակի փոփոխություններ, այդուհանդերձ, այդ փոփոխությունները խնդրահարույց են: Մասնավորապես, հոդվածի 5-րդ մասում «համապատասխան կազմակերպությունը» բառերից հետո լրացվում են «կամ դիտորդին» բառերը: Վերոնշյալը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հայեցողությանն է թողնում դիտորդի կողմից որևէ թեկնածուի, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի աջակցելու դեպքում համապատասխան կազմակերպությանը կամ դիտորդին դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից զրկելու հարցի որոշումը:

ԺՀՄԻԳ նախագահական ընտրությունների վերաբերյալ զեկույցի համաձայն՝ քարոզարշավի դրույթները, որոնք նպատակ ունեն ստեղծել հավասար պայմաններ բոլոր թեկնածուների համար, կիրառվում են միմիայն պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածում, այսինքն՝ ոչ այն շաբաթվա ընթացքում, որը հաջորդում է թեկնածուների գրանցման ավարտին: Նույն զեկույցի հանձնարարականների մեջ նշվում է հետևյալը. «Ընտրական օրենսգիրքը պետք է փոփոխվի՝ սահմանելով, որ նախընտրական քարոզարշավը պաշտոնապես մեկնարկի ամենաուշը թեկնածուների գրանցման վերջնաժամկետի հաջորդ օրը, որպեսզի քարոզարշավի կանոնակարգումները կիրառվեն»: Մասնավորապես, Օրենսգրքի 18-րդ հոդվածը սահմանում է, որ «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների, կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ»: Հաշվի առնելով բարձրացված հարցի կարևորությունը՝ առաջարկվել է ընտրական քարոզարշավի մեկնարկման այլ ժամանակահատված սահմանել, օրինակ՝ թեկնածուների գրանցման վերջնաժամկետի հաջորդ օրը:

Օրենսգիրքը նախատեսում է քվեարկության օրը լրացուցիչ ցուցակների կազմման հնարավորությունը, մասնավորապես, 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Քվեարկության օրվան նախորդող 4 օրվա ընթացքում՝ մինչև քվեարկության ավարտը, յուրաքանչյուր ոք իրավունք ունի իրեն ընտրողների ցուցակում ընդգրկելու մասին դիմում ներկայացնել լիազոր մարմին: Ցուցակներում ընդգրկվելու մասին դիմումների վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ժամկետներում, որ ընտրողը հնարավորություն ունենա մասնակցել քվեարկությանը: Ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին լիազոր մարմնի տեղեկանքի հիման վրա ընտրողների ցուցակում լրացում կատարում է տեղամասային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրը՝ Ընտրական օրենսգրքի 13-րդ հոդվածով սահմանված կարգով՝ լրացուցիչ ցուցակ

կազմելու միջոցով»: Նախագծով փոփոխություններ են նախատեսվում վերոնշյալ հոդվածում, սակայն անփոփոխ է մնում ընտրության օրը լրացուցիչ ցուցակների կազմման ինստիտուտը: Մինչդեռ, «Եվրոպայում ընտրական իրավունքի և ընտրական վարչարարության վերաբերյալ» Վենետիկի հանձնաժողովի զեկույցում (CDLAD(2006)018) հատուկ անդրադարձ է կատարվում լրացուցիչ ցուցակների կիրառման խնդրին ԵՄ անդամ պետություններում: Զեկույցում ընդգծվում է նաև այն հանգամանքը, որ լրացուցիչ ցուցակների առկայությունը բարձրացնում է բազմակի քվեարկության, ինչպես նաև ընտրողների կողմից սխալ համայնքում քվեարկելու ռիսկը: Առաջարկությունն ուղղված է ընտրական ցուցակների կազմման և վերահսկման ընթացակարգերի կատարելագործմանը և քվեարկության օրը ընտրողի կողմից գրանցվելու հնարավորության բացառմանը: Նշենք նաև, որ ԵՄ Վենետիկի հանձնաժողովի կողմից հաստատված՝ Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքով սահմանվում է ցուցակում չգրանցված ընտրողի գրանցման վարչական կամ դատական ընթացակարգի նախատեսման պահանջը՝ քվեարկության օրը տեղամասային կենտրոնում գրանցվելու արգելքի վերապահումով: Ավելին, ԺՀՄԻԳ ԱԺ զեկույցում որպես մտահոգիչ հիմնախնդիր շեշտադրվել է հենց ընտրությանը նախորդող վերջին երկու օրերի ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովներին ընտրողների ցուցակները տրամադրելուց հետո և քվեարկության օրը ցուցակներում անսահմանափակ լրացումներ կատարելու հնարավորությունը: Հետևաբար, առաջարկվել է Նախագծով սահմանել դրույթ, որը կարգելի ընտրության օրը լրացուցիչ ընտրացուցակների կազմումը:

Օրենսգիրքը սահմանում է ընտրական գրավի չափը, մասնավորապես հանրապետության Նախագահի թեկնածուի համար՝ նվազագույն աշխատավարձի 8.000-ապատիկի չափ, Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի թեկնածուների համար՝ նվազագույն աշխատավարձի 1.000-ապատիկի չափ, Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար՝ նվազագույն աշխատավարձի 8.000-ապատիկի չափ: Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտրական գրավի չափը ենթակա է բազմակողմանի ուսումնասիրման, քանի որ յուրաքանչյուր քաղաքացի պետք է հնարավորություն ունենա առաջադրելու իր թեկնածությունը: Մասնավորապես, Վենետիկի հանձնաժողովի կողմից հաստատված՝ Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի (CDL-AD(2002)023rev) համաձայն՝ ընտրական գրավը ստորագրահավաքի համեմատությամբ համարվում է առավել արդյունավետ մեխանիզմ, քանի որ այդ համակարգը չունի այն թերությունները, որոնք առկա են ստորագրահավաքի պարագայում, մասնավորապես, ստորագրությունների հավաքագրման համար անհրաժեշտ տևական ժամանակահատվածը, ստորագրությունների գաղտնիության չպահպանման և դրանք ստուգելու անհրաժեշտության հանգամանքները: Միևնույն ժամանակ, ընտրական գրավը ունի մեկ թերություն ստորագրահավաքի համակարգի համեմատությամբ, քանի որ թեկնածու առաջադրվելու հնարավորությունը կախվածության մեջ է դրվում վերջինիս ֆինանսական միջոցներից, այլ ոչ թե նրա նկատմամբ եղած քաղաքական աջակցությունից: Կանոնագրքով սահմանվում է, որ ընտրական գրավի պահանջի

սահմանված լինելու պարագայում գրավի չափը և ձայների քանակը, որն անհրաժեշտ է գրավի փոխհատուցման համար, չպետք է լինի շատ բարձր: Բացի դրանից՝ Օրենսգրքով սահմանված ընտրական գրավի խնդրին անդրադարձ է կատարվել Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքի մեջ (CDL-AD(2011)032): Մասնավորապես, նշվել է, որ Օրենսգրքով ստորագրահավաքի որպես այլընտրանքի չնախատեսման պարագայում պետք է առավել կարևորվեն ընտրական գրավի չափերը, որպեսզի գրավը կամայական խոչընդոտ չդառնա թեկնածուի առաջադրման համար: Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն առաջարկել են քննարկել ընտրական գրավը ստորագրահավաքով փոխարինելու հարցը: Առաջարկվել է թողնել երկու տարբերակներից որևէ մեկի ընտրության հնարավորությունը թեկնածուների համար, ինչով կարելի է խուսափել այն իրավիճակից, երբ թեկնածույան առաջադրումը կախված կլինի թեկնածուի ֆինանսական դրությունից: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվել է վերանայել ընտրական գրավի չափը, կամ նախատեսել ստորագրահավաքի առկայությունը՝ որպես ընտրական գրավին փոխարինող այլընտրանք:

Օրենսգրքով սահմանված են նախընտրական հիմնադրամներում կատարվող մուծումների առավելագույն չափերը, սակայն սահմանված չէ նախընտրական քարոզչություն իրականացնելուն ուղղված ցանկացած միջոցառման ֆինանսավորման առավելագույն չափը, ինչը կարող է գործնականում խնդրահարույց լինել: Մասնավորապես, Օրենսգրքի 26-րդ հոդվածով ծախսերի առավելագույն չափ սահմանվում է միայն զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության իրականացման, դահլիճների, տարածքների վարձակալման, քարոզչական պաստառների պատրաստման (տեղադրման), քարոզչական տպագիր և այլ նյութերի ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման, ֆինանսավորման օգտագործման համար: Մինչդեռ հիմնադրամի միջոցները կարող են ուղղվել ցանկացած այլ միջոցառումների համար, որի համար առավելագույն չափ սահմանված չէ: Օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքով (CDL-AD(2011)032) առաջարկվել է վերանայել Օրենսգրքի 26-րդ հոդվածը՝ քարոզարշավին առնչվող բոլոր ծախսերը հաշվի առնելու նպատակով:

Օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն, «Նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտման դեպքում, որը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, եթե այն կատարել է թեկնածուն, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքը, ապա թեկնածուին, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցած հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, կուսակցության, կուսակցության դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար»: Նախագծով այս դրույթը վերախմբագրվում է հետևյալ կերպ. «Նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտումը, որը կրում է շարունակական բնույթ կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների

արդյունքների վրա, ապա՝ թեկնածուին, կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցած հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, կուսակցության, կուսակցության դաշինքի ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար»։ Հաշվի առնելով այն, որ Օրենսգրքով սահմանված չեն ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցություն ունեցող նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման որոշման չափորոշիչները, անհրաժեշտ է Օրենսգրքով հատակեցնել այդ եզրույթը՝ դրա տարբերակված կիրառումից խուսափելու նպատակով։ Առաջարկվել է նաև համանման կարգավորում սահմանել նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի նախագծում։

ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է յուրաքանչյուր անձի՝ այլ անձանց հետ միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունքը (Հոդված 28)։ 2014 թվականին Պաշտպանի կարծիքին է ներկայացվել «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև մի շարք այլ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծերը։ Դրանք ուսումնասիրվել են միավորվելու իրավունքի բնագավառի միջազգային չափորոշիչների, ինչպես նաև միջազգային փորձի լույսի ներքո, որից հետո Պաշտպանի աշխատակազմի կողմից կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ վերոգրյալ օրենքների նախագծերի վերաբերյալ, որի ընթացքում ներկայացվել են բազմաթիվ առաջարկություններ և դիտողություններ։ Նկատի ունենալով, որ վերոնշյալ նախագծերի վերաբերյալ Նախարարության կողմից կազմակերպած այլ քննարկման արդյունքում հասարակական կազմակերպությունների հետ ձեռք էին բերվել պայմանավորվածություններ՝ նախագծերի մի շարք դրույթների փոփոխության վերաբերյալ և նախագիծը ենթակա էր լրամշակման, Նախարարությանն առաջարկվել էր լրամշակումից հետո տրամադրել նախագծի փոփոխված տարբերակը՝ առարկայական դիտողություններ ներկայացնելու նպատակով։ Նախագծերը, ի թիվս այլոց, հեղինակների կողմից հիմնավորվում էին ֆինանսական կայունության ապահովմամբ, իրավական կարգավորումների ազատականացմամբ, հաշվետվողականության և հանրային վերահսկողության բարձրացման անհրաժեշտությամբ, առաջարկվում էր ներդնել նաև ֆինանսական գործունեության աուդիտ, որը ներկայումս իրականացվում է ոչ առևտրային այլ կազմակերպությունների՝ կուսակցությունների և հիմնադրամների դեպքում։ Չնայած մի շարք դրական կարգավորումներին՝ Նախագծում առկա են նաև խնդրահարույց կարգավորումներ՝ հատկապես հասարակական կազմակերպությունների գործունեության նկատմամբ քողարկված հսկողության, ինչպես նաև վերջիններիս վրա անհամաչափ բեռ դնելու առնչությամբ։

Դեռևս 2013 թվականի տարեկան զեկույցով Պաշտպանն արձանագրել է, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման համար առանցքային դեր է զբաղեցնում կամավորական աշխատանքի ինստիտուտը։ Սակայն, Հայաստանում օրենսդրորեն հստակ կարգավորված չէ կամավորական աշխատանքը, ինչը ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում հանդիսանում է քաղաքացիական ակտիվության հիմնական տարրերից մեկը։

6.2 ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՀՀ Սահմանադրությունը (հոդված 33.1) ամրագրում է յուրաքանչյուր անձի՝ օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, ինչպես նաև արգելում է շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունը: Այնուհանդերձ, 2014 թվականին տվյալ իրավունքի ապահովման կապակցությամբ գրանցվել են բազմաթիվ խնդիրներ:

Չնայած Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) իրականացրել է «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» ծրագիրը, որի համար հատկացվել է 151,983.7 հազ. դրամ⁹¹⁸, ինչպես նաև իրականացվել են այլ ծրագրեր՝ այնուհանդերձ, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների (ՓՄՁ) զարգացման և աջակցության ուղղությամբ ձեռնարկված քայլերը բավարար չեն եղել, որի մասին են վկայում ՀՀ ԱՎԾ տվյալները՝ 2013 թվականի համեմատությամբ մանրածախ առևտրային օբյեկտների քանակի նվազման վերաբերյալ⁹¹⁹: Մասնավորապես, 2012-2014 թվականների ընթացքում գերփոքր խանութների թիվը նվազել է 1341-ով, իսկ փոքր խանութներինը՝ 58-ով: Նույն ժամանակահատվածում ընդհանուր խանութների թիվը նվազել է 1377-ով⁹²⁰, բացի դրանից՝ մանրածախ առևտրի օբյեկտների շարքում 2417 միավորով նվազել է նաև կրպակների քանակը⁹²¹: Մինչդեռ, նույն ժամանակաշրջանի համար ԱՎԾ-ը չի արձանագրել նմանատիպ կտրուկ նվազեցում միջին և խոշոր խանութների դեպքում: Բացի դրանից՝ ոլորտի մասնագետների պնդմամբ՝ աշխարհաքաղաքական, սոցիալական գործոններով և տարածաշրջանային հակամարտություններով, ինչպես նաև երկրի ներսում տնտեսական մրցակցության պաշտպանության ուղղությամբ ձեռնարկված ոչ բավարար քայլերով պայմանավորված՝ վերջին տարիներին ՀՀ-ում նվազել են օտարերկրյա ներդրումները, ինչի արդյունքում նվազել է նաև տնտեսական աճը: Չնայած օտարերկրյա ներդրումների ավելացման ուղղությամբ ձեռնարկված մի շարք միջոցառումներին (օրինակ՝ գործում է E-register.am կայքի անգլերեն լեզվով տարբերակը, կատարվել են մի շարք օրենսդրական բարփոխումներ)՝ ներդրումների նվազումը վկայում է դրանց անբավարարության մասին: Առանձին օտարերկրյա գործարարներ, որպես Հայաստանում գործարարության զբաղվելու խոչընդոտներ, նշել են ներդրումների իրականացման համար ցածր կանխատեսելիությունը և վստահությունը պետության իրավական դաշտի հանդեպ, առանձին դեպքերում՝ ոչ հավասար հնարավորությունների ապահովումը տեղացի ու արտասահմանյան, մեծ ու

⁹¹⁸ ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 26-ի N 1511-Ն որոշում

⁹¹⁹ «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-դեկտեմբերին»

http://www.armstat.am/file/article/sv_12_11a_126.pdfhttp://www.armstat.am/file/article/sv_12_12a_126.pdf

http://www.armstat.am/file/article/sv_12_13a_126.pdfhttp://www.armstat.am/file/article/sv_12_14a_126.pdf

⁹²⁰ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումների համաձայն՝ փոքր խանութ է համարվում 6-15 աշխատող ունեցող խանութը:

⁹²¹ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կրպակ է առևտրական գործունեության իրականացման համար նախատեսված շինությունը, որը չունի առևտրական դահլիճ:

փոքր ընկերությունների համար: Նշենք, որ Համաշխարհային բանկի 2014 թվականի Հայաստանի տնտեսության 6-րդ հաշվետվության⁹²² համաձայն՝ 2013 թվականին Հայաստանի տնտեսական աճը նվազել է 3.5%-ով, իսկ 2014 թվականի առաջին կիսամյակում՝ 2.7%-ով, ինչը պայմանավորված է եղել մի շարք գործոններով, այդ թվում՝ օտարերկրյա ներդրումների նվազմամբ⁹²³:

2014 թվականին առևտրականների շրջանում դժգոհություններ են եղել «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում կատարած փոփոխությունների կապակցությամբ: Այսպես, 2014 թվականի հունիսի 21-ին ընդունված և հոկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխություններով առևտրական գործունեության համար շրջանառության հարկի 3.5%-ից մինչև 1%-ի իջեցմանը զուգահեռ սահմանվել էր ապրանքների ձեռքբերման գործարքների փաստաթղթավորման պարտադիր պահանջը, որը, մի շարք ՓՄՁ-ների պնդմամբ՝ ներկայիս շուկայական պայմաններում իրատեսական չէր ապահովել և կհանգեցներ բազմաթիվ փոքր ձեռնարկատերերի սնանկացման: Նշված փոփոխությունները Կառավարության կողմից հիմնավորվում էին ստվերային շրջանառությունների ձևավորման կանխման և շրջանառության հարկ վճարողներին ապրանքներ մատակարարող խոշոր տնտեսավարող սուբյեկտների լիարժեք հարկման անհրաժեշտությամբ: Այս իմաստով բազմաթիվ քաղաքացիներ դժգոհում էին, որ գործադիրը ՓՄՁ-ներին հարկային դաշտ բերելուն զուգահեռ չի ձեռնարկել բավարար քայլեր՝ խոշոր գործարարների ստվերից դուրս բերելու և նրանց հարկման հաշվին բյուջետային մուտքերն ավելացնելու ուղղությամբ: Այսպես, օրինակ, 2014 թվականին ուժը կորցրած ճանաչվեց «Ակցիզային հարկի մասին» («Շքեղության հարկ») օրենքի այն դրույթը, որը նախատեսում էր 25 մլն դրամ և ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ և 4500 սմ/խ և ավելի շարժիչի ծավալ ունեցող թեթև մարդաստար ավտոմեքենաների մասով հարկում ևս 20 տոկոս՝ մաքսային արժեք⁹²⁴, մինչդեռ նշյալ դրույթը միտված էր ավելացնելու բյուջետային մուտքերը: Փաստորեն, հարկային և/կամ մաքսային ոլորտում օրենսդրական փոփոխությունները որոշ դեպքերում ավելացրել են ՓՄՁ-ների ֆինանսական բեռը և, ընդհակառակը, նվազեցրել բարձր եկամուտ ունեցողներին:

Տնտեսական ոլորտում 2014 թվականին արձանագրվել են մի շարք խնդիրներ՝ օրենսդրական թերի կարգավորումների և օրենքների սխալ կիրառման առումներով: Այսպես, ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածը սահմանում է անձի՝ նույն արարքի համար կրկին դատվելու անթույլտարելիությունը, մինչդեռ առկա է եղել հարկատուներին միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության ենթարկելու վտանգ: Սակայն, տնտեսավարողները հարկային մարմին ներկայացրած շահութահարկի հաշվարկում հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում կարող

⁹²²<https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/21084/930020WPOP1181000PUBLIC00Armenia0ER.pdf?sequence=1>

⁹²³ Մանրամասն տես՝ «ՀՀ էկոնոմիկայի նախարարություն» բաժնում

⁹²⁴ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2014թ. մայիսի 22-ի ՀՕ-24-Ն ՀՀ օրենք

էին, «Շահութահարկի մասին» օրենքից (69-րդ հոդված) բացի, պատասխանատվության ենթարկվել նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքով (հոդված 25) և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով (հոդված 169¹), ինչի արդյունքում կիսախտվեր անձի՝ միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության չենթարկելու սկզբունքը: Մեկ այլ խնդիր վերաբերել է իրավասու պետական մարմինների կողմից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի⁹²⁵ սխալ կիրառման հետևանքով գործարարների և/կամ ֆիզիկական անձանց՝ ավելորդ ֆիզիկական բեռ կրելուն, քանի որ նրանցից ոչ իրավաչափորեն պահանջվել է ավելացված արժեքի հարկի վճարումներ կատարել⁹²⁶:

Բացի վերոնշյալից՝ 2014 թվականին մի շարք գործարարներ բողոքել են, որ հարկային մարմինը բազմաթիվ դեպքերում գործածել է քրեական գործ հարուցելու իր լիազորությունը՝ հարկադրելու հարկատուներին վճարել չվճարած հարկերը: Քրեական պատասխանատվություն առաջացնող մի շարք արարքների (օրինակ՝ կեղծ ձեռնարկատիրությունը, հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը)⁹²⁷ դեպքում անձն օրենքով ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում է հանցագործությամբ պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները⁹²⁸: Սակայն տնտեսավարող սուբյեկտները բազմաթիվ դժգոհություններ են հայտնել, որ նմանատիպ գործերով հարկային մարմնի քննիչները հանցագործության կատարման փաստի առթիվ հարուցել են քրեական գործեր⁹²⁹՝ նախօրոք իմանալով, որ հարկ վճարողը կնախընտրի օգտվել ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվությունից ազատող դրույթից և արդյունքում կկատարի հարկային պարտավորությունը: Այսպիսով, հարկային մարմնի քննիչները անուղղակիորեն ճնշում են գործադրել հարկ վճարողների վրա նույնիսկ այն դեպքերում, երբ հաստատված չէ հարկ վճարողների կողմից հակաիրավական արարքի կատարման դեպքը: Որպես կանոն, անձինք նախընտրում են շտապ վճարել հարկերը և տույժ, տուգանքները, այլ ոչ թե բողոքարկել դրանց հիմնավորվածությունը հարկատուի համար: Այսինքն, քրեական գործի հարուցումը անուղղակիորեն հետ է պահում անձին իր իրավունքները դատական կարգով պաշտպանելուց⁹³⁰:

⁹²⁵ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 1, կետ «բ»

⁹²⁶ Մանրամասն տես՝ «ՀՀ ֆինանսների նախարարություն» բաժնում

⁹²⁷ ՀՀ քրեական օրենսգրքի, հոդվածներ. 188՝ առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացում, 189՝ կեղծ ձեռնարկատիրությունը, 193՝ կանխամտածված սնանկությունը, 194՝ կեղծ սնանկությունը, 205՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը

⁹²⁸ ՀՀ քրեական օրենսգրքի, հոդված 189, մաս 5

⁹²⁹ ՀՀ քրեական օրենսգրքի, հոդվածներ. 188՝ առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացում, 189՝ կեղծ ձեռնարկատիրությունը, 193՝ կանխամտածված սնանկությունը, 194՝ կեղծ սնանկությունը, 205՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը

⁹³⁰ Մանրամասն տես՝ «ՀՀ ֆինանսների նախարարություն» բաժնում

2014 թվականին մի շարք տնտեսավարող սուբյեկտների կողմից դժգոհություններ են ստացվել առ այն, որ առանձին հարկային և մաքսային ծառայողներ, չնայած օրենսդրական արգելքին⁹³¹, զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ և իրենց պաշտոնական դիրքը գործածել՝ իրենց բիզնեսի համար արտոնություններ ստեղծելու, ինչպես նաև շուկայում մրցակիցների համար հնարավորությունները սահմանափակելու նպատակով: Իսկ թերի վերահսկողության արդյունքում վերոնշյալ անձինք հաճախ ձեռք են բերել օրենքով արգելված առավելություններ մյուս ձեռնարկատերերի նկատմամբ, ինչի արդյունքում խաթարվում են տնտեսական մրցակցությունը և հավասարությունը: Բացի դրանից՝ մի շարք դեպքերում Հարկային մարմնի աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս խախտել են օրենսդրությամբ սահմանված կարգը, ինչի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը չի իրականացրել պատշաճ ծառայողական քննություններ՝ վերջիններիս պատասխանատվության ենթարկելու, հարկատուների իրավունքները պաշտպանելու և նման դեպքերը հետազայում բացառելու ուղղությամբ: Օրինակ՝ հարկատուները հայտնել են հարկային ծառայողների կողմից հեռախոսագանգերի միջոցով շահութահարկի կանխավճարներ պահանջելու և, չվճարելու դեպքում, իրենց համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու սպառնալիքների, քննիչների կողմից կատարվող խուզարկության ընթացքում փաստաբանի մասնակցությունը չթույլատրելու, փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու և այլ դեպքերի վերաբերյալ: Դրանցից մի քանիսի կապակցությամբ լիազոր մարմնին առաջարկվել էր անցկացնել ծառայողական քննություն, սակայն այն չի իրականացվել, ՀՀ ֆինանսների նախարարության պնդմամբ, հարկային աշխատակիցների կողմից իրականացված գործողություններում խախտումների բացակայության հիմքով: Սակայն, առանց ծառայողական քննություն իրականացնելու, պարզ չէ, թե ինչ միջոցներով է հաստատվել համապատասխան աշխատակիցների գործողություններում խախտումների բացակայությունը:

Տնտեսավարող սուբյեկտներից, նրանց շահերը ներկայացնող ՀԿ-ներից 2014 թվականի ընթացքում բողոքներ են ստացվել առ այն, որ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով ստուգումն իրականացնող հարկային մարմնի աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս հաճախ, առանց բավարար հիմնավորումների կամ պատճառաբանության, վերցրել են հարկատուների աշխատավայրում գտնվող տարբեր իրեր, օրինակ՝ համակարգիչ և այլն, որոնք անմիջապես չեն առնչվել ստուգման նպատակներին կամ Հարկային մարմնի համար ոչ անհրաժեշտ տեղեկատվություն են պարունակել: Իսկ մի շարք դեպքերում ստուգում իրականացնողները չեն պահպանել օրենսդրությամբ սահմանված կարգը նյութեր վերցնելիս, օրինակ՝ պատշաճ արձանագրություն չի կազմվել, վերցված փաստաթղթերի կրկնօրինակը չի կնքվել և չի հանձնվել տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչներին⁹³² և այլն: Պետք է նշել, որ տվյալ խնդիրը պայմանավորված է նաև օրենսդրական թերի կարգավորումներով: Մասնավորապես, հստակ չափորոշիչների

⁹³¹ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 3, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 5 և 25

⁹³² «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, հոդված 8, մաս 2

բացակայության դեպքում ստուգումն իրականացնող անձինք կարող են «վերցնել» իրեր նույնիսկ այն դեպքում, երբ բացակայում է որևէ հիմնավորված կասկած, որ տնտեսվարող սուբյեկտը արել է խախտում, կամ նշված իրը ստուգումների իրականացման համար որևէ էական նշանակություն ունի: Նշված պրակտիկան էապես խոչընդոտել է բազմաթիվ գործարարների աշխատանքին⁹³³:

2014 թվականին բազմաթիվ դեպքերում քաղաքացիներին անհիմն մերժվել է ՀՀ մաքսային օրենսգրքով (Օրենսգիրք) նախատեսված մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդով մաքսազերծման իրականացումը⁹³⁴: Այսպես, քաղաքացիներն առավել հաճախ տվյալ խնդրին բախվել են, երբ մաքսային մարմինը մերժել է մաքսազերծել տրանսպորտային միջոցներն դրանց ձեռքբերման գնով, այսինքն՝ չի կիրառել գործարքի գնի մեթոդով մաքսային արժեք որոշելու ռեժիմը՝ պատճառաբանելով ներկայացված փաստաթղթերում առկա ոչ էական, շտկելի թերությունների առկայությամբ: Մինչդեռ, ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն՝ մաքսային մարմինները մինչև մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու մերժման վերաբերյալ վերջնական որոշում ընդունելը պարտավոր են հայտարարատուին գրավոր ներկայացնել գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքները և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ⁹³⁵: Վերոնշյալ ոչ իրավաչափ վարչարարության համատեքստում հատկանշական է ՀՀ Սահմանադրական դատարանի 2014 թվականի թիվ ՍԴՈ 1176 որոշումը, որի համաձայն՝ *մաքսազերծման ժամանակ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն ընդհանուր կանոն է, իսկ մաքսային արժեքի որոշման մյուս այլ մեթոդները՝ բացառություն ընդհանուր կանոնից*⁹³⁶:

ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը սահմանում է, որ ՀՀ-ում երաշխավորվում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը: Թեև սահմանադրական նշյալ սկզբունքը ենթադրում է, որ պետությունը պետք է պաշտպանի սպառողների շահերը, ընդունի օրենքներ, որոնք կոչված են կանխելու հնարավոր չարաշահումները գործարարների կողմից, իր ձեռքում պահի անհրաժեշտ կարգավորիչ տնտեսական լծակները⁹³⁷, այնուամենայնիվ, 2014 թվականին արձանագրված մի շարք խնդիրներ վերաբերել են տնտեսական մրցակցության ապահովմանը: Այսպես, սպառողները դժգոհել են, որ բազմաթիվ դեպքերում ապրանքների որակական կամ քանական հատկանիշները նվազել են՝ առանց տվյալ

⁹³³ Մանրամասն տես՝ «ՀՀ ֆինանսների նախարարություն» բաժնում

⁹³⁴ Այսուհետ՝ ՀՀ մաքսային օրենսգիրք՝ [ԱԺ.06.07.2000.ՀՕ-83](#) ինկորպորացիայի համապատասխան, հոդված 87: Նշենք, որ Մաքսային օրենսգիրքն ուժը կորցրել է 17.12.14 թվականի ՀՕ-241-Ն ՀՀ օրենքով՝ բացառությամբ նույն օրենքի [259-րդ հոդվածով](#) սահմանված դրույթների, ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՇՏՍՆԵՐՈՒՄ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ (7-րդ գլուխը՝ համաձայն 17.12.14 ՀՕ-241-Ն ՀՀ օրենքի [259-րդ հոդվածի](#) 2-րդ մասի) շարունակում է գործել մինչև 02.07.16 թվականը:

⁹³⁵ ՀՀ մաքսային օրենսգիրք, հոդված 96, մաս 2.1

⁹³⁶ Մանրամասն տես՝ «ՀՀ ֆինանսների նախարարություն» բաժնում

⁹³⁷ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ

ապրանքի գնի համաչափ իջեցման (անտեսանելի գնաճ), ինչն անբարեխիղճ մրցակցության դրսևորում է: Օրինակ, 2014 թվականի ընթացքում սպառողներն ու տարբեր լրատվամիջոցներ բազմիցս բարձրաձայնել են, որ մի շարք սննդատեսակների, օրինակ՝ հացաբուլկեղենի⁹³⁸, կաթնամթերքի⁹³⁹ շուկայում մի շարք ապրանքների քաշի նվազեցումը չի ուղեկցվել տվյալ ապրանքների գնի իջեցմամբ: Միաժամանակ, եղել են դժգոհություններ խոնավ շաքարավազի վաճառքի դեպքերի վերաբերյալ, երբ խոնավության պատճառով արհեստականորեն ավելացվել է շաքարավազի քաշը, ինչի արդյունքում նվազել է միևնույն գումարի դիմաց գնորդի ձեռք բերած շաքարավազի քանակը⁹⁴⁰: Վերոնշյալ երևույթն առավել խնդրահարույց է դառնում, երբ նմանատիպ դեպքերում գնի նվազման փոխարեն տեղի է ունեցել գնաճ⁹⁴¹:

Չնայած 2014 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ապրանքի գների կտրուկ աճի վերաբերյալ սպառողների դժգոհություններին՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (ՏՄՊՊՀ) չի գտել գերիշխող դիրք ունեցողների և այլ տնտեսավարողների կողմից, ապրանքների գների չհիմնավորված տատանումներով կամ չհիմնավորված գների սահմանմամբ կամ կիրառմամբ պայմանավորված, հակամրցակցային վարքագծի դրսևորումներ, որոնց արդյունքում տուժել են բազմաթիվ սպառողներ: Մինչդեռ, գների կտրուկ բարձրացման դեպքերում խոշոր ընկերությունների կողմից չարաշահման հավանականությունը և սպառողների շահերի ոտնահարման ռիսկը բավականին բարձր է՝ հաշվի առնելով, որ խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի շրջանառության մոտ 63%-ը (682167.1 մլն դրամ 1080149.4 մլն դրամից) իրականացվում է 31 և ավելի աշխատող ունեցող խոշոր խանութների միջոցով⁹⁴²: Իսկ առանձին խոշոր խանութներ, որոնցից ապրանք է ձեռք բերում փոքր և միջին գործարարը, կոնկրետ ապրանքի շուկայում ունեն գերիշխող դիրք: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ չեն ձեռնարկվել բավարար քայլեր՝ պետական գնումների գործընթացում հակամրցակցային վարքագիծ դրսևորած գործարարներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Ինչպես նաև եղել են ներմուծման ժամանակ որոշ տնտեսավարող սուբյեկտների հնարավոր ապօրինի պետական օժանդակության⁹⁴³ տրամադրման վերաբերյալ բազմաթիվ դժգոհություններ, որոնց ուսումնասիրման և հնարավոր խախտումների բացահայտման ուղղությամբ չեն ձեռնարկվել բավարար քայլեր, ինչը հանգեցրել է շուկայում տեղական արտադրողների մրցունակության սահմանափակմանը⁹⁴⁴:

⁹³⁸ <http://www.aravot.am/2014/12/19/526787/>

⁹³⁹ <http://www.aravot.am/2014/12/19/526633/>

⁹⁴⁰ <http://shabat.am/?p=34439&l=am>

⁹⁴¹ Մանրամասն տես՝ «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով» բաժնում

⁹⁴² http://www.armstat.am/file/article/sv_12_14a_126.pdf

⁹⁴³ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 16¹

⁹⁴⁴ Մանրամասն տես՝ «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով» բաժնում

2014 թվականին մի շարք խնդիրներ են արձանագրվել նաև պետական գնումների կազմակերպման և անցկացման գործընթացում: Այսպես, ոլորտի մի շարք փորձագետներ ու տնտեսավարող սուբյեկտներ դժգոհություն են հայտնել, որ պետական գնումների ոլորտում մինչ օրս արդյունավետ կերպով ապահովված չէ բավարար թափանցիկությունը՝ շահերի բախումների⁹⁴⁵ և բողոքը քննելու համար խորհրդի (Խորհուրդ) անդամների անձնական շահագրգռվածության բացառման համար, ինչը գնումների կազմակերպման թերի իրավական մեխանիզմների առկայության և համապատասխան վիճակագրության բացակայության հետևանք է⁹⁴⁶: Միաժամանակ, մասնագետների պնդմամբ՝ օրենքով առանձին դեպքերում թույլատրվող մեկ անձից կատարվող և ոչ մրցակցային ընթացակարգերով գնումները⁹⁴⁷ մեծ թիվ են կազմում գնումների շարքում, ինչը բացասաբար է անդրադառնում գնումների ընթացքում պատշաճ մրցակցության սկզբունքի ապահովման վրա: Այսպես, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալներով՝ 2014 թվականի 9 ամիսների ընթացքում կատարված գնումների 43,48%-ը վերաբերել է այն դեպքերին, երբ գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ⁹⁴⁸, իսկ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի կազմակերպումը կազմել է գնումների 46,75%-ը: Ավելին, նույն տվյալների համաձայն՝ Հայաստանի մրցույթներին միջին մասնակցությունը 9 ամիսների ընթացքում կազմել է 2,9 մասնակից, ինչը վկայում է մրցակցության ցածր մակարդակի մասին, ինչպես նաև այն փաստի մասին, որ հայտարարված բոլոր մրցույթներում հաղթում են սահմանափակ թվով միևնույն տնտեսավարող սուբյեկտները⁹⁴⁹:

Ավելին, եղել են դեպքեր, երբ պետական գնումների մրցույթներում նվազագույն գին ներկայացնողի հաղթելու սկզբունքը հանգեցրել է մի շարք դեպքերում ցածր, ոչ պատշաճ որակի ապրանքի/ծառայության մատակարարման: Նշենք, որ ըստ Օրենքի՝ մրցույթում հաղթելու սկզբունքը, ի թիվս այլ պահանջների, նվազագույն գին ներկայացնելն է, երբ նախապատվություն տրվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին⁹⁵⁰: Գործնականում հաճախ նվազագույն գնով ձեռք բերվող ապրանքները չեն եղել պատշաճ որակի, իսկ առանձին դեպքերում, օրինակ՝ պետպատվերով տրամադրվող դեղորայքի

⁹⁴⁵ Իրավիճակ, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձն իր լիազորություններն իրականացնելիս պետք է կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 5

⁹⁴⁶ <http://transparency.am/hy/publications/view/98>, էջ 11-12

⁹⁴⁷ Պետական գնումների մասին համաձայնագիր, հոդված 7, մաս 3, կետ «գ»

⁹⁴⁸ ՀՀ կառավարության 2011 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 168-Ն որոշում, կետ 32

⁹⁴⁹ Մանրամասն տես՝ «ՀՀ ֆինանսների նախարարություն» բաժնում

⁹⁵⁰ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 2, կետ 1

դեպքում, անգամ բացասական հետևանքներ են ունեցել դրանց շահառուների առողջության վրա: Բացի դրանից՝ դեռևս արդյունավետ չէ գնումների գործընթացի արդյունքների արտադատական բողոքարկումը: Այսպես, Բողոքարկման խորհուրդը 2014 թվականին ստացել է ընդամենը 48 բողոք, որից բավարարվել է 20-ը, մերժվել՝ 24-ը, և 2-ը թողնվել է առանց քննության: Ցածր է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավվածությունը բողոքարկման խորհրդում, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ տնտեսավարող սուբյեկտների շահերի պաշտպանության վրա⁹⁵¹:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվում է յուրաքանչյուր անձի՝ աշխատանքի ընտրության ազատության, անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունքը: Չնայած պետության պարտավորությունն է նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը⁹⁵²՝ այնուամենայնիվ, 2014 թվականին զբաղվածության խթանման ոլորտում պետության կողմից իրականացված ծրագրերը չեն նպաստել գործազրկության ընդհանուր մակարդակի կրճատմանը: 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում աշխատանք փնտրողների թիվը կազմել է 72.6 հազար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բարձր է 12.2 %-ով⁹⁵³: Նշենք, սակայն, որ սվյալ վիճակագրությունը չի արտահայտում երկրում գործազրկության իրական մակարդակը, քանի որ «գործազուրկ» կարգավիճակը պայմանավորված է պետական լիազորված մարմնում հաշվառված լինելու հանգամանքով⁹⁵⁴: Հատկանշական է, որ 2014 թվականին խնդրին է անդրադարձել նաև ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն (Կոմիտե)՝ մտահոգություն հայտնելով թե ՀՀ-ում առկա գործազրկության բարձր մակարդակի, թե բազմաթիվ փաստացի գործազուրկ անձանց՝ գործազրկության պաշտոնական վիճակագրության մեջ արտացոլված չլինելու վերաբերյալ^{955,956}:

Դեռևս 2013 թվականին Պաշտպանի կողմից բարձրաձայնվել և մինչ օրս չի լուծվել գործազրկության նպաստի վերականգնման խնդիրը: Նշենք, որ ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ծերության, հաշմանդամության, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք⁹⁵⁷: Բացի դրանից՝ անձի սոցիալական ապահովության պարտավորություն է նախատեսված նաև Հայաստանի կողմից վավերացված Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում (Հոդված 12), որի

⁹⁵¹ Մանրամասն տես՝ «ՀՀ ֆինանսների նախարարություն» բաժնում

⁹⁵² ՀՀ Սահմանադրության, հոդված 48

⁹⁵³ http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=131&code_id=212

⁹⁵⁴ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, հոդված 4

⁹⁵⁵ http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2FC.12%2FARM%2FCO%2F2-3&Lang=en

⁹⁵⁶ Մանրամասն տես՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնում

⁹⁵⁷ Սահմանադրություն, հոդված 37

հիման վրա Սոցիալական իրավունքների Եվրոպական Կոմիտեի 2013 թվականի Եզրակացություններում առանձնակի շեշտվել է գործազրկության նպաստ տրամադրելու պետության պարտավորությունը⁹⁵⁸: Նման երաշխիք ամրագրված է նաև ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով (հոդված 9), որի Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ աշխատանքը կորցնելու դեպքում անձին պետք է վճարվի համապատասխան գործազրկության նպաստ⁹⁵⁹:

2014 թվականին ևս արձանագրվել են գործատուների կողմից անձանց աշխատանքային իրավունքների բազմաթիվ խախտումներ: Պաշտպանին ուղղված բազմաթիվ դիմում-բողոքներում նշվել է կոնկրետ կազմակերպությունում աշխատակիցներին արտաժամյա և գիշերային աշխատանքի, հանգստյան և ոչ աշխատանքային օրերին կատարված աշխատանքի համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված չափով չվարձատրելու, չգործածված ամենամյա արձակուրդի համար դրամական հատուցումները սխալ հաշվարկելու, գործատուի կողմից աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ներքին իրավական ակտերի առկայությունը չսպահովելու և այլ խախտումների մասին: Նշվածը, մասնավորապես, պայմանավորված է աշխատանքային օրենսդրության նորմերի պահպանման նկատմամբ պետական վերահսկողության անարդյունավետությամբ, աշխատանքային իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ գործատուներին և աշխատողներին իրազեկման լայնածավալ միջոցառումների բացակայությամբ: Բացի դրանից՝ բազմաթիվ դեպքերում գործատուն կնքում է աշխատանքային պայմանագիր աշխատողի հետ, սակայն եկամտահարկի վճարումից ազատվելու համար գրանցում է նվազագույն ամսական աշխատավարձ, մինչդեռ իրականում ավելի բարձր է վարձատրում աշխատողին: Բացի դրանից՝ բազմաթիվ են տաքսի ծառայություններում աշխատող վարորդների հետ աշխատանքային պայմանագրեր չկնքելու դեպքերը, երբ վարորդները գործատուներին են ներկայացնում իրենց անձնագրի և վարորդական իրավունքի պատճենները և բանավոր պայմանավորվում աշխատանքային պայմանների վերաբերյալ⁹⁶⁰: Միաժամանակ, քանի որ աշխատանքային պայմանագիրը հնարավոր է լուծել արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխմամբ պայմանավորված աշխատողների քանակի կամ հաստիքների կրճատման դեպքում⁹⁶¹, առանձին դեպքերում գործատուները արհեստական կերպով փոփոխություններ են կատարում աշխատանքային պահանջների պայմանների մեջ, հաստիքացուցակներում, ինչի արդյունքում աշխատողների պայմանագրերը լուծվում են: Միաժամանակ, չլուծված է մնում օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով աշխատողների գործադուլի իրավունքի սահմանափակման խնդիրը: Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը

⁹⁵⁸ http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

⁹⁵⁹

http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2fC.12%2fGC%2f19&Lang=en

⁹⁶⁰ «Աշխատանքի իրավունքը Երևանում. օրենքը և պրակտիկան ծառայությունների ոլորտում» զեկույց, 2014թ., Հայաստանի Հելսինկյան կոմիտե

⁹⁶¹ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 113

(հողված 73) գործադուլի իրավունքի իրացումը պայմանավորում է միայն կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայությամբ, մինչդեռ Սահմանադրությամբ երաշխավորված է աշխատողների տնտեսական և սոցիալական շահերի պաշտպանության նպատակով գործադուլի իրավունքը:

Դեռևս 2013 թվականին ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը միաձուլման արդյունքում վերակազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության⁹⁶²: Հատկանշական է, որ Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 81 Կոնվենցիայի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունների վերահսկման լիազոր մարմինը պետք է ստեղծվի կենտրոնական մարմիններին կից, նրանց հսկողության ներքո, իսկ նոր տեսչությունը կենտրոնական մարմնից իջել, դարձել է աշխատակազմի ստորաբաժանում: Միաժամանակ, նման վերակազմավորումից հետո քաղաքացիների՝ նոր տեսչությանը ուղղված դիմում-բողոքների թիվը էապես նվազել է, նաև շատ քիչ են նոր տեսչության կողմից սեփական նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթները⁹⁶³:

2014 թվականին ևս չի կարգավորվել օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2004թ. օգոստոսի 1-ից հետո լուծարված կազմակերպություններում աշխատանքի ժամանակ դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման բացակայության խնդիրը: Մինչդեռ, ՀՀ կողմից վավերացված «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925 թվականի և «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» 1992 թվականի Կոնվենցիաներում սահմանվում է, որ ազգային օրենսդրությամբ պետք է նախատեսվեն այնպիսի կարգավորումներ, որոնք պատահարից տուժածներին կամ, մահվան դեպքում, նրանց խնամքի տակ գտնվող անձանց կապահովեն համապատասխան փոխհատուցման վճարում, եթե նման վճարում գործատուն կամ ապահովագրողն ի վիճակի չէ կատարելու, ինչպես նաև գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանությունն իրականացնում են երաշխիքային հաստատությունները:

Չնայած սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովման նպատակով պետությունն իրականացնում է մի շարք միջոցառումներ⁹⁶⁴՝ այդուհանդերձ, ոլորտում դեռևս առկա են բազմաթիվ խախտումներ: Բազմաթիվ մանրածախ առևտրի կետերում, հակառակ օրենքի պահանջին, հրաժարվել են սպառողների կողմից գնված

⁹⁶² ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 857-Ն որոշում

⁹⁶³ «ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության խնդիրները» ուսումնասիրություն, <http://www.osf.am/wp-content/uploads/2014/06/Labour-Inspection-in-Armenia-A.-Mejlumyan.pdf>

⁹⁶⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 31.1

ապրանքը ետ վերցնել կամ փոխանակել, ինչի կապակցությամբ լիազոր մարմինը⁹⁶⁵ չի իրականացրել բավարար միջոցառումներ: Բացի դրանից՝ ոչ պարենային արտադրանքների ու ապրանքների անվտանգության ապահովման ուղղությամբ հանրությունը բավարար չի իրագեկվել, մինչդեռ սպառողների իրավունքների պաշտպանության գործում առաջնային նշանակություն ունի սպառողների լայն շրջանակի՝ իր իրավունքների վերաբերյալ իրագեկության ապահովումը⁹⁶⁶: Ավելին, իրագեկումը ներառում է ոչ միայն կոնկրետ ապրանքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում հանրությանը, այլև իր իրավունքների, դրանց պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում սպառողին (օրինակ՝ ո՞ր մարմինն է իրականացնում սպառողների իրավունքների պաշտպանություն, ու՞ր դիմի, ի՞նչ քայլեր ձեռնարկի սպառողն իր իրավունքների հնարավոր խախտման դեպքում և այլն): Ընդ որում, կարևորվում են սպառողական ուսուցումը դպրոցներում, ԶԼՄ-ներից օգտվելու նոր միջոցները, ինչպես նաև համացանցի մեծածավալ ռեսուրսների լիարժեք գործածումը⁹⁶⁷՝ հատուկ ուշադրություն դարձնելով անապահով, ցածր եկամուտ և գրագիտություն ունեցող սպառողների կարիքներին՝ թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակավայրերում⁹⁶⁸:

Ինչպես ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով, այնպես էլ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է անձի սոցիալական ապահովության իրավունքը: Առհասարակ, սոցիալապես անապահով ընտանիքները մեծ կախվածություն ունեն պետության կողմից տրամադրվող սոցիալական տրանսֆերտների, այդ թվում՝ ընտանեկան և սոցիալական նպաստի և այլ տեսակի օգնությունից⁹⁶⁹: Իսկ այդ ընտանիքներին նպաստների վճարումը դադարեցնելն անխուսափելիորեն կհանգեցնի նրանց շրջանում աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության մակարդակի զգալի աճի⁹⁷⁰: Ավելին, զուգահեռաբար դա կհանգեցնի աղքատության խորության ու սրության սաստկացման, ինչպես նաև բժշկական, կրթական և մյուս ծառայությունների հասանելիության կրճատման, քանի որ ընտանիքի անապահովության համակարգում հաշվառված լինելու դեպքում անձինք օգտվում են մի շարք ոլորտներում անվճար ծառայություններ ստանալու արտոնությունից⁹⁷¹: Այնուհանդերձ, սոցիալապես

⁹⁶⁵ Շուկայի վերահսկողության պետական տեսչությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարության առանձնացված ստորաբաժանում է, որի նպատակներից և խնդիրներից է սպառողների իրավունքների պաշտպանությունը:

⁹⁶⁶ «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 4

⁹⁶⁷ Consumer Education, Policy Recommendations of the OECD'S Committee on Consumer Policy, 2009

<http://www.oecd.org/internet/consumer/44110333.pdf>

⁹⁶⁸ http://www.consumersinternational.org/media/33866/consumption_en.pdf

⁹⁶⁹ http://www.armstat.am/file/article/4.poverty_2014a_1.pdf, ինչպես նաև Սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության ելակետային հետազոտություն և այդ ծառայությունների ազդեցությունը սոցիալապես խոցելի ընտանիքների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, 2013թ.

⁹⁷⁰ <http://www.armstat.am/file/doc/99489153.pdf>

⁹⁷¹ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն իր 2013 թվականի զեկույցում նշել է, որ սոցիալապես անապահով անձանց՝ անվճար բժշկական օգնություն ստանալու շեմը Հայաստանում շատ

անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական օգնության համակարգում առկա են լուրջ խնդիրներ, ներառյալ՝ կոռուպցիոն ռիսկեր, չարաշահումներ, ավելորդ վարչարարություն, օրենսդրական թերություններ: Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի արդյունավետությանն անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն⁹⁷²՝ նշելով, որ ընտանեկան նպաստի բանաձևի անբավարարության և գոյություն ունեցող պետական աջակցության վերաբերյալ տեղեկացվածության պակասի պատճառով ծայրահեղ աղքատ ընտանիքների միայն 54.3%-ը և աղքատ ընտանիքների 4.1%-ն են կանոնավոր կերպով օգտվում սոցիալապես անապահով ընտանիքների օգնության համակարգից⁹⁷³:

ՀՀ Սահմանադրությամբ յուրաքանչյուր աշխատող ունի օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք (հոդված 32): Այսպես, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով 2014 թվականին նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 50.000 դրամ՝ նախկին 45.000 դրամի փոխարեն⁹⁷⁴:

Ազգային վիճակագրության ծառայության տվյալներ՝

2014թ.				
	առաջին եռամսյակ ⁹⁷⁵ /հազար/	երկրորդ եռամսյակ ⁹⁷⁶ /հազար/	երրորդ եռամսյակ ⁹⁷⁷ /հազար/	չորրորդ եռամսյակ ⁹⁷⁸ /հազար/
նվազագույն սպառողական զամբյուղի արժեք (ամսական կտրվածքով)	58.4	59.1	56.6	57.9
պարենային զամբյուղի արժեք (ամսական կտրվածքով)	32.9	33.4	31.9	32.7

Այնուհանդերձ, նշված աղյուսակի վիճակագրությունից երևում է, որ թեև 2014 թվականի 1-4-րդ կիսամյակներում նվազագույն աշխատավարձի չափը համապատասխանել է

ցածր է սահմանված, ինչի արդյունքում միայն ծայրահեղ աղքատներն են օգտվում անվճար օգնություն ստանալու արտոնությունից այն դեպքում, երբ համեմատաբար ավելի բարձր եկամուտ ունեցող անձանց համար այս ծառայությունները նույնպես մատչելի չեն:

http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

⁹⁷² <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

⁹⁷³ Մանրամասն տես՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնում

⁹⁷⁴ Նշված փոփոխությունն ուժի մեջ էր մտել 2014 թվականի հուլիսի 1-ից, իսկ մինչ այդ՝ 2014 թվականի սկզբին, նվազագույն աշխատավարձը սահմանված էր 45.000 դրամ

⁹⁷⁵ http://armstat.am/file/article/sv_03_14a_6200.pdf

⁹⁷⁶ http://armstat.am/file/article/sv_06_14a_6200.pdf

⁹⁷⁷ http://armstat.am/file/article/sv_09_14a_6200.pdf

⁹⁷⁸ http://armstat.am/file/article/sv_12_14a_6200.pdf

ամսական պարենային զամբյուղի չափին, սակայն նվազագույն ամսական աշխատավարձը չի համապատասխանել ամսական սպառողական զամբյուղի չափին, ինչը վկայում է, որ նվազագույն ամսական աշխատավարձը չի բավականացնում աշխատողների նվազագույն կարիքները բավարարելուն⁹⁷⁹:

Ստացվել են դժգոհություններ, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի մի շարք դրույթների հակասահմանադրական ճանաչվելուց հետո⁹⁸⁰ կատարված օրենսդրական որոշ փոփոխությունների արդյունքում պետական և մասնավոր հատվածներում համատեղությամբ աշխատողներից կատարվել է սոցիալական վճարի կրկնակի գանձում: Նշվածը հատկապես խնդրահարույց է եղել մի շարք պետական բուհերում և մասնավոր ընկերություններում համատեղությամբ աշխատող անձանց համար: Արդյունքում, բազմաթիվ մասնագետներ հրաժարվել են ԲՈՒՀ-երում դասավանդելուց՝ կրկնակի սոցիալական վճարի գանձումից խուսափելու նպատակով: Թեև պետական ԲՈՒՀ-երից երկուսում լուծվել է խնդիրը (ԲՈՒՀ-երի ՊՈԱԿ-ները վերակազմակերպվել են հիմնադրամների), այնուամենայնիվ, այն համակարգային է և համապատասխան օրենսդրական կանոնակարգման կարիք ունի⁹⁸¹:

Տարիներ շարունակ չի լուծվում մանկատան շրջանավարտներին բնակարաններով ապահովելու խնդիրը: Վերջիններս երկար տարիներ սպասել են հերթացուցակներում օրենքով հասանելիք բնակարանները ստանալուն: Բացի դրանից՝ մինչ օրս ստացված բազմաթիվ բնակարաններ ունեցել են կենցաղային անբարեկարգ պայմաններ և պիտանի չեն եղել բնակության համար: Նշենք, որ դեռևս 2013 թվականին ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում ընդգծել է երեխաների սոցիալական աջակցության անբավարարության խնդիրը և առաջարկել պետությանն աջակցել մանկատան շրջանավարտներին կրթության, աշխատանք գտնելու և բնակարանային ապահովության հարցերում⁹⁸²:

Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը, սակայն սեփականության իրավունքի սահմանափակման մի շարք դեպքերի վերաբերյալ ահազանգերը և Պաշտպանին ուղղված դիմում-բողոքները վկայում են, որ ոլորտում ձեռնարկված քայլերը բավարար չեն: Այսպես, առկա օրենսդրական կարգավորումները լիարժեքորեն չեն երաշխավորում սեփականատիրոջ իրավունքների և շահերի պաշտպանությունը հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման դեպքում: Մարդու իրավունքների ազգային ռազմավարությամբ ամրագրված համապատասխան միջոցառումներ անցկացնելու պարտավորության հիման վրա⁹⁸³՝ 2014 թվականին իրականացվել են օրենսդրական փոփոխություններ և լրացումներ, որոնց արդյունքում

⁹⁷⁹ Մանրամասն տես՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնում

⁹⁸⁰ 2014 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1142

⁹⁸¹ Մանրամասն տես՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնում

⁹⁸² <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

⁹⁸³ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N303 -Ն որոշում, կետ 102, 103

սահմանվել է, որ եթե օտարվում է սեփականության մի մասը, ապա սեփականատերն իրավունք ունի պահանջել նաև սեփականության չօտարված մասի օտարում, եթե գույքի չօտարվող մասը օտարվող մասի համեմատությամբ *աննշան* ⁹⁸⁴: Մինչդեռ, «*աննշան*» եզրույթը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից և կարող է հայեցողական մեկնաբանության տեղիք տալ: Միաժամանակ, միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում ընդունված են կարգավորման ավելի հստակ մեխանիզմներ: Այսպես, օրինակ՝ Ֆրանսիայի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվում է հողամասի 25%-ի օտարման դեպքում սեփականատիրոջ կողմից չօտարված մասը օտարելու պահանջի իրավունք⁹⁸⁵:

Բացի դրանից՝ 2014 թվականին ստացվել են բազմաթիվ բողոքներ՝ անձանց սեփականության վրա արտադատական կարգով արգելանք կիրառելու վերաբերյալ: Մասնավորապես, դեպքերը եղել են հիմնականում ՀՀ ճանապարհային ոստիկանության և Երևանի քաղաքապետարանի կազմած վարչական ակտերի հիման վրա ԴԱՀԿ-ի կատարած արգելադրումների վերաբերյալ: Այսպես, մի շարք օրենքներում⁹⁸⁶ փոփոխություններ կատարելու արդյունքում անբողոքարկելի վարչական ակտերը դարձան անմիջականորեն հարկադիր կատարման ենթակա ակտեր, և որպես արգելանքի կիրառման լրացուցիչ հիմք նախատեսվեց դրամական պահանջների կատարումն ապահովելու նպատակով պատասխանողին պատկանող գույքի վրա արգելանք դնելու մասին վարչական մարմնի, այլ ոչ թե դատարանի որոշումը՝ ի տարբերություն նախկինում սահմանվածի: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանվեց բռնագանձման արտադատական կարգ, որով հանրային իրավական դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա: Դրան զուգահեռ, օրենսդրական փոփոխությունների արդյունքում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում այլևս չեն նախատեսվում վճարման կարգադրությունների վարույթը, ինչպես նաև վարչական ակտի հիման վրա ֆիզիկական կամ իրավաբանական անձից բռնագանձում իրականացնելու պահանջով՝ վարչական մարմնիների կամ պաշտոնատար անձանց կողմից վարչական դատարան դիմելու հիմքը: Ստացվում է, որ վարչական ակտի կատարման նպատակով արգելանք դնելու մասին որոշումը կարող է անմիջապես կատարվել ՀՀ ԱՆ Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից արտադատական կարգով՝ անձի կողմից սահմանված ժամկետում չբողոքարկվելու դեպքում: Ընդ որում, ստացվել են բողոքներ, որ արգելանքը դրվել էր անձին պատկանող ամբողջ գույքի վրա՝ առանց հաշվի առնելու հանրային իրավական դրամական պահանջի չափը: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը նախատեսում է, որ. «*Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: (...) Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ*

⁹⁸⁴ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, 21.06.2014, ՀՕ-105-Ն

⁹⁸⁵ Մանրամասն տես՝ «ՀՀ արդարադատության նախարարություն» Բաժնում

⁹⁸⁶ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքներ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք

դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»: Բացի դրանից՝ սեփականության սահմանափակման արտադատական կարգը սահմանափակում է անձի՝ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներով ամրագրված դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը և իր խախտված իրավունքները վերականգնելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքը: Խնդրի սահմանադրականության վիճարկման նպատակով Պաշտպանը 2014 թվականի հունիսի 26-ին դիմել էր ՀՀ Սահմանադրական դատարան: Սակայն քանի որ դիմելուց հետո առաջարկվել են խնդրի օրենսդրական կարգավորումներ Ազգային ժողովում ներկայացված մի քանի նախաձեռնությունների շրջանակներում, ինչը հարցի հրատապ լուծման հնարավորություն էր ստեղծում, Պաշտպանը հոկտեմբերի 23-ին հետ է վերցրել իր ՄԴ դիմումը: Չնայած դրանից հետո մի շարք օրենքներում կատարվեցին էական փոփոխություններ, այդուհանդերձ, առ այսօր պահպանվել է որոշ դեպքերում հանրային իրավական դրամական պահանջների կատարման համար կայացված վարչական ակտերի հիման վրա ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի արգելադրման արտադատական կարգը:

Տնտեսական և սոցիալական ոլորտներում պետության հիմնական խնդիրներից է իրականացնել բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստել արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը (Սահմանադրություն, հոդված 48): Այնուհանդերձ, 2014 թվականին արձանագրվել են առողջության պահպանման իրավունքի խախտման բազմաթիվ դեպքեր: Այսպես, Պաշտպանի Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի (ԲԿԱՄ) կողմից հոգեբուժական հաստատություններ կատարված այցերի արդյունքում բացահայտվել է հիվանդների պահման վատ պայմանների, գերբնակեցման, հիվանդների բուժման համար բարենպաստ պայմանների բացակայության դեպքեր: Ինչպես նաև արձանագրվել են զսպման միջոցների ընթացակարգի պահպանման խախտումներ, սահմանված օրական միջին չափաբաժնից քիչ սննդի տրամադրման, հիվանդների նկատմամբ վատ վերաբերմունքի և շահագործման դեպքեր: Առանձին հոգեբուժական հաստատություններում հոգեբույժների ու սանիտարների թիվը բավարար չէ հիվանդների լիարժեք բուժման և խնամքի կազմակերպման համար: Օրինակ՝ Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերում հոգեբույժի 7 հաստիքից միայն 3-ն է համալրված, ինչը անհամաչափ է դիսպանսերում խնամվող հիվանդների թվին: Այլ դեպքով «Նորք» հոգեբուժական կլինիկա ԲԿԱՄ փորձագետների այցելության օրը՝ 2014 թվականի հուլիսի 15-ին, հակառակ օրենսդրական պահանջի՝ առկա չէին մատուցվող սննդի ճաշացանկը և նախորդ օրվա սննդի նմուշները: Նույն ժամանակահատվածում Սևանի հոգեբուժարանում հայտնաբերվել է երեք անուն ժամկետանց դեղ⁹⁸⁷:

⁹⁸⁷ Մանրամասն տես՝ ԲԿԱՄ տարեկան զեկույցը (2014)

Պաշտպանը մի շարք դժգոհություններ է ստացել քաղաքացիներից պետական պատվերով գնված դեղերի որակի վերաբերյալ, որի պատճառներից է, նախևառաջ, օրենքով սահմանված պետական գնումների մրցույթներում նվազագույն գին ներկայացնողի հաղթելու սկզբունքը⁹⁸⁸: Միաժամանակ, մի շարք դեպքեր են արձանագրվել, երբ հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև մինչև յոթ տարեկան երեխաները չեն ստացել օրենքով⁹⁸⁹ հասանելիք անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր: Նշվածի պատճառներից է այն, որ մի շարք դեպքերում վերոնշյալ անձինք տեղեկացված չեն իրենց՝ հասանելիք դեղերն անվճար ստանալու իրավունքի մասին⁹⁹⁰:

Առ այսօր օրենսդրորեն սահմանված չէ «բժշկական սխալ» հասկացությունը, ինչպես նաև մշակված և ներդրված չեն հիվանդությունների ախտորոշման, բուժման բժշկական չափորոշիչները (ստանդարտները), ուղեցույցները, ինչի հետևանքով բժշկի անփութության, սխալ բժշկական միջամտության ցուցաբերման դեպքերում որոշ բժիշկներ, բուժաշխատողներ չեն ենթարկվել պատասխանատվության: Մտահոգիչ է, որ թեև 2012 թվականից սկսվել է բժշկական ստանդարտների մշակման գործընթացը, սակայն տվյալ աշխատանքները դեռևս չեն ավարտվել:

Կրթության իրավունքը անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորված հիմնարար և կարևոր իրավունքներից է: Չնայած ՀՀ-ն իրականացրել է բազմաթիվ քայլեր՝ կրթությունը բոլորի համար մատչելի դարձնելու ուղղությամբ, այնուհանդերձ, 2014 թվականին այս ոլորտում գրանցվել են բազմաթիվ խնդիրներ: Այսպես, բազմաթիվ աշակերտների ծնողների և ոլորտի փորձագետների պնդմամբ՝ միջնակարգ կրթության որակը դեռևս անբավարար է, քանի որ հանրապետության դպրոցների միջև կան կրթական որակի էական տարբերություններ, ուսուցիչների կողմից հաճախ առարկաները պատշաճ չեն դասավանդվում հետագայում մասնավոր պարապմունքներ անցկացնելու ակնկալիքով, դպրոցներում առկա է համապատասխան մասնագետների/կադրերի պակաս, դասարանները գերբեռնված են, որոշ դասագրքեր դժվարամատչելի են աշակերտների համար և այլն: ՁԼՄ-երից, աշակերտների ծնողներից ստացվել են տեղեկություններ, որ բազմաթիվ հանրակրթական դպրոցներում շարունակվում են անօրինական դրամահավաքի, մանկավարժների նկատմամբ տարբերակված մոտեցման և տնօրենների կողմից լուրջ խախտումների դեպքերը⁹⁹¹:

Պաշտպանի ներկայացուցիչների այցերի արդյունքում մի շարք հանրակրթական, այդ թվում՝ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում բացահայտվել են սննդի և բուժապասարկման կազմակերպման հարցում լուրջ բացթողումներ: Մասնավորապես, որոշ հատուկ դպրոցների երեխաների տրամադրվել է ժամկետանց սնունդ, այն պահվել է ոչ պատշաճ պայմաններում: Հատուկ դպրոցների աշակերտներին

⁹⁸⁸ Մանրամասն տես՝ «ՀՀ ֆինանսների նախարարություն» և «ՀՀ առողջապահության նախարարություն» բաժիններում

⁹⁸⁹ «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշում

⁹⁹⁰ Մանրամասն տես՝ «ՀՀ առողջապահության նախարարություն» բաժնում

⁹⁹¹ Մանրամասն տես՝ «ՀՀ կրթության և գիտության նախարարություն» բաժնում

պատշաճ չէին տրամադրվում ստոմատոլոգիական և այլ բժշկական ծառայություններ: Բացի դրանից՝ բազմաթիվ հանրակրթական դպրոցների բուֆետներում արձանագրվել են երեխաների առողջության համար վնասակար սննդատեսակների (գազավորված ըմպելիքներ, չիպսեր, ապխտած կամ կիսաապխտած երշիկեղենով բրդուճներ, սուրճ և այլն) իրացման, ինչպես նաև սննդի վրա արտադրության և պիտանիության ժամկետի, ինչպես նաև բաղադրության վերաբերյալ մակնշման բացակայության և այլ դեպքեր⁹⁹²:

Չնայած «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում նախատեսվում է հանրակրթության համակարգում աստիճանական անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, այսուհանդերձ, լիազոր մարմինների կողմից չեն ձեռնարկվել բավարար քայլեր՝ ներառական կրթություն իրականացնող դպրոցներում լիարժեք մատչելիության ապահովման ուղղությամբ: Այսպես, Հայաստանում գործող ներառական կրթություն իրականացնող 139 հանրակրթական ուսումնական հաստատությունների⁹⁹³ մի մասը չի վերանորոգվել և լիարժեքորեն մատչելի չէ հաշմանդամություն ունեցող երեխաներին, մյուսներում մատչելիությունը սահմանափակվել է միայն դպրոցի մուտքի մոտ թեքահարթակի կառուցմամբ, իսկ առանձին դպրոցներում վերակառուցման ընթացքում անգամ չեն պահպանվել համապատասխան շինարարական նորմերը, որոնք անհրաժեշտ են մատչելի միջավայր ապահովելու համար⁹⁹⁴:

⁹⁹² Տվյալ սննդատեսակների վաճառքը ուսումնական հաստատություններում արգելվում է ՀՀ առողջապահության նախարարի 2014թ. հունիսի 6-ին N 32-Ն հրամանի 26-րդ կետով:

⁹⁹³ 2015 թվականի հունվար ամսվա դրությամբ; <http://www.edu.am/DownloadFile/349arm-nerar-cucak.pdf>

⁹⁹⁴ Մանրամասն տես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժնում

6.3 ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2014 թվականին հայկական զինված ուժերում արձանագրվել է 45 զինծառայողի մահվան դեպք: Նրանցից 26-ը գոհվել են Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի խախտման տարբեր դրսևորումների արդյունքում: Հարկ է նշել, որ 1994 թվականի զինադադարի հաստատումից ի վեր 2014 թվականին հայկական կողմի գրանցված զոհերի թիվն ամենամեծն է մեկ տարվա կտրվածքով: 2014 թվականի ընթացքում ադրբեջանական կողմը, խախտելով միջազգային-իրավական կարևորագույն սկզբունքները, իր իսկ ստանձնած պարտավորությունները, բազմիցս դիմել է ուժի և ուժի սպառնալիքի կիրառմանը, միաժամանակ շարունակել հայերի նկատմամբ ատելության քարոզչությունը պետական մակարդակով՝ այդպիսով ձախողելով տարածաշրջանում խաղաղություն ու կայունություն պահպանելու կարևորագույն խնդրի իրականացումը: Ադրբեջանական կողմը, հակառակ կողմերի հետ ռազմաքաղաքական խնդիրները խաղաղ բանակցությունների ճանապարհով կարգավորելու պատրաստակամության մասին հավաստիացումներին, խախտելով հրադադարի ռեժիմը, 2014 թվականին պարբերաբար նախահարձակ է եղել՝ կորուստներ պատճառելով հայկական զինված ուժերին: Ընդ որում, Ադրբեջանը նաև անտեսել է սահմանային միջադեպերից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ներկայացուցիչների՝ տարածաշրջանում խաղաղությունն ու կայունությունը պահպանելու կոչերը:

Դեռ ավելին՝ Ադրբեջանը մի շարք դեպքերում խախտել է նաև միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար սկզբունքները: Այսպես, 2014 թվականի նոյեմբերի 12-ին ադրբեջանական զինուժը ոչ միայն խոցեց ուսումնավարժական թռիչք իրականացնող հայկական ուղղաթիռը, որի հետևանքով գոհվեց երեք զինծառայող, այլև հրաժարվեց թույլատրել դեպքի վայրում անկախ քննության իրականացումը և գոհվածների դիակների տարահանումը՝ անդադար կրակի տակ պահելով ուղղաթիռի անկման վայրը: Այս միջադեպի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարին՝ հայկական ուղղաթիռի անձնակազմին հայկական կողմին վերադարձմանը, ինչպես նաև միջադեպի համակողմանի, անկողմնակալ ու թափանցիկ հետաքննության անցկացմանը նպաստելու հարցով⁹⁹⁵: Սակայն Ադրբեջանի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ ոտնահարման պայմաններում հայկական զինված ուժերը ստիպված էին իրականացնել ուղղաթիռի անձնակազմի դիերի տարահանման գործողությունը, որը ևս իրականացվել է ադրբեջանական կողմի ինտենսիվ կրակի պայմաններում: Հաշվի առնելով ադրբեջանական կողմի՝ միջազգային-իրավական սկզբունքները և իր իսկ պարտավորություններն անտեսող, թե հայ և թե սեփական զինծառայողների կյանքի իրավունքի նկատմամբ արհամարհական վերաբերմունքի վրա հիմնված պետական գործելաճը՝ հայկական կողմի համար կարևոր խնդիր է մարտական դիրքերը ժամանակակից տեխնիկական միջոցներով հնարավորինս համալրելը, ինչը կարող է նվազեցնել կորուստների վտանգը: Ադրբեջանական կողմը բազմիցս կոպտորեն խախտել է նաև միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը՝ անընդունելի վայրագ

⁹⁹⁵ http://www.ombuds.am/library/view_news/article/1233

վերաբերմունք դրսևորելով գերության մեջ հայտնված զինծառայողների և քաղաքացիական անձանց նկատմամբ: Մասնավորապես, ադրբեջանական կողմը խոշտանգել է դեռևս 2013 թվականին տեղանքում չկողմնորոշվելու և մոլորվելու արդյունքում իր իրավասության տակ հայտնված հայ զինծառայող Հ. Ինջիդուլյանին, ում հաջողվեց Հայաստան վերադարձնել 2014 թվականին: Բացի Հ. Ինջիդուլյանի կողմից Ադրբեջանում իր նկատմամբ բռնություններ կիրառելու մասին Պաշտպանին հայտնած բանավոր տվյալներից⁹⁹⁶, Պաշտպանության նախարարության տրամադրության տակ էր հայտնվել նաև հայ զինծառայողի նկատմամբ ադրբեջանական կողմի գործադրած բռնությունները հաստատող տեսանյութ, որը Պաշտպանի կողմից փակ կարգով ցուցադրվել է նաև միջազգային գործընկերներին՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵԽ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին⁹⁹⁷: Մեկ այլ ցավալի դեպք է 2014 թվականին քաղաքացիական անձ Կ. Պետրոսյանի խոշտանգումն ու սպանությունը, ով կրկին օգոստոսի 7-ին պատահաբար հատել էր սահմանը և հայտնվել Ադրբեջանում: Ընդ որում, համացանցում հայտնված մի շարք տեսանյութերում հստակ երևում է, թե ինչպես են ադրբեջանցի քաղաքացիական անձինք զրուցում մոլորված Կ. Պետրոսյանի հետ, որից հետո, սակայն, նա ներկայացվում է որպես հայ դիվերսանտ, ում նկատմամբ, տեսանյութերի բովանդակությունը հաշվի առնելով, ևս ակնհայտորեն գերու իրավունքները ոտնահարող վերաբերմունք է դրսևորվում: Գերեվարվելուց մեկ օր անց ադրբեջանական իշխանությունները հայտարարեցին Կ. Պետրոսյանի մահվան մասին՝ որպես պատճառ նշելով ստրանտոբային անբավարարությունը: Կ. Պետրոսյանի սպանության կապակցությամբ ևս Պաշտպանը դիմել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարին՝ կոչ անելով դատապարտել մարդու իրավունքներն արհամարհող Ադրբեջանի գործողությունները և նպաստել դիակի վերադարձմանը, անկողմնակալ հետաքննության իրականացմանը⁹⁹⁸: Հարկ է նշել, որ Հայաստան կատարած այցի ժամանակ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը ևս, ի պատասխան Կ. Պետրոսյանի դիակը վերադարձնելու հետ կապված հարցին, նշել էր գերեվարված յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ Կ. Պետրոսյանի դիակը վերադարձնելու կարևորության մասին⁹⁹⁹: Ադրբեջանական կողմը միայն հոկտեմբերի 10-ին վերադարձրեց Կ. Պետրոսյանի դին՝ այդպիսով նպատակ ունենալով միտումնաբար բացառել Կ. Պետրոսյանի մահվան իրական պատճառները բացահայտելու հնարավորությունը: Ինչ վերաբերում է ոչ հակառակորդի գործողությունների հետևանքով հայ զինծառայողների մահվան դեպքերին, ապա 2014 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, մահվան դեպքերի թիվը նվազել է՝ 19 մահացություն, 24-ի փոխարեն: Չնայած դեպքերի նվազմանը՝ 2014 թվականին զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ ոչ բոլոր դեպքերում են ձեռնարկվել

⁹⁹⁶ <http://news.am/arm/news/232286.html>

⁹⁹⁷ <http://ombuds.am/article/1238>

⁹⁹⁸ http://www.ombuds.am/library/view_news/article/1207

⁹⁹⁹ <http://www.aravot.am/2014/10/09/504907/>

դրանք կանխելու բոլոր հնարավոր միջոցները: Ջինժառայողների մահվան պատճառների ուսումնասիրությունը (զինժառայողների միջև անբարյացակամ հարաբերությունների հետևանքով սպանություն, զենքի հետ վարվելու կանոնների խախտում, մարտական հերթապահության կանոնների խախտում, ինքնասպանություն, առողջական խնդիրներ) վկայում է, որ դրանք հաճախ ուղղակի կամ անուղղակի կերպով հետևանք են եղել նաև պատասխանատու պաշտոնատար անձանց թերացումների: Ընդ որում, մահացության մի շարք դեպքերի պատճառների հիմքում ի սկզբանե ընկած են եղել կանոնադրային հարաբերությունների խախտումները: Ջինժառայողների կյանքի իրավունքի պաշտպանության վերաբերյալ ՄԻԵԴ-ն իր մի շարք դատական ակտերում անդրադարձել է որոշակի հանգամանքներում անձին ուրիշներից և նույնիսկ իրենից պաշտպանելու համար անհրաժեշտ կանխիչ միջոցառումներ ձեռնարկելու պետության պոզիտիվ պարտականությանը կարևորելով դա հատկապես զինվորական ծառայության համատեքստում¹⁰⁰⁰: Ընդ որում, իշխանությունները պարտավոր են առանձնահատուկ ուշադրություն դարձնել ինչ-ինչ խնդիրներ (հոգեբանական, ֆիզիկական) ունեցող զինժառայողներին, հատկապես՝ նորակոչիկներին (պարտադիր ժամկետային զինժառայողներ)¹⁰⁰¹: Ջինժառայողների կյանքի իրավունքի պաշտպանությունը դատավարական երաշխիքների տեսանկյունից ենթադրում է մահվան դեպքերի մանրակրկիտ, անկախ քննությունը¹⁰⁰²: Ջինված ուժերում քրեական իրավախախտումների, այդ թվում՝ մահվան դեպքերի քննության անկախության ապահովման կարևոր նախադրյալ պետք է համարել 2014 թվականին ՀՀ ՊՆ ենթակայության տակ գտնվող քննչական ծառայության լիազորությունների փոխանցումը նորաստեղծ քննչական կոմիտեին: Ջինժառայողների կողմից կատարված բոլոր հանցագործությունների անկախ և անաչառ քննությունը հնարավոր է ապահովել միայն այն դեպքում, երբ քննություն իրականացնող մարմինը գերատեսչական առումով անկախ է այն մարմնից, որի կազմի մեջ մտնող անձանց կողմից կատարված հանցանքները քննում է: Այնուամենայնիվ, 2014 թվականին զինված ուժերում մահացած որոշ զինժառայողների հարազատներ Պաշտպանին դժգոհություն են հայտնել զինժառայողների մահվան առանձին դեպքերի քննության, մասնավորապես՝ որակումների կապակցությամբ (զենքի հետ վարվելու կանոնները խախտելը, մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, ինքնասպանության հասցնելը): Խնդիրն այն է, որ մահացած զինժառայողների հարազատներն արժանահավատ չեն համարել քննչական մարմնի կողմից ի սկզբանե առաջ քաշված մահվան պատճառի վարկածը: Դեպքերից մեկով զինժառայողների հարազատները Պաշտպանին հայտնել են, որ խիստ կասկածելի են համարում մահացածի ինքնասպանության վարկածը՝ իրենց կասկածը պատճառաբանելով զինժառայողի կողմից ծառայության պայմաններից ու ծառայակիցների վերաբերմունքից երբևէ չդժգոհելու հանգամանքով: Մեկ այլ դեպքով մահացած զինժառայողների հարազատները Պաշտպանին տեղեկացրել են, որ թեև

¹⁰⁰⁰ Ataman v. Turkey, (2006)

¹⁰⁰¹ Kilinc and Others v. Turkey, (2005)

¹⁰⁰² McKerr v. UK, (2001)

քննության սկզբնական փուլում իրենց՝ որպես տուժողի իրավահաջորդ, ներգրավել են գործի քննության մեջ, թույլատրել մասնակցել դիակի դատաբժշկական փորձաքննությանը, սակայն դրանից հետո բավական երկար ժամանակ իրենց գործի քննության ընթացքի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվել: Հարկ է նշել, որ տուժողի իրավահաջորդներին գործի քննությանը ներգրավելն ու պարբերաբար տեղեկատվություն տրամադրելը զինված ուժերում մահվան դեպքերի քննության անաչառության կարևոր երաշխիքներից են, ինչի մասին Բազմիցս նշել է նաև ՄԻԵԴ-ն իր դատական ակտերում¹⁰⁰³: Բացի այդ, մահվան դեպքերի քննությանն առաջադրվող կարևորագույն պահանջներից է նաև քննության արագությունը, ինչը ենթադրում է, որ քննությունը պետք է սկսվի մահվան դեպքից հետո առավելագույնս շուտ, և այն պետք է իրականացվի ողջամիտ ժամկետում՝ բացառելով անհարկի ձգձգումը¹⁰⁰⁴: Մինչդեռ, բացի հանրությանը հայտնի դեպքերից, որոնցով զինձառայողների մահվան վերաբերյալ գործերը տարիներով քննվում են և բացահայտված չեն, 2014 թվականին Պաշտպանը նաև այլ բողոքներ է ստացել մահացած զինձառայողների հարազատներից գործի քննության ձգձգման և մեղավորների բացահայտված չլինելու մասին: Բանակում մահվան դեպքերի քննության հետ կապված խնդիրներին Հայաստանի վերաբերյալ իր զեկույցում անդրադարձել է նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը՝ մատնանշելով գործերի քննության ընթացքում առավել օրինաչափ թերացումները¹⁰⁰⁵, ինչպես նաև միջազգային «Human Rights Watch» կազմակերպությունը¹⁰⁰⁶: Նույնպիսի մտահոգություններ են հայտնել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, մասնավորապես՝ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը¹⁰⁰⁷: Հարկ է նշել, որ իրավասու մարմինների կողմից զինձառայողների մահվան դեպքերի մանրակրկիտ, լրիվ, բազմակողմանի, արագ ու հրապարակային քննության ապահովման արդյունքում ոչ միայն կկանխվեն զինձառայողների մահվան այլ դեպքերը, այլև կմեծանա հանրության վստահությունն այդ մարմինների նկատմամբ, ուստի անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում առավելագույն ջանքեր գործադրել մահվան դեպքերի բոլոր հանգամանքները բացահայտելու ուղղությամբ:

Խոշտանգումներից, դաժան կամ անմարդկային վերաբերմունքից կամ պատժից զերծ մնալու յուրաքանչյուր մարդու, այդ թվում՝ զինձառայողի իրավունքը, ի տարբերություն մի շարք այլ հիմնարար իրավունքների, ոչ մի դեպքում ենթակա չէ սահմանափակման, այսինքն՝ ոչ մի զինձառայող չպետք է ենթարկվի խոշտանգումների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի կամ պատժի՝ անկախ այն բանից, թե ինչ հանգամանքներում և ինչ նպատակներով են դրանք տեղի ունեցել: Պետությունը

¹⁰⁰³ McKerr v. UK, (2001)

¹⁰⁰⁴ Kelly and Others v. UK, (2001)

¹⁰⁰⁵ <https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2701645&SecMode=1&DocId=2243332&Usage=2>, կետեր 85, 86

¹⁰⁰⁶ <http://www.hrw.org/world-report/2015/country-chapters/131704?page=2>

¹⁰⁰⁷ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության զեկույցը «Զինված ուժերում 2014 թվականի մահացության դեպքերի մասին»

պարտավոր է ապահովել զինվորական ծառայության այնպիսի պայմաններ, որոնք համահունչ են մարդկային արժանապատվությանը, զինվորական պատրաստականության գործընթացն ու մեթոդները չպետք է հանգեցնեն զինծառայողների այնպիսի տանջանքի, որը գերազանցում է զինվորական կարգապահությանը բնորոշ, ընդունելի ծանրությունը¹⁰⁰⁸: Վատ վերաբերմունքի ամենախիստ դրսևորումը խոշտանգումն է: Պաշտպանին բանավոր գանգատներ են ներկայացվել 2014 թվականի ընթացքում Ռազմական ոստիկանության պաշտոնատար անձանց կողմից զինծառայողների խոշտանգման՝ նրանց նկատմամբ բռնություն գործադրելու առանձին դեպքերի մասին, որոնց վերաբերյալ, սակայն, զինծառայողները տարբեր պատճառներով խուսափել են իրավասու մարմիններին հայտնելուց¹⁰⁰⁹: Մեկ այլ դեպքով քրեական գործի քննության շրջանակներում զինծառայողների նկատմամբ քննիչի կողմից բռնություն գործադրելու դեպքի վերաբերյալ հաղորդում է ներկայացվել իրավասու պետական մարմիններին՝ նկարագրելով պաշտոնատար անձի կողմից գործադրված բռնության մանրամասները: Սակայն այդ դեպքով մանրամասն քննություն չի իրականացվել: ՊՆ ռազմական ոստիկանության կողմից քրեական գործի հարուցումը մերժվել է, իսկ հատուկ քննչական ծառայությունը հանցագործության մասին հաղորդումն ընդհանրապես չի քննարկել և չի կայացրել օրենսդրությամբ պահանջվող որոշումներից որևէ մեկը՝ հանցագործության մասին հաղորդմանը պատասխանելով գրությամբ: Անհրաժեշտ է նշել, որ խոշտանգումների մասին հաղորդումների մանրակրկիտ ու արագ քննությունը, քրեական պատասխանատվության անխուսափելիությունն այն կարևորագույն պայմաններից են, որոնց ապահովման դեպքում միայն կարելի է հասնել խոշտանգումների դեպքերը հնարավորինս բացառելուն: Ուստի, իրավասու մարմինները պարտավոր են արդար, անկողմնակալ և անկախ քննություն իրականացնել՝ անպատժելիությունը բացառելու համար:

Ինչ վերաբերում է դաժան կամ անմարդկային վերաբերմունքին կամ պատժին, ապա Պաշտպանի կողմից դրանց մասին վկայող որոշ փաստեր են հայտնաբերվել ազատությունից զրկված զինծառայողների բնակության/պահման վայրերում: Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմն այցելությունների ընթացքում արձանագրել է, որ ազատությունից զրկված զինծառայողներն ապահովված չեն նվազագույն բնակելի տարածությամբ, խմելու ջրի ծորակով, մեկուսացված սանհագույցով, որոշ տեղերում դեռևս եղել են պատից ամրացվող և փակվող երկաթե մահճակալներ (նառեր), ոչ բարվոք վիճակում է եղել լոգարանը, առանձին շինություններում եղել է շատ ցածր ջերմաստիճան, ջրի անընդհատ կաթկթոց: Բացի այդ, մի շարք խնդրահարույց կարգավորումներ են եղել նաև ազատությունից զրկված զինծառայողների բնակության/պահման վայրերին վերաբերող օրենսդրական կարգավորումներում, մասնավորապես՝ արտաքին զննության ու խուզարկության

¹⁰⁰⁸ Chamber v. Russia, (2008)

¹⁰⁰⁹ Մանրամասն տես՝ «ՀՀ պաշտպանության նախարարություն» գլխում:

միաժամանակյա կատարումը¹⁰¹⁰: Պաշտպանի կողմից նշված խնդիրների մասին տեղեկացվել է Պաշտպանության նախարարությունը, և դրանց լուծման ուղղությամբ անհապաղ միջոցներ են ձեռնարկվել՝ թե գործնական և թե օրենսդրական բարեփոխումների ձևով¹⁰¹¹:

Պաշտպանն առանձին բողոքներ է ստացել քրեական գործերի քննության ընթացքում գործի արդարացի քննության պահանջների խախտումների վերաբերյալ: Բողոքները վերաբերել են գործի քննության ընթացքում իրավասու մարմինների կողմնակալությանը, քննության անհիմն ձգձգմանը, հրապարակայնության պակասին: Պաշտպանին դիմած անձինք հայտնել են, որ իրենց առնչվող քրեական գործի քննության ընթացքում իրավասու պետական մարմինները բավարար խորությամբ չեն ուսումնասիրում դեպքի բոլոր հանգամանքները, անհիմն մերժում են իրենց ներկայացրած միջնորդությունները, չեն ձեռնարկում բավարար միջոցներ՝ հանցանք կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ, անհրաժեշտ կերպով չեն ներգրավում իրենց գործի քննությանը՝ չտրամադրելով քննության ընթացքի մասին բավարար տեղեկատվություն: Պաշտպանի կողմից դիմումների քննարկման շրջանակներում իրավասու պետական մարմիններից, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից և զանգվածային լրատվության միջոցներից ստացված տեղեկատվության հիման վրա մի շարք դեպքերում հաստատվել են դիմումատուների մտահոգությունները: Մասնավորապես, գործերից մեկով զինծառայողին ծեծի ենթարկելու դեպքի վերաբերյալ քրեական գործի քննությունը բավականին ձգձգվել է, իսկ այնուհետև կասեցվել՝ որպես մեղադրյալ ներգրավելու ենթակա անձանց անհայտ լինելու պատճառաբանությամբ¹⁰¹²: Ընդ որում, մտահոգիչ է վերոնշյալ հիմքով կասեցված քրեական գործերի մեծ քանակը: Չնայած քրեական հետապնդման մարմիններն այդ գործերով հայտնել են, որ իրականացվում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հանցանք կատարած անձանց բացահայտելու ուղղությամբ՝ այնուամենայնիվ, գործերի մեծամասնության դեպքում ձեռնարկված միջոցառումները որևէ արդյունք չեն տվել: Գործի արդարացի քննության հետ կապված օրենսդրական խնդիրների կապակցությամբ հարկ է նշել, որ մի շարք իրավադրոյթների անորոշ ձևակերպումներ առաջացնում են քրեական գործերի քննության ընթացքում զինծառայողների՝ դատավարական իրավունքներից զրկվելու վտանգ: Խնդիրն այն է, որ որոշ իրավախախտումներ նախատեսված են միաժամանակ որպես կարգապահական և քրեական (օրինակ՝ հրամանը չկատարելը, մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ և այլն¹⁰¹³) այն տարբերությամբ, որ քրեական

¹⁰¹⁰ Այս խնդիրներն ու դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներն առավել մանրամասն նկարագրված են Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի 2014 թվականի տարեկան զեկույցում:

¹⁰¹¹ http://ombuds.am/library/view_news/article/1209

¹⁰¹² ՀՀ քրեական դատավարության օրենսսզիքը, հոդված 31, մաս 1, կետ 1

¹⁰¹³ ՀՀ քրեական օրենսգրքի և «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի համապատասխանաբար 356-րդ և 31-րդ, 365-րդ և 33-րդ, 376-րդ և 42-րդ հոդվածներ

պատասխանատվությունը վրա է հասնում կարգապահական այդ խախտումների արդյունքում որոշակի բացասական հետևանքներ առաջանալու դեպքում: Մակայն բացասական այդ հետևանքները ՀՀ քրեական օրենսգրքում ձևակերպված են անորոշ, գնահատողական հասկացությունների ձևով՝ վնաս, էական վնաս, ծանր հետևանքներ: Այդպիսի ձևակերպումներն անհնարին են դարձնում կարգապահական և քրեական իրավախախտումների հստակ սահմանազատումը միմյանցից, քանի որ յուրաքանչյուր կարգապահական իրավախախտում ունենում է բացասական հետևանք, այսինքն՝ պատճառում է որոշակի վնաս: Իրավական ձևակերպումների այս անորոշության հետևանքով կարող է ստեղծվել իրավիճակ, երբ զինծառայողին կարգապահական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու ընթացքը (ծառայողական քննությունը) հետագայում վերածվի քրեական վարույթի, ինչի հետևանքով զինծառայողը, փաստորեն, կզրկվի «քրեական մեղադրանք» առաջադրելու պահից իրեն վերապահված կարևորագույն իրավունքներից՝ լռելու, իրավաբանական օգնություն ստանալու և այլն: Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների ձևակերպումների անորոշությանը վերաբերող այս խնդիրն անհրաժեշտ է լուծել նոր քրեական օրենսգրքում, որի նախագծի վրա ներկայում աշխատում են: Իսկ մինչ նոր օրենսգրքի ընդունումը իրավասու պետական մարմինները պետք է ձեռնարկեն հնարավոր միջոցները՝ նմանատիպ դեպքերում իրավախախտումների քննության սկզբնական փուլում զինծառայողի՝ առնվազն իրավաբանական օգնություն ստանալու իրավունքն ապահովելու ուղղությամբ:

Զինծառայողներն ունեն առողջության պահպանման, բժշկական օգնություն ստանալու իրավունք: Այս իրավունքները ներառում են ինչպես զորակոչիկների մանրակրկիտ բժշկական օգնությունը և զինվորական ծառայության համար պիտանելիության վերաբերյալ նրանց առողջական վիճակին համարժեք որոշումների կայացումը, այնպես էլ զինծառայողների հիվանդությունների կանխումն ու բուժումը, բժշկական ծառայությունների մատուցման միջոցով ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովումը: 2014 թվականի ընթացքում Պաշտպանը մի շարք բողոքներ է ստացել զորակոչիկների թերի բժշկական ուսումնասիրությունների, զինվորական ծառայության ընթացքում առողջական խնդիրներ ունեցող զինծառայողներին իրենց առողջական վիճակի հետ անհամատեղելի ծառայության ձևերում ներգրավելու, զինծառայողներին պատշաճ բժշկական օգնություն չցուցաբերելու վերաբերյալ¹⁰¹⁴: Ցավալի է, որ 2014 թվականին արձանագրվել են նաև առողջական խնդիրների պատճառով զինծառայողների մահվան դեպքեր: Պետության կարևորագույն պարտավորություններից է զինծառայողների առողջության նկատմամբ առավելագույն հոգատարություն ցուցաբերելը՝ սկսած պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու պահից մինչև զինծառայությունից արձակելը, իսկ որոշ դեպքերում նաև՝ զինվորական ծառայության ավարտից հետո: Պաշտպանի կողմից զինծառայողների առողջապահական իրավունքներն ամրագրող օրենսդրության ուսումնասիրությունը, ներկայացված դիմումների քննարկման ընթացքում ի հայտ եկած հանգամանքները հիմք

¹⁰¹⁴ Մանրամասն տես՝ «ՀՀ պաշտպանության նախարարություն» գլխում:

են տալիս եզրակացնելու, որ առկա է այդ ոլորտի մի շարք իրավակարգավորումներ կատարելագործելու անհրաժեշտություն: Մասնավորապես, 2014 թվականին Պաշտպանը մի քանի դիմում է ստացել նախկին զինծառայողներից, ովքեր զինվորական ծառայությունից արձակվել են ծառայության ընթացքում ստացած վնասվածքների կամ ի հայտ եկած հիվանդությունների պատճառով, որոնց բուժումը հնարավոր է բացառապես արտասահմանյան բժշկական հաստատություններում: Խնդիրն այն է, որ գործող օրենսդրությունը նախատեսում է զինծառայողի անվճար բուժումը միայն Հայաստանում գործող բուժհաստատություններում, իսկ արտերկրում բուժում կազմակերպելու և/կամ դրա համար անհրաժեշտ ֆինանսական օժանդակություն տրամադրելու հստակ հիմքեր, կարգ և պայմաններ օրենսդրությամբ նախատեսված չեն: Այս իրավիճակն իրավական անորոշություն է ստեղծել և առաջացրել կամայական մոտեցումների տեսական և իրական վտանգ, ուստի անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել խնդրի վերբերյալ հստակ և որոշակի իրավակարգավորումներ սահմանելու ուղղությամբ: Լրամշակման և համակարգման կարիք ունի նաև զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննությունը կարգավորող օրենսդրությունը: Նշված գործընթացը կարգավորող հիմնական իրավական ակտերն են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքը և «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ՊՆ 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410 հրամանը: Սակայն այս իրավական ակտերով հստակ կանոնակարգված չեն այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են, մասնավորապես, գորակոչիկի և զինծառայողի իրավունքներն ու պարտականությունները բժշկական փորձաքննության շրջանակներում, ծառայության սահմանափակումների համար հիմք հանդիսացող մեկից ավելի առողջական խնդիրների դեպքում զինվորական ծառայության համար պիտանելիությունը, պարտադիր զինվորական ծառայությունից հետո անձի ցանկության դեպքում պարտադիր բուժզննության ապահովումը, զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված անձանց հակացուցված ծառայության ձևերը և այլն: Թեև այս բացերը լրացնելու ուղղությամբ ներկայում ձեռնարկվում են համապատասխան միջոցներ (մշակվել է «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, նախատեսվում է լրամշակել վերը նշված հրամանը), սակայն հաշվի առնելով այն, որ այդ իրավակարգավորումներն անմիջականորեն առնչվում են մարդու իրավունքներին և պարտականություններին՝ անհրաժեշտ է մշակել օրենք, որով համակողմանի և հստակ կտրվեն նշված և այլ խնդիրների լուծումները:

Զինծառայողներն ունեն մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք, ինչը ենթադրում է իրենց կրոնական համոզմունքների հիմքով խտրականությունից զերծ մնալը: Այս իրավունքին է անմիջականորեն առնչվում նաև կրոնական հայացքների հիմքով զինվորական ծառայության փոխարեն այլընտրանքային ծառայություն անցնելու հնարավորությունը, որն ապահովված է ՀՀ օրենսդրությամբ: Դրական է, որ Պաշտպանին որևէ դժգոհություն չեն հայտնել այլընտրանքային զինվորական կամ

աշխատանքային ծառայության պայմաններից: 2014 թվականին Պաշտպանն այլընտրանքային ծառայության անցնելու ընթացակարգի հետ կապված աջակցություն ստանալու խնդրով միայն մեկ դիմում է ստացել, որը դրական լուծում է ստացել: Այս իրավունքի ապահովման տեսանկյունից կարևոր է ոչ միայն միանման վերաբերմունքն ինչպես պարտադիր զինվորական, այնպես էլ այլընտրանքային զինվորական և աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացիների հանդեպ, այլև կրոնական համոզմունքներից բխող պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելը¹⁰¹⁵:

¹⁰¹⁵ Larissis v. Greece, (1998)

6.4 ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

2015թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում հաշվառված է եղել հաշմանդամություն ունեցող մոտ 198.600 անձ, ովքեր կազմում են բնակչության 6%-ը¹⁰¹⁶: Թեև 2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (Կոնվենցիա), այնուամենայնիվ, դեռևս վավերացված չէ Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը: Կառավարությունը վստահեցրել է, որ վերջինիս վավերացումը մնում է պետական քաղաքականության օրակարգում, և կվավերացվի առաջիկա տարիներին՝ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց իրավունքների լիակատար իրացման համար անհրաժեշտ հավասար հնարավորությունների և պայմանների էական բարելավումից հետո¹⁰¹⁷: Հատկանշական է, որ Կամընտիր արձանագրության վավերացման վերաբերյալ Հայաստանին հանձնարարական է տրվել նաև 2015 թվականի ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի կողմից¹⁰¹⁸:

Շարունակում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում խտրական վերաբերմունքի դրսևորման խնդիրը: Չնայած հաշմանդամության հիմքով խտրականությունը արգելված է Կոնվենցիայով, մի շարք միջազգային փաստաթղթերով, ինչպես նաև գործող տարբեր իրավական ակտերով, սակայն Հայաստանում խտրականությունը կանխարգելող և արգելող գործուն ու արդյունավետ մեխանիզմներ դեռևս չկան: Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» գործող օրենքով ամրագրված մոտեցումները չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված սկզբունքներին, մշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» օրինագիծը¹⁰¹⁹, որն անդրադառնում է նաև խտրականության խնդրին: Նախագիծը փոխանցվել է ՀՀ Ազգային ժողով, սակայն 2014 թվականին այդպես էլ չի ընդունվել: Վերոգրյալ օրինագծի ընդունման անհրաժեշտությանն անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն՝ արտահայտելով հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորումների վերաբերյալ իր մտահոգությունը¹⁰²⁰:

Ֆիզիկական միջավայրի մատչելիությունը կարևոր երաշխիք է հաշմանդամություն ունեցող անձանց՝ ազգային օրենսդրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված

¹⁰¹⁶ http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=125&code_id=188

¹⁰¹⁷ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/12/qax51-56.pdf

¹⁰¹⁸ http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

¹⁰¹⁹ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6209&Reading=0>

¹⁰²⁰ http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2fC.12%2fARM%2fCO%2f2-3&Lang=en

իրավունքները լիարժեք իրացնելու համար: Չնայած 2014 թվականին պետության կողմից ձեռնարկված որոշ դրական քայլերին և ֆիզիկական մատչելիության հատակ պահանջներ սահմանող օրենսդրության առկայությանը¹⁰²¹՝ հասարակական շինությունների մեծամասնությունը¹⁰²² շարունակում է անմատչելի մնալ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար թե Երևանում, և թե հատկապես ՀՀ մարզերում: Այսպես, ոլորտում գործող ՀԿ-ների փոխանցմամբ բազմաթիվ հասարակական շինություններում բացակայում են թեքահարթակները, վերելակները կամ գոյություն ունեցող հարմարեցումները պիտանի չեն օգտագործման համար: Հատկանշական է, որ նման խնդիրներ հանդիպում են ոչ միայն հին, այլև նորակառույց կամ հիմնովին վերանորոգված շինություններում: Բացի դրանից՝ շարունակում են անմատչելի մնալ նաև ստորգետնյա և վերգետնյա անցումները, ինչպես նաև փողոցներում առանց թեքահարթակների (կամ նորմատիվներին չհամապատասխանող թեքահարթակներով) մի շարք եզրագարդեր: Միաժամանակ, չնայած ոլորտում իրականացված որոշակի բարեփոխումներին¹⁰²³՝ ֆիզիկական միջավայրը շարունակում է անմատչելի մնալ տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Մասնավորապես, ձեռնարկված քայլերը հիմնականում սահմանափակվում են Երևան քաղաքով՝ հաշվի չառնելով մարզերում առկա բազմաթիվ խնդիրները: Բացի դրանից՝ հանրային նշանակության շինություններում բացակայում են բրայլյան տառատեսակով ուղեցույցեր, չկան սուրդոթարգմանիչների և տիֆլոթարգմանիչների ծառայություններ: 2014 թվականի ընթացքում հանրային տրանսպորտը ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում շարունակել է անմատչելի մնալ: Այսպես, թեև Երևանի քաղաքապետարանը նախատեսում էր վերելակային հարմարանքների միջոցով 10 քաղաքային ավտոբուսներ հարմարեցնել բնակչության սակավաշարժուն խմբերի համար, այնուամենայնիվ, նշվածը 2014 թվականին չի իրագործվել: Բացի դրանից՝ հաշվի առնելով մայրաքաղաքում և մարզերում բնակվող հենաշարժողական խնդիրներ ունեցող բազմաթիվ անձանց ազատ տեղաշարժման կարիքները՝ անգամ 10 քաղաքային ավտոբուսների հարմարեցումը Երևանում խիստ անբավարար է հանրային տրանսպորտի մատչելիության ապահովման հարցը լուծելու համար:

Շարունակում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության մատչելիության խնդիրը: Այսպես, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հաճախ բացակայում կամ ոչ բավարար են լինում բրայլյան կամ ձայնային եղանակով ստեղծված տեղեկատվության աղբյուրները: Նմանատիպ խնդիր առկա է նաև հեռարձակման ոլորտում: Մասնավորապես,

¹⁰²¹ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ Կառավարության 2002թ. օգոստոսի 29 թիվ 1473-Ն որոշում, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրաման և այլն

¹⁰²² «Ունիսոն» ՀԿ-ի կողմից վարչական շենքերի, նոտարական տարածքների և մշակութային հաստատությունների ֆիզիկական մատչելիության մոնիտորինգ» հաշվետվությունը, 2014թ.

¹⁰²³ Օրինակ՝ Երևանի կենտրոնական մի քանի խաչմերուկներում տեղադրվել են ձայնային լուսացույցներ, անցումների գծերը ներկվել են դեղին գույնով, ինչը կարևոր նշանակություն ունի թույլ տեսողություն ունեցող անձանց համար, 200 «Հիգեր» մակնիշի ավտոբուսներում տեղադրվել են կանգառման անհրաժեշտության մասին նախազգուշացնող սեղմվող կոճակներ:

մանկական և լրատվական հեռուստահաղորդումները չեն ապահովվում անհրաժեշտ լուսագրերով կամ դրանք մատչելի չեն լսողական խնդիրներ ունեցողների համար թե՛ տեղեկատվության հրապարակման արագության, և թե՛ բովանդակության անհամապատասխանության առումով¹⁰²⁴: Բացի դրանից՝ հաշմանդամություն ունեցողների իրավունքների, օրենսդրության, իրականացվող ծրագրերի մասին հրապարակած տեղեկատվությունը ոչ միշտ է մատչելի վերջիններիս համար: Այսպես, չի հրապարակվում տեղեկատվության աուդիո տարբերակը, տպագրված նյութերի դեպքում՝ բրայլյան տարբերակը, բացակայում է հրապարակված ինֆորմացիայի պարզեցված տարբերակը՝ մտավոր խնդիրներ ունեցող անձանց այն հասանելի դարձնելու համար¹⁰²⁵:

2014 թվականի դեկտեմբերի 1-ին «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների ընդունմամբ նախատեսվել է աստիճանական անցում կատարել համընդհանուր ներառական կրթության¹⁰²⁶: Նշյալ կարգավորումները ենթադրում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովում բոլոր դպրոցներում: Հայաստանում կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրով թեև սահմանված է հատուկ դպրոցների թվի կրճատմանը զուգընթաց ներառական դպրոցների ցանցի ընդլայնում¹⁰²⁷, այնուամենայնիվ, 2014թ. չի արձանագրվել հատուկ դպրոցների կրճատում: Միաժամանակ, մի շարք հասարակական կազմակերպություններ դժգոհություն են հայտնել, որ Հայաստանում 2015 թվականի դրությամբ ներառական կրթություն իրականացնող 139 դպրոցների¹⁰²⁸ գերակշռող մասը շարունակում է անմատչելի մնալ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաների համար՝ դպրոցի հարմարեցումը սահմանափակելով միայն թեքահարթակների կառուցմամբ¹⁰²⁹: Գրեթե ոչ մի ներառական դպրոց չունի տրանսպորտային փոխադրամիջոց, առավել ևս՝ հարմարեցված սակավաշարժուն երեխաների կարիքներին: Նշենք, որ Հայաստանի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաների զգալի թվի համար (18%) ընդհանրապես հասանելի չէ ֆորմալ կրթությունը՝ պայմանավորված համապատասխան տրանսպորտային միջոցների, ինչպես նաև

¹⁰²⁴ Մանրամասն տես՝ «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով» բաժնում:

¹⁰²⁵ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կատարման օրենսդրական հիմքերը Հայաստանում» զեկույց, «Հուլիսի կամուրջ» ՀԿ, 2014թ.

[file:///C:/Users/aaa/Downloads/CRPD_Convention_monitoring_Report_Bridge_of_Hope%20\(1\).pdf](file:///C:/Users/aaa/Downloads/CRPD_Convention_monitoring_Report_Bridge_of_Hope%20(1).pdf)

¹⁰²⁶ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=5591&Reading=3>

¹⁰²⁷ «ՀՀ կրթության զարգացման 2011-2015 թվականների պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենք

¹⁰²⁸ Ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկ՝ <http://www.edu.am/DownloadFile/349arm-nerar-cucak-yst-marzeri-2013.pdf>

¹⁰²⁹ Դպրոցների ֆիզիկական մատչելիությունը ենթադրում է նաև վերելակի կամ ամբարձիչի առկայություն, հարմարեցված սանհանգույցներ, ռելյեֆային ուղեցուցիչներ, բրայլով նշագրումներ դասարանների, սանհանգույցի դռների վրա և այլ տարրական հարմարեցումներ:

բավարար «անհրաժեշտ հնարավորությունների»¹⁰³⁰ բացակայությամբ¹⁰³¹: Միաժամանակ, չնայած մանկավարժների վերապատրաստման ծրագրերի անցկացմանը¹⁰³², նրանցից շատերը դեռևս լիարժեք չեն տիրապետում հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելու հմտություններին, իսկ մասնագետների քանակը չի բավարարում բոլոր երեխաներին պատշաճ ուշադրություն հասկացնելու համար: Որոշ երեխաների ծնողներ դասերի ընթացքում հաճախ ստիպված են գտնվել դպրոցում՝ ֆիզիկական խոչընդոտների և ուսումնական գործընթացի բարդությունների դեպքում երեխային աջակցություն տրամադրելու նպատակով: Ներառական դպրոցներում հիմնականում բացակայում են ժեստերի լեզվի թարգմանիչները, համապատասխան օժանդակ սարքավորումները, ինչպես նաև՝ ատլիո/բրայլյան տառատեսակով գրականությունը, ինչը խոչընդոտում է երեխաների լիարժեք կրթություն ստանալուն: Ինչ վերաբերում է հատուկ հանրակրթական դպրոցներին¹⁰³³, ապա 2014 թվականին Պաշտպանի Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի (ԲԿԱՄ) այցելությունների արդյունքում որոշ դպրոցներում, չնայած որոշակի վերանորոգումների, բացահայտվել են ոչ բարվոք շենքային և պահման պայմաններ¹⁰³⁴, ոչ պատշաճ սննդի¹⁰³⁵ և բուժսպասարկման որակ¹⁰³⁶: Թեև հատուկ կրթության համակարգը ներառում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների ուսուցման և կրթության համակարգ¹⁰³⁷, այնուհանդերձ, ԲԿԱՄ-ի փորձագետները պարզել են, որ որոշ հատուկ դպրոցներում սովորում են երեխաներ, ովքեր չունենալով հաշմանդամություն, ախտորոշվել են որպես

¹⁰³⁰ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Անհրաժեշտ հնարավորություններ» ("reasonable accommodation") նշանակում է անհրաժեշտ հատուկ դեպքերում համապատասխան փոփոխությունների կամ շտկումների կատարում, որոնք չեն պահանջում անտեղի ջանքեր, ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվելն ու դրանց կիրառումը:

¹⁰³¹ «Հայաստանի երկրորդ և երրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ» ՄՄԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, հուլիսի 16, 2014թ., http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2FC.12%2fARM%2fCO%2f2-3&Lang=en:

¹⁰³² «Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության ազգային դաշինքի» տվյալներով՝ ուսուցիչները փորձ են ձեռք բերում հաշմանդամություն ունեցող աշակերտների հետ աշխատելիս, ինչն էլ կիրառում են հետագայում, դպրոցները չեն խոսափում հաշմանդամություն ունեցող աշակերտներ ունենալ:

¹⁰³³ Ներկայումս Հայաստանում գործում են 23 պետական հատուկ հանրակրթական հաստատություններ, http://edu.am/DownloadFile/389arm-hat_cucak-2014.pdf:

¹⁰³⁴ Օրինակ՝ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ /օժանդակ/ դպրոց, Երևանի թիվ 16 հատուկ դպրոց, ՀՀ Լոռու մարզի Մալիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց և այլն:

¹⁰³⁵ Օրինակ, Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց, Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ (օժանդակ) դպրոց, Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ /օժանդակ/ դպրոց և այլն:

¹⁰³⁶ Օրինակ, Գորիսի թիվ 1 հատուկ դպրոց, Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոց, Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր և այլն:

¹⁰³⁷ «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 3

թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաներ¹⁰³⁸ կամ սովորում են հատուկ դպրոցներում առանց համապատասխան գնահատման եզրակացության¹⁰³⁹: Նշվածը բացատրվում է նախևառաջ նրանով, որ տվյալ երեխաները, լինելով հիմնականում սոցիալապես անապահով ու խոցելի ընտանիքներից, ընդունվում են հատուկ դպրոցներ ընտանիքի սոցիալական բեռը (երեխայի սնունդի և մի շարք այլ հիմնական կարիքներ) թեթևացնելու նպատակով: Իսկ դպրոցների տնօրենները շահագրգռված են ունենալու հնարավորինս մեծ թվով աշակերտներ, քանի որ դպրոցին ֆինանսավորումը տրամադրվում է՝ ըստ երեխաների քանակի: Միաժամանակ, հաշմանդամություն ունեցող երեխաներից շատերը չեն հաճախում նախադպրոցական հաստատություններ: Բազմաթիվ ծնողների պնդմամբ իրենց երեխաներին հրաժարվում են ընդունել՝ պատճառաբանելով, որ չունեն երեխայի կարիքները հոգալու համար մարդկային և այլ ռեսուրսներ: Մինչդեռ, հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառման գործընթացն անհրաժեշտ է սկսել դեռ նախադպրոցական հասակում, ինչը նաև կնպաստի վերջիններիս նկատմամբ կանխակալ վերաբերմունքի վերացմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար խնդրահարույց է նաև բարձրագույն կրթության հասանելիությունը, որը պայմանավորված է, մասնավորապես, վերջիններիս համար գրեթե բոլոր բուհերի շենքերի, ուսումնական, կրթական ծրագրերի անմատչելիությամբ, կրթության կազմակերպման վերաբերյալ հատուկ ընթացակարգի (ծրագիր, մեթոդ) բացակայությամբ և մի շարք այլ խոչընդոտներով¹⁰⁴⁰: Բացի դրանից՝ առանձին բուհեր, օրինակ՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ ընդունվելու կարգում առկա սահմանափակումների հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք զրկված են այնտեղ ընդունվելու և սովորելու հնարավորությունից¹⁰⁴¹:

Թեև հաշմանդամություն ունեցող անձինք անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունք ունեն¹⁰⁴², այնուամենայնիվ, մի շարք դեպքերում նրանց հասանելիք անվճար դեղերը չեն տրամադրվել կամ տրամադրվել են դրանք փոխարինող ցածրորակ և առողջության վրա բացասական ներգործություն ունեցող դեղեր: Իսկ, առանձին դեպքերում, անձինք հրաժարվել են պետական գնումներով ձեռքբերվող և անվճար տրամադրվող դեղերից դրանց ոչ պատշաճ որակի պատճառով: Օրինակ, ահազանգեր են ստացվել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անվճար տրամադրվող հոգեմետ դեղերի որակի մասին, որոնք որոշ դեպքերում ոչ միայն չեն

¹⁰³⁸ Մանրամասն տես՝ «Երեխայի իրավունքները մանկական խնամքի ել հատուկ ուսումնական հաստատություններում. համակարգային վերլուծություն. 2014թ. արտահերթ զեկույց», 2015թ.:

¹⁰³⁹ Մանրամասն տես՝ «Երեխայի իրավունքները մանկական խնամքի ել հատուկ ուսումնական հաստատություններում. համակարգային վերլուծություն. 2014թ. արտահերթ զեկույց», 2015թ.:

¹⁰⁴⁰ Խնդրին անդրադարձ է կատարվել նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց համար բարձրագույն կրթության ֆիզիկական և ծրագրային մատչելիության, ինչպես նաև ակադեմիական ներառականության ուսումնասիրություն» 2014թ. հաշվետվությունում, «Ունիտոն» ՀԿ:

¹⁰⁴¹ Մանրամասն տես՝ «ՀՀ կրթության և գիտության նախարարություն» բաժնում:

¹⁰⁴² «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենք, հոդված 11

օգնում, այլև վտանգում են անձանց առողջությունը¹⁰⁴³: Միաժամանակ, պետական պատվերի շրջանակներում 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց ստացիոնար բուժումը իրականացվում է անվճար, իսկ 3-րդ խմբի դեպքում՝ 50% զեղչով, ինչի համար անհրաժեշտ է ստանալ համապատասխան ուղեգիր: Սակայն ոլորտի ՀԿ-ների պնդմամբ բազմաթիվ դեպքերում ուղեգիր տրամադրելու գործընթացը չափազանց երկար է տևում, ինչի արդյունքում անհետաձգելի բժշկական միջամտությունների անհրաժեշտության դեպքում մարդիկ ստիպված են վճարովի հիմունքներով օգտվել բժշկական ծառայություններից: Բացի դրանից՝ բժշկական խորհրդատվությունը կամ հետազոտությունն անվճար անցնելու դեպքում հաշմանդամություն ունեցող անձն իրավունք չունի գնալու իր կողմից նախընտրած բժշկական հաստատություն: Արդյունքում, նեղ մասնագիտական խնդիրների դեպքում հաշմանդամություն ունեցող անձը ստիպված է լինում սեփական միջոցների հաշվին գնալ մասնագիտացված բժշկական կենտրոն:

Պաշտպանը 2014 թվականին ստացել է մի շարք ահազանգեր քաղաքացիներից իրենց ապօրինաբար, առանց հոգեբուժական հանձնաժողովի կողմից պարտադիր հետազոտման հոգեբուժարանում տեղավորելու¹⁰⁴⁴ և տևական ժամանակ հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ: Այնինչ, ըստ օրենքի, անձին կարելի է հարկադիր հոսպիտալացնել միայն այն դեպքերում, երբ վերջինս վտանգավոր է իր կամ հասարակության համար, կամ, եթե բուժման բացակայությունը կարող է վատթարացնել նրա առողջական վիճակը¹⁰⁴⁵: Միաժամանակ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք լիարժեք պաշտպանված չեն իրենց խնամակալների կողմից կատարվող հնարավոր չարաշահումներից: Այսպես, գործող օրենսդրությունը սահմանափակում է անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի¹⁰⁴⁶ լիարժեք իրականացումը: Մասնավորապես, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անձի գործունակության հարցը քննելիս քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը¹⁰⁴⁷: Այսինքն, ըստ օրենքի, անձի՝ դատաքննությանը մասնակցությունը դատարանի հայեցողության տակ է: Բացի դրանից՝ անձի գործունակության վերականգնման հարցով դատարան իրավունք ունի դիմել միայն անձի խնամակալը, ընտանիքի անդամը կամ հոգեբուժական հաստատության տնօրինությունը¹⁰⁴⁸: Արդյունքում, անհամաչափորեն սահմանափակվում է անձի արդար դատաքննության իրավունքը և դատավարության կողմերի հավասարության, մրցակցային դատավարության հիմնարար սկզբունքները¹⁰⁴⁹: Տվյալ խնդիրների

¹⁰⁴³ Մանրամասն տես՝ «ՀՀ առողջապահության նախարարություն» բաժնում:

¹⁰⁴⁴ Human Rights Watch, 2015թ. համաշխարհային զեկույցը, էջ 72
http://www.hrw.org/sites/default/files/wr2015_web.pdf

¹⁰⁴⁵ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենք, հոդված 22

¹⁰⁴⁶ ՀՀ Սահմանադրություն, հոդված 18

¹⁰⁴⁷ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրք, հոդված 171

¹⁰⁴⁸ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրք, հոդված 173

¹⁰⁴⁹ Human Rights Watch, 2015թ. համաշխարհային զեկույցը, էջ 72; «Հոգեկան խանգարումներ ունեցող

Սահմանադրությանը համապատասխանության հարցը վիճարկելու նպատակով Պաշտպանը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան¹⁰⁵⁰: Միաժամանակ, թերի կարգավորումների հետևանքով անգործունակ ճանաչված անձին նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ բուժման նպատակով հոգեբուժարան տեղափոխելը չի համարվում անձի հարկադիր հոսպիտալացում, և հետևաբար, չի իրականացվում դատարանի համապատասխան որոշմամբ¹⁰⁵¹: Ստացվում է, որ անձին նույնիսկ իր կամքին հակառակ հոգեբուժական հետազոտման ենթարկելու, իսկ դրա հիման վրա նրան հոսպիտալացնելու համար բավական է իր օրինական ներկայացուցչի համաձայնությունը: Չնայած նրան, որ օրինական ներկայացուցիչը բոլոր դեպքերում պետք է գործի իր խնամարկյալի լավագույն շահերից, սակայն, գործնականում, նման իրավակարգավորումը չարաշահումների տեղիք է տալիս, օրինակ՝ կապված խնամարկյալի գույքը տնօրինելու հետ:

Պաշտպանի ԲԿԱՄ-ի այցելությունների արդյունքում հայտնաբերվել են խնդիրներ հոգեբուժական հաստատություններում հիվանդների պահման պայմանների, գերբնակեցման, հիվանդների բուժման համար բարենպաստ պայմանների բացակայության հետ կապված¹⁰⁵²: Բացի դրանից՝ խախտումներ են հայտնաբերվել զսպման միջոցների ընթացակարգի չպահպանման, սահմանված օրական միջին չափաբաժնից ավելի քիչ սննդի տրամադրման կապակցությամբ¹⁰⁵³: Ավելին, մի շարք հոգեբուժարաններում պատշաճ կարգով չի կազմակերպվել հիվանդների զբոսանքը, ինչպես նաև առկա են եղել վատ վերաբերմունքի և շահագործման դեպքեր¹⁰⁵⁴:

Չնայած քայլեր են ձեռնարկվել Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԴ) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման չափորոշիչների մշակման ուղղությամբ՝ բժշկասոցիալական փորձաքննության (ներառյալ՝ հաշմանդամության սահմանման) գործող չափորոշիչներն¹⁰⁵⁵ առայժմ հստակ չեն, ինչը բժիշկներին լայն հայեցողական լիազորություն է ընձեռում հաշմանդամության խումբը սահմանելիս: Բազմաթիվ քաղաքացիների, ՀԿ-ների ահազանգերի հիման վրա իրականացված Պաշտպանի աշխատակազմի սեփական դիտարկումներն ու ուսումնասիրությունները վկայում են, որ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում առկա են կոռուպցիոն երևույթներ¹⁰⁵⁶:

անձանց ազատության, արդար դատաքննության և անձնական կյանքի իրավունքները հայկական իրավունքում և պրակտիկայում», 2014 թվականի հետազոտությունում, «Մարդու իրավունքների վիճակը ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում» զեկույց, «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ, 2013 թ., էջ 46 :

¹⁰⁵⁰ Մանրամասն տես՝ «ՀՀ արդարադատության նախարարություն» բաժնում:

¹⁰⁵¹ «Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց ազատության, արդար դատաքննության և անձնական կյանքի իրավունքները հայկական իրավունքում և պրակտիկայում», «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հետազոտություն, 2014թ. էջ 37

¹⁰⁵² Մանրամասն տես՝ ԲԿԱՄ տարեկան զեկույցը (2014):

¹⁰⁵³ Տես նույն տեղում

¹⁰⁵⁴ Տես նույն տեղում

¹⁰⁵⁵ ՀՀ Կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» թիվ N 780-Ն որոշում

¹⁰⁵⁶ Մանրամասն տես՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնում:

Չնայած հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ոլորտում իրականացված որոշակի բարեփոխումների¹⁰⁵⁷՝ վերջիններիս զբաղվածության ապահովման հարցը շարունակում է խնդրահարույց մնալ: Գործազուրկ են աշխատունակ հաշմանդամություն ունեցող անձանց մոտավորապես 90%-ը¹⁰⁵⁸: Այսպես, օրինակ, ՀՀ կառավարության որոշմամբ¹⁰⁵⁹ էապես կրճատվեց պետության աջակցությունը հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանը. 2 տարի ժամկետով գործատուին տրվող աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագիրը ներկայումս տևում է ընդամենը 6 ամիս: Բացի դրանից՝ եթե նախկինում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրից կարող էին օգտվել 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք, այժմ նման իրավունք ունեն միայն 1-ին խմբի հաշմանդամություն ունեցողները¹⁰⁶⁰: Միաժամանակ, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ցանկություն ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար չկան սահմանված հարկային կամ մաքսային արտոնություններ, ինչը կնպաստեր նրանց ինքնազբաղվածության ապահովմանը: Բացի դրանից՝ մի շարք ՀԿ-ների փոխանցմամբ գործատուների մի մասը չի համակերպվում հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի վերցնելու պարտադիր պահանջի հետ, իսկ, առանձին դեպքերում, ընդունելի է համարում աշխատանքի ընդունումը միայն մյուսներից առանձնացված աշխատանքային պայմանների ապահովման դեպքում: Ավելին, գրանցվել են հաշմանդամության հիմքով աշխատանքից ազատելու փորձեր, ինչը խտրականության դրսևորում է՝ արգելված թե՛ ՀՀ օրենսդրությամբ, թե՛ Կոնվենցիայով:

Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաները դեռևս լիարժեք ներառված չեն հասարակությունում և հաճախ բախվում են խտրական վերաբերմունքի: 2015թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում հաշվառված է 8006 հաշմանդամություն ունեցող երեխա¹⁰⁶¹, սակայն իրական թիվը կարող է նշանակալիորեն բարձր լինել¹⁰⁶²: Մտահոգիչ է, որ որոշ ընտանիքներ իրենց հաշմանդամություն ունեցող երեխաներին շարունակում են մանկատուն հանձնել, պայմանավորված ընտանիքի աջակցության և համայնքային վերականգնողական ծառայությունների բացակայությամբ, ինչպես նաև

¹⁰⁵⁷ Օրինակ՝ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանվեց աշխատատեղերի պարտադիր ապահովման քվոտա հաշմանդամություն ունեցող անձանց համար, որը 2015 թվականից գործելու է պետական, իսկ 2016 թվականից՝ ոչ պետական կազմակերպությունների համար: ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի թիվ 1308-Ն որոշմամբ կարգավորվեցին աշխատանքի տեղավորման համար քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանման կատարման և դրա՝ որպես նպատակային միջոցի օգտագործման հետ կապված հարաբերությունները:

¹⁰⁵⁸ <http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/humanrightsreport/index.htm?year=2013&dliid=220251#wrapper>

¹⁰⁵⁹ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 17-ի թիվ 534-Ն որոշում

¹⁰⁶⁰ Կառավարության 2014թ. թիվ 534-Ն որոշմամբ 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցողները կարող են օգտվել գործատուին աշխատավարձի փոխհատուցման ծրագրից միայն լրացուցիչ պայմանների բավարարման դեպքում:

¹⁰⁶¹ http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=125&code_id=188

¹⁰⁶² «Հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ վերաբերմունքը Հայաստանում» ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Միվիլիթաս հիմնադրամ, 2014թ., էջ 6

հասարակության վերաբերմունքով: Նշվածի կապակցությամբ իրականացված հետազոտությունները դեռևս ցույց են տվել, որ հարցվածներից մոտավորապես ամեն վեցերորդը (17%) ընդունելի է համարում, որ սոցիալապես անապահով ընտանիքը, ելնելով սոցիալական կամ տնտեսական վիճակից, երեխային տանի հատուկ դպրոց կամ մանկատուն հանձնի: Նմանատիպ կարծիք են հայտնել ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում՝ հարցվածների 16%-ը, իսկ մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների դեպքում՝ 35%-ը¹⁰⁶³: Նշենք, որ հատուկ կարիքներով երեխաների համար Հայաստանում գործում է երեք պետական¹⁰⁶⁴ և մեկ մասնավոր մասնագիտացված մանկատուն, այնուհանդերձ, երեխաների ինստիտուցիոնալիզացումը խոչընդոտում է նրանց՝ թե ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանը, թե սոցիալական ներառմանը: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված մանկատներում 2014 թվականին նույնպես երեխաների թվի նվազում չի արձանագրվել, ընդհակառակը՝ հաշմանդամություն ունեցող երեխաների թիվն ավելացել է՝ պայմանավորված ընտանեկան օժանդակության պակասով և ընտանիքահեն և համայնքահեն այլընտրանքային տարբերակների անբավարարությամբ¹⁰⁶⁵: Մեկ այլ խնդիր կապված է մասնագիտացված մանկատների շրջանավարտներին բնակարանով ապահովելու հետ: Այսպես, մասնագիտացված հատուկ մանկատների, օրինակ՝ Խարբերդի մանկատան հաշմանդամություն ունեցող սաները 18 տարեկանը լրանալուց հետո հաճախ ստիպված են մնալ մանկատանը, կամ տեղավորվել հոգեբուժարան և ծերանոց՝ համապատասխան կացարանների, անհրաժեշտ ծառայությունների բացակայության պատճառով¹⁰⁶⁶:

Տեղաշարժման խնդիրներ ունեցող մի շարք անձինք հայտնել են անձնագիր և նույնականացման քարտ ստանալու օրենսդրական խոչընդոտների առկայության մասին: Ավելին, Երևանում և ՀՀ մարզերում գործող շրջիկ կայաններն անձանց տնային պայմաններում լուսանկարելու համար պահանջել են գումար կամ տրանսպորտային միջոցով տեղափոխում մինչև անձի բնակության վայր¹⁰⁶⁷: Այսպես, գործող օրենսդրությամբ¹⁰⁶⁸ նույնականացման քարտ և/կամ անձնագիր ստանալու (փոխանակելու) համար անձը լուսանկարվում է ոստիկանության մարմնում, այնինչ նախատեսված չեն համապատասխան պայմաններ այն անձանց համար, որոնք ի վիճակի չեն այցելել ոստիկանության մարմին լուսանկարվելու, ինչը գործնականում

¹⁰⁶³ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույց ըստ 2013թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների», ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Համաշխարհային բանկ, <file:///D:/data/Downloads/Binder1.pdf>

¹⁰⁶⁴ http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=128&code_id=407

¹⁰⁶⁵ Մանրամասն տես՝ «Երեխայի իրավունքները մանկական խնամքի ել հատուկ ուսումնական հաստատություններում. համակարգային վերլուծություն. 2014թ. արտահերթ զեկույց», 2015թ.:

¹⁰⁶⁶ Մանրամասն տես՝ «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնում, «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում. համակարգային վերլուծություն. 2014թ. արտահերթ զեկույց»-ում, 2015թ.:

¹⁰⁶⁷ Օրենսդրությամբ նման գործողություններ կատարելու համար գումար պահանջելու իրավունք նախատեսված չէ:

¹⁰⁶⁸ «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 4, «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենք, հոդված 5

գրկում է վերջիններիս նույնականացման քարտ և/կամ անձնագիր ստանալու (փոխանակելու) հնարավորությունից: Նշենք, որ տվյալ օրենսդրական բացը վերացնելու նպատակով մշակվել են համապատասխան օրենսդրական նախագծեր, որոնցով նախատեսվում է անձի լուսանկարումը վերջինիս գտնվելու վայրում, սակայն տվյալ օրինագծերը դեռևս չեն ընդունվել:

6.5 ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունը երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնել է բազմաթիվ միջազգային պարտավորություններ, որոնք ուղղված են երեխաների բարօրության, անվտանգության, լիարժեք զարգացման ապահովմանը: Թեև 2014 թվականին պետության կողմից որոշակի միջոցներ են ձեռնարկվել՝ ուղղված ոլորտային խնդիրների լուծմանը, այնուամենայնիվ, դեռևս մտահոգիչ են երեխաների աղքատության բարձր ցուցանիշները, նրանց նկատմամբ բռնության դեպքերը, բազմաթիվ երեխաների համար առողջապահական ծառայությունների և կրթության անմատչելիությունը, արդարադատության ոլորտում բազմաթիվ խնդիրները, որոնք վկայում են, որ կատարված քայլերը բավարար չեն երեխաների արդյունավետ պաշտպանության համար:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիայի (Կոնվենցիա) վավերացմամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել միջոցներ ձեռնարկել երեխայի նկատմամբ խտրականության բոլոր ձևերի բացառման ուղղությամբ¹⁰⁶⁹: Դեռևս 2013 թվականին ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել խոցելի և առավել անբարենպաստ իրավիճակներում հայտնված երեխաների նկատմամբ խտրականության առկայության վերաբերյալ և առաջարկել պետությանը միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ: Այնուամենայնիվ, Հայաստանում առկա են երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունքի տարբեր դրսևորումներ:

Այսպես, երեխայի նկատմամբ խտրականության դրսևորումներից է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի կողմից իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանում տղա ունենալու ցանկությունը մոտ վեց անգամ ավելի մեծ է աղջիկ ունենալու ցանկությունից¹⁰⁷⁰: Արդյունքում, 2000 թվականից ի վեր Հայաստանում շեղվել է նորածինների հարաբերակցությունը՝ 100 աղջկա դիմաց կազմելով 114 տղա այն դեպքում, երբ նորմայի դեպքում պետք է լինեին 102-106¹⁰⁷¹:

Խտրականության վերաբերմունքի դրսևորումներ առկա են նաև հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ¹⁰⁷²: 2015թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում հաշվառված է 8006 հաշմանդամություն ունեցող երեխա¹⁰⁷³: ՄԱԿ-ի մանկական

¹⁰⁶⁹ Երեխայի իրավունքների մասին 1989թ. ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 2

¹⁰⁷⁰ <http://bit.ly/1EzYLuz>

¹⁰⁷¹ Մանրամասն տես՝ «Կանանց իրավունքներ», «ՀՀ առողջապահության նախարարություն» բաժիններում:

¹⁰⁷² ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2014թ. արված հետազոտությամբ պարզվել է, որ հաշմանդամություն ունեցող երեխաների 13%-ը ապրում է հաստատություններում, 18%-ը դպրոց չի գնում, 77%-ը չի ստանում վերականգնողական որևէ ծառայություն, իսկ մեկ երրորդը չի մասնակցում համայնքային որևէ միջոցառման:

<http://www.aysor.am/am/news/2014/12/13/%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%B8%D6%82%D5%B4/885012>

¹⁰⁷³ http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=125&code_id=188

հիմնադրամի և Միվիլիթաս հիմնադրամի կողմից իրականացված հետազոտությամբ պարզվել է, որ նրանց շատերը շատ հաճախ ենթարկվում են խտրական վերաբերմունքի, լիարժեք կերպով ներգրավված չեն հասարակական կյանքին և անտեսված են¹⁰⁷⁴: Հետազոտության շրջանակներում հարցվածների գերակշիռ մասը կարծում է, որ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է ներգրավված լինի հասարակության մեջ, սակայն հարցվածների մեկ երրորդը կարծում է, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է հասարակությունից առանձնացվեն: Հարցվածների 51%-ի կարծիքով՝ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող երեխան պետք է հաճախի հանրակրթական դպրոց, իսկ 86%-ի կարծիքով՝ մտավոր հաշմանդամություն ունեցողները պետք է սովորեն հատուկ դպրոցներում¹⁰⁷⁵:

Խտրական վերաբերմունք առկա է նաև երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների երեխաների նկատմամբ: Այսպես, Պաշտպանի՝ Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի (ԲԿԱՄ) կատարած այցերի ընթացքում¹⁰⁷⁶ այդ հաստատություններում խնամվող երեխաները բարձրաձայնել են, որ իրենք խտրական վերաբերմունքի են բախվում հանրակրթական դպրոցներում, որտեղ դասարանի այլ աշակերտների կողմից հաճախ պիտակավորվում են «որբ», «մանկատան կամ գիշերօթիկի երեխա» և նմանատիպ այլ արտահայտություններով, իսկ որոշ համադասարանցիներ հրաժարվում են շփվել նրանց հետ: Գիշերօթիկ հաստատության սաները հայտնել են, որ հանրակրթական դպրոցների ուսուցիչներն իրենց հաճախ պիտակավորել են «հաստատության երեխա» բառերով կամ նշել, որ իրենք «ոջիլ են բերում դպրոց»: Բացի դրանից՝ երեխաներից շատերը անտեսված են դասապրոցեսի ընթացքում, օրինակ՝ իրենց գրատախտակի մոտ չեն կանչել կամ դաս չեն հարցրել: Երեխաների պնդմամբ՝ եղել են դեպքեր, երբ իրենք խնդրել են հաստատության տնօրինությանը փոխել դպրոցը՝ հույս ունենալով, որ կկարողանան խուսափել խտրականությունից և վատ վերաբերմունքից:

Մինչ օրս ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ «երեխայի լավագույն շահ» հասկացությունը, ինչպես նաև լիարժեք կերպով ապահովված չէ երեխայի լավագույն լինելու իրավունքը: Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված է երեխայի լավագույն շահին առաջնահերթ կերպով ուշադրություն դարձնելու պահանջը¹⁰⁷⁷, իսկ նույն հոդվածի թիվ 14 (2013թ.) ընդհանուր մեկնաբանության համաձայն¹⁰⁷⁸՝ երեխայի լավագույն շահը որոշելիս պետք է հաշվի առնել երեխայի տեսակետը, անհատականությունը, ընտանեկան միջավայրի և ընտանիքի հետ հարաբերությունների պահպանումը, երեխայի խնամքը, պաշտպանությունն ու անվտանգությունը, խոցելի կարգավիճակը, առողջության պահպանման և կրթության իրավունքները: Մինչդեռ, ՀՀ ընտանեկան

¹⁰⁷⁴ «Հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ վերաբերմունքը Հայաստանում» 2014թ.

¹⁰⁷⁵ Մանրամասն տես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժնում

¹⁰⁷⁶ Մանրամասն տես՝ «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում. համակարգային վերլուծություն. 2014թ. արտահերթ զեկույց»-ում

¹⁰⁷⁷ http://www.un.am/res/UN%20Treaties/III_12.pdf

¹⁰⁷⁸ http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=5&DocTypeID=11

օրենսգրքում տրված է «երեխայի օրինական շահեր» հասկացությունը¹⁰⁷⁹, ինչը համարժեք չէ «երեխայի լավագույն շահեր» հասկացությանը: Այս մասին դեռևս 2013 թվականին Հայաստանի պարբերական երրորդ և չորրորդ զեկույցների վերաբերյալ ներկայացված եզրափակիչ դիտարկումներում նշել է նաև ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն և կոչ արել պետությանը համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով այդ իրավունքը լիարժեք կերպով արտացոլել օրենսդրության մեջ¹⁰⁸⁰: Ինչ վերաբերում է երեխայի տեսակետը հարգելուն և երեխայի լաված լինելու իրավունքին, ապա Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն: Ակնհայտ է, որ այս դեպքում միայն տարիքը չի կարող որոշել երեխայի հայացքների կարևորությունը, այլ պետք է հաշվի առնել նրա զարգացվածությունը, շրջակա միջավայրն ընկալելու և մտքերը ճիշտ ձևակերպելու ունակությունը: Մինչդեռ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածով տասը տարեկան երեխայի կարծիքը հաշվի առնելը պարտադիր է միայն խղճի ազատության, որոշակի միջոցառումների մասնակցելու, արտադպրոցական կրթություն ստանալուց հրաժարվելու, ծնողներից որևէ մեկի հետ ապրելու, հարազատների հետ շփվելու, օրենքով նախատեսված այլ դեպքերում: Իսկ երեխայի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի լուծման ժամանակ միակ իրավունքը, որը տրվում է տասը տարին չըրացած երեխային, այն է, որ վերջինս իրավունք ունի իր շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքը ընտանիքում, դատական և այլ մարմիններում¹⁰⁸¹: Այսպիսով, չնայած Կոնվենցիայի ուղղակի պահանջին՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ երեխայի կարծիքը հաշվի է առնվում՝ ոչ թե նկատի ունենալով նրա զարգացվածությունն ու հասունությունը, այլ գուտ նրա տարիքը: Երեխաների իրավունքների կարևոր հիմնախնդիրներից շարունակում է մնալ երեխաների նկատմամբ բռնությունը¹⁰⁸²: Հայաստանում երեխաներն ընտանիքում, կրթական և երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում են առավել հաճախ ենթարկվում բռնության, որը դրսևորվում է ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնության, շահագործման, անտեսման և այլ

¹⁰⁷⁹ ՀՀ ընտանեկան օրենսգրք, հոդված 43

¹⁰⁸⁰ <http://bit.ly/1C4N2F8>

¹⁰⁸¹ ՀՀ ընտանեկան օրենսգրք, հոդված 44, կետ 1

¹⁰⁸² Երեխայի նկատմամբ բռնության առավել տարածված սահմանումը տրվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2002 թվականի «Բռնության և առողջության վերաբերյալ համաշխարհային զեկույցում», համաձայն որի՝ երեխայի հանդեպ բռնություն կամ վատ վերաբերմունք են կազմում երեխայի հանդեպ ցանկացած ձևով արտահայտված բռնությունը կամ երեխայի նկատմամբ անփույթ վերաբերմունքը (երեխայի անտեսում), որի արդյունքում պատճառվել է կամ կարող է պատճառվել վնաս երեխայի առողջությանը, բնականոն զարգացմանը, արժանապատվությանը կամ կյանքին՝ վերջինիս և անիրավաչափ արարքն իրականացնող անձի միջև պատասխանատվության, վստահության կամ իշխանության հարաբերությունների համատեքստում: http://whqlibdoc.who.int/publications/2002/9241545615_eng.pdf?ua=1

ձևերով: Խնդրի արդյունավետ լուծմանը խոչընդոտում է այն, որ ներկայում չի վարվում երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ լիարժեք պետական վիճակագրություն, որի հիման վրա հնարավոր կլիներ համապարփակ վերլուծություններ իրականացնել և պարզել բռնության հիմնական պատճառներն ու դրանց վերացման միջոցները: Փոխարենը, ՀՀ ոստիկանությանը հայտնի դարձած դեպքերով Ոստիկանությունն է վիճակագրություն վարում, սակայն բազմաթիվ դեպքեր չեն բարձրաձայնվում և հետագայում չեն բացահայտվում, քանի որ երեխաներն անձամբ հազվադեպ են դիմում օգնության, իսկ ծնողների, այլ անձանց կողմից երեխայի նկատմամբ բռնությունը հաճախ համարվում է օրինաչափ՝ որպես երեխայի վրա ազդելու, պատժի և դաստիարակելու միջոց: Այսպես, ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2014 թվականի ընթացքում գրանցվել է անչափահասների նկատմամբ ընտանեկան բռնության 10 դեպք, երբ վնաս է հասցվել անձի առողջությանը: Բացի դրանից՝ գրանցվել է անչափահասների խնամքի կենտրոններում (գիշերօթիկ, մանկատուն, հատուկ հաստատություններ և այլն), ինչպես նաև դպրոցներում և կրթական այլ հաստատություններում ուսուցիչների կամ այլ աշխատակիցների կողմից անչափահասների նկատմամբ գործադրված բռնության 7 դեպք: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2014 թվականին իրականացված «Երեխայի հանդեպ բռնության վերաբերյալ» հետազոտության համաձայն՝ ընդհանուր առմամբ երեխաների 27%-ը շրջապատի կողմից ենթարկվում է բռնության, որից 68%-ը՝ ֆիզիկական բնույթի, 48%-ը՝ հոգեբանական: Երեխաներն ընտանիքից դուրս շրջապատում բռնության են ենթարկվել հիմնականում հասակակիցների կողմից (82%), ուսուցիչների կողմից (17%), դայակների ու դաստիարակների կողմից (15%)¹⁰⁸³: «Հույս և օգնություն» ՀԿ կողմից 2014 թվականին իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ առավել արտահայտված է հոգեբանական բռնությունը, իսկ ֆիզիկական և սեռական բռնության արտահայտվածության ցուցանիշները հավասար են: Ընդ որում, որպես այս բոլոր տեսակների տարածվածության հիմնական տիրույթ հանդես են գալիս ուսումնական հաստատություններն ու ԲՈՒՀ-երը, մանկավարժների կողմից երեխաների նկատմամբ ֆիզիկական բռնության դրսևորումների իմաստով առավել մեծ ցուցանիշներ գրանցվել են Երևանում¹⁰⁸⁴:

Երեխաների նկատմամբ բռնության դեպքեր գրանցվել են նաև ԲԿԱՄ-ի կողմից երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, ինչպես նաև հատուկ հանրակրթական դպրոցներում իրականացված

¹⁰⁸³ Որպես բռնության հիմնական պատճառներ՝ հարցվողները առաջին հերթին նշել են ընտանիքում վատ սովորությունները (հարբեցողություն, թմրամոլություն, խաղամոլություն)՝ 84%, ընտանիքում ճգնաժամային իրավիճակի առկայությունը (ծնողների ամուսնալուծություն, մարդկային կորուստ, մշտապես կոնֆլիկտային մթնոլորտ)՝ 50%, բռնություն կիրառողի հոգեկան կամ մտավոր հիվանդությունների առկայությունը՝ 48%:

https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2104/12/51-2_1ardz.pdf

¹⁰⁸⁴ «Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները Հայաստանի Հանրապետությունում» 2014թ. <http://hopehelp.am/files/books/violence%20against%20children%20in%20the%20republic%20of%20armenia.pdf>

մշտադիտարկումների ընթացքում¹⁰⁸⁵: Մասնավորապես, արձանագրվել են առանձին գիշերօթիկ հաստատություններում որոշ դայակների կողմից կոպիտ վերաբերմունքի, այդ թվում՝ ծեծի, բռնության, հիզիենիկ պարագաներ չտրամադրելու, գողության դեպքեր: Այսպես, ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են, թե ինչպես է դասապատրաստման սենյակներից մեկում դաստիարակն ապտակել երեխաներից մեկին: Սակայն փորձագետների՝ դասասենյակ մտնելուն պես ներկաները ժխտել են տվյալ փաստը, իսկ դաստիարակը պարզաբանել է, թե քաշել է երեխայի հագուստից ու հրահանգել նստել: Մեկ այլ դեպքով երեխաները հայտնել են, որ դայակներն իրենց հայհոյում են, անպարկեշտ բառերով դիմում, փայտով ու մանրահատակի կտորներով ծեծում ու հարվածում իրենց գլխին: Մի այլ դայակ, որպես պատժի միջոց, գիշերը խոսելու համար երբեմն մերկ կանգնեցնում է միջանցքում կամ չքնելու համար երեխաներին վախեցնում է, որ կտանի, զուգարանում կպահի ամբողջ գիշեր, երբեմն արգելում է 21:00-ից հետո զուգարան գնալ, երեխաներն էլ ստիպված զսպում են իրենց կամ գաղտնի գնում զուգարան: Ավելին, հաստատություններից մեկում երեխաները պատմեցին, որ լոգանք ընդունում են միայն այն երեխաները, ովքեր գիշերում են հաստատությունում նաև շաբաթ և կիրակի օրերին: Նաև՝ երեխաների հավաստիացմամբ՝ առանձին հաստատություններում իրենց անկողնային պարագաները փոխվում են միայն արձակուրդների ժամանակ կամ եթե որևէ պատճառով կեղտոտվում են, իսկ սպորտային համազգեստները, վերնազգեստները, որոնք հանձնվում են լվացքատուն, երբեմն չեն վերադարձվում, կորում են կամ փոխանցվում այլ երեխաների: Հաստատության սաները նաև բարձրաձայնում էին հաճախակի գողությունների մասին (անհետանում են հագուստը, զարդերը, գումարը), սակայն վարչակազմն արդյունավետ միջոցներ չի ձեռնարկում խնդիրը լուծելու համար, այլ փոխարենը սաներին առաջարկում է գողության փաստերը քննարկել ինքնուրույն:

Բռնության նկատմամբ առավել խոցելի են նաև մուրացիկ երեխաները¹⁰⁸⁶: Մուրացիկությունը դրսևորվում է երկու ձևով. մի դեպքում սոցիալապես անապահով ընտանիքները երեխաներին դրդում են մուրացկանության՝ նրանց միջոցով փորձելով գումար վաստակել, մեկ այլ դեպքում, եթե երեխան մանկահասակ է և ի վիճակի չէ ինքուրույն գործել, նրան օգտագործում են որպես միջոց՝ անձանց մոտ խղճահարություն առաջացնելու և գումար ստանալու համար¹⁰⁸⁷: Մուրացկանությամբ վտանգվում է

¹⁰⁸⁵ Մանրամասն տես՝ «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում. համակարգային վերլուծություն. 2014թ. արտահերթ զեկույց»

¹⁰⁸⁶ 2004 թվականին Աշխատանքի համաշխարհային կազմակերպությունը մուրացիկությունը սահմանել է որպես գործողություններ, որոնց ժամանակ անձը գումար է խնդրում անձանոթներից աղքատության կամ առողջության և կրոնական կարիքների բավարարման նպատակով նվիրատվության համար: Մուրացիկները կարող են նաև ինքնարժեքից զգալիորեն բարձր գներով վաճառել փոքր իրեր: «Երեխաների շահագործման կանխարգելումը հարավ-արևելյան Եվրոպայում. Երեխաների մուրացիկության տարածաշրջանային զեկույց», Մեյվ դը Զիլդերեն 2011թ.

<http://resourcecentre.savethechildren.se/sites/default/files/documents/5495.pdf>

¹⁰⁸⁷ Պետք է նշել, որ ՀՀ օրենսդրության համաձայն՝ երեխաներին թափառաշրջիկությունը և մուրացկանությանն առնչվող գործողությունների մեջ ներգրավելը համարվում է քրեորեն պատժելի արարք և նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 166.1 հոդվածով:

երեխայի առողջությունը, հաճախ վերջինս գրկվում է կրթությունից և մեծանում իր զարգացման համար անբարենպաստ պայմաններում: Այսպես, ըստ ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված վիճակագրության՝ 2014 թվականին հաշվառվել է 8 մուրացիկ երեխա: Չնայած ՀՀ ոստիկանությունը լայնածավալ աշխատանքներ է կազմակերպել շահագրգիռ գերատեսչությունների, տարածքային կառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների հետ՝ հաշվառված 8 մուրացիկ երեխաների ուսուցման և զբաղվածության ապահովման ուղղությամբ, և ներկայումս հաշվառված 8 երեխաները գտնվում են իրենց ընտանիքներում՝ այնուամենայնիվ, փորձը ցույց է տալիս, որ վերջիններս հաճախ վերադառնում են փողոց, քանի որ վերջնականապես չի վերացվում մուրացիկությամբ զբաղվելու պատճառը, որը հիմնականում սոցիալական խնդիրն է: Այս իմաստով կարևոր է իրավասու բոլոր գերատեսչությունների կողմից ամենօրյա աշխատանքը ոչ միայն երեխայի, այլև նրա ընտանիքի բոլոր անդամների հետ՝ նրանց տրամադրելով երկարաժամկետ համալիր աջակցության ծառայություններ: Մինևույն ժամանակ, անհրաժեշտ է իրականացնել լայնածավալ իրազեկման աշխատանքներ, որպեսզի հանրությունը գիտակցի և զերծ մնա մուրացիկությանը նպաստող գործողություններից:

Բացի դրանից՝ Պաշտպանի աշխատակազմը, ԶԼՄ-ները, իրավապաշտպաններն արձանագրել են մի շարք դեպքեր, երբ երեխաներին ներգրավել են իրենց տարիքին ոչ համապատասխան և առողջության համար վնասակար աշխատանքներում¹⁰⁸⁸: Նման դեպքեր շատ են հանդիպում հատկապես մարզերում, երբ երեխան, սոցիալական վատ պայմաններից դրդված, ստիպված է եղել կատարել ծանր ֆիզիկական կամ իր առողջության համար վտանգավոր աշխատանքներ: Խնդրի լուծմանը խոչընդոտում է այն, որ մինչ օրս չկան աշխատող երեխաների հայտնաբերման մեխանիզմներ, հստակ վիճակագրական տվյալներ և իրավիճակի համալիր վերլուծություն: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված նման երեխաների հետ ամենօրյա մասնագիտական աշխատանք չի իրականացվում, նրանց կյանքի պայմանների, կենցաղի նկատմամբ իրավասու որևէ մարմնի կողմից հսկողություն չի իրականացվում¹⁰⁸⁹: Մինևույն ժամանակ թե մուրացիկ երեխաների և թե աշխատող երեխաների դեպքում չեն մշակվել

¹⁰⁸⁸ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ «Արգելվում է երեխայի կողմից ալկոհոլային խմիչքների և ծխախոտի վաճառքը, դրանց արտադրության և օգտագործման մեջ երեխայի ներգրավումը, ինչպես նաև այնպիսի աշխատանքի կատարումը, որը կարող է վնասել նրա առողջությանը, ֆիզիկական եւ մտավոր զարգացմանը, խոչընդոտել կրթություն ստանալուն»:

Երեխայի վնասակար աշխատանք կատարելուց պաշտպանվելու իրավունքի ապահովման նպատակով պետության համար օրենսդրական, վարչական, սոցիալական և կրթական միջոցներ ձեռնարկելու պարտավորություն է նախատեսում նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան: http://www.un.am/res/UN%20Treaties/III_12.pdf, հոդված 32:

¹⁰⁸⁹ Ի դեպ, խնդրի կարգավորմանը խոչընդոտում է նաև համապատասխան մասնագետների բացակայությունը: Այս կապացությամբ պետք է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության գործողությունների ծրագրի 47-րդ կետով նախատեսված են համայնքներում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հարցերով զբաղվող մասնագետների ներդրման մոդելի մշակում, գործառնական ծախսերի վերլուծում և դրանց արդյունքներով ընտրված համայնքներում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հարցերով զբաղվող մասնագետներով ապահովում, ինչը, սակայն, լիարժեք կերպով չի իրականացվել:

կանխարգելիչ արդյունավետ մեխանիզմներ, իսկ ներկայում առկա աջակցության ձևերը տրամադրվում են համապատասխան դեպքերի բացահայտումից հետո միայն: ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն դեռևս 2013 թվականին իր եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել այս կապակցությամբ՝ կոչ անելով պետությանն ապահովել աշխատանքային օրենսդրության և պրակտիկայի համապատասխանությունը Կոնվենցիայի 32-րդ հոդվածին, ինչպես նաև ստեղծել մանկական աշխատանքի մասին հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմներ¹⁰⁹⁰:

ՄԱԿ-ի Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել երեխայի առողջության պահպանման իրավունքի լիարժեք իրացման ուղղությամբ, իսկ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետական մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի անվճար օգտվելու հնարավորությունը, իրականացնում են երեխայի առողջության պահպանմանն ուղղված պետական նպատակային ծրագրեր¹⁰⁹¹: Չնայած օրենսդրական նման պահանջներին՝ 2014 թվականին արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ պետական իրավասու մարմինների ոչ արդյունավետ գործունեության և թերի վերահսկողության արդյունքում խախտվել է երեխայի առողջության պահպանման իրավունքը:

Այսպես, մի շարք դեպքերում հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև մինչև յոթ տարեկան երեխաները, հակառակ օրենսդրական պահանջին, չեն ստացել անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր: Մասնավորապես, բողոքներ են ստացվել, որ մինչև 7 տարեկան երեխաներին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղերով ապահովման համակարգն արդյունավետ չէ: Համաձայն Օքսֆամի կատարած հետազոտությունների՝ վերոնշյալ որոշման մեջ ընդգրկված խմբերի անձանց 34%-ը չի օգտվել պետության կողմից տրամադրվող անվճար բուժսպասարկումից, քանի որ չի տիրապետել համապատասխան տեղեկատվության: Այս ուղղությամբ ՀՀ առողջապահության նախարարության կողմից ներկայացվել է օրենսդրական առաջարկը, որի համաձայն՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունքի մասին իրազեկումը ապահովվում է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից՝ բնակչության համար տեսանելի վայրերում թերթիկների և պաստառների տեղադրման միջոցով¹⁰⁹², այնուամենայնիվ, ոլորտում

¹⁰⁹⁰ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ 2014 թվականին մշակել է երեխաների համար Պաշտպանին բողոքարկման մեխանիզմ, որը կարող է արդյունավետ միջոց ծառայել նաև այս խնդրի վերաբերյալ հաղորդումների ստացման համար:

Որպես դրական քայլ կարելի է նշել այն, որ 2014 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է 2014 թվականի դեկտեմբերի 4-ի «Երեխայի հանդեպ բռնության երևույթի դեմ պայքարի հայեցակարգին և դրանից բխող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության N51 արձանագրային որոշումը: <https://www.e-gov.am/sessions/archive/2014/12/04/>

¹⁰⁹¹ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 7

¹⁰⁹² «ՀՀ առողջապահության նախարարի 01.11.2013 թվականի թիվ 70-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի հրամանի նախագիծ

իրագրված պակասի խնդիրը դեռևս չի լուծվել: Միաժամանակ, մինչև 7 տարեկան մի շարք երեխաների ծնողներ, պայմանավորված բժշկի կամ բուժհաստատության կողմից նման իրավունքի մասին տեղեկատվություն չտրամադրելով, սեփական միջոցներով են դեղատներից ձեռք բերել դեղատոմսով նշանակված մանկական դեղորայքն այն դեպքում, երբ բժշկական հաստատությունը պարտավոր էր նշանակված դեղերը տրամադրել անվճար: Զուգահեռաբար գրանցվել են նաև դեպքեր, երբ երեխաների ծնողները հրաժարվել են անվճար տրամադրվող դեղորայքից՝ չվստահելով պետական գնումներով ձեռք բերվող դեղերի որակին¹⁰⁹³:

Ավելին, թերություններ են հայտնաբերվել նաև հանրակրթական հաստատություններում երեխաների բուժսպասարկման ոլորտում: Այսպես, 2014-2015 թվականների ուսումնական տարվան ընդառաջ Պաշտպանի կողմից ուսումնասիրվել են մի շարք հանրակրթական, այդ թվում՝ հատուկ դպրոցներում երեխաների համար պատշաճ բուժօգնություն կազմակերպելու և դպրոցները համապատասխան դեղորայքով և պարագաներով ապահովելու ուղղությամբ կատարված միջոցառումները: Արդյունքում՝ բացահայտվել են մի շարք թերություններ, այդ թվում՝ բուժկետներում օրենսդրությամբ նախատեսված որոշ անհրաժեշտ դեղերի ու պարագաների, լվացարանակոնքի բացակայություն, ոչ ստերիլ պայմաններում բժշկական գործիքների պահպանում, բուժքույրների բացակայություն երեխաների դասերի ժամերին և այլն¹⁰⁹⁴: Մինևույն ժամանակ Պաշտպանի ներկայացուցիչների՝ հատուկ դպրոցներ կատարած այցերի արդյունքում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ հատուկ դպրոցներ հաճախող երեխաները չեն ստացել նախատեսված մի շարք անվճար բժշկական ծառայություններ, այդ թվում՝ անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն¹⁰⁹⁵: Երեխաների բուժսպասարկման մի շարք խնդիրներ արձանագրվել են նաև ԲԿԱՄ-ի կողմից երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ և հատուկ դպրոցներ իրականացված այցերի ընթացքում: Մասնավորապես, հանդիպել են դեպքեր, երբ երեխաներին դեղորայքը տրամադրվել է՝ առանց հիմնավորման և բժշկի նշանակումների, առկա է եղել ժամկետանց դեղորայք, հաստատություններում չեն պահպանվել սանիտարական նորմերը և կանոնները, որոշ դեպքերում հատուկ հանրակրթական դպրոցներում սովորել են հատուկ կարիքներ չունեցող կամ ներառական կրթության ենթակա թեթև խնդիրներ ունեցող երեխաներ¹⁰⁹⁶:

Երեխաների առողջության պահպանման և զարգացման ապահովման, մանկական մահացության կանխարգելման կարևորագույն նախապայման է նաև մայրերի և մանուկների սնուցման և առողջության բարելավումը: 2014 թվականին մանկահասակ

¹⁰⁹³ Մանրամասն տես՝ «ՀՀ առողջապահության նախարարություն» բաժնում:

¹⁰⁹⁴ Բացահայտված խնդիրները չեն համապատասխանում ՀՀ առողջապահության նախարարի՝ 2002 թվականի փետրվարի 11-ի թիվ 82 հրամանով հաստատված դպրոցի բժշկական առանձնասենյակի սարքավորումների և գործիքների ցանկի, ինչպես նաև Նախարարի՝ 2013 թվականի ապրիլի 9-ի թիվ 874-Ս հրամանով հաստատված դպրոցի բուժկետում անհրաժեշտ դեղերի ցանկի և բուժկետի՝ սարքավորումներով ու գործիքներով հագեցվածության ծավալի պահանջներին:

¹⁰⁹⁵ Մանրամասն տես՝ «ՀՀ առողջապահության նախարարություն» բաժնում

¹⁰⁹⁶ Մանրամասն տես՝ «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում. համակարգային վերլուծություն. 2014թ. արտահերթ զեկույց», 2015թ.

երեխաների և դեռահասների ճիշտ սնուցման խնդիրը դեռևս շարունակել է արդիական լինել: Մասնավորապես, ոլորտի հիմնական խնդիրներն են կրծքով սխալ կերակրումը և արհեստական կաթնախառնուրդների լայն օգտագործումը, ոչ ճիշտ հավելյալ սնուցման կազմակերպումը և ծնողների ու բուժաշխատողների գիտելիքների անբավարար մակարդակը, երեխաների սնուցման իրավիճակի գնահատման, աճի և զարգացման գնահատման և մոնիտորինգի ազգային համակարգի բացակայությունը, դպրոցահասակ երեխաների սննդային անառողջ սովորությունների բարձր տարածվածությունը, ֆիզիկական ակտիվության ցածր մակարդակը և մի շարք այլ գործոններ¹⁰⁹⁷: ՀՀ վիճակագրական ծառայության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից համատեղ իրականացված վերջին Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստանի երեխաների սնուցման ոլորտում հետընթաց է գրանցվել: Մասնավորապես, 5 տարեկանից ցածր տարիքի երեխաների 19%-ը «թերաճ» է մայրերի կողմից սխալ կերակրման սովորության պատճառով, իսկ նախադպրոցական տարիքի երեխաների (37%) և հղի կանանց շրջանում (25%) առկա է սակավարյունության աճ¹⁰⁹⁸: Ընդհանուր առմամբ, վերջին 10 տարիների ընթացքում երեխաների սնուցումը չի բարելավվել, ավելին՝ թերաճության և թերքաշության ցուցանիշների վատացման կայուն միտում է դրսևորվել¹⁰⁹⁹: Անհանգստացնող է նաև գերքաշության գնալով մեծացող խնդիրը, հատկապես վաղ տարիքային խմբի երեխաների պարագայում: Մասնավորապես, 15 տարեկան տղաների 14%-ը և աղջիկների 5%-ը ունեն քաշի ավելցուկ¹¹⁰⁰: Դեռահասների շրջանում բավական տարածված են անառողջ սննդային սովորությունները՝ չնախաճաշելը, քաղցր զազավորված ըմպելիքներ և քաղցրավենիք օգտագործելը և այլն: Սննդակարգը կապված է նաև ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակի հետ: Տանը սննդի անբավարարության պատճառով քաղցած լինելու մասին նշել է հարցված երեխաների մոտ 20%-ը, ընդ որում՝ 4%-ը քաղցած է մնում ամեն օր¹¹⁰¹: Երեխաների ճիշտ սնուցման խնդիր արձանագրվել է նաև Պաշտպանի աշխատակազմի կողմից 2014 թվականին Երևան քաղաքի տարբեր հանրակրթական, ինչպես նաև հատուկ դպրոցներ կատարված այցերի ընթացքում: Պարզվել է, որ դպրոցներում սննդի իրացման և հետևաբար, երեխաների սնուցման գործընթացում առկա են օրենքի բազմաթիվ խախտումներ, որոնք էապես վտանգում են երեխաների առողջությունը: Մասնավորապես, մի շարք հատուկ դպրոցների երեխաների տրամադրվել է ժամկետանց սնունդ, սնունդը պահվել է ոչ պատշաճ պայմաններում, իսկ հանրակրթական դպրոցների բուֆետներում իրացվել են երեխաների առողջության համար վնասակար սննդատեսակներ, մի շարք դեպքերում

¹⁰⁹⁷ ՀՀ կառավարության 2014 թ. սեպտեմբերի 25-ի նիստի N 40 արձանագրային որոշում, Հավելված 1

¹⁰⁹⁸ <http://www.armstat.am/am/?nid=81&id=1338>

¹⁰⁹⁹ ՀՀ կառավարության 2014 թ. սեպտեմբերի 25-ի նիստի N 40 արձանագրային որոշում, Հավելված 1

¹¹⁰⁰ <http://www.arabkirjmc.am/am/news/article/arabkir>

¹¹⁰¹ Ի դեպ, խնդրի վերաբերյալ ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն 2013թ. ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում կոչ է արել պետությունը շարունակել հղի կանանց, նորածինների, նախադպրոցական տարիքի երեխաների և դեռահասների սնուցման վիճակի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրերի և հայեցակարգերի իրականացումը, հատկապես գյուղական բնակավայրերում:

բացակայել է պիտանիության ժամկետի և բաղադրության մակնշումը¹¹⁰²: Այսպիսով, չնայած 2014 թվականին խնդրի լուծմանն ուղղված դրական որոշակի քայլերի իրականացմանը¹¹⁰³՝ անհրաժեշտ է ոչ միայն մշակել արդյունավետ քաղաքականություն և հստակ միջոցառումներ նախատեսել, այլև կարևոր է լիարժեք վերահսկողություն իրականացնել արդեն իսկ ընդունված իրավական ակտերի և միջոցառումների իրագործման նկատմամբ:

Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները ճանաչում են սոցիալական ապահովության, ներառյալ՝ սոցիալական ապահովագրության նպաստներից օգտվելու յուրաքանչյուր երեխայի իրավունքը և անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում այդ իրավունքի լիակատար իրականացմանը հասնելու համար: Ավելին, Կոնվենցիայի 27-րդ հոդվածը պարտավորություն է նախատեսում պետության համար՝ ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ՝ երեխայի ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի ապահովման համար: Երեխայի սոցիալական ապահովության իրավունքի իրացումը կարևոր նախապայման է կրթության, առողջության պահպանման, ընտանեկան միջավայրում ապրելու, լիարժեք և արժանավայել կյանքով ապրելու և մի շարք այլ հիմնարար իրավունքների իրացման համար: Այնուամենայնիվ, Հայաստանում երեխաների աղքատության խնդիրը 2014 թվականին շարունակել է արդիական լինել, իսկ դրա վերացմանն ուղղված արդյունավետ քայլեր չեն ձեռնարկվել: Այսպես, Հայաստանում մոտ 300 000 երեխա կամ երեխաների 36.2%-ը ապրում է աղքատության մեջ, նրանցից 3.3%-ը ծայրահեղ աղքատ է, ինչը նշանակում է, որ վերջիններս չունեն գոյատևման համար անհրաժեշտ նույնիսկ նվազագույն տարրական պայմաններ¹¹⁰⁴: Երեխաների ընդհանուր թվաքանակի 59%-ն է միայն բնակվում բավարար համարվող բնակարանային պայմաններում: Աղքատ երեխաները ավելի հաճախ են բնակվում վատ պայմաններում, կարևոր կացարանային հարմարություններից զուրկ տներում: Անբավարար ջեռուցման խնդիր ունեցող տնային տնտեսություններում է բնակվում հանրապետության երեխաների ընդհանուր թվաքանակի 40%-ը, իսկ աղքատ երեխաների՝ 44%-ը և ծայրահեղ աղքատ երեխաների՝ 42%-ը: Նշենք նաև, որ հաշմանդամ երեխաները երկրորդ ամենախոցելի խումբն են կազմում: Այսպես, մեկ կամ ավելի հաշմանդամ երեխա ունեցող տնային տնտեսություններում ծայրահեղ աղքատության ռիսկն ավելի բարձր է: Չնայած երեխաների ընդամենը 1,7%-ն է հաշմանդամ կամ բնակվում այլ հաշմանդամ երեխաների հետ միասին, նրանց 35.4%-ը աղքատ է, իսկ 11%-ը՝ ծայրահեղ աղքատ:

¹¹⁰² Մանրամասն տես «ՀՀ կրթության և գիտության նախարարություն», «Երևանի քաղաքապետարան» և «ՀՀ գյուղատնտեսության նախարարություն» բաժիններում

¹¹⁰³ 2014 թվականին «Կրճքով կերակրման խրախուսման և մանկական սննդի շրջանառության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ՄԱԿ-ի Երեխաների հիմնադրամի միջև Հայաստանի 0-5 տարեկան երեխաների առողջության և սնուցման բարելավմանն ուղղված երկամյա համագործակցության համաձայնագրի ստորագրումը, ինչպես նաև «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շարունակական իրականացումը

¹¹⁰⁴ ՀՀ ԱՎԾ «Աղքատությունը և սոցիալական պատկերը-2013թ.» հետազոտություն, <http://www.armstat.am/am/?nid=82&id=1503>

Երեխաների աղքատության նման ցուցանիշների պատճառներից է նաև սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող օգնության համակարգում առկա խնդիրները¹¹⁰⁵: Առհասարակ, տարբեր վերլուծություններ վկայում են, որ սոցիալապես անապահով ընտանիքները մեծ կախվածություն ունեն պետության կողմից տրամադրվող սոցիալական տրանսֆերտների, այդ թվում՝ ընտանեկան և սոցիալական նպաստի և այլ տեսակի օգնությունից¹¹⁰⁶: Իսկ այդ ընտանիքներին նպաստների վճարումը դադարեցնելն անխուսափելիորեն կհանգեցնի նրանց շրջանում աղքատության, այդ թվում՝ մանկական աղքատության մակարդակի զգալի աճին¹¹⁰⁷: Ավելին, աղքատության մակարդակի աճին զուգահեռ դա կհանգեցնի աղքատության խորության ու սրության սաստկացման, ինչպես նաև բժշկական, կրթական և մյուս ծառայությունների հասանելիության կրճատման, քանի որ ընտանիքի անապահովության համակարգում հաշվառված լինելու դեպքում անձն օգտվում է մի շարք ոլորտներում անվճար ծառայություններ ստանալու արտոնությունից¹¹⁰⁸: Ընտանիքի անապահովության գնահատման համակարգի արդյունավետությանն անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն: 2013 թվականի եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ ծայրահեղ աղքատ ընտանիքների միայն 54.3%-ը և աղքատ ընտանիքների 4.1%-ն են կանոնավոր կերպով օգտվում այդ փաթեթներից՝ ընտանեկան նպաստի բանաձևի անբավարարության և գոյություն ունեցող պետական աջակցության վերաբերյալ տեղեկացվածության պակասի պատճառով¹¹⁰⁹:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2009 թվականին ընդունած, երեխաների այլընտրանքային խնամքի մասին ուղեցույցը, ընտանիքը սահմանելով որպես հասարակության հիմք, բնական միջավայր երեխաների աճի, բարեկեցության և ապահովության համար, առաջարկում է բոլոր պետություններին ջանքեր գործադրել՝ երեխաներին իրենց ծնողների կամ մոտ բարեկամների խնամքի տակ թողնելու կամ վերադարձնելու հնարավորություն ընձեռելու համար: Ինչպես նաև նշում է, որ պետությունը պետք է երաշխավորի, որ ընտանիքները խնամք իրականացնելու գործում աջակցության հնարավորություն ունենան: Եթե երեխայի սեփական ընտանիքն անկարող է նույնիսկ համապատասխան աջակցության դեպքում երեխային ապահովել անհրաժեշտ խնամքով, լքում է նրան կամ հրաժարվում նրանից, ապա պետությունը

¹¹⁰⁵ Մանրամասն տես՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնում

¹¹⁰⁶ http://www.armstat.am/file/article/4.poverty_2014a_1.pdf, ինչպես նաև «Սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության ելակետային հետազոտություն և այդ ծառայությունների ազդեցությունը սոցիալապես խոցելի ընտանիքների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա», դեկտեմբեր 2013 թվական

¹¹⁰⁷ <http://www.armstat.am/file/doc/99489153.pdf>

¹¹⁰⁸ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն իր 2013 թվականի զեկույցում նշել է, որ սոցիալապես անապահով անձանց անվճար բժշկական օգնություն ստանալու շեմը Հայաստանում շատ ցածր է սահմանված, ինչի արդյունքում միայն ծայրահեղ աղքատներն են օգտվում անվճար օգնություն ստանալու արտոնությունից այն դեպքում, երբ համեմատաբար ավելի բարձր եկամուտ ունեցող անձանց համար այս ծառայությունները նույնպես մատչելի չեն:

http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

¹¹⁰⁹ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

պատասխանատու է երեխայի իրավունքները պաշտպանելու և այլընտրանքային խնամք ապահովելու գործում տեղական իշխանությունների և ՀԿ-ների հետ կամ նրանց միջոցով¹¹¹⁰: Այնուհանդերձ, 2014 թվականին մի շարք խնդիրներ են արձանագրվել երեխայի՝ ընտանեկան միջավայրում ապրելու և այլընտրանքային խնամքով ապահովելու վերաբերյալ: Չնայած դեռևս մոտ 10 տարի առաջ Հայաստանը իր գերակա խնդիրներից է համարել մանկատների բեռնաթափումը և խնամքի հաստատություններից երեխաների ընտանիք վերադարձը¹¹¹¹, այնուամենայնիվ, այս ոլորտում լուրջ տեղաշարժեր դեռևս չեն նկատվել: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կատարված հետազոտության արդյունքների համաձայն՝ Հայաստանի մոտ 40 խնամքի հաստատություններում գտնվող երեխաների 80%-ը հիմնականում մեկ ծնող ունի և հաստատությունում է հայտնվել սոցիալական խնդիրների պատճառով¹¹¹²: Ավելին, դեռևս չի ձևավորվել հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման պրակտիկա, որդեգրման գործընթացում առկա են մի շարք խնդիրներ, լիարժեք զարգացած չէ խնամատար ընտանիքի ինստիտուտը, և ցածր է վերջինիս վերաբերյալ իրազեկումը հանրության մեջ: Բացի դրանից՝ պատշաճ չի կարգավորվել երեխաների և ընտանիքների հետ աշխատող խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեությունը, կայացած չէ սոցիալական աշխատողի ինստիտուտը, որը կարող է արդյունավետ օղակ լինել երեխայի մուտքը հաստատություն կանխարգելելու համար, չկան հատուկ կարիքներ ունեցող և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար համայնքային այլընտրանքային ծառայություններ: Մեկ այլ դեպքում երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը խոչընդոտվում է մանկատանը նրան ժամանակավորապես թողնելու պատճառով: Այսպես՝ բազմաթիվ են դեպքերը, երբ ծնողը երեխային տարբեր պատճառաբանություններով (միայնակ լինել, աշխատանքի կամ բնակարանի բացակայություն, ժամանակավորապես երկրից հեռանալու անհրաժեշտություն և այլն) մանկատանն է տեղավորում որոշակի ժամկետով, սակայն հետագայում նշյալ ժամկետը երկարաձգվում է: Երեխաներին մանկատանը թողնելով՝ ծնողները հաճախ մեկնում են երկրից՝ նրանց հետ կապ պահպանելով միայն հեռախոսի միջոցով, մյուս դեպքերում լավագույնը շաբաթական մեկ անգամ այցելում են նրանց, իսկ վերջիններս մինչև 18 տարեկանը ստիպված են լինում ապրել մանկատանը՝ զրկված լինելով ծնողական խնամքից և հնարավորություն չունենալով որդեգրվել կամ խնամատար ընտանիք հանձնվել, քանի որ ծնողները նրանց նկատմամբ ծնողական իրավունքներից չեն հրաժարվում և չեն զրկվում¹¹¹³:

¹¹¹⁰ http://www.unicef.org/protection/alternative_care_Guidelines-English.pdf

¹¹¹¹ ՀՀ կառավարության 12 հունվարի 2006 թվականի 206-Ն որոշում

¹¹¹² Ի դեպ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2013թ. զեկույցի համաձայն՝ մինչև 3 տարեկան երեխաների 3.3%-ն ապրում է ծայրահեղ աղքատության մեջ, իսկ 37.3%-ը՝ աղքատության մեջ:

¹¹¹³ ՀՀ կառավարության 2006 թվականի թիվ 1735Ն որոշման համաձայն՝ «Մարզպետարանը, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը կամ խնամակալության և հոգաբարձության մարմինը մանկատանը ժամանակավոր տեղավորվող երեխայի ծնողներին նախազգուշացնում է այն մասին, որ, եթե երեխային մանկատանը տեղավորելու հիմքերը վերանալուց հետո նրանք խուսափեն իրենց երեխային ընտանիք վերադարձնելուց, ապա երեխան կարող է հանձնվել որդեգրության, խնամակալության կամ խնամատար ընտանիք՝ օրենքով սահմանված կարգով»:

Մինչ օրս դեռևս ներդրված չէ հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման արդյունավետ պրակտիկա, վերջիններս որդեգրվում են հիմնականում օտարերկացիների կողմից: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված տվյալների՝ 2014 թվականին որդեգրվել է 31 երեխա, այդ թվում՝ 14 երեխա որդեգրվել է ՀՀ քաղաքացիների կողմից, իսկ 17 երեխա՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից: Օտարերկրացիների կողմից որդեգրված 17 երեխայից միայն մեկն է, որ չունի առողջական խնդիրներ, իսկ ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված 14 երեխաները չունեն առողջական խնդիրներ: Ավելին, ներկայումս մանկատներում խնամվում է մոտ 731 երեխա, որից 506-ը՝ մասնագիտացված մանկատներում: Հաշմանդամություն ունեցող երեխաները, իրենց նկատմամբ հասարակության մեջ առկա կարծրատիպային վերաբերմունքից բացի, հաստատություններ են ընդունվում նաև այլընտրանքային վերականգնողական ծառայությունների և աջակցության ծրագրերի բացակայության պատճառով: Նույն խնդիրը բացասաբար է անդրադառնում նաև որդեգրման վրա, քանի որ հաշմանդամություն ունեցող երեխա որդեգրած ընտանիքը մշտապես կարող է բախվել շրջապատում առկա կարծրատիպերին, ինչպես նաև չունի լրացուցիչ պետական աջակցություն ստանալու, երեխայի խնամքի համար այլընտրանքային ծառայություններից օգտվելու երաշխիքներ:

Մինչ օրս դեռևս առկա են խնամատարության ինստիտուտի զարգացման մի շարք խոչընդոտներ: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2014 թվականի ընթացքում խնամատար ընտանիքի խնամքին է հանձնվել առանց ծնողական խնամքի մնացած ընդհամենը 3 երեխա, մինևույն ժամանակ 18 տարեկանը լրանալու կապակցությամբ 3 երեխա դուրս է մնացել ծրագրից, ինչի արդյունքում ներկայումս խնամատար ընտանիքներում խնամվում է 17 երեխա: 2012 թվականից մինչև 2014 թվականը այս ոլորտում բյուջետային հատկացումների չափը չի ավելացել: 2014 թվականին փաստացի ֆինանսավորվել է միայն 16 ընտանիք: Վերոհիշյալ ցածր թվերը վկայում են այն մասին, որ չնայած 2014 թվականին խնամատար ընտանիքներում խնամվող երեխաների խնամքի նկատմամբ վերահսկողության ապահովման, խնամատար ընտանիքներում ընտանիքի էության ու հասարակական դերի վերաբերյալ քարոզչական միջոցառումների նախատեսմանը՝ դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք հրատապ լուծումներ են պահանջում¹¹⁴: Այսպես, Մեյվ դը չիլդրեն կազմակերպության և Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի կողմից իրականացված հետազոտության¹¹⁵ արդյունքները ցույց են տալիս, որ խնամատարության ինստիտուտի կայացման համար կարևոր խնդիրներից է այն, որ խնամատար ընտանիքում տեղավորվելու համար երեխան պետք է ճանաչված լինի առանց ծնողական խնամքի մնացած¹¹⁶, ինչի պատճառով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված բազմաթիվ երեխաներ զրկվում

¹¹⁴ «ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2014թ. Նոյեմբերի 13-ի թիվ 1273-Ն որոշում

¹¹⁵ «Խնամատարության զարգացման հեռանկարները Հայաստանում» հետազոտություն 2014թ.

¹¹⁶ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 2

են նման հնարավորությունից¹¹¹⁷: Բացի դրանից՝ դեռևս չկա կարճաժամկետ և ճգնաժամային, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված խնամատարություն: Խնամատար ծնողների մեծամասնությանը մտահոգում է նաև այն, որ երեխաների 18 տարեկանը լրանալուց հետո պետության կողմից նրանց որևէ աջակցության տեսակ նախատեսված չէ՝ չնայած խնամատար ծնողները պատրաստակամ են երեխաների մասին հոգ տանել նաև 18 տարեկանը լրանալուց հետո: Մեկ այլ մտահոգություն վերաբերում է երեխայի կենսաբանական ընտանիքի հետ կապ պահպանելուն: Հաճախ վերջինիս անդամների այցելությունները և խոստումները խոչընդոտ են երեխայի՝ խնամատար ընտանիքին ինտեգրման համար, և երեխաների մոտ առաջանում են վարքային խնդիրներ: Նման դեպքերում խնամատար ընտանիքները պետությունից մասնագիտացված որևէ աջակցություն չեն ստանում: Ավելին, գործող ընթացակարգով պոտենցիալ խնամատար ծնողներից պահանջվող փաստաթղթերը վարչական վկայություններ են, մինչդեռ երեխային ռիսկերից լիարժեք ապահովագրելու համար անհրաժեշտ են ծնողների մասնագիտական հմտությունները և ընտանիքի մյուս անդամների դիրքորոշումը:

Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում մեկ այլ խնդիր է անչափահասների արդարադատության համակարգի բացակայությունը¹¹¹⁸: Անչափահասներն այս առումով խոցելի են նախաքննության, քրեական հետապնդման փուլերում, ինչպես նաև դատաքննության ընթացքում, երբ վերջիններս կարող են դառնալ ֆիզիկական և հոգեբանական բռնության զոհեր, քանի որ անչափահասները հաճախ հնարավորություն չեն ունենում ինքնուրույն լիարժեք իրացնել իրենց իրավունքները, իսկ պետության պարտավորությունն է մշակել այնպիսի պայմաններ և մեխանիզմներ, որոնք կապահովեն անչափահասի անվտանգությունը և հնարավորություն կտան նրան օգտվելու իրավական պաշտպանության իրավունքից: Երեխաների իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետությանը մշակել և իրացնել անչափահասների արդարադատության համապարփակ քաղաքականություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով անչափահասների իրավախախտումների կանխարգելմանը, այլընտրանքային միջոցների ներդրմանը, որոնք հնարավորություն կտան անչափահասների իրավախախտումներին արձագանքելու՝ առանց դատավարական ընթացակարգերին դիմելու: Իսկ անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ 1985

¹¹¹⁷ ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 8-ի թիվ 459-Ն որոշում «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը, յուրաքանչյուր երեխայի պահելու համար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության վճարման կարգն ու չափը և խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը հաստատելու մասին»

¹¹¹⁸ Անչափահասների արդարադատության համակարգը հաստատությունների և կազմակերպությունների համակարգ է, որոնք համատեղ աշխատում են անչափահաս իրավախախտի, տուժողի և վկայի հետ, և որոնց գործունեությունն իրականացվում է անչափահասների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերով: Այդ հաստատությունների թվին են պատկանում ոստիկանությունը, դատարանները, դատախազությունը, պրոբացիոն ծառայությունները, վերականգնողական և այլ հաստատությունները, «Անչափահասների արդարադատությունը սոցիալական աշխատանքի համատեքստում. տեսություն և պրակտիկա» Ձեռնարկ, 2013թ.

թվականին ընդունված «Պեկինյան կանոնները» խրախուսում են իրավական ընթացակարգերի և պաշտոնական քննության փոխարեն համայնքային ծրագրերի, ցանկացած պետական մարմնում, առավելագույնս երեխայի շահերից ելնելով, քննության իրականացումը, մինչև անչափահասին ազատությունից զրկելը գործի մանրակրկիտ քննությունը, անչափահասների գործերով զբաղվող անձնակազմի համար պարտադիր մասնագիտացված վերապատրաստումը, ազատությունից զրկելու դեպքում վաղաժամ ազատվելու հնարավորության դիտարկումը: Դեռևս 2013 թվականին ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում կոչ էր արել Հայաստանին հստակ ժամկետներ սահմանել՝ ստեղծելու անչափահասների արդարադատության համակարգ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու դրա օրենսդրության համապատասխանությունը պետության ստանձնած մի շարք միջազգային պարտավորություններին¹¹¹⁹: Այս ուղղությամբ Քաղաքացիական հասարակության ինստիտուտի կողմից իրականացված հետազոտությամբ վեր հանվեցին ոլորտում առկա հիմնախնդիրները¹¹²⁰: Մասնավորապես, անչափահասների արդարադատության վերաբերյալ չկա առանձին օրենսդրական ակտ, դեռևս մշակված չէ հանցավորության կանխարգելման հստակ քաղաքականություն, այլ գործում են առանձին սոցիալական ծրագրեր, որոնք այդքան էլ արդյունավետ չեն: Բացի դրանից՝ գոյություն չունեն անչափահասների գործերով մասնագիտացված դատարաններ կամ դատավորներ, որոնք կքննեն միայն անչափահասների գործերը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները: Նույն խնդիրն առկա է դատախազության համակարգում. գոյություն չունի անչափահասների գործերով քննություն և քրեական հետապնդում իրականացնող մասնագիտացված ստորաբաժանում: Բացի դրանից՝ խնդրահարույց է, որ մինչ օրս Հայաստանում անչափահասների արդարադատության համակարգը հիմնվում է պատժի վրա, մինչդեռ միջազգային փորձը վկայում է այն մասին, որ գերական պետք է լինի վերականգնումը: Ավելին, միջազգային սկզբունքների համաձայն՝ երեխան կարող է զրկվել ազատությունից միայն այն դեպքում, երբ ազատազրկումը կիրառվում է որպես ծայրահեղ միջոց սահմանափակ և բացառիկ դեպքերում և հնարավորինս կարճ ժամանակահատվածով: Սակայն, զեկույցի համաձայն, ՀՀ-ում այս սկզբունքը հաճախ չի պահպանվում, և անչափահասները անհարկի ենթարկվում են ազատազրկման: Խնդրի վերաբերյալ 2014 թվականին Հայաստան կատարած այցից հետո իր զեկույցում¹¹²¹ բարձրաձայնել է նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիեկսը՝ որպես օրինակ նշելով 2014 թվականին խուլիգանության համար չորս տարի պայմանական ազատազրկման դատապարտված անչափահաս Շահեն Հարությունյանի դեպքը¹¹²²:

¹¹¹⁹ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

¹¹²⁰ http://hra.am/i/up/Legislation%20Analysis%202012-ARM-separate_pages-FINAL.pdf

¹¹²¹ <https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2701645&SecMode=1&DocId=2243332&Usage=2>

¹¹²² Շահեն Հարությունյանը 2013թ. նոյեմբերի 5-ին մասնակցել է հոր՝ Շանթ Հարությունյանի և նրա մի խումբ համախոհների կողմից կազմակերպված երթին, որի ընթացքում ոստիկանների և երթի մասնակիցների միջև տեղի ունեցած բախումների ընթացքում փորձել է պաշտպանել հորը՝ ըստ հրապարակված տեսանյութերի: 2014թ. ապրիլի 2-ին Շահեն Հարությունյանի նկատմամբ մեղադրանք է

2014 թվականին երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում արձանագրված կարևոր մեկ այլ խնդիր վերաբերում է կրթության իրավունքի իրացմանը: Այս ոլորտում հատկապես խնդրահարույց է երեխաների՝ կրթությունից դուրս մնալու խնդիրը: Այսպես, 2014 թվականին Լոռու մարզպետարանի կողմից ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ Վանաձորում և Գուգարքի տարածաշրջանում իրականացված դպրոց չհաճախող երեխաների հայտնաբերման և ուղղորդման ծրագրի արդյունքում հայտնաբերվել է դպրոց չհաճախող /չգրանցված/ 228 երեխա, որոնցից 212-ը՝ 6-8 տարեկան, մյուսները՝ 9-16 տարեկան: Նշյալ դեպքերում երեխաների՝ կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառներն են եղել ծնողների ոչ բարեխիղճ վերաբերմունքը երեխայի կրթության նկատմամբ, վատ սոցիալական պայմանները, երեխաների բացակայություններին իրավասու անձանց ուշ արձագանքելը, նախկինում տարբեր պատճառներով նույն դասարանում մնացած աշակերտների սովորելու ցանկության բացակայությունը, ծնողներին պատասխանատվության ենթարկելու գործընթացից խուսափելը:

Ինչ վերաբերում է կրթական հաստատություններում արձանագրված խնդիրներին, ապա պետք է նշել, որ բազմաթիվ աշակերտներ, ծնողներ ու փորձագետներ պարբերաբար բարձրաձայնում են միջնակարգ կրթության անբավարար որակի մասին, որի պատճառներից են հանրապետությունում կրթության անհամաչափ զարգացումը, տարբեր դպրոցներում կրթության որակի կտրուկ տարբերությունները, ցածր վարձատրվող ուսուցիչների կողմից առարկաների ոչ պատշաճ դասավանդումը, համապատասխան որակավորում ունեցող ուսուցիչների պակասը որոշ դպրոցներում, դասարանների բարձր խտությունը: Առկա են խնդիրներ նաև դպրոցական դասագրքերի որակի հարցում: Հատկապես բարձր դասարանների աշակերտները դժգոհում են, որ իրենց որոշ դասագրքեր մշակվել են ոլորտի գիտական աշխատողների, ԲՈՒՀ-երի դասախոսների կողմից, եղել են խիստ մասնագիտական ու հաճախ դժվարամատչելի լեզվով գրված: Բացի դրանից՝ ներառական կրթություն իրականացնող բազմաթիվ դպրոցներում չեն ձեռնարկվել անհրաժեշտ քայլեր՝ հաշմանդամություն ունեցող երեխաների համար մատչելիության ապահովման ուղղությամբ, մինչդեռ ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրով սահմանված է ներառական դպրոցների ցանցի ընդլայնում տարեկան առնվազն 15 դպրոցով: Անմատչելի դպրոցների գերակշռող մասում հաշմանդամություն ունեցող աշակերտ ունեցող դասարանների համար դասապրոցներ կազմակերպվում է դպրոցի առաջին հարկում, քանի որ սովյալ դպրոցներում բացակայում են նաև վերելակներ կամ ամբարձիչները: Արդյունքում, հաշմանդամություն ունեցող երեխան հաճախ չի կարողանում առանց ուղեկցողի մուտք գործել անմատչելի դպրոց, տեղաշարժվել դպրոցի ներսում, օգտվել սանհանգույցից¹¹²³:

առաջադրվել մի խումբ անձանց հետ, որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ, խուլիգանություն կատարելու համար՝ զուգորդված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալով (ՀՀ Քրեական օրենսգիրք, հոդված 258, մաս 4):

¹¹²³ Մանրամասն տես՝ «ՀՀ կրթության և գիտության նախարարություն» բաժնում

6.6 ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Դեռևս 1993 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան (Կոնվենցիա), որով պարտավորվել է բացառել կանանց նկատմամբ խտրականությունը, խտրականության բացառման սկզբունքն ամրագրել ազգային օրենսդրության մեջ և երաշխավորել, որ պետական մարմիններն ու հաստատությունները գործեն այդ պարտավորությանը համապատասխան¹¹²⁴: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը հստակ սահմանված է նաև ՀՀ օրենսդրությամբ¹¹²⁵, այնուամենայնիվ, 2014 թվականի ընթացքում Հայաստանում կրկին արձանագրվել են կանանց իրավունքների ոտնահարման և նրանց նկատմամբ խտրականության դրսևորման բազմաթիվ դեպքեր: Դրանց հիմնական պատճառը հասարակությունում կանանց դերի նկատմամբ կարծրատիպային մոտեցումներն են, իրավական մի շարք մեխանիզմների բացակայությունը, ինչպես նաև իրավասու մարմինների կողմից կանանց իրավունքների ոտնահարման դեպքերին ոչ պատշաճ արձագանքը¹¹²⁶:

Այսպես, 2014 թվականին կանանց նկատմամբ խտրականության դրսևորման առավել տարածված ձևերից շարունակում է մնալ կանանց նկատմամբ բռնությունը: Միջազգային նորմերով բռնությունը գնահատվում է որպես մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտում: Բռնության առավել տարածված տեսակներից է ընտանեկան բռնությունը, որը դրսևորվում է ֆիզիկական, հոգեբանական և տնտեսական ձևերով: ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2014 թվականին գրանցվել է ընտանեկան բռնության 678 դեպք, որից 551-ը՝ կանանց նկատմամբ: Չնայած 2013 թվականի համեմատ ՀՀ ոստիկանության կողմից արձանագրված դեպքերը նվազել են՝ այնուամենայնիվ, հասարակական կազմակերպությունների պնդմամբ՝ նկատելի է ցուցանիշների ավելացում: Օրինակ՝ «Կանանց աջակցման կենտրոնի» կողմից արձանագրվել է թե՛ զծի զանգերի 80% աճ, իսկ «Հասարակություն առանց բռնության» կազմակերպության կողմից արձանագրվել է ընտանեկան բռնությունից մահացության 11 դեպք¹¹²⁷: Ընդհանուր առմամբ, պետք է նշել,

¹¹²⁴ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա, հոդված 2, http://www.un.am/res/UN%20Treaties/III_8.pdf

¹¹²⁵ ՀՀ Սահմանադրություն, հոդված 14.1, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենք և այլն

¹¹²⁶ Համաշխարհային տնտեսական ֆորումի ներկայացրած 2014 թվականի գենդերային հավասարության ամենամյա վարկանշային աղյուսակի համաձայն Հայաստանը 142 երկրների թվում զբաղեցնում է 103-րդ տեղը: Կանանց տնտեսական մասնակցության ցուցանիշով Հայաստանը 82-րդն է, կրթական մակարդակով՝ 31-րդը, առողջական պայմաններով՝ 142-րդը, իսկ քաղաքական ներգրավվածության առումով՝ 123-րդը: <http://reports.weforum.org/global-gender-gap-report-2014/economies/#economy=ARM>

¹¹²⁷ Ըստ «Կանանց աջակցման կենտրոնի»՝ կազմակերպությանը դիմած ընտանեկան բռնությունից տուժած կանայք նշում են, որ իրենց նկատմամբ բռնությունները կրկնվել են, իրենք ենթարկվել են բռնաբարության ամուսնու կողմից, դաժան բռնության հղիության ընթացքում, որը հանգեցրել է վիժման կամ իրենց և իրենց երեխայի մոտ առողջական խնդիրների: Ընտանեկան բռնության ենթարկված կանանց

որ ընտանեկան բռնության վերաբերյալ հստակ վիճակագրություն առկա չէ, ինչն էլ առավել դժվարացնում է դրա դեմ արդյունավետ պայքարը: Բացի դրանից՝ ընտանեկան բռնության հասկացության օրենսդրական սահմանման բացակայության պայմաններում բազմաթիվ դեպքեր, որոնք միջազգային նորմերով համարվում են ընտանեկան բռնություն, համապատասխան գերատեսչությունների կողմից չեն հաշվառվում որպես այդպիսիք¹¹²⁸: Ամոթի, իրավապահ մարմինների նկատմամբ անվստահության, նման իրավիճակներում պետական աջակցության բացակայության և այլ գործոնների պատճառով՝ բազմաթիվ կանայք շարունակում են խուսափել բարձրաձայնել իրենց նկատմամբ կիրառվող բռնության մասին¹¹²⁹: «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի պնդմամբ՝ հիմնական խնդիրներին անձինք բախվում են ոստիկանության և դատական համակարգում, քանի որ չնայած այն հանգամանքին, որ ներկայումս ոստիկանությունում կա համապատասխան վարչություն՝ այնուամենայնիվ, չկան վերապատրաստված մասնագետներ, ովքեր բռնության զոհի հետ աշխատելու համապատասխան հմտությունների կտիրապետեն: Դատական համակարգում ընտանեկան բռնության ենթարկված կանայք հանդիպում են մի շարք խնդիրների, մասնավորապես՝ գործի առանձնահատկություններին անձանոթ, կարծրատիպային մտածելակերպ ունեցող առանձին դատավորները և դատախազները կարող են իրենց ոչ կոմպետենտ հարցերով կրկին վնասել զոհին: Կան դժգոհություններ, որ ընտանեկան բռնության զոհերը հաճախ բախվում են կողմնապահության դատավորների կողմից (հատկապես մարզերում):

Ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարի խոչընդոտներից է նաև ընտանեկան բռնության վերաբերյալ առանձին օրենքի բացակայությունը¹¹³⁰: Գործող օրենսդրությամբ սահմանված չէ «ընտանեկան բռնություն» հասկացությունը, ինչի հետևանքով դրանից բխող հարաբերությունները չեն կարգավորվում: Արդյունքում, շատ դեպքերում բռնության կանխարգելումը դառնում է անհնար, որովհետև ընտանեկան բռնություն համարվող ոչ բոլոր արարքներն են ներառում ներկայիս օրենսդրությամբ

երեխաներն էլ իրենց հերթին հոգեբանական հարված են ստացել, ունեն վախեր և այլ հոգեբանական խնդիրներ: <http://www.epress.am/2014/09/02/257109.html>

¹¹²⁸ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի տվյալներով՝ ընտանեկան բռնության տեսակներից առավել հաճախ հանդիպում են հոգեբանական բռնությունը՝ նվաստացում, ստորացում, արհամարհում, և ֆիզիկական բռնությունը՝ ծեծ, ապտակ և այլն: Տնտեսական բռնությունը և սեռական բռնությունը ևս առկա են, սակայն հատկապես սեռական բռնության մասին կանայք նախընտրում են լռել, չասել կամ չընդգծել:

¹¹²⁹ Ըստ «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ընտանեկան բռնության դեպքերի մեծամասնության դեպքում իրավապահ մարմինները ցուցաբերում են բռնարարին արդարացնող մոտեցում, որպես խնդրի լուծում տեսնում են զույգի հաշտեցումը, կնոջ՝ իրավիճակին հարմարվելը: Նման մոտեցում հատկապես ցուցաբերվում է այն դեպքերում, երբ բռնարարի արարքը քրեորեն հետապնդելի չի համարվում:

¹¹³⁰ Ընտանեկան բռնության մասին օրենսդրության մշակումը բխում է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով, Պեկինի 4-րդ Համաշխարհային համաժողովի /1995թ./ հանձնարարականներով, ԵՄ Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերով, ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի պահանջներով և միջազգային այլ փաստաթղթերով ստանձնած պարտավորություններից և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի առաջարկներից:

սահմանված հակաիրավական տարրերը (օրինակ՝ ընտանեկան բնության գոհին մեկ անգամ հարվածելը, որը չի եղել ծեծ կամ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառել, կամ հոգեբանական և տնտեսական բռնությունները, որոնք նույնպես ընտանեկան բռնության տեսակներ են, սակայն օրենսդրորեն սահմանված չեն): Նշենք, որ 2015 թվականին Համընդհանուր պարբերական դիտարկման ընթացքում Հայաստանի վերաբերյալ մի շարք երկրների դիտարկումներ առնչվում էին հենց ընտանեկան բռնության մասին օրենսդրության բացակայությանը¹¹³¹: Բացի դրանից՝ ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական իրավունքների կոմիտեն 2014 թվականին առաջարկել է, որ Հայաստանը համարժեքորեն արձանգանքի ընտանեկան բռնության խնդրի լուծմանը՝ հանձն առնելով կանխարգելման, պաշտպանության և քրեական հետապնդման միջոցներ: Կոմիտեն, մասնավորապես, առաջարկել է, որ պետությունը՝ (ա) օրենսդրությամբ անհապաղ և հստակորեն արգելի ընտանեկան բռնությունը՝ սահմանելով այն որպես կոնկրետ իրավախախտում, (բ) ընտանեկան բռնության գոհերին տրամադրի լրացուցիչ կացարաններ, (գ) ընտանեկան բռնության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնող միջոցառումներ իրականացնի իրավապահ մարմինների համար, ինչպիսիք են ոստիկանները, դատախազները և դատավորները, ինչպես նաև սոցիալական աշխատողների, ուսուցիչների և հանրության համար¹¹³²: «Ընտանեկան բռնության մասին» օրենքի նախագիծը շրջանառության մեջ է դրվել դեռևս 2011 թվականից, սակայն մինչ օրս պետության կողմից դրա ընդունման կամ այլ օրենսդրական նախագիծ մշակելու ուղղությամբ քայլեր չեն իրականացվել¹¹³³:

2014 թվականին գրանցվել են բռնություններ կին իրավապաշտպանների նկատմամբ, ովքեր իրենց գործունեության պատճառով ենթարկվել են ճնշումների և հարձակումների, վերջիններիս հասցեին ատելության կոչեր են արվել: ՀԿ-ների պնդմամբ՝ իրենց հասցեին բռնության սպառնալիքներ ուղղվել են ոչ միայն առցանց, այլև մի շարք անձինք փորձել են խաթարել կազմակերպությունների գործունեությունը՝ վերջիններիս մասին տարածելով կեղծ տեղեկատվություն պարունակող տեսահոլովակներ ու հոդվածներ: Նշված կազմակերպությունների առանձին ներկայացուցիչների նկարները տեղադրվել են ատելություն քարոզող որոշ կայքերում, որտեղ, այդ անձանց անվանելով «ազգի դավաճաններ», կոչ է արվել ազատվել կամ հաշվեհարդար տեսնել նրանց հետ: Իրավապաշտպանների նկատմամբ բռնության համապատասխան դեպքերը

¹¹³¹ http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

¹¹³² http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2fC.12%2fARM%2fCO%2f2-3&Lang=en

¹¹³³ Օրինագիծը 2014 թվականին «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի ջանքերով վերամշակվեց, հաշվի առնվեցին ՀՀ ոստիկանության, ՀՀ արդարադատության նախարարության նկատառումները, և այն կրկին ներկայացվեց տարբեր կառույցների: Հանդիպումներ կազմակերպվեցին ՀՀ արդարադատության նախարարությունում: 2014 թվականին օրինագիծը ուղարկվեց նաև ԱԺ բոլոր պատգամավորներին, նաև ԱԺ Պետական-իրավական մշտական հարցերի հանձնաժողով՝ 2000 ՀՀ քաղաքացիների ստորագրությունները պարունակող բացիկներով, որոնցով քաղաքացիները պահանջում են ընդունել օրինագիծը:

դատապարտող հայտարարությամբ հանդես է եկել նաև Պաշտպանի գլխավոր խորհրդականը¹¹³⁴: Այնուամենայնիվ, կին իրավապաշտպանների նկատմամբ կիրառված բռնության դեպքերը իրավապահ մարմինների կողմից պատշաճ արձագանքի չեն արժանացել, և միջոցներ չեն ձեռնարկվել հետազայում նման դեպքերը բացառելու համար¹¹³⁵:

Կանանց նկատմամբ խտրականության դրսևորում է նաև, երեխաների իգական սեռով պայմանավորված, հղիության արհեստական ընդհատումը: Այսպես, կանանց և տղամարդկանց սեռերի հարաբերակցության նորմայից շեղումը Հայաստանում սկսել է նկատվել դեռևս 1991 թվականից, և 2000 թվականին այն հասել է մինչև 120 տղա 100 աղջիկ հարաբերակցության այն դեպքում, երբ նորման պետք է լինի 102-103 տղա 100 աղջկա դիմաց¹¹³⁶: Ընդ որում, այս միտումն առավել վառ արտահայտվում է երկրորդ և երրորդ հղիության ժամանակ՝ հասնելով 160 տղա 100 աղջիկ հարաբերակցության: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի համագործակցությամբ 2011 թվականին իրականացված հետազոտությունը հաստատեց, որ նորածինների սեռերի շեղված հարաբերակցությունը նախաձննդյան փուլում երեխայի սեռի ընտրության արդյունք է¹¹³⁷: Նշված խնդրի հիմնական նախապայմանները երեքն են. արու զավակ ունենալու նախապատվությունը, որը պայմանավորված է Հայաստանում ավանդաբար հաստատված հայրական գծի գերակայությամբ, նախաձննդյան շրջանում կիրառվող բժշկական և վերարտադրողական նոր տեխնոլոգիաները, որոնք ծնողներին թույլ են տալիս վաղ փուլում իմանալ երեխայի սեռը և խուսափել իրենց համար «անցանկալի» իգական սեռի երեխայի ծնունդից, ինչպես նաև ծնելիության անկումը, որի արդյունքում Հայաստանում դժվարացել է ընտանիք ունենալը, և կրկնակի հղիությունը հաճախ կապվում է արու զավակ ունենալու ցանկության հետ¹¹³⁸: Ելնելով հարցի կարևորությունից՝ մի շարք միջազգային կազմակերպություններ կոչ են արել պետություններին հրատապ միջոցներ ձեռնարկել դրա վերացման ուղղությամբ¹¹³⁹: 2011 թվականի ԵԽԽՎ-ի թիվ 1829 հանձնարարականով

¹¹³⁴ 2014թ. մայիսի 5-ին՝ Հասանիկ Խաչատրյանի գործով դատական նիստից հետո, Գավառ քաղաքում նրան աջակցելու համար այնտեղ գտնվող իրավապաշտպանների հասցեին որոշ քաղաքացիների կողմից բռնության ենթարկելու սպառնալիքներ և հայհոյանքներ են հնչեցվել, կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների գործունեությունը որակվել է որպես «հայ ընտանիքները քանդող», իսկ կազմակերպությունների ներկայացուցիչներին ատելության կոչերով հորդորել են հեռանալ: http://pashtpan.am/library/view_news/article/1172

¹¹³⁵ Օրինակ՝ «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի պնդմամբ՝ ՀՀ ոստիկանությունը վերջինիս նկատմամբ բռնությունների կապակցությամբ արձանագրել է, որ հնարավոր չի եղել պարզել անհատ օգտատերերի իրական անունները, ինչի հետևանքով նրանք մնացել են անպատիժ:

¹¹³⁶ http://unfpa.am/sites/default/files/Sex-selective_abortions_report_Arm.pdf

¹¹³⁷ Տես՝ նույն տեղում:

¹¹³⁸ http://unfpa.am/sites/default/files/Sex_Imbalance_report_Arm_final-with%20cover-final.pdf

¹¹³⁹ 1995թ. Պեկինում անցկացված Կանանց մասին 4-րդ համաշխարհային գիտաժողովի ժամանակ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը նկարագրվել է որպես կանանց դեմ բռնության դրսևորում: Երեք տարի անց ՄԱԿ-ի Գլխավոր գազաթնաժողովում «Աղջիկ երեխաների մասին» բանաձևը հավանության արժանացավ, և Պետություններին կոչ արվեց «ընդունել և կիրառել օրենսդրություն»: Ինչպես Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն (CEDAW), այնպես էլ ԵԽ Նախարարների կոմիտեն կոչ են արել կառավարություններին ընդունել սեռով պայմանավորված

Հայաստանին հանձնարարվել է, ի թիվս այլ գործողությունների, նախնառաջ ուսումնասիրել սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման պատճառները, քայլեր ձեռնարկել կանանց դերի բարձրացման ուղղությամբ, ապահովել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող իրավական նորմերի կիրառումը, ինչպես նաև աշխատանքներ իրականացնել համապատասխան բուժաշխատողների հետ՝ ներկայացնելով խնդիրը և վերջինիս հնարավոր հետևանքները¹¹⁴⁰: 2014 թվականին ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով բուժաշխատողին արգելվում է մինչև հղիության 30 շաբաթը լրանալը ապագա երեխայի սեռի վերաբերյալ գրավոր կամ բանավոր կամ որևէ այլ եղանակով տվյալներ ներկայացնել հղի կնոջը կամ նրա ընտանիքի անդամներին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են բժշկական կամ այլ ցուցումներ: Նախագիծը քննարկումների արդյունքում լրամշակվել է, սակայն 2014 թվականին խնդրին օրենսդրական լուծում այդպես էլ չի տրվել: Ավելին, դրական համարելով խնդրին օրենսդրական կարգավորում տալու գործադիրի նախաձեռնությունը՝ անհրաժեշտ է նշել, որ խնդրի բացառապես օրենսդրական ճանապարհով կարգավորումը լիարժեք կերպով չի ապահովի ակնկալվող արդյունքները: Մասնավորապես, անհրաժեշտ է համալիր միջոցառումներ ձեռնարկել ուղղված սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման վտանգավոր հետևանքների վերաբերյալ բնակչության իրավագիտակցության բարձրացմանը, հասարակության մեջ կանանց դերի բարձրացմանը, ինչպես նաև կանանց և տղամարդկանց հավասար արժևորման խթանմանը¹¹⁴¹:

Կանանց նկատմամբ բռնության ձևերից է նաև թրաֆիքինգը¹¹⁴²: Հետազոտությունների համաձայն՝ աղջիկները կազմում են թրաֆիքինգի զոհերի յուրաքանչյուր երեքից երկուսը, իսկ կանանց հետ միասին՝ ամբողջ աշխարհի թրաֆիքինգի զոհերի 70%-ը¹¹⁴³: Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2012-ից մինչ 2014 թվականի առաջին կիսամյակը ներառյալ Հայաստանում թրաֆիքինգի հատկանիշներով հարուցվել է 31 քրեական գործ, որով հայտնաբերվել և տուժող է ճանաչվել 39 անձ, իսկ մեղադրանք է առաջադրվել 29 անձի: Հարուցված գործերի շրջանակում հայտնաբերված թրաֆիքինգի զոհերի մեծամասնությունը (28) կանայք են, 10-ը՝ տղամարդիկ, ընդ որում՝ զոհերից 14-ը

հղիության արհեստական ընդհատումն արգելելու վերաբերյալ ազգային օրենսդրություն: Իսկ հղիության՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների մասին 2011թ. իր բանաձևում ԵԽԽԿ-ն ընդգծել է, որ «սաղմի սեռի պատճառով հղիությունը չջարտնակելու վերաբերյալ կանանց նկատմամբ գործադրվող հասարակության և ընտանիքի անդամների ճնշումները պետք է դիտվեն որպես հոգեբանական բռնություն, և որ հղիության բռնի ընդհատման դեպքերը պետք է քրեականացվեն:

¹¹⁴⁰ http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7_28

¹¹⁴¹ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, ՄԱԿ-ի կանայք կազմակերպությունը և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, համապատասխան օրենսդրություն ընդունելուց բացի, առաջարկել են մի շարք գործողություններ, որոնցում պետք է ներգրավվեն կառավարությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: <http://www.coe.am/pressreleases.php?id=547>

¹¹⁴² ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 132

¹¹⁴³ https://www.unodc.org/documents/data-and-analysis/glotip/GLOTIP_2014_full_report.pdf

հանցագործության կատարման ժամանակ եղել է անչափահաս¹¹⁴⁴: Ավելին, չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում թրաֆիքինգի ամենատարածված ձևը սեռական շահագործումն է՝ հանդիպում են նաև աշխատանքային թրաֆիքինգի դեպքեր: Կանայք հաճախ թրաֆիքինգի զոհ են դառնում սոցիալական վատ պայմանների, ընտանեկան բռնության, ինչպես նաև երևույթի վերաբերյալ իրազեկման պակասի պատճառով: Հայաստանն այսօր տարածաշրջանի միակ երկիրն է, որն ընդգրկված է ԱՄՆ պետքարտուղարության գեկույցի առաջին խմբում, որում ներկայացված երկրները լավագույնս են իրականացնում թրաֆիքինգի դեմ կատարվող աշխատանքները¹¹⁴⁵: Սակայն նույն գեկույցում մի շարք հանձնարարականներ են ներկայացվել Հայաստանին՝ աշխատանքային թրաֆիքինգի զոհերի նույնականացման, զոհերի հետ շփման օղակի աշխատակիցների ուսուցման, դատավորների՝ թրաֆիքինգի զոհերի հետ աշխատելու վերաբերյալ ուսուցման, զոհերի վերահետեզման, նրանց անվտանգության ապահովման և փոխհատուցման և այլ հարցերի վերաբերյալ:

Վավերացնելով ՄԱԿ-ի կոնվենցիան՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է նաև միջոցներ ձեռնարկել հասարակական և քաղաքական կյանքում կանանց նկատմամբ խտրականության վերացման ուղղությամբ: Եվ չնայած 2010 թվականից ի վեր պետության կողմից ձեռնարկվել են որոշակի քայլեր՝ հասարակական և քաղաքական ոլորտներում կանանց ակտիվ մասնակցության ապահովման ուղղությամբ՝ այնուամենայնիվ, ներկայում կանանց ցածր ներգրավվածության մակարդակը փաստում է, որ ձեռնարկված քայլերը բավարար չեն, և հասարակության մեջ շարունակում են գերիշխել կնոջ դերի մասին գենդերային կարծրատիպերը: 2014 թվականի նոյեմբերին Ժնևում կայացած Պեկին +20 համաժողովի շրջանակներում ընդունվեցին մասնակից պետությունների համար մի շարք հանձնարարականներ, որոնց մեջ ներառվել են նաև կանանց հասարակական և քաղաքական կյանքի լիարժեք մասնակցությանը վերաբերող մի շարք դրույթներ և հանձնարարականներ, որոնք ուղղված են որոշումների կայացման մակարդակում, տնտեսական կառավարման, ընտրությունների և այլ գործընթացներում կանանց լիարժեք մասնակցության համար մատչելիության ապահովմանը¹¹⁴⁶:

Չնայած նախորդ տարիներին ձեռնարկված որոշ միջոցներին¹¹⁴⁷, 2014 թվականին կանայք շարունակել են պասիվ ներգրավվածություն ունենալ քաղաքական կյանքում և պետական մարմիններում որոշումների կայացման մակարդակում: Ներկայումս ՀՀ կառավարությունում 18 նախարարներից միայն երկուսն է կին, 67 փոխնախարարներից՝

¹¹⁴⁴ <http://bit.ly/1FE3nSw>

¹¹⁴⁵ http://photos.state.gov/libraries/armenia/231771/PDFs/tip2014_arm.pdf

¹¹⁴⁶ http://www.unece.org/fileadmin/DAM/Gender/Beijing_20/ECE_AC_28_2014_2_e.pdf

¹¹⁴⁷ 2013 թվականին ընդունվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասին» ՀՀ օրենքը, 2014թ. ապրիլին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2014թ. միջոցառումների ծրագրին, մշակվել և ՀՀ Կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման պետական քաղաքականության ծրագրերի մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և այլն:

միայն 7-ը¹¹⁴⁸ այն դեպքում, երբ կանայք կազմում են բնակչության մոտ 51.9%-ը¹¹⁴⁹: Բարձրագույն պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների թվում կանայք կազմում են 14%, դատավորների թվում՝ 22%, իսկ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների թվում՝ 10.7%¹¹⁵⁰: Հայաստանի 866 գյուղական համայնքներից միայն 17-ն է ղեկավարվում կանանց կողմից, իսկ քաղաքային 49 համայնքներում կին ղեկավարներ չկան: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ կան մարզպետների երկու կին տեղակալներ և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարներ, իսկ քաղաքային համայնքի ղեկավարի կին տեղակալներ չկան: Ավելին, քաղաքային և գյուղական համայնքների ավագանիների կազմում տղամարդկանց թիվը մի քանի անգամ գերազանցում է կանանց, օրինակ՝ Լոռու մարզի քաղաքային համայնքի ավագանու կազմում ընդգրկված են 4 կին և 88 տղամարդ, Սյունիքում՝ 8 կին, 71 տղամարդ, Արմավիրի մարզում կանայք առհասարակ չկան, Շիրակի մարզի գյուղական համայնքի ավագանու կազմում ընդգրկված է 68 կին, 559 տղամարդ, Գեղարքունիքի մարզում՝ 45 կին և 501 տղամարդ և այլն: ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի կողմից 2014 թվականին իրականացված հետազոտության համաձայն¹¹⁵¹՝ կանանց քաղաքական մասնակցությանը խոչընդոտող պատճառներից է այն, որ հասարակությունը կարծրատիպերի պատճառով չի ընկալում կնոջը՝ որպես քաղաքական առաջնորդի և խնդիրներին լուծում գտնողի, աղավաղված է կանանց և տղամարդկանց իրավահավասարության գաղափարը: Որպես պատճառ նշվել է նաև կանանց անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ, ամուսնու և ընտանիքի այլ անդամների աջակցության, մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված հնարավորությունների բացակայությունը, ինչպես նաև անհավասար մրցակցությունն այն իմաստով, որ հաճախ կանայք ձևականորեն են մասնակցում ընտրություններին՝ թեկնածուների համար այլընտրանք ապահովելու համար¹¹⁵²: Տվյալ հետազոտության արդյունքներից պարզ դարձավ նաև, որ ՏԻՄ-ներում կանայք հաճախ ղեկավարում են այն համայնքները, որոնք ունեն սահմանափակ հնարավորություններ և բյուջե, ինչն էլ տղամարդկանց համար քաղաքական իշխանության համար պայքարը դարձնում է ոչ նպատակահարմար, իսկ համայնքը, համայնքի խնդիրները դիտարկելով կենցաղայինին մոտ, դրանք կարողանում են վստահել կանանց: Այս առումով անհրաժեշտ է խնդիրների

¹¹⁴⁸ <http://bit.ly/V1gwRB>

¹¹⁴⁹ <http://armstat.am/file/doc/99478213.pdf>

¹¹⁵⁰ Ի դեպ, «Միջխորհրդարանական միության» և «ՄՄԿ-կանայք» գործակալության կողմից ամեն տարի հրատարակվող «Կանայք քաղաքականության մեջ-2014» քարտեզի տվյալների համաձայն՝ կին պատգամավորների տոկոսը աշխարհում հիմա ռեկորդային բարձր է՝ 21.8%: Հայաստանը 115-րդ տեղում է հարևան երկրներից և Ռուսաստանից հետո: <http://bit.ly/1FHXPAl>

¹¹⁵¹ «ՏԻՄ ընտրություններում կանանց քաղաքական մասնակցությունը. խնդիրներ և հեռանկարներ» http://ysu.am/files/Hasmik_Shapaghatyan_Final_Report_ARM.pdf

¹¹⁵² 2014թ. մարտի 9-ի 40 համայնքի ղեկավարների ընտրություններին գրանցվել էր 28 ինքնաբացարկ, որից 4-ը կանայք էին՝ ինքնաբացարկների 13.8 տոկոս: Նշված 28 ինքնաբացարկից 23-ը՝ 82.14 տոկոս ապահովել էր մնացած միակ թեկնածուի հաղթանակ: Խնդիր է նաև այն, որ ինքնաբացարկ հայտնած կանանց կրկին կանանցով փոխարինելու օրենսդրական պահանջ չկա:

http://ysu.am/files/Hasmik_Shapaghatyan_Final_Report_ARM.pdf

լուծմանն ուղղված հստակ քայլեր ձեռնարկել: Մասնավորապես, կանանց քաղաքական մասնակցության լիարժեք ապահովման համար անհրաժեշտ է հզորացնել կանանց հնարավորությունները, վեր հանել վերջիններիս կրթական, տնտեսական, սոցիալական ներուժը, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ապահովել հավասար հնարավորությունների ապահովումը, փոփոխել իրավական դաշտը, ՁԼՄ-ներով, քարոզարշավներով և այլ միջոցառումներով նպաստել կանանց դերի վերաբերյալ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացմանը՝ հանրությանը ներկայացնելով կանանց քաղաքական, սոցիալական կերպարներ և այլն:

2014 թվականին կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության հարցում դրական առաջընթաց չի նկատվել: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության վիճակագրական տվյալներով՝ 2014 թվականին կանանց գործազրկությունը կազմել է 72.3%¹¹⁵³: Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիայի կողմից կատարված վերլուծության համաձայն¹¹⁵⁴՝ չնայած ՀՀ օրենսդրությամբ ամրագրվում է հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքը՝ արգելելով սեռի հատկանիշով տարաբաժանումը աշխատաշուկայում և զբաղվածության ոլորտում՝ սակայն, փաստացի, գոյություն ունի կանանց նկատմամբ ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և սեկտորների) խտրականություն: Արդյունքում, հանրապետության մասշտաբով կանանց միջին ամսական եկամուտը կազմում է տղամարդկանց եկամտի 59%-ը, իսկ միջին ամսական աշխատավարձը՝ տղամարդկանց աշխատավարձի 64,4%-ը: Աշխատաշուկայում կանանց առջև ծառայած խնդիրը ոչ միայն աշխատատեղերի մատչելիությունն է, այլև խտրականությունը աշխատանքի ընդունվելիս, երբ նրանք, չնայած կրթվածության և որակավորման բարձր մակարդակին, հաճախ կախված են գործատուի նախասիրություններից, օրինակ՝ բարետես արտաքին, երիտասարդ տարիք, ընտանեկան կարգավիճակ և այլն: Կանանց հետ առանց իրավական հիմքերի մեծ մասամբ կնքվում են կարճաժամկետ աշխատանքային պայմանագրեր, նրանք ավելի հաճախ են զբաղված լինում ոչ լրիվ աշխատանքային օրով, տեղավորվում ժամանակավոր աշխատանքի, նրանց առաջին հերթին են ազատում աշխատանքից՝ մեծ մասամբ առանց հիմնավոր պատճառի: Խնդրի վերաբերյալ որոշ դեպքեր արձանագրվել են նաև ՀԿ-ների կողմից և վերաբերել են նախածննդյան և հետծննդյան շրջանում, ինչպես նաև երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի ժամանակահատվածում օրենսդրությամբ նախատեսված իրավունքներից օգտվելու սահմանափակմանը: Մասնավորապես, արձանագրվել են դեպքեր, երբ աշխատանքային պայմանագրի փոխարեն կնոջ հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, ինչի հետևանքով կինը զրկվել է նախածննդյան և հետծննդյան ժամանակահատվածում աշխատատեղը պահպանելու, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու իր իրավունքից:

¹¹⁵³ <http://employment.am/am/125/LinkPage.html>

¹¹⁵⁴ <http://bit.ly/1H5aAN8>

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ քաղաքացիական ծառայող կինը երեխայի ծնունդից հետո վերցրել է իրեն հասանելիք երեք տարի արձակուրդը, սակայն մեկ տարի նա ստիպված է եղել ինքնուրույն ֆինանսապես ապահովել իրեն երեխային, քանի որ գործատուն հրաժարվել է ընդունել արձակուրդից շուտ վերադառնալու իր դիմումը: Մտահոգիչ է նաև 1 տարուց ավելի գործազուրկի կարգավիճակ ունեցողների կազմում կանանց բարձր մասնաբաժինը (ավելի քան 80%): Կանայք երկարատև գործազրկության հետևանքով կորցնում են որակավորումը և աշխատանքի տեղավորվելու համար ոչ միայն մասնագիտական ուսուցման, հաճախ նաև բարոյական և հոգեբանական աջակցության և վերականգնման կարիք են ունենում:

Աշխատանքային հարաբերություններում առկա խնդիրներից մեկը, որն ուղղակիորեն առնչվում է նաև սոցիալական ապահովության իրավունքին, վերաբերում է մայրության նպաստի հաշվարկման և վճարման պայմաններին: Այսպես, 2014 թվականի սեպտեմբերին ՀՀ Կառավարությունը հավանության էր արժանացրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված ««Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որում առկա էին մի շարք խնդրահարույց կարգավորումներ: Մասնավորապես, նախագծով էապես կրճատվում էր նախաձեռնության և հետձեռնության 140 օրվա համար տրամադրվող գումարը, անձը ստանում էր մայրության նպաստ՝ մինչև գործատուի մոտ աշխատելու նախապայմանի բավարարման դեպքում, ինչպես նաև նշված կարգավորումները հանգեցնում էին բարձր վարձատրվող անձանց մայրության նպաստների էական և անհամաչափ կրճատման՝ հաշվի չառնելով բարձր աշխատավարձերի դեպքում կանանց կողմից պետությանը վճարվող եկամտային հարկի համապատասխանաբար բարձր չափը: Նշվածը մտահոգություն էր առաջացրել հանրության լայն շերտերի, իրավապաշտպանների շրջանում: Հետագայում սկզբնական նախագիծը լրամշակվեց և ընդունվեց նոր տարբերակով: Մասնավորապես, «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքում 2014 թվականին ՀՕ-206-Ն օրենքով կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվեց մայրության և ծննդաբերության նպաստի առավելագույն շեմ, որը կազմում է նվազագույն աշխատավարձի 15-ապատիկը կամ 1 մլն դրամ¹¹⁵⁵, այսինքն՝ առավելագույն նպաստը կարող է կազմել 4,6 մլն դրամ: Մինչդեռ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած տվյալների համաձայն՝ Հայաստանում 1 մլն դրամից բարձր աշխատավարձ ստացող 400 կին կա: Ստացվում է, որ նշված կանայք զրկվել են իրենց աշխատավարձին համաչափ մայրության և ծննդաբերության նպաստ ստանալու իրավունքից: Նշված չափը գերազանցող գումարից մայրության նպաստը նշանակելու և վճարելու հայեցողությունը, ըստ օրենքի, տրվել է գործատուներին¹¹⁵⁶, սակայն նման հայեցողությունը կարող է տարբերակված մոտեցումների, գործատուների կողմից անբարեխիղճ վերաբերմունքի

¹¹⁵⁵ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 5

¹¹⁵⁶ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 16

պատճառ դառնալ: Նշենք նաև, որ ՀՕ-206-Ն օրենքի նախագիծը, հակառակ օրենսդրական պահանջին, չի ներկայացվել Պաշտպանին կարծիքի¹¹⁵⁷, ինչպես նաև նախագծի վերաբերյալ նախօրոք չեն կազմակերպվել պատշաճ հանրային քննարկումներ: Այնինչ, նախագիծ մշակող մարմինը նորմատիվ իրավական ակտի նախագիծն ազդեցության գնահատողներին ներկայացնելու հետ մեկտեղ կազմակերպում է նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ, որոնց նպատակը նորմատիվ իրավական ակտի նախագծի մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց իրազեկումն է, ինչպես նաև նրանցից կարծիքների հավաքումն ու դրանց հիման վրա նորմատիվ իրավական ակտի նախագծի անհրաժեշտ լրամշակման աշխատանքների իրականացումը¹¹⁵⁸:

2014 թվականին մի շարք խնդիրներ են արձանագրվել նաև կանանց առողջության պահպանման իրավունքի առումով: ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման դեմ պայքարի կոմիտեն դեռևս 2009 թվականին Հայաստանի վերաբերյալ իր հանձնարարականներում նշել էր, որ անհրաժեշտ է համապատասխան միջոցներ ձեռնարկել հատկապես գյուղաբնակ կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովման, ինչպես նաև վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման ծառայությունների ընդլայնման ուղղությամբ¹¹⁵⁹, մինչդեռ ոլորտի մի շարք խնդիրներ մինչ օրս լուծում չեն ստացել: Այսպես, 2014 թվականին դեռևս չի ապահովվել բժշկական ծառայությունների մատչելիությունը մարզերում և գյուղերում: Այստեղ կանայք հնարավորություն չեն ունենում լիարժեք կերպով հետազոտությունների ենթարկվել և բուժում ստանալ բուժհաստատությունների ոչ պատշաճ պայմանների պատճառով, իսկ նրանցից շատերը հնարավորություն չեն ունենում այցելել քաղաքներում կամ մայրաքաղաքում գտնվող բուժհաստատություններ: 2014 թվականին մարզեր կատարած այցերի արդյունքում ՀՀ առողջապահության նախարարը ևս հավաստեց այն, որ մարզերի բուժհաստատություններն ունեն նյութատեխնիկական և կադրային հագեցվածության խնդիրներ¹¹⁶⁰: Ինչ վերաբերում է վերարտադրողական առողջության խնդիրներին, ապա ըստ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի՝ ներկայումս Հայաստանում անպտղության ցուցանիշները հասել են վտանգավոր շեմի՝ 17%-ի, մինչդեռ Առողջության համաշխարհային կազմակերպության կողմից վտանգավոր շեմ սահմանվել է 15%-ը¹¹⁶¹: Ընդ որում, առաջնային անպտղությունը 5% է, երկրորդայինը՝ 12%, ինչի հիմնական պատճառները հղիության արհեստական ընդհատումն ու սեռավարակներն են, որոնք էլ իրենց հերթին գիտելիքների, տեղեկացվածության ու սեռական կրթության պակասի հետևանքն են: Պետք է նշել, որ հաճախ վերարտադրողական առողջության մասին տեղեկություններ դեռահասները ստանում

¹¹⁵⁷ ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի թիվ 174-Ն հրամանագիր, Հավելված, կետ 42

¹¹⁵⁸ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 27.1, մաս 4

¹¹⁵⁹ <http://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opensslpdf.pdf?reldoc=y&docid=52dd05364>

¹¹⁶⁰ <http://168.am/2014/07/19/389103.html>

¹¹⁶¹ http://civilnet.am/2014/07/24/c-academy-unfpa-garik-hayrapetyan-img_0231-6/#.VO1FE9LLc6g;

<http://med.news.am/arm/news/1705/abotnern-u-seravaraknery-anptxutyanyan-himnakan-pattcharnarn-en.html>

են ոչ թե դպրոցում կամ ԲՈՒՀ-ում համապատասխան մասնագետների կողմից, այլ համացանցից, տարեկից ընկերներից, այն էլ՝ հաճախ ոչ ճիշտ:

Բացի դրանից՝ վերարտադրողական ծառայություններից օգտվելիս հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները բուժառայությունների անմատչելիության, բուժանձնակազմերի ոչ լիարժեք պատրաստվածության և կարծրատիպային կամ ոչ պատշաճ վերաբերմունքի, անգամ որոշ օրենսդրական բացերի հետևանքով հաճախ ենթարկվում են խտրականության¹¹⁶²: Խնդրի վերաբերյալ կատարված հետազոտությունը ցույց է տվել, որ հարցմանը մասնակցած ընդունարանի աշխատակիցների 13%-ը համարում է, որ իրավունք ունի մերժել հաշմանդամություն ունեցող հիվանդին մատուցել համապատասխան ծառայություն՝ հիմնավորելով դա բժշկական հաստատության, իրենց ունեցած սարքավորումների անմատչելիությամբ: Պարզվել է նաև, որ մի շարք բուժհաստատություններ իրենց առջև խնդիր չեն դնում իրենց ծառայությունները ներառական և մատչելի դարձնել նաև հաշմանդամություն ունեցող կանանց համար:

Մեկ այլ խնդիր վերաբերում է ՄԻԱՎ-ով ապրող կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիությանը: Հայաստանում ՄԻԱՎ-ի արձանագրված դեպքերի 75%-ը առնչվում է միգրացիային, և կանայք, լինելով միգրանտների զուգընկեր, առավել խոցելի են համարվում ՄԻԱՎ-ի նկատմամբ¹¹⁶³: Կանայք հաճախ հասարակության կողմից խարանի, ամոթի պատճառով խուսափում են բարձրաձայնել խնդրի մասին: Չնայած նրան, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ բոլոր մարդիկ ունեն բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հավասար իրավունք¹¹⁶⁴՝ այնուամենայնիվ, գրանցվել են դեպքեր, երբ կանայք խտրականության են ենթարկվել հենց առողջապահական հաստատություններում բժիշկների կողմից: Որոշ դեպքերում կնոջը մերժել են համապատասխան բժշկական ծառայություններ մատուցել¹¹⁶⁵: Պատճառն այն է, որ հասարակությունում դեռևս պահպանվում են սխալ մոտեցումները և պատկերացումները ՄԻԱՎ-ի, դրա փոխանցման ուղիների վերաբերյալ, ինչի արդյունքում խախտվում են անձի անձեռնմխելիության և բժշկական գաղտնիքի պահպանման սկզբունքները, նրա առողջության պահպանման իրավունքը:

Չնայած ընտանիքների բարեկեցության ապահովման, գյուղատնտեսության և համայնքի զարգացման մեջ իրենց մեծ դերին՝ գյուղաբնակ կանանց ևս հաճախ ենթարկվում են խտրականության: Այսպես, գյուղատնտեսության ոլորտում զբաղված է հանրապետության աշխատանքային ռեսուրսների շուրջ 45%-ը, այսինքն՝ շուրջ 500 հազ. մարդ, որից 60%-ը կանայք են, ինչը կանանց դարձնում է գյուղատնտեսության զարգացման առավել կարևոր մասնակից: Ընդ որում, տղամարդկանց զբաղվածության կառուցվածքում գյուղատնտեսությանը բաժին է ընկնում 31%-ը, իսկ կանանց

¹¹⁶² <http://disabilityinfo.am/wp-content/uploads/2015/02/Research-report- Zaruhi-Batoyan-ARM.pdf>

¹¹⁶³ <http://med.news.am/arm/news/4260/2014-tvakanin-hayastanum-grancvel-e-miav-varaki-1924-depq.html>

¹¹⁶⁴ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, հոդված 4

¹¹⁶⁵ <http://www.aravot.am/2014/07/07/477755/>

զբաղվածության կառուցվածքում՝ 45%-ը¹¹⁶⁶: Ըստ էության, գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը ստեղծվում է կանանց կողմից, և նրանք համարվում են սննդամթերքի մատակարարման և գյուղական վայրերում տնային տնտեսությունների զոյատևման հիմնական երաշխավորները: Սակայն, միաժամանակ արտադրական ռեսուրսները, ինչպիսիք են հողը, աշխատուժը, վարկերը, կապիտալը, ինչպես նաև այդ ռեսուրսների վերահսկումը, լիարժեք հասանելի չեն նրանց համար: Ավելին, Հայաստանում կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում առկա հիմնախնդիրները առավել սուր են անդադառնում վերջիններիս վրա կենսական վատ պայմանների, սահմանափակ հնարավորությունների և զարգացման հեռանկարների բացակայության պատճառով: Կանայք հաճախ աշխատում են այնպիսի պայմաններում, որոնք անդառնալի վնաս են հասցնում իրենց առողջությանը. կատարում են ծանր ֆիզիկական աշխատանք: Գյուղատնտեսության ոլորտում աշխատող կանայք հիմնականում տնտեսության ոչ ֆորմալ հատվածի աշխատողներ են և հանդիպում են բազմաթիվ հավելյալ դժվարությունների, ինչպիսիք են՝ ցածր և ոչ կայուն եկամուտներ, մեծ ծախսեր, վատ աշխատանքային պայմաններ, երկար աշխատանքային օր, իրավական ցածր պաշտպանվածություն և այլն: Բացի դրանից՝ Գործատուների հանրապետական միության կողմից իրականացված դիտարկումների արդյունքները ցույց են տվել, որ, ընդհանուր առմամբ, օրենսդրական առումով որևէ սահմանափակում չկա գյուղի և քաղաքի կանանց միջև բիզնես հիմնելու համար, սակայն անգամ փոքրիկ վարսավիրանոց աշխատեցնելու համար գյուղի կանայք ավելի շատ խոչընդոտների են հանդիպում, իսկ այդ խոչընդոտներն առկա են բիզնեսի բոլոր ճյուղերում¹¹⁶⁷: Սրա պատճառը, նախևառաջ, փոքր շուկան է և տվյալ համայնքի մարդկանց վճարունակության ցածր մակարդակը: Այս բոլոր հիմնախնդիրները վկայում են, որ նրանք լրացուցիչ պաշտպանության և իրենց հնարավորությունների ընդլայնման ու ներուժի արդյունավետ օգտագործման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկման կարիք ունեն:

¹¹⁶⁶ <http://womennet.am/18389/>

¹¹⁶⁷ <http://bit.ly/19C0RAp>

6.7 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Անձի առողջության, բարեկեցության ապահովման, ինչպես նաև պետության սոցիալ-տնտեսական զարգացման համար կարևոր նախապայման է բնապահպանական իրավունքների լիարժեք իրացումը: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը: Սահմանադրությամբ ամրագրվում են նաև յուրաքանչյուր անձի՝ իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքը և անձամբ և այլոց հետ համատեղ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման պարտավորությունը: Այս իրավունքների ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մի շարք միջազգային պայմանագրեր և ընդունել բազմաթիվ ներպետական օրենսդրական ակտեր, այնուհանդերձ, վերջիններիս իրականացման և անձանց բնապահպանական իրավունքների ապահովման առումներով առկա են մի շարք խնդիրներ, որոնք բարձրաձայնվել են տարիներ շարունակ, սակայն 2014 թվականին նույնպես լուծում չեն ստացել:

Շրջակա միջավայրի պահպանության կարևորագույն իրավական գործիքներից է «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի 1998 թվականի կոնվենցիան (Օրհուսի կոնվենցիա), որը Հայաստանի կողմից վավերացվել է 2001 թվականին: Օրհուսի կոնվենցիան ամրագրում է հասարակայնության իրավունքը՝ մասնակցելու էկոլոգիական քաղաքականության մշակմանը և իրականացմանը, և նպաստում է շրջակա միջավայրի որակի բարելավմանը: Կոնվենցիան ամրագրում է 3 հիմնական սկզբունքներ՝ պետության կողմից տնօրինվող էկոլոգիական տեղեկատվության մատչելիության ապահովումը, հասարակայնության մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին, էկոլոգիական իրավունքների խախտման համար դատական և արտադատական պաշտպանության դիմելու իրավունքի ճանաչումը: Ինչպես նաև, այն պահանջում է անդամ պետություններից միջոցներ ձեռնարկել՝ ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնելու Կոնվենցիայի սկզբունքներին, մինչդեռ Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն արդեն 3 որոշում է կայացրել առ այն, որ Հայաստանի Հանրապետությունը արդյունավետ չի ապահովում Կոնվենցիայի իրականացումը¹¹⁶⁸:

Այսպես, 2014 թվականի հունիսի 21-ին ընդունված նոր «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում (Օրենք) կան մի շարք բացթողումներ և թերություններ, որոնք հակասության մեջ են Հայաստանի կողմից վավերացված Օրհուսի կոնվենցիայի պահանջների հետ և խոչընդոտում են

¹¹⁶⁸ Կոնվենցիային միացած մոտ 50 երկրներից այս ընթացքում 10-ից էլ պակաս երկրների աշխատանքն է բացասական գնահատվել, օրինակ՝ Հայաստանի, Թուրքմենստանի, Ղազախստանի: Նման վերջին որոշումը Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության Կոմիտեի կողմից կայացվել է 2014 թվականի հունիսին, և դրա պատճառը արդարադատության մատչելիության սկզբունքի խախտումն է:

բնապահպանական մի շարք խնդիրների լուծմանը: Սյսպես, մինչ Օրենքի ընդունումը գործում էր «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (1995թ.), որի գործողության ընթացքում Կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն իր կայացրած որոշումներում¹¹⁶⁹ անդրադարձել էր ՀՀ օրենսդրության և պրակտիկայի անհամապատասխանությանը Կոնվենցիային և առաջարկել փոխել օրենսդրությունը՝ համապատասխանեցնելով այն Կոնվենցիայի դրույթներին¹¹⁷⁰: Մասնավորապես, Կոմիտեն նշել է, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներն, ինչպես նաև հանրային մասնակցության մեխանիզմները պարզեցման կարիք ունեն¹¹⁷¹, անհրաժեշտ է վերացնել բոլոր տեսակի խոչընդոտները: Օրենսդրական վերջին փոփոխությունների հետևանքով, սակայն, այդ գործընթացն ավելի է բարդացվել, իսկ հանրային մասնակցությունը այդ գործընթացում՝ հասցվել նվազագույնի: 1995 թվականի օրենքում հստակ նշված էր բնապահպանական փորձաքննության գործընթացին մասնակցող յուրաքանչյուր մարմնի՝ հանրությանը ծանուցելու պարտավորությունը¹¹⁷², սակայն նոր օրենքում պարտականությունները հստակ բաշխված չեն, և պարզ չէ գործընթացի փուլերի հաջորդականությունը: Բացի դրանից՝ փոփոխությունների արդյունքում օրենքից հանվել են նաև համայնքի կամ շահագրգիռ կողմերի պահանջով փորձաքննություն իրականացնելու, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում այլընտրանքային լուծումները դիտարկելու պահանջները: Փոխարենը, Օրենքում ավելացվել է մի խնդրահարույց դրույթ, որը խառնաշփոթ է ստեղծում շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման հարցում և նվազեցնում դրա արդյունավետությունը: Մասնավորապես, նոր դրույթի համաձայն՝ փորձաքննության կարող են ներկայացվել ոչ թե գործունեության տեսակները, այլ այն սարքավորումները, որոնց միջոցով իրականացվում են համապատասխան նախագծեր¹¹⁷³: Միաժամանակ, Օրենքը չի նախատեսում ամբողջական մեխանիզմներ, որոնցով կիրականացվեն ցանկացած նախագծի/ծրագրի իրականացումից տնտեսությանը տրվող օգուտների, ինչպես նաև բնապահպանությանը հասցվող վնասների համեմատական վերլուծություն, համալիր գնահատում, և որի իրականացման արդյունքը ցույց կտա նշված օգուտների և վնասների հարաբերակցությունը: Թեև Օրենքը նախատեսում է, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատում է ՀՀ կառավարությունը¹¹⁷⁴, սակայն մտահոգիչ է, որ նշված հարցը կարգավորող իրավական ակտի նախագիծը նախապես չի մշակվել և ներկայացվել ՀՀ

¹¹⁶⁹ <http://www.unece.org/env/pp/ccimplementation.html>

¹¹⁷⁰ <http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/cep43e.pdf>

¹¹⁷¹ Decision IV/9a on compliance by Armenia with its obligations under the Convention, 4(a)

<http://bit.ly/1vqBkOC> ,

Decision V/9a on compliance by Armenia 4(c)(i), <http://bit.ly/186JLt6>

Օրհուսի կոնվենցիայի (Կոնվենցիա) հոդված 3

¹¹⁷² <http://bit.ly/1FcIFaf>

¹¹⁷³ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդված 9

¹¹⁷⁴ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, հոդված 17, մաս 4

կառավարություն Օրենքի նախագծի ներկայացման հետ միաժամանակ¹¹⁷⁵: Արդյունքում, Օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից բազմաթիվ թույլտվություններ են տրվել տարբեր տեսակի գործունեությունների համար՝ առանց հաշվի առնելու վերը հիշատակված օգուտների և վնասների հարաբերակցության վերաբերյալ վերլուծության պահանջը: Այսպիսով, հիմնականում չեն կատարվել Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի թիվ IV/9a որոշման պահանջները:¹¹⁷⁶

Անձի՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի իրացման խոչընդոտներից է նաև փոքր ՀԵԿ-երի ներդրման հետևանքով ջրային ռեսուրսների գերօգտագործման, գետերի էկոհամակարգերի վնասման և դրա արդյունքում բնակչության սոցիալական վիճակի վատթարացման խնդիրը: Այսպես, 2014 թվականին մի շարք հասարակական կազմակերպություններ բազմիցս բարձրաձայնել են, որ փոքր ՀԵԿ-երի (ՓՀԵԿ) շահագործումը շատ դեպքերում ուղեկցվել է մի շարք խախտումներով: Շահագործման ընթացքում, երբ չի ապահովվում պատշաճ էկոլոգիական թողք¹¹⁷⁷, այսինքն՝ ՓՀԵԿ-ի կողմից օգտագործվում է թույլատրելի քանակից ավելի ջուր, գետերը կանգնում են չորացման վտանգի առաջ: Բնապահպանների կողմից կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ ՓՀԵԿ-երի շահագործման հետևանքով ուսումնասիրված 47 գետերից 16-ը՝ ճգնաժամային (Ամբերդ, Դարբ, Վարարակ, Փամբակ, Գեղարոտ, Մեղրի, Վաղուտ, Լորաձոր, Դարանակ, Գիժգետ, Այրի, Պաղջուր, Կարակայա, Գողթ, Գետիկ, Մարց), իսկ 3-ը աղետալի վիճակում են (Կիստում, Այասա, Եղեգիս (Էլեգիս))¹¹⁷⁸: Ավելին, ՓՀԵԿ-երի նախագծման և ներդրման ընթացքում հիմնականում հաշվի չեն առնվել ջրային կենդանական աշխարհի պահանջները, և միաժամանակ չի ուսումնասիրվել և գնահատվել լեռնային գետերի ջրի ռեժիմի ազդեցությունը ջրային և ափամերձ էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա: Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի շրջանակներում 2014 թվականի ընթացքում իրականացված մոնիտորինգի արդյունքում պարզ է դարձել, որ ձկների համար ձվադրման վայր հանդիսացող գետերի վրա կառուցված ՓՀԵԿ-երը հիմնականում չունեն ձկնապահպանման պատշաճ կոնստրուկցիաներ և ուղղակիորեն սպառնում են հասուն ձկնատեսակների գոյությանը, քանի որ վերջինները չեն կարողանում բարձրանալ գետի ակունք ձվադրման համար¹¹⁷⁹: Բացի դրանից՝ ՓՀԵԿ-երի կառուցումն իր հետ բերում է նաև այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են

¹¹⁷⁵ Օրենքն ընդունվել է 2014 թվականի հունիսի 21-ին, իսկ «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելու վերջնաժամկետ է նախատեսված 2015 թ. մարտի 3-րդ տասնօրյակը: (ՀՀ վարչապետի 19.08.2014 թվականի թիվ 782-Ս որոշում)

¹¹⁷⁶ Decision IV/9a on compliance by Armenia with its obligations under the Convention <http://bit.ly/1vqBkOC>

¹¹⁷⁷ *Էկոլոգիական թողք*՝ ջրի նվազագույն ելք, որն ապահովում է ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռությունը և ինքնավերականգնումը: (ՀՀ ջրային օրենսգիրք)

¹¹⁷⁸ «Փոքր ՀԵԿ-երի սոցիալ-էկոլոգիական ազդեցության վերլուծություն» զեկույց, հրատարակված՝ 2014 թվականի հունիսի 4-ին, Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան, մանրամասն՝ <http://bit.ly/1CgLzHV>

¹¹⁷⁹ ՄԱԿ-ի՝ «Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիայի՝ ՀՀ 5-րդ ազգային զեկույց, էջ 49, <http://bit.ly/1Fy3MEn>

անտառահատումները¹¹⁸⁰, իսկ ջրային ռեսուրսների ոչ ճիշտ օգտագործումը մեծ ազդեցություն է ունենում համայնքների սոցիալական վիճակի վրա՝ համայնքին թողնելով առանց ռոռզման և խմելու ջրի, ինչի հետևանքով նվազում են գյուղմթերքների արտադրությունը և բնակիչների եկամուտը¹¹⁸¹: ՀՀ բնապահպանության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2014 թվականին մի շարք ահազանգեր են ստացվել տարբեր ՓՀԷԿ-երի շահագործման կանոնների այնպիսի խախտումների վերաբերյալ¹¹⁸², ինչպիսիք են ՓՀԷԿ-երը շահագործող կազմակերպությունների կողմից գետերի բնապահպանական թողքը չպահպանելը, ՓՀԷԿ-երի շահագործման ընթացքում տնտեսվարողների կողմից իրականացվող բնապահպանական իրավախախտումների և խնդիրների կարգավորումը, առանց թույլտվության ՓՀԷԿ-ի շահագործումը, ՀՀ Արագածոտնի մարզի Արագած համայնքում կառուցվող 3-րդ ՓՀԷԿ-ի շահագործման հետևանքով Գեղարոտ գետի ջրերի որակական փոփոխությունները:

Խնդրահարույց է նաև ստորերկրյա ջրերի ոչ ողջամիտ ու խնայողաբար օգտագործումը, ինչն ապագայում կարող է ոչ միայն բերել օգտակար հանածոների իսպառ վերացմանը, այլև աղետալի հետևանքներ ունենալ Հայաստանի էկոհամակարգի համար¹¹⁸³: Մասնավորապես, արտեզյան ջրերի ոչ արդյունավետ և ապօրինի օգտագործումը, ոլորտի մասնագետների պնդմամբ, Արարատյան և Արմավիրի մարզերում կարող է բնապահպանական աղետի պատճառ դառնալ¹¹⁸⁴: Կատարված ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ ջրային այս պաշարների մոտ 30%-ը հանվում է անօրինական¹¹⁸⁵: Ավելին, «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի¹¹⁸⁶ շրջանակներում իրականացված «Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների գնահատում» ուսումնասիրության ցուցանիշները վկայում են, որ ներկայումս առկա է Արարատյան արտեզյան ավազանի ոչ պատշաճ օգտագործման խնդիր, երբ փաստացի օգտագործվող ջրի մոտ 73%-ը գերազանցում է թույլատրելի սահմանը: Արդյունքում, Արարատյան արտեզյան ավազանում դրական ճնշում ունեցող ստորերկրյա ջրերի տարածքի մակերեսը նվազել է 3 անգամ, և 31 համայնքներ զրկվել են ինքնաշատրվանող հորատանցքերով ստացվող ռոռզման և խմելու կենցաղային ջրից¹¹⁸⁷:

Դեռևս շարունակում է չլուծված մնալ նաև Քաջարան քաղաքում օդի աղտոտվածության խնդիրը: 2014 թվականի ընթացքում Քաջարան քաղաքի բնակիչները բազմիցս՝ ահազանգել են քաղաքում օդի մեջ մեծ քանակությամբ փոշու առկայության մասին՝

¹¹⁸⁰ <http://bit.ly/1ISvCjZ>; <http://bit.ly/1E0ISxE>

¹¹⁸¹ ՄԱԿ-ի՝ «Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիայի՝ Հայաստանի Հանրապետության 5-րդ ազգային զեկույց, Երևան 2014, մանրամասն՝ <http://bit.ly/1Fy3MEu>, <http://bit.ly/1zL65D8>

¹¹⁸² «Խաչաղբյուր-1», «Խաչաղբյուր-2», «Գետիկ-4», Եղեգիս գետի ավազանի ՓՀԷԿ-եր, ՀՀ Տավուշի մարզի Ծաղկավազ գյուղի, «Արգիճի» ՓՀԷԿ, ՀՀ Արագածոտնի մարզի Արագած գյուղում կառուցվելիք 3-րդ ՓՀԷԿ, ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքի հարևանությամբ՝ Մարտիրոս գյուղի վարչական տարածքում կառուցվող ՓՀԷԿ

¹¹⁸³ <http://www.armecofront.net/Irahos/dzknabutsutyun-patuhaz/>

¹¹⁸⁴ <http://bit.ly/18tP9qR>

¹¹⁸⁵ <http://bit.ly/18tP9qR>

¹¹⁸⁶ http://cew.am/uploads/library/AGWS_Final_Report_March_ARM1.pdf

¹¹⁸⁷ Մանրամասն տես՝ «ՀՀ բնապահպանության նախարարություն» բաժնում

մասնավորապես նշելով, որ օրական 3-ից 4 ժամ քաղաքն ամբողջությամբ գտնվում է փոշու մեջ, որն առաջանում է Քաջարանի պղնձամուխիթենային հանքավայրի գործունեության արդյունքում¹¹⁸⁸: Հատկանշական է, որ փոշին ծծմբի և ազոտի երկօքսիդների և գետնամերձ օզոնի հետ մեկտեղ օդի գետնամերձ շերտի 4 աղտոտիչներից մեկն է և ներառված է մթնոլորտն աղտոտող նյութերի ցուցակում¹¹⁸⁹, իսկ Քաջարանը ընդգրկված է առավել ռիսկային և խոշոր քաղաքների ցանկում¹¹⁹⁰, ինչից կարելի է եզրակացնել, որ Քաջարանում օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգ իրականացնելիս անհրաժեշտ է կատարել նաև փոշու մոնիտորինգ: Այնինչ, ըստ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության, Քաջարանում ուսումնասիրվել է միայն ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի թույլատրելի չափերի առկայությունը, որոնք դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում¹¹⁹¹:

2013 թվականի համեմատ՝ 2014 թվականին գրանցվել են նաև ծառահատումների առավել բարձր ցուցանիշներ: Այսպես, դեռևս 2013 թվականին ապօրինի հատվել է 2031 ծառ՝ 2012թ. տարվա 1860-ի դիմաց:¹¹⁹² Իսկ 2014 թվականին արձանագրվել է ապօրինի հատված 2114 ծառ: ՀՀ բնապահպանության նախարարության տվյալներով՝ ընդհանուր առմամբ ապօրինի ծառահատումների համար կազմվել է վարչական տուգանքի 480 որոշում՝ 35.300.000 ՀՀ դրամի, և շրջակա միջավայրին պատճառված վնասի 405 ակտ՝ 177.860.000 ՀՀ դրամի: 2013 թվականի համեմատությամբ¹¹⁹³ 2014 թվականին 141 դեպքով ավելացել են հայտնաբերված իրավախտումները, իսկ հայտնաբերված իրավախախտումների հետևանքով շրջակա միջավայրին պատճառված վնասն աճել է 75.400.000 ՀՀ դրամով՝ ի համեմատություն 2013 թվականին արձանագրված 102.450.000 ՀՀ դրամի: Այնուամենայնիվ, չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ ապօրինի ծառահատումների տարեցտարի աճող թիվը վկայում է այն մասին, որ չի իրականացվել պատշաճ վերահսկողություն, և չեն ձեռնարկվել արդյունավետ կանխարգելիչ միջոցներ նման դեպքերի բացառման նպատակով, ինչն իր հերթին խոչընդոտել է առողջ շրջակա միջավայրում ապրելու՝ անձանց իրավունքի իրացմանը:

2014 թվականին շրջակա միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման իրավաչափության, հասարակական լսումների ոչ պատշաճ կազմակերպման առումով ևս արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնք հանգեցրել են էկոլոգիական տեղեկատվության անմատչելիությանը, ինչպես նաև որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության իրավունքի

¹¹⁸⁸ <http://ecolor.org/hy/news/air/alarm-signal-from-kajaran-our-children-in-hospital-because-of-dust-photos/6792/>

¹¹⁸⁹ <http://bit.ly/1AXfppv>, «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկ, Երևան 2011թ., «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ, ՀՀ բնապահպանության նախարարություն, <http://bit.ly/1DEzWyS>

¹¹⁹⁰ <http://bit.ly/1AXfppv>

¹¹⁹¹ Մանրամասն տես՝ «ՀՀ բնապահպանության նախարարություն» բաժնում

¹¹⁹² Պաշտպանի 2013 թվականի տարեկան զեկույց, <http://ombuds.am/library/library/page/101/type/3>

¹¹⁹³ Ըստ Նախարարության տվյալների՝ 2013 թվականին բնապահպանական պետական տեսչության կողմից հայտնաբերվել է ապօրինի ծառահատումների 536 դեպք, ինչի արդյունքում կազմվել է 419 վարչական իրավախախտման ակտ:

խախտումներին: ՀՀ բնապահպանության նախարարությունը շրջակա միջավայրին առնչվող որոշումների վերաբերյալ ևս ստացել է մի շարք բողոքներ, որոնք վերաբերել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացված նախագծերին, լիազորված անձի կողմից նախագծային փաստաթղթերին ծանոթանալու և դրանց վերաբերյալ համապատասխանաբար հասարակական և մասնագիտական լուսմներ կազմակերպելու միջև ընկած փոքր ժամանակահատվածին, հասարակական լսման համար նախատեսված տարածքի փոքր լինելուն, նախագծերի և դրանց վերաբերյալ հասարակական լուսմների մասին հայտարարության՝ Նախարարության կայքում ուշ տեղադրմանը և այլն: Որպես օրինակ կարելի է նշել ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի հանքավայրի պոչամբարի նախագծի լրամշակված բնապահպանական մասի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լուսմների կապակցությամբ առաջացած խնդիրները¹¹⁹⁴:

Հանրային մասնակցությունը պատշաճ ձևով չի ապահովվում, հասարակության կարծիքը հաշվի չի առնվում, և տեղեկատվության ազատության իրավունքը հաճախ խախտվում է նաև ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամանակ: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով նախատեսված չեն համապատասխան երաշխիքներ՝ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման դեպքում հանրային քննարկումների կազմակերպման կամ համապատասխան որոշման կայացման դեպքում հասարակության մասնակցության ապահովման համար: Այսպես, Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածը նախատեսում է հասարակության մասնակցությունը ընդերքօգտագործմանը վերաբերող թույլտվության տրամադրմանը: Մինչդեռ, գործնականում հասարակության մասնակցությունը և հանրային լուսմները պատշաճ կերպով չեն իրականացվում¹¹⁹⁵:

2014 թվականին շարունակել է չլուծված մնալ քաղաքացիների՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության իրավունքի իրացման խնդիրը: Որպես օրինակ՝ կարելի է նշել Թեղուտի հանքավայրի շահագործման խնդիրը, որը մի քանի տարի շարունակ բարձրաձայնվել է և շարունակում է չլուծված մնալ: Այսպես, մի շարք բնապահպաններ ահազանգել են, որ Թեղուտի հանքավայրի շահագործումը կատարվում է ոչ թե 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ ԲՓ-135 փորձաքննական դրական եզրակացության պահանջներին համապատասխան, այլ 2010 թվականին փոփոխված նախագծի հիման վրա, որը չի անցել օրենքով սահմանված ընթացակարգերը և չի ենթարկվել բնապահպանական փորձաքննության: Ըստ ստացված բողոքների՝ հանքավայրի՝ անհիմն կերպով կազմակերպված շահագործման արդյունքում նախագծային շեղումների պատճառով վնաս է հասցվել Հայաստանի Հանրապետությանը, Թեղուտ և Շնող համայնքներին և համայնքի բնակիչներին: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում փորձաքննական եզրակացության պայմանները խախտելու դեպքում՝ ՀՀ բնապահպանության նախարարության Բնապահպանական պետական տեսչությունը պարտավոր է մասամբ

¹¹⁹⁴ Նշված քննարկումը տեղի է ունեցել՝ առանց ազդակիր համայնքի բնակիչների մասնակցության: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ չի պահպանվել օրենքով սահմանված ընթացակարգը: Մանրամասն տես՝ «ՀՀ բնապահպանության նախարարություն» բաժնում:

¹¹⁹⁵ Մանրամասն տես՝ «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն» բաժնում:

կամ ամբողջովին փակել, կասեցնել կամ արգելել նախատեսվող գործունեության իրականացումը մինչև փորձաքննական եզրակացության համար համապատասխան պայմանների ապահովումը¹¹⁹⁶: Մինչդեռ, Նախարարությունը շուրջ երկու տարի հավաստիացրել է, որ «Թեդուտ» ՓԲԸ-ն ընդգրկված է Տեսչության ստուգման ենթակա կազմակերպությունների՝ 2013, 2014 և 2015 թվականների ցանկերում, սակայն մինչ օրս այնտեղ որևէ տեսչական ստուգումներ չեն իրականացվել: Հետևաբար, քաղաքացիների կողմից հնչեցված ահազանգերը մնացել են անարձագանք, ինչն էլ հանգեցրել է վերջիններիս՝ պետական մարմինների առջև իրավական պաշտպանության իրավունքի խախտման¹¹⁹⁷:

¹¹⁹⁶ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք /ուժը կորցրած է ճանաչվել 09.08.2014թ.-ին/, հոդված 11, մաս 6

¹¹⁹⁷ Մանրամանս տես՝ «ՀՀ բնապահպանության նախարարություն» բաժնում

6.8 ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՄԵՈՐՈՒՄՆԵՐ

Թեև Հայաստանի օրենսդրությամբ արգելվում է խտրականությունը¹¹⁹⁸, այնուհանդերձ, իրավական հստակ մեխանիզմների բացակայության պատճառով բնակչության առավել խոցելի խմբերի ներկայացուցիչները, օրինակ՝ ազգային, կրոնական փոքրամասնությունները, հաշմանդամություն ունեցող անձինք, խտրական վերաբերմունքի դեպքում զրկված են արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներից: Ուստի, հաշվի առնելով նաև միջազգային փորձը, կարևոր է խտրականությունը արգելող համապարփակ օրենքի ընդունումը, որով կսահմանվեն խտրականության հասկացությունը, տեսակները, խտրականությունը կանխարգելող հստակ մեխանիզմներ և այլն: Խնդրին անդրադարձ է կատարվել 2015թ. ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի կողմից Հայաստանին ուղղված մի շարք հանձնարարականներում¹¹⁹⁹: Վերջինս, մասնավորապես, հորդորել է Հայաստանին ընդունել խտրականությունը սահմանող համապարփակ օրենսդրություն և խտրականության դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ՝ ուղղված հասարակության խոցելի խմբերի դեմ ատելության քարոզչության և հրահրման բացառմանը և այլն: Նշենք, որ 2014 թվականի Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով¹²⁰⁰ նախատեսվել էր քննարկել «Խտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենք ընդունելու նպատակահարմարության հարցը, ինչի ուղղությամբ կատարվել է իրավական ուսումնասիրություն, իսկ օրինագծի մշակման անհրաժեշտության մասին քննարկումները դեռևս շարունակվում են:

1. Ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհուրդը (Համակարգող խորհուրդ), 2012 թվականից սկսած, նախկին 10 մլն դրամի փոխարեն ստանում է 20 մլն դրամ, որի բաշխումը համաձայնեցվում է Համակարգող խորհրդում ընդգրկված ազգային փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչների հետ¹²⁰¹: Չնայած պետության կողմից Համակարգող խորհրդին տրվող գումարի կրկնապատկմանը՝ այն չի բավականացնում միջազգային պարտավորությունների լիարժեք կատարման համար: Այսպես, օրինակ՝ 2014 թվականին Եվրոպայի խորհուրդը «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» (Խարտիա) Հայաստանի կողմից կրառման վերաբերյալ զեկույցում նշել է, որ Հայաստանի իշխանությունների կողմից ազգային փոքրամասնություններին տրամադրվող ֆինանսական միջոցները սահմանափակ են, և

¹¹⁹⁸ ՀՀ Սահմանադրություն, հոդված 14.1, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 3, Քրեական օրենսգիրք, հոդված 6, «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 6 և այլն

¹¹⁹⁹ http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

¹²⁰⁰ ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 303-Ն որոշում

¹²⁰¹ «ԵՄ «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության չորրորդ զեկույց», կետ 36, 2014թ.

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900016800cc828>

հորդորել ավելացնել ֆինանսավորումը՝ խթանելու փոքրամասնությունների լեզուների գործածությունը և պատշաճ կատարելու Խարտիայով ստանձնած պարտավորությունները¹²⁰²:

Թեև կրթության ոլորտում որոշ համայնքների լեզուներով նոր ուսումնական նյութեր են հրատարակվել, այնուամենայնիվ, դեռևս բացակայում են ասորերենով, հունարենով, քրդերենով և եզդիերենով ամբողջ ուսումնական պլանի համար նախատեսված ուսումնական նյութերը: Բացի դրանից՝ տարբեր համայնքներում վերապատրաստված ուսուցիչների լուրջ պակաս կա, իսկ նախադպրոցական կրթության ծրագրում փոքրամասնությունների լեզուները հիմնականում ներառված չեն¹²⁰³, ինչը խնդրահարույց է նաև Խարտիայի պահանջների լիարժեք կատարման տեսանկյունից: Մինևույն ժամանակ, սոցիալ-տնտեսական խնդիրների հետևանքով գյուղում բնակվող, հատկապես ռուս-մոլդկանների ու եզդիական համայնքների երեխաները վաղաժամկետ հրաժարվում են դպրոցից և մեկնում արտերկիր՝ աշխատելու և ընտանիքին օգնելու նպատակով¹²⁰⁴:

Հիմնականում եզդիական համայնքում դեռևս տեղի են ունենում վաղ ամուսնություններ (հատկապես աղջիկների շրջանում), ինչի հետևանքով, որպես կանոն, երեխաները դուրս են մնում կրթական գործընթացից: Խնդիրը նշել է նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ առաջարկելով ապահովել օրենքով¹²⁰⁵ նախատեսված ամուսնության կնքման պայմանների գործնականում կիրառումը, ինչպես նաև մշակել ծրագրեր՝ աղջիկ երեխաների առողջության, կրթության և զարգացման իրավունքի մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար՝ որպես թիրախ ընտրելով հատկապես ծնողներին և համայնքի ղեկավարներին¹²⁰⁶: Նման առաջարկ ներկայացվել է նաև 2015 թվականին ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի կողմից¹²⁰⁷: Այնուամենայնիվ, եզդի համայնքը վաղ

¹²⁰² http://gov.am/u_files/file/kron/Hayastan_ECRML3_hay.pdf

¹²⁰³ Տես՝ նույն տեղում

¹²⁰⁴ «Կրոնի ազատությունը և ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաները և երիտասարդները», Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, էջ 23, 2014թ.

http://www.coe.int/t/dg4/youth/Source/Resources/Publications/2014_Field_Study_Rights_of_Children_arm.pdf

¹²⁰⁵ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ 18 տարեկան տարիքի հասնելը: Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է:

¹²⁰⁶ http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fCO%2f3-4&Lang=en

¹²⁰⁷ http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

ամուսնությունների երևույթը համարում է ավանդույթի մաս, որը պետք է հարգվի պետության և միջազգային հանրության կողմից¹²⁰⁸:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը: Այնիչ, Եվրոպայի խորհրդի թե՛ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի կիրառման վերաբերյալ զեկույցում¹²⁰⁹ և թե՛ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ բանաձևում¹²¹⁰ նշվել է, որ նման կարգավորումը սահմանափակում է փոքրամասնությունների մուտքը հանրային լրատվամիջոցներ:

Հունարենով, ասորերենով և ռուսերենով խոսող համայնքների ներկայացուցիչների փաստաթղթերում (ծննդյան վկայական և այլն) չի ապահովվում նրանց ազգանունների համապատասխանաբար հունաստա, ասորաստա և ռուսաստա գրությունը: Այնիչ, Խարտիայի համաձայն՝ պետությունը պարտավոր է փոքրամասնությունների պահանջով թույլատրել ազգանունների գործածումը համայնքի լեզվով¹²¹¹: Նշյալ խնդրին անդրադարձ է կատարվել նաև ԵԽ համապատասխան զեկույցում և կոչ է արվել պետությանը թույլատրել ազգային փոքրամասնությունների ազգանունների գործածությունը վերոգրյալ լեզուներով ու ապահովել համապատասխան վարչական մարմինների կողմից այդպիսի անունների գործածությունը¹²¹²:

2. Հայաստանի բնակչության մեծամասնությունը Հայ Առաքելական Եկեղեցու անվանական հետևորդ է¹²¹³, միաժամանակ, 2014 թվականի տվյալներով՝ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված է 66 կրոնական կազմակերպություն, որից 9-ը ազգային փոքրամասնությունների կազմակերպությունն է (այդ թվում՝ ռուսական, ասորական, հրեական, եզդիական կրոնական համայնքները)¹²¹⁴: Հայաստանում գործող թե՛ գրանցված և թե՛ չգրանցված կրոնական կազմակերպությունները իրավունք ունեն ազատորեն գումարել հավաքներ, կատարել ծիսական գործողություններ, անցկացնել պաշտամունքներ¹²¹⁵:

¹²⁰⁸ http://www.coe.int/t/dg4/youth/Source/Resources/Publications/2014_Desk_Study_Children_and_Youth_arm.pdf

¹²⁰⁹ http://gov.am/u_files/file/kron/Hayastan_ECRML3_hay.pdf

¹²¹⁰ ԵԽ Նախարարների կոմիտեի բանաձև (2012, փետրվարի 1) Հայաստանի կողմից Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ շրջանակային կոնվենցիայի կիրարկման վերաբերյալ

¹²¹¹ ԵԽ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա, հոդված 10

¹²¹² http://gov.am/u_files/file/kron/Hayastan_ECRML3_hay.pdf

¹²¹³ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800cc828>

¹²¹⁴ http://gov.am/u_files/file/kron/Tsutsak2-%20herakhos%20gov_am2014%20PDF.pdf

¹²¹⁵ http://www.coe.int/t/dg4/youth/Source/Resources/Publications/2014_Field_Study_Rights_of_Children_arm.pdf

Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ անհանդուրժողականություն է նկատվում ՋԼՄ-ներում վերջիններիս հասցեին ժամանակ առ ժամանակ հնչեցված զրպարտող, չճշգրտված տեղեկատվության հրապարակմամբ: Մի շարք իրավապաշտպան կազմակերպությունների հայտնած տեղեկությունների համաձայն՝ ՋԼՄ-ների տարածած անհանդուրժողականության ազդեցության արդյունքում քաղաքացիների կողմից կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ ֆիզիկական բռնության առանձին դեպքեր են գրանցվել¹²¹⁶: Նման դեպքերում անձինք դիմել են Ոստիկանություն, և հիմնականում Ոստիկանությունը պատշաճ արձագանքել է՝ երբեմն օրինախախտներին ենթարկելով վարչական պատասխանատվության: Բացի դրանից՝ որոշ հեռուստաալիքներ, ներկայացնելով առանձին կրոնական կազմակերպությունների, գործածել են «աղանդ» բառը¹²¹⁷: Միաժամանակ, իրավապաշտպանները բարձրաձայնել են, որ առանձին դեպքերում կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների գործունեության վերաբերյալ առերևույթ ոչ հավաստի տեղեկությունների տարածումը չի ստացել պետության համապատասխան արձագանքը¹²¹⁸:

Կրոնական և ազգային փոքրամասնությունների երեխաների հետ իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի ժամանակ ուսուցիչների կողմից երբեմն պարտադրվում են ծիսական գործողություններ, օրինակ՝ աղոթք անել կամ խաչակնքվել¹²¹⁹, ինչը հակասում է որոշ անձանց կրոնական համոզմունքներին: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներից շատերը դրական են վերաբերվում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային՝ դրա թեմաները համարելով ազգային պատմության մաս, և եթե այն չի հակասում իրենց համոզմունքներին, սովորում են հաճույքով¹²²⁰: Սակայն տեսակետ կա նաև, որ 5-10-րդ դասարաններում դասավանդվող «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերն ավելի շատ միտված են ուսուցանել Հայ եկեղեցու դավանաբանությունը, ինչպես նաև չկա այլընտրանքային դասընթաց այն աշակերտների համար, որոնց ծնողները չեն ցանկանում, որ իրենց երեխան մասնակցի տվյալ դասընթացներին¹²²¹: Այնինչ, դեռևս 2013 թվականին ՄԱԿ-ի

¹²¹⁶ Օրինակ՝ անցորդները առանձին դեպքերում կոտրել են կրոնական կազմակերպության ցուցատախտակները կամ հարվածել դրա ներկայացուցիչներին:

¹²¹⁷ ՄԻԵԴ-ը իր որոշումներում բավիցս անդրադարձել է «աղանդ» եզրույթին՝ համարելով, որ այն ցույց է տալիս, որ տվյալ կրոնական համայնքը չունի նույն իրավունքներն ու կարգվիճակը, ինչ մեկ այլ «հիմնական» կրոնական ուղղություն; http://www.echr.coe.int/Documents/Research_report_religion_ENG.pdf

¹²¹⁸ «Մարդու իրավունքները Հայաստանում. 2014թ. զեկույց», Հայաստանի Հելսինկյան կոմիտե; <http://armhels.com/wp-content/uploads/2015/02/Ditord-69-Arm.pdf>; <http://bit.ly/1LDTB81>

¹²¹⁹ http://www.coe.int/t/dg4/youth/Source/Resources/Publications/2014_Field_Study_Rights_of_Children_arm.pdf

¹²²⁰ Տես՝ նույն տեղում

¹²²¹ «Կրոնական կրթության խնդիրները ՀՀ հանրակրթական դպրոցներում», Ս.Դանիելյան, Ա.Ղազարյան, Հ.Հովհաննիսյան, Ա.Ավթառյան, 2012 թ., <http://www.religions.am/files/7318/pastathter/ps7.pdf>

Երեխաների իրավունքների կոմիտեն առաջարկել է Հայաստանին վերանայել դպրոցների ուսումնական ծրագիրը՝ արտացոլելով երեխաների կրոնի ազատությունը¹²²²:

Հաշվի առնելով այն, որ գործող «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը մի շարք թերություններ ու հակասություններ ունի և լիարժեք չի համապատասխանում Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին՝ 2011 թվականին շրջանառության մեջ դրվեց «Խղճի և կրոնական ազատությունների մասին» օրինագիծը: Չնայած նախագծով առաջարկվող դրական փոփոխություններին՝ այնուամենայնիվ, առկա են նաև մի շարք խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել Վենետիկյան Հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքում¹²²³: Այնուհանդերձ, 2014թ. դրությամբ նախագիծը դեռևս եղել է լրամշակման փուլում:

Դեռևս 2013 թվականին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների արդյունքում¹²²⁴ վերացել են այլընտրանքային ծառայությանն առնչվող նախկին օրենսդրական խնդիրները¹²²⁵: Նշենք, որ օրենսդրական բարեփոխումներից հետո 2014 թվականին այլընտրանքային ծառայության են անցել Եհովայի վկաների կրոնական համայնքի հետևորդ թվով 128 դիմորդներ¹²²⁶: Իրավապաշտպանների իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այլընտրանքային ծառայությունն իրականացվել է պատշաճ կարգով, սակայն այլընտրանքային աշխատանքային ծառայողների համար հստակ սահմանված աշխատանքներ չկան, նրանք կատարում են տարբեր տեսակի աշխատանքներ, որոնք տվյալ պահին կհանձնարարի դեկավարությունը¹²²⁷: Այնուհանդերձ, թե ծառայողները, թե հիմնարկությունների տնօրենները, ընդհանուր առմամբ, դրական են արտահայտվել ծառայության ընթացքի մասին:

Առկա են եղել պաշտամունքի վայրերի շինարարության խոչընդոտներ: Մասնավորապես, Երևան քաղաքում կրոնական կազմակերպություններից մեկը 3 հողատարածքի սեփականատեր է, որտեղ շինարարության թույլտվության համար Քաղաքապետարանին դիմում է ներկայացրել: Այնուամենայնիվ, տվյալ

¹²²²http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fCO%2f3-4&Lang=en

¹²²³ <http://www.osce.org/yerevan/85440?download=true>

¹²²⁴ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում և «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրինագծերով այլընտրանքային զինվորական ծառայության տևողությունը կրճատվեց՝ դառնալով 30 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայությունը՝ 36 ամիս, ինչը համաչափ է մարդու իրավունքների տեսանկյունից և համապատասխանում է միջազգային չափանիշներին:

¹²²⁵ “Human Rights Watch”, 2015թ. համաշխարհային զեկույց, էջ 72
http://www.hrw.org/sites/default/files/wr2015_web.pdf

¹²²⁶

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800cc828>

¹²²⁷ «Մարդու իրավունքները Հայաստանում. 2014թ. զեկույց», Հայաստանի Հելսինկյան կոմիտե, էջ 22,
<http://armhels.com/wp-content/uploads/2015/02/Ditord-69-Arm.pdf>

կազմակերպության պնդմամբ՝ դիմումը մերժվել է՝ առանց որևէ հիմնավորման, մինչդեռ այլ գրանցված կրոնական կազմակերպություններ ստացել են Երևանում պաշտամունքի վայրերի շինարարություն իրականացնելու թույլտվություններ: Նշվածի վերաբերյալ Վարչական դատարան է ներկայացվել հայցադիմում, որը չի բավարարվել, և այժմ գործը գտնվում է Վերաքննիչ դատարանում: Մինևույն ժամանակ, տվյալ կազմակերպության ներկայացուցիչներն ահազանգել են, որ նվիրատվությամբ ստացված կրոնական գրականություն և պարագաներ ներմուծելիս ստիպված են եղել հարկեր վճարել, ինչը հակասում է թե ներպետական օրենսդրությանը¹²²⁸, թե Հայաստանի միջազգային պարտավորություններին¹²²⁹:

3. “Human Rights Watch” միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը արձանագրել է, որ սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները շարունակում են ենթարկվել խտրականության, ոտնձգությունների և ֆիզիկական բռնության, ինչպես նաև շարունակվում է ատելության քարոզումը նրանց դեմ¹²³⁰: Հասարակության մեջ վերջիններիս նկատմամբ անհանդուրժողականության ցուցանիշը շարունակում է բարձր մնալ: Այսպես, 2014 թվականին Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ իրականացված հետազոտության արդյունքում պարզվել է, որ հարցվողների 88%-ը կարծում է, որ սեռական փոքրամասնությունների իրավունքները պետք է սահմանափակվեն¹²³¹: Միաժամանակ, 2015 թվականին ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խումբը Հայաստանին հանձնարարել է սեռական փոքրամասնություններին խտրականությունից արդյունավետ օրենսդրական և գործնական պաշտպանության ապահովման ուղղությամբ միջոցներ ձեռնարկել¹²³²:

Մի շարք իրավապաշտպաններ արձանագրել են սեռական փոքրամասնությունների նկատմամբ խտրական վերաբերմունքի, իրավունքների ոտնահարման, մասնավորապես՝ ֆիզիկական բռնության կիրառման, վերջիններիս բողոքների իրավապահ մարմինների ոչ պատշաճ արձագանքման¹²³³ և մի շարք այլ դեպքեր: Բացի

¹²²⁸ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 12

¹²²⁹ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հոդվածներ 18, 19, 26; Մարդու իրավունքների երոպական կոնվենցիա, հոդված 9, *Kuznetsov and Others v. Russia* (2007)

¹²³⁰ “Human Rights Watch”, 2015թ. համաշխարհային զեկույց, էջ 73,

http://www.hrw.org/sites/default/files/wr2015_web.pdf

¹²³¹ «ՀՀ Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ հետազոտության արդյունքներ», «Հայաստանի քաղաքական գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացում» ծրագիր, էջ 92 http://aprgroup.org/images/Library/Constitution/report_constitution_web_q.pdf

¹²³² http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

¹²³³ 2015թ. ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խումբը առաջարկել է Հայաստանին ապահովել իրավապահ մարմինների համապատասխան վերապատրաստում, ինչպես նաև սեռական փոքրամասնությունների նկատմամբ հարձակումների դեպքերի պատշաճ քննություն:

դրանից՝ իրավապաշտպանների տեղեկացմամբ՝ չեն նվազել սեռական փոքրամասնությունների նկատմամբ ատելության կոչերը մամուլում¹²³⁴:

Ինչպես նաև, սեռական փոքրամասնությունների նկատմամբ խտրականության դրսևորումներ հաճախ հանդիպում են զբաղվածության, առողջապահության, կրթության ոլորտներում: Այսպես, իրավապաշտպանների տեղեկացմամբ, առանձին դեպքերում, երբ գործատուն իմացել է իր աշխատակցի սեռական կողմնորոշման մասին, հեռացրել է նրան աշխատանքից՝ վկայակոչելով լիովին այլ հանգամանքներ: Արդյունքում տվյալ անձինք ստիպված են եղել աշխատանք փնտրել այնպիսի ոլորտներում, որտեղ վերաբերմունքը իրենց նկատմամբ ավելի հանդուրժողական է, օրինակ՝ սննդի սպասարկման, վարսահարդարման, ծաղիկների ձևավորման և այլ ոլորտներում: Միաժամանակ, սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները խտրականության են ենթարկվում նաև առողջապահական ծառայություններ ստանալիս: Իրավապաշտպանները հաղորդել են, որ մի շարք դեպքերում անձանց չեն տրամադրել բժշկական ծառայություններ՝ վերջիններիս սեռական կողմնորոշման պատճառով: Վերջիններիս նկատմամբ խտրականության, անհանդուրժողականության դրսևորումներ են հանդիպել նաև կրթության ոլորտում, որտեղ (հիմնականում դպրոցներում) հանդիպում են նաև անձանց նկատմամբ հոգեկան և էմոցիոնալ հետապնդման (bullying) դեպքեր¹²³⁵:

ՔԿՀ-ներում առավել խոցելի իրավիճակում են միասեռականները, որոնք հաճախ կատարում են ՔԿՀ-ներում ամենանվաստացուցիչ աշխատանքները (օրինակ՝ կոյուղի մաքրելը), բնակվում են մյուս դատապարտյալներից մեկուսացված, նրանց հետ ոչ ոք չի շփվում, սպասքն ու իրերն առանձնացված են¹²³⁶:

¹²³⁴ ՀԿ-ների պնդմամբ՝ ՋԼՄ-ներում 2014թ.-ին հանդիպել է ատելության կոչերի ավելի քան 100 դեպք:

¹²³⁵ <https://www.amnesty.org/en/documents/pol10/0001/2015/en/>

¹²³⁶ «Մարդու իրավունքները Հայաստանում. 2014 թ. զեկույց», Հայաստանի Հելսինկյան կոմիտե, էջ 12, <http://armhels.com/wp-content/uploads/2015/02/Ditord-69-Arm.pdf>

6.9 ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՆ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՆՔՆԵՐ

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ-ում ապաստան հայցող անձանց թիվը կազմել է 223, որոնցից ապաստան են ստացել 136-ը: Ընդ որում, 2014թ. Հայաստանում ապաստան հայցողների մեծամասնությունը Ուկրաինայից (116 անձ), Միրիայից (50 անձ), Իրանից (23 անձ) և Իրաքից էր (18 անձ), որոնց մեծ մասը կազմել են էթնիկ հայեր: 2014թ. դրությամբ Հայաստանում բնակվել է Միրիայում հակամարտության արդյունքում տեղահանված մոտ 16.000 անձ, որոնց Կառավարությունը տրամադրել է պաշտպանության մի քանի տարբերակներ, այդ թվում՝ պարզեցված կարգով քաղաքացիության շնորհում, ապաստանի տրամադրման արագացված ընթացակարգ, ժամանակավոր, մշտական կացության կարգավիճակ¹²³⁷: Ոստիկանության տրամադրած տվյալներով՝ Հայաստանում 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ քաղաքացիություն չունեցող անձի վավերական վկայական է ունեցել 97 անձ, սակայն հավանական է, որ գործնականում Հայաստանում բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց թիվն էապես գերազանցում է վերոգրյալ ցուցանիշը¹²³⁸:

2014 թվականի ընթացքում 1988-1992թթ. Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած անձինք շարունակել են բախվել լուրջ բնակարանային խնդիրների, ինչը պետության կողմից հիմնավորվել է բյուջետային միջոցների անբավարարությամբ: Չնայած միջազգային կառույցների ծավալուն աջակցությամբ պետության ձեռնարկած քայլերին՝ այնուամենայնիվ, բնակարանային ապահովության առաջնահերթ կարիք ունեցող 924 ընտանիք ավելի քան 25 տարի դեռևս շարունակում է բնակվել հիմնականում կենսաապահովման տարրական միջոցներից զուրկ պայմաններում¹²³⁹: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է շուրջ 9,8 մլրդ դրամ, սակայն 2009 թվականից ի վեր այս ըտանիքների բնակարանային ապահովման նպատակով պետական բյուջեում միջոցներ չեն նախատեսվել: Միաժամանակ, բնակարանային խնդիրների տևական լուծման անհրաժեշտությունն արդիական է ոչ միայն Ադրբեջանից Հայաստան բռնագաղթած բնակարանային ապահովության առաջնահերթ կարիք ունեցող անձանց, այլև Հայաստանում բնակվող տեղահանված անձանց բոլոր խմբերի համար: Այսպես, օրինակ, ի տարբերություն տեղի բնակչության՝ փախստականի կարգավիճակ ստացած անձինք, որպես կանոն, Հայաստանում սեփական բնակելի տարածք չունեն և գործազրկության կամ աշխատանքի ցածր վարձատրության պայմաններում ստիպված են հաճախ բնակարանի վարձակալության բարձր վարձավճարներ մուծել: Ուստի, անհրաժեշտ է

¹²³⁷ <http://www.smsmta.am/upload/2014Sep30Geneva.pdf>

¹²³⁸ Submission by the UNHCR for the OHCHR Compilation Report – Universal Periodic Review: Armenia, 2014, p. 2, <http://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/UPRAMUNContributionsS21.aspx>

¹²³⁹ Օրինակ՝ Երևանի Սողոմոն Տարոնցի 5 հասցեում գտնվող հանրակացարանի շենքը, որտեղ մի շարք փախստականներ են բնակվում, կիսաքանդ վիճակում է, տանիքից կաթում է, ոչ բարվոք սանիտարահիգիենիկ պայմաններ են:

ուսումնասիրել և մշակել տեղահանված բնակչությանը բնակարանով ապահովելու այլընտրանքային ուղիներ¹²⁴⁰:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության Միգրացիոն պետական ծառայության (ՀՀ ՏԿԱԻՆ ՄՊԾ) «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի ենթակայության տակ չգտնվող կացարաններում փախստականների իրավունքների ապահովումը խնդրահարույց է: Այստեղ հաճախ ոչ միայն հիմնականում բացակայում են կենսաապահովման նվազագույն պայմանները, այլև նշյալ կացարանների սեփականատերերի կողմից փախստականներին կացարանից ցանկացած պահի զրկելու վտանգ կա, քանի որ օրենսդրությամբ հստակ չի երաշխավորում փախստականների՝ այդ կացարաններում բնակվելու իրավունքը: Խնդրի լուծման տարբերակներից է, օրինակ, նշված կացարանների սեփականատերերի հետ կոնկրետ ծրագրի իրականացումը և/կամ համաձայնագրի կնքումը, որոնցով կհստակեցվեն վերջիններիս պարտավորությունները փախստականների իրավունքների ոլորտում, և հնարավոր կլինի պետական վերահսկողություն իրականացնել գործընթացի նկատմամբ:

Կացարանով ապահովման խնդիր ունեն ոչ միայն փախստականի կարգավիճակ ստացած, այլև ապաստան հայցող անձինք: Այսպես, ապաստան հայցողներն ու նրանց ընտանիքի անդամները մինչև ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը տեղավորվում են Ժամանակավոր տեղավորման կենտրոնում (Կենտրոն)¹²⁴¹: Այնուամենայնիվ, Կենտրոնում կա ընդհամենը 20 սենյակ, որոնցում տեղավորվում է 45 անձ: Բացի դրանից՝ փախստականի կարգավիճակ ստացած և այլ կացարան տեղափոխվելու միջոցներ չունեցող մի շարք անձանց գործնականում թույլատրվել է մնալ Կենտրոնում, ինչը թեև միտված է՝ լուծելու փախստականների կացարանի ապահովման խնդիրը, սակայն, միաժամանակ, սահմանափակում է նոր ապաստան հայցող անձանց Կենտրոնում տեղավորելու հնարավորությունը: Արդյունքում, առանձին ապաստան հայցողներ չեն տեղավորվել Կենտրոնում, ինչի հետևանքով մնացել են անօթևան¹²⁴² և զրկվել կենսաապահովման նվազագույն պայմաններով ապահովման իրավունքից¹²⁴³: Թեև խնդրին փորձ է արվում լուծում տալ ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) ֆինանսավորմամբ կառուցվող «ինտեգրման տան» միջոցով¹²⁴⁴, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նաև պետության ակտիվ աջակցությունը: Միաժամանակ, եղել են դժգոհություններ, որ պետության

¹²⁴⁰ Վերջիններս կարող են հիմնվել մասնավոր հատվածի ակտիվ դերակատարության, բնակարանային ապահովությունը ներառող զբաղվածության տարբերակների, ինչպես նաև սոցիալական բնակարանային սխեմաների ստեղծման վրա, Submission by the UNHCR for the OHCHR Compilation Report - Universal Periodic Review: Armenia, 2014, p. 7,

<http://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/UPRAMUNContributionsS21.aspx>

¹²⁴¹ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 14

¹²⁴² «Հայաստանում ապաստան հայցողների կացարանների կարողությունների գնահատում», 2015թ., էջ 10, <http://www.euadvisorygroup.eu/publications/policy-papers>

¹²⁴³ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 24

¹²⁴⁴ «Հայաստանում ապաստան հայցողների կացարանների կարողությունների գնահատում», 2015թ., էջ 11, <http://www.euadvisorygroup.eu/publications/policy-papers/>

կողմից խիստ սահմանափակ ֆինանսական հատկացումների հետևանքով Կենտրոնում բնակվող ապաստան հայցողներին տարբեր ընկերություններից մատակարարվող սնունդը ցածրորակ է, հաճախ հետ է վերադարձվում մատակարարին, ինչպես նաև յուրաքանչյուր ապաստան հայցողի, անկախ իր տարիքից ու սննդակարգային սահմանափակումներից, տրվում է միևնույն սնունդը¹²⁴⁵:

Ապաստան հայցողներն ու ապաստան ստացած փախստականներն, օրենսդրության համաձայն, իրավունք ունեն Հայաստանում աշխատանք փնտրելու և աշխատելու նույն պայմաններով, ինչ ՀՀ քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ¹²⁴⁶: Փախստականների աշխատավարձով վարձատրվող աշխատանքով զբաղվելու իրավունքի համատեքստում առավելագույնս բարեհաճ վերաբերմունքի պարտավորություն է նախատեսված նաև Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայով (Կոնվենցիա), որին անդամակցում է նաև Հայաստանը¹²⁴⁷: Այդուհանդերձ, գործնականում ապաստան հայցողների ու փախստականների գերակշիռ մասը զբաղվածության ապահովման խնդրի է բախվում՝ պայմանավորված մի կողմից երկրի սոցիալ-տնտեսական վիճակով և գործազրկության բարձր մակարդակով, մյուս կողմից հայոց լեզվին ոչ բավարար տիրապետելու հանգամանքով, ինչը, հետևաբար, աշխատաշուկայում իրենց դարձնում է ավելի անմրցունակ: Օրինակ, 2014 թվականի ընթացքում Հայաստանում ապաստան ստացած սիրիահայ կանանց 81.1%-ը և սիրիահայ տղամարդկանց 41.7%-ը գործազուրկ են եղել¹²⁴⁸: Առանձին դեպքերում Հայաստանում ապաստան հայցող անձանց աշխատանքը ընդհանրապես չի վարձատրվել, կամ նրանք ստիպված են եղել աշխատել առանց աշխատանքային պայմանագրի¹²⁴⁹:

Հայաստանում ապաստան հայցողներն ու ապաստան ստացած փախստականներն ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար հիմնական ընդհանուր կրթության իրավունք¹²⁵⁰: Փախստականների տարրական կրթության իրավունքը երաշխավորվում է նաև ՄԱԿ-ի համապատասխան Կոնվենցիայով¹²⁵¹: Բայցևայնպես, հարցումների արդյունքում պարզվել է, օրինակ, որ թեև Հայաստանում բնակվող Սիրիայից տեղահանված երեխաների 91%-ը հաճախում է դպրոց, իսկ 51%-ը՝ մանկապարտեզ, այնուամենայնիվ, նրանցից ոմանք դժվարություններ են ունենում դասագրքերի բովանդակությունը հասկանալու, ուսուցիչների հետ շփման և առհասարակ դպրոցական ուսումնական

¹²⁴⁵ Տե՛ս՝ նույն տեղում

¹²⁴⁶ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 21

¹²⁴⁷ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդված 17

¹²⁴⁸ Save the Children, “Integration challenges of displaced Syrian Armenians Needs Assessment Report“, April-June 2014, p.19

¹²⁴⁹ «Հայաստանում ապաստան հայցողների կացարանների կարողությունների գնահատում», 2015թ., էջ 16, <http://www.euadvisorygroup.eu/publications/policy-papers/>

¹²⁵⁰ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 25

¹²⁵¹ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդված 22

ծրագիրը յուրացնելու հարցերում¹²⁵²: Միևնույն ժամանակ, փախստականների և ապաստան հայցողների կրթության հարցին 2015թ. անդրադարձ է կատարվել ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի կողմից: Մասնավորապես, նշվել է, որ վերջիններիս համար կրթության (ներառյալ՝ բարձրագույն) հասանելիությունը լիարժեքորեն չի ապահովվում և բարելավման կարիք ունի¹²⁵³: Նույն խնդրին դեռևս 2013 թվականին անդրադարձել էր ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովը¹²⁵⁴:

Հայաստանի տարածքում ապաստան հայցողները, ապաստան ստացած փախստականները, ինչպես նաև ապաստան չստացած փախստականներն իրավունք ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար հիմունքներով ստանալու պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում¹²⁵⁵: Չնայած ձեռնարկված բազմաթիվ քայլերին՝ առողջապահության ոլորտում առկա են մի շարք խնդիրներ, որոնք, մասնավորապես, վերաբերում են ոլորտի անբավարար ֆինանսավորմանը, կառավարման, կառուցվածքային և կազմակերպչական խնդիրներին, ժամանակակից սարքավորումների պակասին¹²⁵⁶, և որոնց հավասարապես բախվում են թե փախստականի կարգավիճակ ունեցողները, թե ապաստան հայցողները: Օրինակ, չնայած վերջիններիս տրամադրվող անձը հաստատող վկայականը¹²⁵⁷ բավարար հիմք է օրենքով սահմանված անվճար բուժօգնության ծառայություններից օգտվելու համար՝ սակայն որոշ դեպքերում այն չի ընդունվում բժշկական հաստատությունների կողմից, քանի որ բուժաշխատողները ոչ միշտ են իրազեկված նշված անձանց բժշկական օգնություն տրամադրելու իրենց պարտավորության մասին¹²⁵⁸: Ավելին, Միգրացիայի միջազգային կազմակերպության գնահատմամբ՝ գործող առողջապահական համակարգն ի վիճակի չէ տրամադրել հատուկ կարիքներով, այդ թվում՝ խոշտանգումների ենթարկված ապաստան հայցող անձանց անհրաժեշտ բուժօգնություն¹²⁵⁹:

Ըստ օրենքի՝ փախստականի կարգավիճակի սահմանման հարցազրույցի ժամանակ հայերենին բավարար չտիրապետող ապաստան հայցողներին պետությունը պարտավոր է տրամադրել անվճար թարգմանիչ (ապաստան հայցողը կարող է նաև օգտվել իր

¹²⁵² Save the Children, “Integration challenges of displaced Syrian Armenians Needs Assessment Report“, April-June 2014, p.19

¹²⁵³ http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

¹²⁵⁴ ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովի Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտողություններ, կետ 48, 2013թ., http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fCO%2f3-4&Lang=en/

¹²⁵⁵ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 23

¹²⁵⁶ http://publications.iom.int/bookstore/free/Assessment_of_health_ENG.pdf/ p. 5

¹²⁵⁷ Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 29

¹²⁵⁸ «Հայաստանում ապաստան հայցողների կացարանների կարողությունների գնահատում», 2015թ., էջ 15, <http://www.euadvisorygroup.eu/publications/policy-papers>

¹²⁵⁹ Տես նույն տեղում

միջոցներով վարձած թարգմանչի ծառայություններից)¹²⁶⁰: Սակայն նշյալ մի շարք անձինք չեն ապահովվել բարձր որակավորում ունեցող բանավոր թարգմանիչով, ինչը կարող է դժվարություններ առաջացնել ապաստան հայցող անձի իրավիճակի վերաբերյալ ստույգ տեղեկատվության ձեռքբերման և նրա կարգավիճակի հստակեցման առումով: Ուստի, կարևոր է թարգմանիչների նախնական և կատարելագործման վերապատրաստումների շարունակական կազմակերպումը: Միաժամանակ, օրենսդրությունն ամրագրում է կին ապաստան հայցողի հետ կին աշխատակցի կողմից հարցազրույց անցկացվելու և կին թարգմանչի ծառայությունից օգտվելու հնարավորությունը¹²⁶¹, մինչդեռ նույն սեռի աշխատակից տրամադրելու երաշխիքը բացակայում է տղամարդ ապաստան հայցողների պարագայում:

Թեև Հանրային պաշտպանի գրասենյակը անվճար իրավաբանական օգնություն է տրամադրում փախստականներին¹²⁶², այնուամենայնիվ, օրենսդրությամբ նման երաշխիք չի նախատեսվում ապաստան հայցողների համար: Միաժամանակ, ոլորտի մասնագետները դժգոհում են, որ խիստ սահմանափակ է ապաստան հայցողների շահերը ներկայացնող համապատասխան ոլորտային փորձ և որակավորում ունեցող փաստաբանների թիվը: Իսկ Հայաստանում ապաստան հայցողները հաճախ չեն կարող իրենց թույլ տալ սեփական միջոցներով հոգալ փաստաբանի ծառայության ծախսերը:

Ներկայում օրենսդրությամբ նախատեսվում է առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխայի համար խնամակալի/հոգաբարձուի նշանակում¹²⁶³, սակայն նշանակված խնամակալները/հոգաբարձուները հաճախ իրազեկված չեն ապաստանի ընթացակարգերի առանձնահատկություններից, ոչ միշտ են տիրապետում ապաստան հայցողի լեզվին կամ ծանոթ լինում նրա մշակույթին, ինչի արդյունքում հաճախ պատշաճ չեն կատարում խնամակալի/հոգաբարձուի իրենց պարտականությունները: Ուստի, անհրաժեշտ է բարեփոխել ապաստանի ընթացակարգերի շրջանակներում նման երեխաների համար ներկայացուցիչ նշանակելու գործող համակարգը: Բարեփոխված համակարգը պետք է ապահովի երեխայի լավագույն շահերի պատշաճ ներկայացումը ողջ ընթացակարգի շրջանակներում: Այդ նպատակով նպատակահարմար է առանց ուղեկցողի ապաստան հայցող երեխաների համար բացառապես ապաստանի ընթացակարգերի շրջանակներում նշանակել ներկայացուցիչ և այդ լիազորությամբ օժտել **ՀՀ ՏԿԱԻՆ ՄՊԾ**-ին, որն առավել լավ հնարավորություններ ունի՝ բացահայտելու և վերապատրաստելու հետաքրքրված և համապատասխան որակավորում ունեցող թեկնածուների:

Գործող օրենսդրական կարգավորումներով չի նախատեսվում որևէ ընթացակարգային երաշխիք այն ապաստան հայցողների համար, որոնք հոգեկան խանգարման կամ

¹²⁶⁰ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 51

¹²⁶¹ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 51

¹²⁶² «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 41

¹²⁶³ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 50

հաշմանդամության հետևանքով ի վիճակի չեն գիտակցել ապաստանի ընթացակարգերի բնույթը: Նշյալ անձանց մոտ, ի լրումն լեզվական և մշակութային խոչընդոտների, հաճախ առկա են նաև այլ խոչընդոտներ, որոնք սահմանափակում են ապաստանի հայցը արդյունավետ կերպով ներկայացնելու նրանց ունակությունը: Ուստի, անհրաժեշտ է այդ անձանց համար վերջիններիս համաձայնությամբ նշանակել համապատասխան որակավորում ունեցող և վերապատրաստում անցած ներկայացուցիչ: Նշվածով լուծում կստանան այդ դեպքերը, երբ բացակայում են ապաստան հայցողին դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչելու հիմքերը, սակայն միննույն է՝ առկա է ներկայացուցչի անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ապաստանի ընթացակարգի բնույթը գիտակցելու կամ հետապնդման հիմնավոր երկյուղի առկայությունը հիմնավորելու կարողության բացակայությունը: Հատկանշական է, որ 2014 թվականին մշակվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը կարծիքի էր ներկայացվել նաև Պաշտպանին: Նախագծով կանոնակարգվել են գործող օրենքում առկա մի շարք բացեր, այդ թվում՝ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների, ինչպես նաև հոգեկան խանգարման կամ հաշմանդամության հետևանքով ապաստանի ընթացակարգերի էությունը չգիտակցող ապաստան հայցողների համար ներկայացուցչի պարտադիր ներգրավվումը: Պաշտպանը դրական է գնահատել Նախագիծը և կարծիք հայտնել, որ դրա ընդունումը կհանգեցնի առկա օրենսդրական բացերի վերացմանն, ինչպես նաև կապահովի գործող օրենքի մի շարք դրույթների համապատասխանեցումը ապաստան հայցողների և փախստականների ոլորտի միջազգային պայմանագրերին, եվրոպական չափանիշներին: Նախագիծը հաստատվել է Կառավարության կողմից և 2015թ. մարտի 18-ի դրությամբ գտնվում է ՀՀ ազգային ժողովում:

Համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի՝ ապաստան հայցողները և փախստականները Հայաստան ապօրինի մուտք գործելու կամ գտնվելու համար չեն ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության¹²⁶⁴, ինչը համահունչ է նաև ՄԱԿ-ի Կոնվենցիայի պահանջներին¹²⁶⁵: Մինչդեռ, 2014 թվականին ՀՀ Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածը նախկին խմբագրությամբ ապաստան հայցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձանց համար Հայաստան ապօրինի մուտք գործելու դեպքում չէր նախատեսում քրեական պատասխանատվությունից ազատման երաշխիքներ՝ բացառությամբ *քաղաքական* ապաստանի իրավունքից օգտվելու դեպքում: Նշվածը հանգեցրել է ապաստան հայցողների ձեռքակալման և վերջիններիս նկատմամբ քրեական գործերի հարուցման մի շարք դեպքերի¹²⁶⁶: Թեև 2014 թվականի հունիսի 21-ին ընդունվել և օգոստոսի 2-ին ուժի մեջ են մտել Հայաստան ապօրինի մուտք գործած բոլոր ապաստան հայցողներին

¹²⁶⁴ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 28

¹²⁶⁵ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդված 31 (1)

¹²⁶⁶ «ՄԱԿ-ի հայաստանյան թիմի գեկույցը պատրաստված Մարդու իրավունքների խորհրդի 5/1 բանաձևի 15 (Բ) կետի համաձայն Հայաստանի Հանրապետության Համընդհանուր պարբերական դիտարկման համար», 2014թ., էջ 7, <http://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/UPRAMUNContributionsS21.aspx>

քրեական պատասխանատվությունից ազատող համապատասխան օրենսդրական փոփոխությունները¹²⁶⁷, այնուամենայնիվ, լիազոր մարմինները պետք է նաև հետևողական լինեն նշյալ երաշխիքները գործնականում կիրառելու հարցում:

Չնայած Հայաստանը 1994 թվականից անդամակցում է Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին և Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիաներին, և առկա են ոլորտը որոշ չափով կարգավորող իրավական ակտեր, սակայն քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակին վերաբերող մի շարք հարցեր կարգավորված չեն գործող օրենսդրությամբ: Մասնավորապես, հստակ ամրագրված չեն քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակը որոշելու ընթացակարգը, վերջիններիս իրավունքներն ու պարտականությունները, քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով լիազոր մարմինների իրավասությունները, քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության համակարգը: Հաշվի առնելով առկա օրենսդրական բացերը և/կամ թերի կարգավորումները մշակվել է «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն ուղարկվել է Պաշտպանին կարծիքի: Օրինագծի ընդունումը ոչ միայն կնպաստի քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությանը, այլև օրենսդրության մի շարք դրույթներ կհամապատասխանեցնի միջազգային չափանիշներին:

¹²⁶⁷ «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-84-Ն ՀՀ օրենք, 2-րդ հոդված, <http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6384&Reading=3>



Տ Ա Ր Ե Վ Ա Ն Ջ Ե Վ Ո Ւ Յ Յ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ
ՈՐՊԵՍ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ

ԵՐԵՎԱՆ 2015

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի Կամբոջիա արձանագրությամբ (այսուհետ նաև՝ Կամբոջիա արձանագրություն) նախատեսվում է ստեղծել անկախ ազգային կանխարգելման մեխանիզմ, որը պետք է օժտված լինի լայն լիազորություններով, ունենա ազատ մուտքի և համապատասխան ուսումնասիրությունների անցկացման հնարավորություն բոլոր այն վայրերում, որտեղ մարդիկ կարող են պահվել անազատության կամ սահմանափակ ազատության մեջ: 2008 թվականին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը լրացվեց 6.1 հոդվածով, որով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ճանաչվեց կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ, որն իր գործունեությունն իրականացնում է անազատության կամ սահմանափակ ազատության վայրերում պլանային ուսումնասիրությունների (մոնիթորինգի) միջոցով: Կամբոջիա արձանագրության 20-րդ հոդվածի համաձայն՝ կանխարգելման ազգային մեխանիզմը լիազորված է ստանալու ցանկացած տեղեկատվություն անազատության կամ սահմանափակ ազատության մեջ գտնվող անձանց վերաբերյալ:

Այդ նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից աշխատակազմում ստեղծվել է բնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի վարչություն (այսուհետ՝ ԲԿԱՄ): ԲԿԱՄ փորձագետները պարբերական այցեր են կատարում փակ կամ կիսափակ հաստատություններ՝ համապատասխան վայրերում գտնվող անձանց պահման պայմանների ուսումնասիրության համար՝ նրանց նկատմամբ խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դրսևորումները կանխարգելելու նպատակով:

ԲԿԱՄ-ը 2014թ. ընթացքում իրականացրել է 183 այց, որոնցից 125-ը եղել են պլանային և նախատեսված են եղել Պաշտպանի հաստատած ժամանակացույցով, իսկ 58-ն իրականացվել են ըստ անհրաժեշտության՝ Պաշտպանի հանձնարարությամբ: Այցեր են կատարվել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ (այսուհետ նաև՝ ՔԿԶ-ներ), ՀՀ ոստիկանության բաժիններ և ձերբակալված անձանց պահման վայրեր (այսուհետ նաև՝ ՁՊՎ-ներ), ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության (այսուհետ նաև՝ ՌՌ) բաժիններ, մեկուսարաններ, հոսպիտալ, կարգապահական գումարտակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող տուն-ինտերնատներ, ՀՀ առողջապահության նախարարության և մարզպետարանների ենթակայության տակ գործող հոգեբուժական հաստատություններ:

Միաժամանակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր գործող Բռնությունների կանխարգելման փորձագիտական խորհրդի անդամները 2014 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կատարել են 77 կրկնակի այց: Կրկնակի այցերի նպատակն է եղել դիտարկել ԲԿԱՄ փորձագետների կողմից 2014 թվականի առաջին կիսամյակում կատարված ուսումնասիրությունների ընթացքում արձանագրված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերը:

2014թ. պլանային այցերը նպատակաուղղված են եղել դիտարկվող հաստատություններում առկա խնդիրների վերհանմանը և դրանց արդյունավետ լուծումներ գտնելու հնարավորությունների ուսումնասիրմանն ու կարգավորմանը:

Իրականացված պլանային և արտապլանային այցերի ընթացքում արձանագրված խնդիրների, դրանց արդյունավետ լուծումների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել են քննարկումներ, կլոր-սեղաններ, ԲԿԱՄ փորձագետներն առաջարկություններ են ներկայացրել նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարման վերաբերյալ, և ներկայումս իրականացվում են աշխատանքներ դրանց իրագործման ուղղությամբ (որոշ դեպքերում առաջարկներն արդեն իսկ կատարվել են):

Խոշտանգումների կանխարգելման ենթակումիտեն 2013թ. սեպտեմբերին Հայաստան կատարած այցի արդյունքներով մշակված զեկույցով առաջարկել է, որ ԲԿԱՄ-ն իր զեկույցներում անդրադառնա և գնահատի նաև իրավասու պետական մարմինների և ԲԿԱՄ-ի միջև համագործակցությունը: Արդյունավետ համագործակցության և կառուցողական աշխատանքի արդյունքներից ելնելով՝ կարելի է առանձնացնել Ազգային անվտանգության ծառայության (20 օրվա ընթացքում իրականացվել են Պաշտպանի ներկայացրած շուրջ 10 առաջարկությունները) և Պաշտպանության նախարարության (բարեփոխումների կատարման նպատակով մշակվել է իրավական ակտի նախագիծ, պահման պայմանների բարելավում) հետ համագործակցությունը: Ոստիկանության հետ համագործակցության ընթացքում նույնպես արձանագրվել են դրական արդյունքներ: Կառուցողական աշխատանք է իրականացվել նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության հետ: Կառուցողական է գնահատվում աշխատանքը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: Դրական է գնահատվում նաև Առողջապահության նախարարության հետ իրականացված աշխատանքը: ՀՀ առողջապահության նախարարության հետ համաձայնություն է ձեռք բերվել

կարգավորել առանձին հաստատությունների նկատմամբ վերահսկողության բնագավառում առկա օրենսդրական բացերը և խնդիրները¹²⁶⁸:

ԲԿԱՄ-ի իրականացրած մշտադիտարկումների արդյունքում արձանագրված խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, ինչպես նաև առանձին խնդրահարույց դեպքերը ներկայացված են զեկույցում:

¹²⁶⁸ Այցելությունների ընթացքում արձանագրվել է ԲԿԱՄ փորձագետների աշխատանքներին խոչընդոտելու դեպք: Մասնավորապես, խոչընդոտ է ստեղծվել **Ավան հոգեկան առողջության կենտրոնի** տնօրենի, Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հատուկ հանրակրթական դպրոցներից մեկի տնօրենի և ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գտնվող հատուկ հանրակրթական դպրոցներից մեկի տնօրենի կողմից: Նշված խոչընդոտի մասին տեղեկացվել է ՀՀ առողջապահության նախարարը. տրվել է նման դեպքերն այսուհետ բացառելու անհրաժեշտ հանձնարարականներ:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ԲԿԱՄ փորձագետները այցելություններ են կատարել քրեակատարողական հիմնարկներ: Երկրորդ կիսամյակի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում կրկնակի այցերով մշտադիտարկումներ են իրականացրել նաև Բռնությունների կանխարգելման փորձագիտական խորհրդի անդամները¹²⁶⁹:

Արձանագրված խնդիրներ

- Պահման անբավարար պայմաններ, գերբնակեցման խնդիրներ, անհավասարաչափ տեղաբաշխում խցերում,
- Զբոսանքի ոչ պատշաճ կազմակերպում,
- Մենդամթերքի որակի, պահման պայմանների, տրամադրման կարգի, ինչպես նաև պատրաստվող ճաշերի բազմազանության հետ կապված խնդիրներ,
- Ազատազրկվածների ոչ պատշաճ բուժօգնության և բուժսպասարկման դեպքեր,
- Բուժհաստատություն ուղարկելու կարգազրեթի համաձայնեցման ձգձգման դեպքեր,
- Ազատազրկվածների հիվանդության պատմագրերի չլրացման կամ ոչ պատշաճ լրացման արատավոր պրակտիկա,
- Քրեակատարողական հիմնարկներում հարազատների կողմից բերված դեղորայքի, բժշկական սպասարկման այլ պարագաների հաշվառման և վերահսկման մեխանիզմների բացակայություն,
- Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ընթացակարգերի և սահմանված չափորոշիչների անհամապատասխանություն միջազգային իրավական նորմերին և սկզբունքներին,
- ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշմամբ հաստատված «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգ»-ում և ՀՀ կառավարության 04.12.2003թ. թիվ 1636-Ն որոշմամբ հաստատված՝ «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգ»-ում առկա բացեր, որոնք իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում են լուրջ հետևանքների,

¹²⁶⁹ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ, ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ, ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ, ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ, ՀՀ ԱՆ «Հրազդան» ՔԿՀ, ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ, ՀՀ ԱՆ «Արթիկ» ՔԿՀ, ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ, ՀՀ ԱՆ «Արմվյան» ՔԿՀ, ՀՀ ԱՆ «Կոշ» ՔԿՀ, ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի Նոնաձոր համայնքում տեղակայված տեղամաս

- Ազատագրկվածներին բուժման ընթացքում պատժախուց տեղափոխելը՝ որպես կարգապահական տույժի կիրառման հստակ ընթացակարգերի, ինչպես նաև անձի մեկուսացման բավարար մեխանիզմների բացակայություն,
- Պետական տուրքի վճարման չհիմնավորված պահանջով պայմանավորված խոչընդոտներ՝ դատապարտյալների կողմից դատական գործերի նյութերի պատճենները ստանալու գործընթացում,
- Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից փաստաբանին տեսակցելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման պրակտիկա,
- Ազատագրկվածներին՝ անձը հաստատող փաստաթղթերով ապահովելու հետ կապված խնդիրներ:

Պահման պայմաններ

Չնայած 2014 թվականի ընթացքում ՔԿՀ-ներում իրականացվել են վերանորոգման որոշ աշխատանքներ¹²⁷⁰, հիմնականում շարունակվում է չլուծված մնալ հատկապես խցերում պատշաճ պահման պայմանների ապահովման խնդիրը: Հարկ ենք համարում արձանագրել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան հաշվի առնելով՝ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում ազատագրկված անձանց պահման պայմանների առկա վիճակը մի շարք դեպքերում, կարող է հավասարեցվել անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի:

Այսպես ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ կատարված այցի ընթացքում.

- մի շարք ազատագրկվածներ գանգատվել են խցերում առկա միջատներից (խավարասերներ և փայտոջիլներ), իսկ ԲԿԱՄ փորձագետներն ականատես են եղել նաև կալանավորված անձանց՝ ձեռքերի և ոտքերի վրա բազմաթիվ խայթոցների հետքերի:

- ԲԿԱՄ փորձագետներն ականատես են եղել նաև որոշ խցերի (թիվ 14 խուց, հացադուլ հայտարարած անձանց պահման խուց) ծայրահեղ վատ սանիտարահիգիենիկ պայմանների (աղտոտվածություն, գարշահոտություն):

- Խցերում ազատագրկվածների ոչ հավասարաչափ բնակեցում: Այսպես, թիվ 41 խցում պահվում էր 18 ազատագրկված անձ, չնայած, որ խցում տեղադրված էր ընդամենը 12 մահճակալ, իսկ խուցը՝ մոտ 40 քմ էր: Հետևաբար, յուրաքանչյուր անձի համար փաստացի հատկացված էր մոտ 2.2 քմ բնակելի տարածք՝ օրենսդրությամբ սահմանված 4 քմ-ի փոխարեն: Նույնանման թիվ 51 խցում պահվում էր 17 անձ: Մինչդեռ, նույն հարկի նույն չափի խցերում արձանագրվել են մինչև 4 անձանց պահելու դեպքեր: «Երևան-Կենտրոն» ՔԿՀ կատարած այցի ընթացքում խցերից մեկում, որի չափսերն էին 1.75 մ x 3.80 մ (ներառյալ զուգարանը), պահվում էին թվով 2 ազատագրկված¹²⁷¹:

¹²⁷⁰ Օրինակ՝ «Վանաձոր», «Սևան» ՔԿՀ-ներում կարանտինային բաժանմունքի ընթացիկ վերանորոգում («Սևան» ՔԿՀ-ում նաև պատժախցերի, բաղնիքի տանիքի մի մասի ընթացիկ վերանորոգում), «Կոշ» ՔԿՀ-ում երկարատև տեսակցության սենյակների, պատժախցերի, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի խոհանոցի վերանորոգում և բակի բարեկարգում:

¹²⁷¹ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ ուղղիչ հիմնարկում մեկ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի վերաբերյալ կայացված վճիռներով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է արձանագրվել հետևյալ դեպքերում: Այսպես, Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի¹²⁷² գործով արձանագրվել է, որ վերջինս յոթ այլ անձի հետ միասին պահվել է 8.75 քմ մակերես ունեցող խցում, որն ուներ շատ փոքր, մետաղական ճաղերով, կեղտոտ պատուհան, ինչը խոչընդոտում էր բնական լույսի ներթափանցումը խուց: Խցում չեն եղել մահճակալներ և կալանավորվածները ստիպված են եղել քնել գետնին: Խուցը լի էր մակաբույծներով և միջատներով: Թեև իր կալանավորման չորրորդ օրը դիմումատուն տեղափոխվել է այլ խուց, ինչը հանգեցրել է իր կալանքի պայմանների թեթևակի բարելավման, այնուամենայնիվ, նույնիսկ այդ դեպքում տարածքը էականորեն ավելի փոքր էր, քան այն 4 քմ տարածքը, որը, ԽԿԿ չափանիշների համաձայն, բազմամարդ խցում մեկ բանտարկյալի համար նախատեսված նվազագույն պահանջն է: Նման պայմանները ՄԻԵԴ-ի կողմից գնահատվել են որպես նվաստացուցիչ և անմարդկային վերաբերմունք և հանգեցրել Կոնվենցիայի խախտմանը: Մեկ այլ գործով (Կարապետյանն ընդդեմ Հայաստանի¹²⁷³) Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում է արձանագրել կալանքի ժամանակ անձնական նվազագույն տարածքի բացակայության, մենախցի հակահիգիենիկ պայմանների, բնական լույսի և քնելու հարմարանքների բացակայության և հակասանիտարական գուգարանի առկայության պատճառով:

Մտահոգիչ են նաև ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի Նոնաձոր համայնքում տեղակայված տեղամասի պահման պայմանները, որտեղ դատապարտյալները կրում են բաց տիպի պատիժ: Այցելության ընթացքում արձանագրվել են մի շարք խնդիրներ: Այսպես.

- արձանագրվել են հակասանիտարական և բնակվելու համար ոչ պատշաճ պայմաններ.

* գուգարանն արևելյան տիպի է, ինքնաշեն, փայտե, գտնվում է դրսում և հակասանիտարական վիճակում է,

* լոգարանը նույնպես ինքնաշեն է, դուռը չկա, փոխարենը ամրացված է կտորից ծածկոց, տանիքին տեղադրված է երկու հարյուր լիտրանոց մետաղյա տարա, որի տարողությունն անհրաժեշտության դեպքում տաքացվում է էլեկտրական բաց տաքացուցիչով: Ընդհանուր առմամբ, քրեակատարողական հիմնարկում էլեկտրականության օգտագործման անվտանգության տեխնիկական կանոնները չեն պահպանվում,

* մուտքում, ինչպես նաև լոգարանում դռան փոխարեն ամրացված էր ցանցապատ շրջանակ և կտորե ծածկոց,

* խոհանոցը և նախամուտքը համատեղված են,

* առկա չէր կենտրոնացված ջեռուցման համակարգ, այցի պահին իրականացվում էին փայտե վառարանի տեղադրման աշխատանքներ:

- Խնդրահարույց է սննդի կազմակերպումը.

¹²⁷² ՄԻԵԴ, 02/12/2008, Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի /Kirakosyan v. Armenia/, դիմում թիվ 31237/03, 40-59 կետեր:

¹²⁷³ ՄԻԵԴ, 27/10/2009, Կարապետյանն ընդդեմ Հայաստանի /Karapetyan v. Armenia/, դիմում թիվ 22387/05, 33-47 կետեր:

* այցի պահին խորդանոցում առկա են եղել երեք գլուխ հնացած կաղամբ, պարբերաբար ստացվող հատիկեղեն և բանջարեղեն,

* առկա չէր կենտրոնացված ջրամատակարարման համակարգ:

- Դատապարտյալների պնդմամբ՝ քրեակատարողական հիմնարկում չի ապահովվում անհրաժեշտ բուժապասարկում և դեղորայք (այցի պահին հաստատությունում կային միայն յոդ և ցավազրկող դեղ), դեղերը ձեռք են բերվում դատապարտյալների կողմից, բուժօգնությունը ցուցաբերվում է անմիջականորեն վերջիններիս կողմից:

Խնդրի վերաբերյալ Արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի բաց ուղղիչ հիմնարկը տեղակայված է Սյունիքի մարզի Նոնաձոր գյուղում, որտեղ ջրի սակավության և կոյուղու բացակայության հետևանքով գյուղի բոլոր գուգարանները գտնվում են դրսում՝ այդ թվում նաև բաց ուղղիչ հիմնարկի գուգարանը: Միաժամանակ տեղեկացվել է, որ քրեակատարողական հիմնարկը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ բավարար սանիտարահիգիենիկ պայմաններ ապահովելու ուղղությամբ: Ներկայումս տեղադրված են կացարանի և լոգարանի դռները, սակայն, հաշվի առնելով համայնքի բնակլիմայական պայմանները, ամառային ամիսներին դրանք փոխարինվում են ցանցավարագույրներով:

Համայնքում առկա ջրամատակարարման խնդրի պատճառով ջուրը նախօրոք հավաքվում է տարայի մեջ, իսկ տաք ջրի անհրաժեշտության դեպքում այն տաքացվում է էլեկտրական տաքացուցիչով և օգտագործվում: Էլեկտրականության օգտագործման անվտանգության տեխնիկայի կանոններից ելնելով՝ էլեկտրական հոսանքի լարերի հետ կապված թերությունները վերացվել են:

Կացարանը ջեռուցվում է փայտե վառարանով, ինչի շնորհիվ ապահովվում է դրա համար անհրաժեշտ ջերմաստիճանը: Բավարար ֆինանսական միջոցների առկայության դեպքում կտեղադրվի կենտրոնացված ջեռուցման համակարգ և կփոխվեն պատուհանները:

Դատապարտյալները սննդի օրական միջին չափաբաժինները ստանում են ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի թիվ 413-Ն որոշմամբ սահմանված կարգով և քանակությամբ և պահվում է դրա համար նախատեսված պահոցում և սառնարանում:

Միաժամանակ նշվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկը՝ այդ թվում նաև բաց ուղղիչ հիմնարկը, ապահովված է անհրաժեշտ դեղորայքով, հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կողմից իրականացվում է մշտական հսկողություն, դեղորայքը պահվում է տեղամասի վարչական շենքում՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջները: Հայտնվել է նաև, որ դատապարտյալների կացարանում կա դեղատուփ, որտեղ պահվում են առաջին անհրաժեշտության (յոդ, ցավազրկող դեղեր) դեղամիջոցներ:

Ընթացիկ տարում քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից չորս դատապարտյալ, (այդ թվում մեկ դատապարտյալ ստացել է ստացիոնար բուժում) անհրաժեշտությունից ելնելով, տեղափոխվել է Ագարակի բժշկական կենտրոն՝

հետագոտվելու և բուժում ստանալու նպատակով: Անհրաժեշտության դեպքում բժշկական միջամտություն է ցուցաբերվում նաև համայնքի բուժքրոջ կողմից:

Տեղեկացվել է նաև, որ ընթացիկ տարում վերանորոգվել է կացարանը, իսկ կացարանի տանիքը վերանորոգվել է հիմնովին:

Գերբնակեցում

Թեև 2013թ. ընդունվեց ՀՀ Ազգային ժողովի կողմից համաներում հայտարարելու մասին որոշումը, որի կիրառման արդյունքում մոտ 170 կալանավորված անձ և մոտ 710 դատապարտյալ ազատ արձակվեց: Այնուամենայնիվ, որոշ ՔԿՀ-ներում այցեր կատարելու ընթացքում առկա է եղել գերբնակեցման խնդիր:

Այսպես օրինակ՝

- «Կոշ» ՔԿՀ-ում լրակազմը սահմանված է 640, սակայն այցելության պահին փաստացի գտնվում էին 739 ազատազրկված,

- «Սևան» ՔԿՀ-ում լրակազմը սահմանված է 548, մինչդեռ այցելության պահին փաստացի գտնվում է 593 ազատազրկված անձ,

- «Հրազդան» ՔԿՀ-ում լրակազմը սահմանված է 215, սակայն այցելության պահին փաստացի գտնվում էր թվով 237 ազատազրկված:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված պաշտոնական տվյալների համաձայն՝ 2015թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թվաքանակի և սահմանված լրակազմը հետևյալ պատկերն ունի (գերբնակեցված քրեակատարողական հիմնարկներն ընդգծված են)

ՔԿՀ-ի անվանումը	Ըստ լրակազմի 01.01.2015թ.-ի դրությամբ	Ըստ թվաքանակի 01.01.2015թ.-ի դրությամբ
«Նուբարաշեն»	820	1055
«Երևան-Կենտրոն»	60	36
«Արթիկ»	373	402
«Վանաձոր»	245	216
«Վարդաշեն»*	339	248
«Գորիս»	215	54
«Աբովյան»	257	196
«Սևան»	548	519
«Կոշ»	640	730
«Դատ.հիվանդանոց»	464	182
«Հրազդան»	215	242
«Արմավիր»	400	--
Ընդամենը	4576	3880

*«Վարդաշեն» ՔԿՀ-ում՝ լրակազմը 2014 թվականի ընթացքում սահմանված է եղել 154 և այցելության պահին այնտեղ փաստացի գտնվում էին 214 ազատազրկված:

Զբոսանք¹²⁷⁴

Թեև ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված է դատապարտյալի հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի իրավունքը, այնուամենայնիվ, ազատազրկված անձանց հետ ունեցած առանձնագրույցների ընթացքում ԲԿԱՄ-ը պարզել է, որ զբոսանքի իրավունքը պատշաճ չի ապահովվում: Այսպես, հիմնականում ՔԿՀ-ներում զբոսանքները կազմակերպվում են միայն աշխատանքային օրերին, կիրակի օրը հիմնականում զբոսանք չի կազմակերպվում: Նշվածը բացահայտվել է ԲԿԱՄ-փորձագետների՝ ազատազրկվածների հետ առանձնագրույցների արդյունքում, երբ ազատազրկվածները, տեղեկացված չլինելով իրենց իրավունքների մասին, ԲԿԱՄ փորձագետի՝ նախորդ օրն իրականացված զբոսանքի վերաբերյալ հարցին ի պատասխան նշել են, որ նախորդ օրը կիրակի է եղել և հետևաբար զբոսանք չի կազմակերպվել: Զբոսանքի ոչ պատշաճ կազմակերպման պատճառ է նաև ՔԿՀ-ների աշխատակիցների ոչ բավարար քանակը: Խնդրահարույց են նաև մատյաններում արձանագրված՝ մեծ թվով ազատազրկված անձանց՝ զբոսանքից միաժամանակյա հրաժարման դեպքերը («Նուբարաշեն», «Արթիկ», «Վանաձոր» ՔԿՀ-ներ), որոնք, սակայն, հաստատված չեն ստորագրությամբ կամ առկա է միայն խցակիցներից մեկի ստորագրությունը՝ բոլորի փոխարեն, մի շարք դեպքերում չեն նշվում նաև զբոսանքից հրաժարված անձանց տվյալները: Զբոսանքից հրաժարման պատճառ կարող է լինել նաև խցերի գերբնակեցման արդյունքում ազատազրկված անձանց հերթափոխով քնելու հանգամանքը:

¹²⁷⁴ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը նախատեսում է դատապարտյալի հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի իրավունքը: Իսկ օրենսգրքի 78-րդ հոդվածը սահմանում է, որ դատապարտյալի զբոսանքը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված բացօթյա տարածքում, բացի այդ՝ դատապարտյալի զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից: Օրենսգիրքը նաև ամրագրում է, որ դատապարտյալի նկատմամբ պատիժը կատարող հիմնարկի պետը, սահմանված կարգով, կարող է կիրառել խրախուսման միջոցներ, այդ թվում նաև՝ զբոսանքի ժամանակի մեկ ժամով ավելացում՝ մինչև մեկ ամիս ժամկետով:

Մնունդ¹²⁷⁵

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դատապարտյալի՝ պատիժը կրելու ընթացքում օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով ապահովելու երաշխիքը լիարժեք չի իրականացվում, քանի որ ԲԿԱՄ այցերի ընթացքում ՔԿՀ-ներում գրանցվել են սննդամթերքի որակի, քանակի, պահման պայմանների, տրամադրման կարգի, ինչպես նաև պատրաստվող ճաշերի բազմազանության հետ կապված խնդիրներ:

Այսպես, «Կոշ» ՔԿՀ-ում ճաշը նախապատրաստվել էր մոտ 470 անձի համար, սակայն պահեստից սննդամթերքի դուրս գրման փաստաթղթերի համաձայն՝ սննդամթերքը տրամադրվել էր 739 անձի հաշվարկով: Պահպանված սննդի նմուշների վրա ժամկետ նշված չի եղել (նույն խնդիրն առկա էր նաև «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում): Ճաշացանկը հիմնականում միատեսակ էր: Սննդի որակի հավաստագրերը բացակայում էին, վերահսկողությունն իրականացվում էր միայն ժամկետների ստուգմամբ և ընդունվում հաշիվ-ապրանքագրի հիման վրա: Սննդամթերքի պահման սառնարանային սենյակում ԲԿԱՄ փորձագետները տեսել են մկներ (սառնարանային սենյակում այդ պահին առկա էր մսամթերք, ձկնեղեն և կարագ), իսկ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում թթու կաղամբը պահվում էր ավտոտնակում և բորբոսնած էր:

Առկա է սննդի համտեսման ձևական պրակտիկա: Այսպես, օրինակ, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ կատարած այցի ժամանակ սննդի համտեսման և որակի վերահսկման մատյանում նախապես ստորագրված էր ճաշի և ընթրիքի համար, որոնք դեռ պատրաստված չէին:

Այս ամենի անբարենպաստ հնարավոր արդյունքների վառ օրինակն էր 2014 թվականի մայիսին «Աբովյան» ՔԿՀ-ում արձանագրված զանգվածային թունավորման դեպքը: Արդարադատության նախարարության կողմից իրականացված ծառայողական քննության արդյունքում պարզվել էր, որ զանգվածային սննդային թունավորման պատճառը եղել է 09.05.2014 թվականին դատապարտյալներին և կալանավորված անձանց տրամադրված հյուրի, խաշած մսի, լոբով ապուրի, ինչպես նաև բրնձով փլավի մեջ հայտնաբերված հարուցիչ մանրէների հանրագումարը, իսկ հիշյալ հարուցիչ մանրէների՝ պատրաստի սննդամթերքում առաջացման պատճառը կղանքի հետազոտությամբ հայտնաբերված պայմանական պաթոգեն հարուցիչ՝ *Citrobacter*-ն էր՝ պայմանավորված սննդի հետ կապ ունեցող մարդ-բացիլակիրի (*U. U.*՝ *խոհարար*)

¹²⁷⁵ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով, որի օրական միջին չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ սննդի որակը և սննդարարությունը սահմանված չափաբաժիններից որևէ կերպ պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է:

միջոցով փոխանցված սննդամթերքի, ախտահարված սննդի կամ սննդի պատրաստման տեխնոլոգիայի խախտման և հիգիենայի նորմերին չհամապատասխանող պայմանների հետ:

Առողջության պահպանման երաշխիքներ¹²⁷⁶

ԲԿԱՄ փորձագետների համար բավականին խնդրահարույց է դատապարտյալներին տրամադրվող բուժապասարկման որակը: Այսպես, «Նուբարաշեն» ՔԿՀ-ում առանձնագրույցների ընթացքում ազատազրկվածները հայտնել են, որ բժշկի կարիք ունենալու դեպքում, վերջինս ժամանում է նման խնդրանքը ներկայացնելուց 3 ժամ անց: Ազատազրկվածներից մեկը նշել է, որ անհրաժեշտ ներարկումը կատարվել է խցի դռան պատուհանից՝ առանց խցի դուռը բացելու: Վարչակազմի հետ ունեցած առանձնագրույցի ընթացքում պարզվեց, որ քրեակատարողական հիմնարկն ունի բժշկական անձնակազմի համալրման խնդիր:

Հիվանդ ազատազրկվածներին «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ կամ այլ քաղաքացիական բուժհաստատություն ուղարկելու կարգազրեքի համաձայնեցման գործընթացը ձգձգվում է մոտ 2 շաբաթ, ինչը նվազեցնում է հիվանդ ազատազրկվածին տրամադրվող բժշկական օգնության արդյունավետությունը: Հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ազատազրկման վայրերում պատշաճ բուժօգնության բացակայության հարցերը նույնպես դիտարկվում են Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համատեքստում: Այսպես, Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով բողոքի հիմքում դրված է եղել կալանքի ժամանակ անհրաժեշտ բժշկական օգնության բացակայությունը: Դատարանն արձանագրել է, որ կալանավորված անձը պահանջել է իրեն անհրաժեշտ բուժօգնությունը, որը նրան հասանելի չի եղել: Տվյալ հանգամանքը բավարար է համարվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք արձանագրելու համար:

Շարունակվում է ազատազրկվածների հիվանդության պատմագրերի չլրացման կամ ոչ պատշաճ լրացման պրակտիկան, երբ պարզ չեն իրականացվող բուժման (այդ թվում՝ տրամադրվող դեղորայքի) հիմքերը: Փաստաթղթերի ոչ պատշաճ լրացումները բուժանձնակազմը պատճառաբանում է աշխատանքի գերժանրաբեռնվածությամբ և հաստիքների ոչ ամբողջական համալրվածությամբ:

¹²⁷⁶Քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալն ունի առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու իրավունք:

Արտաքին գննությունը ՔԿՀ-ներում իրականացվում է ոչ պատշաճ: Արտաքին գննության մասին արձանագրությունների ուսումնասիրություններից և հարցումներից պարզ է դարձել, որ ՔԿՀ-ի բուժաշխատողի կողմից արտաքին գննությունը կազմակերպվում է ազատագրկվածին ուղեկցող ջոկատի ուստիկանի և ՔԿՀ-ի հերթապահի, ինչպես նաև վարչակազմի այլ ներկայացուցիչների ներկայությամբ: Հիմնականում արտաքին գննությունը համատեղվում է անձնական խուզարկության հետ: Ավելին, երբեմն մի քանի ազատագրկվածների արտաքին գննությունն իրականացվում է միաժամանակ և համատեղ, որը հաստատվում է նաև համապատասխան արձանագրությունների ուսումնասիրությամբ: Համապատասխան փաստաթղթերի գրառումների համադրումից պարզվել է նաև, որ գրառումները ձևական բնույթ են կրում և որոշ ՔԿՀ-ներում ոչ բոլոր մուտք գործած անձինք են ենթարկվում արտաքին գննության: Ըստ ԲԿԱՄ դիտարկման՝ արտաքին գննությունը կազմակերպվում է ոչ պատշաճ, քանի որ բուժաշխատողը հաճախ չի ներկայանում, չի կրում բժշկական համազգեստ, չի պարզաբանում արտաքին գննության բնույթը և անհրաժեշտությունը, գննությունն իրականացնում է մասնակի (հրահանգվում է իջեցնել տաբատը և բարձրացնել վերին հագուստը՝ չիրականացնելով ռոտաթաթերի և մարմնի այլ մասերի (գլխի մազածածկ հատված, բերանի խոռոչ, սեռական օրգանների շրջան) արտաքին գննությունը) և առանց պարզաբանելու առաջարկում է ստորագրել արձանագրությունը՝ հաճախ թելադրելով արձանագրությունում նշվող անհրաժեշտ գրառման բովանդակությունը:

Վերոգրյալ երևույթները, ինչպես նաև համապատասխան մատյաններում արդեն իսկ կատարված գրառումների ակնհայտ ջնջումներն ու շտկումները բռնությունների ու հնարավոր խոշտանգումների դրսևորումների բացահայտման լուրջ խոչընդոտ կարող են հանդիսանալ:

Ծմահ ազատագրկման դատապարտված անձանց իրավունքներին առնչվող համակարգային խնդիրներ.

Առկա են ցմահ ազատագրկման դատապարտվածների իրավունքներին առնչվող համակարգային չլուծված խնդիրներ, որոնք բարձրացվել են Պաշտպանի կողմից նաև 2013թ.-ի տարեկան զեկույցում: Մասնավորապես, սոցիալ-հոգեբանական պատշաճ ծառայության, մշակութային, սպորտային միջոցառումների անց կացման, դատապարտյալի ազատ ժամանակը արդյունավետ տնօրինելու պայմանների, գործերի վերանայման արդյունավետ մեխանիզմների, ցմահ ազատագրկման դատապարտված անձանց ռեժիմների փոփոխության և պատժի կրումից վաղաժամկետ ազատման ճկուն համակարգի բացակայության հետ կապված (Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը ցմահ ազատագրկման դատապարտված անձանց պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ կայացրել է թվով 8 որոշում, որից 7-ը՝ հարցի քննարկումը հետաձգելու, 1-ը՝ միջնորդագիր չներկայացնելու վերաբերյալ: Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովներին ցմահ դատապարտյալների վերաբերյալ միջնորդագիր չի

ուղարկվել, դատարանի կողմից ոչ մի ցմահ դատապարտյալ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ չի ազատվել¹²⁷⁷):

2014թ. Պաշտպանի կողմից քննարկվել են ցմահ ազատազրկման դատապարտված անձանց կողմից ներկայացված մի շարք բողոքներ, միջոցներ են ձեռնարկվել պատշաճ բուժօգնություն ապահովելու ուղղությամբ, տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն ինչպես այցելությունների ընթացքում, այնպես էլ գրավոր ընթացակարգով, 2014թ. երկու անգամ հայտարարված զանգվածային հացադուլը եղել է Պաշտպանի ուշադրության կենտրոնում:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն 2013 և 2014 թվականներին Հայաստան կատարած այցերի արդյունքում հրապարակված երկու զեկույցներով լուրջ մտահոգություններ է արտահայտել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց իրավունքների ապահովման հարցերի վերաբերյալ¹²⁷⁸:

¹²⁷⁷ Արդարադատության նախարարության կողմից տվյալները տրամադրվել են 2014թ.-ի հոկտեմբերին:

¹²⁷⁸ <http://www.cpt.coe.int/documents/arm/2015-10-inf-eng.pdf>, <http://www.cpt.coe.int/documents/arm/2015-08-inf-eng.pdf>

**ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԵՆ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ
ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ**

***Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ առկա կարգավորումների և ընթացակարգերի անհամապատասխանություն միջազգային չափորոշիչներին**

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec (2003) 22 հանձնարարականի համաձայն՝ պայմանական վաղաժամկետ ազատվելու համար նախատեսված չափանիշները, որոնց ազատազրկման դատապարտված անձինք պետք է բավարարեն, պետք է հստակ ձևակերպված լինեն: Դրանք պետք է նաև իրատեսական լինեն այն առումով, որ պետք է հաշվի առնեն դատապարտյալի անձը և սոցիալական ու տնտեսական հանգամանքները, ինչպես նաև վերաինտեգրման ծրագրերի առկայությունը: Նույն հանձնարարականի համաձայն՝ պայմանական ազատման ինստիտուտը պետք է աջակցի դատապարտյալներին անցում կատարել բանտային կյանքից դեպի հասարակության մեջ օրինապահ կյանք վարելուն: Պայմանական ազատման չափանիշները պետք է կիրառվեն այնպես, որ պայմանական ազատվեն այն բոլոր դատապարտյալները, որոնք համապատասխանում են օրինապահ քաղաքացի դառնալու նվազագույն երաշխիքներին: Իշխանությունները կրում են դատապարտյալի կողմից նշված չափորոշիչներին չհամապատասխանելու հանգամանքի հիմնավորման բեռը:

ԲԿԱՄ փորձագետներն ուսումնասիրել են 2013թ. չորրորդ եռամսյակի և 2014թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների ներկայացված ցուցակները (այդ թվում՝ որոշումները, արձանագրությունները, բնութագրերը) և Անկախ հանձնաժողովների կայացրած որոշումներն ու կազմած արձանագրությունները: Ուսումնասիրությամբ կարելի է փաստել, որ Անկախ հանձնաժողովների կողմից կայացվող որոշումները ընդհանրապես զուրկ են որևէ պատճառաբանական մասից: Առկա են լուրջ օրենսդրական բացեր՝ վարչական և անկախ հանձնաժողովների կայացրած որոշումների ընդունման հիմքում ընկած չափանիշների և ընթացակարգերի տեսանկյունից: Ցուցակների ուսումնասիրությամբ ԲԿԱՄ փորձագետների համար խնդրահարույց է եղել որոշ դատապարտյալների նկատմամբ ընդունված որոշումների հիմնավորվածությունը:

Խնդրահարույց է նաև ՀՀ Նախագահի 31.07.2006թ. թիվ ՆՀ-163-Ն հրամանագրով հաստատված «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների կազմավորման և գործունեության կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 6-րդ և 7-րդ կետերին համապատասխան առնվազն երկու անդամներից կազմված ենթահանձնաժողովների աշխատանքի չկանոնակարգված լինելու հանգամանքը: Այսպես, ենթահանձնաժողովների կողմից դատապարտյալի անձնական գործին ծանոթանալու, մեկուսի նրա հետ հանդիպման վերաբերյալ արձանագրությունների կամ այլ փաստաթղթերի կազմման, ինչպես նաև Հանձնաժողովի նիստի ընթացքում

Ենթահանձնաժողովի անդամների ներկայացրած կարծիքների արձանագրման պահանջ չի սահմանվում, ենթահանձնաժողովների կողմից դատապարտյալի անձնական գործին ծանոթանալու և մեկուսի նրա հետ հանդիպման վերաբերյալ արձանագրություններ (ձայնագրություններ) չեն կազմվում, իսկ Հանձնաժողովի նիստի ընթացքում ենթահանձնաժողովի անդամների կարծիքները ներկայացվում են բանավոր և չեն արձանագրվում (ըստ մի շարք դատապարտյալների՝ ենթահանձնաժողովները կամ ընդհանրապես առանձնազրույց չեն ունենում իրենց հետ (ուսումնասիրվում են միայն փաստաթղթերը և կարծիք է ճշտվում քրեակատարողական վարչակազմից), կամ առանձնազրույցը կրում է ձևական բնույթ):

Վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու՝ վերջին երեք տարվա վիճակագրական տվյալները հետևյալն են.

2012 թվականին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացված դատապարտյալների թվաքանակի վերաբերյալ¹²⁷⁹

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների նիստերին ներկայացվել են	5241 դատապարտյալ
ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների կողմից մերժվել են	4226 դատապարտյալ
ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների կողմից հետաձգվել են	141 դատապարտյալ
Անկախ հանձնաժողովների քննարկմանը ներկայացվել են	838 դատապարտյալ
Անկախ հանձնաժողովների կողմից մերժվել են	535 դատապարտյալ
Անկախ հանձնաժողովները հավանություն են տվել	303 դատապարտյալի
Դատարանի որոշմամբ պայմանական վաղաժամկետ ազատվել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինվել են	295 դատապարտյալ

¹²⁷⁹ Այլ հիմքերով ազատվելուց և այլ հանգամանքներից կախված՝ հնարավոր է հանրագումարի տարբերություն

**2013 թվականին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու,
պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու
ներկայացված դատապարտյալների թվաքանակի վերաբերյալ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների նիստերին ներկայացվել են	5800 դատապարտյալ
ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների կողմից մերժվել են	4626 դատապարտյալ
ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների կողմից հետաձգվել են	119 դատապարտյալ
Անկախ հանձնաժողովների քննարկմանը ներկայացվել են	1012 դատապարտյալ
Անկախ հանձնաժողովների կողմից մերժվել են	691 դատապարտյալ
Անկախ հանձնաժողովները հավանություն են տվել	321 դատապարտյալի
Դատարանի որոշմամբ պայմանական վաղաժամկետ ազատվել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինվել են	310 դատապարտյալ

**2014 թվականի կիսամյակին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ
ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու
ներկայացված դատապարտյալների թվաքանակի վերաբերյալ**

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների նիստերին ներկայացվել են	4774 դատապարտյալ
ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների կողմից հետաձգվել են	87 դատապարտյալ
Անկախ հանձնաժողովների քննարկմանը ներկայացվել են	673 դատապարտյալ
Անկախ հանձնաժողովների կողմից մերժվել են	460 դատապարտյալ
Անկախ հանձնաժողովները հավանություն են տվել	204 դատապարտյալի
Դատարանի որոշմամբ պայմանական վաղաժամկետ ազատվել կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինվել են	187 դատապարտյալ, որից թվով 3 դատապարտյալի նկատմամբ պատժի չկրած մասն փոխարինվել է ավելի մեղմ պատժատեսակով

ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական

օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը և ուղարկվել են շահագրգիռ մարմիններին կարծիքի: Նախագծերի նպատակն է սահմանել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր:

*** ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշմամբ հաստատված «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգ»-ում և ՀՀ կառավարության 04.12.2003թ. թիվ 1636-Ն որոշմամբ հաստատված՝ «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգ»-ում առկա բացեր, որոնք իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում են լուրջ հետևանքների.**

ԲԿԱՄ-ի փորձագետները հանդիպել են բազմաթիվ հիվանդ ազատազրկվածների, որոնց բուժապասարկման և բուժօգնության տրամադրման խնդիրները մինչ օրս լուծում չեն ստանում կամ ձգձգվում են ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշմամբ հաստատված «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգ»-ում (այսուհետ՝ Կարգ) և ՀՀ կառավարության 04.12.2003թ. թիվ 1636-Ն «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներում ստեղծելու կարգ»-ում առկա կարգավորումների հետևանքով: Բազմաթիվ են նաև վերոնշյալ խնդիրների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ մուտքագրվող դիմում-բողոքները:

Խնդրի լուծումը տեսնում ենք ՀՀ կառավարության վերոնշյալ որոշումներով հաստատված կարգերում անհրաժեշտ փոփոխությունների և լրացումների կատարման միջոցով: Այսպես.

I. Լիարժեք չեն, ինչպես նաև որոշ դեպքերում բացակայում են Բժշկական աշխատանքային հանձնաժողովի (այսուհետ՝ ԲԱՀ) աշխատանքների չափորոշիչները և ընթացակարգերը: Մասնավորապես.

- ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշմամբ ԲԱՀ-ը չունի որևէ լիազորություն պատժից ազատման ենթակա դատապարված անձանց Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի (այսուհետ՝ ՄԳՀ) քննարկմանը ներկայացնելու հարցում (այն վերաբերում է միայն դատապարտյալներին դատական որոշման կատարման հետաձգման ներկայացնելուն՝ տես Կարգի կետ 17):

- Կարգավորված չէ նաև ԲԱՀ-ի կողմից ազատազրկված անձի մոտ Կարգով հաստատված 2-րդ հավելվածով հիվանդության ախտորոշման դեպքում Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին դիմելու ընթացակարգը, ժամանակահատվածը, բողոքարկման մեխանիզմները:

- Խնդրահարույց է Կարգի 16-րդ կետով սահմանված ԲԱՀ-ի՝ տարվա ընթացքում առնվազն մեկ այցելություն յուրաքանչյուր հիմնարկ կատարելու դրույթը, քանի որ յուրաքանչյուր նման դեպքում ԲԱՀ-ում հարցի քննարկումն անհարկի ձգձգվում է, մինչ

ԲԱՀ-ի հերթական այցելությունը (պրակտիկայում, ԲԿԱՄ-ն արձանագրել է, որ ԲԱՀ-ը հիմնականում յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկ տարվա ընթացքում այցելում է մեկ, լավագույն դեպքում՝ 2 անգամ):

II. Բացակայում են Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի (այսուհետ՝ ՄԳՀ) աշխատանքների չափորոշիչները և ընթացակարգերը: Մասնավորապես, մինչ օրս կարգավորված չէ Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին դիմելու, ՄԳՀ-ում նիստեր հրավիրելու ժամանակահատվածները և կարգերը, ՄԳՀ-ի կազմի վերանայման անհրաժեշտության, այդ թվում՝ նեղ մասնագետների ներգրավման մասով, որոշումների կայացման (քննարկում, քվեարկում, արձանագրում և այլն), տրամադրման և դրանց բողոքարկման ընթացակարգերը: Օրինակ, ԲԿԱՄ-ն իր այցելությունների ընթացքում արձանագրել է բազմաթիվ դեպքեր, երբ ազատազրկվածի՝ պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդության առկայության փաստի քննարկումն անհարկի ձգձգվել է:

III. Կարգավորված չէ ՄԳՀ-ի կողմից Կարգի 2-րդ հավելվածով հիվանդության համապատասխանության որոշման հաստատման դեպքում դատարան դիմելու ժամանակահատվածը:

IV. Հստակ իրավական կարգավորման ենթարկված չէ ազատազրկված անձանց ԲԱՀ, ՄԳՀ ներկայացված դիմումների քննարկման ընթացակարգերը, ԲԱՀ-ի և ՄԳՀ-ի եզրակացությունների տրամադրման ժամկետները:

V. Անհրաժեշտ է վերանայել Կարգով հաստատված 2-րդ հավելվածով սահմանված պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկը: Նման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2010թ. Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հաստատվել է հիվանդությունների դասակարգման նոր սանդղակ: Արդյունքում, դեռևս 2006թ. հաստատված Կարգի 2-րդ հավելվածում առկա հիվանդությունները չեն համապատասխանում հաստատված հիվանդությունների դասակարգման նոր սանդղակին: Մատնանշված խնդիրները հիմնականն են, սակայն սպառիչ չեն:

Ընդ որում, ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝

- 2012 թվականի առաջին կիսամյակում դատապարտյալների կողմից ծանր հիվանդության պատճառով պատժի հետագա կրումից ազատվելու խնդրանքով ստացվել է 11 դիմում: Բժշկական աշխատանքային հանձնաժողովն (այսուհետ՝ ԲԱՀ) ուսումնասիրել է 11 դիմում, դրանց հիման վրա տվել 11 եզրակացություն, որոնցից հավանության են արժանացել 4-ը, իսկ 7-ը մերժվել են: Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի (այսուհետ՝ ՄԳՀ) կողմից գննվել են 3 դատապարտյալներ, որոնց համար ներկայացվել է միջնորդություն դատարան, երեքն էլ բավարարվել են: 2012 թվականի ընթացքում մահացել է 28 դատապարտյալ, որոնցից 9-ի ախտորոշումը համապատասխանում էր ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 25-ի թիվ 825-Ն որոշմամբ նախատեսված պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկին: 2012 թվականի 11 դիմումատուներից 1-ի ուսումնասիրությունը նախապես կատարվել է բժշկական աշխատանքային հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ:

- 2013 թվականի առաջին կիսամյակում դատապարտյալների կողմից ծանր հիվանդության պատճառով պատժի հետագա կրումից ազատվելու խնդրանքով ստացվել է 6 դիմում: ԲԱՀ-ի կողմից կատարվել է 6 դիմումի ուսումնասիրություն, որոնց հիման վրա տրվել է 6 եզրակացություն, որոնցից հավանության են արժանացել 6-ը: ՄԳՀ-ի կողմից գննվել են 4 դատապարտյալներ, որոնց համար ներկայացվել է միջնորդություն դատարան, չորսն էլ բավարարվել են: 2013 թվականի ընթացքում մահացել է 19 դատապարտյալ, որոնցից 3-ի ախտորոշումը համապատասխանում էր ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 25-ի թիվ 825-Ն որոշմամբ նախատեսված պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկին: 2013 թվականի 6 դիմումատուներից 2-ի ուսումնասիրությունը նախապես կատարվել է բժշկական աշխատանքային հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ:

- 2014 թվականի առաջին կիսամյակում դատապարտյալների կողմից ծանր հիվանդության պատճառով պատժի հետագա կրումից ազատվելու խնդրանքով ստացվել է 8 դիմում: ԲԱՀ-ի կողմից ուսումնասիրվել է 8 դիմում, դրանց հիման վրա տրվել է 2 եզրակացություն, որոնցից հավանության են արժանացել 2-ը, իսկ մնացածը գտնվում են ուսումնասիրության փուլում: ՄԳՀ-ի կողմից գննվել է 1 դատապարտյալ, որի համար ներկայացվել է միջնորդություն դատարան, որը մերժվել է: 2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մահացել է 18 դատապարտյալներ, որոնցից 2-ի ախտորոշումը համապատասխանում էր ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 25-ի թիվ 825-Ն որոշմամբ նախատեսված պատիժը կրելուն խոչընդոտող հիվանդությունների ցանկին: 2014 թվականի երկրորդ կիսամյակում ծանր հիվանդության պատճառով պատժի հետագա կրումից ազատելու խնդրանքով դատապարտյալներից ստացվել է 7 դիմում: Բժշկական աշխատանքային հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 3 դատապարտյալի հիվանդությունները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 25-ի թիվ 825-Ն որոշման հավելված 2-ով սահմանված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին: Բժշկական աշխատանքային հանձնաժողովի կողմից բավարարվել է 2 դատապարտյալի վերաբերյալ կազմված եզրակացություն, իսկ 2-ը գտնվում են ուսումնասիրության փուլում:

Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից գննված 2 դատապարտյալի վերաբերյալ դատարան են ներկայացվել հիվանդության պատճառով պատժի հետագա կրումից ազատելու միջնորդություններ, որոնք բավարարվել են:

2014 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում մահացել է 20 դատապարտյալ:

Նշված հարցերի վերաբերյալ Նախարարությունից տեղեկացվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվում է քրեակատարողական ոլորտը կարգավորող իրավական ակտերի քարտեզագրում, որի արդյունքում կմշակվեն իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների նախագծեր՝ հաշվի առնելով ԲԿԱՄ առաջարկությունները: Միաժամանակ տեղեկացվել է, որ գործող իրավակարգավորումներում բացակայում են ԲԱՀ-ի և ՄԳՀ-ի եզրակացությունների տրամադրման ժամկետները և ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվում է իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների նախագծեր,

որոնք առաջիկայում կուղարկվեն շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի:

*** Ազատագրկվածներին բուժման ընթացքում պատժախուց տեղափոխելը՝ որպես կարգապահական տույժի կիրառման հստակ ընթացակարգերի, ինչպես նաև անձի մեկուսացման բավարար մեխանիզմների բացակայություն**

Խնդրահարույց է առկա պրակտիկան և կարգավորող օրենսդրությունը՝ կապված կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ տույժի միջոցների կիրառման հետ: Այսպես.

*** Բուժանձնակազմի դերը անձի մեկուսացման պայմաններում**

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ «Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հեռախոսակապից օգտվելը, դրամական փոխանցումներ, հանձնուքներ ու ծանրոցներ ստանալը և ուղարկելը, նամակագրություն վարելը, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը, աշխատելը, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը:

2. Որպես տույժ՝ պատժախուց տեղափոխված դատապարտյալն իրավունք ունի՝

1) սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իր անձնական հաշվից ամսական ծախսելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով գումար.

2) օգտվելու մեկ ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքից:

3. Պատժախցում պահվող դատապարտյալի նյութակենցադային ապահովման պայմանները սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

4. Պատժախցում պահվող դատապարտյալը գտնվում է բժշկական հսկողության տակ:

5. Պատժախցում պահվող դատապարտյալի նկատմամբ կիրառվող տույժի միջոցը կարող է վաղաժամկետ դադարեցվել բժշկի եզրակացության հիման վրա»:

ՀՀ կառավարության 03.08.2006թ. թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ»-ի համաձայն. «225. Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետն իրավունք ունի հետաձգելու պատժախուց տեղափոխելու ձևով տույժի կիրառումը, կրճատելու պատժախցում գտնվելու ժամանակահատվածը կամ ժամկետից շուտ կալանավորված անձին կամ դատապարտյալին ազատելու տույժը կրելուց՝ հաշվի առնելով հիվանդության հետ կապված պատժախցում գտնվելու անթույլատրելիության վերաբերյալ բժշկի եզրակացությունը:...

...231. Պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձը կամ դատապարտյալն անհատական քնելու տեղով ապահովվում է միայն քնի համար սահմանված ժամերին: Պատժախցում գտնվելու ժամանակահատվածում

կալանավորված անձին կամ դատապարտյալին արգելվում է նամակագրությունը, տեսակցությունները (բացառությամբ պաշտպանի հետ տեսակցությունների), հեռախոսագրույցները, լրացուցիչ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության և այլ առարկաների ձեռք բերումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, հանձնուքների և ծանրոցների ստացումը, սեղանի խաղերից, թերթերից, գրքերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելը:

Պատժախցում պահվող կալանավորված անձինք և դատապարտյալներն օգտվում են ամենօրյա՝ մեկ ժամ տևողությամբ զբոսանքի իրավունքից:...

...232. Մինչև պատժախուց տեղափոխվելը՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի մոտ եղած սնունդը հանձնվում է պահպանության և վերադարձվում տույժը կրելուց հետո: Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում սնունդը պահպանելու համար, սակայն դրանց բնական փչացման համար պատասխանատվություն չի կրում: Սննդամթերքի փչացման դեպքերում այն ոչնչացվում է, ինչի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն և կցվում կալանավորված անձի կամ դատապարտյալի անձնական գործին:...

...234. Պատժախցում պահվող կալանավորված անձի կամ դատապարտյալի սննդի ընդունումն իրականացվում է պատժախցում»:

- «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրի պետն իրավունք ունի հետաձգել պատժախուց տեղափոխելու ձևով տույժի կիրառումը, կրճատել տույժի ժամկետը կամ վաղաժամկետ ազատել տույժի կրումից՝ բժշկական եզրակացության հիման վրա կամ այլ հիմքով:

- ՀՀ կառավարության 26.05.2006թ. թիվ 825-Ն որոշմամբ հաստատված «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» 43-րդ կետի համաձայն՝ պատժախուց փոխադրված կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ իրականացվում է ամենօրյա բժշկական հսկողություն՝ այցելությունների ընթացքում գանգատների ներկայացման և անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական հետազոտության հիման վրա: Պատժախուց այցելության վերաբերյալ բժշկական անձնակազմի կողմից կատարվում են գրառումներ՝ համապատասխան մատյանում: Առողջական վիճակի վատթարացումը հիմք է հանդիսանում կալանավորված անձին կամ դատապարտյալին բժշկի եզրակացության հիման վրա պատժախցից սահմանված կարգով դուրս բերելու համար:

- ՀՀ կառավարության 03.08.2006թ. թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգ»-ի (այսուհետ՝ Կանոնակարգ) 224-րդ և 225-րդ կետերի համաձայն՝ բժշկական սպասարկման համապատասխան ծառայողը և պատասխանատու հերթապահն ամեն օր այցելում են պատժախցում պահվող կալանավորված անձանց կամ դատապարտյալներին՝ դրա մասին գրառում կատարելով

համապատասխան մատյանում: Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետն իրավունք ունի հետաձգելու պատժախուց տեղափոխելու ձևով տույժի կիրառումը, կրճատելու պատժախուցում գտնվելու ժամանակահատվածը կամ ժամկետից շուտ կալանավորված անձին կամ դատապարտյալին ազատելու տույժը կրելուց՝ հաշվի առնելով հիվանդության հետ կապված պատժախուցում գտնվելու անթույլատրելիության վերաբերյալ բժշկի եզրակացությունը:

Խնդիրներ իրավակիրառ պրակտիկայում

- ԲԿԱՄ-ի ուսումնասիրությունների ընթացքում հանդիպել են առանձին դեպքեր, երբ պատժախուցում գտնվող անձանց մեկ օրվա ընթացքում 3 և ավելի անգամ այցելել է բժիշկ, ցուցաբերել բժշկական օգնություն /այդպես շարունակվել է մի քանի օր/, սակայն ազատագրվածը շարունակել է գտնվել պատժախուցում, ինչի արդյունքում հետագայում նրա առողջական վիճակն ավելի է ծանրացել:

- Մեկ այլ դեպքում ազատագրվածի նկատմամբ կիրառված կարգապահական տույժը (պատժախուց տեղափոխելը) դադարեցվել է մինչ տույժի նշանակումն իրականացված վիրահատության հավանական բարդություններից խուսափելու համար. տվյալ դեպքում այդ հանգամանքն անհրաժեշտ էր հաշվի առնել պատժախուցը որպես տույժ նշանակելու որոշման կայացման ժամանակ:

- Ըստ համապատասխան մատյանների գրառումների ուսումնասիրությունների՝ արձանագրվել է, որ բժիշկն ամենօրյա այց պատժախուց չի իրականացնում:

- **Թեև** ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ քրեակատարողական հիմնարկների բժիշկների՝ պատժախուց տեղափոխելու մասին որոշումներ կայացնելու ընթացքին մասնակցությունը, այնուամենայնիվ, ԲԿԱՄ-ն իր ուսումնասիրությունների արդյունքում մշտապես արձանագրել է, որ պատժախուց տեղափոխելու մասին որոշումներ կայացնելիս քրեակատարողական հիմնարկների բժիշկները մասնակցում են վերոնշյալ որոշման կայացման գործընթացին, ինչը փաստվում է համապատասխան որոշման մեջ տույժի ենթարկվող անձի առողջական վիճակի մասին բժշկի գրառումով: Այսպիսով, բժիշկն իր գրառումներով-(«առողջական վիճակը բավարար է պատժախուցում գտնվելու..., առողջական վիճակը բավարար է պատժախուցում պատիժը կրել..., առողջական վիճակը թույլ է տալիս պահել պատժախուցում..., առողջական ներկա վիճակը թույլ է տալիս պատիժը կրել պատժախուցում..., կարող է տույժը կրել պատժախուցում... և այլն») փաստացի մասնակցում է պատժի կիրառման վերաբերյալ որոշման կայացմանը, ինչը չի բխում ինչպես ՀՀ օրենսդրության պահանջներից, այնպես էլ միջազգային չափանիշներից:

Միջազգային կարգավորում

Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի չափորոշիչներով սահմանված է. «Բուժաշխատողները բանտերում աշխատում են որպես բանտարկյալների անձնական բժիշկներ և բժիշկ-հիվանդ դրական հարաբերությունների ապահովումը բանտարկյալների առողջության և բարեկեցության պահպանման կարևորագույն

գործոններից է: Այն գործելակերպը, երբ բանտի բժիշկները տեղեկանք են տալիս այն մասին, թե պիտանի է արդյոք բանտարկյալը մեկուսի բանտարկության պատիժ կրելու համար (կամ ցանկացած այլ տեսակի մեկուսի բանտարկություն բանտարկյալի կամքին հակառակ) դժվար թե նպաստի նման հարաբերությունների կայացմանը: Դա ընդունվել է Նախարարների կոմիտեի՝ Բանտային վերանայված կանոնների վերաբերյալ Rec(2006)2 Հանձնարարականում: Իսկապես, այն կանոնը, որ առկա էր Կանոնների նախորդ տարբերակում, ինչով պարտադրում էր բանտի բժիշկներին տեղեկանք տալ այն մասին, որ բանտարկյալները կարող են կրել պատիժը, այժմ հանված է: ԽԿԿ-ն համարում է, որ բուժանձնակազմը երբեք չպետք է մասնակցի որոշումներ կայացնելու որևէ գործընթացի, ինչը կարող է հանգեցնել ցանկացած տեսակի մեկուսի բանտարկության, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջոցառումը կիրառվում է բժշկական նկատառումներով»¹²⁸⁰:

ԽԿԿ-ի նմանատիպ կարծիքը կիսում է նաև Միացյալ Ազգերի Կազմակերպությունը և հղում կատարելով Համաշխարհային բժշկական ասոցիացիայի բանաձևում մատնանշված բժշկական էթիկայի միջազգային նորմերին և բժիշկների պարտականություններին՝ նշում, որ բուժանձնակազմը ոչ մի դեպքում չպետք է մասնակցի ազատագրկվածի նկատմամբ վարչակազմի կողմից կայացվող վարչական ցանկացած պատժի նշանակմանը կամ դրա վերաբերյալ որոշումների կայացմանը, քանի որ այն չի հանդիսանում բժշկի պարտականությունը: Բժշկի նման չարդարացված գործողությունը կարող է վտանգել նրա հանդեպ ազատագրկվածի վերաբերմունքը: Առհասարակ, բժշկական եզրակացությունը չպետք է հիմք հանդիսանա այս կամ այն պատժատեսակի կիրառման համար¹²⁸¹:

Խնդրի կարգավորման լույսի ներքո կարևոր է, որ ԽԿԿ չափորոշիչների համաձայն. «Բուժանձնակազմը պետք է մեծ ուշադրությամբ վերաբերվի մեկուսի բանտարկության մեջ գտնվող բոլոր բանտարկյալներին: Բուժանձնակազմը պետք է տեղյակ լինի յուրաքանչյուր նման դեպքի մասին և պետք է այցելի բանտարկյալներին նման մեկուսացումից անմիջապես հետո և հետագայում պարբերաբար՝ օրական առնվազն մեկ անգամ այցելի նրանց, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում շտապ բուժօգնություն և բուժում ապահովի: Դրանով հանդերձ, բուժանձնակազմը պետք է բանտի տնօրենին տեղեկացնի բոլոր այն դեպքերի մասին, երբ մեկուսի բանտարկության մեջ գտնվելը լրջորեն սպառնում է բանտարկյալի առողջությանը»¹²⁸²:

Այս կապակցությամբ ԲԿԱՄ-ն առաջարկել է ձեռնարկել միջոցներ, որպեսզի բացառվի քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմի մասնակցությունն ազատագրկվածին պատժախուց տեղափոխելը որպես կարգապահական տույժ կիրառելու որոշման գործընթացին, միաժամանակ սահմանել մեկուսացումից անմիջապես հետո բուժանձնակազմի կողմից պատժախուց տեղափոխված ազատագրկվածի նկատմամբ բժշկական զննություն իրականացնելու պարտադիր պայմանը:

¹²⁸⁰ Տես՝ CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2011, կետ 62

¹²⁸¹ Տես՝ Medical Manual: **Torture, Principles of Expertise According to the Istanbul Protocol; Medical and Mental/Psychological Outcomes; Treatment and Rehabilitation; Principles of Medical Ethics; International Standards on Health in Prison, p. 10, 11**

¹²⁸² Տես՝ CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2011, կետ 63

***Պահման պայմաններ պատժախցում**

(ԲԿԱՄ-ի կողմից ուսումնասիրվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պատժախցերի պահման պայմանները, հիվանդ ազատագրկվածների հանդեպ պատժախուց տեղափոխելը որպես տույժի տեսակ կիրառության և բուժօգնության կազմակերպման հարցերը):

- Կանոնակարգի 231-րդ կետի համաձայն՝ պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձը կամ դատապարտյալն անհատական քնելու տեղով ապահովվում է միայն քնի համար սահմանված ժամերին: Պատժախցում գտնվելու ժամանակահատվածում կալանավորված անձին կամ դատապարտյալին արգելվում է լրացուցիչ սննդամթերքի և առաջին անհրաժեշտության և այլ առարկաների ձեռք բերումը):

- Կանոնակարգի 223-րդ կետի համաձայն՝ «Կալանավորված անձինք կամ դատապարտյալները պատժախուց կարող են տեղափոխվել հետևյալ դեպքերում՝

ա) այլ կալանավորված անձանց կամ դատապարտյալների նկատմամբ ճնշում գործադրելու, նրանց վիրավորելու կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի կամ այլ անձանց վրա հարձակում գործելու,

բ) կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի օրինական պահանջներին չենթարկվելու,

գ) արգելված առարկաներ, իրեր և սննդամթերք պահելու, օգտագործելու և պատրաստելու,

դ) կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի գույքը փչացնելու համար:

Պատժախուց տեղափոխելը որպես տույժի միջոց կիրառվում է նաև այն կալանավորված անձանց կամ դատապարտյալների նկատմամբ, որոնց նկատմամբ նախկինում կիրառվել են երկուսից ավելի կարգապահական տույժեր»:

Խնդիրներ իրավակիրառ պրակտիկայում

- ԲԿԱՄ-ի համար խնդրահարույց է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում գտնվող ազատագրկվածների հանդեպ պատժախուց տեղափոխելը որպես կարգապահական տույժի տեսակ կիրառելը, քանի որ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ պետք է տեղափոխվեն ազատագրկվածներ բացառապես առողջական խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև ծանր առողջական խնդիրներ ունեցող ազատագրկված անձինք: Մինչդեռ, պատժախուց տեղափոխելը՝ որպես կարգապահական տույժ կիրառելու որոշմամբ բժշկական եզրակացության մեջ նշվում է. «առողջական վիճակը թույլ է տալիս գտնվել պատժախցում»: Նման եզրակացությունը մեր գնահատմամբ խնդրահարույց է, քանի որ անկողնային ռեժիմի, լրացուցիչ սննդի և այլ հատուկ պայմանների կարիք չունենալու դեպքում ազատագրկվածը կարող էր գտնվել նաև քրեակատարողական հիմնարկում և չտեղափոխվել «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ:

- Ավելին, ԲԿԱՄ-ն իր ուսումնասիրությունների ընթացքում արձանագրել է, որ ազատագրկվածը քրեակատարողական հիմնարկում ենթարկվել է կարգապահական տույժի՝ պատժախուց տեղափոխում, սակայն տույժի կիրառումը հետաձգվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու և առողջության վատթարացման հիմքով, մինևույն ժամանակ, տույժի կիրառումը իրականացվել է «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում, երբ ազատագրկված անձը դեռևս գտվում էր բուժման ընթացքում:

- Վերոնշյալ մտահոգությունները հաստատվում են նաև նրանով, որ ԲԿԱՄ-ն իր կողմից իրականացված ուսումնասիրությունների ընթացքում հաղիպել է դեպքերի, երբ անձը պատժախցում տույժը կրելուց հետո վերադարձել է համապատասխան բաժանմունք և ստացել է ինտենսիվ բուժում, այնինչ մինչ պատժախուց տեղափոխելը տվյալ անձը ստացել է սիմպտոմատիկ բուժում: Այս պարագայում անձի առողջական վիճակի հնարավոր վատթարացման պատճառ կարող էր լինել նաև պատժախցում գտնվելը:

- ԲԿԱՄ փորձագետները արձանագրել են նաև, որ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում այցելության պահին ազատագրկվածներից մի քանիսը բջջային հեռախոսով բղավելով զրուցում էին, սակայն փորձագետներին ուղեկցող հսկիչը նույնիսկ ուշադրություն չդարձրեց նշված հանգամանքին: Այցելության պահի դրությամբ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում արձանագրված էր 5 պատժախուց տեղափոխելու մասին կարգապահական տույժ, որից 3-ը նշանակված էին ոգելից խմիչքի օգտագործման, իսկ մեկը՝ բջջային հեռախոս ունենալու համար: Այս պարագայում կարելի է եզրահանգել, որ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում կամ դրսևորվում է կողմնակալ մոտեցում, կամ պատշաճ չի ապահովվում անվտանգությունը:

- ԲԿԱՄ-ի ուսումնասիրած քրեակատարողական հիմնարկների պատժախցերի պայմանները չեն համապատասխանում ԽԿԿ-ի կողմից սահմանված նվազագույն չափանիշներին: Խցերը հիմնականում վատ լուսավորված են, թե բնական և թե արհեստական օդափոխություն համակարգերը մատչելի չեն, խցերը ջեռուցվում են անհատական էլեկտրական ջեռուցիչներով, որոնք, սակայն, ոչ բոլոր խցերում են հանդիպել: Խցերը ապահովված չեն աշխատակազմի հետ հաղորդակցվելու միջոցներով հաղորդակցությունն իրականացվում է խցերի դռներին հարվածելու և բղավելու միջոցով: Ազատագրկվածները չունեն լոգանք ընդունելու հնարավորություն, քանի որ չկան անհրաժեշտ հարմարանքներ: Ազատագրկվածների հետ զրույցներից պարզվել է նաև, որ վերջիններս տեղյակ չեն, որ պատժախցում գտնվելու ընթացքում ցնցուղ ընդունելու, զբոսնելու իրավունք ունեն: Խցերում ջուրը մատակարարվում է ժամով կամ տարաներով:

- ԲԿԱՄ-ն այցելության ընթացքում արձանագրել է դեպք, երբ մի պատժախցում պահվող 3 ազատագրկվածների համար նախատեսված էին պատերին փակցված 2 մահճակալ: Չնայած այն հանգամանքին, որ վարչակազմը նշել է, որ երրորդ անձի համար քնելու ժամերին տեղադրվում է մահճակալ, այնուամենայնիվ, ազատագրկվածներից մեկը ԲԿԱՄ փորձագետներին հայտնեց, որ գիշերը քնում է

հատակին: Իսկ, օրինակ, ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի պատժախցերում առհասարակ սեղաններ չեն եղել:

Միջազգային կարգավորում

- Միացյալ Ազգերի Կազմակերպությունը, հղում կատարելով Համաշխարհային բժշկական ասոցիացիայի բանաձևում մատնանշված բժշկական էթիկայի միջազգային նորմերին և բժիշկների պարտականություններին, շեշտել է, որ «...ապացուցված է և որևէ կասկածի տեղիք չի տալիս այն հանգամանքը, որ ազատագրվածների պատժախցում մեկուսացումը վնաս է հասցնում վերջիններիս առողջությանը: Այդ իսկ պատճառով ՄԱԿ-ը գտնում է, որ պատժախուց տեղափոխումը որպես պատժամիջոց չպետք է կիրառվի, իսկ կիրառվելու դեպքում՝ պետք է տևի առավելագույն կարճ ժամանակ»¹²⁸³:

- ԽԿԿ չափորոշիչների համաձայն. «Մեկուսի բանտարկության համար օգտագործվող խցերը պետք է համապատասխանեն այլ բանտարկյալների պահման պայմանների նվազագույն չափանիշներին: Այնպես որ, դրանք պետք է լինեն համապատասխան չափի, ունենան բնական լուսավորություն և սարքավորված լինեն արհեստական լուսավորմամբ (երկու դեպքում էլ լուսավորությունը պետք է բավարար լինի ընթերցանության համար), ինչպես նաև ունենան համապատասխան ջեռուցում և օդափոխություն: Դրանք պետք է ապահովված լինեն նաև բանտի աշխատակազմի հետ հաղորդակցվելու միջոցներով: Պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ, որպեսզի բանտարկյալները կարողանան իրենց բնական կարիքները հոգալ նորմալ պայմաններում օրվա ցանկացած ժամին, ինչպես նաև ցնցուղ ընդունել, համենայնդեպս, նույնքան հաճախ, որքան և սովորական ռեժիմով ապրող բանտարկյալները: Մեկուսի բանտարկության մեջ գտնվող բանտարկյալներին պետք է թույլատրվի կրել բանտային սովորական հագուստ, իսկ նրանց տրվող սնունդը պետք է չտարբերվի բանտային սովորական սննդից, ներառյալ հատուկ դիետաները, երբ այն պահանջվում է: Ինչ վերաբերում է նման բանտարկյալների զբոսանքի համար օգտագործվող տարածքին, ապա այն պետք է բավականաչափ մեծ լինի, որպեսզի իրապես հնարավոր լինի ստանալ ցանկալի ծանրաբեռնվածությունը և նաև ունենա որոշ միջոցներ անցանկալի տարրերից պաշտպանվելու համար»¹²⁸⁴:

- ԽԿԿ չափորոշիչների համաձայն. «Տարածված գործելակերպ է, երբ մեկուսի բանտարկության մեջ գտնվող բանտարկյալների նկատմամբ որպես պատիժ հատկացվում է սահմանափակ քանակության կահույք, ինչն էլ հաճախ ամրացված է լինում հատակին: Սակայն նման խցերում նվազագույնը պետք է լինի սեղան, նորմալ նստելու տեղ ցերեկվա ժամերին (այսինքն՝ այժոռ կամ նստարան), նորմալ մահճակալ և անկողնային պարագաներ գիշերը»¹²⁸⁵:

¹²⁸³ Տես՝ Medical Manual: **Torture, Principles of Expertise According to the Istanbul Protocol; Medical and Mental/Psychological Outcomes; Treatment and Rehabilitation; Principles of Medical Ethics; International Standards on Health in Prison, p. 10, 11**

¹²⁸⁴ Տես՝ CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2011, կետ 58

¹²⁸⁵ Տես՝ CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2011, կետ 60

Խնդրի լուծման կապակցությամբ ԲԿԱՄ-ն առաջարկում է ձեռնարկել միջոցներ պատժախցերի պայմանների բարելավման, ԽԿԿ չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ, ինչպես նաև քննարկել «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում պատժախուց տեղափոխելը որպես կարգապահական տույժ սահմանելու նպատակահարմարության հարցը (որպես հնարավոր օրենսդրական լուծում՝ կարող է նախատեսվել տույժի կիրառման տարածամկետումը մինչ ազատազրկվածի բուժումը):

*** Մեկուսի բանտարկություն պաշտպանական նպատակներով**

- ՀՀ արդարադատության նախարարի 21.11.2011թ. թիվ 194-Ն հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգ»-ի 24-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ կարգապահական խախտման, դրա պայմանները վերացնելու անհրաժեշտության, կալանավորված անձի կամ դատապարտյալի համապատասխան դիմելու դեպքերում Հիմնարկի պետի բացակայության ժամանակ անվտանգությունն ապահովող հերթապահ խմբի կամ Հիմնարկի այլ ծառայողի գրավոր զեկուցագրի հիման վրա կալանավորված անձին կամ դատապարտյալին առավելագույնը 24 ժամով ժամանակավոր մեկուսացնում է մինչև Հիմնարկի պետի ժամանելը՝ կազմելով համապատասխան արձանագրություն:

Խնդիրներ իրավակիրառ պրակտիկայում

- ԲԿԱՄ փորձագետներն ուսումնասիրությունների ընթացքում հանդիպել են դեպքերի, երբ անձը տեղափոխվել է պատժախուց մինչև 24 ժամ տևողությամբ /24 ժամով մեկուսացման որոշում/, սակայն նրա նկատմամբ պատժախուց տեղափոխելը որպես տույժի տեսակի կիրառման մասին որոշում դեռևս չէր կայացվել: Ավելին, մոտ 14 ժամ պատժախցում անցկացրած անձի նկատմամբ պետի կողմից որոշում է կայացվել չկիրառել պատժախուց տեղափոխումը, այլ բավարարվել միայն նկատողություն հայտարարելով:

- ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել էին դեպք, երբ ազատազրկված անձը տեղափոխվել էր պատժախուց ներքին կանոնակարգը խախտելու՝ խուց չվերադառնալու պատճառով: Պարզ դարձավ, որ խուց չվերադառնալը կապված էր վերջինիս առողջական խնդրի հետ. նա տառապում է իխտիոզ հիվանդությամբ, որի հետևանքով իր խցակիցների հետ խնդիրներ է ունենում /մաշկը թեփոտում է, ինչը տհաճություն է առաջացնում մյուս ազատազրկվածների համար/:

- ԲԿԱՄ-ն իր ուսումնասիրությունների ընթացքում հանդիպել է ազատազրկվածի, ով կարգապահական տույժի (պատժախուց տեղափոխումը) ենթարկվելուց անմիջապես հաջորդ օրը կրկին ենթարկվել է կարգապահական տույժի՝ տեղափոխվելով պատժախուց: Ազատազրկվածի նման պահվածքը պայմանավորված է եղել խցակիցների կողմից իր հանդեպ պարբերաբար դրսևորվող վերաբերմունքով:

Միջազգային կարգավորում

ԽԿԿ չափորոշիչների համաձայն.

- «Յուրաքանչյուր բանտային համակարգում կան բանտարկյալներ, ում համար կարող է պահանջվել պաշտպանություն այլ բանտարկյալներից: Դա կարող է կապված լինել նրանց իրավախախտման բնույթից, քրեական արդարադատության մարմինների հետ նրանց համագործակցությունից, բանդաների միջև բախումներից, բանտի ներսում կամ դրսում ունեցած պարտքերից կամ տվյալ անձի ընդհանուր խոցելիությունից: Այն դեպքում, երբ նման իրավիճակներում շատ բանտարկյալների պահպանման պայմանները կարելի է կարգավորել բանտի ողջ բնակչության շրջանակում, նրանցից մի քանիսի նկատմամբ վտանգն այն աստիճանի է հասնում, որ բանտն իր պարտավորություններն այդ անձանց նկատմամբ կարող է կատարել միայն այն դեպքում, եթե նրանց պահեն մնացած բոլոր բանտարկյալներից առանձին: Դա կարող է կատարվել հենց բանտարկյալի խնդրանքով կամ բանտի ղեկավարության նախաձեռնությամբ, երբ դա անհրաժեշտ համարվի: Ինչպիսին էլ որ լինի այդ գործընթացը, փաստն այն է, որ բանտարկյալի համար կարող է շատ դժվար լինել դուրս գալ այդ պաշտպանության հովանուց պատժի մնացած մասը կրելու ողջ ընթացքում և հնարավոր է՝ հետագա բանտարկությունների ժամանակ ևս: Պետությունները պարտավոր են բանտարկյալների համար ապահովել անվտանգ պայմաններ և պետք է ձգտեն կատարել այդ պարտականությունը՝ թույլատրելով հնարավորինս շատ սոցիալական փոխգործակցություն բանտարկյալների միջև, ինչը համատեղելի է պատշաճ կարգ ու կանոն պահպանելու հետ: Պաշտպանական նպատակներով մեկուսի բանտարկության հարկ է դիմել միայն այն դեպքում, երբ արդեն սպառվել են տվյալ բանտարկյալի անվտանգությունն ապահովելու մնացած բոլոր միջոցները:

- Պետք է արգելել իրար հաջորդող կարգապահական տույժերի կիրառումը, ինչը հանգեցնում է նրան, որ մեկուսի բանտարկության անընդմեջ ժամանակահատվածը գերազանցում է սահմանված պատժի առավելագույն ժամկետը: Բանտարկյալի կողմից կատարված ցանկացած իրավախախտում, ինչը համարվում է, որ պահանջում է ավելի խիստ պատժամիջոցների կիրառում, պետք է դիտարկվի քրեական արդարադատության համակարգի շրջանակներում»¹²⁸⁶:

Վերոնշյալի կապակցությամբ ԲԿԱՄ-ն առաջարկել է քննարկել նման կարգավորման սահմանման հարցը՝ հաշվի առնելով ԽԿԿ չափորոշիչները:

* Մեկուսի բանտարկության ժամկետներ

- ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 95-րդ հոդվածի համաձայն՝ պատիժը կրելու սահմանված կարգը խախտելու համար ազատագրկման դատապարտված անձի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել նաև պատժախուց տեղափոխելը մինչև տասնհինգ օր:

¹²⁸⁶ Տես՝ CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2011, կետ 56

Միջազգային կարգավորում

ԽԿԿ չափորոշիչների համաձայն. «Բանտարկյալին մյուս բանտարկյալների հետ շփումից զրկելը կարող է օրենքով նախատեսված նախատեսված սովորական կարգապահական ընթացակարգի շրջանակներում կիրառվել՝ որպես ամենախիստ կարգապահական պատիժ: Գիտակցելով նման տույժին բնորոշ վտանգները՝ երկրները սահմանում են այն առավելագույն ժամկետը, որի ընթացքում այն կարող է կիրառվել: Դա կարող է տատանվել ամենաքիչը մի քանի օրից մինչև առաավելագույնը մեկ ամիս կամ դրանից ավելի: Որոշ երկրներ թույլատրում են բանտերի տնօրեններին սահմանել որոշակի առավելագույն ժամանակահատված՝ դատական մարմիններին հնարավորություն ընձեռելով սահմանելու ավելի երկար ժամկետներ: Երկրների մեծամասնությունը, բայց ոչ բոլորը, արգելում են մեկուսի բանտարկության ձևով իրար հաջորդող պատիժներ նշանակելը: Հաշվի առնելով մեկուսի բանտարկության պոտենցիալ չափազանց վնասակար հետևանքները՝ ԽԿԿ-ն համարում է, որ համամասնության սկզբունքը պահանջում է, որպեսզի այն կիրառվի որպես կարգապահական պատիժ միայն բացառիկ դեպքերում և որպես վերջին միջոց, ընդ որում, հնարավոր ամենակարճ ժամանակահատվածի ընթացքում: Եվրախորհրդի անդամ շատ պետություններում միտում կա առավելագույնս նվազեցնել մեկուսի բանտարկության՝ որպես պատժի հնարավոր ժամկետը: ԽԿԿ-ն համարում է, որ որոշակի խախտման համար առավելագույն ժամկետը չպետք է գերազանցի 14 օրը, իսկ նախընտրելի է և ավելի քիչը»¹²⁸⁷:

Այս կապակցությամբ ԲԿԱՄ-ն առաջարկել է քննարկել պատժախուց տեղափոխելը որպես կարգապահական տույժ նշանակելու ժամկետների վերանայման հնարավորությունը:

Հարկ է նշել նաև, որ. «Մեկուսի բանտարկության համար նախատեսված չափանիշներ սահմանելիս ԽԿԿ-ի նպատակն է եղել նվազագույնի հասցնել մեկուսի բանտարկության կիրառումը բանտերում, ոչ միայն այն մտավոր, ֆիզիկական և սոցիալական վնասի պատճառով, որ կարող է հասցվել բանտարկյալներին, այլև հաշվի առնելով այն հնարավորությունները, որ դա կարող է ստեղծել միտումնավոր բռնության համար: ԽԿԿ-ն համարում է, որ մեկուսի բանտարկություն պետք է կիրառվի միայն բացառիկ դեպքերում՝ որպես ծայրահեղ միջոց և հնարավոր ամենակարճ ժամկետով: Մեկուսի բանտարկության մեջ գտնվողները պետք է պահվեն տանելի պայմաններում: Բացի դրանից, այդ միջոցը պետք է ուղեկցվի բանտարկյալների նկատմամբ նվազագույն սահմանափակումներով՝ համապատասխան այդ միջոցի նպատակներին և հենց բանտարկյալների վարքին, և պետք է միշտ գուցարդվի դրա հետ կապված հարցերը կարգավորելու անձնակազմի եռանդուն ջանքերով: Ավելի կոնկրետ, մեկուսի բանտարկության ռեժիմները պետք է լինեն հնարավորինս դրական և ուղղված լինեն այն գործոնների կարգավորմանը, որոնք նման միջոցը դարձրել են անհրաժեշտ: Բացի այդ, մեկուսի բանտարկության որոշում կայացնելու գործընթացը և այդ որոշման վերանայումը պետք է ուղեկցվեն իրավական և իրական երաշխիքներով: Բանտերում

¹²⁸⁷ Տես՝ CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2011, կետ 55

առկա բարդ իրավիճակներին մեկուսի բանտարկության՝ իբրև համաչափ արձագանքի ապահովումը կնպաստի վարչակազմի և բանտարկյալների միջև դրական փոխգործակցությանը և կսահմանափակի վնասը, որն ամենից առաջ հասցվում է այն անձանց, որոնք հաճախ արդեն իսկ ամենաանհանգիստ բանտարկյալների շարքերում են»¹²⁸⁸:

Արդարադատության նախարարությունը բարձրացված խնդիրների կապակցությամբ հայտնել է, որ նշված հարցերը կընդգրկվեն ՀՀ արդարադատության նախարարության կողմից քրեակատարողական ոլորտը կարգավորող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումներ կատարելու քարտեզագրման աշխատանքներում:

*** Խնդրահարույց է նաև քրեակատարողական հիմնարկներում հարազատների կողմից բերված դեդորայքի, բժշկական սպասարկման այլ պարագաների հաշվառման և վերահսկման մեխանիզմի բացակայությունը**

Արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի հանձնարարությամբ այսուհետ կալանավորված անձանց և դատապարտյալների հարազատների կողմից բերված դեդամիջոցներն ընդունվում են քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի համապատասխան մասնագետների հետ խորհրդակցելուց հետո: Դեդամիջոցները գրանցվում են մատյաններում և բուժում ստացող անձանց տրամադրվում են բացառապես բուժող բժշկի թույլտվությամբ:

*** Պետական տուրքի վճարման չհիմնավորված պահանջով պայմանավորված խոչընդոտներ՝ դատապարտյալների կողմից դատական գործերի նյութերի պատճենները ստանալու գործընթացում**

Արձանագրվել են դատական գործերից փաստաթղթերի պատճենների (կրկնօրինակների) տրամադրման համար պետական տուրքի վճարման ոչ իրավաչափ պահանջի ներկայացման դեպքեր՝ գործում եղած բոլոր էջերի քանակի հաշվարկի հիման վրա: Ընդ որում, որևէ տարբերակում չի դրվում, թե պահանջվող փաստաթղթերը վերաբերում են դատարանի վճռին, դատավճռին, դատարանի որոշմանը, հայցադիմումին կից փաստաթղթերի պատճեններին, թե՛ քրեական գործի այլ նյութերին: «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հիմնարկի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների համար կարող է գանձվել միայն պետական կամ տեղական տուրք կամ տեղական վճար՝ օրենքով սահմանված չափով և կարգով, բացառությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերի:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 7-րդ հոդվածով սահմանված են պետական տուրքի գանձման օբյեկտները, 7-րդ հոդվածի ա կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝

¹²⁸⁸ Տես՝ CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2011, կետ 64

դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար:

Իսկ նույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը:

Այսպես, դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենը (կրկնօրինակը) գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝ բազային տուրքի 50 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով:

Գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տալու համար՝ բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 10 տոկոսի չափով:

Դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար՝ պատրաստված յուրաքանչյուր կրիչի (կոմպակտ լազերային սկավառակի) համար՝ բազային տուրքի չափով:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից բխում է, որ պետական տուրք կարող է գանձվել բացառապես թվարկված փաստաթղթերի պատճենները տրամադրելու համար:

Դատական գործում առկա այլ նյութերի պատճենների տրամադրման համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում չսահմանված դրույքաչափերով պետական տուրքի գանձումը իրավաչափ չէ և ուղղակիորեն հակասում է վերոգրյալ օրենքի պահանջներին: Ինչ վերաբերում է Օրենքի 9-րդ հոդվածի վերնագրին, ապա «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավական ակտի կամ իրավական ակտի բաժնի, գլխի կամ հոդվածի վերնագիրը չի կարող օգտագործվել իրավական ակտի կամ համապատասխանաբար նրա բաժնի, գլխի կամ հոդվածի մեկնաբանման համար:

Հետևաբար, պետական տուրքը կարող է գանձվել բացառապես Օրենքի 9-րդ հոդվածում նշված փաստաթղթերի համար՝ միայն դրանց համար Օրենքով սահմանված դրույքաչափերով: Այսինքն, պետական տուրք կարող է գանձվել միայն.

Ա. Դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենի,

Բ. Հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենների,

Գ. Դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի տրամադրման համար:

Վերոգրյալ փաստաթղթերից բացի՝ դատական գործերում առկա որևէ այլ փաստաթղթերի պատճենների տրամադրման համար պետական տուրքի վճարման պահանջի ներկայացումը և չվճարման պատճառաբանությամբ՝ Օրենքի 9-րդ հոդվածով չնախատեսված փաստաթղթերի պատճենների տրամադրման մերժումը ուղղակիորեն հակասում է «Պետական կառավարչական հիմնարկների մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքների դրույթներին:

«Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական

կառավարչական հիմնարկ ստեղծելու, «Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի 30.08.2006թ.-ի թիվ 01-Ն որոշմամբ սահմանվել է, որ դատական դեպարտամենտի կենտրոնական մարմինը կազմակերպում է արխիվային գործի վարումը, օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված կարգով ապահովում է տեղեկատվության տրամադրումը հասարակությանը:

Հայաստանի Հանրապետության դատարանների արխիվը Դատական դեպարտամենտի կառուցվածքային ստորաբաժանում է, իրականացնում է արխիվ հանձնված գործերի, կայացված վճիռների, դատավճիռների, որոշումների և այլ փաստաթղթերի հաշվառում, ընդունում է արխիվային գործերը և պատասխանատվություն կրում դրանց պահպանման համար, տրամադրում է արխիվում առկա տեղեկատվությունը տեղեկատվություն հայցող անձանց, վարում է պետական տուրքի հաշվառում:

ՀՀ դատարանների Նախագահների խորհրդի կողմից 21.01.2006թ. թիվ 94 որոշմամբ հաստատված «ՀՀ դատարանների աշխատակազմերի կողմից պետական տուրքի հաշվառման և տեղեկատվության տրամադրման կարգ»-ի 1-ին կետի համաձայն՝ դատարանի աշխատակազմի գրասենյակը փաստաթղթերն ընդունելու ժամանակ ճշտում է պետական տուրքը ՀՀ դատարանների գանձապետական համապատասխան հաշվին վճարված լինելու հանգամանքը հավաստող փաստաթղթի առկայությունը: Պետական մարմնի կամ կազմակերպության կողմից պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ է համարվում բանկային կամ գանձապետական հաշվից քաղվածքի կամ վճարման հանձնարարականի, իսկ ֆիզիկական անձանց կողմից պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագրերի բնօրինակները: Այն դեպքում, երբ պետական տուրքը վճարված է այլ հաշվեհամարի (ոչ դատարանի), կամ չի ներկայացվել պետական տուրքը վճարելու փաստը հաստատող նախորդ պարբերությունում նշված փաստաթղթերը կամ դրանք ներկայացվել են ջնջումներով, դատարանի աշխատակազմի գրասենյակը մինչև հայցադիմումը (դիմումը), այլ փաստաթուղթը դատավորին, դատարանի պաշտոնյային հանձնելը կազմում է տեղեկանք այդ մասին և կցում գործին ըստ հավելված 3-ի: Պետական տուրքը վճարված չլինելու վերաբերյալ տեղեկանքն ստորագրվում է գրասենյակի պետի կողմից:

Կարգի 3-րդ կետի համաձայն՝ պետական տուրքի հաշվառումն իրականացվում է դատավորի կողմից վարույթ ընդունած գործերով և աշխատակազմի կողմից մատուցված այլ ծառայություններով:

Նույն կարգի 8-րդ կետի համաձայն՝ գանձված պետական տուրքի մասին տեղեկատվությունը ՀՀ դատարաններն ուղարկում են նաև ՀՀ դատական դեպարտամենտ:

ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող տուրքերի տեսակները, չափը, վճարման կարգը, իսկ 42-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով:

Հաշվի առնելով, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով՝ պետական

տուրքի վճարման պարտականությունը սահմանված է միայն դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման, հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենների և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի տրամադրման համար, դատական գործի այլ նյութերի տրամադրման համար Դատական դեպարտամենտի կողմից ներկայացվող պետական տուրքի պահանջը և համապատասխան չափով տուրքի գանձումն ուղղակիորեն հակասում է «Պետական կառավարչական հիմնարկների մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքների դրույթներին՝ հանգեցնելով անձի նկատմամբ օրենքով չնախատեսված պարտականության սահմանմանն ու Դատական դեպարտամենտի լիազորությունների չարաշահմանը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ օրենքով վերոնշյալ փաստաթղթերից բացի՝ դատական գործերում առկա որևէ այլ փաստաթղթերի պատճենների տրամադրման համար պետական տուրքի վճարման պահանջ նախատեսված չէ, ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկվել է քննարկել դատական գործի բոլոր փաստաթղթերի տրամադրման համար անհրաժեշտ իրավակարգավորման նախատեսման հարցը: Ընդ որում, նկատի ունենալով դատական գործերի փաստաթղթերի միջին ծավալները, նման իրավակարգավորման պարագայում առաջարկվել է նախատեսել միայն փաստաթղթերի տրամադրման համար փաստացի կատարված ծախսերի գանձման կարգ (բացառությամբ օրենքով նախատեսված՝ պետական տուրքի գանձման դեպքերի), քանի որ դատական գործերի բոլոր նյութերի տրամադրման համար պետական տուրքի գանձումը կարող է առաջացնել արդար դատաքննության իրավունքի անհամաչափ սահմանափակման վտանգ:

ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված կարգավորումների, դրանց կիրառելիության, հետևանքների, ինչպես նաև նշված հոդվածով չնախատեսված դատական գործի այլ նյութերի կրկնօրինակների տրամադրման համար գանձվող վճարների վերաբերյալ անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների բացակայության հարցի վերաբերյալ բարձրացված հարցերը ներկայումս քննարկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում, որոնց արդյունքների հիման վրա անհրաժեշտության դեպքում կմշակվի համապատասխան իրավական ակտի նախագիծ: Հետևաբար, վերոհիշյալ հարցի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության դիրքորոշման մասին լրացուցիչ կտեղեկացվի համապատասխան քննարկումներն ավարտելուց հետո:

*** Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից փաստաբանին տեսակցելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման պրակտիկա**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մեղադրյալն իրավունք ունի առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման:

Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պաշտպանը, նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, կասկածյալի կամ մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, նրա օրինական շահերը պաշտպանելու, կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար, սույն օրենսգրքով սահմանված կարգով, իրավունք ունի առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի համաձայն՝ կասկածյալն իրավունք ունի առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցվել իր պաշտպանի հետ՝ առանց դրանց թվի և տևողության սահմանափակման, բացառությամբ օրենսգրքի 211-րդ հոդվածի երկրորդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի¹²⁸⁹:

Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 141-րդ հոդվածի համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը պարտավոր է՝ պաշտպանին անարգել թույլատրել ներկայանալ կալանավորված անձին, ապահովել նրանց առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) տեսակցելու հնարավորությունը՝ առանց դրանց թվի և տևողության սահմանափակման:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված և կալանավորված անձանց ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը հայտարարելու պահից նրանց տրամադրվում են առանձին, անարգել տեսակցություններ պաշտպանի հետ՝ առանց քանակի և տևողության սահմանափակման, իսկ օրինական ներկայացուցչի հետ՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Տեսակցությունները տրամադրվում են գործին որպես պաշտպան մասնակցող փաստաբանի հետ՝ անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև փաստաբանների միության կողմից տրված՝ իր՝ փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատապարտյալին տրամադրվում են տեսակցություններ պաշտպանի հետ՝ առանց քանակի և տևողության սահմանափակման:

¹²⁸⁹ Եթե առկա է կասկածյալի մասնակցությամբ դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը, ապա հետաքննության մարմինը կամ քննիչը տեսակցության տևողությունը կարող է սահմանափակել՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով կասկածյալին և նրա պաշտպանին: Պաշտպանի հետ տեսակցության ժամկետը չի կարող երկու ժամից պակաս լինել:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանը իրավունք ունի առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, այդ թվում՝ տեսակցությանը հրավիրելու արտոնագրված թարգմանչի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Այսպիսով, ոչ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և ոչ էլ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը չի նախատեսում ժամանակահատվածային սահմանափակում կասկածյալի, մեղադրյալի և դատապարտյալի կողմից իր պաշտպանի հետ անարգել տեսակցելու իրավունքի նկատմամբ, ավելին, օրենքով ամրագրված է իմպերատիվ պահանջ առ այն, որ այս տեսակցություններն իրականացվում են անարգել՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման: Փաստաբանի հետ տեսակցության իրավունքի միակ սահմանափակումները նախատեսված են «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով՝ արտակարգ իրավիճակ հայտարարելու դեպքում, երբ կարող են կասեցվել ձերբակալված կամ կալանավորված անձանց մի շարք իրավունքների իրականացումը՝ այդ թվում, տեսակցությունների սահմանափակման միջոցով, ինչպես նաև կասկածյալի մասնակցությամբ դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունից ելնելով, երբ հետաքննության մարմինը կամ քննիչը սահմանափակում է տեսակցության տևողությունը: Որևէ այլ դեպքում օրենքով չի նախատեսվում այս իրավունքի սահմանափակման հնարավորություն:

Հետևաբար, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործողությունները, ինչպես նաև Կանոնակարգով սահմանված՝ փաստաբանի հետ տեսակցությունների իրականացման կարգը, որը սահմանափակում է համապատասխան անձանց՝ փաստաբանի հետ տեսակցությունները աշխատանքային օրերով և համապատասխան ժամերով, ըստ էության, հանդիսանում է մեղադրյալի, կասկածյալի և դատապարտյալի կողմից փաստաբանին տեսակցելու իրավունքի և պաշտպանի տեսակցության իրավունքի ուղղակի սահմանափակում, ինչը նախատեսված չէ օրենքով: Վարչակազմի կողմից նման արգելքի սահմանումը և առկա իրավակարգավորումը ուղղակիորեն հակասում են ՀՀ Սահմանադրության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Այսպես, ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք: Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք:

Սահմանադրության 83.5-րդ հոդվածի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու պայմանները և կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները ու նրանց պարտականությունները: Նույն իրավանորմը վերաբարձրված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում:

Հետևաբար, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կանոնակարգով չեն կարող սահմանափակվել կալանավորված և ձերբակալված անձանց, դատապարտյալների՝ իրենց փաստաբաններին անարգել տեսակցելու իրավունքը (ինչպես նաև պաշտպանի կողմից համապատասխան անձանց հետ տեսակցելու իրավունքը):

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով ազատագրված անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով ամրագրված՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի գործողության սկզբունքը՝ Մարդու իրավունքների պաշտպանն Արդարադատության նախարարին առաջարկել է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց կողմից փաստաբանի հետ, ինչպես նաև վերոնշյալ անձանց հետ պաշտպանի տեսակցության իրավունքը՝ աշխատանքային օրերով և համապատասխան ժամերով սահմանափակելու դեպքերը բացառելու և Կանոնակարգը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ և դրվել շրջանառության մեջ: Նախագծի վերաբերյալ ստացվել են շահագրգիռ գերատեսչությունների դիտողություններն ու առաջարկությունները և նախագծի լրամշակված տարբերակը ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարության 2014թ. դեկտեմբերի 9-ի գրությամբ:

*** Ազատագրվածներին՝ անձը հաստատող փաստաթղթերով ապահովելու հետ կապված խնդիրներ**

Նշված խնդրի հետևանքով ազատագրվածները փաստացի զրկվում են իրենց կենսաթոշակ ստանալու, հաշմանդամության խումբ սահմանելու, քաղաքացիական գործարքներ (անշարժ գույքի առուվաճառքի, նվիրատվության պայմանագրերի կնքում և այլն) իրականացնելու իրավունքներից:

Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ 2014 թվականի ընթացքում ավելի քան 150 ազատագրված ունեցել է անձը հաստատող փաստաթղթերով ապահովման խնդիր:

Խնդրի վերաբերյալ ՀՀ ոստիկանությունից տեղեկացվել է, որ ազատագրված դատապարտված անձանց իրավունքների իրացման նպատակով քրեակատարողական հիմնարկի վարչակազմի միջնորդության հիման վրա տրամադրվում է ժամանակավոր վկայական: Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի թիվ 411-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագիծ, որի համաձայն ժամանակավոր վկայականը նախատեսվում է տրամադրել ոչ թե 15 օր վավերականության ժամկետով, այլ ազատագրված ամբողջ ժամանակահատվածով: ՀՀ ոստիկանության նախագծի վերաբերյալ ներկայացվել է դրական եզրակացություն:

ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 1064-Ն որոշմամբ անձը հաստատող փաստաթղթի ցանկում նախատեսվել է նաև ժամանակավոր վկայականը:

Նույնականացման քարտերի համակարգը սպասարկող լեհական ընկերության հետ տարվել են բանակցություններ՝ լրացուցիչ շրջիկ կայաններ ձեռք բերելու համար՝ մինչև 2014 թվականի տարեվերջ: Նշվել է նաև, որ ՀՀ ոստիկանությունը քայլեր է ձեռնարկում հնարավորինս կարճ ժամկետում ազատագրված դատապարտված անձանց նույնականացման քարտ տրամադրելու գործընթացը սկսելու համար:

Տեղեկացվել է նաև, որ խնդրի կարևորությունը և լուծման տարբերակները քննարկվել են նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետի հետ:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐ

ԲԿԱՄ փորձագետները 2014 թվականի ընթացքում այցելել են ՌՌ կարգապահական մեկուսարաններ, Երևանի կայազորային զինվորական հոսպիտալի հատուկ դեպքերի բաժանմունք և կարգապահական գումարտակ¹²⁹⁰:

Արձանագրված խնդիրներ

- ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության մեկուսարանների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի անհամապատասխանություն՝ ՀՀ օրենսդրության պահանջներին և ԽԿԿ-ի կողմից սահմանված չափորոշիչներին (խնդրի լուծման ուղղությամբ մշակվել է փոփոխությունների և լրացումների նախագիծ, որը Կառավարություն կներկայացվի 2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակում),
- ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության մեկուսարաններում կային պատերից ամրացված և փակվող երկաթե մահճակալներ (նառեր) և դրանց համար որպես աթոռ ծառայող հենակներ (Պաշտպանության նախարարի հանձնարարությամբ դրանք ապամոնտաժվել են),
- Երևանի կայազորային զինվորական հոսպիտալի հատուկ դեպքերի բաժանմունքում զբոսաբակի, տեսակցությունների, հանձնուքների ընդունման համար սենյակների բացակայություն, որոշ խցերի, լոգարանի, սանհանգույցի ոչ բարվոք վիճակ, բաժանմունք ընդունվող անձանց բուժզննության և դրանից անկախ՝ անձնական խուզարկության օրենքով նախատեսված պահանջների չապահովում (Պաշտպանության նախարարի հանձնարարությամբ միջոցներ են ձեռնարկվել խնդիրները լուծելու ուղղությամբ),
- **Կարգապահական գումարտակի ծայրահեղ վատ պահման պայմաններ** (Պաշտպանության նախարարի հանձնարարությամբ միջոցներ են ձեռնարկվել դատապարտված զինծառայողների գումարտակի վաշտի զորանոցի վերանորոգման ուղղությամբ: Ներկայումս վերանորոգման աշխատանքներն ավարտված են, և զինծառայողները պատիժը կրում են վերանորոգված զորանոցում):

¹²⁹⁰ ԲԿԱՄ-ն այցելել է Երևանի կայազորի կարգապահական վաշտ, Երևանի կայազորի ռազմական ոստիկանություն/մեկուսարան, ՀՀ ռազմական ոստիկանության վարչություն/մեկուսարան, ՀՀ ՊՆ ՌՌ Վայքի կայազորի ռազմական ոստիկանություն/մեկուսարան, ՀՀ ՊՆ ՌՌ Մարտունու կայազորի ռազմական ոստիկանություն/մեկուսարան, ՀՀ ՊՆ ՌՌ Վանաձորի կայազորի ռազմական ոստիկանություն/մեկուսարան, ՀՀ ՊՆ ՌՌ Իջևանի կայազորի ռազմական ոստիկանություն, ՀՀ ՊՆ ՌՌ Արմավիրի կայազորի ռազմական ոստիկանություն, ՌՌ կարգապահական մեկուսարանի Կանաչի հոսպիտալի հատուկ դեպքերի բաժանմունք, ՀՀ ՊՆ Կարգապահական գումարտակ

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության մեկուսարաններ

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության մեկուսարաններ իրականացված այցելությունների ընթացքում ԲԿԱՄ-ն արձանագրել են ՀՀ օրենսդրության խախտումներ և ենթաօրենսդրական ակտերի անհամապատասխանություն Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի սահմանած չափորոշիչներին:

Այսպես,

1. ՀՀ կառավարության 22.05.2008թ. թիվ 595-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանների ներքին կանոնակարգ»-ի (այսուհետ՝ Կանոնակարգ) 15-18 կետերով նախատեսված են ձեռքբերված կամ կալանքի դատապարտված անձանց նյութակենցաղային և բուժսանիտարական ապահովման համար տրամադրվող պարագաները (քնելու տեղ, անկողնային պարագաներ և սպիտակեղեն, ճաշարանային սպասք, օձառ, հիգիենիկ թուղթ, գրենական պիտույքներ (թուղթ, գրիչ), լրագրեր, մենախուցը մաքրելու առարկաներ, անձնական հիգիենայի համար տաք ջուր):

Մինչդեռ, ԽԿԿ չափորոշիչների համաձայն՝ ՁՊՎ-ում ձեռքբերված անձը պետք է ապահովված լինի խմելու ջրի ծորակով (ցանկալի է մշտական ջրի առկայությամբ), իսկ կալանքի դատապարտված անձը՝ մեկուսացված սանհանգույցով: Ավելին, որպես պարտադիր պայման, ՀՀ օրենսդրությունը նախատեսում է, որ ձեռքբերված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար («Ձեռքբերված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված): ԲԿԱՄ այցելությունների ընթացքում արձանագրվել է, որ մեկուսարանների խցերում ստեղծված չեն պայմաններ յուրաքանչյուր ձեռքբերված կամ կալանքի դատապարտված անձի համար 4 քմ մակերեսով տարածք ապահովելու համար: Այսպես, մոտ 15 քմ մակերես ունեցող խուցը նախատեսված է 4 անձի համար:

Այսպիսով, մեկուսարանների խցերը կալանքի դատապարտված անձանց համար ԽԿԿ չափորոշիչներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է ապահովել խմելու ջրի ծորակով, մեկուսացված սանհանգույցով, ինչպես նաև նվազեցնել խցերում պահման ենթակա անձանց քանակը՝ յուրաքանչյուր անձին 4 քմ մակերեսով տարածք ապահովելու համար:

2. Այցերի ընթացքում ԲԿԱՄ-ն արձանագրել է, որ խուզարկությունը և արտաքին գնությունն իրականացվում են միասին, որի համար հիմք է հանդիսանում Կանոնակարգի 8-րդ կետը. «Անձնական խուզարկության ժամանակ ձեռքբերված կամ կալանքի դատապարտված անձինք ենթարկվում են բուժզննության», մինչդեռ, տվյալ դրույթը չի համապատասխանում «Ձեռքբերված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասին, որի համաձայն՝ բժշկական գնությունը իրականացվում է ձեռքբերվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից

հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Արտաքին (բժշկական) զննության՝ միայն բուժաշխատողի ներկայությամբ իրականացնելու պահանջն անմիջականորեն բխում է ԽԿԿ չափորոշիչներից և Ստամբուլյան արձանագրությունից:

Հետևաբար, Կանոնակարգի 8-րդ կետն անհրաժեշտ է համապատասխանեցնել օրենքին (համապատասխանաբար պետք է նաև փոփոխություններ իրականացնել Ձև N 3 արձանագրությունում):

3. ԲԿԱՄ-ի համար խնդրահարույց է Կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված՝ ձերբակալված կամ կալանքի դատապարտված անձանց անձնական հիգիենայի համար տաք ջրով ապահովելու մեխանիզմը՝ ջրի ծորակի բացակայության դեպքում: Տվյալ հանգամանքը առավել խնդրահարույց է երևում 160-րդ կետով, որի համաձայն՝ կարգապահական մեկուսարանում սննդի տաքացման համար նախատեսված սենյակում պետք է լինի փակվող կափարիչով, եռացած ջրով բաք, որն ըստ պահանջարկի բաշխվում է մենախցերին մետաղյա գավաթներով՝ անհատական՝ ամեն ձերբակալված անձին և դատապարտյալին առանձին:

4. ԲԿԱՄ-ի համար խնդրահարույց է նաև Կանոնակարգի 24-րդ կետը, որով նախատեսված է, որ սննդի ընդունումից հրաժարվելու փաստը չի կասեցնում ձերբակալված կամ կալանքի դատապարտված անձին այլ վայրեր տեղափոխելը, անհրաժեշտության դեպքում փոխադրումն իրականացվում է բուժաշխատողի ուղեկցությամբ: Բուժաշխատողի ուղեկցման հանգամանքը կարող է բավարար երաշխիք չլինել անձի առողջության պահպանման համար, ինչը նույնպես հաստատվում է ԽԿԿ չափորոշիչներով: Ընդ որում, ԽԿԿ չափորոշիչների համաձայն՝ բժշկին իրավունք է վերապահվում կասեցնել վատառողջ ազատազրկվածի տեղափոխումը (ՔԿՀ-ներում արդեն իսկ գոյություն ունի պրակտիկա, երբ բժշկի ցուցումով կալանավորը չի տեղափոխվում դատարան՝ հերթական դատական նիստի): Գտնում ենք, որ վերոնշյալ կետը լրացման կարիք ունի:

5. Պարզաբանման կարիք ունի Կանոնակարգի 28-րդ կետի 17-րդ ենթակետը, որի համաձայն՝ ձերբակալված կամ կալանքի դատապարտված անձին արգելվում է աշխատավայրում պահել սննդամթերք: Անհասկանալի է՝ արդյոք ձերբակալվածը կարո՞ղ է ընդգրկվել աշխատանք կատարելու գործընթացներում, կամ վայրը կարո՞ղ է համարվել կալանքի դատապարտված անձի աշխատավայր:

6. Անհասկանալի են նաև Կանոնագրքի 33-րդ, 34-րդ և 36 կետերը, որոնց համաձայն՝ առանց պահախմբի կամ ուղեկցորդման տեղաշարժվելու թույլտվություն ստացած՝ կալանքի դատապարտված անձը բնակվում է կարգապահական մեկուսարանի վարչական սահմաններում՝ սահմանված կարգով հսկողության տակ գտնվող իրեն հատկացված վայրում: Առանց պահախմբի կամ ուղեկցորդման տեղաշարժվելու թույլտվություն ստացած կալանքի դատապարտված անձանց կարգապահական մեկուսարանի սահմաններից դուրս բնակվելն արգելվում է: Առանց պահախմբի կամ ուղեկցորդման տեղաշարժվելու թույլտվություն ստացած կալանքի դատապարտված անձը ոչ աշխատանքային ժամերին գտնվում է կարգապահական մեկուսարանի տարածքում, որի նկատմամբ տարածվում են ներքին կանոնակարգով սահմանված վարքագծի կանոնները: Առանց պահախմբի կամ ուղեկցորդման գտնվելու

թույլտվություն ստացած՝ կալանքի դատապարտված անձը կարգապահական մեկուսարանի սահմաններից դուրս տեղաշարժվելու ընթացքում պարտավոր է ժամանակին վերադառնալ և դրա մասին տեղյակ պահել կարգապահական մեկուսարանի վարչակազմին:

Մինչդեռ, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ կալանքի դատապարտված անձինք պահվում են խիստ մեկուսացման պայմաններում: Դատապարտյալի վրա տարածվում են փակ տեսակի ուղղիչ հիմնարկում պատիժ կրող ազատագրկման դատապարտված անձի համար օրենսգրքով և իրավական այլ ակտերով սահմանված պատիժը կրելու պայմանները, բացառությամբ կալանք պատժատեսակի համար օրենսգրքով սահմանված առանձնահատկությունների: Դատապարտյալին տեսակցություն չի տրամադրվում, բացառությամբ պաշտպանի հետ տեսակցության և սույն հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերի: Դատապարտյալին չի թույլատրվում վարել նամակագրություն, ստանալ ծանրոց, հանձնուք և փաթեթ՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության առարկաների և սեզոնային հագուստի: Դատապարտյալի նախնական կամ միջին մասնագիտական կրթություն չի իրականացվում: Դատապարտյալն օգտվում է առնվազն մեկ ժամ ամենօրյա զբոսանքի իրավունքից: Օրենսգրքի 80-րդ հոդվածով սահմանված անձնական բացառիկ հանգամանքների դեպքում (մերձավոր ազգականի մահ կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, տարերային աղետ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին) դատապարտյալին հիմնարկի պետի որոշմամբ կարող է թույլատրվել օգտվել հեռախոսակապից կամ տրամադրվել մինչև չորս ժամ տևողությամբ կարճատև տեսակցություն:

Հետևաբար, Կանոնագրքի 33-րդ, 34-րդ և 36 կետերը ենթակա են վերանայման:

7. Ընդհանուր խնդիր է անհրաժեշտ մատյանների բացակայությունը, որոնց ձևերը սահմանված չեն Կանոնակարգով, սակայն միաժամանակ Կանոնագրքով նախատեսված է համապատասխան գրառումների կատարման պարտականությունը: Այսպես.

- 40-րդ կետով նախատեսվում է, որ ձերբակալված կամ կալանքի դատապարտված անձն իր ցանկությամբ կարող է դուրս չգալ զբոսանքի: Նրա՝ զբոսանքից հրաժարվելու փաստն արձանագրվում է,

- 68-րդ կետով սահմանվում է, որ հեռախոսակապից օգտվելու գործընթացը հաշվառվում է կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված համապատասխան մատյանում, որում նշվում են հեռախոսակապից օգտվողի անվանական տվյալները, հեռախոսակապից օգտվելու հաճախականությունն ու տևողությունը,

- 108-րդ կետով նախատեսվում է, որ բժշկական սպասարկման համապատասխան ծառայողը և պատասխանատու հերթապահին ամեն օր այցելում են պատժախցում պահվող՝ կալանքի դատապարտված անձանց՝ դրա մասին գրառում կատարելով համապատասխան մատյանում և այլն:

Մինչդեռ, Կանոնակարգով հաստատված է միայն ձերբակալված կամ կալանքի դատապարտված անձանց կողմից արված (ուղարկման ենթակա) առաջարկությունների, դիմումների և բողոքների հաշվառման մատյան (Ձև N 9) և Պատժախուց տեղափոխված՝ կալանքի դատապարտված անձանց հաշվառման մատյան (Ձև N 11):

Վերոգրյալ խնդիրների առնչությամբ որոշում էր կայացվել մշակել ՀՀ

կառավարության 2008թ. մայիսի 22-ի թիվ 595-Ն որոշմամբ հաստատված՝ «ՀՀ պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանների ներքին կանոնակարգ»-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ որոշման նախագիծը, միաժամանակ առաջարկվել է նախագծի նախապատրաստմանը մասնակից դարձնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին: Ռեզոլուցիայի նպատակն է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2008թ. մայիսի 22-ի թիվ 595-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ որոշման նախագիծը:

ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնել են նաև, որ ՀՀ կառավարության ծրագրի 2.1.1-րդ բաժնի 13-րդ պարբերության պահանջների ապահովման նպատակով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի նիստում հաստատված ՀՀ կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի համաձայն՝ «ՀՀ պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանների ներքին կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 22-ի թիվ 595-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը կներկայացվի ՀՀ կառավարություն 2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակում:

ԲԿԱՄ-ի այցերի ընթացքում ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության մեկուսարանների որոշ խցերում (այդ թվում նաև՝ Լոռու կայազորի Վանաձորի, Կապանի ռազմական ոստիկանության բաժնի կարգապահական մեկուսարաններում, ՌՌ վարչության Երևանի մեկուսարանում) արձանագրվել է, որ այցի պահին պահպանվում էին նախկինում որպես պատժախուց ծառայող խցերի կառուցվածքը (պատից ամրացվող և փակվող երկաթե մահճակալներ (նառեր), նախատեսված աթոռի և սեղանի միջև հեռավորությունը այնքան է, որ չի կարող նպատակային օգտագործվել), սակայն ներկայիս դրությամբ դրանք ծառայում են որպես խուց: Որպես խնդրի լուծում՝ խցերում տեղադրվել են մահճակալներ (վերոնշյալ բոլոր մեկուսարաններում): Ավելին, որոշ դեպքերում (Երևանի կայազորի, Վայքի ՌՌ մեկուսարաններ) պատից ամրացվող և փակվող երկաթե մահճակալները (նառերը) ընդհանրապես փոխարինված չեն:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ պատից ամրացվող և փակվող երկաթե մահճակալների (նառերի) առկայությունը խցերում ստեղծում է լրացուցիչ անհարմարություններ, ինչպես նաև առկա է հավանականություն, որ Ռեզոլուցիայի նպատակն է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 22-ի թիվ 595-Ն որոշման մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ որոշման նախագիծը, համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի համաձայն՝ «ՀՀ պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանների ներքին կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 22-ի թիվ 595-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը կներկայացվի ՀՀ կառավարություն 2015 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակում:

Արդյունքում, ՀՀ պաշտպանության նախարարությունից տեղեկացրել են, որ ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության բոլոր կայազորային կարգապահական մեկուսարանների

խցերի, բացառությամբ պատժախցերի, պատերից ամրացված և փակվող երկաթե մահճակալները (նառերը), որպես աթոռ ծառայող հենակներն ապամոնտաժվել են և փոխարենը խցերում տեղադրվել են համապատասխան նմուշի մահճակալներ, անհատական պահարաններ՝ պահպանելով խցում պահվող յուրաքանչյուր անձի համար 4 քմ բնակելի տարածք:

Երևանի կայագորային զինվորական հոսպիտալի հատուկ դեպքերի բաժանմունք

ԲԿԱՄ-ն այցելել է նաև Երևանի կայագորային զինվորական հոսպիտալի հատուկ դեպքերի բաժանմունք, որտեղ գտնվում են հիվանդ ազատագրված զինծառայողները: Այցի ընթացքում արձանագրվել էին մի շարք թերություններ.

- Բաժանմունքում գտնվող անձանց համար նախատեսված չէր զբոսաբակ, ինչի պատճառով ազատագրվածները փաստացի զրկվում են զբոսնելու իրավունքից («Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 10-րդ, 16-րդ, 27-րդ և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ, 56-րդ, 78-րդ հոդվածների խախտում), հատկապես, որ ազատագրված զինծառայողները տվյալ բաժնում կարող են պահվել տևական ժամանակ (մինչև 45 օր՝ մինչ ապաքինումը):

- Չկար տեսակցությունների համար նախատեսված սենյակ, ինչի պատճառով տեսակցությունները կազմակերպվում են հերթապահի սենյակում՝ ուրբաթ կամ շաբաթ օրերին («Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի պահանջ):

- Չէր պահպանվում նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ բժշկական գնությունը իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: ԲԿԱՄ փորձագետները պարզել են, որ բաժանմունք ընդունվելիս ազատագրվածների բուժգնությունն իրականացվում է ուղեկցող և հերթապահ ոստիկանների ներկայությամբ խուզարկության հետ համատեղ: Աշխատակիցները նույնպես հաստատել են տվյալ փաստը:

- Հիվանդասենյակներից մեկում (թիվ 2) պատուհանի ապակու բացակայության հետևանքով լուսամուտը պատված էր պոլիէթիլենի շերտով, ինչն անհնար էր դարձնում օդափոխությունը, իսկ թիվ 3 հիվանդասենյակում լուսամուտի ապակին ընդհանրապես չկար: Արհեստական օդափոխության համակարգ չէր գործում: Հիվանդասենյակներն ապահովված չեն խմելու ջրի ծորակով և սանհանգույցով: Խմելու ջուր տրամադրվում է պլաստիկ շշերով: Հիվանդասենյակներից երկուսի բնական լուսավորությունը բավարար չէ, ինչի պատճառով ամբողջ օրվա ընթացքում միացված են էլեկտրական լամպեր: Բուժանձնակազմի համար նախատեսված սենյակները ևս անբարեկարգ էին և վերանորոգման կարիք ունեին:

- Լոգանքը կազմակերպվում է բաժանմունքի՝ ոչ բարվոք վիճակում գտնվող լոգարանում: Սանհանգույցը (ասիական տիպի) նույնպես ոչ բարվոք վիճակում էր:

- Նախատեսված չէ հանձնույթների ընդունման սենյակ, որնէ տեսանելի վայրում փակցված չէր հանձնույթների ընդունման կարգի և արգելված իրերի ցանկը (աշխատակցի հավաստմամբ՝ ծանրոցի քաշը որոշվում է մոտավոր, իսկ արգելված իրերի վերաբերյալ ազատագրկվածների հարազատներին տեղեկացնում է հերթապահ ոստիկանը կամ անձամբ ազատագրկվածը):

- Խնդրահարույց է մատյանների վարումը (չի գրառվում լոգանքի տրամադրման փաստը, վարվում էր «Բաղնիքում լողացման, օձառի և սպիտակեղենի տրամադրման» տետր, որտեղ վերջին լրացումն արվել էր 2012թ., ազատագրկվածների՝ դատական նիստերի, քննչական գործողությունների մասնակցության փաստերը չէին արձանագրվում, ինչպես նաև դրանց բացակայությունը, չէին վարվում դիմում-բողոքների և առաջարկների ներկայացման հաշվառման և մարմնական վնասվածքների հաշվառման մատյանները):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանության նախարարին առաջարկվել էր քննարկել առկա թերությունները և ձեռնարկել միջոցներ դրանց շտկման ուղղությամբ: Պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է, որ հանձնարարվել է միջոցներ ձեռնարկել զբոսաբակի, տեսակցությունների, հանձնույթների ընդունման համար սենյակ ունենալու, ինչպես նաև խցերի, լոգարանի, սանհանգույցի բարվոք վիճակն ապահովելու ուղղությամբ: Միաժամանակ, հանձնարարվել է պահպանել բաժանմունք ընդունվող անձանց բուժզննության և դրանից անկախ անձնական խուզարկության օրենքով նախատեսված պահանջները, ինչպես նաև բացվել և վարվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան մատյանները:

Կարգապահական գումարտակ

ԲԿԱՄ-ն այցելություն է իրականացրել նաև կարգապահական գումարտակ, որտեղ գտնվում են ծառայության ընթացքում 3 ամսից մինչև 3 տարի ժամկետով ազատագրկման դատապարտված զինծառայողներ: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված պայմանները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը որակել է անբավարար, ընդհուպ՝ անմարդկային:

Այսպես.

1. Հիմնական շինության, որտեղ տեղակայված է կացարանը, մարզադահլիճը, ճաշարանը, զուգարանը, բաղնիքը, մատուռը, պատժախցերը և հիվանդասենյակը, տանիքն այրվել էր: Անձրևից և ձնհալիից խուսափելու նպատակով շինության այրված տանիքն աշխատակազմի կողմից պատվել էր պոլիէթիլենով /ավելի քան 900քմ/: Այնուամենայնիվ, տանիքից, այդ թվում նաև կացարանի առաստաղից, տարբեր հատվածներում կաթում էր, ինչն ուներ պարբերական բնույթ: Սա Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի չափորոշիչներին համապատասխան կարող է գնահատվել որպես անմարդկային վերաբերմունք: Կացարանը երկու փայտի վառարաններով տաքացնելու հետևանքով (մակերեսը մոտ 400քմ, առաստաղի բարձրությունը՝ մոտ 6,80մ) ամբողջությամբ լցված էր ծխով, այնուամենայնիվ, կացարանում ջերմաստիճանն ընդամենը 11 աստիճան էր: Կացարանի լուսավորությունը երեկոյան ժամերին անբավարար է, քանի որ լուսավորությունն

ապահովվում է 2 լամպով (ԽԿԿ չափորոշիչների համաձայն՝ լուսավորությունը պետք է բավարար լինի գիրք կարդալու համար):

2. Ճաշարանը տեղակայված էր նույն շենքում (մոտ 300քմ), որը չէր ջեռուցվում, տանիքից կաթում էր, ճաշարանի պատերը և սպասքի պահման պահարանն ամբողջությամբ պատված էին բորբոսով:

3. Պատժախցում նախատեսված չէր սանհանգույց, խմելու ջրի ծորակ: Խցում դրված և հատակին ամրացված երկաթե սեղանն ու աթոռը գտնվում էին միմյանցից բավականին հեռավորության վրա, ինչը դժվարեցնում էր սնունդն ընդունելու ընթացքում սեղանից օգտվելու հնարավորությունը: Պատժախցերի պայմանները նույնպես անբավարար են, խոնավությունը՝ բարձր:

4. Բաղնիքը և զուգարանը գտնվում էին վատ վիճակում: Բաղնիքի ամբողջ հատակը պատված էր 10 սմ բարձրությամբ ջրով, ինչի հետևանքով հնարավոր չէր մոտենալ զուգարանին: Ջերմաստիճանը ցածր էր, պատուհանները կոտրված էին և բաց, ձյունը լուսամուտի կոտրված ապակուց նստում էր հատակին:

5. Նախատեսված չեն կարանտինի կազմակերպման համար պայմաններ (ՀՀ օրենսդրության պահանջների խախտում):

6. Խնդրահարույց էր մատյանների ոչ պատշաճ լրացման պրակտիկան և մատյանների բացակայությունը (պատժախցում պահվող անձանց հաշվառման մատյան, հանձնուքների ընդունման և տեսակցությունների տրամադրման մատյան):

Նկատի ունենալով, որ մատնանշված պահման պայմանները ԽԿԿ չափորոշիչների և ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան հաշվի առնելով՝ կարող են որակվել որպես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել էր ՀՀ պաշտպանության նախարարին քննարկել բարձրացված խնդիրները և անհապաղ միջոցներ ձեռնարկել ազատագրված անձանց իրավունքների վերականգնման ուղղությամբ:

ՀՀ պաշտպանության նախարարությունից, որպես խնդրի լուծում, առաջարկվել է վերաբնակեցնել դատապարտյալներին այլ գորանոցում, որը կարող է հանդիսանալ կարգապահական գումարտակի պահպանության վաշտի գորանոցը՝ որոշակի վերանորոգման աշխատանքներ իրականացնելուց հետո, ստեղծելով ազատագրված զինծառայողների իրավունքների ապահովման համար նվազագույն պայմաններ: Խնդրի հրատապությունից ելնելով՝ ՊՆ ռազմական ոստիկանության կարգապահական գումարտակի պահպանության վաշտի գորանոցը վերանորոգելու նպատակով մշակվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր և վերանորոգման աշխատանքները ներառվել են 2014թ. ընթացիկ նորոգումների ծրագրում, իսկ աշխատանքների իրականացումը սկսվել է 2014թ. 2-րդ կիսամյակից: Համապատասխան մասնագիտացված կազմակերպության միջոցով մշակվել է ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության կարգապահական գումարտակի տեղակայման վայրի գլխավոր հատակագիծը, որը հնարավորություն կտա կառուցելու նոր շենք շինություններ: Ներկայումս դատապարտված զինծառայողներն իրենց պատիժը կրում են կարգապահական գումարտակի պահպանության վաշտի գորանոցում՝ վերանորոգված պայմաններում:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐ

2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ԲԿԱՄ փորձագետները այցելել են Ոստիկանության բաժիններ: Երկրորդ կիսամյակում Ոստիկանության բաժիններում կրկնակի այցերով մշտադիտարկումներ են իրականացրել նաև Բռնությունների կանխարգելման փորձագիտական խորհրդի անդամները¹²⁹¹:

Արձանագրված խնդիրներ

- Խնդրահարույց է անձանց ձերբակալելուց հետո համապատասխան ձերբակալվածների պահման վայր անմիջապես չտեղափոխելը, նրանց հետ վեց և ավելի ժամեր հարցաքննություն, առերեսում, այլ քննչական գործողություններ անցկացնելը,
- Ոստիկանության մարմին բերման ենթարկվածների հաշվառման մատյանները լրացվում են ձևական,
- Խնդրահարույց է հարցաքննության ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 205.1-ի պահանջների պահպանումը¹²⁹²:
- Դեռևս խախտվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 131.1-ի պահանջը:

ԲԿԱՄ փորձագետներն այցերի ընթացքում արձանագրել են անձանց ձերբակալելուց հետո համապատասխան ձերբակալվածների պահման վայր անմիջապես

¹²⁹¹ Ոստիկանության Կենտրոն վարչական շրջանի բաժին, Երևան, Ոստիկանության Նոր Նորք վարչական շրջանի բաժին, Երևան, Ոստիկանության Քանաքեռ-Զեյթուն բաժին, Երևան, Տարոնի (Վանաձորի) ոստիկանության բաժին, Թումանյանի (Ալավերդու) ոստիկանության բաժին, Սպիտակի ոստիկանության բաժին, Արթիկի ոստիկանության բաժին, Ախուրյանի ոստիկանության բաժին, Կումայրի ոստիկանության բաժին, Մուշ ոստիկանության բաժին, Նոյեմբերյանի ոստիկանության բաժին, Դիլիջանի ոստիկանության բաժին, Իջևանի ոստիկանության բաժին, Տավուշի (Բերդ) ոստիկանության բաժին, Բագրատաշենի ոստիկանության բաժին, Արմավիրի ոստիկանության բաժին, Վաղարշապատի ոստիկանության բաժին, Արտաշատի ոստիկանության բաժին, Արարատի (Վեդի) ոստիկանության բաժին, Եղեգնաձորի ոստիկանության բաժին, Վայքի ոստիկանության բաժին, Ջերմուկի ոստիկանության բաժին, Միսիանի ոստիկանության բաժին, Գորիսի ոստիկանության բաժին, Կապանի ոստիկանության բաժին, Մեղրիի ոստիկանության բաժին, Աշտարակի ոստիկանության բաժին, Ապարանի ոստիկանության բաժին, Թալինի ոստիկանության բաժին, Սևանի ոստիկանության բաժին, Մարտունու ոստիկանության բաժին, Գավառի ոստիկանության բաժին, Ճամբարակի ոստիկանության բաժին

¹²⁹² ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205.1 հոդվածի համաձայն. «1. **Հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից**, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի:

2. **Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո:** Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ վեց ժամը:

3. Բժշկի եզրակացության հիման վրա քննիչը կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հարցաքննության ժամկետներից ավելի կարճ ժամկետներ»:

չտեղափոխելու, նրանց հետ վեց և ավելի ժամեր հարցաքննություն, առերեսում, այլ քննչական գործողություններ անցկացնելու վերաբերյալ փաստեր: ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են դեպքեր, երբ քաղաքացիներին ձերբակալման որոշումը կայացնելուց և քննչական գործողությունները կատարելուց հետո 1.5-ից մինչև 11 ժամ պահել են հերթապահ մասում: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 133-րդ հոդվածով սահմանվում է, որ ձերբակալված անձինք պահվում են ձերբակալվածներին պահելու վայրերում: Այս հանգամանքը մտահոգիչ է նաև Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի համար: ԽԿԿ-ն իր չափորոշիչների մշակման ժամանակ անդրադարձել է այս խնդրին և ընդգծել, որ իրավապահ մարմինները պետք է միջոցներ ձեռնարկեն ձերբակալված անձանց նկատմամբ քննչական գործողությունները ձերբակալվածներին պահելու վայրերում իրականացնելու ուղղությամբ:

Արձանագրվել են դեպքեր, երբ ոստիկանության մարմին բերման ենթարկվածների հաշվառման մատյանները լրացվում են ձևական, մատյանի 11-րդ (ազատվելու կամ ուղարկման տարեթիվը, ժամը, րոպեները) սյունյակում նշվում է այնպիսի ժամ, որպեսզի անձին բերման ենթարկելու պահից չգերազանցի օրենքով նախատեսված երեք ժամը, մինչդեռ այդ անձը դեռևս գտնվում է հարցաքննման, առերեսման կամ այլ քննչական գործողությունների իրականացման փուլում: Նույնիսկ կան դեպքեր, որ մատյանում նշված ժամը չի համապատասխանում իրական ձերբակալման ժամին: Հետևաբար, դեռևս խախտվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 131.1-ի պահանջը, ըստ որի՝ հանցանք կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, որի պատճենը ստորագրությամբ տրվում է ձերբակալված անձին:

Այս պարագայում մտահոգիչ են հարցաքննության ընթացքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 205.1-ի պահանջների հնարավոր խախտումները, այսպես. «1. Հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի: 2. Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ վեց ժամը: 3. Բժշկի եզրակացության հիման վրա քննիչը կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հարցաքննության ժամկետներից ավելի կարճ ժամկետներ»:

Նշված թերացումների կապակցությամբ Ոստիկանության կողմից ձեռնարկվել են որոշակի միջոցներ: Այսպես.

- Տարածքային ստորաբաժանման ղեկավարներին հանձնարարվել է ձեռնարկել գործուն միջոցներ հերթապահ մաս հանձնված ձեռքակալված անձանց հնարավորինս կարճ ժամանակահատվածում ՁՊՎ տեղափոխելու համար:
- Ոստիկանության մարմին բերման ենթարկվածների հաշվառման մատյանների ձևական, ոչ պատշաճ լրացման դեպքերի առնչությամբ նշանակվել են ծառայողական քննություններ, իսկ մեկ դեպքով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ 1-ին մասով և 314-րդ հոդվածի մասով:

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀՄԱՆ ՎԱՅՐԵՐ

Ոստիկանության ՁՊՎ-ներ

ԲԿԱՄ-ը 2014 թվականի առաջին կիսամյակի, իսկ 2014 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում կրկնակի այցերով Փորձագիտական խորհրդի անդամներն այցելել են ՁՊՎ-ներ¹²⁹³:

Արձանագրված խնդիրներ

- Արձանագրվող մարմնական վնասվածքների մասին տեղեկատվությունը բավարար տվյալներ չի պարունակում,
- Խնդրահարույց է նաև արտաքին զննության իրականացումը, որին մասնակցում են հերթապահ ոստիկանը և ուղեկցող ոստիկանը, ընդ որում՝ արտաքին զննությունն իրականացվում է անձնական խուզարկությանը զուգահեռ,
- ՁՊՎ-ում լրացվող մատյանները լրացվում են ջնջումներով, ուղղումներով, որոշ դեպքերում կրում են ձևական բնույթ,
- ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ՁՊՎ-ներում բուժզննությունը մի շարք դեպքերում իրականացվում է տվյալ մարզի շտապ բժշկական օգնության

¹²⁹³ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձեռքակալված անձանց պահելու վայր, Տարոնի (Վանաձորի) ոստիկանության ՁՊՎ, Թումանյանի (Ալավերդու) ոստիկանության ՁՊՎ, Մպիտակի ոստիկանության ՁՊՎ, Արթիկի ոստիկանության ՁՊՎ, Ախուրյանի ոստիկանության ՁՊՎ, Նոյեմբերյանի ոստիկանության ՁՊՎ, Դիլիջանի ոստիկանության ՁՊՎ, Իջևանի ոստիկանության ՁՊՎ, Տավուշի (Բերդ) ոստիկանության ՁՊՎ, Արմավիրի ոստիկանության ՁՊՎ, Վաղարշապատի ոստիկանության ՁՊՎ, Արտաշատի ոստիկանության ՁՊՎ, Արարատի (Վեդի) ոստիկանության ՁՊՎ, Եղեգնաձորի ոստիկանության ՁՊՎ, Վայքի ոստիկանության ՁՊՎ, Միսիանի ոստիկանության ՁՊՎ, Գորիսի ոստիկանության ՁՊՎ, Կապանի ոստիկանության ՁՊՎ, Մեղրիի ոստիկանության ՁՊՎ, Աշտարակի ոստիկանության ՁՊՎ, Ապարանի ոստիկանության ՁՊՎ, Թալինի ոստիկանության ՁՊՎ, Սևանի ոստիկանության ՁՊՎ, Մարտունու ոստիկանության ՁՊՎ, Գավառի ոստիկանության ՁՊՎ, Ճամբարակի ոստիկանության ՁՊՎ

բրիգադների կողմից, որոնք հաճախ համալրված չեն լինում բժիշկներով (խնդիրը լուծվել է),

- Խնդրահարույց է սննդի տրամադրման գործընթացը,
- Կան լվացքի կազմակերպման կանոնակարգման խնդիրներ (խնդիրը ստացել է լուծում),
- Խցերում ինքնուրույն օդափոխության հնարավորությունը բացակայում է, քանի որ պատուհանները բացվում են դրսից,
- Որոշ ՁՊՎ-ների խցերում, որոնք նախատեսված են 2 անձի պահման համար, առկա է միայն մեկ աթոռ (խնդիրը ստացել է լուծում),
- Ջուգարանների դռների դիտանցքների վրա արգելապատնեշներ չեն եղել (խնդիրը ստացել է լուծում),
- Տեսանելի վայրում փակցված չէ հանձնուքներ հանձնելու կարգի, հանձնուքներով փոխանցվող թույլատրելի առարկաների և սննդամթերքի ցանկը (խնդիրը ստացել է լուծում),
- ՁՊՎ-ներում տեղադրած տեսախցիկները հիմնականում չեն իրականացնում տեսաձայնագրում,
- Ոչ բոլոր ՁՊՎ-ներն են ապահովված պահնորդական ազդանշանային համակարգերով:

ԲԿԱՄ այցելությունների ընթացքում ստուգվում են ՁՊՎ-ներում վարվող մատյանները: Դեռևս առկա է այն խնդիրը, որ արձանագրվող մարմնական վնասվածքների մասին տեղեկատվությունը բավարար տվյալներ չի պարունակում: Օրինակ, Երևան ՁՊՎ-ում փաստագրված անձ Խ. Ա.-ի մոտ ՁՊՎ մուտք գործելու պահին արձանագրվել էին վերքեր՝ երկու ձեռքի մատներին, ձախ ոտքի սրունքին, աջ և ձախ ոտնաթաթերին՝ կարմրածություն և այտուցվածություն: Այսպիսով նշված չէր, թե որ մատերն են վնասված, վնասվածքի տեղակայումը, չափերը, ձևը, գույնը և այլ մանրամասներ:

Ոստիկանությունից տեղեկացվել է, որ ՁՊՎ-ներում վարվող մատյանների լրացման, արձանագրված մարմնական վնասվածքների մասին տեղեկատվությունը բավարար տվյալներ չպարունակելու և արտաքին զննություն չիրականացնելու հետ կապված հայտնաբերվել է 3 խախտում, որոնցով կատարվել են ծառայողական քննություններ (մեր գնահատմամբ սա բավականին ցածր ցուցանիշ է):

Խնդրահարույց է նաև արտաքին զննության իրականացումը, որին մասնակցում են հերթապահ ոստիկանը և ուղեկցող ոստիկանը: Ընդ որում, արտաքին զննությունն իրականացվում է անձնական խուզարկությանը զուգահեռ: Մինչդեռ, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ բժշկական զննությունն իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս:

ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ՁՊՎ-ներում բուժզննությունը

հաճախակի իրականացնում են տվյալ մարզի բուժհաստատությունների բժիշկները: Համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև տեղում իրականացրած դիտարկման արդյունքում պարզվել է, որ.

- որոշակի ժամերի ուստիկանության մարզային ՁՊՎ-ների շտապ օգնության կանչերին մեկնում են շտապ օգնության ծառայության բրիգադները, որտեղ ներգրավված չեն լինում բժիշկ մասնագետներ: Այս պարագայում ինքնին մտահոգիչ է ազատագրկվածներին պատշաճ բժշկական զննություն և օգնություն տրամադրելու հարցը: Իրավիճակը հատկապես սուր էր ՀՀ Շիրակի մարզային վարչության ուստիկանության Ախուրյանի և Արթիկի ՁՊՎ-ներում: Այսպես, ազատագրկվածը, գտնվելով Արթիկի ուստիկանության ՁՊՎ-ում, ունեցել է գանգատներ՝ կապված բազմաթիվ վնասվածքների հետ, ինչի կապակցությամբ ՁՊՎ-ի վարչակազմը կանչել է շտապ օգնություն: Սակայն ներկայացած շտապ օգնության ծառայության բրիգադում բժիշկ մասնագետ չի եղել, իսկ բուժքրոջ միջամտությունից հետո կարիք է առաջացել բժշկական օգնության, ինչի պատճառով կրկին շտապ օգնության ծառայություն է կանչվել: Դրանից հետո միայն ժամանել է բժիշկը, ով հայտնել է, որ անհրաժեշտ է նեղ մասնագետի՝ վնասվածքաբանի խորհրդատվություն (համապատասխան խորհրդատվությունը կազմակերպվել է):

- ԲԿԱՄ-ի համար խնդրահարույց է նաև ՁՊՎ ընդունվող անձանց բուժզննության արդյունքների արձանագրումը համապատասխան մատյաններում: Այսպես, ՀՀ Արարատի մարզային վարչության Արտաշատի ուստիկանության ՁՊՎ-ի «Բուժզննության կամ բուժօգնության տրամադրման» մատյանի ուսումնասիրությունից պարզվել է, որ շտապօգնության բուժաշխատողի կողմից մատյանում սահմանված կարգով նշվել է հայտնաբերված վնասվածքի մասին (կապտուկներ, արյունազեղումներ), սակայն միաժամանակ, հավելյալ տեղեկատվություն է արձանագրվել առ այն, որ վնասվածքները «ի հայտ են եկել մինչև ուստիկանություն ժամանելը»: Ակնհայտ է, որ բժիշկը չպետք է և չի կարող նման եզրակացություն անել, հետևաբար, հնարավոր է, որ հրավիրված բժիշկը գրառումները կատարում է ուստիկանության աշխատակցի ուղորդմամբ:

- Տվյալ իրավիճակի համար նպաստավոր պայմաններ են ստեղծվում այն պատճառով, որ բուժզննությունը պարտադիր ներկա է գտնվում հերթապահ ուստիկանը (հերթապահ ուստիկանները չեն ժխտում տվյալ փաստը), ինչն Օրենքի պահանջի խախտում է: Արդեն իսկ մատնանշված՝ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասում հստակ սահմանված է, որ բժշկական զննությունն իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Այսպիսով, միայն բժշկի կողմից համապատասխան պահանջ ներկայացնելու դեպքում ուստիկանը կարող է ներկա գտնվել բուժզննությանն այն էլ պարտադիր լսողության սահմաններից դուրս լինելու պայմանով: ԲԿԱՄ-ն առաջարկել է հանձնարարել խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրության պահանջը՝ այսուհետ նման թերացումները բացառելու համար՝ դրանով իսկ ապահովելով բժիշկների անկախությունն ու անաչառությունը:

Խնդիրը ներկայացվել է Առողջապահության նախարարին, ով հայտնել է, որ ՀՀ

առողջապահության նախարարության կողմից հանրապետության բոլոր մարզպետարանների աշխատակազմերի ղեկավարներին ներկայացվել է բարձրացված խնդիրը, առաջարկելով ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ այսուհետ արձանագրված խնդիրները բացառելու և մարզային բժշկական կազմակերպությունների շտապ բժշկական օգնության բրիգադները համապատասխան բժիշկ մասնագետներով համալրելու ուղղությամբ, իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելով

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմ: Արդյունքում հանձնարարվել է շտապ բժշկական օգնության բրիգադները համալրել բժիշկներով և ոստիկանության մարզային վարչություններում կամ բաժիններում, ձերբակալված և կալանավորված անձանց, անհրաժեշտության դեպքում իրականացվող կանչերը սպասարկել միայն բժշկական բրիգադների կողմից: Նշվել է նաև, որ ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի բժշկական կենտրոն» և «Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների շտապ բժշկական օգնության բրիգադներն արդեն իսկ համալրվել են բժիշկ-մասնագետներով: Ինչ վերաբերում է ՀՀ Արարատի մարզի «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապ բժշկական օգնության բրիգադի բժշկի կողմից կատարած՝ իրավասությունից դուրս գրառումներին, ապա վերոհիշյալ խնդիրը քննարկվել է

ՀՀ Արարատի մարզպետարանում «Արտաշատի բժշկական կենտրոնի» տնօրենի պաշտոնակատարի և շտապ օգնության բժշկի մասնակցությամբ, որը գննել էր կալանավորված անձին և կատարել գրառումները: Համաձայն շտապ օգնության բժշկի բացատրության, գրառումները կատարվել են որպես ազատագրվածի հիվանդության պատմագրի «հիվանդության անամնեզին» վերաբերող հատված: Այնուհանդերձ, հանձնարարվել է «Արտաշատի բժշկական կենտրոնի» տնօրենի պաշտոնակատարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, նման դեպքերում բժշկի պաշտոնական պարտականության շրջանակներից, լիազորություններից և իրավասությունից դուրս եզրահանգումներ չկատարելու ուղղությամբ:

ՁՊՎ-ում լրացվող մատյանները լրացվում են ջնջումներով, ուղղումներով, որոշ դեպքերում կրում են ձևական բնույթ: Այսպես, ազատագրված անձինք առանձնագրույցի ժամանակ հայտնել են, որ հրաժարվել են զբոսանքից, սակայն խցերից դուրս բերման մատյանում նշված էին զբոսանքի դուրս գալու ժամերը: Ոստիկանության տրամադրած պարզաբանման համաձայն՝ ազատագրվածներից մեկը դուրս է բերվել զբոսանքի, և մատյանում արդեն իսկ մատնանշվել է մեկ ժամ տևողությամբ զբոսանքի դուրս գալու փաստը (16:30-17:30), այնինչ նա զբոսանքի դուրս գալուց 10 րոպե անց հրաժարվել է զբոսանքից և վերադարձել խուց: Այսպիսով, ոստիկանը խցերից դուրս բերման գրանցամատյանում զբոսանքի ժամերը լրացրել է նախօրոք նշելով ժամը, իսկ հետագայում, ջնջում չկատարելու նպատակով չի կատարել համապատասխան շտկումը: ԲԿԱՄ փորձագետները հանդիպել են նաև դեպքերի, երբ խցերից դուրս բերման մատյանի համաձայն՝ ՁՊՎ-ում պահվող անձինք զուգարան գնում են 24 ժամվա ընթացքում ընդամենը մեկ անգամ: Տեսակցություններին մասնակցելու և հեռախոսագանգերից օգտվելու մասին խցերից դուրս բերման մատյանում նշումներ չեն կատարվում առհասարակ:

Թեև ՀՀ ոստիկանության պետի հանձնարարականով 2013թ. ապրիլի 3-ից ֆինանսաբյուջետային վարչությունում ավելացվել է ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սնունդով ապահովելու վերաբերյալ ՀՀ կառավարության 15.05.2003թ. թիվ 587-Ն որոշմամբ սահմանված չափաբաժիններն ապահովելու համար նախատեսված գումարի չափը, սննդի տրամադրման համար մշակվել և անհատ ձեռներեցների հետ կնքվել են նոր ձևի պայմանագրեր, այնուամենայնիվ, ԲԿԱՄ փորձագետների հարցումների, առանձնագրույցների արդյունքում, պարզ է դարձել, որ ձեռքակալված և/կամ կալանավորված անձինք հիմնականում կամ օգտվում են հանձնուքներից կամ ուտում իրենց տրամադրվող բուտերբրոդ: Մինչդեռ, ԽԿԿ չափորոշիչների համաձայն՝ ձեռքակալված անձինք պետք է սնվեն համապատասխան ժամերին, ամեն օր առնվազն մեկ անգամ և սննդարար կերարակուրներով: ԲԿԱՄ փորձագետները ՁՊՎ-ներից մեկում ականատես են եղել, որ թեև սննդի տրամադրման աշխատանքային մատյանում լրացված էր. հաց, թեյ, յուղ, աղ, տոմատ, մակարոն, կարտոֆիլ, ձավար, կաղամբ (գնային սանդղակին համապատասխան և ստորագրված էր ազատազրկվածների կողմից), սակայն վերջիններիս տրամադրվել էր 7-ական խինկալի: Ոստիկանությունն այս խնդիրը պարզաբանել էր այն հանգամանքով, որ ձեռքակալվածները, տեղեկանալով սննդակարգի մասին, ստորագրել են մատյանում, սակայն խնդրել են իրենց տրամադրել սահմանված գումարի չափին համապատասխան այլ սնունդ: Արդյունքում նրանց տրամադրվել է 7-ական խինկալի: Այս դեպքն ակնհայտ վկայում է հնարավոր չարաշահումների և սննդակարգի մատյանի ձևական լրացման փաստերի մասին:

Խնդրի վերաբերյալ Ոստիկանությունից տեղեկացվել է, որ 2014 թվականին սննդի ձեռք բերման համար հաշվարկված գումարի չափը բարձրացվել է և սահմանվել 830 ՀՀ դրամ (նախկին 690 դրամից 140 դրամ կամ 20.3 % ավել), իսկ հղի կանանց, կերակրող մայրերին, անչափահասներին և հիվանդներին 980 ՀՀ դրամ (նախկին 790 դրամից 180 դրամ կամ 24.1 % ավել): Նշված ավելացումները կիրառելի են 2015 թվականի հունվարի 1-ից:

Թեև ԲԿԱՄ փորձագետները հիմնականում արձանագրել են, որ անկողնային պարագաները պատշաճ տրամադրվում են ազատազրկված անձանց, սակայն, ԲԿԱՄ-ը մտահոգ է, որ լվացքի կազմակերպումը կանոնակարգված չէ և որևէ պայմանագրով լվացքի կազմակերպումը ամրագրված չէ: Տվյալ գործընթացը մեծամասամբ կազմակերպվում է աշխատակիցների անձնական նախաձեռնությամբ:

ՁՊՎ-ներում առկա սպիտակեղենի լվանալու գործընթացը կարգավորելու համար ՀՀ ոստիկանության շտաբը գրություն է ուղարկել տնտեսական վարչություն, որի արդյունքում հայտնվել է, որ Ոստիկանության մարզային վարչությունների ենթակա բաժինների ՁՊՎ-ներում առկա սպիտակեղենի լվանալու գործընթացը կազմակերպվում է լվացքատներում, իսկ Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ում նշված գործընթացն իրականացվում է ՁՊՎ-ում առանձնացված լվացքի սենյակում, որտեղ տեղադրված է ավտոմատ լվացքի մեքենա:

Խնդրահարույց է նաև խցերում օդափոխության հնարավորության բացակայությունը, քանի որ պատուհանները բացվում են դրսից: ԲԿԱՄ-ը ականատես է

եղել չօդափոխվող խցերի, որոնցում բավականին ծանր օդ էր: ԲԿԱՄ փորձագետների հարցադրմանը, թե երբ են օդափոխությունը կատարել, ազատագրկված անձինք հայտնել են, որ գիտակցելով, որ լուսամուտը պետք է բացել դրսից՝ օդափոխման համար չեն ցանկանում ավելորդ անգամ անհանգստացնել ոստիկաններին (հատկապես, հաշվի առնելով իրենց՝ ՁՊՎ-ում գտնվելու կարճ ժամկետը): Ոստիկանությունն այս խնդիրը փաստացի պայմանավորում է ֆինանսական անհաղթահարելի խնդիրների առաջացման հետ, քանի որ ՁՊՎ-ների վարչական շենքերը կառուցվել են դեռևս խորհրդային ժամանակահատվածում՝ ոչ տիպային նախագծով: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձեռքարկվածների պահելու վայրերի ներքին կանոնակարգ»-ի (այսուհետ՝ Կանոնակարգ) 117-րդ կետի համաձայն՝ պատուհանների ապակեկալները պատրաստվում են փեղկերով և խցերի օդափոխության համար տեղադրվում են օդանցքներ՝ վագոնային տիպի փականներով:

Խնդրահարույց է նաև արտաքնոցի՝ խցերից դուրս գտնվելը, ինչը կրկին պայմանավորվել է ՁՊՎ-ների՝ խորհրդային ժամանակահատվածում ոչ տիպային նախագծով կառուցված լինելու հանգամանքով:

Արձանագրվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են որոշ՝ 2 անձի պահման համար նախատեսված ՁՊՎ-ների խցերում միայն մեկ աթոռի առկայությունը, խցերի լուսավորության¹²⁹⁴, զբոսաբակի և զբոսաբակի ծածկի ոչ պատշաճ լինելը, զուգարանների դռների դիտանցքների վրա արգելապատնեշներ չլինելը և անմիջապես դիտարկում իրականացնելու հնարավորությունը¹²⁹⁵, հանձնուքներ ընդունելու, տեսանելի վայրում հանձնուքներ հանձնելու կարգի, հանձնուքներով փոխանցվող թույլատրելի առարկաների և սննդամթերքի ցանկի բացակայությունը¹²⁹⁶: Նշված խնդիրները ստացել են իրենց լուծումները ՀՀ ոստիկանության հետ համատեղ իրականացված կառուցողական աշխատանքի արդյունքում: Մասնավորապես, ՁՊՎ-

¹²⁹⁴ Պետք է հաշվի առնել, որ ԽԿԿ չափորոշիչների համաձայն՝ ոստիկանությունում գտնվող բոլոր խցերը պետք է ունենան պահվող մարդկանց քանակին համապատասխան չափսեր, **լուսավորում** (այսինքն՝ **բավարար կարողություն համար, բացառելով քնելու ժամերը**) և **օդափոխում**: Գերադասելի է, որ խցերը սարքավորված լինեն հանգստի միջոցներով (օրինակ, հատակին ամրացված լինեն աթոռ կամ նստարան), իսկ գիշերը այնտեղ անցկացնող անձանց պետք է տրամադրվեն մաքուր ներքնակներ և վերմակներ: Արգելանքի ենթարկված անձինք անհրաժեշտության դեպքում իրենց բնական պահանջները պետք է բավարարեն մաքուր և պատշաճ պայմաններում՝ ունենալով լվացվելու հարմարանքներ:

¹²⁹⁵ «Ձեռքարկված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ձեռքարկված կամ կալանավորված անձը պետք է հնարավորություն ունենա մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում բավարարել իր սանիտարահիգիենիկ պահանջները:

¹²⁹⁶ ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն «Հայաստանի Հանրապետության ոստիկանության համակարգում գործող ձեռքարկվածների պահելու վայրերի ներքին կանոնակարգ»-ի (այսուհետ՝ Կանոնակարգ) 68-րդ կետի համաձայն՝ ՁՊՎ-ում հանձնուքներ ընդունելու համար կահավորվում է հատուկ սենյակ, որտեղ քաղաքացիների մուտքն ազատ է: Սենյակում դրվում են սեղան, աթոռ, հսկիչ կշեռք, **տեսանելի վայրում փակցվում են սահմանված հանձնուքներ ընդունելու և հանձնելու մասին կարգը, հանձնուքներով փոխանցվող թույլատրելի առարկաների և սննդամթերքի ցանկը**:

ների խցերում տեղադրվել են 2-ական աթոռներ, խցերի լուսավորությունն ապահովելու համար տեղադրվել են համապատասխան ուժգնությամբ լամպեր, զբոսաբակը մաքրվել է, զբոսաբակի ծածկը վերանորոգվել է, զուգարանների դռների դիտանցքների վրա տեղադրվել են արգելապատնեշներ, տեսանելի վայրերում փակցվել են հանձնուքներ հանձնելու կարգը, հանձնուքներով փոխանցվող թույլատրելի առարկաների և սննդամթերքի ցանկը:

Թեև մի շարք ՁՊՎ-ներում տեսախցիկներ են տեղադրվել, սակայն, ըստ վարչակազմի՝ դրանք նախատեսված են միայն անմիջական հետևելու համար և հիմնականում տեսաձայնագրում չի իրականացվում: Մինչդեռ, վերահսկողության լիարժեք իրականացման նպատակով անհրաժեշտ ենք համարում տեսաձայնագրության հնարավորության նախատեսումը:

Այսպես, Ոստիկանությունից տեղեկացվել է, որ տեսաձայնագրում իրականացվում է միայն ՀՀ Տավուշի մարզային վարչության ենթակա բոլոր բաժինների ՁՊՎ-ներում, տեսաձայնագրման պահպանության ժամկետը 1 ամիս է:

Կանոնակարգի 124, 125, 126 և 127-րդ կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետական պահպանության վարչության կողմից պայմանագրային հիմունքներով ՁՊՎ-ում տեղակայվում են պահնորդական ազդանշանային համակարգեր և տեսախցիկներ: ՁՊՎ-ի շինությունների բոլոր հնարավոր խոցելի տեղերը պաշտպանվում են (պաշարվում) պահնորդական ազդանշանային ցուցիչներով: ՁՊՎ-ում նախատեսվում է ազդանշանների հետևյալ տեսակները՝ պահպանություն, տագնապ, կանչ: Ահազանգման ազդանշանային սարքը տեղադրվում է ՁՊՎ-ի և ոստիկանության տարածքային բաժնի հերթապահ մասերում: Իսկ տագնապի ազդանշանը պետք է կրկնօրինակվի ՁՊՎ-ի հերթապահ ծառայողի պահակետում: Այնուամենայնիվ, ոչ բոլոր ՁՊՎ-ներն են ապահովված նշված համակարգերով:

Ազգային անվտանգության ծառայության ՁՊՎ

ԲԿԱՍ այցելության արդյունքում հանձնարարվել է հրատապ քայլեր ձեռնարկել ձերբակալված անձանց պահման վայրում առկա թերությունները շտկելու ուղղությամբ: Շուրջ 20 օրում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

- Խցում եղած անբարեկարգ վիճակը շտկելու համար կատարվել են անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ:
- Նախկինում կարգավորված չի եղել ձերբակալված անձանց զանգերի իրավունքի ապահովման հարցը, այժմ ձերբակալվածների համար տեղադրվել են հեռախոսավտոմատներ:
- Ձերբակալվածների տեսակցություններն իրենց հարազատների հետ կկանոնակարգվեն, իսկ դրանց օրերն ու ժամերը ֆիքսելու համար կլինեն հաշվառման մատյաններ:
- Իրականացվել է խցերի սանհանգույցների ամբողջական մեկուսացումը խցի բնակելի մասից:

- Զբոսանքի վայրում տեղադրվել է նստարան:
- Նախկինում ձերբակալված անձանց համար չի նախատեսվել ճաշացանկ, այսուհետ այն կփակցվի համապատասխան վայրում:
- Խցում եղել է 2 մահճակալ, որից մեկը դուրս է բերվել՝ ապահովելու համար օրենսդրությամբ սահմանված մեկ անձի համար նախատեսված 4 քմ տարածքի պահանջը:
- Հանձնարարական է տրվել պարտադիր կերպով համապատասխան մատյանում նշել ձերբակալվածների ընդունման ժամը՝ բացառելով ձերբակալվածներին սահմանված ժամից ավել պահելու հավանականությունը:
- Հանձնարարվել է պատշաճ արձանագրել հարցաքննությունից հետո ձերբակալվածների մոտ մարմնական վնասվածքների առկայությունը կամ բացակայությունը:

ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԿԱՄ-ի կողմից իրականացված այցերի ընթացքում ուսումնասիրվել են ինչպես հոգեբուժական հաստատություններում հիվանդների կենսապայմանները, տրամադրվող սնունդը, հանդերձանքը, գսպան միջոցների կիրառման ընթացակարգերը, այնպես էլ ոլորտում առկա օրենսդրական բացերը, խնդիրները, որոնց պատճառով խախտվում կամ ոչ իրավաչափորեն սահմանափակվում են հիվանդների իրավունքները և հիմնարար ազատությունները:

Արձանագրված խնդիրներ

- Հիմնականում հիվանդների պահման վատթար պայմաններ, գերբնակեցման դեպքեր, հիվանդների բուժման համար պատշաճ պայմանների բացակայություն,
- Չսպան միջոցների ընթացակարգի չպահպանման, այդ թվում՝ այլ հիվանդների ներկայությամբ գսպան միջոցների կիրառման դեպքեր,
- Որոշ դեպքերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված սննդի օրական միջին չափաբաժինների խախտման դեպքեր,
- Հիմնականում արտաքին աշխարհի կապի, այդ թվում՝ բողոքներ ներկայացնելու հնարավորության բացակայություն,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված հանդերձանքի չտրամադրման դեպքեր,
- Հիվանդների զբոսանքի պատշաճ կարգով չկազմակերպման դեպքեր,
- Վատ վերաբերմունքի և հիվանդների շահագործման դեպքեր
- Օրենսդրական խնդիրներ
- Հոգեբուժական հաստատություններում գինեկոլոգիական, ատամնաբուժական, վիրաբուժական, պաթոլոգո-անատոմիական, ֆունկցիոնալ և լաբորատոր ախտորոշիչ կաբինետներով տեխնիկական համալրվածության և կադրային հագեցվածության անհամապատասխանություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Նշված խնդիրները ներկայացվում են ըստ հաստատությունների՝ առավել առարկայական և թիրախային ներկայացման նպատակով:

ԲԿԱՄ փորձագետների Նուբարաշենի հոգեբուժական կենտրոն կատարած այցի ուսումնասիրության հիմնական առարկան Նուբարաշենի հոգեբուժական կենտրոնի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքն էր, որտեղ արձանագրվել են մի շարք խնդիրներ:

Հիվանդների կենսապայմաններ

Հիվանդասենյակներն ու բաժանմունքն ամբողջությամբ լցված էին ծխախոտի ծխով: Թեև բաժանմունքում առանձնացված է ծխարանի համար առանձին տարածք, այնուամենայնիվ, ծխարանում նույնիսկ ծխաման չկար, այն օգտագործվում էր որպես աղբահավաքման սենյակ: Սանհանգույցը հակասանիտարական վիճակում էր, գույքը՝ հնամաշ, հիվանդասենյակներում անհատական պահարաններ չկան: Հարկ է նշել, որ

ԽԿԿ չափանիշներով սահմանվում է, որ. «Բարենպաստ բուժիչ միջավայրի ստեղծումն ամենից առաջ ներառում է հիվանդին բավարար կենսական տարածություն տրամադրելը ...: ... Ցանկալի կլինեք հիվանդներին տրամադրել կողասեղանիկներ և հագուստի պահարաններ. հիվանդներին պետք է թույլ տալ պահելու իրենց որոշ անձնական իրերը (լուսանկարներ, գրքեր և այլն): Անհրաժեշտ է ընդգծել հիվանդներին տեղ հատկացնելու կարևորությունը, որտեղ նրանք կկարողանային իրենց անձնական իրերը պահել և կողպել. այդպիսի տեղի բացակայությունը կարող է բացասաբար անդրադառնալ հիվանդների անվտանգության և ինքնուրույնության զգացողության վրա»¹²⁹⁷: Միաժամանակ ԽԿԿ-ն դեռևս 2010թ. Հայաստանի Կառավարությանն ուղղված զեկույցում անդրադարձել է Նուբարաշենի հոգեբուժական կլինիկայի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքի պահման պայմաններին՝ արձանագրելով, որ «... առկա է կացարանների ծանրաբեռնվածություն, ճաշարանի մոտ գտնվող 12 քմ մակերեսով սենյակում պահվող կանանց համար (ԲԿԱՄ փորձագետների այցի պահին տվյալ տարածքում գտնվում էին 3 կին) չէր ապահովվում անձի առանձնությունը, քանի որ ճաղավանդակով միջնորմի միջով նրանց կարող էին տեսնել անցնող տղամարդիկ: ԽԿԿ-ն նշել է նաև, որ երկու բաժանմունքում կացարաններն ու սարքավորումները հնամաշ էին և օգտագործվում էին համատեղ, ինչով խախտվում էր առանձնության իրավունքը. ոչ մի գործողություն չէր ձեռնարկվել 2002 թվականի այցելության մասին զեկույցում նկարագրված բանտային, դաժան ու հիվանդներին անհատական մոտեցում չապահովող մթնոլորտը բարելավելու ուղղությամբ: Կացարաններն առանձնացված էին՝ ճաղավանդակով միջնորմներով, և դեռևս չկային անհատական փակվող տարածքներ՝ հիվանդների անձնական պարագաները պահելու համար: Ավելին, չկային հանգստի սենյակներ»: ԲԿԱՄ փորձագետների կատարած այցի արդյունքում, ըստ էության, տեղաշարժ չի արձանագրվել և չեն իրականացվել ԽԿԿ-ի կողմից մատնանշված առաջարկներն առ այն, որպեսզի հիվանդների համար

* ստեղծվի առավել հաճելի ու անհատական մոտեցում ապահովող միջավայր, և նրանց հատկացնեն անհատական փակվող տեղեր անձնական պարագաների համար,

* ստեղծվեն պատշաճ հանգստասենյակներ, որոնք բավարար կլինեն պահվող հիվանդների թվի համար:

Լոգարան

Լոգանքի մատյան չի վարվում: Թեև հիվանդները ԲԿԱՄ փորձագետներին հայտնեցին, որ լոգանքը կազմակերպվում է շաբաթը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության, սակայն այցի պահին լոգարանի ջրատաքացուցիչներից մեկը չէր աշխատում, ինչպես նաև չէր աշխատում նախագորակոչային բաժանմունքի ջրատաքացուցիչը:

¹²⁹⁷ CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2011, 3-րդ գլուխ, կետ 34

Հագուստ

Իրականացված ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ հիվանդներին չեն տրամադրվում և հոգեբուժական կլինիկան չի ստանում ՀՀ կառավարության 26.05.2011թ. թիվ 711-Ն որոշմամբ հաստատված հանդերձանքի չափաբաժինները:

Զբոսանք

Մատյանների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ այցի դրությամբ (19.10.2014թ.) զբոսանք չէր կազմակերպվել հոկտեմբերի 10-ից (աշխատակիցները տվյալ հանգամանքը պատճառաբանում էին եղանակային պայմաններով): Հիվանդները ԲԿԱՄ փորձագետներին հայտնել են, որ հիմնականում զբոսնելու վերաբերյալ առաջարկներ չեն լինում և, ընդհանրապես, բակ դուրս գալու արգելք կա: Մտահոգիչ էր, որ սանիտարը տեղյակ չէր զբոսանքի դուրս գալու ժամերի վերաբերյալ: Հիվանդներից մեկը նշեց, որ միայն ամռանն է եղել զբոսանքի, իսկ մյուս հիվանդը սկսեց հարցեր ուղղել զբոսաբակի գտնվելու վայրի վերաբերյալ: Որոշ հիվանդներ նշեցին, որ լավագույն դեպքում զբոսնում են հիմնականում միջանցքում: Նկատի ունենալով, որ աշխատակիցները հիվանդներին զբոսանք չտրամադրելը պատճառաբանում էին հիվանդների հրաժարվելով, եղանակային վատ պայմաններով, իսկ ԲԿԱՄ փորձագետների այցի ժամանակահատվածը համընկնում էր օրվա ռեժիմով սահմանված զբոսանքի ժամին՝ բոլոր հիվանդները ԲԿԱՄ փորձագետներին հայտնեցին, որ զբոսնելու ցանկություն ունեն:

Հարկ է արձանագրել, որ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետի համաձայն՝ հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք ունեն հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի իրավունք, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել բժշկական կամ այլ գործողություններում, իսկ ԽԿԿ չափանիշների համաձայն՝ հիվանդները պետք է հնարավորություն ունենան ամեն օր զբոսնել մաքուր օդում:

Կապ արտաքին աշխարհի հետ

Բաժանմունքի տաքսաֆոնը չէր աշխատում, փակցված չէր նաև հեռախոսային խոսակցությունների սակագների ցուցանակը: Մինչդեռ, «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի հավելվածով սահմանված է, որ. «Հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ տաքսոֆոն հոգեկան խանգարումներով տառապող անձանց համար հասանելի վայրում: Հեռախոսային խոսակցության վճարումները, գործող սակագներին համապատասխան, կատարվում են տվյալ անձի հաշվին: Հոգեբուժական հաստատության ադմինիստրացիան հոգեկան հիվանդների համար հասանելի վայրում պետք է փակցնի հեռախոսային խոսակցությունների սակագները: Հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի կատարելու առնվազն մեկ անվճար հեռախոսազանգ հանրապետության տարածքում»:

Այսպիսով, հոգեկան խանգարումներով տառապող անձինք ակնհայտորեն զրկված են հեռախոսակապ ունենալու հնարավորությունից, ստեղծված չեն համապատասխան պայմաններ այդ իրավունքն իրականացնելու համար:

- Բաժանմունքում տեղադրված չէր բողոքների և առաջարկությունների արկղ, չկար նաև փոստարկղ՝ հիվանդների կողմից ինքնուրույն նամակագրություն իրականացնելու համար, ինչպես նաև փոստային ծառայությունների սակագների վերաբերյալ տեղեկատվություն:

Մինչդեռ.

«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի հավելվածով սահմանված է, որ հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ փոստարկղ: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան խանգարումներով տառապող անձին պետք է հասանելի լինի փոստարկղից օգտվելը: Հոգեբուժական կազմակերպության ադմինիստրացիան հոգեկան հիվանդների համար հասանելի վայրում պետք է փակցնի փոստային ծառայությունների սակագները: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձն իրավունք ունի իր միջոցների հաշվին նամակագրական (փոստային) կապ հաստատելու ցանկացած անձի հետ: Հոգեբուժական կազմակերպությունն ապահովում է նամակագրական կապի միջոցով հաղորդակցվելու հասանելիությունը հոգեկան խանգարումներով տառապող անձի համար:

Իսկ ԽԿԿ չափանիշների համաձայն՝ արտաքին աշխարհի հետ շփումներ պահպանելը կարևոր է ոչ միայն չարաշահումները կանխելու, այլև՝ բուժական տեսակետից: Հիվանդները պետք է թղթակցություն ուղարկելու և ստանալու, հեռախոսից օգտվելու հնարավորություն ունենան: Ավելին, ԽԿԿ-ն հատուկ կարևորում է հիվանդների կողմից ներկայացվող բողոքների գաղտնիության ապահովումը և համապատասխան ընթացակարգի սահմանումը: Մասնավորապես, ըստ ԽԿԿ-ի՝ հոգեբուժական հաստատություններում դաժան վերաբերմունքի դեմ հիմնական երաշխիքը բողոքների ներկայացման արդյունավետ ընթացակարգն է: Պետք է գոյություն ունենա հատուկ ընթացակարգ, որը հնարավորություն կտա հիվանդին պաշտոնական բողոք ներկայացնել հստակ լիազորություններ ունեցող մարմնի, ինչպես նաև գաղտնի տեղեկություններ ուղարկել հաստատությունից դուրս գտնվող համապատասխան մարմնին:

- Տեսակցությունների սենյակում ԲԿԱՄ փորձագետները, ինչպես և նախորդ տարիներին, արձանագրել են էլեկտրական լամպերի բացակայություն: Տեսակցությունների սենյակում սանիտարի հետ միասին գտնվում էր նաև բակային շուն, որը ոստիկանների խնամքի տակ էր¹²⁹⁸: ԲԿԱՄ փորձագետները արձանագրեցին, որ շունը այդպես էլ դուրս չհանվեց տեսակցությունների սենյակից (շունը չէր ենթարկվում համապատասխան հրահանգներին):

¹²⁹⁸ Հարկ է նշել, որ ԽԿԿ-ն դեռևս 2002 թվականին ներկայացրել էր առաջարկություն՝ բակում պահակաշների խնդիրը լուծելու ուղղությամբ, իսկ արդեն 2010 թվականին դրական գնահատել այլևս պահակաշներ չպահելու փաստը:

Զսպման միջոցներ

Զսպման միջոցների կիրառման մատյանը կարված և կնքված չէր, որևէ գրառում չկար, սակայն հիվանդների պնդմամբ՝ զսպման միջոցներ կիրառվում են թե հիվանդասենյակներում և թե մանիպուլյացիոն սենյակում: Փաստվեց, որ սանիտարները չունեն անհրաժեշտ միջոցներ հիվանդին ֆիքսելու համար, իսկ որպես ամրագոտի ծառայում են տնից բերված կապանները:

Արձանագրենք, որ մյուս հիվանդների ներկայությամբ զսպման միջոցի կիրառման խնդրին ԽԿԿ-ն նույնպես անդրադարձել է 2010թ. Հայաստանի Կառավարությանն ուղղված զեկույցում, որտեղ մասնավորապես նշվել է. «ԽԿԿ-ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանություններն ապահովեն, որ հիվանդի նկատմամբ զսպման մեխանիկական մեթոդները չկիրառվեն մյուս հիվանդների ներկայությամբ, եթե տվյալ հիվանդն ուղղակի այլ բան չի պահանջում, կամ եթե հայտնի է, որ հիվանդը գերադասում է շրջապատված լինել մարդկանցով: Զսպման միջոցները պետք է հիվանդի նկատմամբ կիրառվեն հատուկ այդ նպատակի համար նախատեսված սենյակում, և զսպման միջոցները կիրառելու ժամանակ մյուս հիվանդները չպետք է օգնեն անձնակազմին»¹²⁹⁹:

Վատ վերաբերմունք և հիվանդների շահագործում

- ԲԿԱՄ փորձագետները բաժանամունք մտնելուց արձանագրեցին, որ ծխարանի աղբը և միջանցքները մաքրում են հիվանդները: ԲԿԱՄ փորձագետների գալուց առաջ սկսեցին փոխել անկողնային պարագաները, որոնք տեսանելի էին դռան մոտից: Հիվանդների հավաստմամբ՝ բաժանմունքի մաքրման աշխատանքները կատարում են հիվանդները, ընդ որում, կա աշխատանքի հստակ բաժանում: Այսպես, հիվանդներից 2-3-ը մշտապես մաքրում են գուգարանները, 2-ը՝ խոհանոցը, մյուս 2-ը՝ միջանցքներն ու հիվանդասենյակները՝ հերթափոխով:

- Հիվանդները հայտնեցին նաև, որ հարազատների միջոցով գնվում է յուրաքանչյուր հիվանդասենյակի ավելն ու գոգաթին (սավոկը):

- Ինչպես արդեն մատնանշվեց, ԲԿԱՄ փորձագետների առաջարկով կազմակերպվեց զբոսանք: Բոլոր հիվանդները դուրս եկան, իսկ ոմանք վերցրեցին իրենց հետ պոլիէթիլենային տարաներ (շէր), որոնք լցված էին մեզով՝ գուգարանում թափելու համար: Հիվանդները նշեցին, որ հաճախակի «անհանգստացնող» (ովքեր ցանկություն են հայտնում գուգարան, խոհանոց գնալ) հիվանդների վրա սանիտարները բղավում են, բարկանում, ինչի պատճառով ստիպված վարվում են նման կերպ (միզում են պոլիէթիլենային տարաների, շէրի մեջ):

- Հիվանդների համար հասանելի չէր նաև խմելու ջուրը, այն ևս հիվանդների կողմից բերվում էր պոլիէթիլենային տարաներով: Ջրից օգտվելու հասանելիությունն ավելի սահմանափակվում է երեկոյան և գիշերային ժամերին՝ գուգարան չգնալու պատճառաբանությամբ:

¹²⁹⁹ 2010 թվականի դեկտեմբերի 1, CPT (2010) 82

Նորք հոգեբուժական կենտրոն

Հիվանդների կենսապայմաններ

- Կլինիկայում նախատեսված է 3 մահճակալ անչափահասների համար, որոնք, սակայն, առանձնացված չեն: Հարկ է նշել, որ խնդրին ԽԿԿ-ն անդրադարձել է դեռևս 2010թ. Հայաստանի Կառավարությանն ուղղված զեկույցում, որտեղ մասնավորապես նշվել է. «... անչափահասները երբեմն պահվում էին չափահասների հետ (այցելության ժամանակ Երևանի «Նորք» հոգեկան առողջության կենտրոնում կար տասնհինգամյա մի աղջիկ...): Հաշվի առնելով դեռահասների խոցելիությունն ու հատուկ կարիքները՝ նրանց պետք է տրամադրվեն պատշաճ կերպով պաշտպանված սենյակներ՝ տվյալ բաժանմունքի հստակ առանձնացված հատվածներում: Բնականաբար, սա չպետք է խոչընդոտի անչափահասներին՝ մասնակցելու հոգեառաջնության վերականգնման և ժամանցային միջոցառումներին չափահասների հետ, ինչը պետք է պատշաճ հսկվի անձնակազմի կողմից»:

- Հիվանդասենյակները նորոգման կարիք ունեն, պատերի ծեփոնները խոնավությունից տեղ-տեղ թափված էին, մահճակալները հնամաշ են: Բոլոր հիվանդասենյակները գերծանրաբեռնված էին մահճակալներով (հիվանդասենյակների մակերեսները տարբեր են՝ 12-20 քմ): Յուրաքանչյուր բաժանմունքում գրեթե մեկ հիվանդասենյակ դուր ուներ: Աշխատակիցների պարզաբանմամբ՝ դրանք հեռացվել են հին լինելու պատճառով: Անձնական իրերի պահման համար բավարար հարմարություններ չկային, ոչ բոլոր հիվանդներն էին ապահովված անհատական պահարաններով: Որոշ մահճակալների վրա չկային ներքնակներ:

- Թեև որոշ բաժանմունքների սանհանգույցները վերանորոգված էին, սակայն զորակոչային և վճարովի բաժանմունքների զուգարանները կարիք ունեին վերանորոգման: Մտահոգիչ էր զորակոչային բաժանմունքի զուգարանի դռան վրա բացված մեծ պատուհանի առկայությունը, ինչպես նաև զուգարանի՝ արգելապատնեշով ապահովված չլինելու հանգամանքը: Բաժանմունքում առանձնացված չէր ծխարանը, դրա փոխարեն միջանցքի պատուհանագոգին տեղադրվել էին մետաղական թասեր, որտեղ հավաքվում էին ծխախոտի մնացորդները: ԲԿԱՄ փորձագետները արձանագրեցին նաև, որ նույնիսկ բժիշկներն անկաշկանդ ծխում էին տարածքում:

- Ամբողջ այցի ընթացքում տարածքը չէր ջեռուցվում (առանձնագրույցներից պարզվեց, որ ջեռուցումը միացվում է միայն գիշերային ժամերին):

Զսպման միջոցների կիրառում

Կլինիկայում կիրառվում են կապման և դեղորայքային զսպման միջոցներ: Կապման միջոցն իրականացվում է կտորից պատրաստված ինքնաշեն ժապավենների և սավանի միջոցով, ինչը ՀՀ ԱՆ 03.05.2010թ. թիվ 691-Ա հրամանով հաստատված «Հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հոգեկան խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման կիրառման ուղեցույց»-ի (այսուհետ՝ Ուղեցույց) պահանջների

խախտում է:

Համաձայն մատյանի գրառումների՝ զսպման միջոցները կիրառվում են մինչև 30 րոպե տևողությամբ, հիվանդասենյակներում, քանի որ զսպման միջոցների կիրառման համար առանձին սենյակ նախատեսված չէ: Աշխատակիցները ԲԿԱՄ փորձագետներին հայտնեցին, որ մյուս հիվանդները զսպման միջոցների կիրառման ժամանակ սենյակից հեռացվում են: Այնուամենայնիվ, հաշվի առնելով հիվանդասենյակների դռների բացակայությունը՝ հիվանդասենյակից հիվանդների հեռացումը մեկուսացման պայմանի ապահովում չի կարող դիտարկվել:

Կապն արտաքին աշխարհի հետ

Թեև Կլինիկայում կան տաքսոֆոններ, սակայն դրանք տեղադրված են բաժանմունքներից դուրս և փաստացի հասանելի չեն հիվանդներին: Մինչդեռ, «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի հավելվածով սահմանված է, որ հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ տաքսոֆոն հոգեկան խանգարումներով տառապող անձանց համար հասանելի վայրում:

Ավան հոգեկան առողջության կենտրոն

Հիվանդների կենսապայմաններ

Նախորդ այցերին արձանագրված բոլոր խնդիրները՝ կապված շենքային վատ պայմանների հետ մնացել էին անփոփոխ: Մասնավորապես.

- զուգարաններն ու բաղնիքները բոլոր բաժանմունքներում գտնվում էին ոչ բարեկարգ վիճակում, պատերն ու առաստաղը խոնավացած էին, դրանց վրա առկա էր բորբոս,

- հիվանդասենյակները նույնպես անբարեկարգ էին, որոշ հիվանդասենյակներում մահճակալները տեղադրված էին անհարմար դիրքով, ինչի հետևանքով հիվանդասենյակի մուտքը մասնակիորեն փակվում էր: Մահճակալները հնամաշ էին (դրական է գնահատվում հաստատության կողմից 60 նոր ներքնակների ձեռքբերման հանգամանքը),

- ծխող հիվանդների համար առանձնացված չէին ծխելու համար տարածքներ (հիվանդներից ոմանք բողոքում էին իրենց ներկայությամբ ծխելու հանգամանքից: Խնդիրն առկա էր նաև կանանց բաժանմունքում):

Մնունդ

Մնունդը միատեսակ էր ու կրկնվող, ինչը փաստվել է երկու շաբաթվա ճաշացանկների ուսումնասիրությամբ: Այսպես.

նախաճաշ՝ հաց, կարագ, մեղր, չոր միրգ (արքայանարինջ և արմավ),

ճաշ՝ սիսեռով տավարի մսով ապուր, հնդկաձավարով կամ մակարոնով փլավ,

ընթրիք՝ հաց, կարագ, մեղր, բրնձով շիլա կամ հնդկաձավարով փլավ:

Այցի դրությամբ (15.01.2015) 2014 թվականի նոյեմբեր ամսից կաթնամթերք չէր ստացվել, առկա է միայն կարագ:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 26.05.2011թ. թիվ 711-Ն որոշմամբ հաստատված «Հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժիններ»-ով նախատեսվում է սննդակարգով կաթնամթերքի (կաթ, կաթնաշոռ, մածուն, կեֆիր և այլն), մրգերի, բանջարեղենի, ծովամթերքի առկայությունը՝ համապատասխան չափաբաժիններով:

Պահեստ

- Պահեստում արձանագրվել են հակասանիտարական պայմաններ, տարածքում գարշահոտ էր:

- Մսի պահման համար նախատեսված սառնարաններում առկա էր մեծ քանակությամբ տհաճ հոտ ու տեսք ունեցող տավարի միս, ըստ աշխատակցի՝ միսը ստացվել էր 2014թ.-ի դեկտեմբեր ամսի վերջին (այցը կատարվել է **15.01.2015թ.**): Այցի պահին, ըստ համապատասխան աշխատակցի՝ ընդունվող միսը չի ուղեկցվել անասնաբուժական վկայականով և չի ենթարկվել անասնաբուժասանիտարական փորձաքննության, ինչը «Մսնդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջն է: Հարկ է արձանագրել նաև, որ հետագայում Առողջապահության նախարարության կողմից տրված պարզաբանմամբ՝ սառնարանի սառցարանում առկա տավարի միսը անցել է անասնաբուժասանիտարական փորձաքննություն 28.12.2014թ. (վկայական N-006913):

- Պահեստում պահեստավորված էր մեղր, կարագ, եփած պոմիդորի թանձր հյութ (տոմատ), հնդկաձավար, մակարոն, բրինձ, չոր միրգ (արքայանարինջ և արմավ), իսկ բանջարեղենից կար միայն կարտոֆիլ:

Զսպման միջոցներ

- Ուղեցույցով նախատեսված մատյանը լրացվում է ոչ պատշաճ: Այսպես, մատյանում չի մատնանշվում ախտորոշումը, 8-10-րդ սյունյակները չեն լրացվում, մատյանի գրառումները լիարժեք չէին արտացոլում զսպման կիրառման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը:

- Զսպումը կատարվում է սավանների օգնությամբ՝ հիվանդասենյակներում հիվանդների մահճակալներին կապելու միջոցով, ընդ որում, մյուս հիվանդների ներկայությամբ (ԽԿԿ չափորոշիչների չպահպանում):

Հիվանդների հետ առանձնագրույցներ

Հիվանդների հետ առանձնագրույցների ժամանակ հնչած հիմնական բողոքները վերաբերել են զբոսանք չկազմակերպելուն և տուն գնալու արգելքին (հիվանդներից ոմանք նշել են նաև զբաղվածության բացակայության խնդիրը): Այսպես, հարկադիր

բուժում ստացող հիվանդներից մեկը ԲԿԱՄ փորձագետներին հայտնեց, որ զբոսանքը, եղանակային պայմաններից ելնելով (ընդ որում ձմռանն այն գրեթե չի կազմակերպվում), տրամադրվում է ընդհամենը 15 րոպեով և ուղեկցող սանիտարի կողմից հրահանգվում է, որ հիվանդները նստեն միմյանց կողքին և չշարժվեն, իսկ հոժարակամ բուժում ստացող սուր հիվանդներին առհասարակ արգելված է զբոսանքը:

ԲԿԱՄ փորձագետների՝ «Զբոսանքի թույլտվության» մատյանի ուսումնասիրությամբ պարզվեց, որ բաժանմունքում հաշվառված 39 հիվանդից միայն 8-12-ին էր էր թույլատրված զբոսանքի իրավունքը, ընդ որում՝ վերջիններից 2-3 էին հարկադիր բուժվող հիվանդները: Զբոսանքի թույլտվության վերանայումը կատարվում է ամիսը երկու անգամ բաժանմունքի ղեկավարի կողմից և նշվում մատյանում: Նման մոտեցումը վարչակազմը պարզաբանեց «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքում առկա հնարավորությամբ:

Միաժամանակ, ԽԿԿ չափորոշիչներով հատուկ ընդգծված է բացօթյա պայմաններում անցկացվող ժամանակի կարևորությունը և 2010թ. Հայաստանի Կառավարությանն ուղղված զեկույցում ԽԿԿ-ն մատնանշել է «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքում 2009 թվականի փոփոխությունների արդյունքում ներառված՝ հիվանդների՝ ամեն օր մաքուր օդի դուրս գալու իրավունքի հնարավորությունը: Ընդգծվել է նաև, որ պահվող բոլոր հիվանդներին, ում առողջական վիճակը դա թույլ է տալիս, անհրաժեշտ է օրական մեկ ժամ բացօթյա զբոսանքի և մարմնամարզության հնարավորություն տալ և բարելավել բացօթյա զբոսանքի իրականացման պայմանները: ԽԿԿ-ն առաջարկել է անգամ Հայաստանի իշխանություններին ուսումնասիրել հիվանդներին հաստատության տարածքը լքելու իրավունք տալու հնարավորությունները և կանխել հոսպիտալացման բացասական հետևանքները:

Նեղ մասնագիտական բուժօգնություն

Հարկադիր բուժվող հիվանդներից մեկը շուրջ 2 շաբաթ աչքի շուրջ բորբոքում ուներ (բժիշկների տեղեկացմամբ՝ ախտորոշվել է կոնյուկտիվիտ), սակայն նրա հիվանդության պատմագրում դրա մասին գրառում չկար, և պարզ չէր, թե ինչ բուժում է նշանակված և իրականացվում: Քննարկումների ընթացքում պարզաբանվեց, որ բուժումը նշանակվել է մի դեպքում թերապևտի, մյուս դեպքում հոգեբույժի, մեկ այլ ավագ բուժբրոջ կողմից: Հիվանդն իր հերթին պնդեց, որ աչքի բուժման համար դեղորայքն ապահովում են հարազատները:

Սևանի հանրապետական հոգեբուժական հիվանդանոց

Հիվանդների կենսապայմաններ

- Չնայած իրականացրած վերանորոգման որոշ աշխատանքներին (վերանորոգվել է խոհանոցը, լվացքատունը և մթերքների պահեստը, մասնակի վերանորոգման աշխատանքներ են կատարվել նաև որոշ բաժանմունքներում), այնուամենայիվ, բաժանմունքների մի մասը դեռևս ոչ բարվոք վիճակում է: Մասնավորապես,

բավականին վատթար են 4-րդ և 7-րդ բաժանմունքի պայմանները. սանհանգույցները հակասանիտարակ վիճակում են, 4-րդ բաժանմունքում անկողնային պարագաները հնամաշ են, այն գերբնակեցված է՝ 3 մահճակալ տեղադրված է միջանցքում: Ընդ որում, նկատի ունենալով, որ միջանցքը տվյալ բաժանմունքի համար ծառայում է նաև որպես ճաշարան և ժամանցի վայր, նման իրավիճակն ավելի քան ընդունելի չէ:

2010թ. Հայաստանի Կառավարությանն ուղղված զեկույցում ԽԿԿ-ն անդրադարձել է գերբնակեցվածության արդյունքում հիվանդներին՝ միջանցքում պահելու խնդրին («Նորք» հոգեկան առողջության կենտրոնի համատեքստում)՝ ընդգծելով, որ պետք է միջոցներ ձեռնարկվեն ծանրաբեռնվածության մակարդակը նվազեցնելու ուղղությամբ, որպեսզի որևէ հիվանդ չպահվի միջանցքում:

- Միաժամանակ գերբնակեցվածության հետևանքով հիվանդասենյակներում մահճակալները տեղադրված են այնպես, որ խանգարում են մուտքին (տեղադրված են դռան մուտքի առջև): Գերբնակեցված էր նաև 6-րդ բաժանմունքը՝ 30-35 քմ մակերես ունեցող տարածքում տեղադրված էր 10 մահճակալ:

- Հիվանդասենյակներում բացակայում են նաև հիվանդների անհատական իրերի պահարանները:

Մնունդ

Մննդի ուսումնասիրմամբ փաստվեց, որ նախորդ այցի համեմատ այն բարելավվել է (սննդային պահեստում առկա էին մրգեր, բանջարեղեն, կաթնամթերք, մեղր և այլ), սակայն խնդրահարույց էր սննդակարգի համատեղումը: Այսպես, մոտ երկամսյա ճաշացանկերի ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ շաբաթվա ընթացքում գրեթե 5 օր տրամադրվում է բորշշ, երբեմն բորշչի հետ տրամադրվում է նաև սպաս:

Խնդրահարույց էր նաև այցի պահին ընթրիքի համար նախատեսված հաճարով փլավը, որը որդնած էր:

Այցի պահին չէր պահպանվել նաև սննդակարգով նախաճաշին նախատեսված 100 գրամ հաց չափաբաժինը, որը գտնվում էր հացապահարանում:

Առանձնացում

Ինչպես և նախորդ այցերին այժմ նույնպես արձանագրվեց, որ հոգեբուժարանում գտնվող հիվանդներն ըստ իրենց առողջական վիճակի առանձնացված չեն: Օրինակ, ռեմիսիոն շրջանում գտնվող հիվանդները բնակեցված են հիվանդության սրացման փուլում գտնվող հիվանդների հետ:

«Մյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունում նույնպես արձանագրվել են բազմաթիվ խնդիրներ:

Հիվանդների կենսապայմաններ

Կանանց բաժանմունքում հիվանդասենյակները գերբնակեցված էին՝ 2 հիվանդասենյակում մահճակալները փակում էին հիվանդասենյակի մուտքը, հիվանդասենյակներից մեկում մահճակալը դրված էր հիվանդասենյակի մեջտեղում: Մեկ այլ հիվանդասենյակում 2 հիվանդ պառկած էին հատակին. մահճակալ չլինելու պատճառով անկողինները գետնին էին տեղադրված: Ոչ բոլոր հիվանդներն են ապահովված առանձին պահարաններով, օրինակ 7 հիվանդի համար նախատեսված հիվանդասենյակում տեղադրված էր 4 կողապահարան: Անկողնային պարագաները բավականին կեղտոտ էին: Թեև հաստատությունում կային անկողնային պարագաներ, սակայն մահճակալներին նկատվում էր անկողնային պարագաների պակաս, շատ ներքնակներ ծածկված չէին սավաններով:

Մտունդ

ԲԿԱՄ փորձագետներն ուսումնասիրել են 2 շաբաթվա կտրվածքով հիվանդների տրվող սննդակարգը, ինչի վերլուծությունը ցույց է տվել, որ հիվանդներին տրամադրվող սնունդը գրեթե բոլոր օրերի համար միատեսակ էր և բաղկացած էր.

1. նախաճաշ՝ հաց, շաքարավազ, թեյ, պանիր¹³⁰⁰,
2. ճաշ՝ բարեգործական հիմունքներով տրամադրված ճաշատեսակ, որը բաղկացած է բրնձից, համեմված հավի և գազարի չորացրած կտորներից, հաց, թեյ,
3. ետճաշիկ՝ վերմիշելով ապուր, ոսպով կամ բրնձով փլավ, շաբաթվա կտրվածքով մեկ անգամ միս,
4. ընթրիք՝ հնդկաձավարով փլավ, պանիր:

Խնդրահարույց էր այն հանգամանքը, որ հիվանդներին չի տրվում կաթնամթերք՝ միրգ կամ բանջարեղեն, որոնք հաստատությունում ստանում են հազվադեպ, իսկ մեղրը՝ բարեգործական մեղվափետակներից հավաքվածն է, որը նույնպես տրվում է հազվադեպ (ԲԿԱՄ փորձագետները սննդի միատեսակության խնդիրն արձանագրել են նաև 2013թ. նոյեմբերին կատարած այցի ընթացքում):

Սննդի նմուշները պահպանված էին, սակայն նշված չէին նմուշների ժամկետները, իսկ հաշվի առնելով, որ սնունդը հիմնականում միատեսակ էր, պարզ չէր, թե որ օրվա սննդի օրինակներն էին պահպանվել սննդի նմուշների տարաներում:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 26.05.2011թ. թիվ 711-Ն որոշմամբ հաստատված «Հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժիններ»-ի հաստատված սյունյակով նախատեսվում է կաթնամթերքի (կաթ, կաթնաշոռ, մածուն, կեֆիր և այլն), մրգերի, բանջարեղենի, մսի, ծովամթերքի առկայությունը սննդակարգով՝ համապատասխան չափաբաժիններով:

ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են նաև, որ պահեստային տարածքում սննդի կողքին էին պահվում նաև տնտեսական ապրանքները, այդ թվում՝ քիմիական մաքրող պարագաներ:

¹³⁰⁰ Բարեգործական հիմունքներով տրամադրված

Զսպման միջոցներ

ՀՀ ԱՆ 03.05.2010թ. թիվ 691-Ա հրամանով հաստատված «Հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հոգեկան խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման կիրառման ուղեցույց»-ի (այսուհետ՝ Ուղեցույց) համաձայն՝ հաստատությունում վարվում է «Ֆիզիկական զսպման կիրառման, ինչպես նաև դադարեցման մասին որոշման հիմնավորման արձանագրման» մատյան (այսուհետ՝ զսպման կիրառման հաշվառման մատյան), սակայն մատյանի ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ զսպման միջոցների կիրառումը չի կատարվում Ուղեցույցով սահմանված կարգով: Օրինակ, Միրվարդ Աբաղյանի /ախտորոշումը՝ շիզոֆրենիա/ նկատմամբ կիրառվել է զսպման միջոց կապվել է մահճակալին 23.08.14թ.-ին, ժամը 02:00-ից 04:00, այնուհետև, նույն օրը ժամը 14:00-ից 16:00-ն, ինչպես նաև 22:00-24:00-ը ընկած ժամանակահատվածում: Ըստ ուղեցույցի 7-րդ կետի 1-ին ենթակետի՝ 24 ժամվա ընդհանուր ժամանակահատվածում ֆիզիկական զսպման կիրառման ընդհանուր տևողությունը չպետք է գերազանցի 18 տարեկանից բարձր անձանց համար՝ 4 ժամը: Սակայն տվյալ դեպքում, 24 ժամվա ընթացքում նրա նկատմամբ կիրառվել է 6 ժամ զսպման միջոց, ավելին՝ հաջորդ օրը նույնպես կիրառվել է 2 ժամ տևողությամբ զսպման միջոց: Բացի դրանից, այդ ընթացքում չեն պահպանվել Ուղեցույցի 9-րդ կետի դրույթները, այն է՝ ոչ ուշ, քան մեկ ժամվա պարբերականությամբ կապված անձը գննվում է բժշկի կողմից և մատյանում կատարվում են գրանցումներ: Հավելենք նաև, որ ԽԿԿ չափանիշների համաձայն՝ Կոմիտեն հոգեբուժական հիմնարկների հիվանդների նկատմամբ ֆիզիկական զսպման միջոցները մի քանի օրերի ընթացքում շարունակ կիրառելը հավասարագոր է գնահատել դաժան վերաբերմունքի և ընդգծել, որ նման պրակտիկան չի կարող որևէ բուժական արդարացում ունենալ¹³⁰¹:

Հիվանդանոցի բաժանմունքներում զսպման միջոցի կիրառման համար նախատեսվում է առանձին հիվանդասենյակ, սակայն այդ սենյակների բնակեցված լինելու պատճառով, զսպման միջոցը կատարվում է հենց հիվանդի մահճակալին, մյուս հիվանդների ներկայությամբ: Ինչպես արդեն նշվեց նման վերաբերմունքին ԽԿԿ-ն անդրադարձել է դեռևս 2010թ. Հայաստանի Կառավարությանն ուղղված գեկույցում:

Խախտվել է նաև զսպման միջոցների գրանցման կարգը: Այսպես, թեև կանանց և տղամարդկանց յուրաքանչյուր բաժանմունքում նախատեսված էր զսպման կիրառման հաշվառման մատյան, այնուամենայնիվ, տղամարդկանց բաժանմունքում կիրառված զսպման միջոցները նշվել էին կանանց բաժանմունքի համար նախատեսված մատյանում: Միաժամանակ չէր պահպանվել Ուղեցույցի 9-րդ կետի պահանջը, մասնավորապես, մատյանում ներառված չէր տեղեկատվություն հիվանդին յուրաքանչյուր ժամը մեկ բժշկի կողմից գննության ենթարկելու մասին, ինչը կվկայեր, որ հիվանդը անընդհատ գտնվել է բուժանձնակազմի հսկողության ներքո:

¹³⁰¹ CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2011, 3-րդ գլուխ, կետ 48

Զբոսանք

Հիվանդները չեն օգտվում զբոսանքի իրավունքից՝ բավարարվելով միայն բաց պատշգամբում որոշակի ժամանակ անցկացնելով: Վարչակազմը նման իրավիճակը պատճառաբանել է հաստատության՝ համապատասխան անվտանգության համակարգով ապահովված չլինելով և աշխատակիցների քանակի սակավաթվությամբ¹³⁰²:

Կապն արտաքին աշխարհի հետ

ԲԿԱՍ փորձագետները արձանագրել են տաքսոֆոնի, հեռախոսային խոսակցությունների սակագների ցուցանակի բացակայությունը, ակնատես են եղել տեսանելի վայրում «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության տնօրինության կողմից փակցրած հայտարարությանը հետևյալ բովանդակությամբ. «Բոլոր հիվանդատերերին» տեղեկացվում է, որ «կապված հեռախոսագանգերի բուժավճարի կիրառման հետ հիվանդների կողմից կատարվող զանգերը սահմանափակվում են: Հիվանդի և բժիշկների հետ հեռախոսակապը խնդրում է ապահովել Ձեր կողմից կատարված զանգերով»:

Այսպիսով, հոգեկան խանգարումներով տառապող անձինք ակնհայտորեն զրկված են հեռախոսակապ ունենալու հնարավորությունից, ստեղծված չեն համապատասխան պայմաններ այդ իրավունքն իրականացնելու համար («Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի պահանջի խախտում):

Բաժանմունքներում տեղադրված էին բողոքների և առաջարկությունների արկղեր, որոնք բացվում էին ավագ բուժքրոջ ներկայությամբ, սակայն դրանց պարունակության մասին որևէ տեղ չէր գրանցվում և վիճակագրություն չէր վարվում, ավելին՝ չկար փոստարկղ՝ հիվանդների կողմից ինքնուրույն նամակագրություն իրականացնելու համար, ինչպես նաև փոստային ծառայությունների սակագների վերաբերյալ տեղեկատվություն¹³⁰³:

¹³⁰² «Հոգեբուժության օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետի համաձայն՝ հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք ունեն հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի իրավունք, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել բժշկական կամ այլ գործողություններում, իսկ ԽԿԿ չափանիշների համաձայն՝ հիվանդները պետք է հնարավորություն ունենան ամեն օր զբոսնել մաքուր օդում:

¹³⁰³ Հիշեցնենք, որ «Հոգեբուժության օգնության մասին» ՀՀ օրենքի հավելվածով սահմանված է, որ հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ փոստարկղ: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան խանգարումներով տառապող անձին պետք է հասանելի լինի փոստարկղից օգտվելը: Հոգեբուժական կազմակերպության ադմինիստրացիան հոգեկան հիվանդների համար հասանելի վայրում պետք է փակցնի փոստային ծառայությունների սակագները: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձն իրավունք ունի իր միջոցների հաշվին նամակագրական (փոստային) կապ հաստատելու ցանկացած անձի հետ: Հոգեբուժական կազմակերպությունն ապահովում է նամակագրական կապի միջոցով հաղորդակցվելու հասանելիությունը հոգեկան խանգարումներով տառապող անձի համար:

Իսկ ԽԿԿ չափանիշների համաձայն՝ արտաքին աշխարհի հետ շփումներ պահպանելը կարևոր է ոչ միայն չարաշահումները կանխելու, այլև՝ բուժական տեսակետից: Հիվանդները պետք է թղթակցություն

Բուժում և անձնակազմ

Հիվանդները մասնակցում են մաքրման (բակի, հիվանդասենյակների, միջանցքների, սանհանգույցների) աշխատանքներին, զբաղվում մեղվապահությամբ, կահույքագործությամբ: Վարչակազմի հավաստմամբ՝ դա դիտարկվում է որպես աշխատանքային թերապիա: Այնուամենայնիվ, այն որևէ կերպ չի արձանագրվում որպես այդպիսին, չեն վարվում համապատասխան գրառումներ՝ նման թերապիայի դրական/բացասական ազդեցության վերաբերյալ:

Հատկանշական է, որ ԽԿԿ-ն ողջունում է աշխատանքային թերապիայի իրականացումը, սակայն իր չափանիշներում ընդգծում. «ԽԿԿ-ն հատկապես ապշած էր հոգեբուժական հիմնարկներում զբաղված որակյալ բուժքույրերի սակավաթվությամբ, ինչպես նաև սոցիալական թերապիայի միջոցառումներ իրագործելու կոչված անձնակազմի (մասնավորապես աշխատաթերապևտների) պակասությամբ: Հոգեբուժական հիմնարկներում աշխատելու համար բուժքույրերի հատուկ պատրաստման կազմակերպումը, ինչպես նաև սոցիալական թերապիայի խիստ ընդգծումը էական ազդեցություն կթողներ բժշկական սպասարկման որակի վրա: Մասնավորապես, դա կնպաստեր բուժիչ միջավայր ստեղծելուն, որն ավելի քիչ է ուղղված դեղերով և ֆիզիկական միջոցներով բուժելուն»:

Այսպիսով, աշխատանքային թերապիայի իրականացումը, թեև դրական դիտարկվող և ողջունելի պրակտիկա է, այնուամենայնիվ դրա իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան մասնագետներ, սահմանված պատշաճ ընթացակարգեր :

- ԲԿԱՍ փորձագետների համար անհասկանալի են եղել որոշ հայտարարություններ, որոնք տեղադրվել են «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերության տնօրինության կողմից: Այսպես.

1. «Ամբուլատոր դեղորայքի գործընթացը կարգավորելու նպատակով ՍՄՆՀԴ-ում անց է կացվում ամբուլատոր դեղերի քանակների ճշտում: Առաջարկվում է բոլոր հիվանդներին իրենց բուժող բժիշկների մոտ ներկայացնել իրենց անհրաժեշտ դեղորայքի քանակները» (հայտարարության պատճենը՝ կցվում է):

2. «Տնային-պահպանիչ բուժման համար պետության կողմից հատկացված դեղորայքը դիսպանսերի կողմից բաց է թողնվում անվճար: Եթե անհրաժեշտ կամ ցանկալի դեղորայքը տվյալ պահին բացակայում է անվճար ֆոնդում, դիսպանսերի կողմից տրվում են դեղատոմսեր քաղաքային դեղատներից գնելու համար, մինչ անվճար

ուղարկելու և ստանալու, հեռախոսից օգտվելու հնարավորություն ունենան:

Ավելին, ԽԿԿ-ն հատուկ կարևորում է հիվանդների կողմից ներկայացվող բողոքների գաղտնիության ապահովումը և համապատասխան ընթացակարգի սահմանումը: Մասնավորապես, ԽԿԿ չափանիշների համաձայն՝ հոգեբուժական հաստատություններում դաժան վերաբերմունքի դեմ հիմնական երաշխիքը բողոքների ներկայացման արդյունավետ ընթացակարգն է: Պետք է գոյություն ունենա հատուկ գործողությունների կարգ, որը հնարավորություն կտա հիվանդին պաշտոնական բողոք ներկայացնել հստակ լիազորություններ ունեցող մարմնի, ինչպես նաև գաղտնի տեղեկություններ ուղարկել հաստատությունից դուրս գտնվող համապատասխան մարմնին:

Ֆոնդում դրանք ստանալը» (հայտարարության պատճենը՝ կցվում է):

3. «Հիվանդների տնային բուժման համար դեղորայքը տրվում է Առողջապահության նախարարության կողմից, պետական սահմանված կարգով: Մեր դիսպանսերն ինքնուրույն տնային բուժման դեղորայք ձեռք բերել և ամբուլատոր հիվանդներին հատկացնել չի կարող: Եթե Ձեր ցանկացած կամ Ձեզ խիստ անհրաժեշտ դեղորայքը բացակայում է մեր դիսպանսերում, ապա Դուք այն կարող եք գնել դեղատներից, որի համար մեր կողմից կարող են տրվել դեղատոմսեր: Խնդրում եմ ընդունել հայտարարությունն ի գիտություն, ժամանակն օգտագործել ռացիոնալ և ավելորդ հարցերով բժիշկներին և աշխատակիցներին չծանրաբեռնել» (հայտարարության պատճենը՝ կցվում է):

Այսպիսով, վարչակազմի կատարած հայտարարությունների ընդհանուր տրամաբանությունից պարզ է դառնում, որ ամբուլատոր հիվանդներին տրամադրվող դեղորայքի քանակի ապահովման համար առաջարկվում է հիվանդներին ներկայացնել համապատասխան անհրաժեշտ դեղորայքի քանակ, սակայն որոշ ժամանակահատված դիսպանսերում առկա չի լինում անհրաժեշտ դեղորայքը:

«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացվել էին բազմաթիվ վերանորոգման աշխատանքներ (բակը բարեկարգվել է, պարսպապատվել, տանիքը, լվացքատունը, խոհանոցը, հանգստի սենյակը, բաժանմունքում սանհանգույցները և լոգարանները՝ վերանորոգվել), այնուամենայնիվ, դեռևս կան խնդիրներ:

Հիվանդների կենսապայմաններ

Բաժանմունքները դեռևս ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք (առաստաղը, պատերն ու հատակն անձրևների պատճառով վնասված էին), հիվանդասենյակներում չկային կողապահարաններ, մահճակալները դասավորված են խիտ՝ 7 մահճակալ 25 քմ տարածքում, մահճակալներից որոշները միացված են միմյանց կամ կիսով չափ փակում են հիվանդասենյակի մուտքը, մահճակալները հնամաշ են¹³⁰⁴:

Զսպման միջոցներ

* այցելության պահին հիվանդասենյակում զսպում էր կիրառվում նոր ընդունված Մ. Ա.-ի նկատմամբ: Համապատասխան մատյանի ուսումնասիրությամբ պարզ դարձավ, որ զսպման միջոցների կիրառումը նախապես կանխատեսվել էր, քանի որ մատյանում արդեն իսկ կատարվել էին լրացումներ, որտեղ պահպանվել էր 2-ժամյա ինտերվալը,

¹³⁰⁴ Հարկ է նշել, որ ԽԿԿ չափանիշներով սահմանվում է, որ. «Բարենպաստ բուժիչ միջավայրի ստեղծումն ամենից առաջ ներառում է հիվանդին բավարար կենսական տարածություն տրամադրելը ...: ... Ցանկալի կլիներ հիվանդներին տրամադրել կողասեղանիկներ և հագուստի պահարաններ. հիվանդներին պետք է թույլ տալ պահելու իրենց որոշ անձնական իրերը (լուսանկարներ, գրքեր և այլն): Անհրաժեշտ է ընդգծել հիվանդներին տեղ հատկացնելու կարևորությունը, որտեղ նրանք կկարողանային իրենց անձնական իրերը պահել և կողպել. այդպիսի տեղի բացակայությունը կարող է բացասաբար անդրադառնալ հիվանդների անվտանգության և ինքնուրույնության զգացողության վրա»

չնայած որ դեռ մոտ մեկ ժամ կար մատյանում նշված ժամանակահատվածի ավարտին և հիվանդի զսպումը դադարեցվեց մինչ նշված ժամը: Կանխատեսված էր նաև ֆիզիկական զսպման միջոցների կիրառման արդյունքները և զսպման միջոցի դադարեցման հիմնավորումը,

* զսպման միջոցների կիրառման օրը, ամիսը, տարին, երբեմն նաև ժամերը չեն արձանագրվում, փոխարենը նշվում է միայն՝ 2 ժամ,

* մի դեպքով արձանագրվել էր, որ 24 ժամվա ընթացքում 2-ժամյա պարբերությամբ հիվանդի նկատմամբ կիրառվել էր զսպում՝ 6 ժամ տևողությամբ, հետևաբար խախտվել է Ուղեցույցի 7-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույթը՝ 24 ժամվա ընդհանուր ժամանակահատվածում ֆիզիկական զսպան կիրառման ընդհանուր տևողությունը չպետք է գերազանցի 18 տարեկանից բարձր անձանց համար՝ 4 ժամը,

* չէին պահպանվել նաև Ուղեցույցի 9-րդ կետի պահանջները, այն է՝ ոչ ուշ, քան մեկ ժամվա պարբերականությամբ կապված անձը զննվում է բժշկի կողմից և մատյանում կատարվում են գրանցումներ:

- Ֆիզիկական զսպման միջոցները կիրառվում են հենց հիվանդասենյակում, մյուս հիվանդների ներկայությամբ: Տնօրենի հավաստմամբ՝ գերբնակեցման պատճառով զսպման միջոցի կիրառման համար նախատեսված սենյակում կազմակերպում են հիվանդների բուժում: Ավելին, հիվանդների խոսքերով, երբեմն նրանք նույնպես օգնում են ագրեսիվ վիճակում գտնվող հիվանդներին կապելու գործընթացում:

Այսպիսով, խախտվել է Ուղեցույցով սահմանված պահանջները և արդեն իսկ մատնանշված ԽԿԿ չափանիշները¹³⁰⁵:

Կապն արտաքին աշխարհի հետ

Հոգեկան խանգարումներով տառապող անձինք զրկված են հեռախոսակապ ունենալու հնարավորությունից, ստեղծված չեն համապատասխան պայմաններ այդ իրավունքն իրագործելու համար, քանի որ բաժանմունքներում բացակայում են հեռախոսային կապի միջոցները (չկար նաև հեռախոսային խոսակցությունների սակագներ վերաբերյալ տեղեկատվություն): Հիվանդները գանգատվել են, որ հարազատների հետ հեռախոսակապ հաստատելու հնարավորություն չունեն:

¹³⁰⁵ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) չափանիշներին, որոնցով սահմանվել է, որ Կոմիտեի չափանիշների համաձայն՝ հոգեբուժական հիմնարկների հիվանդների նկատմամբ ֆիզիկական զսպման միջոցները մի քանի օրերի ընթացքում շարունակ կիրառելը, հավասարագոր է գնահատել դաժան վերաբերմունքի և ընդգծել, որ նման պրակտիկան չի կարող որևէ բուժական արդարացում ունենալ¹³⁰⁵, իսկ մյուս հիվանդների ներկայությամբ զսպման միջոց կիրառելու և այլ հիվանդներին տվյալ գործընթացին ներգրավելու հարցին ԽԿԿ-ն անդրադարձել է դեռևս 2010թ. Հայաստանի Կառավարությանն ուղղված զեկույցում, որտեղ մասնավորապես նշվել է. «ԽԿԿ-ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանություններն ապահովեն, որ հիվանդի նկատմամբ զսպման մեխանիկական մեթոդները չկիրառվեն մյուս հիվանդների ներկայությամբ, եթե տվյալ հիվանդն ուղղակի այլ բան չի պահանջում, կամ եթե հայտնի է, որ հիվանդը գերադասում է շրջապատված լինել մարդկանցով: Զսպման միջոցները պետք է հիվանդի նկատմամբ կիրառվեն հատուկ այդ նպատակի համար նախատեսված սենյակում, և զսպման միջոցները կիրառելու ժամանակ մյուս հիվանդները չպետք է օգնեն անձնակազմին»:

Այսպիսով, կրկին արձանագրվել են «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի և ԽԿԿ չափանիշների խախտումներ¹³⁰⁶:

- Բաժանմունքներում տեղադրված չէին բողոքների և առաջարկությունների արկղեր, չկար փոստարկղ՝ հիվանդների կողմից ինքնուրույն նամակագրություն իրականացնելու համար, ինչպես նաև փոստային ծառայությունների սակագների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչը նույնպես չի համապատասխանում «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքին և ԽԿԿ չափանիշներին¹³⁰⁷:

Չբոսանք

- Հիվանդները մասնակի են օգտվում զբոսանքի իրավունքից՝ բակում նստարանների բացակայության պատճառով (հիվանդները մատնանշում էին, որ զբոսանելիս հոգնում են և նստարաններ չլինելու պատճառով հրաժարվում են զբոսանելուց)¹³⁰⁸:

¹³⁰⁶ «Հոգեբուժության օգնության մասին» ՀՀ օրենքի հավելվածով սահմանված է, որ. «Հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ տաքսոֆոն հոգեկան խանգարումներով տառապող անձանց համար հասանելի վայրում: Հեռախոսային խոսակցության վճարումները, գործող սակագներին համապատասխան, կատարվում են տվյալ անձի հաշվին: Հոգեբուժական հաստատության ադմինիստրացիան հոգեկան հիվանդների համար հասանելի վայրում պետք է փակցնի հեռախոսային խոսակցությունների սակագները: Հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի կատարելու առնվազն մեկ անվճար հեռախոսագանգ հանրապետության տարածքում»:

ԽԿԿ չափանիշների համաձայն՝ արտաքին աշխարհի հետ շփումներ պահպանելը կարևոր է ոչ միայն չարաշահումները կանխելու, այլև՝ բուժական տեսակետից: Հիվանդները պետք է թղթակցություն ուղարկելու և ստանալու, հեռախոսից օգտվելու հնարավորություն ունենան:

¹³⁰⁷ «Հոգեբուժության օգնության մասին» ՀՀ օրենքի հավելվածով սահմանված է, որ հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ փոստարկղ: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան խանգարումներով տառապող անձին պետք է հասանելի լինի փոստարկղից օգտվելը: Հոգեբուժական կազմակերպության ադմինիստրացիան հոգեկան հիվանդների համար հասանելի վայրում պետք է փակցնի փոստային ծառայությունների սակագները: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձն իրավունք ունի իր միջոցների հաշվին նամակագրական (փոստային) կապ հաստատելու ցանկացած անձի հետ: Հոգեբուժական կազմակերպությունն ապահովում է նամակագրական կապի միջոցով հաղորդակցվելու հասանելիությունը հոգեկան խանգարումներով տառապող անձի համար:

Իսկ ԽԿԿ չափանիշների համաձայն՝ արտաքին աշխարհի հետ շփումներ պահպանելը կարևոր է ոչ միայն չարաշահումները կանխելու, այլև՝ բուժական տեսակետից: Հիվանդները պետք է թղթակցություն ուղարկելու և ստանալու, հեռախոսից օգտվելու հնարավորություն ունենան:

Ավելին, ԽԿԿ-ն հատուկ կարևորում է հիվանդների կողմից ներկայացվող բողոքների գաղտնիության ապահովումը և համապատասխան ընթացակարգի սահմանումը: Մասնավորապես, ԽԿԿ չափանիշների համաձայն՝ հոգեբուժական հաստատություններում դաժան վերաբերմունքի դեմ հիմնական երաշխիքը բողոքների ներկայացման արդյունավետ ընթացակարգն է: Պետք է գոյություն ունենա հատուկ գործողությունների կարգ, որը հնարավորություն կտա հիվանդին պաշտոնական բողոք ներկայացնել հստակ լիազորություններ ունեցող մարմնի, ինչպես նաև գաղտնի տեղեկություններ ուղարկել հաստատությունից դուրս գտնվող համապատասխան մարմնին:

¹³⁰⁸ Հարկ ենք համարում նշել, որ «Հոգեբուժության օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետի համաձայն՝ հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող

Բուժում

Տղամարդկանց բաժանմունքում ԲԿԱՄ փորձագետներն առաջին օգնության դեղերի և պարագաների հավաքածուի մեջ ակննատես են եղել ժամկետանց դեղորայքի (ռեզիդրոն և ասպիրին): Դեղորայքի հայտնաբերումից հետո ավագ բուժքույրը դրանք անմիջապես նետեց աղբամանի մեջ՝ չպահպանելով ժամկետանց դեղորայքի հանձնման ընթացակարգը:

Մտունդ

Չնայած ճաշարանում բացակայում էին տվյալ օրվա ճաշացանկը, սննդի նմուշները, սակայն հիվանդների հետ զրույցների ընթացքում, ինչպես նաև նախորդ օրերի ճաշացանկերի ուսումնասիրությամբ, պարզվել է, որ սննդակարգը, նախորդ այցի համեմատությամբ, ավելի բազմատեսակ էր:

Լոռու մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր

- որպես զսպման միջոց օգտագործվում են սավաններ և սրբիչներ, մինչդեռ, Ուղեցույցի 20-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական զսպման նպատակով կարող են կիրառվել կաշվե ամրակապեր կամ Պոզիի գոտիներ,

- զսպումը կրկին կատարվում է հիվանդասենյակներում, երկաթե մահճակալին, մյուս հիվանդների ներկայությամբ:

Մտունդ

- պահեստում արձանագրվել են մածուն, թթվասեր, 2 տուփ ծիրանի պահածո, որոնք պիտակավորված և մակնիշավորված չէին, նշված չէին ժամկետներ:

Նշված խնդիրների մասին տեղեկացվել են ՀՀ առողջապահության և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունները:

ՀՀ առողջապահության նախարարը տեղեկացրել է, որ այցելության ընթացքում արձանագրված թերությունների շտկման նպատակով «Նուբարաշեն հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ տնօրենի թիվ 532 հրամանով ծառայողական քննության նպատակով ստեղծված հանձնաժողովի աշխատանքների շնորհիվ մատնանշված խնդիրներից կարգավորվել է հիվանդների զբոսանքի մատենավորումը, իրականացվում է ամենօրյա զբոսանք ցանկացողների շրջանում, հրաժարվողները ստորագրում են մատյանում, ստեղծվել է հիվանդների լոգանքի մատյան, փոստարկղ, առաջարկությունների և բողոքների արկղ: Կարգավորվել է տաքսոֆոնից օգտվելու հարցը, գնացուցակը փակցվել է տաքսոֆոնի մոտ: Խոհանոցում և բաժանմունքում փակցվել է ամենօրյա ճաշացուցակը: Տարածքից հեռացվել է ոստիկաններին պատկանող շունը: Զսպան միջոցները լրացվել են ի հաշիվ փափուկ գոտիների:

անձինք ունեն հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի իրավունք, իսկ ԽԿԿ չափանիշների համաձայն՝ հիվանդները պետք է հնարավորություն ունենան ամեն օր զբոսնել մաքուր օդում:

Հանձնարարվել է սանիտարներին բաժանմունքի հարդարման աշխատանքներին հիվանդներին ներգրավել միայն կամավորության սկզբունքով: Խնդիրների մի մասը՝ խոհանոցում տաք ջրի և տաքացուցիչի, գուգարանների քանակի ավելացման, կանանց հիվանդասենյակի բարեփոխման, հիվանդների անձնական գույքը պահելու նպատակով պահարաններ ձեռք բերելու հարցերը կապված են ֆինանսավորման և վերանորոգման աշխատանքների հետ: Հիվանդի՝ պոլիէթիլենային շշի մեջ միզելու հետ կապված, տեղեկացվել է, որ անոթային թուլամտությամբ տառապող հիվանդը՝ հիվանդության ծանրության աստիճանով պայմնավորված, հաճախ միզում է հիվանդասենյակի մյուս հիվանդների անկողնում, ուստի հիգիենիկ նպատակներով հիվանդները նրան հատկացրել են պոլիէթիլենային շիշ: Տեղեկացվել է նաև, որ արձանագրված մյուս խնդիրները աստիճանաբար կստանան իրենց լուծումները:

«Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ում արձանագրված խնդիրների վերաբերյալ տեղեկացվել է, որ կենտրոնը գործում է 2014 թվականի մարտի 14-ից: Ֆինանսական խնդիրների պատճառով վերանորոգման աշխատանքներ դեռևս չեն իրականացվել: Անչափահասների համար մահճակալները առանձնացված չեն, քանի որ անչափահասները գտնվում են ծնողների հետ և տրամադրվում է առանձին հիվանդասենյակ: Վերջիններս կարող են տեղակայված լինել բաժանմունքի ցանկացած հատվածում, կախված հիվանդասենյակներում մահճակալների ծանրաբեռնվածությունից: Բաժանմունքի ծանրաբեռնված լինելու դեպքում հիվանդասենյակում կարող է գտնվել ևս մեկ զգալիորեն հանդարտ, լավացման շրջանում գտնվող հիվանդ: Մասնակիորեն իրականացվել են հիվանդասենյակների և սանհանգույցների նորոգման ընթացիկ, մեծ ծախսեր չպահանջող շինարարական աշխատանքներ: Տարածքի ջեռուցումն օրվա մեջ երկու անգամ ապահովվելը նպատակ ունի կանխարգելել պոմպերի շարքից դուրս գալը, անջատումների ընթացքում հաստատությունում պահպանվում է 20-22 աստիճան ջերմային ռեժիմ: Զսպման միջոցները կատարվում են փափուկ կտորից պատրաստված ինքնաշեն ժապավեններով, որոնք նույնքան քիչ տրավմատիկ են, որքան ՀՀ ԱՆ 03.05.2010 թվականի թիվ 691-Ա հրամանով նախատեսված կաշվե ամրակապերը և Պոզիի գոտիները: Ըստ վերոնշյալ հրամանի ուղեցույցի 8-րդ կետի, ֆիզիկական զսպման կիրառման ամբողջ ժամանակահատվածում հիվանդը մշտապես գտնվում է բուժանձնակազմի հսկողության տակ և չի պահանջվում առանձին հիվանդասենյակ, այդ ընթացքում հիվանդասենյակից հիվանդները ժամանակավորապես տարհանվում են: Բաժանմունքներում տաքսոֆոններ չկան, գրեթե բոլոր հիվանդներն ունեն բջջային հեռախոսներ և դրանցից օգտվում են ժամը 9.00 մինչև 22.00: Բջջային կապ չունեցող հիվանդներն օգտվում են կենտրոնի քաղաքային հեռախոսից:

Նախարարությունը ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերության շենքային պայմանների անփոփոխ մնալը նույնպես պատճառաբանել է ֆինանսական միջոցների բացակայությամբ: Տեղեկացվել է, որ հիվանդասենյակներում մահճակալները տեղադրված են հարմար դիրքով, որևէ հիվանդասենյակի մուտքը երբևէ մահճակալի անհարմար դիրքի պատճառով փակված չի եղել: Ծխող հիվանդների համար առանձնացված են սենյակներ: Կենտրոնում սնունդը տրամադրվում է համաձայն ՀՀ կառավարության 26.05.2011թ. թիվ 711-Ն որոշմամբ հաստատված

«Հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժիններ» կարգի: ԲԿԱՄ փորձագետները, որպես օրինակ, ծանոթացել են միայն մեկ օրվա սննդակարգի հետ, սակայն կարծիք են հայտնել երկու շաբաթվա ճաշացանկերի վերաբերյալ (նշվածի վերաբերյալ Պաշտպանի գնահատմամբ Առողջապահության նախարարությանը տրամադրվել է ոչ համարժեք տեղեկատվություն, որի մասին Նախարարությունը տեղեկացվել է): «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 14-րդ կետի դրույթները ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունում ապահովվում են:

Նշվել է նաև, որ պահեստում առկա սննդամթերքի և սանիտարահիգիենիկ պայմանների վերաբերյալ փորձագետների կարծիքը մասնակի է համապատասխանում իրականությանը: Մասնավորապես՝ սառնարանի սառցարանում առկա տավարի միսը անցել է անասնաբուժասանիտարական փորձաքննություն 28.12.2014թ. (վկայական N-006913): Ինչ վերաբերվում է ԲԿԱՄ փորձագետների ոչ սանիտարահիգիենիկ պայմանների՝ առկա էր գարշահոտ գրառմանը, ապա ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունում առողջապահության նախարարության կողմից կատարված դիտարկումների արդյունքում երբևէ նման բան չի արձանագրվել:

ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունում հոգեկան խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ ֆիզիկական զսպումը նույնպես իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 03.05.2010թ. թիվ 691-Ա «Հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հոգեկան խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման կիրառման ուղեցույցը հաստատելու մասին» հրամանի համաձայն: Ինչ վերաբերում է ուղեցույցով նախատեսված մատյանին, ապա այն լրացվում է պատշաճ՝ ըստ վերը նշված հրամանի հավելված 2-ի: ԲԿԱՄ փորձագետների 15.01.2015թ. այցելության ժամանակ նրանց ցուցադրվել է միայն «ֆիզիկական զսպման կիրառման» մատյանի առկա լինելը, քանի որ, համաձայն ՀՀ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլխի 13-րդ հոդվածի՝ «քաղաքացիների հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկությունները բժշկական գաղտնիք են: Այդիպիսի տեղեկությունները տրամադրվում են միայն հիվանդին և նրա օրինական ներկայացուցչին նրանց պահանջով»: Հաշվի առնելով վերը նշվածը, մատյանի մեջ կատարված գրառումները նրանց չեն ներկայացվել: (Պաշտպանի գնահատմամբ՝ Նախարարությանը տրամադրվել է ոչ համարժեք տեղեկատվություն, քանի որ ԲԿԱՄ փորձագետները հնարավորություն են ունեցել ծանոթանալու մատյանի գրառումներին ամբողջությամբ: Վերոգրյալի վերաբերյալ տեղեկացվել է նաև Նախարարությունը):

«Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն»-ը վերաբերում է ազատագրկման մեջ գտնվող անձանց: Մեջբերում են արձանագրությունից՝ «ազատագրվում նշանակում է՝ անձին ցանկացած ձևով կալանքի տակ պահել կամ բանտարկել կամ անձին հսկողության տակ պահվող հանրային կամ մասնավոր վայրում տեղավորել, որն անձին որևէ դատական, վարչական կամ այլ մարմնի որոշմամբ չի թույլատրվում կամովին թողնել»: Արձանագրությունը չի վերաբերվում ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունում

հոժարակամ, իրենց գրավոր դիմումի համաձայն, հետազոտվող կամ/և բուժվող անձանց:

Ինչ վերաբերում է դատարանի որոշումով «ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք»-ում բուժվող հիվանդներին, ապա նրանց վերաբերյալ ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունը անհրաժեշտության դեպքում տրամադրում է տեղեկություն համապատասխան մարմիններին ՀՀ-ում գործող իրավական ակտերի համաձայն՝ սահմանված կարգով: Հաշվի առնելով վերը նշվածը՝ ԲԿԱՄ փորձագետներին առանձնագրույցը թույլ է տրվել միայն դատարանի որոշմամբ հարկադիր բուժման և հսկողության մեջ գտնվող հիվանդների հետ, որոնց դեպքում «սուռն գնալու արգելք» արտահայտությունը տեղին չէ¹³⁰⁹: «Զբոսանքի թույլտվության» մատյան ՀՀ ԱՆ «Ավան» Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲ ընկերությունում չի վարվում, զբոսանքը կազմակերպվում է հիվանդների ցանկությամբ օրվա յուրաքանչյուր ժամին՝ պահպանելով հանգստի և դեղորայքի ընդունման օրակարգը: Ինչ վերաբերում է զբոսանքը սահմանափակելուն, ապա այն համապատասխանում է «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ կետին: Մեջբերում՝ «...բացառությամբ հանգստի և ութժամյա գիշերային քնի իրավունքի մնացած օրենքով նախատեսված իրավունքները կարող են սահմանափակվել օրենքով կամ հետազոտող բժշկի կամ հոգեբուժական հանձնաժողովի կողմից, եթե դրանց իրականացումը վտանգ է ներկայացնում հիվանդի կամ հասարակության համար... », ինչի մասին պատճառաբանված գրառում է կատարվում հիվանդի հիվանդության պատմագրում: Նեղ մասնագիտական բուժօգնության վերաբերյալ հայտնում են, որ հիվանդը զննվել է թերապևտի կողմից, նշանակվել է հակաբորբոքային քսուք, եռօրյա բուժումից հետո, կոնյուկտիվիտի երևույթները հիվանդի մոտ անցել են, ինչի վերաբերյալ հիվանդության պատմագրում կատարվել է համապատասխան գրառում:

«Սևանի հանրապետական հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի վերաբերյալ Նախարարությունից տեղեկացվել է, որ ամբողջովին վերանորոգվել են 4-րդ և 7-րդ բաժանմունքները, 4-րդ բաժանմունքի անկողնային պարագաները ամբողջությամբ փոխարինվել է նորերով իսկ միջանցքի 3 մահճակալները հանվել են: 6-րդ բաժանմունքի մահճակալների թիվը նվազեցվել է: Հիվանդների միջև ծագող վեճերը կանխելու նպատակով յուրաքանչյուր հիվանդի անհատական սանիտարական հիգիենիկ պարագաները պիտակավորված պահվում են ավագ բուժքրոջ կաբինետում՝ առանձին պահարանում, իսկ հագուստը և անկողնային պարագաները պահվում են տնտեսուհու առանձնացված սենյակում: Ճաշացանկը ամեն օր փոփոխվում է: Ընթրիքի համար նախատեսված հաճարը ԲԿԱՄ փորձագետների այցի պահին դեռևս մաքրված և լվացված չէր. նման պայմաններում չի բացառվում, հացահատիկը որդնած կամ ուտելուն ոչ պիտանի լինի: Հացի բաշխման և սննդամթերքի պահպանման կանոնները խախտելու համար պատասխանատու 3 աշխատակցի նկատմամբ հայտարարվել է նկատողություն և խիստ նկատողություն: Խիստ հսկողություն է սահմանվել նշված կանոնները պահպանելու համար: Հիվանդանոցը ունի 8 բաժանմունք՝ 4-ը տղամարդու և 4-ը կանանց համար, բաժանմունքները մշտապես համալրված են հիվանդներով:

¹³⁰⁹ Պաշտպանի գնահատմամբ՝ Նախարարությունը տրամադրվել է ոչ համարժեք տեղեկատվություն, քանի որ ԲԿԱՄ փորձագետները հնարավորություն են ունեցել հանդիպելու և զրուցելու հոժարակամ բուժում ստացող հիվանդների հետ:

Միաժամանակ տեղեկացվել է, որ հիվանդանոցի շենքային պայմանները թույլ չեն տալիս հիվանդներին առանձնացել ըստ իրենց առողջական վիճակի, իսկ սրացման փուլում գտնվող հոգեկան խնդիրներ ունեցող անձանց նույն բաժանմունքում պահելը վտանգավոր է և կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից փոխանցվել է Սյունիքի մարզպետարանի ձեռնարկած միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը: Մասնավորապես հայտնվել է, որ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունում արձանագրված խնդիրների և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների մշակման նպատակով ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 70-Ա կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով: Ուսումնասիրության պահին պարզվել է, որ զսպման միջոցներ կիրառելու համար դիսպանսերում առանձնացված են երկու սենյակ և զսպման կիրառման հաշվառման երկու մատյան՝ կանանց և տղամարդկանց համար:

Բարելավվել են նաև հիվանդների կենսապայմանները՝ բաժանմունքները գերծանրաբեռնված չեն, բոլոր հիվանդները ապահովված են մահճակալներով և մաքուր անկողնային պարագաներով, սակայն ոչ բոլոր հիվանդներն ունենին առանձին կողապահարաններ: Մննդի նմուշները պահպանված էին, նշված էին նմուշառման և պահպանման ժամկետները, սննդակարգում ներառված սննդատեսակները համապատասխանում էին ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի թիվ 711-Ն որոշմամբ նախատեսված սննդատեսակներին: Ճաշացանկի մեջ ներառված էր նաև կաթնամթերք: Նշվել է նաև, որ հարցումներից պարզվել է, որ հիվանդները զբոսնում են բացօթյա պայմաններում:

Երկու բաժանմունքներում առկա են տաքսոֆոններ և հեռախոսային խոսակցությունների սակագների ցուցանակներ: Վարվում է բողոքների և առաջարկությունների արկղերի պարունակության գրանցման մատյան: Որոշում է կայացվել այսուհետ բողոքների արկղերը բացել մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի մշտադիտարկման ընթացքում: Փոստարկղ տեղադրելու վերաբերյալ տնօրինությունը բանակցություններ է վարում «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ:

Ինչ վերաբերում է աշխատանքային թերապիային, ապա տնօրինությունը «աշխատանքային թերապիան» օրինական ներդնելու հարցով դիմել է ՀՀ առողջապահության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններին:

Բովանդակային առումով անիմաստ հայտարարությունները հանվել են փակցված տեղերից: Տեղեկացվել է նաև, որ այսուհետ ՀՀ Սյունիքի մարզպետարանի ստեղծած հանձնաժողովը պարբերաբար՝ եռամսյակային կտրվածքով դիսպանսերում կիրականցնի մշտադիտարկում: Մատնանշվել է, որ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է նաև, որ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ-ում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումը պահանջում է ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան մասնագետների կողմից իրականացնել դիսպանսերի կարիքների գնահատում:

Շիրակի մարզպետարանից տեղեկացվել է, որ ԲԿԱՄ-ի կողմից «Գյումրու

Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի այցելության ընթացքում արձանագրված թերությունները քննարկվել են ՀՀ Շիրակի մարզպետարանում՝ ընկերության տնօրենի մասնակցությամբ: «Գյումրու Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում արձանագրված խախտումները թույլ տված պատասխանատու անձինք տնօրենի կողմից ենթարկվել են կարգապահական տույժերի: Հետագայում նման խախտումները բացառելու նպատակով «Գյումրու Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- հիվանդի նկատմամբ զսպման միջոցները կիրառելու նպատակով առանձնացվել է մեկ սենյակ,

- սահմանվել է խիստ հսկողություն բժշկի կողմից զսպման միջոց կիրառելու ընթացքում հիվանդի գնման և մատյանում գրառումների կատարման նկատմամբ,

- պլանավորվում է գալիք տարում ընկերության միջոցների հաշվին իրականացնել ներքին հարդարում և գույքի՝ կողապահարանների և մահճակալների ձեռք բերում,

- արտաքին աշխարհի հետ կապն ինքնուրույն իրականացնելու համար բաժանմունքում տեղադրվել են առաջարկությունների և բողոքների արկղեր, ինչպես նաև փոստարկղեր,

- հիվանդների ամենօրյա զրոսանքը կազմակերպելու նպատակով կառուցապատված բակում տեղադրված են նստարաններ,

- սահմանվել է խիստ հսկողություն հիվանդի մոտ դրսից բերվող դեղորայքը բացառելու նպատակով,

- սահմանվել է խիստ հսկողություն, օրենքով սահմանված կարգով, սննդի համտեւր 24 ժամ պահելու և խոհանոցում ամենօրյա ճաշացանկ ունենալու նկատմամբ:

Լոռու մարզպետարանը տեղեկացրել է, որ Լոռու մարզային նյարդահոգեբուժական դիսպանսերում արձանագրված ՀՀ ԱՆ 03.05.2010 թ. թիվ 691-Ա հրամանով հաստատված Ուղեցույցով սահմանված կաշվե ամրակապեր և Պոզիի գոտիներ ՀՀ-ում չեն արտադրվում և չեն ներկրվում¹³¹⁰, որի պատճառով օգտագործվում են սավաններ և սրբիչներ: Նշվել է նաև, որ հաստատությունում հոգեշարժական զրգոված վիճակում գտնվող հիվանդների զսպումը հիմնականում կատարվում է հատուկ առանձնացված սենյակներում, բայց, ելնելով անհրաժեշտությունից և հիվանդի վիճակից, այն երբեմն կատարվում է այլ հիվանդասենյակում:

Ինչ վերաբերում է սննդի պահեստում ուսումնասիրության պահին առկա սննդամթերքի պիտակավորմանն ու մակնշմանը, ապա այդ օրը մատակարարված կաթնամթերքի /թթվասեր և մածուն/, ինչպես նաև ծիրանի 2 պահածոյի վրա չի եղել պատշաճ, ընթեռնելի պիտակավորում և մակնշում: Նշված սննդամթերքի մատակարար կազմակերպությունների հետ դիսպանսերը ունի գնման պայմանագրեր՝ կնքված 01.06.2013թ. թիվ 13/8 և 03.02.2014թ. թիվ 14/4-1, ըստ որոնց՝ մատակարարը պարտավոր է այլ պահանջների հետ մեկտեղ ապահովել նաև ներկայացվող ապրանքների պատշաճ պիտակավորումն ու մակնշումը, ինչն այս պարագայում խախտվել է: Դիսպանսերում

¹³¹⁰ Խնդրի վերաբերյալ Նախարարությունից տեղեկացրել են, որ հարցի լուծման նպատակով առաջարկվել է ներկրողներին Պոզիի գոտի ներմուծել, ինչպես նաև քննարկվել է տեղում կաշվե ամրակապեր արտադրելու հարցը:

կազմակերպվել է քննարկում, միջոցներ են ձեռնարկվել նմանատիպ դեպքերը կանխելու համար, տնտեսվարի հանդեպ կիրառվել է կարգապահական տույժ, վերոնշյալ կազմակերպություններին տեղյակ է պահվել պայմանագրի կետերի խախտման մասին:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Զեկույցի սույն գլխում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև ոլորտում առկա որոշ օրենսդրական խնդիրների, որոնք մեր գնահատմամբ որոշ դեպքերում կարող են հանգեցնել իրավունքի անհամաչափ սահմանափակման, առանձին օրենսդրական բացերը իրավակիրառ պրակտիկայում կարող են առաջացնել սահմանված պահանջների պատշաճ ապահովման անհնարինության:

Այսպես.

* դեռևս սահմանված չէ դատահոգեբուժական փորձաքննությունների իրականացման կարգը («Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ այն սահմանելու լիազորությունը վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, իսկ ներկայումս այն իրականացվում է ընդհանուր կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերով սահմանված ընթացակարգերով):

Խնդրի վերաբերյալ Առողջապահության նախարարությունից հայտնել են, որ հիմք ընդունելով «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ առողջապահության նախարարությունը մշակել և ՀՀ կառավարություն ներկայացրել է «Ստացիոնար և ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների անցկացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Սակայն, նկատի ունենալով դատահոգեբուժական փորձաքննությունների ոլորտում առանձին հարաբերությունների օրենքով կարգավորելու անհրաժեշտությունը, որոշվել է կառավարության որոշման փոխարեն ստացիոնար և ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների անցկացումը կարգավորել օրենքով, ինչի նպատակով ՀՀ առողջապահության նախարարությունը առաջարկել է «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներառել 2015 թվականի կառավարության գործունեության միջոցառումների ցանկում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատվել են ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի նիստում: Օրենքի հիշյալ նախագծի ներկայացման ժամկետ սահմանվել է սեպտեմբերի առաջին տասնօրյակ:

* ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2014թ. հոկտեմբերին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի, 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասին և 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ: Օրենսգրքի 171-րդ

հողվածի 1-ին մասի ուժով դատարանի համար հայեցողություն է սահմանվում անձին, որի վերաբերյալ քննվում է անգործունակության ճանաչման գործը, դատաքննությանը մասնակից դարձնելու հարցում: Մասնակցությունը պայմանավորվում է համապատասխան անձի առողջական վիճակով, ինչպես նաև դատարանի հայեցողությամբ: Այսինքն, նույնիսկ այն դեպքում, եթե անձի առողջական վիճակը թույլ է տալիս վերջինիս մասնակցությունը դատաքննությանը, դատարանը հայեցողություն ունի վերջինիս դատական նիստին կանչելու հարցում: Օրենսգրքի 173-րդ հոդվածի 1-ին մասի ուժով որպես գործունակությունը վերականգնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտ նախատեսված չէ այն անձը, որը անգործունակ է ճանաչվել դատարանի վճռով: Վերջինիս գործունակության վերականգնման հնարավորությունը պայմանավորված է բացառապես վերջինիս խնամակալի, ընտանիքի անդամի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության կամարտահայտությամբ, իսկ անգործունակ ճանաչված անձը ուղղակիորեն զրկվում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքից՝ ապաքինման դեպքում իր գործունակությունը վերականգնելու պահանջով: Գտնելով, որ վիճարկվող դրույթները այնքանով, որքանով հնարավորություն չեն ընձեռնում անգործունակ ճանաչված անձին դիմելու դատարան իր գործունակությունը վերականգնելու պահանջով, ինչպես նաև դատարանին հնարավորություն են ընձեռնում առանց համարժեք հիմնավորման՝ անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործը քննել վերջինիս բացակայությամբ, համահունչ չեն ՀՀ Սահմանադրության դրույթների հետ, Պաշտպանը դիմում է ներկայացվել ՀՀ սահմանադրական դատարան, որի հիման վրա քննության ընդունված գործով Սահմանադրական դատարանի նիստը տեղի կունենա 2015թ. ապրիլի 7-ին:

* հոգեբուժական հաստատություններում սննդի նմուշառման գործընթացի ոչ լիարժեք կարգավորում:

Նախարարությունից տեղեկացվել է, որ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության մասնագետների կողմից մշակվում է «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բուժվող անձանց սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի նախագիծը, որտեղ նախատեսվում է ներառել նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում սննդի նմուշառման ընթացակարգը (այդ թվում՝ հոգեբուժական հաստատություններում)¹³¹¹:

*** ՀՀ առողջապահության նախարարության հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում գինեկոլոգիական, ատամնաբուժական, վիրաբուժական, պարթոլոգո-անատոմիական, ֆունկցիոնալ և լաբորատոր ախտորոշիչ կաբինետներով տեխնիկական համալրվածության և կադրային**

¹³¹¹ Որոշ կարգավորումներ նախատեսված են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 3-ի N 14-Ն հրամանով հաստատված «Սննդային թունավորումների համաճարակաբանական հսկողություն» N 2.3.7-01-2012 սանիտարահամաճարակաբանական կանոններով և նորմերով և ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի օգոստոսի 31-ի N 2014-Ա հրամանով հաստատված «Սննդային թունավորումների համաճարակաբանական հետազոտություն» մեթոդական ուղեցույցով:

հագեցվածության անհամապատասխանություն ՀՀ կառավարության 05.12.2002թ. թիվ 1936-Ն և 29.10.2009թ. թիվ 1275-Ն որոշումներին:

Այսպես օրինակ, «Նորք հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ն լիցենզավորված է իրականացնելու՝

Ա) Հիվանդանոցային՝ հոգեբուժական, կլինիկական դեղորայքային, ֆունկցիոնալ ախտորոշիչ, լաբորատոր ախտորոշիչ (կլինիկական, կենսաքիմիական (բիոքիմիական), հոգեբուժական փորձաքննություն (բժշկասոցիալական փորձաքննություն, ռազմաբժշկական փորձաքննություն),

Բ) Արտահիվանդանոցային՝ հոգեբուժական հոգեթերապևտիկ, նյարդաբանական, ընդհանուր վիրաբուժական, բժշկական ընդհանուր պրակտիկա, ֆունկցիոնալ ախտորոշիչ լաբորատոր-ախտորոշիչ (կլինիկական, կենսաքիմիական (բիոքիմիական)), հոգեբուժական փորձաքննություն (բժշկասոցիալական փորձաքննություն ռազմաբժշկական փորձաքննություն):

Սակայն ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են, որ արտահիվանդանոցային՝ հոգեբուժական, հոգեթերապևտիկ, նյարդաբանական, ընդհանուր վիրաբուժական, բժշկական ընդհանուր պրակտիկա, ֆունկցիոնալ ախտորոշիչ, լաբորատոր ախտորոշիչ՝ կլինիկական և կենսաքիմիական լիցենզավորված ծառայությունները դեռևս չեն գործում, այդ թվում՝ կառուցվածքային փոփոխությունների, վերակազմավորման պատճառով: Միաժամանակ դրանց գործունեության ապահովման համար առկա չափորոշիչները տվյալ փուլում վերանշակվում և հարմարեցվում են առկա վիճակին (ՀՀ առողջապահության նախարարի 18.09.2013թ. N 49-Ն հրաման՝ «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հոգեբուժական օգնության կազմակերպման չափորոշիչ»), իսկ ստացիոնարում նախատեսված չէ նեղ մասնագիտական ծառայություններով (տնօրենի հավաստմամբ՝ անհրաժեշտության դեպքում բժշկական նեղ մասնագիտական խորհրդատվություն ստանալու կամ սոմատիկ ստացիոնար բուժում ստանալու նպատակով օգտվում են Նորքի պոլիկլինիկական ծառայությունից կամ առաջին համալսարանական հիվանդանոցից, ավելին՝ նեղ մասնագետներից նյարդաբանի հաստիքը կրճատվել է, թեև տվյալ մասնագետի անհրաժեշտությունը կա):

Նույնը վերաբերում է «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ին, որտեղ լիցենզավորված են իրականացնել.

Ա) Հիվանդանոցային՝ հոգեբուժական, հոգեթերապևտիկ, լաբորատոր ախտորոշիչ կլինիկական, կենսաքիմիական (բիոքիմիական), շճաբանական (սերոլոգիական) իմունաբանական) հոգեբուժական փորձաքննություն, կլինիկական դեղորայքային,

Բ) Արտահիվանդանոցային՝ հոգեբուժական, հոգեթերապևտիկ, լաբորատոր ախտորոշիչ կլինիկական, կենսաքիմիական (բիոքիմիական), շճաբանական (սերոլոգիական) իմունաբանական) հոգեբուժական փորձաքննություն, կլինիկական դեղորայքային, բժշկական ընդհանուր պրակտիկա, նյարդաբանական, սրտաբանական, ֆունկցիոնալ ախտորոշիչ, թերապևտիկ ստոմատոլոգիական, վիրաբուժական ստոմատոլոգիական, օրթոպեդիկ ստոմատոլոգիական, ճառագայթային ախտորոշիչ՝ (ռենտգենաբանական, ուլտրաձայնային), վերականգնողական (ռեֆլեքսաթերապևտիկ, շարժաթերապևտիկ, բուժական մերսում):

Սակայն ԲԿԱՄ փորձագետներն իրականացրած այցի ընթացքում արձանագրել են, որ հոգեբուժական կենտրոնը չի իրականացնում հիվանդանոցային՝ լաբորատոր ախտորոշումներից՝ շճաբանական (սերոլոգիական), իմունաբանական և հոգեբուժական փորձաքննություն, իսկ արտահիվանդանոցային ծառայություններից չի իրականացվում՝ լաբորատոր ախտորոշումներից շճաբանական (սերոլոգիական), իմունաբանական, թերապևտիկ ստոմատոլոգիական, վիրաբուժական ստոմատոլոգիականի պարագայում իրականացվում է միայն հեռացում, օրթոպեդիկ ստոմատոլոգիական, ճառագայթային ախտորոշիչ՝ (ռենտգենաբանական, ուլտրաձայնային), վերականգնողական (ռեֆլեքսաթերապևտիկ, շարժաթերապևտիկ, բուժական մերսում):

Ուսումնասիրություններից պարզ է դարձել նաև, որ առկա ծառայությունները կազմակերպելու համար նշված կաբինետների տեխնիկական համալրվածությունը և կադրային հագեցվածությունը լիարժեք չեն համապատասխանում ՀՀ կառավարության 05.12.2002թ. թիվ 1936-Ն և 29.10.2009թ. թիվ 1275-Ն որոշումներով սահմանված պահանջներին և պայմաններին:

Նույն իրավիճակն է նաև «Նուբարաշեն հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ-ում և «Սևանի հանրապետական հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ում:

Նշվածի վերաբերյալ Նախարարությունից տեղեկացրել են, որ 2015 թվականի պետական բյուջեի առողջապահության բաժնում սարքավորումների ձեռքբերման միջոցառումներ նախատեսված չեն: Բարձրացված խնդիրը կվերանայվի Միջնաժամկետ ծախսային ծրագրի կամ 2016 թվականի բյուջեի հայտի ձևավորման ժամանակ: Միաժամանակ նշվել է, որ պետական առողջապահական կազմակերպությունների կադրային համալրումը իրականացվում է մրցութային կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 10.06.2011 թվականի թիվ 22 արձանագրային որոշման համաձայն: Կաբինետների տեխնիկական հագեցվածությունն ապահովելուց հետո ՀՀ ԱՆ ենթակայության կազմակերպությունները կհայտարարեն մրցույթներ առկա կադրային բացը համալրելու նպատակով:

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՈՒՆ ԻՆՏԵՐՆԱՏՆԵՐ

Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ տրամադրվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող թվով 4 տուն-ինտերնատներում՝ 3-ը ընդհանուր տիպի (Երևանի Նորքի, թիվ 1 և Գյումրիի տարեցների և հաշմանդամների) և մեկը՝ հատուկ (նյարդահոգեբանական տուն-ինտերնատ)¹³¹²:

Տուն-ինտերնատը բժշկասոցիալական կազմակերպություն է և ստեղծված է խնամքի, սոցիալական սպասարկման և բժշկական օգնության կարիք ունեցող միայնակ տարեցների և հաշմանդամների մշտական բնակության համար: Տուն-ինտերնատ ընդունվում են միայնակ, օրենսդրությամբ նախատեսված խնամողներ չունեցող կենսաթոշակատուները: Տուն-ինտերնատում բնակվողները գտնվում են պետության լրիվ հոգածության տակ, և կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի սահմանած կարգով նրանց վճարվում է նշանակված կենսաթոշակի ապահովագրական մասը¹³¹³:

ԲԿԱՄ-ն այցելել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող բոլոր 4 տուն-ինտերնատներ:

Արձանագրված խնդիրներ

- Հիմանկանում ոչ բարենպաստ պահման պայմաններ, այդ թվում՝ արձանագրված պայմանների անհամապատասխանություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին,
- Անհրաժեշտ ջեռուցման չապահովման դեպքեր,
- Տուն-ինտերնատների աշխատակիցների աշխատանքի համար ոչ բարենպաստ պայմաններ, հատկապես անկողնային տարեցների խնամքն իրականացնող աշխատակիցների համար,
- Առանձին դեպքում վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով ոչ պատշաճ ընթացակարգի ապահովում,
- Առանձին դեպքերում ոչ պատշաճ սննդի տրամադրման, բժշկական սպասարկման ոչ պատշաճ ապահովման և տարեցների նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման դեպքեր:

Դրական են գնահատվում տուն-ինտերնատներում տարեցների պահման պայմանների բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, այդ թվում՝ ակնառու են սննդի, բժշկական սպասարկման որակի բարձրացման ուղղությամբ

¹³¹² Հանրապետությունում գործում են նաև 4 ոչ պետական տուն-ինտերնատներ՝ «Վանաձորի տարեցների տուն», Աբովյանի «Մաթենիկ», Սյունիքի «Արծվաբույն» և Վանաձորի «Հուլսի տուն» տուն ինտերնատներ

¹³¹³ http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=125&code_id=455

տարվող աշխատանքները, այնուամենայնիվ, արձանագրվել են նաև մի շարք խնդիրներ, որոնք որոշ դեպքերում ունեն սուր դրսևորումներ: Այսպես.

Թեև Թիվ 1 տուն-ինտերնատի¹³¹⁴ շահառուների սենյակներն ու միջանցքները կոկիկ և մաքուր էին, իսկ 1-ին մասնաշենքը հիմնականում վերանորոգված էր, խոնավության պատճառով մասնաշենքում առկա էր խոնավության հոտ և վերանորոգված մասնաշենքի շատ հատվածներում պատերի վրա առաջացել էին ճեղքեր, պատերի ծեփամածիկն ամբողջությամբ պոկվել էր, իսկ նոր տեղադրված դռների շուրջ առաջացել էին բազմաթիվ ճեղքվածքներ: 2-րդ մասնաշենքը գտնվում է անմխիթար վիճակում և ունի կապիտալ վերանորոգման կարիք: Առկա է 3-րդ մասնաշենքի վերանորոգման և անկողնային հիվանդների տեղափոխման անհրաժեշտություն: Բավականին ծանր են անկողնային հիվանդներին խնամողների աշխատանքային պայմանները, քանի որ մեկ դայակը սպասարկում է մոտ 30 անկողնային տարեցի՝ ապահովելով նրանց լոգանքը, տարածքի մաքրությունը, տակդիրների փոխումը:

Տարեցները նշել են իրենց նկատմամբ վարչակազմի ուշադիր, անգամ հոգատար վերաբերմունքը, որևէ բողոք չեն ներկայացրել նաև սննդի որակի վերաբերյալ (տրամադրվող սննդի բարելավումն արձանագրվել է նաև ԲԿԱՄ փորձագետների կողմից մեկ ամսվա կտրվածքով սննդակարգի ուսումնասիրությամբ), սակայն հաստատության շահառուները բարձրաձայնել են այն խնդիրը, որ առկա եղանակային պայմաններում հաճախ մրսում են և իրենց չի թույլատրվում միացնել սենյակներում գտնվող անհատական էլեկտրական տաքացուցիչները (վարչակազմը նման արգելքը պատճառաբանեց ֆինանսական սղության և էլեկտրաէներգիայի հնարավոր գերաճախսով: Այցն իրականացվել է 15.10.2014թ.): Սենյակներից մեկում անմիջապես տարեցի մահճակալի մոտ գտնվող պատուհանի ապակին կոտրված էր:

Խնդրահարույց էր նաև հագուստը, անկողնային պարագաները չորացնելու համար համապատասխան հարմարանքների բացակայությունը, մինչդեռ, ՀՀ կառավարության 31.05.2007թ. թիվ 730-Ն որոշմամբ հաստատված «Օերերի և հաշմանդամների տուն-ինտերնատի գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի նվազագույն չափորոշիչներ»-ի (N 1 հավելված) 4-րդ կետի համաձայն՝ տուն-ինտերնատը պետք է ունենա լվացքը չորացնելու համար առանձին տարածք (լվացքատան աշխատակիցները շորերը չորացնում են պատշգամբներում կամ տալիս տարեցներին, ովքեր իրենց իրերը չորացնում են իրենց սենյակներում (պատշգամբներում, եթե ստեղծված է այդպիսի հարմարություն)):

Նորքի տուն-ինտերնատում¹³¹⁵, չնայած իրականացված վերանորոգման աշխատանքներին, դեռևս չլուծված է մնում շենքի որոշ հատվածի վերանորոգման խնդիրը: Հաստատության շահառուները որևէ բողոք չեն ներկայացրել վարչակազմի վերաբերմունքի վերաբերյալ, ինչպես նաև գոհունակություն են հայտնել տրամադրվող

¹³¹⁴ Տուն-ինտերնատը հիմնադրվել է 1952թ., իսկ նրա ներկայիս մասնաշենքը (բնակելի, վարչական և ճաշարան) շահագործվել է 1981 թվականին:

¹³¹⁵ Երևանի Նորքի տուն-ինտերնատը ստեղծվել է 1991 թվականին:

սննդի և բժշկական սպասարկման որակի վերաբերյալ: Վարչակազմի նշել է բժշկական սպասարկման կազմակերպման դժվարությունների, մասնավորապես, դեղորայքի համար տրամադրվող ֆինանսական միջոցների սղության մասին (տարվա կտրվածքով մոտ 4.5 մլն ՀՀ դրամ, սակայն միայն պարկինսոնի հիվանդությամբ տառապող տարեցին՝ դեղորայքի համար անհրաժեշտ է մոտ 600.000 ՀՀ դրամ): Հաստատությունում կա 3 հոգեբանի հաստիք, որոնք, ըստ վարչակազմի, պարբերական աշխատանք են իրականացնում տարեցների հետ, այնուամենայնիվ, հոգեբանների կողմից լրացված սոցիալ-հոգեբանական քարտերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մի շարք քարտեր լրացված են եղել 30.05.2014թ., 15.07.2014թ., 16.07.2014թ., 17.07.2014թ. ամսաթվերով: Այս հանգամանքը Նախարարությունը պատճառաբանել է նրանով, որ սվյալ քարտերը վերաբերել են այն խնամվողներին, որոնք հոգեբանական խնդիրներ չեն ունեցել և իրենք անձամբ չեն դիմել հոգեբանին:

Ստահոգիչ են Գյումրու տուն-ինտերնատում¹³¹⁶ արձանագրված խնդիրները, այդ թվում՝ շահառուների կողմից մատնանշվող վատ վերաբերմունքի դեպքերը: Այսպես.

Պահման պայմաններ

Այցի պահին վերելակն անսարք էր, ինչը բավականին խնդրահարույց է հենաշարժողական խնդիրներ ունեցող և սայլակներից օգտվող տարեցների համար: Տնօրենը հավաստեց, որ բոլոր սայլակավոր հաշմանդամ բնակիչներին տեղափոխել են առաջին հարկ՝ նրանց տեղաշարժն ավելի մատչելի դարձնելու նպատակով, սակայն ուսումնասիրության ընթացքում ԲԿԱՄ փորձագետները երկրորդ հարկում ևս հանդիպել են սայլակից օգտվող բնակիչների: Մինչդեռ, ՀՀ կառավարության 31.05.2007թ. թիվ 730-Ն որոշմամբ հաստատված «Ծերերի և հաշմանդամների տուն-ինտերնատի գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի նվազագույն չափորոշիչներ»-ի (N 1 հավելված) 9-րդ կետի համաձայն՝ շենքի ներքին կառուցվածքը պետք է հնարավորություն ընձեռի սայլակներով հաշմանդամների ազատ տեղաշարժման համար: Որոշ սենյակներում պատուհանները կոտրված էին (այցն իրականացվել է 21.11.2014թ.), ինչի պատճառով սենյակներում անհրաժեշտ տաքությունը չէր ապահովվում: Խոնավ և անբարեկարգ վիճակում էին գտնվում, ինչպես նաև չէին ջեռուցվում որոշ ձևափոխված տարածքներ, որոնք օգտագործվում էին որպես ննջասենյակներ (միջանցքը ձևափոխել էին ննջասենյակների):

Բուժապասարկում

Թեև դեղամիջոցների ձեռքբերման համար նախատեսվում է մոտ 3 մլն ՀՀ դրամ, բուժմասում առկա էր 2013թ. «Վճարովի դեղորայքի գիրք»¹³¹⁷: Ընդ որում՝ բնակիչներից

¹³¹⁶ Գյումրու տուն-ինտերնատը հիմնադրվել է 1949 թվականին: Գործող տուն-ինտերնատի շենքը կառուցվել է 1974թ.: Այն նախատեսված է հիմնականում ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար:

¹³¹⁷ Նախարարությունից տեղեկացվել է, որ ԲԿԱՄ-ի կողմից արձանագրած խախտումը՝ կապված բուժմասում առկա դեղորայքի հաշվառման 2013 թվականի մատյանների անվանումների հետ, վերացվել է

շատերը նշել են, որ իրենք իրենց միջոցներով են ձեռք բերում դեղորայքը, քանի որ բուժքույրը 1 հաբից ավել չի տրամադրում (օրինակ «ասկոֆեն» տեսակի դեղորայք):

Բուժկետում կար ժամկետանց ամփակի լուծույթ, իսկ բժշկի սենյակում աթոռին դրված էր արյունոտ օգտագործված ներարկիչ:

Հաստատությունում գտնվող բնակիչների շարքում կային ով հիվանդ շահառուներ:

Մնունդ

Ի տարբերություն այլ հաստատությունների՝ Գյումրու տուն-ինտերնատում բնակիչների հետ առանձնագրույցներից պարզ դարձավ, որ նրանց գրեթե ամեն օր տրամադրվում է միատեսակ և կրկնվող սնունդ (հնարավոր չէր ուսումնասիրել ճաշացանկերը, քանի որ դրանք լրացվում էին ապրանքագրի ձևով, այնուամենայնիվ, ըստ դուրս գրված սննդի կարելի էր եզրահանգել, որ այն միատեսակ և կրկնվող է): Մեծամասնությունը շեշտում էր, որ խնդիրը լուծում են իրենց միջոցներով (կենսաթոշակով) կամ պարտքով՝ հարակից խանութներից սնունդ ձեռք բերելով և իրենց սենյակներում կերակուր պատրաստելով:

Լվացքատուն

Չնայած հաստատությունն ապահովված է լվացքատնով, այնուամենայնիվ շատ տարեցներ նշում էին, որ ինքնուրույն են լվանում իրենց հագուստը: Բնակիչներից մեկը նշեց, որ սպիտակեղենը լվանալու համար սանիտարին վճարում են 1000 դրամ: Որոշ բնակիչներ նշում էին, որ սպիտակեղենը իրենցն է և հաստատությունը չի տրամադրում: Ըստ տարեցների՝ չի տրամադրվում նաև հագուստ, իսկ տրամադրվածը՝ հին և մաշված է: Մինչդեռ նշված պահանջը նախատեսված է ՀՀ կառավարության 31.05.2007թ. թիվ 730-Ն որոշմամբ հաստատված «Ծերերի և հաշմանդամների ընդհանուր և հատուկ տիպի տուն-ինտերնատներում խնամվողներին հագուստով և անկողնային պարագաներով ապահովելու նվազագույն չափորոշիչներ»-ով (N 4 հավելված):

Առանձնագրույցներ շահառուների հետ

Բնակիչները հայտնել են նաև, որ բողոքներ ներկայացնելու դեպքում տնօրենը միջոցներ չի ձեռնարկում, ավելին, շեշտում է, որ որևէ մտահոգություն չունի, քանի որ «իր մեջքը պինդ է»: Բնակիչների պնդմամբ՝ բողոքներ, դժգոհություններ հայտնելու դեպքում իրենց ասվում է. «դուրդ չի գալիս, դուռը բաց է, առ դակումենտներդ ու գնա՝»: Տարեցները ԲԿԱՍ փորձագետներին հայտնել են նաև, որ նոր տնօրենի նշանակումից հետո իրենց արգելվել է դուրս գալ տարածքից, ինչը մշտական վիճաբանությունների առիթ էր դառնում, քանի որ տրամադրվող սննդի վատ որակի պատճառով տարեցները

(այն պայմանավորված է եղել պետական բյուջեի միջոցներով ձեռքբերված և մարդասիրական օգնությամբ ստացված դեղորայքի հաշվառման մատյանները տարբերակելու անհրաժեշտությամբ):

անհրաժեշտություն են ունենում գնումներ կատարելու: Մի շարք բնակիչներ ԲԿԱՄ փորձագետներին հայտնել են, որ սանիտարները որևէ աշխատանք չեն կատարում մինչև իրենց համապատասխան գումար վճարելը, նշել են նաև, որ իրենց նկատմամբ կոպիտ և անտարբեր վերաբերմունք են դրսևորում նաև բուժքույրերը (դեղորայքը բաժանելիս զցում են սեղանին՝ չլսելով գանգատները, հաճախ չեն տրամադրում անհրաժեշտ քանակությամբ դեղորայք): Այցի ընթացքում ԲԿԱՄ փորձագետներն ականատես եղան, թե ինչպես է սանիտարներից մեկը սաստում բնակչին՝ ասելով «դե խելոք մնա, որ հաց տանք ուտես»:

Վարդենիսի տուն-ինտերնատի¹³¹⁸ շահառուների պահման պայմանները հիմնականում բավարար են: Դրական է գնահատվում այն, որ, ի տարբերություն այլ հաստատությունների, որտեղ ջեռուցումը միացվում էր նոյոմբերի 15-ից, Վարդենիսի տուն-ինտերնատում այն միացվել էր ավելի վաղ՝ ելնելով եղանակային պայմաններից: Տուն-ինտերնատում չէր վարվում զսպման միջոցների կիրառման մատյան (ՀՀ ԱՆ 03.05.2010թ. թիվ 691-Ա հրամանով հաստատված «Հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում հոգեկան խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման կիրառման ուղեցույց»-ի համաձայն՝ հաստատությունում վարվում է «Ֆիզիկական զսպման կիրառման, ինչպես նաև դադարեցման մասին որոշման հիմնավորման արձանագրման» մատյան)¹³¹⁹, չկա մեկուսարան և անհրաժեշտության դեպքում զսպման միջոցները, հիմնականում կապման միջոցները, կիրառվում են մյուս հիվանդների ներկայությամբ: Մինչդեռ, Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն նման վերաբերմունքին անդրադարձել է դեռևս 2010թ. Հայաստանի Կառավարությանն ուղղված զեկույցում, որտեղ մասնավորապես նշվել է. «ԽԿԿ-ն առաջարկում է, որպեսզի Հայաստանի իշխանություններն ապահովեն, որ հիվանդի նկատմամբ զսպման մեխանիկական միջոցները չկիրառվեն մյուս հիվանդների ներկայությամբ, եթե տվյալ հիվանդն ուղղակի այլ բան չի պահանջում, կամ եթե հայտնի է, որ հիվանդը գերադասում է շրջապատված լինել մարդկանցով: Չսպման միջոցները պետք է հիվանդի նկատմամբ կիրառվեն հատուկ այդ նպատակի համար նախատեսված սենյակում, և զսպման միջոցները կիրառելու ժամանակ մյուս հիվանդները չպետք է օգնեն անձնակազմին»¹³²⁰:

6-րդ բաժանմունքի կանանց սենյակներից մեկում բնակեցված էր նաև արական սեռի ներկայացուցիչ (ծանր անկողնային հիվանդ): Բնակիչների հետ առանձնազրույցներից պարզ դարձավ, որ իրենց համար մատչելի չէ հեռախոսազանգից օգտվելու հնարավորությունը, քանի որ հեռախոսը գտնվում է ավագ բուժքրոջ մոտ և

¹³¹⁸ Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատն իր տեսակի մեջ միակն է հանրապետությունում, որտեղ խնամվում են քրոնիկ հոգեկան հիվանդներ, որոնց բուժումն արդեն արդյունք չի տալիս և նրանք ունեն միայն խնամքի և սպասարկման կարիք:

¹³¹⁹ Նախարարությունից հայտնվել է, որ տուն-ինտերնատում ԲԿԱՄ-ի այցելության պահին չի եղել ֆիզիկական զսպման միջոցների վարման մատյան, սակայն մեկ օր անց տուն-ինտերնատի բոլոր բաժանմունքներում այդ բաց թողումը շտկվել է և պատասխանատու աշխատակիցները զգուշացվել են:

¹³²⁰ 2010 թվականի դեկտեմբերի 1, CPT (2010) 82

զանգելու հնարավորությունը, ըստ հարցվածների, «կախված է նրանից» (միջանցքում դրված հեռախոս): Հարկ ենք համարում հայտնել, որ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի հավելվածով սահմանված է, որ. «Հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ տաքսոֆոն հոգեկան խանգարումներով տառապող անձանց համար հասանելի վայրում: Հեռախոսային խոսակցության վճարումները, գործող սակագներին համապատասխան, կատարվում են տվյալ անձի հաշվին: Հոգեբուժական հաստատության ադմինիստրացիան հոգեկան հիվանդների համար հասանելի վայրում պետք է փակցնի հեռախոսային խոսակցությունների սակագները: Հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի կատարելու առնվազն մեկ անվճար հեռախոսագանգ հանրապետության տարածքում»:

Տեղադրված չէին բողոքների և առաջարկությունների արկղեր, ինչպես նաև փոստային ծառայությունների սակագների վերաբերյալ տեղեկատվություն: Մինչդեռ, «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի հավելվածով սահմանված է, որ հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ փոստարկղ: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան խանգարումներով տառապող անձին պետք է հասանելի լինի փոստարկղից օգտվելը: Հոգեբուժական կազմակերպության վարչակազմը հոգեկան հիվանդների համար հասանելի վայրում պետք է փակցնի փոստային ծառայությունների սակագները: Փոստային ծառայությունների սակագների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը Նախարարության կողմից պատճառաբանվել է նրանով, որ տուն-ինտերնատն է վճարում խնամվողների փոստային ծառայությունների համար այլ ծախսերի համար նախատեսված միջոցներից և նման տեղեկատվության տրամադրման կարիք չկա: Հոգեբուժական կազմակերպությունում գտնվող անձն իրավունք ունի իր միջոցների հաշվին նամակագրական (փոստային) կապ հաստատելու ցանկացած անձի հետ: Հոգեբուժական կազմակերպությունն ապահովում է նամակագրական կապի միջոցով հաղորդակցվելու հասանելիությունը հոգեկան խանգարումներով տառապող անձի համար: Իսկ ԽԿԿ չափանիշների համաձայն՝ արտաքին աշխարհի հետ շփումներ պահպանելը կարևոր է ոչ միայն չարաշահումները կանխելու, այլև՝ բուժական տեսակետից: Հիվանդները պետք է թղթակցություն ուղարկելու և ստանալու, հեռախոսից օգտվելու հնարավորություն ունենան: Ավելին, ԽԿԿ-ն հատուկ կարևորում է հիվանդների կողմից ներկայացվող բողոքների գաղտնիության ապահովումը և համապատասխան ընթացակարգի սահմանումը: Մասնավորապես, ԽԿԿ չափանիշների համաձայն՝ հոգեբուժական հաստատություններում դաժան վերաբերմունքի դեմ հիմնական երաշխիքը բողոքների ներկայացման արդյունավետ ընթացակարգն է: Պետք է գոյություն ունենա հատուկ ընթացակարգ, որը հնարավորություն կտա հիվանդին պաշտոնական բողոք ներկայացնել հստակ լիազորություններ ունեցող մարմնի, ինչպես նաև գաղտնի տեղեկություններ ուղարկել հաստատությունից դուրս գտնվող համապատասխան մարմնին:

Առանձնագրույցների ընթացքում բնակիչները հայտնել են նաև, որ զբոսանքը կազմակերպվում է շաբաթվա ընթացքում մեկ կամ երկու անգամ: Մինչդեռ, «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 15-րդ կետի

համաձայն՝ հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձինք ունեն հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի իրավունք, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել բժշկական կամ այլ գործողություններում, իսկ ԽԿԿ չափանիշների համաձայն՝ հիվանդները պետք է հնարավորություն ունենան ամեն օր զբոսնել մաքուր օդում:

Առավել մտահոգիչ էր այցի ընթացքում արձանագրված այն խնդիրը, որ վերջին մեկ տարվա ընթացքում հաստատությունում հայտնաբերվել է ի վարակի երեք դեպք (վերջին դեպքն արձանագրվել է 11.06.2014թ., այցն իրականացվել է 22.10.2014թ.), սակայն այցելության օրվա դրությամբ հաստատությունում չէին իրականացվել ՀՀ առողջապահության նախարարի 20.10.2008թ. թիվ 21-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ի համաճարակաբանական հսկողության N 3.1.1-010-08 սանիտարահամաճարակային կանոններով և նորմեր»-ով (այսուհետ՝ N 3.1.1-010-08 կանոններ) նախատեսված միջոցառումները, թեև տուբերկուլոզի վարակի տարածման տեսակետից ռիսկի խմբեր են համարվում ծերանոցների, մանկատների և սոցիալական օգնության կազմակերպությունների բնակիչները, որոնք չունեն որոշակի բնակության վայր և զբաղմունք (N 3.1.1-010-08 կանոնների 11 հավելվածի 14-րդ կետ): Այսպես.

- հիվանդի հետ շփված անձանց շրջանում տուբերկուլոզային վարակի հայտնաբերման նպատակով իրականացվում է 0-18 տարեկաններին տուբերկուլինային փորձ, մեծահասակներին՝ ռենտգենաբանական (ֆյուորոգրաֆիկ) հետազոտություն, խորխի առկայության դեպքում՝ խորխի եռակի մանրադիտակային հետազոտություն (N 3.1.1-010-08 կանոնների 96 կետ),

- շփված անձանց հետազոտությունները կազմակերպվում են հիվանդի ախտորոշումը հաստատելուց հետո 7 օրվա ընթացքում (N 3.1.1-010-08 կանոնների 97 կետ),

- N 3.1.1-010-08 կանոնների 98 և 99 կետերի համաձայն՝ տուբերկուլոզի վարակի տարածումը կանխելու համար դեռևս կարիք կա իրականացնելու ռենտգենաբանական (ֆյուորոգրաֆիկ) հետազոտություն, նկատի ունենալով, որ 1-ին դեպքը հաստատությունում արձանագրվել է 2013թ. դեկտեմբերին և 05.12.2013թ. հիվանդը տեղափոխվել է ստացիոնար, 2-րդ դեպքն արձանագրվել է մոտ մեկ ամիս անց՝ 14.01.2014թ., իսկ 3-րդը՝ 11.06.2014թ.:

Միաժամանակ համապատասխան ինֆեկցիոն հիվանդանոցի (բաժանմունքի) կողմից չի պահպանվել ՀՀ առողջապահության նախարարի 17.12.2010թ. N 35-Ն հրամանով հաստատված «Վարակիչ հիվանդությունների «իրական ժամանակում» էլեկտրոնային համաճարակաբանական հսկողություն» N ՄԿ 3.1.1-018-10 սանիտարահամաճարակային նորմերի և կանոնների պահանջը, որի համաձայն՝ հոսպիտալացված հիվանդի մասին համապատասխան շտապ հաղորդմամբ պետք է հայտնվի տեղակայման վայրի Տեսչության տարածքային կենտրոն՝ 24 ժամվա ընթացքում (Երևան քաղաքում՝ ՀՀ ԱՆ «ՀՎԿԿ» ՓԲԸ):

Հարկ է արձանագրել, որ 18.02.2015 թվականի դրությամբ 10 անձի մոտ ախտորոշվել է տուբերկուլոզ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացրել են,

որ Երևանի թիվ 1 տուն-ինտերնատի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում ծախսային հոդվածով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված է 1.200.0 հազ. դրամ: Տուն-ինտերնատի ղեկավարությունը, ելնելով անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունից, շենքերի պահպանման ծախսերի շրջանակում նպատակահարմար է գտել 850.000 դրամի չափով ձեռք բերել անհրաժեշտ հակահրդեհային սարքավորումներ: Նախարարության կողմից ընդունվել է տուն-ինտերնատի՝ 2-րդ և 3-րդ մասնաշենքերի անմխիթար վիճակում գտնվելու հանգամանքը և հայտնվել է, որ վերանորոգման համար համապատասխան միջոցներ նախատեսված չեն: Անկողնային հիվանդներին խնամողների աշխատանքային պայմանների վերաբերյալ նշվել է, որ տուն-ինտերնատը, հաշվի առնելով սանիտարների ոչ բավարար քանակությունը, աշխատում է եղած հաստիքային միավորների շրջանակում հնարավորինս արդյունավետ կազմակերպել նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը: Միաժամանակ, նախարարությունը աշխատանքներ է տանում խնամքի հաստատությունների հաստիքային միավորների չափորոշիչները վերանայելու ուղղությամբ: Անհատական էլեկտրական տաքացուցիչների շահագործելու արգելքը պայմանավորված է ոչ միայն կազմակերպության ֆինանսական միջոցների սղության և էլեկտրաէներգիայի գերաճախսով (Էներգետիկ ծառայություններ ծախսային հոդվածով էլեկտրաէներգիայի գծով տարվա համար նախատեսված է 22.329.8 հազ.դրամ, իսկ ծախսը դեկտեմբերի դրությամբ կազմում է 16.102.1 հազ. դրամ), այլ նաև տարեցների անվտանգության ապահովման հետ, քանի որ ինքնաշեն էլեկտրական տաքացուցիչները կարող են դառնալ հրդեհի կամ էլեկտրահարման պատճառ: Հայտնվել է նաև, որ ընդհանուր ջեռուցման պայմաններում՝ սենյակների ջերմաստիճանը պահպանվում է նորմայի սահմաններում: Տեղեկացվել է, որ տուն-ինտերնատի 1-ին մասնաշենքի վերանորոգված հատվածի պատերի վրա առաջացած ձեղքերն ու պոկված ծեփամածիկները արդեն վերանորոգվել են: Սենյակներից մեկում կոտրված ապակիով պատուհանը նույն օրը (որն ի դեպ, այդ օրն էր կոտրվել) փոխվել է, և մասամբ լուծվել է նաև անկողնային պարագաները չորացնելու համար համապատասխան առանձին տարածքի և հարմարանքների հարցը:

Նորքի տուն-ինտերնատում աշխատում է երկու հոգեբան, որոնք, ըստ անհրաժեշտության, հոգեբանական օգնության ծառայություններ են մատուցում տարեցներին: Հոգեբանների կողմից սոցիալ-հոգեբանական անհատական քարտերը, որոնք լրացված են եղել 1-2 ամիս պարբերականությամբ, վերաբերում են այն խնամվողներին, որոնք հոգեբանական խնդիրներ չեն ունեցել և իրենք անձամբ չեն դիմել հոգեբանին: Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում ԲԿԱՄ-ի այցելության պահին չի եղել ֆիզիկական զսպման միջոցների վարման մատյան, սակայն մեկ օր անց տուն-ինտերնատի բոլոր բաժանմունքներում այդ բացթողումը շտկվել է և պատասխանատու աշխատակիցները զգուշացվել են: 6-րդ բաժանմունքում բնակվում են մտավոր խնդիրներ ունեցող մանկուց հաշմանդամներ, որոնց տեղափոխումը այլ բաժանմունք (հոգեկան ծանր խնդիրներով անձանց) հնարավոր և նպատակահարմար չէ, իսկ կանանց սենյակում անկողնային վիճակում գտնվող արական սեռի խնամվողի առկայությունը պայմանավորված է եղել նշված բաժանմունքի տղամարդկանց

սենյակներում այդ պահին ազատ տեղ չլինելու հետ, ինչը կրել է ժամանակավոր բնույթ, և մի քանի օր հետո այդ խնդիրը կարգավորվել է: Ինչ վերաբերում է հեռախոսից ազատ օգտվելուն, ապա տուն-ինտերնատի խնամվողները ցանկացած ժամանակ օգտվում են քարտուղարությունում և այլ աշխատասենյակներում տեղադրված հեռախոսներից: Սակայն հաշվի առնելով, որ խնամվողներն ունեն հոգեկան առողջության խնդիրներ, հնարավորինս վերահսկվում է նրանց հեռախոսային խոսակցությունների տևողությունը, քանի որ հեռախոսային խոսակցությունների վճարման համար նախատեսված միջոցները սահմանափակ են: Միաժամանակ հայտնվել է, որ 2015 թվականին նախատեսվում է տուն-ինտերնատի յուրաքանչյուր բաժանմունքում տեղադրել մեկական հեռախոս: Նշվել է, որ խնամվողները հազվադեպ օգտվում են նաև փոստային-նամակագրական ծառայություններից: Ինչ վերաբերում է փոստային ծառայությունների սակագների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելուն, ապա դրա ահրաժեշտությունը չկա, քանի որ տուն-ինտերնատն է վճարում խնամվողների փոստային ծառայությունների համար այլ ծախսերի համար նախատեսված միջոցներից: Մատնանշվել է, որ բողոքների և առաջարկությունների համար նախատեսված արկղեր արդեն իսկ տեղադրված են բոլոր բաժանմունքներում: Հայտնվել է, որ տուն-ինտերնատում խնամվողների զբոսանքը կազմակերպվում է ամենօրյա ներքին ռեժիմով՝ խնամող սանիտարների ուղեկցությամբ:

Տուրերկուլուզի խնդրի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացրել են, որ Վարդենիս քաղաքում տուն-ինտերնատի բոլոր բնակիչներին ֆյուրոգրաֆիկ հետազոտություն անցկացնելու հնարավորություն չկա, ուստի տուրերկուլուզի կանխարգելման և տուն-ինտերնատում տուրերկուլուզով հնարավոր հիվանդների հայտնաբերման նպատակով, 10.10.2013 թվականին ուղարկվել է գրություն ՀՀ առողջապահության նախարարության «Տուրերկուլուզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ տուն ինտերնատի բոլոր բնակիչների և բուժանձնակազմի ֆյուրոգրաֆիկ հետազոտության անցկացմանն աջակցելու խնդրանքով: Տուն-ինտերնատի տնօրինությունը Վարդենիս քաղաքի զինվորական հոսպիտալի հրամանատարության հետ ձեռք է բերել պայմանավորվածություն՝ ս. թ. նոյեմբերի 1-ից տուն-ինտերնատի բոլոր բնակիչներին և աշխատակազմին ֆյուրոգրաֆիկ հետազոտություն անցկացնելու համար: Միաժամանակ տեղեկացվել է, որ տուն-ինտերնատն ապահովված է անհրաժեշտ ախտահանիչ նյութերով և աշխատակազմն իր գործունեության ընթացքում պահպանում է սանիտարահիգիենիկ անհրաժեշտ կանոնները: Տեղեկացվել է նաև, որ յուրաքանչյուր տարի տուն-ինտերնատի ամբողջ անձնակազմը պարտադիր կարգով անցնում է պրոֆիլակտիկ բժշկական զննություն ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մասնաճյուղում և տարածքային պոլիկլինիկայում:

ՀՀ առողջապահության նախարարությունից հայտնել են, որ հարուցվել է վարչական վարույթ, որի ընթացքում պարզվել է, որ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում արձանագրվել են տուրերկուլուզով հիվանդացության երեք դեպք, որոնց վերաբերյալ «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության

Գեղարքունիքի մարզային կենտրոն շտապ հաղորդագրություններ չեն տրվել, կոնտակտավորները բժշկական զննության չեն ենթարկվել: Տուն-ինտերնատում բնակվում են 450 անձ, որոնք վերջին չորս տարիների ընթացքում ֆյուրոգրաֆիկ հետազոտությունների չեն ենթարկվել, ինտերնատում չկա աշխատող ֆյուրոգրաֆիկ ապարատ: Արձանագրվել է, որ վերը թվարկվածները համարվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 21-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողություն» N 3.1.1-010-08 սանիտարահամաճարակային կանոններով և նորմերով սահմանված պահանջների խախտումներ, որի համար 25.11.2014թ.-ին Տուն-ինտերնատի գլխավոր բժիշկը ենթարկվել է վարչական տույժի: Տուն-ինտերնատի տնօրենին տրվել է կարգադրագիր՝ արձանագրված խախտումները և թերությունները վերացնելու վերաբերյալ: Տեղեկացվել է նաև, որ 2014թ. նոյեմբերի կեսերին Տուն-ինտերնատի 450 բնակիչներից 393-ը ենթարկվել են ռենտգենաբանական (ֆյուրոգրաֆիկ) հետազոտությունների, որոնց արդյունքում հայտնաբերվել է տուբերկուլոզի կասկածով 14 հիվանդ: Հայտնաբերված բոլոր կասկածելի հիվանդներն ուղարկվել են ՀՀ ԱՆ «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր»՝ տուբերկուլոզի նկատմամբ հետազոտությունների կազմակերպման և բուժման նպատակով: Հիվանդների խորիսի մանրէաբանական հետազոտությունների ժամանակ տուբերկուլոզի հարուցիչ չի հայտնաբերվել: Հետազոտված հիվանդներից 6-ը նախկինում հիվանդ են եղել տուբերկուլոզով, սակայն այժմ չունեն բուժման անհրաժեշտություն և վերադարձել են «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ, 6 հիվանդ այժմ գտնվում է հետազոտությունների փուլում, իսկ 2-ը՝ բուժվում են ՀՀ ԱՆ «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերում»: Մնացած 57 շահառուների մասին նշվել է, որ ֆյուրոգրաֆիկ հետազոտություն չանցած 52 բնակիչ ունեն առողջական խնդիրներ, գտնվում են անկողնային վիճակում, չեն կարողանում կանգնել և շարժվել: Վերջիններս Տուն-ինտերնատի բժիշկ-ֆթիզիատորի հսկողության տակ են, տուբերկուլոզ հիվանդությանը բնորոշ գանգատներ չունեն: Տուբերկուլոզի հետազոտությունները հնարավորինս կարճ ժամանակահատվածում կազմակերպելու համար Տուն-ինտերնատի տնօրենին կրկին տրվել է գրավոր առաջադրանք: Տուն-ինտերնատի ղեկավարությունը վերոնշյալ 52 բնակչի ռենտգեն հետազոտությունների կազմակերպման նպատակով դիմել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝ «Գավառի ԲԿ» ՓԲԸ-ի շարժական ռենտգեն ապարատի միջոցով սվյալ հետազոտություններն իրականացնելու համար:

3 հիվանդ ֆյուրոգրաֆիկ հետազոտությունների անցկացման ժամանակ բուժման նպատակով գտնվել են ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում: Տուբերկուլոզի նկատմամբ նրանց հետազոտությունները կատարվել են ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում, հաստատվել է տուբերկուլոզ ախտորոշումը և այժմ նրանք շարունակում են բուժումը նշված կազմակերպությունում:

Տուն-ինտերնատի 2 բնակիչ 2014 թվականի մայիս և հունիս ամիսներին տեղափոխվել են «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲ ընկերություն, որոնք 2015 թվականի հունվարի 19-ին ենթարկվել են կրծքավանդակի ռենտգեն հետազոտության,

տուբերկուլոզ հիվանդություն չի հայտնաբերվել:

ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում գտնվող 6 հիվանդի մոտ տուբերկուլոզի նկատմամբ հետազոտություններն ավարտվել են: Նրանք վերադարձել են Տուն-ինտերնատ: Հիվանդներից 2-ի մոտ ախտորոշվել է ստորբլթային թոքաբորբ, իսկ 4-ի մոտ՝ տուբերկուլոզի մնացորդային երևույթներ: Հիվանդները չեն ունեցել տուբերկուլոզի դեմ բուժման անհրաժեշտություն:

Հիվանդների խորիւրի մանրէաբանական հետազոտությունների արդյունքում տուբերկուլոզի հարուցիչ չի հայտնաբերվել:

Գյումրու տուն-ինտերնատում առկա թերացումները վերացնելու և հետագայում բացառելու նպատակով կազմակերպվել է քննարկում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալների մասնակցությամբ, որտեղ քննարկվել են ինչպես ԲԿԱՄ փորձագետների՝ տուն-ինտերնատում արձանագրած թերություններն ու բացթողումները, այնպես էլ նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից 2014թ. նոյեմբեր ամսին կատարված ուսումնասիրության, նախարարության աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից հավաքագրված մոնիթորինգային գնահատման արդյունքները: Բարձրացված խնդիրների վերաբերյալ Գյումրու տուն-ինտերնատի տնօրենի կողմից ներկայացվել են պարզաբանումներ: Արձանագրված թերացումների համար տուն-ինտերնատի տնօրենը խիստ զգուշացվել է:

Քննարկման արդյունքում տուն-ինտերնատի տնօրինությանը տրվել են հանձնարարականներ, մասնավորապես՝ կազմել և մինչև ս.թ. փետրվարի 1-ը նախարարություն ներկայացնել արձանագրված խախտումների և թերությունների վերացման նպատակով իրականացվելիք միջոցառումների ծրագիր-ժամանակացույց, ինչպես նաև երկամսյա ժամկետում ամբողջությամբ վերացնել բոլոր թերությունները:

Միաժամանակ, տեղեկացվել է, որ 15.01.2015թ. դրությամբ Գյումրու տուն-ինտերնատում հայտնաբերվել է տուբերկուլոզ հիվանդություն ունեցող մեկ խնամվող: Նա 16.11.2014թ. գանգատվել է հազից և արյունախիտումից, 17.11.2014թ. տուն-ինտերնատի բժշկի կողմից ուղեգրվել է Գյումրու ընտանեկան բժշկական կենտրոնի թոքախտաբանի խորհրդատվության և նույն օրը հոսպիտալացվել Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոցի ի բաժանմունք:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի համաճարակաբանական հսկողության N 3.1.1-010-08 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 21-Ն հրամանի 7-րդ գլխի պահանջների՝ 17.11.2014թ. թոքախտաբանի կողմից լրացվել է շտապ հաղորդում /ձև N 58/ և ուղարկվել սանէպիդկայան, ինչպես նաև հիվանդի հետ անմիջական շփում ունեցող հինգ խնամվողները տուն-ինտերնատի բժշկի կողմից ուղեգրվել են Գյումրու ընտանեկան բժշկական կենտրոն՝ ֆյուրոզրաֆիկ հետազոտության /05.12.2014թ.-08.12.2014թ./: Խորիւի քննություն չի կատարվել, քանի որ նշված անձանց մոտ խորիւարտադրություն չի եղել: Նշված անձանց մոտ տուբերկուլոզ հիվանդություն չի հայտնաբերվել, նրանք ստացել են թոքախտաբանի խորհրդատվություն:

Կապված բժշկի սենյակում աթոռի վրա դրված արյունոտ ներարկիչի և

ժամկետանց ամոնիակի լուծույթի առկայության հետ՝ Գյումրու տուն-ինտերնատի տնօրենը նախազգուշացվել է, իսկ թույլ տված անփութության համար կարգապահական տույժի է ենթարկվել Գյումրու տուն-ինտերնատի ավագ բուժքույրը:

Ջեռուցման գործընթացը նոյեմբերի 15-ից ավելի վաղ սկսելու հարցով Գյումրու տուն-ինտերնատի տնօրենին հանձնարարվել է, ելնելով տարածաշրջանի եղանակային պայմաններից, ջեռուցման գործընթացը սկսել ավելի վաղ: Համաձայն ՀՀ գործող օրենսդրության, հաշվի առնելով հանրապետության տարածաշրջաններում եղանակային տարբերությունները, բնակավայրերի ջեռուցման սեզոնը սկսվում է ոչ թե կոնկրետ օրվանից, այլ սահմանվում է ելնելով կլիմայական գոտուց և տարբեր ցուցանիշներից:

Նշել է, որ նախարարության համապատասխան ստորաբաժանման իրականացրած ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ կազմակերպության կաթսայատան հզորությունը չի բավականացնում տաք ջրի մատակարարում ապահովել՝ ջեռուցման հետ զուգահեռ: Խնդիրն այն է, որ ձմեռային սեզոնում հնարավոր չէ ապահովել միաժամանակ տաք ջրի և սենյակներում համապատասխան ջերմաստիճան, ինչը հնարավորություն չի ընձեռում լիարժեք և հավասարաչափ բոլոր մասնաշենքերում լոգանք կազմակերպելը (այս ընթացքում սենյակների ջերմաստիճանն իջնում է): Տուն-ինտերնատի տնօրենին հանձնարարվել է ներկայացնել առաջարկություն նշված խնդրի լուծման վերաբերյալ: